



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

**Ի հիշատակ սփյուռքահայ գործիչ, Հայաստանում տասնյակ
գիտական աշխատություններ հովանավորած Հարություն
Սիմոնյանի, որի շնորհիվ հնարավոր եղավ ավարտին հասցնել
Հովհ. թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի
ակադեմիական հրատարակությունը:**

**Գիրքը տպագրվում է Հ.Սիմոնյանի զավակների
մեկենասությամբ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ԵՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
(1869 – 1908)

ԵՐԵՎԱՆ
«ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ»
2010

ՀՏԴ 891.981.0
ԳՄԴ 83.3Հ
Թ 950

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝ Վլ. Ա. Կիրակոսյան

Հատորը կազմել են *Ֆ.Աբեղյանը* (1869–1890, 1895–1897),
Ս.Հովհաննիսյանը (1891–1894), *Ա.Գևորգյանը* և
Ե.Սնացականյանը (1898–1900), *Լ.Վարապետյանը* (1901–1908):
1901–1904թթ. հատվածը խմբագրելիս օգտագործվել են
Ա. Վարդանյանի տրամադրած որոշ նյութեր:
Անվանացանկը կազմել է *Ի. Վարժապետյանը*:

Թ 950 Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության
տարեգրություն (1869-1908). – Եր.: Գիտություն, 2010. –
670 էջ:

Հատորն ընդգրկում է Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության 1869 – 1908թթ. ժամանակահատվածը: Ներկայացվում են բանաստեղծի անձնական, հասարակական, ստեղծագործական կենսագրության այդ շրջանին վերաբերող բոլոր իրադարձությունները, եղելություններն ու փաստերը ճշգրիտ ժամանակագրական հետևողականությամբ, առարկայական ստուգությամբ՝ առանց բնութագրումների, գնահատականների և մեկնաբանությունների: Դա տարեգրության ժանրի առաջնային պայմանն է, և կազմողներն աշխատել են հավատարիմ մնալ այդ սկզբունքին:

Հատորը կարող է գործնական սկզբնաղբյուր լինել թումանյանագետների, հայ գրականության այդ փուլով զբաղվող գրականագետների համար, կարող է հետաքրքրել նաև բուհերի դասախոսներին, ուսանողներին, ընթերցող լայն շրջաններին:

ՀՏԴ 891.981.0
ԳՄԴ 83.3Հ

ISBN 978-5-8080-0831-1

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2010թ.

ԱՌԱՏԱՐԱՆ

Գրողի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը ոչ այնքան տարածված գրականագիտական ժանրերից է: Բորշ ընդհանրություններ ունի ակադեմիական հրատարակության, գիտական կենսագրության, ժամանակագրության հետ: Բայց բնույթով, խնդիրներով, նպատակով ու մեթոդով էականորեն տարբերվում է դրանցից:

Տարեգրությունը ամենաօբյեկտիվ գրականագիտական ժանրն է: Ժանրի գլխավոր պայմանը տարեգրողի բացարձակ չեզոքությունն է: Գրողից «աննկատ» ու մշտապես անբաժան՝ տարեգրողը հետևում է նրա յուրաքանչյուր քայլին ծննդից մինչև մահ՝ անաչառ վկայի ուղղամտությամբ ներկայացնելով նրա անձնական, ընտանեկան, հասարակական, ստեղծագործական կյանքի անխտիր բոլոր մանրամասները՝ անաղարտ ճշգրտությամբ: Այլապես տարեգրություն կոչվածը՝ իբրև ինքնուրույն գրականագիտական ժանր, կկորցնի իր իմաստը:

Ինչպես ամեն մի գրականագիտական ուսումնասիրություն, տարեգրությունը ևս ունի իր հետազոտության առարկան ու մեթոդը: Նրա առարկան գրողի անձնական ու ստեղծագործական կյանքի ուղին է՝ իր բազմաթիվ ճյուղավորումներով, ապրած ժամանակի ու տարածության մեջ իր ինքնատիպ գոյակերպով ու անկրկնելիությամբ:

Առարկայի բնույթն էլ թելադրում է ուսումնասիրության մեթոդը: Վերջինիս հիմքը ճշգրտությունն է, պահանջը ամեն ինչ ներկայացնել այնպես, ինչպես եղել է՝ առանց սրբագրության: Եթե հարկ էլ լինում է ինչ-ինչ տարակուսելի երևույթների խնկությունը, ժամանակագրությունը ստույգ կամ մոտավորապես վերականգնելու, ապա անպայման հավատարիմ պիտի մնալ ձեռքի տակ եղած հավաստի փաստերի տրամաբանությանը՝ տարբեր աղբյուրների վերլուծական համադրությամբ: Տարեգրություն կազմողը իրեն պատասխանատու պիտի զգա ներկայացվող յուրաքանչյուր փաստի, գրողի անձնական ու ստեղծագործական կենսագրության յուրաքանչյուր մանրամասնի համար:

Այս գիտակցությամբ էլ տարիներ առաջ գրականության ինստիտուտում ձևավորվեց Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությամբ զբաղվող հատուկ խումբ՝ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ:

Այդ նախաձեռնությունը պատահական չէր: Արդեն ավարտվել էր բանաստեղծի ստեղծագործությունների լիակատար ակադեմիական հրատարակությունը՝ տասը հատորով, որ իրականացվել էր մոտ մեկ ու կես տասնամյակի ընթացքում: Հրապարակի վրա էր գիտական կենսագրության առաջին գիրքը՝ Ա. Ինճիկյանի աշխատասիրությամբ, որ ընդգրկում է բանաստեղծի կյանքի՝ մինչև 1900 թվականը ընկած ժամանակաշրջանը: Լույս էին տեսել «Թումանյանը ժամանակակիցների հու-

շերում» ստվարածավալ հատորը, Ն. Թումանյանի «Մանկություն և պատանեկություն», «Հուշեր և գրույցներ» գրքերը, ուսումնասիրությունների ու հրապարակումների հինգ հատորները, բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության տարբեր ոլորտներին վերաբերող բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ: Այս ամենը ուղղակի անհրաժեշտ էր դարձնում դիմել հաջորդ քայլին՝ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության լիակատար տարեգրության ստեղծմանը:

Այդ անհրաժեշտությունը թելադրված էր նաև մի այլ, ավելի կարևոր հանգամանքով: Թումանյանը հայ ժողովրդի ազգային մեծ բանաստեղծն է: Նրա կյանքը և ստեղծագործությունը անխզելիորեն կապված են 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին ժողովրդի գլխով անցած փոթորկալի իրադարձությունների հետ: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը միաժամանակ այդ իրադարձությունների տարեգրությունն է՝ իմաստավորված հանճարեղ արվեստագետի անձնական ու ստեղծագործական ընկալումներով: Այս իրողությունը առավել ևս մեծացնում է տարեգրության գիտական-ճանաչողական նշանակությունը:

Կազմողների առաջին մտահոգությունը եղել է առայժմ ձեռքի տակ առկա նյութերի և առհասարակ թումանյանագիտության այսօրվա ընձեռած հնարավորությունների սահմաններում տեսադաշտից դուրս չթողնել բանաստեղծի կյանքի և ստեղծագործության ոչ մի փաստ ու իրադարձություն՝ մի կողմ թողնելով դրանց «կարևորության» կամ «անկարևորության» խնդիրը, որ վերաբերում է գրականագիտության այլ բնագավառների: Տարեգրության մեջ առանձին բժախնդրությամբ են ներկայացված բանաստեղծի հատկապես անձնական կյանքի մանրամասները, որոնք սովորաբար քիչ են արժանանում ուսումնասիրողների ուշադրությանը, և որոնք հաճախ բաց են անում ստեղծագործական հոգեբանության անակնկալ կողմեր:

Տարեգրության ժանրային բնույթից բխող մյուս մտահոգությունը ժամանակագրության ճշգրտությունն է: Իհարկե, Թումանյանի կյանքի և ստեղծագործության հետ կապված փաստերի ու եղելությունների ժամանակագրությունը հիմնականում հայտնի է և հատուկ ճշգրտման կարիք չունի: Բայց քիչ չեն նաև այնպիսիները, որոնց վերաբերյալ աղբյուրներում եղած տվյալները հաճախ անորոշ են կամ հակասական: Այդպիսի դեպքերում կազմողներից պահանջվել է երկար ժամանակ և ծավալուն աշխատանք, ընդ որում այստեղ էլ նպատակը եղել է հասնել եթե ոչ բացարձակ ստուգության, ապա գոնե առավելագույն մոտավորության: Իսկ առհասարակ կազմողներն աշխատել են հնարավորինս խուսափել մոտավոր ժամանակագրությունից: Այսպես, օրինակ, Թումանյանը սովորություն է ունեցել իրեն հասցեագրված նամակների վրա

նշել ստացման օրը կամ դրա մասին ակնարկել պատասխան նամակներում: Բայց մեծ մասամբ անհայտ է մնում նամակների ստացման ժամանակը: Այդպիսի դեպքերում կազմողները նպատակահարմար են համարել նշել բանաստեղծին ուղղված նամակների գրության օրը՝ խուսափելով ստացման օրվա վերաբերյալ մոտավոր ենթադրություններից ու հաշվարկներից:

Տարեգրությունը, սակայն, չոր ժամանակագրություն չէ: Բանաստեղծի ապրած ժամանակը՝ տարին, ամիսը, օրը, ժամը, առհասարակ ամեն մի պահ, բովանդակություն ունի, բնության նման դատարկություն չի սիրում: Նույնիսկ այն պահերը, երբ ստեղծագործողը ընկճված հոգեվիճակում իրեն սպառած է համարում, կյանքը՝ անհիմաստ, - նույնիսկ նրա ապրած այդպիսի պահերը լի են ներքին, հաճախ հենց իրեն՝ ստեղծագործողին անհայտ խնորումներով, որ հոգու արթնացման պայծառատես վայրկյաններին հրաշքեր են գործում... Այս ամենը իրավացի է մանավանդ Թումանյանի նման հանճարեղ անհատականությունների վերաբերմամբ: Ուստի տարեգրության հեղինակները անհրաժեշտ են համարել ընթերցողին մատուցել նաև բավարար քանակությամբ նյութ՝ երբեմն չխուսափելով նաև ընդարձակ մեջբերումներից, որպեսզի ժամանակագրությունը խոսի, պատմի իր մասին...

Տարեգրությունն ընդգրկում է Թումանյանի կյանքի՝ մինչև 1908 թ. ներառյալ ժամանակահատվածը, որ, կարելի է ասել, մի ամբողջական շրջափուլ է բանաստեղծի անձնական, հասարակական ու ստեղծագործական կենսագրության մեջ: Դա դրամատիկ ու բերկրալի պահերով, անկումներով ու վերելքներով լի մի շրջան է բանաստեղծի համար: Դեռ պատանի՝ նրա ուսերին ծանրանում են բազմաճանաչ ընտանիքի հոգսերը, տհաճ ընդհարումները կնոջ ծնողների հետ, որ շատ տառապանքներ են պատճառել զգայուն բանաստեղծին, կասկածները իր ստեղծագործական հնարավորությունների մասին, շրջապատի առաջին սրտապնդող արձագանքները, անդրամիկ ժողովածուի պատճառած ուրախությունը և ոճանց անարդար ու անբարյացակամ վերաբերմունքի դառնությունը, 1905-1907 թթ. ազգամիջյան արյունահեղությունները, որ բանաստեղծը վերապրել է՝ իբրև անձնական ցավ, շատ ջանք ու հոգեկան ներուժ է վատնել՝ դրանք կանխելու համար, արևմտահայության կացությունը, մասնավորապես 1895-1896 թթ. սարսափները, առաջին բանտարկությունը...

Թումանյանի անձնական կյանքը և ստեղծագործական ճանապարհն անցել են այս ամենի միջով և դրանցից անբաժան: Շատ է ցավել նրա հոգին, բայց փորձությունները նաև իմաստացրել են նրան: Աբասթումանյան աշնան աննախադեպ ստեղծագործական վերելքը, երկրորդ, երրորդ ժողովածուները ինքնահաստատման և հանճարեղ ինքնաբացահայտման վկայություններ էին: Այս շրջանի վերջում

բանաստեղծը հասնում է իր ստեղծագործական հնարավորությունների բարձրակետին՝ իր «մեծ լեռան» կատարին, որտեղից լուսավոր հայացքով սկսում է ամփոփել ու իմաստավորել իր անցած ուղին...

Բացի վերը հիշված հրատարակություններից, տարեգրության համար աղբյուր են ծառայել նաև պահպանված արխիվները և ժամանակի մամուլը:

Տարեգրության կառուցվածքը պարզ է: Նշվում է ժամանակը, անմիջապես հետո ներկայացվում է փաստը, որին հետևում է փաստի մասին վկայությունը, փաստին առնչվող օժանդակ տեղեկություն, անհրաժեշտության դեպքում տրվում է հակիրճ ծանոթություն: Իբրև կանոն նշվում է մեկ աղբյուր՝ մեծ մասամբ հիմք ընդունելով ակադեմիական տասնհատորյակը: Սակայն որոշ դեպքերում փաստի իսկությունը հավաստելու համար մատնացույց են արվում նաև լրացուցիչ աղբյուրներ:

Պայմանական նշանները հասցված են նվազագույնի: Եթե եղելությունը տեղի է ունեցել, ասենք, ամսվա մի քանի օրերի միջակայքում, այդ ամսաթվերը բաժանվում են գծիկով, եթե օրերը որոշակի հայտնի են, անջատվում են ստորակետով: Մոտավոր որոշված ժամանակը՝ տարին, ամիսը, ամսաթիվը, տրվում են սուր փակագծերով, մեջբերումների կրճատված հատվածները նշվում են սուր փակագծերի մեջ առնված բազմակետերով: Ծանոթագրությունները տրվում են աստղանիշով:

Վերջում մի կարևոր տեղեկատվություն: Հիմնադիր և ղեկավար եղ. Ջրբաշյանի մահից հետո Թումանյանի տարեգրության խումբը գրեթե կազմալուծվեց: Ոմանք առհասարակ հեռացան ինստիտուտից, ոմանք էլ տեղափոխվեցին այլ բաժիններ: Մնաց մի փոքրիկ խմբակ՝ երեք-չորս հոգի, որոնց անձնվեր աշխատանքով և տողերիս հեղինակի պարտավորված հանձնառությամբ էլ ավարտին հասցվեց և ընթերցողի դատին է հանձնվում Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության առաջին գիրքը:

Տարեգրություն կազմելը շատ աշխատատար և բացառիկ ուշադրություն պահանջող գործ է: Այս հատորի հեղինակները ամենևին չունեն անթերի գործ ստեղծած լինելու հավակնություն. թերություններ, բացթողումներ, անճշտություններ անպայման կլինեն: Հատորի հեղինակները և խմբագիրը նախապես հայտնում են իրենց շնորհակալությունը յուրաքանչյուր բարյացակամ, տեղին և օգտակար դիտողության համար, որ անպայման հաշվի կառնվի տարեգրության շարունակության վրա աշխատելիս:

Վ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

1869

Փետրվարի 19. - Դսեղում Ասլան Թումանյանի (1874 թվականից քահանա տեր Թադևոս) (1839 – 1898) և Սոնա Քոչարյանի (1842 – 1936) ընտանիքում ծնվում է ապագա բանաստեղծը (ծննդյան վկայականը տրված է Թիֆլիսի կոնսիստորիայից 1910 թ. հունվարի 22-ին):

ԹՏԹ, 519:

Փետրվարի 27. - Դսեղում տեղի է ունենում նորածին մանկան մկրտությունը. նրան տալիս են պապի անունը՝ Հովհաննես (մայրական կողմի պապը նույնպես Հովհաննես էր):

ԹՏԹ, թիվ 519:

1871

Դեկտեմբերի 22. - Թիֆլիսի Խարվուխ թաղամասում՝ տատի տանը, ծնվում է Թումանյանի կինը՝ Օլգա Մաճկալյանը (վախճ. է 1971 թ. Երևանում): Հայրը՝ Բադալ Մաճկալյան, մայրը՝ Շուշանիկ Մաճկալյան:

ԹԺՀ, 325 – 342:

<1876 - 1877>

Դսեղում հոր օգնությամբ Թումանյանը ձեռք է բերում նախնական գրաճանաչություն:

Գյուղում ուսումնարան չկար, և բանաստեղծի դպրոցը գյուղական միջավայրն էր, լեռնային հարուստ բնությունը, իսկ ուսուցիչները՝ ծնողները, հեքիաթասաց ծերունիները, ժողովուրդը: Հայրը գրականություն քիչ ուներ, քանի որ կտրված էր քաղաքից, եղածը կրոնական գրքեր էին: Նվ. Թումանյանը հիշում է. «Հոր գրքերից առաջինը, որ կարդացել է ու սիրել, եղել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» և Սարգիս եպ. Հասան – Ջալալյանի «ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» աշխատությունը: Այդ գրքերի ընթերցանության տպավորության տակ նրա մեջ շատ վաղ հասակում զարգանում է հայրենասիրական զգացմունք՝ սեր դեպի հարազատ ժողովրդի պատ-

մական անցյալը, որի մեջ խորանալուն նպաստում է պատմական հուշարձաններով ու արձանագրություններով հարուստ Լոռին»:

ԹՄՊ, 80-81:

1877 - 1878

Առաջին ուսումնառությունը կրտսեր հորեղբոր՝ Գրիշա բիժու (Գրիգոր Թումանյան, ծնվ. 1850 թ.) դպրոցում:

Թումանյանի վկայությամբ՝ Գրիշա բիժան՝ գյուղի տիրացուն, «խեղճ ու անշառ մարդ էր, անհաջող խանութպան ու վարժապետ» (ԵԼԺ, 8, էջ 416, 641):

ԵԼԺ 6, 143-144:

1879

<Մինչև գարուն>. – Դսեղում բանաստեղծի մոր նախածեռնությամբ բացվում է Սահակ վարժապետի (Սահակ Տեր-Յովհաննիսյան) երկսեռ դպրոցը:

Նա դսեղցի էր, Թումանյանի ազգականներից մեկի փեսան: Առաջին աշակերտներից էր մանուկ Յովհաննեսը: Դպրոցում ուսուցումը տարվում էր «գավազանավ երկաթեով»: Չնայած դրան, Սահակ վարժապետը սիրված մարդ էր գյուղում, իսկ նրա դպրոցը, բանաստեղծի բնութագրմամբ, առաջին «կանոնավոր ուսումնարանը» Դսեղում:

ԱԻ, 78:

Մայիս. – Մանկավարժ Տիգրան Տեր-Դավթյանի ջանքերով Ջալալօղլիում բացվում է առաջին երկսեռ դպրոցը, որտեղ սովորում են թե՛ հայ և թե՛ ռուս երեխաներ:

«Մշակ», 1879, թիվ 89:

Օգոստոս. – Հայրը՝ տեր Թադևոսը, ապագա բանաստեղծին տանում է Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում սովորելու:

Ճեմարանի բակում հանդիպելով սաներից մեկի հուղարկավորությանը՝ ծանր տպավորություն է ստանում և փոխում մտադրությունը:

ԵԼԺ, 8, 417-418:

<Օգոստոս ... սեպտեմբեր> .- Տեր Թադևոսը իր երկու որդիներին՝ Յովհաննեսին և Ռոստոմին, Քոլագերանի երկաթուղով տանում է Ջալալօղլի և ընդունել տալիս Տիգրան Տեր-Դավթյանի ուսումնարանը:

Բանաստեղծն այդ դպրոցը նկարագրել է «Իմ ընկեր Նեսուն» պատմվածքում. «Մի երկու տարի մեր գյուղի ուսումնարանը կարդալուց ետը, հերս ինձ տարավ մեր կողմերի գյուղաքաղաքը, էնտեղի ուսումնարանը տվավ: Ես արդեն բոլորովին ուրիշ աշխարհ էր: Տները սպիտակ, կարմիր տանիքով, ժողովուրդը զուգված ու մաքուր, ուսումնարանս էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե մի վարժապետ, ինչպես մեր գյուղումն էր, այլ մի քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ, որ նորություն էր ինձ համար ու զարմանալի, սակայն շատ դուրեկան:

Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին: Քաղաքացի աշակերտի շորեր հագա, գեղեցիկ ու մաքուր...» (ԵԼԺ 5, 143-144):

ԹԺՅ, 206:

<Աշնան սկիզբ>. – Ջալալօղլու դպրոց ընդունվելուց հետո միառժամանակ ապրում է տեսուչ Տեր-Դավթյանի տանը և ծանոթանում նրա զավակների՝ Վերգինեի, Վարսենիկի, Տելեմակի հետ և անմիջապես բարեկամանում:

ԹԺՅ, 206:

<Աշնան սկիզբ>. – Ջալալօղլու դպրոցում ծանոթանում է Սարգիս Աբովյանի հետ (հետագայում մանկավարժ, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի պրոֆեսոր):

Վերջինս հիշում է. «... Ջալալօղլու ծխական դպրոցի պարապմունքները արդեն մի քանի օր էր, որ սկսվել էին: Դասամիջոց էր: Աշակերտ-աշակերտուհիները ցրված էին դպրոցի բակում <...> Ձանգը տվեցին, բոլորը ներս խուժեցին դասարան:

Առաջին դասարանը, ուր գտնվում էի ես, մտավ վերակացուն՝ իր հետ բերելով այն փոքրիկ տղային, որին դասամիջոցին նկատել էինք դպրոցի տեսչի մոտ մի ալեհեր, բարձրահասակ քահանայի հետ կանգնած՝ այս ու այն կողմ նայելիս:

Այդ տղան Հովհաննես Թումանյանն էր, իսկ քահանան՝ նրա հայրը, Դսեղ գյուղի տեր Թադևոսը <....>

<....> Դասը վերջանալուց հետո մենք շրջապատեցինք մեր նորեկ ընկերոջը, հարց ու փորձ արինք՝ ե՞րբ է եկել, առաջ որտե՞ղ էր սովորել, որտե՞ղ է ապրելու, ո՞վ էր այն քահանան և այլն: Մեր հարցերին ստանում էինք պարզ, համարձակ պատասխաններ. նա չէր շփոթվում ու այլայլվում գյուղից եկող այլ երեխաների պես»:

ԹԺՅ, 213-214:

Աշուն.— Տեր Թադևոսը որդուն տեղավորում է Խուրշուղ Գրիգորյանի տունը:

Տղան այնտեղ երկար չի մնում, որովհետև դպրոցը հեռու էր, տանտիրոջ երեխաներն էլ խանգարում էին պարապմունքներից: Պատանի Հովհաննեսը տեղափոխվում է հորաքրոջ՝ Թալալ Սաղաթեյանի տուն, որտեղ արժանանում է հոգատար վերաբերմունքի: Լսում է հորաքրոջ հեքիաթները կախարդական աշխարհների, զուռնա - դիդուկ հարսանիք անող սատանաների մասին:* Այստեղ նույնպես երկար չի մնում:

* Այս վերջինը օգտագործել է «Լոռեցի Սաքոն» պոեմում:

ԹՍՊ, 90. ԹԺՅ, 206:

Աշուն. — Լսելով, որ որդին ուսումնարանում այնքան էլ հաջող առաջադիմություն չունի, տեր Թադևոսը բարկացած գալիս է Ջալալօղլի:

Վարսենիկ Գևորգյանը հիշում է. «Հովհաննեսը այդ ժամանակամիջոցում ոչ մի օր կանոնավոր դաս չէր պատասխանել: Լսելով լուրը՝ տեր Թադևոսը մի երկու օրից հետո անմիջապես եկավ և որդուն հանդիմանելով՝ ուզեց ետ տանել գյուղ: «Թող գա գյուղ,— ասում էր նա,— քարին քացի տալով ապրի, քանի որ ուսման արժեքը չի հասկանում»:

ԹԺՅ, 206:

Աշուն.— Դպրոցի տեսուչ Տիգրան Տեր-Դավթյանը արգելում է տեր Թադևոսին գյուղ տանել որդուն և իր նախաձեռնությամբ տեղավորում է նրան Ասատուր Խանաղյանի տանը:

Տանտերերը չքավոր, սակայն վերին աստիճանի բարի էին

տղայի նկատմամբ: Այս ընտանիքը պատանի Թումանյանի սրտովն էր, և այստեղ էլ կատարում է իր առաջին բանաստեղծական փորձերը: Ինքնակենսագրության մեջ գրում է. «Շատ վաղ եմ սկսել ոտանավորներ գրել: 10-11 տարեկան ժամանակս Լոռիս-Մելիքովի վրա երգեր էին երգում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ոտանավորներ՝ երգիծաբանական, հայրենասիրական և սիրային»: Այդ ոտանավորները չեն պահպանվել: Դրանցից մի քանիսի բովանդակությունը հիշում է Սարգիս Աբովյանը: Լոռիս Մելիքովին նվիրված երգին Թումանյանի ավելացրած երկու տունը հիշողությամբ վերականգնել է եղբայրը՝ Վահան Թումանյանը: Իր բանաստեղծի խոստովանությամբ՝ գրել է նաև կովկասյան առակներ «ուսումնարանում սովորած Կռիլովի առակների ազդեցության տակ»:

ԵԼԺ 8, 417. ԹԺՅ, 206:

Աշուն.— Ջալալօղլիում տեղացի կապալառուի մոտ որպես գործակատար ծառայող Անուշավան Աբովյանը նորաբաց դպրոցի պարտեզում խաղացող երեխաների մեջ նկատում է տասը տարեկան Հովհաննեսին:

Երեխան գրավում է նրան իր հմայիչ արտաքինով: Աբովյանը հիշում է. «Նրա դեմքից երևում էր, որ 10 տարեկանից ավելի չէր, բայց վայելչակազմ հասակն անհամեմատ բարձր էր: ...Սակայն ինձ գրավողը լրիկ նրա արտաքին գեղեցկությունը չէր, այդ պատանու մեջ ինչ-որ հոգեկան թովիչ բան կար, որ իմ ուշքն այնպես գրավեց»:

ԹԺՅ, 219:

Աշուն. — Առաջին հանդիպումից մոտ երկու շաբաթ անց Ան. Աբովյանը կրկին հանդիպում է Թումանյանին իր համագյուղացի Բագրատի խանութում գրիչներ գնելիս:

Ծանոթանում են: Ծանոթությունը վեր է ածվում համակրանքի, ապա մտերմության: Հետագայում Աբովյանը մեկնում է Ջալալօղլուց և առժամանակ տեսադաշտից կորցնում բանաստեղծին:

ԹԺՅ, 220:

<Մինչև գարուն>.- Ջալալօղլու դպրոցում սովորելիս պատանի Յովհաննեսը խնդիր ուներ աշխարհագրություն և թվաբանություն առարկաներից:

Դպրոցի տնօրեն Տիգրան Տեր-Դավթյանի հանձնարարությամբ իր մի քանի ընկերների հետ ամեն օր գալիս է նրանց տուն՝ դասերը պատրաստելու: Այստեղ նրանց հետ պարապում էր տեսչի ավագ դուստրը՝ Վերգինեն, որը երեք տարով մեծ էր Յովհաննեսից: Վարսենիկ Գևորգյանը հիշում է. «Յովհաննեսը քրոջս եռանդուն ջանքերի շնորհիվ, թեպետ դժվարությամբ, այդ տարին մի կերպ անցկացրեց: Քննությունը հաջող տալուց հետո՝ գյուղ գնաց, նախօրոք խոստանալով հորս, որ կաշխատի իր սխալն ուղղել և սովորել այնպես, ինչպես հարկավոր է»:

ԹԺՅ, 207:

<Մինչև գարուն>.- Ջալալօղլու դպրոցում ծանոթանում և մտերմանում է Եգոր Անդրեասյանի հետ:

Վերջինս հիշում է. «Ես մեծ ցանկություն ունեի սովորելու, և ահա ինձ էլ տալիս են դպրոց, որտեղ առաջին անգամ տեսնում եմ ապագա բանաստեղծ Թումանյանին, նրա եղբորը՝ Ռոստոմին, և մի շարք այլ ընկերների, որոնց մեջ սկսում է մտերմական կապեր հաստատվել <...> Թումանյանը նստում էր առաջին նստարանին, իսկ ես և նրա եղբայրը՝ նրա ետևի երկրորդ նստարանին:

Դասամիջոցներին և դասերից հետո խաղում էինք միասին: Մեր ամենասիրած խաղերից մեկն էր աթոճա: Խաղում էինք նաև ճժլախտի. Յովհաննեսի գոտին (քյամարը) հայտնի էր մեր դասարանում. ում դիպչում էր, դաղում էր. խաղում էինք նաև այլ խաղեր, որոնց կազմակերպիչը միշտ Յովհաննեսն էր լինում:

Երբ մոտենում էին տարեվերջի քննությունները, Յովհաննեսը ինձ ու եղբորը օգնում էր, սովորեցնում էր համառ լինել, չհուսահատվել շուտ. եթե ձգտում ունես որևէ բանի, ապա պետք է հասնես նպատակիդ անպայման, ասում էր նա»:

ԹԺՅ, 217-218:

<Գարնան վերջ>.- Հաջողությամբ հանձնում է տարեվերջ-

յան քննությունները՝ փոխադրվելով երկրորդ դասարան և մեկնում է հայրենի գյուղ (տես <մինչև գարուն>):

ԹԺՅ, 207:

Սեպտեմբերի 1.- Վերսկսվում են պարապմունքները Ջալալօղլու դպրոցում: Թումանյանը հաճախում է երկրորդ դասարան՝ սկսելով ավելի լուրջ և ուշադիր պարապել:

Այդուհանդերձ երեկոյան պարապմունքները Տիգրան Տեր-Դավթյանի տանը առժամանակ շարունակվում են: Այդ պարապմունքներին Յովհաննեսի հետ մասնակցում էին նաև նրա հայրենակից Երվանդ Մամիկոնյանը և Տեր-Դավթյանի բարեկամի տղան՝ Եսայի Դիմաքսյանը: Այս վերջինի հետ Թումանյանն ավելի մտերիմ էր:

Ջալալօղլու դպրոցի երկրորդ դասարանում ի հայտ են գալիս պատանի Յովհաննեսի բանաստեղծական հակումները: «Դասընկերները պատմում են, թե ինչպես նա դասամիջոցին, դասարանից դուրս գալով, առանձնանում էր դպրոցի պարտեզի խորքում, նստում ծառի տակ և սկսում գրել» (ԹՄՊ, 92): Սարգիս Աբովյանը հիշում է. «Նա ոչ միայն համով ու հոտով էր պատմում իր տեսածն ու լսածը, այլև առանձին ոգևորությամբ էր նկարագրում սարերն ու ձորերը, սրընթաց գետերն ու գարնան հեղեղները, սարվորի կյանքը, միստ ու կացը»: Հիշում է նաև, թե ինչպես դասընկերներին կարդում էր իր գրած ոտանավորները (ԹԺՅ 214):

ԹԺՅ, 207:

1880 – 1882

Ջալալօղլուն՝ Տ. Տեր-Դավթյանի անձնական գրադարանում, բարձրաձայն ընթերցանության միջոցով ծանոթանում է հայ և օտարազգի մի շարք հեղինակների ստեղծագործություններին:

Ըստ Վ. Գևորգյանի հուշերի՝ դրանցից էին՝ *Գամառ-Գաթիպա*, Բանաստեղծություններ, *Րաֆֆի*, «Փունջ» (1-ին հատոր), *Ղ. Աղայան*, «Երկու քույր», *Ս. Շահագիզ*, «Լևոնի վիշտը», *Ծերենց*, «Երկունք Թ դարու», «Քնար հայկական», «Սոխակ Հայաստանի» երգարանները (հատկապես Սայաթ-Նովայի տաղե-

րը), «Հյուսիսափայլ» և «Փորձ» ամսագրերի համարները, *Բերնարդեն դը Սեն Պիեր*, «Պող և Վերգինե», *Ալ. Դյումա*, «Երեք հրացանակիրներ», «Քսան տարի ետքը», «Բրաժելոն Դերկոմս», *Էժեն Սյուի* «Գաղտնիք Փարիզու», *Ֆրանց Դոֆման*, «Խավարից դեպի լույս», *Շիլլեր*, «Օռլեանի կույսը»,* *Դանիել Դեֆո*, «Պատմություն Ռոպենսոնի Գրյուզոնե», Ֆերյալ, «Գաղտնիք ինկվիզիցիայի», *Վիլհելմ Ռիլ*, «Կոմսուհի Ուրսուլա», *Բիչեր Ստոու*, «Թովմաս եղբոր տնակը», *Ալֆոնս Դոդե*, «Թզուկը», «Քրիստոփոր Կոլումբոս և Ամերիկայի գտնելը», «Չեստերտոնի ժառանգը», «Բարդուղիմեի գիշերը», «Սուլթանի երազը» (հեղինակն անհայտ է):

Բանաստեղծի կարդացած և սիրած առաջին գրքերից է նաև Աբովյանի «Վերք Հայաստանին», ապա՝ Սարգիս եպիսկոպոս Հասան Ջալալյանի «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան», որոնք ուներ տեր Թադևոսը: Պետք է ենթադրել, որ այդ գրքերը նա կարդացել է Տեր-Դավթյանի տանը ընթերցանության մեջ վարժվելուց հետո՝ 1880 – 1882 թթ. ամառային արձակուրդներին:

* Գրքերի այս ցանկի աղբյուրը Վարսենիկ Գևորգյանի հուշերն են: Ցանկում հիշվում է նաև Շիլլերի «Ավագակները»: Հուշագիրը շփոթում է «Ավագակները» Փ. Վարդանյանի թարգմանությամբ լույս է տեսել 1890 թվականին: Ջալալօղլիում Թումանյանը կարող էր կարդալ նույն հեղինակի «Վիլհելմ Տելլը» (1873) կամ «Օռլեանի կույսը» (այդ նկատառումով ԹժՀ ժողովածուի Վ. Գևորգյանի հուշերում հիշատակված «Ավագակները» փոխված է «Օռլեանի կույսի»):

ԹժՀ, 207 – 210:

1 8 8 1

Մարտ.- Գրում է մեզ հասած առաջին բանաստեղծությունը՝ «Հոգուս հատոր...» (ԵԼԺ 1, 433):

Ըստ Վ. Գևորգյանի հուշերի՝ Տ. Տեր-Դավթյանի տանը նրա դստեր՝ Վերգինեի հետ երեկոյան պարապմունքներից մեկի ժամանակ չարության համար ապտակ է ստանում վերջինից և խոստովանելով իր սերը նրա նկատմամբ՝ նրան է հանձնում «Հոգուս հատոր...» բանաստեղծությունը՝ ասելով.

- Ես քեզ սիրում եմ, իսկ դու ինձ խփում ես - ահա, տես, թե

ինչ եմ գրել քեզ համար, պահի՛ր, պահի՛ր, թող ոչ ոք չտեսնի:*

* Կան տարբեր վարկածներ, թե ում է ծոնված բանաստեղծությունը: Ժամանակակիցներից Վարսենիկ Գևորգյանի և Սարգիս Աբովյանի հուշերում այն վերագրվում է Ջալալօղլու դպրոցի տեսուչ Տիգրան Տեր-Դավթյանի դուստր Վերգինեին (Վերգինե Պապաջանյան, որ վարժուհի էր, տարիքով բանաստեղծից մեծ և զնահատում էր նրան՝ որպես «ազնիվ զգացմունքների տեր պատանու» (ԹժՀ, 207 – 208, 215):

ԱՆ. Աբովյանն իր հուշերում բանաստեղծի ներշնչման առարկա է համարում նրա դասընկերուհի Քալի Շահվերդյանին: Եվ Թումանյանը հիշատակում է մեկ ուրիշի՝ Քալի Սիմոնյանին (Ա. Ինճիկյան, 104 – 105):

ԹժՀ, 207:

1881 նոյեմբեր. – Գրառում թիվ 3 (10) ծոցատետրում:

(Հոգուս հատոր,
Սրտիս կտոր,) [Դու մի հոգար: Մի զարմանար]
Դասիս համար,
Թե կան դասեր,
Կա նաև սեր.
Եվ ինչ զարմանք,
Իմ աղավնյակ,
Որ կենդանի
Մի պատանի
Սերը սրտում
Դաս է սերտում:

81 թ<վական>, նոյ. այս ոտանավորը բռնեցին Հմայակն ու Միքայելը. մեր տեսուչ Տիգրանը ինձ ուզում էր ռոզգի տալ, բայց լացով պրծա:

(Թագավորի սպանելուց հետո, այն օրերում):

ՌԻՀ 5, 177:

1 8 8 2

<Մայիս>, Ջալալօղլի. – Գրում է ոտանավոր (չի պահպանվել)՝ նվիրված արևի խավարմանը, և կարդում ընկերների մոտ (տե՛ս 1880, սեպտեմբերի 1):

Ս. Աբովյանը հիշում է. «Օհանեսը տվեց նկարագիրը և արևի լրիվ խավարման. մութը պատել էր աշխարհը, խառնվել

էին իրար աշակերտ-աշակերտուհիները, ահ ու սարսափի մեջ էին ընկել կենդանիները»։*

* Ա. Ինճիկյանը ենթադրում է (ԱԻ, 113), որ այն հավանաբար գրվել է 1882 թ. մայիսի 5-ին տեղի ունեցած արևի խավարման («Արարատ», 1882, թիվ 5, էջ 206) առիթով:

ԹԺՅ, 215:

Դեկտեմբերի 6.– Տիգրան Տեր-Դավթյանի դպրոցը փակվում է:

«Մշակ», 1882, թիվ 233:

1882, Ջալալօղլի.– Գրում է «Օրորք» բանաստեղծությունը:

Գրված է Ռ. Պատկանյանի օրորոցային երգերի և «Արաքսի արտասուքի» ազդեցությամբ: Պահպանված սևագիր ինքնագիրը թվագրված է՝ 1882 ամի (13 տարեկան):

ԵԼԺ 1, 313, 641-642:

1 8 8 3

Հունվարի 14.– Ջալալօղլու դպրոցը երկրորդ անգամ փակվում է դրամական միջոցների սղության պատճառով:

«Մշակի» թղթակիցը տեղեկացնում է. «Ուրբաթ, 14-ին հունվարի արդեն փակվեցավ մեր երկսեռ դպրոցը: Ուսուցիչներին հայտնեցին, որ ուսումնարանը արդեն փակված է, վճարեցին նրանց ռոճիկները և առաջարկեցին հեռանալ ուր որ կամենան» («Մշակ», 1883, թիվ 11): Ինչպես հետագայում հաղորդում է «Մշակը» (1883, թիվ 78, մայիսի 15), դպրոցը «նորից բացվեցավ», բայց թուրքական արդեն վերադարձել էր հայրենի գյուղ:

ԵԼԺ 8, 426:

<Հունվարի երկրորդ կես>. – Գրում է «Հայ վաճառական» ոտանավորը:

Պահպանված սևագիր ինքնագիրը թվագրված է՝ «1883 ամի Տփլիս»: Կողքին թուրքականը նշել է. «Դեռ Թիֆլիս չէի եկած, որ Ջալալօղլի այս ոտանավորը կարդացի»: Սարգիս Արուստամյանը հիշում է. «Առաջին ոտանավորը, որ նա մեզ կարդաց,

վերաբերում էր Ջալալօղլու առևտրականներին» (տե՛ս 1880, սեպտեմբերի 1):

ԵԼԺ 1, 315-316, 642:

Օգոստոսի սկիզբ.– Թուրքականը հոր հետ մեկնում է Թիֆլիս և ընդունվում «Կադետսկի կորպուս» զինվորական դպրոցը: ԹՄՊ, 109:

<Օգոստոսի կես>, Թիֆլիս.– Մի քանի օր «Կադետսկի կորպուսում» մնալուց հետո վերադառնում է գյուղ՝ չղիմանալով զինվորական զինեթոթիկ դպրոցի խիստ կարգ ու կանոնին: ԹՄՊ, 109:

Օգոստոս. – Հոր հետ Դսեղից մեկնում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոց ընդունվելու:

Նվ. Թուրքականը հիշում է. «Այն ժամանակ Լոռուց Թիֆլիս էին գնում ծիով, ֆուրգոնով կամ ոտքով: Ճանապարհորդությունը օրեր էր տևում: Նրանք գնում էին ծիով: Տան փոքրիկ երեխաները՝ Հովհաննեսի քույրերն ու եղբայրները, թռչկոտելով ու խաղալով գնում են մինչև Չաղի ձորը, ճանապարհ դնում ու վերադառնում գյուղ: Մայրն իր տղային վերջին հրաժեշտը տալուց հետո, արցունքն աչքերին, գնում է հերանց տուն, լաց լինում, մղկտում, թե՛ «Տղիս տարա՛ն...»:

ԹՄՊ, 105-107:

Օգոստոս – դեկտեմբեր, Թիֆլիս.– Բնակվում է մոր կողմից իրենց ազգական «Բաղդասար քեռու» կամ «Բաղդի քեռու» տանը:

Բանաստեղծը հիշում է. «Էդ տունը Բաղդի քեռու քեռակալ Նավասարդ Չորյանի տունն էր, Հավլաբար, Չորաբաշի եկեղեցուց ոչ հեռու:

Առաջին իրիկունն էր: Չորույց էին անում հերս, Բաղդի քեռին ու տանըցիքը:

Իմ մասին խոսելիս հերս խնդրեց, որ ինձ չթողնեն դեսդեն ընկնեն, փողոցի տղերանց հետ ընկերանամ:

Տանըցիք հորս հանգստացրին, թե ինչու պետք է դեսդեն ընկնի, ընկերը մեր տանն է, էլի: Մեր Ստեփանիցն էլ լավ ընկե՛ր»: ԵԼԺ 7, 378:

Օգոստոս-սեպտեմբեր. – Ծանոթանում և մտերմանում է Ստեփան Ջորյանի՝ հետազայուն դաշնակցության հիմնադիրներից մեկի՝ Ռոստոմի հետ:

Բանաստեղծը հիշում է. «Նա ռեալական դպրոցումն էր սովորում, ես Ներսիսյան: Նա իրանց դպրոցն էր գովում, ես մերը և հաճախ իրար դեմ էինք բերում՝ ես հայկականը, նա օտարը, գլխավորապես ռուսականը: Էլ գրականություն, էլ պատմություն, էլ հերոսներ, էլ ժողովուրդ, թեև, իհարկե, դրանցից շատ քիչ տեղեկություն ունեինք: <...> Մի քանի տարուց հետո մեր վեճերը շատ էին փոխվել: Քանի ես հակվում էի դեպի օտար գրականություններն ու ցրվում դեպի հեռուները, նա ուժեղ թափով կենտրոնանում էր հայության վրա»:

ԵԼԺ 7, 379, 382:

Մինչև սեպտեմբերի 1, Թիֆլիս. — Ընդունվում է Ներսիսյան դպրոցի երկրորդ դասարան:

Ընդունելության քննություններն սկսվում էին օգոստոսի 22-ից և տևում մինչև սեպտեմբերի 1-ը («Արձագանք», 1883, թիվ 33, 422):

ԱԻ, 119:

Սեպտեմբերի 1, Թիֆլիս. — Սկսում է հաճախել Ներսիսյան դպրոց:

ԱԻ, 119:

Սեպտեմբերի 3. — Փարիզում վախճանվում է Ի. Ս. Տուրգենևը:

Այդ լուրը խորապես ցնցում է Թումանյանի նոր ընկերոջը՝ Ստեփան Ջորյանին:

Հետազայուն բանաստեղծը հիշում է. «Նոր եկած օրերս էր: Ստեփանը մի օր այլալված տուն ընկավ ու հայտնեց, թե Տուրգենևը մեռել է: Մեր ամբողջ շրջանում ոչ ոք հասկացողություն չունեի, թե ով է Տուրգենևը, բայց Ստեփանի սարսափը տեսնելով, բոլորս էլ սարսափեցինք: Ձգացինք, որ մի մեծ դժբախտություն է պատահել, որ Ստեփանի վրա էդքան ազդել է, որովհետև քիչ կպատահեր, որ նա իրեն էդպես կորցներ: Եվ մենք երկու օր Հավլաբար դես-դեն ու սրա-նրա մոտ էինք

վազում միասին: Լավ չեմ հիշում, թե ինչու, բայց վազվզում էինք Տուրգենևի մահվան պատճառով»:

ԵԼԺ 7, 380:

«Սեպտեմբեր – հոկտեմբեր», Թիֆլիս. — Ներսիսյան դպրոցում ծանոթանում և մտերմանում է երրորդ դասարանի աշակերտ, ապագա քիմիկոս-մանկավարժ Սիմեոն Հովվյանի հետ:

Հովվյանը հիշում է. «Մեր Ուհանեզը, - այսպես էինք կոչում ընկերական նեղ, մտերմական շրջանում մեր անգուգական բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, երբ այս կամ այն առիթով խոսք էր բացվում նրա մասին: - Այդ մտերմական, սրտագին շեշտը նկատվում էր նաև նրան լավ ճանաչող համազյուղացիների կամ, ընդհանրապես, լոռեցիների շրջանում: Հաճախ, շատ հաճախ եմ լսել, լսել եմ և ուրիշները գյուղացիների բերանից:

- Քաղաք գնացի՞ր:

- Հա՛:

- Բա Ուհանըզին տեհար ո՞չ...

Այսօրվա նման հիշում եմ Հովհաննես Թումանյանի դարչնագույն բլուզը, կաշվե դեղնավուն գոտին (քամարը), մշտաժպիտ դեմքը, երբ նա առաջին անգամ Ներսիսյան դպրոց եկավ: Ես Ներսիսյան դպրոցում մաթեմատիկայից, մանավանդ հանրահաշվից, ուժեղ և առաջադեմ աշակերտի համբավ ունեի, և որովհետև Հովհաննեսը մաթեմատիկայից օգնության կարիք էր ունենում, հաճախ օգնում էի նրան լուծելու թվաբանական կամ հանրահաշվական չհասկացած խնդիրները»:

ԹԺԳ, 246-248:

«Ամառվա վերջ – աշնան սկիզբ». - Ներսիսյան դպրոցի երկրորդ դասարան է ընդունվում Հակոբ Ստեփանյանը (հետագայում՝ ինժեներ-տեխնոլոգ, հասարակական գործիչ) և դպրոցի բակում հանդիպելով Թումանյանին՝ ծանոթանում է հետը:

Ստեփանյանը հիշում է. «1883 թվականն էր, ուսումնարան մտնելու օրերը: Լոռեցի տեր Թադևոսը, գյուղական տերտերի խունացած փարաջան ուսին, իր տղային բերել էր Թիֆլիս՝ «Վանքի շկոլը» տալու <...> Ինձ էլ իմ եղբայրս էր բերել

Սուլուակից՝ նույն դպրոցի 2-րդ դասարանը տալու: Այստեղ՝ բակի պատշգամբում, սանդղաղթի գլխին՝ դասի հրավիրող զանգի տակը <...> հանդիպեցի ապագա բանաստեղծ Հովհաննես Թումանյանին: Միաժամանակ ընդունվեցինք 2-րդ դասարանը և միասին էլ փոխադրվեցինք 3-րդ...»:

ԹԺՂ, 291:

Դեկտեմբեր, Թիֆլիս. — Տեղափոխվում է ժամկոչ Ավագի տունը, ուր մնում է մինչև 1886 թ. հունիսը:

ԹԺՂ, 328, 938:

Զմեռ, Թիֆլիս. — Թումանյանին հանդիպում է ԱՆ. Աբովյանը:

Այնուհետև պատանհները հանդիպում են ամեն օր, զբաղվում ընթերցանությամբ, ապագայի ծրագրեր մշակում:

ԱՆ. Աբովյանն հիշում է. «Խ. Աբովյանի «Կերք Հայաստանին» երկուսս էլ թեպետ վաղուց կարդացել էինք, բայց ցանկանում էինք նորից կարդալ, ու չէր ճարվում: Հովհաննեսի հայրն ուներ, նամակ գրեց, ուղարկեցին. նորից կարդացինք. սրտներս թունդ ելավ. ուզում էինք մենք էլ մի-մի Աբովյան և Աղասի դառնալ:

Մեր ծրագիրներն սկզբում համեստ էին, բայց հետզհետե լայնացան ու այնպիսի չափերի հասան, որ իրագործելն անհնարին էր: Բայց մենք ոգևորվում էինք ու սրտապնդվում, որ ժամանակի ընթացքում բոլորը պետք է գլուխ բերենք անշուշտ: Ցանկանում էինք դեռ ուսում առնել, հետո գնալ գյուղերը, մտնել ժողովրդի մեջ ու գրի առնել հին ավանդություններ, լեգենդներ, հեքիաթներ, առակներ, դյուցազներգություններ, անեկդոտներ ու առասպելներ և հրատարակել»:

ԹԺՂ, 221 – 223:

1883. — Գրում է «Երբ որ կանցնի ծմեռն սաստիկ» բանաստեղծությունը:

Ինչպես հիշում է Ե. Անդրեասյանը (ԹԺՂ, 218), նմանություն է Ն. Ռուսինյանի «Կիլիկիայի», որ պատանի Թումանյանի սիրած երգերից էր:

ԵԼԺ 1, 317, 642:

Հունիս. — Դպրոցական ամառային արձակուրդներին Ա. Հովվյանի հետ գյուղից մեկնում է Թիֆլիս՝ ձիով (Թիֆլիս—Կարս երկաթուղին դեռ չկար):

Ա. Հովվյանն հիշում է. «Ձիով Թիֆլիսից գյուղ և գյուղից Թիֆլիս գնալ-գալը իր վերին աստիճանի հրապուրիչ և ռոմանտիկական, բանաստեղծական գրավչությունն ունի: Ուչքիլիսայի և Խոժոռնու վերելքի սքանչելի, կուսական անտառները, զնայլելի տեսարանները, Մեխակի աղբյուրի անմահական ջուրը, ճանապարհին՝ ստվերախիտ ծառերի տակ հանգստանալը և գառան խաշլամայով, տապակած կամ եփած ճուտի մսով նախաճաշելը, Շուլավերում գիշերը ու գառան խորովածով ընթրելը, վրայից էլ մի երկու բաժակ Շուլավերի գինին վայելելը անջնջելի տպավորություն են թողնում ամեն մի լոռեցի աշակերտի, ինտելիգենտի և բնության սքանչելիքներով հրապուրվող ուղևորի վրա:

Շատ տարիներ հետո, երբ 1899 թ. Թիֆլիս – Կարս երկաթուղին շինվեց, ու լոռեցիներն սկսեցին «քաղաք» գնալ-գալ արդեն երկաթուղով, Հովհաննեսը, անցյալը հիշելիս, քանի՜ – քանի՜ անգամ է պատեհ առիթով ինձ և ուրիշներին ասել.

- երևե՛կ է՛ն օրը, որ ձիով քաղաք էինք գնում ու քաղաքից գյուղ գալիս... Բա Ուչքիլիսի անտառները, Մեխակի աղբյուրը, ճանապարհի մոշն ու մոռը... Է՛յ գիղի, հա՛: Այտա՛, եկե՛ք մի կամպանիա սարքենք, ձիով քաղաք գնանք մի անգամ ու մեր է՛ն հին ճանապարհորդությունը հիշենք...»:

ԹԺՂ, 248:

<Օգոստոսի սկիզբ>, Թիֆլիս. — Թողնում է «քեռի Բաղդոյի» տունը և մեկնում Դսեղ:

ԱԻ, 133:

Օգոստոսի 15, Թիֆլիս. — Ա. Կուկիայի եկեղեցու բակում ծանոթանում է հայ ազգային - ազատագրական շարժման ռազմավիրաներից մեկի՝ Ալեքսանդր (Վարդան) Գոլոշյանի մոր և քրոջ՝ Դարյա Գոլոշյանի (հետագայում՝ Թադևոսյան) հետ:

Վերջինս պատմել է Նվ. Թումանյանին. «1884 թ. օգոստոսի 15-ին Թումանյանին հանդիպեցի Ս. Կուկիայի եկեղեցու բակում, ուխտի օրը: Մորս զրույցից լսեց եղբորս փախուստի մասին Պարսկաստան: Մայրս գտավ, որ Հովհաննեսը շատ է նման իր տղային... Շատ սիրեց, ու մենք բոլորս մտերմացանք» (ԹԸԱ):
ԱԻ, 144:

<Օգոստոսի կեսեր>.- Իր հորեղբոր՝ Գրիշկա բիծայի հետ Լոռու ձորում այցելում է Ղոխնանց պապին՝ Իգահատ գյուղացի ծեր այգեպանին («Հառաչանք» պոեմի ծերունու նախատիպը):
Նրանից լսում է Չոփուռի տղաների պատմությունը:
Պոեմի «Վերջերգի» ձեռագրի ներքևը կա հեղինակի նշումը. «1884 թ. Ղոխնանց պապի դափում Գրիշկի հետ. Չոփուռի տղերանց հետ գնալուց մի քանի օր հետո»:
ԵԼԺ 3, 65, 510:

Սեպտեմբեր, Թիֆլիս. — Տեղափոխվում է օծունցի ժամկոչ Ավագ Եեկ-Վարդանյանցի տունը՝ որպես ճաշորդ («Նախլեբնիկ»):

Տուն կոչվածը Կուկիա թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցու բակում գտնվող շինության ներքնահարկի մի սենյակ էր, ուր ապրում էր ժամկոչի ողջ ընտանիքը, նրանց հետ՝ նաև պատանի Թումանյանը: Բնակվարձից բացի գյուղից նրան ուղարկում էին նաև սննդամթերք, որ մտնում էր «ընդհանուր կաթսա» և բանաստեղծին շատ քիչ բաժին էր հասնում:

1937 թ. օգոստոսի 24-ին Նվ. Թումանյանին ուղղված նամակում Բագրատ Մկրտումյանը գրում է. «Մղդսի Ավագի ընտանիքը չքավոր էր..., ամսական 10 ռուբլի էր ստանում և գանձանակի գրոշներ... Եվ Ուհաննեսին «Նախլեբնիկ» ընդունելու գլխավոր նպատակն, անշուշտ, այն է եղել, իմ կարծիքով, որ «նրանով յոլա գնան»: ... Եվ հենց այդ «յոլա գնալու» պատճառով է, որ ... Թումանյանը աշակերտ եղած ժամանակ տխուր ու ճնշվածի տպավորություն էր թողնում նայողի վրա...» (ԹԸԱ):

Ժամկոչ Ավագի տանը Թումանյանը բանաստեղծություններ էր գրում, որ շատ է վախեցնում ծերունի տանտիրոջը. իր կշտամբանքները վերջինս պատճառաբանում էր նրանով, որ

Հովհաննեսը դասերը թողած «շուն ու կատվի» հետևից է ընկել... (ԹՄՊ, 111):

ԱԻ, 133:

Սեպտեմբեր, Թիֆլիս. — Ծանոթանում և մտերմանում է մասնավոր փաստաբան Գրիգոր Գուլոշյանի ընտանիքի հետ (տե՛ս օգոստոսի 15):

Ընտանիքը բնակվում էր այն տան վերին հարկում, որի ներքնահարկի մի սենյակը զբաղեցնում էր ժամկոչ Ավագը և ուր «Նախլեբնիկ» էր պատանի Թումանյանը: Հետագայում մոտիկից շփվում է հատկապես նրանց ավագ որդու՝ Ալեքսանդր Գուլոշյանի հետ, որ մեծ տպավորություն է թողնում բանաստեղծի վրա և դառնում նրա «Հին կռիվը» պոեմի հերոսի՝ Վարդանի նախատիպը:

ԱԻ, 141. ԵԼԺ 4, 561-565:

Հոկտեմբերի 9, Թիֆլիս. — Տեղի է ունենում Ներսիսյան դպրոցի մանկավարժական ժողովը, ուր պետք է ընտրվեին որդեգիր սաներ:

Թումանյանը դուրս է մնում ներկայացված թեկնածուների ցուցակից՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Սորա մասին ոչինչ տեղեկություն չկար» (ՀՍՄՀ, ՊԿՊԱ, ֆ.2, ց.1, գ. 113, թ. 89):

Ըստ Ս. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանը «խնդիր է տվել որդեգիր (ծրիավարժ գիշերօթիկ աշակերտ) ընդունվելու համար, բայց չի հաջողվել»: Հուշագիրն այս տեղեկությունը քաղել է իր «Հիշատակարանից», ուր 1891 թ. գրի է առել բանաստեղծի պատասխաններն իր հարցումներին:

ԱԻ, 132-133. ԹԺՀ, 243-244:

<Հոկտեմբեր - դեկտեմբեր>, Թիֆլիս. — Նամակներ Դսեղ՝ ծնողներին (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 7, 476:

<Մինչև դեկտեմբերի 30-ը>, Թիֆլիս. — Դսեղից՝ ծնողներից, ստանում է 10 ռ. և սննդամթերք:

«Ստացա ձեր ուղարկած տասը (10) ռուբլին, չի առա

պալտո, ալ երկու մանեթ (2 մնթ) և մի քանի շահի, որ պարտ էինք չերչոնց տղերանցը*, տվի, մնացածը կենում է և ուզում եմ վերնաշապիկ, շավար ու շապիկ ու շապկահնգեր առնել, իսկ պալտոն ավելորդ եմ համարում, որովհետև այստեղ տաք է, ուսումնարանը տաք է, մեջտեղը մի քանի քայլ է, էլ ուրիշ գնալու տեղ չունեմ. ստացանք նույնպես մի տիկ թան, մի աղլուխ չիր և մի տոպրակ պանիր»:

* Թիֆլիսաբնակ ծորագյուղցի խանութպաններ:
ԵԼԺ 9, 7, 476:

<Մինչև դեկտեմբերի 31-ը>. – Գյուղ է ուղարկում ստացած սննդամթերքի ամանները և փոքրիկ նվերներ:

«... Ամանները հետ ուղարկեցի. նույնպես ուղարկեցի շաքար, չայի, քյամար մի հատ և կոնֆետ ըխանց համար (անցյալ նամակում ևս գրել եմ): Ստացա այժմ և մի թաս յուղ (յուղն ավելորդ էր) ուղարկում եմ ահա թասը, տոպրակը և ձեր ասած սև կոճակները»:

ԵԼԺ 9, 7:

1884, *Թիֆլիս*. – Գրում է «Ինչո՞ւ ես տխուր» ոտանավորը:

Նմանություն է Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությանը: Պահպանված ինքնագրի տակ՝ բանաստեղծի նշումը՝ «Դասատանը»:

ԵԼԺ 1, 318, 642:

1884, *Թիֆլիս*. – Դժգոհ է Ներսիսյան դպրոցի ներքին կարգ ու կանոնից, դասավանդումից:

Ան. Աբովյանը հիշում է, որ դեռ երրորդ դասարանից «Հովհաննեսն արդեն տրտնջում էր դպրոցի ամբողջ կազմի, դասավանդության ու առհասարակ ներքին կարգուկանոնի դեմ և ուզում էր դպրոցից դուրս գալ: <...> Շատ կարդալուց էր գուցե, որ նրա ճաշակն այնքան զարգացավ, որ էլ չէր հավանում Ներսիսյան դպրոցն ու այնտեղի դասավանդությունը: <...> Շարունակ պրպտումներ էր անում մի մեկենաս ճարելու, որի հաշվով ապագայում պարտքը վճարելու պայմանով գնար ուրիշ տեղ ուսումը շարունակելու և նույնիսկ բարձրագույն ուսում ստանալու» (Ան. Աբովյան, Հիշողություններ Հովհ.

Թումանյանի կյանքից, «Պատկոն», 1923, թիվ 2, էջ 11-12): Դասընկերների վկայությամբ՝ ցանկություն է ունեցել գնալ Վենետիկ՝ հավանաբար Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում սովորելու (Մելքոն Ասլիբեկյանի նամակը Նվ. Թումանյանին, ԹԸԱ):

ԹԺՀ, 225:

1 8 8 5

Հունվարի 1, Թիֆլիս. – Նամակ Դսեղ՝ ծնողներին (պահպանված նամակներից առաջինն է):

Շնորհավորելով նոր տարվա առթիվ՝ դժգոհություն է հայտնում, որ իր նամակներին չեն պատասխանում (այդ նամակները և դրանց ենթադրյալ պատասխանները չեն պահպանվել):

«Հարգելի ծնողք իմ,

Շնորհավոր Նոր Տարի!

Որդիական սիրով և անկեղծ սրտով բարևս մատուցանեմ ձերը թանկագին հրամանոցդ. եթե մեզանից հարցանեք փառք Ամենազորին ողջ եմք և առողջ. միայն ձերը ողջությունն կցանկամք: Մինչև այստեղ նույն իսկ նոր տարու օրն եմ գրել և հանկարծ սրտիս վրա գնալով՝ էլ չգրեցի, որովհետև ահա քանի անգամ է նամակ եմ գրում պատասխան չեմ ստանում»:

ԵԼԺ 9, 7-8, 476:

Հունվարի 17, Թիֆլիս. — Շարունակում է հունվարի 1-ին սկսած նամակը ծնողներին:

ԵԼԺ 9, 8:

Փետրվարի 25, Թիֆլիս. — Լրացնում է հունվարի 1-ին և 17-ին ծնողներին գրած նամակի ծրարը:

ԵԼԺ 9, 8:

<Փետրվար – մարտ>, Թիֆլիս. – Գրում է բանաստեղծություն՝ հակացարական տրամադրությամբ (չի պահպանվել):*

* Բանաստեղծությունը գրված է եղել հայկական ժխական դպրոցները փակելու մասին Ալեքսանդր III –ի՝ 1885 թ. փետրվարի

23-ի հրովարտակի առիթով: Նվ. Թումանյանը գրում է. «Ժամանակի դեպքերից Թումանյանի վրա շատ խորն է ազդել և տպավորվել 1885 թվին՝ Ալեքսանդր 3-րդ ցարի ժամանակ, հայկական ծխական դպրոցների փակումը: Ասում են՝ պատանի բանաստեղծի բարկությունն ու վիշտը չափ ու սահման չունեն: Չայրույթով էր լցված միապետության դեմ: Գ. Շուղուրյանը հիշում է, որ 1885 թ. Թումանյանը մի բանաստեղծություն է գրել դպրոցները փակելու առթիվ և իր այդ ոտանավորի մեջ ցարին անվանել է «գազան»:

ԹՄՊ, 131:

Մարտի 12, Թիֆլիս. — Ուղարկում է հունվարի 1-ին սկսած և փետրվարի 17-ին ավարտած նամակը՝ ծնողներին: *

* Թումանյանն այս նամակը գրել է, երբ Ներսիսյան դպրոցի երրորդ դասարանի աշակերտ էր: Նամակը հետաքրքրական փաստաթուղթ է ոչ միայն 15-ամյա պատանու գրագիտության աստիճանի, այլև նյութական վիճակի մասին: Որոշակի երևում է, որ նա ապրել է պարտքերով, ծնողներից ստացած փողով չի կարողացել բավարարել իր ամենատարրական կարիքները: Նույնը հաստատում են նաև Ներսիսյան դպրոցի նրա դասընկերները. «... Տանից հագիվ էր դրամ ստանում, որի հետևանքով ապրում էր բավականին դժվարությամբ: Չարմանալի չէր, որ ամռան արձակուրդներին քաղաքից գյուղ փախչողների մեջ Օհանեսը առաջինն էր լինում (ԹԺՅ, 216, Սարգիս Աբովյանի հուշերից):

ԵԼԺ 9, 8:

Մայիս, Թիֆլիս. — Երրորդ դասարան փոխադրվելու առիթով Ջիկինյան եկեղեցու բակում ամբողջ դասարանով լուսանկարվում են:

Ըստ Գ. Ստեփանյանի հուշերի՝ լուսանկարվողների հետ եղել են նաև իրենց դաստիարակ, թվաբանության ուսուցիչ և դասագրքի հեղինակ Գրիգոր Վարձեյանը և եկեղեցու պատմության ձեռնարկի հեղինակ, ուսուցիչ Ղևոնդ քահանա Խարազյանը:

ԹԺՅ, 291:

Աշուն. — Տարածվում է Չոփուռի տղաների «ղաչաղ» դառնալու լուրը:

Շշուկներ էին շրջում, թե այդ տղաներից Սոլոմոնին տեր Թադևոսն ու Ստեփան Մամիկոնյանն են մատնել, և Չոփուռի տղերքը որոշել են վրեժխնդիր լինել: * Այս լուրերից վախեցած

Թումանյանը որոշում է թողնել ուսումնարանը և մեկնել հայրենի գյուղ:

Սիմեոն Գովվյանը հիշում է. «1885 թվականն է, աշնան սկզբները, եթե չեմ սխալվում, մոտավորապես հոկտեմբեր ամիսը <...> Երեկոյան սերտողության ժամանակ վերակացու Արշակ Դեմուրյանը մոտեցավ ինձ և ասաց.

- Պարոն տեսուչը քեզ կանչում է:

Թուրք ցամաքեց, սաստիկ վախեցա... Երբ ներս մտա, տեսա, որ Գովվանեսը մի ձեռքը ծոցին դրած, տխուր և մի տեսակ խռովածի պես կանգնած է տեսչանոցի անկյունում, իսկ տեսուչ Արշակ Նահապետյանը նրա հետ խոսում է կանգնած և ըստ երևույթին բարեկամական, ոչ պաշտոնական եղանակով:

Ինձ տեսնելուն պես Նահապետյանը, ձեռքով ցույց տալով Գովվանեսին, ասաց (Նահապետյանին հայտնի էր իմ և Գովվանեսի մոտ լինելը).

— Ուզում է ուսումնարանը թողնել, գյուղ գնալ: Եկել է վկայական է ուզում: Համոզիր սրան, - մի առանձին շեշտով ավելացրեց մեր հանգուցյալ տեսուչը, - որ այդպիսի հիմարություն չանի»:

Ընկերոջ հորդորները զուր են անցնում. «Փաստն այն եղավ, որ մի գեղեցիկ օր էլ իմացանք, թե Ուհանեսը չկա, գնացել է գյուղ...»:

* Հետագայում թյուրիմացությունը պարզվում է. մատնիչը եղել է ոչ թե տեր Թադևոսը, որ այդ ժամանակ արդեն գյուղի քահանան չէր, այլ նրա հաջորդը՝ տեր Հակոբը (ԱԻ, 162):

ԹԺՅ, 251-252:

1885. — Ներսիսյան դպրոցում առաջին անգամ Թումանյանին տեսնում է Վարդան Շահպարոնյանը (հետագայում գրական-հասարակական գործիչ):

Շահպարոնյանը հիշում է. «Թումանյանին ես ճանաչում էի դեռ 1885 թ., երբ տասնմեկ տարեկան հասակում Ախալքալաքից գալով Թիֆլիս, մտա Ներսիսյան դպրոցի առաջին դասարանը: Այդ ժամանակ նա, որքան հիշում եմ, IV դասարանի աշակերտ էր. քիչ էր մասնակցում աշակերտական խաղերին. միշտ մտազբաղ էր, խոհուն, առանձին պատկառանք էր ազդում

դիտողի վրա և, կարծեք թե նույնիսկ այդ հասակում նրա շարժումների, դեմքի և հայացքի արտահայտության մեջ նկատվում էր ինչ-որ վեհություն: Ես թուևանյանից փոքր էի, նրա հետ առանձնապես ոչ ծանոթ էի և ոչ էլ ընկեր, բայց հիշում եմ, որ նա ուներ առանձին գրավչություն և դեռ պատանի հասակից դեպի իրեն էր գրավում ուրիշների ուշադրությունը: Չէ՞ որ կային հարյուրավոր աշակերտներ, բայց նրանցից շատ քչերն են հիշողությանս մեջ մնացել:

Հենց այդ թվականներին թուևանյանը թողեց Ներսիսյան դպրոցը: Դրանից հետո նա արդեն մեզ՝ փոքրերիս հայտնի դառավ իբրև բանաստեղծ՝ «Աղբյուր» մանկական ամսագրում գետեղված իր ոտանավորներով:

Չեմ մոռանում նրա ժպտացող, գրավիչ դեմքը, որ ամառային վերարկուն ուսերին, նեղ եզրավոր գլխարկը թեք դրած, զբոսնում էր Գոլովինյան (այժմ Ռուսթավելու) պողոտայում...»: ԹԺՅ, 416:

1885. – Թուևանյանը դուրս է գալիս Ներսիսյան դպրոցից և սկսում աշխատել գինվորական իրերի խանութում:

Կարճ ժամանակ անց հեռանում է:

Ան. Արուսյանն հիշում է. «Հովհաննեսին շատերը նկատողություն էին արել, թե ինչու է նա պարապ-սարապ թրև գալիս, ինչու գոնե մի վաճառականի մոտ աշակերտ չի մտնում: Ինքը նման պաշտոն չէր սիրում, երբ ինձանից խորհուրդ հարցրեց, ես էլ հավանություն չտվի: Ես միայն խորհուրդ էի տալիս ուսումը շարունակելու:

Մի օր էլ եկավ, ասաց, որ հենց մեր խանութի դիմաց, գինվորական իրեղենի խանութում իրեն աշակերտ են ուզում, և որովհետև ինձ մոտիկ է, ուստի նա արդեն տվել է իր համաձայնությունը»:

ԹԺՅ, 226:

1885.– Թիֆլիս է գալիս Ան. Արուսյանի հայրենակից Ե. Խարազյանը՝ իր խանութի համար գնումներ կատարելու:

Ծանոթանում է Թուևանյանի հետ և տալիս իր համաձայնությունը՝ երեքով ժողովածու հրատարակելու:

Ան. Արուսյանը հիշում է. «Նրա պես մի փորձառու մարդու հետ ընկերակցելը մեզ ավելի ոգևորեց: Շտապելուց, դեռ նյութերը չհավաքած, իսկույն մի առաջաբան գրեցի և մյուս օրը Խարազյանին ցույց տվի. նա ժպտալով ասաց, որ դեռ առաջաբանի ժամանակը չէ, սկզբում նյութեր պետք է պատրաստել»:

ԹԺՅ, 223:

1885.– Ծանոթանում է Թիֆլիս եկած Ս. Շահագիզյանի հետ:

Շահագիզը Ան. Արուսյանի դպրոցական ընկերներից էր: Խարազյանից տեղեկանալով, որ երեքով ժողովածու են հրատարակելու, խնդրում է իրեն նույնպես ընդգրկել, բայց մերժում է ստանում:

ԹԺՅ, 226:

1885 - 1886

<Ամառ ... աշուն>.- Լոռում լսում ու գրի է առնում «Շուեն ու կատուն», «Անբախտ վաճառականներ», «Արծիվն ու կաղնին» ժողովրդական ավանդությունները:

Նվ. Թուևանյանը վկայում է. «Նա սիրով էր հիշում աշնան այն օրերը, երբ քեռիները սարից ձիով տուն դառնալիս ճանապարհին առակ ու լեզենդ էին պատմում: Նա հիշում էր քեռի Իսայուն, որը նրան պատմել է «Շուեն ու կատուն» գրույցը, «Արծիվն ու կաղնին», «Անբախտ վաճառականները» և մյուսները: Հետագայում, երբ սկսում է գրել, Թուևանյանն առատությամբ է օգտվում մանկության օրերին գյուղում լսած այդ ժողովրդական նյութերից՝ հեքիաթներից և լեզենդներից (ԹՄՊ, 52):

ԵԼԺ 2, 89, 549. 92, 550. 110, 555:

<Ամառ ... աշուն>. – Գրում է «Մի խրատ տաճկահայաստանցուն» բանաստեղծությունը:

Սևագիր վիճակում պահպանվել է Թուևանյանի՝ չորրորդ դասարանի տետրի էջերում և չի մտել ԵԼԺ հրատարակության մեջ: Գրվել է 1889 թ. Ֆրանսիայում կայանալիք համաշխարհային ցուցահանդեսի առիթով: Ցուցահանդեսի մասին դեռ

երեք-չորս տարի առաջ նյութեր էին տպագրվում մամուլում («Աշակ», 1886, թիվ 117):

Երբ դուք կլսեք, որ ամբողջ աշխարհի
Իր երկրի բերքը, արտադրությունը...
Բյուր մաշինները, նոր հեռախոսը
Տանում է Ֆրանսիայի ամեն տեղ հռչակված
Համաշխարհային շքեղ հանդեսը,-
Դուք էլ, ի սեր աստժո, հայ եղբայրք,
Աղաչում եմ ձեզ, քնած չմնաք,
Ստեք Հայաստան, առեք մի աման
Կրակ տված ձեր տների մոխրից,
Լցրեք լճերից՝ մի ուրիշ աման էլ՝
Ձեր մորթված խեղճ որդվոց արյունից...
....Այս ամենն էլ հավաքած բարձեք
Հայաստանի հին սայլակի մեջը
Ու կամաց կամաց սայլը քշեցեք
Դեպ՝ Ֆրանսիայի աշխարհահանդեսը,
Տարեք, դարսեցեք հանդեսի մեջը
Ու ասացեք. «Եղբայրք եվրոպացիներ,
Նայեցեք, մենք էլ Հայաստանիցը
Բերել ենք թուրքի ձեռքի պտուղներ»:
...Ոհ, եվրոպ, եվրոպ, նայիր երկնքին,
Այնտեղ է հասել հայի աղաղակ...
Դու, որ ճիշտ պատկերն ես Լանգթեմուրին,
Էլ քրիստոնեի ինչո՞ւ ծածկել ես դիմակ...
Դու, որ քո կոպեկը բարձր ես դասում,
Քան թե չորս միլիոն խեղճ ազգը հայոց,
Էլ ինչո՞ւ, ասա, ինչո՞ւ ես կրում
Դու «մարդասերի», «քրիստոնեի» անուն...

ԳԱԹ ԹՖ, 263. ԱԻ, 176:

<Ամառ ... աշուն>. – Ստանում է եղբոր՝ Ռոստոմի նամակը՝

Դսեղից (չի պահպանվել):

Գրում է տեր Թադևոսի տոհմական կալվածքների հետ կապված անախորժությունների մասին:

Այդ մասին «Հաղթական ամբոխը» ինքնակենսագրական պատմվածքում կարդում ենք. «Այդ ժամանակ ես ուսանում էի քաղաքում: Հեռու էի այն բոլոր դավերից ու շփոթություններից, որոնց մեջ ընկել էր մեր տունը: <...> Այդ ժամանակները նամակ

ստացա մեր տանից. եղբայրս գրում է, թե ազենտն եկավ, ժողովրդին գրգռեց, և ժողովուրդը կանգնել է, թե մեր հողերը հասարակությանն են պատկանում...»:

ԵԼԺ 5, 491-492:

1 8 8 5 1 8 8 7

Դսեղ – Թիֆլիս. – Գրում է բազմաթիվ առակներ ու լեզենդներ՝ բանահյուսական հիմքի վրա և Լոռու բարբառով (չեն պահպանվել):

Բանաստեղծը հիշում է. «Մի ժամանակ (1885 – 1887) էր տեսակ բաներ, ժողովրդական առակներ ու լեզենդներ շատ էի գրում բարբառով ու շատ էլ ունեի, բայց որովհետև չէի պահում, դես դեն կորան...»:

ԵԼԺ 2, 550:

1 8 8 6

Փետրվարի 20 կամ 22. – Իր նախկին ուսուցչի՝ Տիգրան Տեր-Դավթյանի նախածեռնությամբ Ներսիսյան դպրոցի աշակերտ Թումանյանը ներկա է լինում «Համլետի» ներկայացմանը՝ Պետրոս Ադամյանի մասնակցությամբ:

Բանաստեղծն հիշում է. «Էդ գիշերը ինձ համար եղավ մի կախարդական գիշեր և գրեթե վճռական նշանակություն ունեցավ իմ ողջ գրական կյանքում: Էդ գիշեր ես էնքան սիրեցի «Համլետը» և հետո էլ Շեքսպիրը, որ մի քանի դրամա գրեցի ու միշտ ոչնչացրի, որովհետև Շեքսպիրի գրածների մասն չէին դուրս եկել: Սակայն էնքան ուժեղ էր կախարդանքը, որ մինչև օրս էլ ես ինձ ավելի դրամատուրգ եմ համարում, քան ուրիշ բան»:

ԵԼԺ 7, 355:

<Փետրվարի 23-ից մայիսի վերջ>, *Թիֆլիս* .- Առաջին անգամ այցելում է Րաֆֆուն:

Բանաստեղծը հիշում է. « ... Հենց էդ օրերը, դեռ աշակերտ, եղա Րաֆֆու մոտ, երբ առաջին փռած «Սամվելն» էր գրում ու սրբագրում»:

ԵԼԺ 7, 254. ԱԻ, 159:

Մայիս .— Մեկնում է Դսեղ՝ առանց տարեվերջյան քննություններին սպասելու (տե՛ս 1885, աշուն):

ԱԻ, 162:

Մայիսի 30 .— Տեղի է ունենում Ներսիսյան դպրոցի մանկավարժական խորհրդի նիստը:

Որոշվում է 4-րդ դասարանի աշակերտ Զովի. թումանյանին թողնել նույն դասարանում՝ տարեվերջի քննություններին չմասնակցելու պատճառով:

ԱԻ, 170:

Հունիսի 1, Թիֆլիս .— Գրում է պարտամուրհակ իր խնամակալ Ավագ Շեկ-Վարդանյանցին 121 ռուբլի պարտքի դիմաց և մեկնում Դսեղ:

Պարտամուրհակը. «Ի՛ 1886 ամի 1 օրն հունիսի, ի՛ քաղաքն Տփլիս.

Մուրհակ պարտուց հարիւր քսան և մեկ ռուբլոյ

Ես ի՛ ներքոյ սորին ստորագրեալ Տփլիսու նահանգի Լոռոյ գաւառի Դսեղ գեղջ բնակիչ Յովհաննես Տեր-Թադևոսեան թումանեան տամ զայս մուրհակս հարիւր քսան և մեկ (121) ռուբլոյ քեզ, Ավաք Վարդանեանիդ նոյն նահանգի նոյն գավառի և Օծուն գիւղի բնակիչ և այժմ ժամանակաբնակ Տփլիս քաղաքի որ պարտ եմք իբրև վարձ ինձ վերա ունեցած խնամատարութեան սկսյալ ի՛ հազար ութ հարիւր ութսուն և չորս թուականի սեպտեմբեր ամսէն մինչև հազար ութ հարիւր ութսուն և վեց թուականի յունիս ամիսը, ի բաց առեալ արձակուրդի յունիս, յուլիս և օգոստոս ամիսները և պարտ եմ վերոյ յիշեալ դրամը պահանջման ժամանակ վճարել, որ և ստորագրեմ իսկական ձեռամբ իմով:

Յովհաննես թումանեանց»:

ԹԺԴ, 328,938:

«Հունիսի վերջ, հուլիսի սկիզբ».— Ուզունլար գյուղում ամռանը հանգստանալիս Ա. Զովվյանը այգիներում ծիրան հավաքելու ժամանակ հանդիպում է թումանյանին:

Զովվյանը հիշում է. «...Դժվարանում եմ աչքերիս հավատալ, մեր Ուհանեզը տրեխները հագին, թուրքական սև տոլաղները կապած, սև մորթե փափախը գլխին, բերդանկա կոչված հրացանը ուսին, Զովուռի տղա՝ Ռամազի հետ գալիս է դպի բազմությունը գետափով»:

ԹԺԴ, 254:

Սեպտեմբեր, Թիֆլիս.—Ներսիսյան դպրոցում մի առարկայից վերաքննություն հանձնելիս ձախողվում է և մեկընդմիջտ հեռանում է դպրոցից՝ չորրորդ դասարանը չավարտած:

ԱԻ, 170:

«Սեպտեմբեր - դեկտեմբեր».- Գրում է «Շունն ու կատուն» բալլադը*:

*ժողովրդական գրույցը լսել է Լոռում իր քեռի Իսայուց:

ԵԼԺ 2, 89, 549:

«Հոկտեմբեր - դեկտեմբեր 1887-ի հունվար - փետրվար», *Թիֆլիս* .— Ներկա է լինում Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ» և «Արքա Լիր» ողբերգությունների ներկայացմանը՝ Պետրոս Ադամյանի դերակատարությամբ:

ԱԻ, 154 – 155:

1886. – Գրում է «Անբախտ վաճառականները» բալլադը: Բանաստեղծը հիշում է. «Էդ առակը աշակերտ ժամանակս Լոռի իմ քեռուցն եմ լսել ու տպածների մեջ իմ առաջին գրվածքներից միմն է»:

ԵԼԺ 2, 92, 550:

1886. – Թումանյանի կյանքում կատարվում են կարևոր իրադարձություններ:

Ինքնակենսագրական նոթերում բանաստեղծը գրառում է. «1886 - Ուսումնարանից դուրս գալը, հեղափոխականներ - Գոլոշյան – հիվանդություն, կոնսիստորիան, ամուսնություն, քահանայություն, ապահարզան, եկեղեցիներ, կռիվ, քեֆեր»:

ՈՒԴ 2, 418. ԵԼԺ 8, 427:

1886. – Գրում է «Նահապետի ողբը»:

Դպրոցական տարիների ազգային – հայրենասիրական բանաստեղծություններից է:*

* Պահպանված ձեռագիրը բանաստեղծը թվագրել է «86», ապա ցան «1887»:

ԵԼԺ 1, 325, 644:

1886. – Գրագրի պաշտոնով աշխատանքի է անցնում հոգևոր կոնսիստորիայում:

ԹԺՅ, 285:

1886. – Գրառում թիվ 6 (2) ծոցատետրում.

«Սուկո. (Մկրտում) Չիլինգարյանց, քարնջեցի 82 տարեկան

ժամանակի չարության վրա
Թաղաթներս կտրել ա, ապրուստի գյուման չկա,
Ամեն կիրակի մի թովջի, ռհաթումը ջան չկա,
Պասակերը շատացել ա, հավատն ուրացել ա,
Մեծամարդը ժամանակին նահախ տեղը կացել ա,
Ռհաթի ջաբըը շատ ա, լավ – օսալ դիմացել ա,
[Մեծամարդը ետ ա ընկել, խոսելու մեյդան չկա]:
Օբեշիկը որ գալիս ա, խոսում ես, նազ ա անում,
Պրոտոկոլնին շինում ա, ռհաթին ջավ ա անում,
Հայրի խոսքն ետ ա ընկել, որդին տնազ ա անում,
Գիշեր-ցերեկ բամբասում եմ, էլ մի ուրիշ բան չկա:
Անցկացած ժամանակին էրնեկ կտա հազարը,
Ռհաթը խեղճ ա ըլել, տուներն ընկավ ազարը,
Գեղամեջը խարաբ ա արել ջահելների բազարը,
Մեծամարդը ետ ա ընկել խոսելու մեյդան չկա:
Ռհաթը խարջ քաշելեն ջիզ հալաքար ա [ընկել] դառել
Գլավնիս իր տոնուղը խալխիս շալակ ա
ժամանակիս դիվաննիքը փողի թալակ ա,
Քիթիօղլի, քու մեղքերաց էլ ուղիղ դիվան չկա»:
«1886 թվակ.»

ՌԻԴ 5, 222:

1886. – Բանաստեղծ Վահան Միրաքյանը ծանոթանում է Ներսիսյան դպրոցում սովորող Հովհաննես Թումանյանի հետ: Իրենց առաջին հանդիպման մասին Միրաքյանը գրում է.

«... բարձրահասակ, բարակիրան, երկարավիզ, սև մահուդի աշակերտական բլուզովը, իմ սպասած բանաստեղծն էր: <...> Երկուսս էլ գյուղական հարսի նման կարմրատակելով իրար ձեռք սեղմեցինք: Մեզ երևի կարմրացնում էր էլի այդ բանաստեղծ անունը: Թե Հովհաննեսը, թե ես մեր այդ ծանոթության միջոցին դեռևս երեսներիս աղվամազ չունեինք:

- Կոնո ջան, ի՞նչ ունես գրած,- այդ եղավ Հովհաննեսի առաջին հարցը,- բեր, կարդանք:

- Ինձ համար գրում եմ էլի, տպված դեռ ոչինչ չունեմ:

- Ես էլ չունեմ տպված. բայց ոչինչ չկա, մեզ համար գրածը բեր մեզ համար էլ կարդանք,- մտերմաբար և ժպտադեմ շարունակեց Թումանյանը»:

ԹԺՅ, 311:

1 8 8 7

Փետրվարի 12, Թիֆլիս. – Մասնակցում է Հ. Կարենյանի «Վարդանանց պատերազմը» կամ «Վարդան Մամիկոնյան» ողբերգության ներկայացմանը՝ հայ զինվորի համր դերով, և մոտիկից տեսնում Եղիշեի դերակատար Ադամյանին:

Բանաստեղծն հիշում է այդ իրադարձության հետ կապված զվարճալի մի միջադեպ. «- Վարդան, իմ Վարդան,- մրմնջալով Ավարայրի դաշտն իջավ (Եղիշե-Ադամյանը.- Խմբ.): Հենց դաշտն իջավ թե չէ, որ պիտի խաղա - սը՛սս... հասարակությունը ամեն կողմից սը՛ս արավ ու լռեց, պատրաստվեց: Եղ ժամանակ ես էլ ուզեցի պատրաստվեմ, որ լավ լսեմ ու տեսնեմ, վիզս որ ծռեցի, թեքեցի դեպի ներքև, անկանոն դիրքի պատճառով, թուքս կատիկս թռավ թե ինչ՝ հանկարծ մի հազ բռնեց ինձ: Ես ցնցվում եմ ամբողջ մարմնով, ինձ հետ շարժվում ու ճռճում է ամբողջ դեկորացիան, բոլոր տախտակներն ու կտավները՝ այսինքն՝ բոլոր սարերն ու ժայռերը, և հակառակի նման էն ամենահանդիսավոր թուպին, թատրոնի խորին լռության մեջ: Թատրոնում ընդհանուր ծիծաղ բարձրացավ, գալերեան սկսեց աղմկել ու աղաղակել բրավո՛..., բիս... կեցցեն հայոց քաջերը... և այլն, և այլն»:

ԵԼԺ 7, 257-258:

Փետրվարի 13-ին կամ «մի երկու օրից հետո», Թիֆլիս. – Այդ զվարճալի միջադեպից հետո այցելում է Ադամյանին նրա ցանկությամբ:

Թումանյանը հիշում է. «Մյուս օրն էր թե մի երկու օրից հետո, պատմեցին, թե այժմ Ադամյանը էլ բարկացած չի, ծիծաղելով է պատմում էդ դեպքը և հարցնում էր, ուզում էր ինձ տեսնի: Ես գնացի, զարմանալի սիրով ու քաղաքավարությամբ ընդունեց, մանավանդ երբ իմացավ Ներսիսյան դպրոցի աշակերտ եմ և ինչ պատճառով էի գնացել, իրեն գրքերից մի՞նն էլ նվիրեց ի հիշատակ Վարդանանց պատերազմի ներկայացմանը և իմ կարճատև, բայց աղմկալի բեմական գործունեության: Նրանից հետո մի քանի անգամ եղա մոտը...»:

ԵԼԺ 7, 258-259:

Փետրվար, Թիֆլիս. – Գրում է «Աղոթք» բանաստեղծությունը:

Տիգրան Փիրումյանի վկայությամբ՝ շարժառիթը եղել է մի քահանայի բացականչությունը. «Փող է հարկավոր, փող, դուրս փող ասա» (ԹԺՅ, 345): Ըստ մեկ ուրիշ հուշագրողի՝ Արամ Առաքելյանի՝ 1888 թ. այս և մի քանի այլ բանաստեղծություններ՝ գրված մի ընդհանուր տետրում, Թումանյանը ցույց է տվել Ներսիսյան դպրոցի բարձրասարանցի իր ընկերներին (ԹԺՅ, 288):

ԵԼԺ 1, 25, 546:

Մարտ, Թիֆլիս. – Գրում է «Գութանի երգը» բանաստեղծությունը:

Նախնական տարբերակը վերնագրված է եղել «Հայ երկրագործի երգը», որից պահպանվել է միայն առաջին տողը և մի հատված, որ չկա բանաստեղծի կենդանության օրոք եղած հրատարակություններում:

Հատվածը հրատարակել է Ա. Ինժիկյանը (ԱԻ, 236 – 237):

ԵԼԺ 1, 26, 547:

<Գարուն ... ամառ>, Թիֆլիս. – Հանդիպումներ Սիմեոն Հովվյանի հետ, որն ավարտում էր Ներսիսյան դպրոցը:

Հովվյանը հիշում է, որ այդ օրերին Թումանյանը չափազանց ոգևորված էր Չոփուռի տղաներով, ասում էր, որ պետք է նրանց մասին գրի մի պոեմ՝ դյուցազներգության նման մի բան: Հիշում է նաև, որ Հովհաննես քահանա Մարտիրոսյանի բնակարանում կարդում է «Մի ուրվական» խորագիրը կրող բանաստեղծությունը, որն առ այսօր անհայտ է:

ԹԺՅ, 256:

Հուլիսի 24, Թիֆլիս. – Սկսում են լույս տեսնել Թումանյանի անեկդոտները՝ «Մեր երկրի կյանքից» կամ «Մեր կյանքից» ընդհանուր խորագրով («Նոր-Դար», 1887, թիվ 121):

Լռեցիների կյանքից քաղված այս ու հաջորդ անեկդոտները («Նոր-Դար, 1887, No No 132, 133, 136, 137, 1889, No No 84, 154, 1890, No 129), ինչպես նաև «Մի ավանդություն» հոդվածը տպագրվել են եռաստղանիշ (***) ստորագրությամբ: Դրանց՝ Թումանյանի գրչին պատկանելը հաստատել է էդ. Ջրբաշյանը (ԳԱ Տեղեկագիր, 1963, թիվ 12):

ԵԼԺ 5, 580-588, 819:

Օգոստոսի 7, Թիֆլիս. – Գրում է «Արև և Լուսին» բալլադը:

Օգտագործել է ավանդության Լռու տարբերակը:

Բալլադի ստեղծման շարժառիթի մասին բանաստեղծը Յուլյակ Խանգադյանին գրում է. « Լավ եմ հիշում, 1887 թվականի ամառը (կարծեմ օգոստոսին) արևի խավարում եղավ, էդ մասին գրեցին, խոսեցին: Հենց էդ օրերում ես էլ «Արևն ու Լուսինը» գրեցի...» (ԵԼԺ 10, 249):

ԵԼԺ 2, 97, 551:

Օգոստոսի 10, Թիֆլիս. – Գրում է «Ամառվա գիշերը գյուղում» բանաստեղծությունը:

Տիգրան Փիրումյանի վկայության համաձայն՝ «Թիֆլիսի Մթացմինդա սարից մի լուսնյակ գիշեր քաղաքը դիտելուց ու նրա աղմուկներն իր հայրենի Դսեղ գյուղի հանդարտության հետ համեմատելուց հետո (ԹԺՅ, 346): Ինչպես հիշում է Արամ Առաքելյանը, այս ոտանավորը ևս գրված է եղել այն ընդհանուր տետրում (տե՛ս փետրվար), որ Թումանյանը Ներսիսյան դպրո-

ցում ցույց է տվել իր բարձրդասարանցի ընկերներին (ԹԺՂ, 288):

ԵԼԺ 1, 27, 435:

Օգոստոսի 15, Թիֆլիս. — Տպագրվում է («Նոր- Դար» թիվ 136) «Մի ավանդություն» հոդվածը:

Թումանյանի առաջին գրավոր ելույթն է: Փորձում է պարզել Դսեղի հին գերեզմանոցում գտնվող երկու խաչարձանների իսկությունը:

ԵԼԺ 6, 7, 568:

Օգոստոս, Թիֆլիս. — Աշխատանքի է անցնում Վրաստանի հայոց հոգևոր կոնսիստորիայում:

16 ռ. 66 կոպ. աշխատավարձով վարում է գրագրի պաշտոն մինչև 1892 թ. մարտի 22 – ը:

Կոնսիստորիայում անցկացրած այս տարիները ամենածանրերից են եղել բանաստեղծի կյանքում: Սարգիս Աբովյանը հիշում է. «Դժվար էր պատկերացնել Օհաննեսին այս նոր, իր խառնվածքին անչափ անհամապատասխան պաշտոնավարում: Նա մխիթարվում էր, որ այստեղ կարողանում էր ծանոթանալ մարդկանց վարք ու բարքին, ավելի ևս հոգևորականների մոլթ գործերին: <...> Աշխատանքի այս վայրում նա կապը չէր կտրում գյուղացիներից, հաճախ Օհաննեսի օգնությամբ էին դիմում ոչ միայն ամուսնական կնճռոտ խնդիրների լուծման, այլև պետական հիմնարկներում այս կամ այն վիճելի հարցերի համար»:

ԹԺՂ, 216, 285. ԹՄՊ, 149. ԱԻ, 188:

<Սեպտեմբերի վերջեր>, Թիֆլիս. — Ծանոթանում և սիրահարվում է Թիֆլիսի Քամոյան եկեղեցու քահանա և կոնսիստորիայի անդամ Դովհաննես քահանա Մարտիրոսյանի որդեգրուհի Մարիամ (Օլգա) Մաճկալյանի՝ իր ապագա կնոջ հետ:

Ծանոթությունից մի քանի օր առաջ աղջիկը արդեն նկատել էր «բարձրահասակ, գանգուր մազերով» համակրելի երիտասարդին, որ բնակվում էր իր տատոնց տան հարևանությամբ, Բագրատ Թումանյանի հետ: Օլգա Թումանյանը հիշում է. «Հետո ինձացա, որ մայրս, տեր Դովհաննեսի և Ներսես քահանա Աբով-

յանի հետ, առանց իմ գիտության, որոշել են մեզ նշանել և ամուսնությունից հետո Օհաննեսին քահանա ձեռնադրել: Ներսես Աբովյանը (Օհաննեսի ընկեր Անուշավան Աբովյանի հորեղբայրը) նույնպես կոնսիստորի անդամ էր»:

ԹԺՂ, 326 – 327:

Պեկտեմբերի 12, Թիֆլիս. – Նամակ է գրում հորը՝ նշանվելու կապակցությամբ:

Թիվ 1(11) ծոցատետրում բանաստեղծը նշում է. «87 դեկտեմբերի 12-ին առաջին նամակը գրեցի հորս ինձ նշանելու համար»:

ՈԻՀ 5, 157:

<Պեկտեմբերի վերջեր>, Թիֆլիս .- Գրում է «Ես ուզում եմ սեր երգել» բանաստեղծությունը:

Նվիրված է ապագա կնոջը՝ Օլգա Մաճկալյանին:

Տարիներ անց բանաստեղծը գրում է կնոջը. «... Առավոտյան թղթերիս մեջ պատահմամբ գտա 87 թվականի վերջերին գրած մի բանաստեղծություն, որը գրել եմ քեզ վրա... Ժամանակը (լավ հիշեցի, թե ինչ օր եմ գրել): Այնքան ինձ ողոր եկավ, որ հետս տարա կոնսիստոր. չգիտեմ, այնտեղ մնաց, թե հետս բերեցի, վերջապես կորցրել եմ, վաղը կորոնեմ կոնսիստորում. բայց ահա նրա վերջին տները.

... Ես ուզում եմ սեր երգել,
երգել սրտանց և վառվել.
Ես ուզում եմ և գրկել,
Փարել նրան և փարվել:

Ես ուզում եմ մի հրատապ
Սաստիկ սիրով ինձ տանջել,
Նրա կրծքին անարատ
Բոցավառվիլ և հանգչել.

Թողե՛ք, թողո՛ք ինձ խնդրեմ,
Թողե՛ք ինձ միայն սեր երգել.
Թողե՛ք, թողե՛ք, որ գրկեմ,
Սիրեմ նրան անարգել...» (ԵԼԺ 9, 33):

ԵԼԺ 1, 328, 644:

1887, *Թիֆլիս*. – Գրում է իր նախնիների՝ հայրական տոհմի պատմությունը՝ «Գործք հարանց» խորագրով:

ԵԼԺ 8, 7, 552. ԱԻ, 19-20:

1887, *Թիֆլիս*. – Գրում է «Հին օրհնություն» բանաստեղծությունը:

Արամ Առաքելյանի վկայությամբ (ԹԺՅ, 285-288) այս ոտանավորը ևս եղել է այն ընդհանուր տեսքում, որ բանաստեղծը ցույց է տվել ավագ ընկերների՝ Ներսիսյան դպրոցում սովորելիս (տե՛ս փետրվար):

ԵԼԺ 1, 28, 436:

1887, *Թիֆլիս*. – Գրում է «Մարոն» պոեմը:

ԵԼԺ 3, 7, 496-497:

1887, *Թիֆլիս*. – Ապրում է Հովհաննես քահանա Մարտիրոսյանի տանը:

ԹԺՅ, 274:

1887, *Թիֆլիս*. – Գրում է «Ավանդություն» գրաբար բանաստեղծությունը (անավարտ):

ԵԼԺ 2, 184-185, 570:

1 8 8 8

1887-1888 *ուստարվա կեսեր*, *Թիֆլիս*. – «Հնգյակի» անդամները (Հովհաննես Թումանյան, Արսեն Դևոյան, Դաթիկո Շահլամյան, Արամ Առաքելյան, Գրիգոր Վանցյան) պարբերաբար հավաքվում են Շահլամյանի սենյակում՝ Թումանյանի սենյակից մեկ հարկ վերև:

Կարդում ու քննարկում էին Թումանյանի բանաստեղծությունները:

Ա. Դևոյանը հիշում է. «Որքան էլ «Վերնատունը» դեր խաղացած լինի Օվանեսի կյանքի և ստեղծագործության բնագավառում, այնուամենայնիվ այստեղ չէր, որ կոփվեց նրա բանաստեղծական տաղանդը, և այդ վերնատունը չէր, ուր նրա պատկերն ուրվագծվեց: Այդ բանը տեղի ունեցավ Դաթիկո

Շահլամյանի առանձնասենյակում, և Ծիրանավորի անպաճույճ, բացօթյա գարեջրատների սեղանների վրա, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ իրար միացրած հասարակ տախտակներ՝ իրենց, այսպես կոչված իշառտնուկ նստարաններով: <...>

Երբ առանձնանում էինք Դաթիկոյի սենյակում, առաջին հերթին մանավանդ Դաթիկոն, հարկադրում էինք Օվանեսին կարդալ մեզ իր ոտանավորներից. նա հաճախ մերժում էր, աշխատում էր խուսափել, բայց մեր ձեռքից չէր պրծնում: Երբեմն կարծում էր, որ մեր գովեստներով իրեն ու իրեն ոտանավորները ծաղրում ենք: Նա շատ էլ ոգևորված չէր իր բանաստեղծություններով, այլ խոսքով՝ դեռ իր արժեքը չգիտեր ու իրեն համարում էր սովորական ոտանավորներ գրող և ոչ ավելին: <...>

Որքան էլ ջահել, սակայն ճաշակի ու զգացմունքի տեր պատանիներ էինք, Օվանեսին սկսեցինք սիրել, գնահատել և իր կոչման գիտակցության բերել: Նա, մանավանդ այն ժամանակներում, շատ քաշվող էր, համեստ, միևնույն ժամանակ շատ հպարտ էր, ինքնասեր ու դյուրազգաց: Մեր բոլորի անկեղծ ու սրտացավ վերաբերմունքը չէր կարող չնկատել ու չգնահատել մեր Օվանեսը, ուստի որոշ ժամանակ անց արդեն ինքն էր առաջ բերում իր բանաստեղծությունների փոքր տետրակը: Ժամանակի ընթացքում շատ անգամ նա հարկադրված եղավ իր այդ տետրակի պատկերը փոխել նորանոր ստեղծագործություններով ու տարբերակներով: Նա աշխատում էր լեզվի վրա, խմբագրում ոճը, փոփոխություններ անում՝ հնարավորին չափ բարբառային ազդեցություններից ազատվելու համար»:

ԹԺՅ, 270-271:

Հունվարի 1, Թիֆլիս. – Երեկոյան գնում է շնորհավորելու Հովհ. քահանա Մարտիրոսյանի, Օլգա և Շուշանիկ Մաճկալյանների Նոր տարին:

Օլգա Թումանյանը հիշում է. «1888 թ. հունվարի 1-ին առավոտյան մայրս մեր խոհանոցում մի ծիտ է տեսնում, բռնում է ու բերում սենյակ: Ծիտը դրինք վանդակում: Մայրս ասաց, որ դա լավ նշան է, Նոր տարվա բախտը:

Երեկոյան Օհաննեսը եկավ մեր տուն Նոր տարին

շնորհավորելու: Մայրս ընդունեց նրան, բերեց սեղանատուն, սկսեցին գրուցել: Օհանեսը հարցրեց.

- էդ ի՞նչ ծիտ եք բռնել, տեսնե՞ք ի՞նչ թռչուն է:

Մայրս ցույց տվեց:

Օհանեսը մի երկու ժամ նստեց, խոսեցինք դեսից-դենից ու գնաց»:

ԹԺՅ, 327 – 328:

Հունվարի 1, Թիֆլիս. – Համաձայնություն Հովհ. Թումանյանի և Օլգա Մաճկալյանի նշանադրության մասին:

Օլգա Թումանյանը հիշում է. «... Մայրս ասաց, որ ուզում են մեզ նշանել: Ես շատ զարմացա, որ մերոնք համաձայնվում են: Մի տղա, որ տուն էլ չունի, ապրում է ուրիշի մոտ, ո՞նց է ամուսնանում: Հետո մորիցս իմացա, որ մտադիր են նրան քահանա ձեռնադրել: Էդ ինձ ավելի դուր չեկավ: ԹՖայած դրան, մեր ծանոթությունը խորացավ: Օհանեսն ամեն օր գալիս էր, երբեմն մնում ճաշի: Մայրս նրան շատ էր սիրում, ավելի, քան ես: Խոսում էինք գրականությունից: Հարցնում էր՝ ի՞նչ գրքեր են կարդացել: Ես էլ հպարտ-հպարտ ասում էի. Աղայան, Պռոշյան, Ռաֆֆի («Սամվելը» նոր էր լույս տեսել), Մուրացան և այլն: Ի՞նչ իմանայի, թե Օհանեսը բանաստեղծ է: Ես ասացի, որ «Աղբյուրում» կարդացել են «Սրինգի» ոտանավորը, լավ բանաստեղծ է: Օհանեսը ժպտաց, ասաց.

- Շա՞տ ես հավանում նրա գրածը, իսկ որ նրանից լավը կարդա՞ս:

- Էն ժամանակ՝ էն կհավանեմ»:

ԹԺՅ, 328:

Հունվարի 1, Թիֆլիս. – Խոսակցություն Հովհ. Մարտիրոսյանի և Շ. Մաճկալյանի միջև՝ Թումանյանին քահանա ձեռնադրելու շուրջ:

ԹԺՅ, 328:

<Հունվար - ապրիլ>, Թիֆլիս. – Այցելություններ Ռաֆֆուն:

Դրանցից մեկի ժամանակ կարդում է Ռաֆֆու 1885 թ. հոկտեմբերի 18-ի նամակը՝ ուղղված Գրիգոր Արծրունուն:

1913 թ. դեկտեմբերի 12-ին՝ ՀԳԸ հերթական 22-րդ երեկույթին ունեցած ելույթում բանաստեղծը հիշում է. «Ես էլ եմ կարդացել էն նշանավոր նամակը, որ հիշեց պ. Լեոն, թե մնում է «Մշակի» խմբագրատանը: Էդ նամակի պատճենը մնում է Ռաֆֆու թղթերի մեջ, և ես կարդացել եմ նրա տանը»:

ԹԺՅ 7, 536:

Մարտի 3. – Թիֆլիսում՝ կալվածական բանկի (վրաց ազնվականների) թատրոնում Շուշիկ և Օլգա Մաճկալյանների հետ դիտում է Հ. Կարենյանի «Վարդան Մամիկոնյան» պիեսի բեմադրությունը:

Օլգա Թումանյանը հիշում է. «Վարդանանց տոնից երկու օր առաջ Օհանեսն ասաց, թե այս տոնի առթիվ ցույց են տալու «Վարդան Մամիկոնյան» ներկայացումը, գնանք միասին: Ես ասի՝ մայրս չի թողնի, որ մենակ գամ քեզ հետ, նա պատասխանեց, թե՛ էն ժամանակ մայրիկին էլ կտանենք: Մյուս օրը եկավ, թե՛ տոմսակները վերցրել է և վաղը ժամը 7-ին կգա մեր ետևից: Մենք դեռ նշանված չէինք, ես դպրոցական շորով էի... Ներկայացման ժամանակ Օհանեսը շարունակ ինձ բացատրում և պատմում էր բովանդակությունը: Վարդանի դերը խաղում էր Գևորգ Չմշկյանը: Երբ վերջացավ, դուրս եկանք թատրոնից. սաստիկ անձրև էր: Օհանեսը շատ փնտրեց, բայց չկարողացավ կառք գտնել: Ստիպված ոտքով գնացինք: Մեզ տարավ տուն, իսկ ինքը գնաց իր տունը, որը բավական հեռու էր»:

ԹԺՅ, 328, 337:

<Մարտի սկիզբ>, Թիֆլիս. – Վանքի եկեղեցում մասնակցում է Գևորգյան ճեմարանի նախկին ուսուցիչ Դավիթ Ներսիսյանի թաղման արարողությանը, ուր կատարում է տիրացուի պարտականություն:

Թաղման արարողության ժամանակ Թումանյանը ծանոթանում, ապա բարեկամանում է Արսեն Դլտճյանի հետ. հետո նրանց միանում են Դավիթ (Դաթիկո) Շահլամյանը, Արամ Առաքելյանը, Գրիգոր Վանցյանը՝ չորսն էլ Ներսիսյան դպրոցի

աշակերտներ, բավական կարդացած ու բանիմաց երիտասարդներ: Իրենց հավաքատեղին դարձնելով Շահլամյանի բնակարանը՝ նրանք ամեն շաբաթ կազմակերպում էին երեկույթներ, զրուցում գրական հարցերի շուրջ, խորանում հայ և համաշխարհային դասական գրականության մեջ, բարձրաձայն ընթերցանություններով ծանոթանում ժամանակի պարբերական հրատարակությունների կարևոր հրապարակումներին: Այդ հավաքույթներին քննության ու վերլուծության առարկա էին դառնում նաև Թումանյանի ստեղծագործությունները: Արամ Առաքելյանը հիշում է. «Նշանակված օրը հավաքվեցինք Շահլամյանի մոտ: Այնտեղ էր և Հովհաննես Թումանյանը: Մեր խոսակցությունը Թումանյանի գրվածքների շուրջն էր պտտվում: Վերջում առաջարկեցինք հրապարակ բերել իր գրվածքները և հնարավորություն տալ մեզ ծանոթանալու: Թումանյանը համեստորեն հրաժարվում էր, պատճառաբանելով, թե մի առանձին արժեքավոր բան չեն ներկայացնում այդ գրվածքները: Մեր համառությանն ու պնդումներին նա ստիպված եղավ զիջել: Իսկույն ևեթ գնաց և իր բնակարանից, որ նույն տան միջին հարկումն էր գտնվում, բերեց գրելու թղթի թերթերից կարած մի մեծ տետր, մատիտն էլ թելով վրան կարած: Տետրը ձեռք-ձեռք անցավ, և թերթել սկսեցինք ու կարդալ մեկը մյուսի հետևից «Շունն ու Կատուն», «Արև և Լուսին», «Ամառվա գիշերը գյուղում», «Գութանի երգը», «Աղոթք», «Հին օրհնություն», «Մարոն», «Ալեք», «Նահատակ», «Լոռեցի Սաքոն» և մեկը մյուսից գեղեցիկ ու գողտրիկ ոտանավորները»: Մի քանի հավաքույթ նվիրելով այդ ստեղծագործությունների քննարկմանը՝ ընկերներն առաջարկում են մի ժողովածու կազմել դրանցից և հրատարակել:

ԹԺՀ, 268 – 271, 286 – 289:

Մարտի 19, Թիֆլիս. – Վախճանվում է Ծերենցը:

ԹԺՀ, 328, 937:

Մարտի 21, Թիֆլիս. – Մողնու Ս. Գևորգ եկեղեցում կատարվում է Ծերենցի հոգեհանգիստը:

Թումանյանը միանում է Ծերենցի աճյունը եկեղեցի ուղեկ-

ցող թափորին: Այա մինչև թաղումը մեկ ժամով գնում է Օլգա Մաճկալյանի մոտ և ուշանում թաղման արարողությունից:

Օլգա Թումանյանը հիշում է. «Մի կիրակի օր եկավ, թե՛ մեռել է մեր լավ գրողներից մեկը՝ Ծերենցը, քիչ առաջ բերին եկեղեցի, պետք է մի ժամից գնամ:

Ես նստած տետրիս մեջ գրում էի նոր լսածս երգերը: Մինչև հիմա էլ տետրը մնում է: Օհանեսը վերցրեց գրիչը, սկսեց շարունակել, արտագրություններ անել, մնաց մինչև ժամը երեքը և այդպես էլ թաղման չհասավ»:

ԹԺՀ, 328, 937:

Մարտի 21, Թիֆլիս. – Օլգա Մաճկալյանի տանը նրա երգարան-տետրում* արտագրում է Սայաթ – Նովայի «Ուստի գու քաս» երգը:

* Այդ տետրի 75-րդ էջում Թումանյանի ձեռքով արտագրված են Սայաթ-Նովայի «Ուստի՞ գու քաս» երգը (ոչ լրիվ), էջ 78-79-ում՝ Ռ. Պատկանյանի «Անվերջ գանգատներ» բանաստեղծության IV - IX քառատողերը: Բանաստեղծի ձեռքով նշված է. «1888, հոկտ. 30, Տփլիս, ժամը 12-ին»: Հավանաբար մարտի 21-ին արտագրել է միայն Սայաթ-Նովայի երգը:

ԹԺՀ, 328, 937:

<Մինչև մարտի 24-ը>, Թիֆլիս. – Հայտնում է Աճ. Աբովյանին իր նշանվելու մտադրության մասին:

Վերջինս խորհուրդ է տալիս որոշ ժամանակ սպասել: Բանաստեղծը համաձայնում է, սակայն հաջորդ օրը գալիս է և հայտնում, որ մատանեփոխությունը կատարված է:

Անուշավան Աբովյանը հիշում է. «Մի օր էլ արտակարգ ուրախ տրամադրությամբ մոտս եկավ Հովհաննեսը և սկսեց արագ-արագ ման գալ:

- Հը, այդ ի՞նչ խաբար է, քեֆդ խիստ քյոք է,- հարցրի ես հետաքրքրվելով:

- Րիգունս նշանվում եմ:

- Չէ, չէ՛ պոզեր:

- Հավատա, որ դրուստ եմ ասում, թեպետ տանուտերերից բացի մարդ չի լինելու, համա ասել եմ, որ դու անպատճառ պիտի ըլես:

- Ադա, գժվե՞լ ես, ի՞նչ է, ո՞նց թե «նշանվում եմ», մեռնեմ արևիդ, համալսարանն ավարտել, դիպլոմը ծոցդ եկել ես ու հիմա էլ «նշանվո՞ւմ ես»: Հալա մի երեսիդ մտիկ արա է, բեղատեղդ նոր է սևանում, 19 տարեկան երեխա ես, գրպանդ դատարկ, ի՞նչ նշանվելուդ վախտն է: Արի դու ինձ լսի, քարը գոգիցդ վեր ածա, ձեռը վեկալ, ա՛յ որդի, թե կարում ես, գնա ուսումդ շարունակի:

- Ախր խոսք եմ տվել, ամոթ է, հմիկ ոնց անեմ, որ լավ ըլի, դե մի խելք շանց տուր:

- Կերթաս քո աներանց կասես, որ՝ թեպետ ես խոսք եմ տվել նշան տալու, հա դե ջահելություն էր, խորը չմտածեցի, ես ծնողներ ունեմ, ի՞նչ կասես. խնդրում եմ ժամանակ տաք, հորս գրեմ, պատասխանը ստանամ ու հետո:

- Էդ շատ լավ ասիր, կերթամ, կասեմ ու կխափանեմ:

Ես այնպես ուրախացա, որ իբր նրան անդունդի բերանից ետ քաշեցի: Սակայն մյուս առավոտ լուրջ դեմքով եկավ, թե՛

- Էլավ ոչ, գնացի, տեսա տանուտերերն արդեն եկել են, էլ ամաչեցի, թե բան ասեմ. էն է նշան տվի, պրծա, հմի ինչ կըլի, կըլի»:

ԹԺՀ, 227 – 228:

Մարտի 24, Թիֆլիս. – Թիֆլիսում կատարվում է Հովի. Թումանյանի և օրիորդ Օլգա Մաճկալյանի նշանադրությունը:

Օլգա Թումանյանը հիշում է. «... մեզ նշանեցին: Հայրը՝ տեր Թադևոսը, եկավ գյուղից մի քահանայի և մի վարդապետի հետ: Մեզ մոտ էլ երկու քահանա կային, էնպես որ չորս քահանա և մի վարդապետ մեզ նշանեցին՝ 1888 թ. մարտի 24-ին»:

ԹԺՀ, 329:

Մարտի 24, Թիֆլիս. – Մաճկալյանների տանը գրում է քառատող մի ոտանավոր՝ «Արծվիկ» վերնագրով (չի պահպանվել):

Այդ օրը օրիորդ Օլգան իմանում է, որ իր նշանածը բանաստեղծություններ է գրում:

ԹԺՀ, 329:

Մարտի 25, Թիֆլիս. – Հովի. Թումանյանի և Օլինկա (Օլգա) Մաճկալյանի նշանադրության ժամանակ կնքվում է պայմանագիր մի կողմից Հովհաննես Թումանյանի, մյուս կողմից՝ նրա նշանածի հոգեհոր՝ Հովհաննես քահանա Մարտիրոսյանի միջև:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ի 25 – ն մարտի 1888 ամի Տփլիսի

Ես Տփլիսի բնակիչ Հովհաննես քահանա Մարտիրոսյանս իմ որդեգրուհի Օլինկա Մաճկալյանցի նշանադրության օրը Լոռվա գավառի Դսեղ գեղջ Հովհաննես տեր Թադևոսյան Թումանյանցի վերա, տալով այս պայմանագիրը, խոստանում եմ՝ նրանց պսակվելուց հետո պահպանել նրանց ինձ մոտ, խնամք տանել նոցա վերա և աշխատել մեր փեսա՝ հիշյալ Հովհաննես Թումանյանցին, հասցնել իր նպատակին, այն է քահանայության սուրբ աստիճանին: Թե այս մասին հոգածությունը և թե ընտանեկան կառավարությունը, մինչև յուր նպատակին արժանանալը, մնում է մեզ վերա: Իսկ ես՝ Հովհաննեսս, պատրաստ եմ իբրև որդի միշտ հնազանդ լինել Հովհաննես քահանայիդ, օգնական և գործակից լինել ամեն գործերիդ մեջ, վայելելով քո սերը և համակրանքը, որո համար և ես՝ Հովհաննեսս, պատրաստ եմ իբրև որդի միշտ հնազանդ լինել Հովհաննես քահանայիդ, օգնական և գործակից լինել ամեն գործերիդ մեջ, վայելելով քո սերը և համակրանքը, որո համար և ես՝ Հովհաննեսս քահանայս, պարտավորված եմ իբրև որդի հոգալ քեզ համար և քո ընտանեաց մինչև հիշյալ նպատակիդ հասնելը: Առ որ և ստորագրեմք:

Այս պայմանին համաձայն եմ՝

Հովհաննես Տեր-Մարտիրոսյան

Հովհաննես Տ <եր> Թ <ադևոսյան> Թումանյ <ան>

Ներկա գտա՝ Ներսես ավագ քահանա Աբովյան

<Գրված է տեր Հովհաննեսի ձեռքով>:

ԹՏԹ, 1560:

<Մարտի 24-ից հետո>, Թիֆլիս. – Նոր նշանված Հովհաննեսին աշխատանքի են տեղավորում վանքի եկեղեցում՝ տի-

րացուի պաշտոնով:

Միջավայրը խորթ էր բանաստեղծի նկարագրին, և նա շուտով դուրս է գալիս այդտեղից:

Անուշավան Աբովյանը հիշում է. «Չովհաննեսին նշանելով՝ աներանք, նրա տնտեսական դրությունն ապահովելու համար, խոստացել էին նրան քահանա ձեռնադրել տալ: Եվ շուտով տիրացուի տեղ տվին նրան վանքի եկեղեցում, քահանայության համար պատրաստվելու նպատակով: Բայց տիրացուի պաշտոնը մի անտանելի բեռ դարձավ նրա համար, ու նա երկու շաբաթից հետո հեռացավ իր նոր պաշտոնից»:

ԹԺՂ, 228:

Ապրիլի 29, Թիֆլիս. - Մասնակցում է Ռաֆֆու թաղմանը:

Օ. Թումանյանը հիշում է. «Օհանեսը հազում էր բլուզ և մի աշակերտական գլխարկ՝ թավշյա եզրերով, իսկ վզին՝ մետաքսե թաշկինակ: Մի օր եկավ նոր հագուստով, բայց ոտից գլուխ թրջված: Գնացել էր Ռաֆֆու թաղմանը: Այդ օրը՝ 1888 թ. ապրիլի 29-ին, սաստիկ անձրև էր եկել: Շորերը փոխեց, բայց երկու օր լավ չէր զգում իրեն»:

ԹԺՂ, 329:

<Գարուն>, Թիֆլիս. - Ջատկին հյուր է գնում աներանց տուն:

Օ. Թումանյանը հիշում է. «Նշանվելուց հետո Օհանեսը համարյա ամեն օր մեզ մոտ էր լինում ճաշերին և գնում էր ուշ երեկոյան: Մի օր Ջատկին եկավ, ինձ համար մի զույգ գեղեցիկ կոշիկ բերեց, նոր ձևի: Ջատկի գիշերը, ուշ ընթրիքից հետո, չէր ուզում տուն գնալ, ասաց՝ գիշերը մեյդանով մեծ մկներ են վազում, վախենում եմ: Մայրս ասաց. մնա մեզ մոտ: Մնաց: Երկու օր հետո գնաց ու վերադարձավ. տանտիրուհին՝ Բագրատի կինը, ասել էր՝ որտեղ երկու գիշեր մնացել ես, էլի գնա էնտեղ: Դե ի՞նչ պետք է ասեինք: Ասինք՝ գնա շորերդ բեր»:

ԹԺՂ, 329—330:

Ապրիլ, Թիֆլիս. - Տեղափոխվում է Չովհաննես քահանա Մարտիրոսյանի բնակարանը:

Օ. Թումանյանը շարունակում է. «Մյուս օրը մի կապոց

ձեռքին եկավ. մեջը մի ձեռք սպիտակեղեն և երկու գիրք. մեկը՝ «Վերք Չայաստանին», մյուսը՝ «Չյուսիսափայլի» մի համար: Այդ էր նրա ամբողջ ունեցածը»:

* Այդ տան վերին հարկում բնակվում էր Դավիթ Շահլամյանը (Դաթիկո), որի հետ Թումանյանը ծանոթ էր դեռևս աշակերտական տարիներից, ուստի և շուտով մտերմանում են (ԱԻ, 222):

ԹԺՂ, 329-330:

Ամառ, Թիֆլիս. - Ապրում է նշանածի հայրական Չովհաննես քահանա Մարտիրոսյանի տանը:

Մշտապես հանդիպում են Ս. Չովվյանի հետ:

Չովվյանը հիշում է. «Ես ճեմարանից ամառը Թիֆլիս եկա և շարունակ լինում էի Չովհաննեսի մոտ: Նա կարդաց «Շունն ու Կատուն» բանաստեղծությունը՝ հիվանդ, անկողնում պառկած: Բանաստեղծության բովանդակությունն այնքա՛ն համապատասխանում էր արտաքին կառուցվածքին, այնքա՛ն հրաշալի ու անբռնազբոս շարահյուսված էր, որ թվում էր, թե ժողովրդական մի ավանդություն է, ժողովրդի լեզվով ու ոճով կազմված մի հրաշալի ավանդություն»:

ԹԺՂ, 256:

Չունիսի 1 (Չամբարձման տոնին), Թիֆլիս. - Հայտնում է նշանածին, թե գյուղից մարդ է եկել և ինքը գնալու է տեսակցության:

Այնտեղ սխալ սնունդ ընդունելու պատճառով ծանր հիվանդանում է:

Ըստ Օլգա Թումանյանի հուշերի՝ բանաստեղծը հիվանդ ժամանակ սկզբում պառկած է լինում Մաճկալյանների տանը, ապա սենյակ են վարձում Ս. Սարգիս եկեղեցու բակի դպրոցում և հիվանդին տեղափոխում այնտեղ: Հաճախ նրան այցելության են գնում նշանածը, նրա մայրը, տատը: Դսեղից գալիս են ծնողները և տեսնելով, որ դժվար է հիվանդին այդ վիճակում գյուղ տեղափոխելը՝ մայրը մնում է՝ որդուն խնամելու:

ԹԺՂ, 330:

<Չունիսի կես>. - Թեթև ապաքինվելուց հետո Թումանյանին տեղափոխում են գյուղ՝ հակառակ բժշկի խորհրդի:

Օլգա Թումանյանը հիշում է. «... Այն ժամանակ երկաթուղի չկար: Մի օր Շուլավեր պիտի գնային դիլիժանսով, հետո էլ ձիով: Մերոնք խոսել էին Շուլավերի մեր ծանոթների հետ, որ նրան ընդունեն: Հուլիսի կեսերին գնացին գյուղ»:

ԹԺՀ, 330:

Հուլիս, Թիֆլիս. – Մտադրություն Ալ. Գոլոշյանի խմբի հետ Պարսկաստանի վրայով անցնելու Արևմտյան Հայաստան:

ԹԺՀ, 329, 938:

<Օգոստոսի կես>, Դսեղ. – Ապաքինվում է հիվանդությունից:

ԹԺՀ, 331:

<Հուլիսից հետո, մինչև սեպտեմբեր>, Թիֆլիս. – Գյուղում ապաքինվող Թումանյանի մասին հերյուրանք է տարածում նրանց ազգականներից մեկը:

Օ. Թումանյանը հիշում է. «Երկար ժամանակ տեղեկություն չունեիք: Մի-երկու ամսից իրենց մոտիկ բարեկամ Ալեքսի Թումանյանը եկավ մեզ մոտ: Երկար խոսեց, ասաց, որ լավացել է, բայց էլ չի գալու, մայրը մի ուրիշ աղջիկ է գտել, պետք է նշանի: Մայրս էլ՝ հին թիֆլիսեցի, շատ նեղացավ և սկսեց նրանց հասցեին խոսել, նախատել: Գնալիս Ալեքսին ինձ հարցրեց. – Աղջիկ ջան, բան չունե՞ս ասելու: Ասացի՝ չէ, միայն շատ բարև կանես: Այս բոլորից հետո, վերջապես, Օհանեսից նամակներ ենք ստանում. մեկն՝ իմ անունով, մեղմ գրված, մյուսը՝ մորս անունով՝ բարկացած»:

ԹԺՀ, 330:

Սեպտեմբերի 15, Դսեղ. – Նամակ Օ. Մաճկալյանին (տե՛ս նախորդը):

Բացատրում է, թե իր մասին տարածված լուրերը հերյուրանք են, ինքը անկեղծ սիրով նվիրված է նշանածին. «Այսքան ժամանակամիջոցում առաջին նամակս եմ ուղարկում քեզ և հավատացած եմ, որ նամակիս ուշանալը չպետք է ձգեր քեզ անմիտ կասկածների տակ: Բանսարկուների չարախոսություններին չպետք է տեղի տայիր քո սրտում, եթե իրավ նույն սիրող արծազանք է տված իմ խոսքերին: Եթե իբրև բավական ինձ

ծանաչել ես քո սեփական խելքով, էլ ինչո՞ւ պետք է հավատաք ուրիշին:

Ես համոզված եմ, որ դուն կասկած չես տանիլ իմ անազնվության վերա. թող ես խաբված լինեմ, բայց ունենամ իմ սեփական և հաստատ հույսս ու համոզումնքս: Նամակիս ուշանալու պատճառը գաղտնիք չէ - հիվանդությունն է, որ դուք ևս գիտեք, փառք աստուծո, և մի քանի հանգամանքներ, որ գալովս կպատմեմ: Օգոստոսի կեսերում հազիվ ելա անկողնուց: Գուցե ասեք՝ հիվանդ ժամանակ ևս կարելի էր նամակ գրել, բայց կսխալվեք՝ անկարելին կարելի դարձնելով:

Ես առողջ եմ և գուցե նամակիս հետ գամ»:

ԵԼԺ 9, 9, 476:

Սեպտեմբերի 15, Դսեղ. – Նամակ Շ. Մաճկալյանին:

Վիրավորված է զոքանչից, որ հավատացել է տարածված անհիմն լուրերին և ուրիշների մոտ բամբասում է իրեն, հետն էլ սպառնալիքներ կարդում. «Դեռ այդտեղ եղած ժամանակս շատ անգամ եմ լսած Ձեզանից անհիմն կասկածներ և անմիտ սպառնալիքներ, բայց թե ինչո՞ւ համար էին սոքա՝ դեռ չգիտեմ: Գոնե միայն ես էի լսում և մայրական անմեղ բարկություն համարելով, թողնում անհետևանք: Այժմ ևս վերջ չդնելով այդ տեսակ խոսքերին, ամեն մի պատահողի առաջ թափում եք առատորեն, չմտածելով, թե ի՞նչ եք ասում, ո՞ւմ կամ ո՞ւմ վերա»:

ԵԼԺ 9, 10, 477:

Սեպտեմբերի 20. – Գյուղում ապաքինվելուց հետո վերադառնում է Թիֆլիս:

Օլգա Թումանյանը հիշում է. «...Երեկոյան մի մարդ եկավ ու ասաց, թե Օհանեսը եկել է ձիով, Սաղուն՞ է և հարցնում է՝ եթե գամ, կընդունե՞ք: Մայրս և ես ասացինք, որ գա: Եկավ և բացատրեց բոլոր հանգամանքները (տե՛ս նաև սեպտեմբերի 15):

* Իջևանատուն Թիֆլիսում:

ԹԺՀ, 332:

<Հոկտեմբեր>, Թիֆլիս. – Մաճկալյանների տանը Օլգայի համար բարձրածայն կարդում է Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը»:

Օլգա Թումանյանը հիշում է. «Կոչիկներից հետո (տե՛ս

գարուն) առաջին նվերը, որ ստացել են իմ նշանածից, Յոնեռոսի «Իլիականն» ու «Ոդիսականն» էին և «Վերջ Յայաստանին»: Աբովյանի գիրքը ինձ ծանոթ էր արդեն, իսկ Յոնեռոսը չէի կարդացել: Օհանեսն ինձ համար կարդում էր և բացատրություններ տալիս»:

ԹԺՂ, 332:

Յոկտեմբերի 30, ժամը 12. – Մաճկալյանների տանը Թումանյանը Օլգայի երգարան – տետրում արտագրում է Ռ. Պատկանյանի «Անվերջ գանգատներ» բանաստեղծության IV - IX քառատողերը:

ԹԺՂ, 328, 938:

Նոյեմբերի 30. — Տ. Տեր-Ղավթյանի նամակը Թումանյանին՝ Ջալալօղլուց:

Գրում է իրեն վերաբերող կենցաղային հարցերի մասին: Խնդրում է բանաստեղծի միջնորդությունը՝ ինչ-որ ծանոթի զինվորագրությունից ազատելու համար: Լսել է, որ Թումանյանն ամուսնանում է, մաղթում է հաջողություն:

ԳԱԹ ԹՖ, թիվ 2207:

Դեկտեմբերի 1, Թիֆլիս. – Կատարվում է Յովհաննես Թումանյանի և Օլգա Մաճկալյանի պսակադրությունը:

Օ. Թումանյանը հիշում է. «...Դեկտեմբերի 1-ին պսակվեցինք: Ես տասնյոթ տարեկան էի, Օհանեսը՝ տասնինը: Յարսանիքից առաջ մայրս հարցրեց. մարդ ունե՞ս հրավիրելու: Օհանեսը, թե՛ ընկերներից միայն երկու հոգու՝ Անուշավան Աբովյանին և Երվանդ Մամիկոնյանին: Բայց հարսանիքի գիշերը երեսուն հոգի եկան նրա կողմից: Յազիրիի խումբը նվագում էր: Վեց քահանա կար և մեկ վարդապետ: Մեզ պետք է պսակեր մեր տան քահանան՝ Արսեն Բագրատունին, բայց Օհանեսի հայրը ասաց՝ իմ տղին ե՛ս պետք է պսակեմ»:

ԹԺՂ, 332:

Վ *<Դեկտեմբեր>, Թիֆլիս.* – «Աղբյուր» ամսագրի խմբագրատանը ծանոթանում է Ղ. Աղայանի հետ:

Օլգա Թումանյանը հիշում է. «Մի օր ուրախ տրամադրությամբ եկավ տուն և ոգևորված սկսեց պատմել, թե ինչպես

«Աղբյուր» ամսագրի խմբագրատանը ծանոթացել է Ղազարոս Աղայանի հետը: Այդ ծանոթությունը շուտով դարձավ մտերմություն, հետո՝ խոր բարեկամություն, որ տևեց մինչև Աղայանի մահը»:

ԹԺՂ, 333:

<Դեկտեմբեր>, Թիֆլիս. – Յայտնում է Ան. Աբովյանին, որ գիշերները հաճախում է մի հեղափոխական ընկերության գաղտնի ժողովներին և խոստանում վերջինիս ևս հետը տանել:

Ան. Աբովյանը հիշում է. «1888 թ. դեկտեմբերին նա ամուսնացավ: <...> Այդ ժամանակները Յովհաննեսի մեջ ինչ-որ հոգեկան փոփոխություն էի նկատում: Գաղտնիքը մի օր բաց արավ ինձ: Գիշերները նա հաճախում էր մի հեղափոխական ընկերության գաղտնի ժողովներին* և խոստանում էր մի անգամ էլ ինձ տանել հետը»:

* Ակնարկը հավանաբար վերաբերում է Ալեքսանդր Գուլոշյանի խմբի ժողովներին (տե՛ս 1884, օգոստոսի 15, սեպտեմբեր):

ԹԺՂ, 229, 929:

Դեկտեմբերի վերջ, Թիֆլիս. – Մասնակցում է Յակոբ Ղազարյանի (քրդագետ Լազո) հարսանիքին:

Ներկա են լինում նաև Օլգա Թումանյանը, Ղազարոս Աղայանը՝ կնոջ հետ, «Աղբյուրի» և «Տարազի» աշխատակիցներ, Րաֆֆու այրին՝ տիկին Աննան:

ԹԺՂ, 333:

1888. – Գրում է «Նահատակ» բանաստեղծությունը:

Եղել է այն ընդհանուր տետրում, որ բանաստեղծը նույն թվականին կարդացել է ընկերներին՝ Ներսիսյան դպրոցում սովորելիս (տե՛ս մարտի սկիզբ):

ԵԼԺ 1, 30, 437:

1888, *Թիֆլիս.* – Ան. Աբովյանի հետ զբոսնելիս հանդիպում են «գաղտնի ընկերության» (տե՛ս <դեկտեմբեր>) անդամներից երկուսին:

Ան. Աբովյանը հիշում է. «Մի օր ես ու Յովհաննեսը մեր զբոսանքի միջոցին պատահեցինք այն գաղտնի ընկերության անդամներից երկուսին, ծանոթացանք ու շարունակեցինք մեր

զբոսանքը՝ զրույց անելով: Երևի նրանք ուզում էին իմ կարծիքն իմանալ, որ, իմիջիայլոց, խոսք բաց արին ազգայնության մասին: Թե՛ Դովհաննեսը, թե՛ ես պնդում էինք, որ մեզ համար ազգերի մեջ խտրություն չկա. սակայն ուրիշ էր նրանց հայացքը: Ռուս ազգի մասին խոսելով, ասում էինք, որ թեպետ մենք դեմ ենք նրա միապետությանն ու բյուրոկրատիզմին, բայց ո՛չ բուն ժողովրդին»:

ԹԺՂ, 229:

<1 8 8 9>

Ապրիլ, Թիֆլիս. – Մասնակցում է Թիֆլիսի հրատարակչական ընկերության ընտրություններին:

Աճ. Աբովյանը հիշում է. «Այն ժամանակ Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը* մի կերպ քարշ էր տալիս իր անգույն գոյությունը: Որպեսզի քնած վիճակից սթափվեր և իր իսկական կոչմանը ծառայեր, գրական շրջաններում միտք արծարծվեց զարկ տալ ընկերության գործունեությանը: Դովհաննեսն ու ես էլ, պարտքով դրամ ճարելով ու անդամագրվելով, մասնակցում էինք ժողովներին: Հայ մտավորականների ճառերը խոր տպավորություն էին թողնում մեր մատաղ սրտերի վրա»:

* Նախապես կոչվում էր «Թիֆլիսի ընկերություն հայերեն գրքերի հրատարակության»: Ընտրությունները տեղի էին ունենում ամեն տարի: Աճ. Աբովյանը հավանաբար նկատի ունի 1889 թվինը, երբ օրվա խնդիր էր դարձել ընկերության խնդիրների բարելավումը: Խրախուսվում էին հատկապես երիտասարդ մտավորականները, որոնք 6 ռ. անդամավճարով կարող էին մասնակցել ընտրություններին: Նպատակն էր աշխատանքի մեջ ներգրավել ձեռներեց, գործունյա ուժեր:

ԹԺՂ, 229:

1 8 8 9

Մայիսի վերջ, Թիֆլիս. – Գրում է «Երանություն էր խոստացել հուլյսս ինձ» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 35, 550:

Պարուն, Թիֆլիս. – Ստացվում է Ալ. Գոլոշյանի մահվան լուրը:

Այդ կապակցությամբ բանաստեղծը կնոջը խոստովանում

է, որ ինքն էլ կապված էր Գոլոշյանի խմբի հետ և որոշել էր նրանց հետ անցնել Արևմտյան Հայաստան:

Օլգա Թումանյանը հիշում է. «Մի օր էլ եկավ, թե՛ քեզ եմ պարտական, կյանքս ազատեցիր: Ասում եմ՝ ինչո՞վ, ի՞նչ է պատահել: Ասաց.

- Չե՞ս իմանում, Ալեքսանդր Գոլոշյանի հետ որոշել էինք գնալ Տաճկահայաստան, հայրենիքն ազատելու, ես էլ իմ ամառվա վերարկուս ծախեցի, մի ատրճաճակ առա, պետք է գնայի: Մեր նշանվելու պատճառով իմ գնալը հետաձգվեց, իսկ գնացողները սպանվել են ճանապարհին»:

ԹԺՂ, 329, 938:

✓ *Օգոստոսի 15, Թիֆլիս.* – Ծնվում է բանաստեղծի անդրանիկ որդին՝ Մուշեղը:

ԹԵԺ V, 130:

✓ *Ամառ, Թիֆլիս.* — Որոշ ժամանակով տեղափոխվում է Աճ. Աբովյանի մոտ:

Ա. Աբովյանը հիշում է. «Դովհաննեսը համարյա ամեն երեկո մոտս էր գալիս զրուցելու: Նախանձում էր իմ ամուրիի կյանքին: Եվ հենց այդ միջոցներում խռովություն ծագեց Դովհաննեսի և իր զոքանչի միջև: Անսահման բարեսրտության հետ անսահման էլ դյուրագրգիռ էր նա, երբ խոսքը վերաբերում էր պատվասիրության: Եվ նա, զոքանչի մոտ թողնելով կնոջն ու զավակին, տեղափոխվեց ինձ մոտ»:

ԹԺՂ, 230:

Ամառ. – Հյուրընկալվում է Ս. Դովվյանի հայրենի գյուղում՝ Արդվիում:

Հովվյանը հիշում է. «1889 թ. ամառային արձակուրդներին Դովհաննեսն իրենց գյուղից հյուր եկավ մեզ մոտ, իմ հայրենի Արդվի գյուղը: <...> Գյուղացիներին շատ էին դուր գալիս նրա խոսակցությունը և լոռեցիների բարբառով խոսելու սովորությունը, սրամտություններով համեմված գվարճախոսությունները: <...> Մեր գյուղից Այգեհատ գյուղը (Շահվերդյան ազնվականների գյուղը) գնացինք մի երկու օրով և հյուր մնացինք պապոնցս տանը: <...> Այգեհատ գյուղից Դովհաննեսը կարճ

ճանապարհով գնաց ուղղակի Դսեղ, ու մենք դարձյալ մնացինք առանց նրա հաճելի ընկերության»:

ԹԺՅ, 257-258:

Դոկտեմբերի 31, ժամը 11 1/2, Թիֆլիս. – Նամակ Աղստաֆա՝ Օլգա Թումանյանին:

Գրում է. «Չեմ կարող չխոստովանիլ, որ շատ ծանծրալի են ինձ համար այս օրերը, չնայելով, որ, իհարկե, միայնակ չեմ բոլորովին. ինչքան երկար են թվում ինձ այս ժամերը, այժմ ես զգում եմ հատկապես, որ ոչ ոք չէ կարող փոխարինել քեզ ինձ համար. զարմանալի բան, երազի նման եմ հիշում քո այստեղ եղած ժամերը: Ջգալի է դառնում ինձ համար քո բացակայությունը, մանավանդ, երբ վերադառնում եմ կոնսիստորիայից կամ երեկոյան տուն եմ գալիս»:

ԵԼԺ 9, 11, 477:

Դեկտեմբեր, Թիֆլիս. – Գրում է «Վերջին խոսք» («Յեռո՛ւ, ո՛վ սուրբ խաղաղություն...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 37, 550 – 551:

1889, Թիֆլիս. – Գրում է «Ի՞նչ ես կատաղել անմեղ արարքից» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 38, 551. ԹԺՅ 345:

1889, Թիֆլիս. – Գրում է «Ների՛ր, ո՛վ կույս, որ հուզեցի...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 41, 552:

1889, Թիֆլիս. – Գրում է «Երբ ես տխուր, հուսահատ...» բանաստեղծությունը:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ Թումանյանը բանաստեղծությունը գրել է «թափանցելով Քրիստոսի և, երևի, նաև իր դրության մեջ» (ԹԺՅ, 346):

ԵԼԺ 1, 48, 552:

1889, Թիֆլիս. – Գրում է «Ես նայում եմ իմ առջև...» բանաստեղծությունը:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ բանաստեղծության հղաց-

ման շարժառիթը եղել է Թիֆլիսի բուսաբանական այգու բարձունքներից քաղաքը դիտելը (ԹԺՅ, 375):

ԵԼԺ 1, 39, 551:

1889, Թիֆլիս. – Ծանոթանում է Բաքվի հայոց կուլտուրական միության գեղարվեստական սեկցիայի նախագահ ճարտարապետ Դովհաննես Խիզանյանի հետ:

Խիզանյանը հիշում է. «Թումանյանի հետ ծանոթացել եմ 1889 թվին: 1890 թվից սկսած մենք շատ հաճախ էինք պատահում իրար: Բնակվում էինք միևնույն՝ Նորաշենի փողոցում, իրարից բավական մոտիկ: Նա հաճախ գալիս էր մեզ մոտ՝ տեսնելու իմ նկարները»:

ԹԺՅ, 375:

1889, Թիֆլիս. – «Շունն ու Կատուն» բալլադը տանում է «Մուրճում» տպագրելու:

Ավ. Արասխանյանը մերժում է: Բանաստեղծը հիշում է. «Շունն ու Կատուն» եթե իմ առաջին գրքում (Մոսկվայի) չկա, պատճառը հանգուցյալ Արասխանյանի զարմանքն է, որ նա հայտնեց ինձ 1889 թվականին, երբ տարա նոր «Մուրճում» տպագրելու: Կարդաց, շատ զարմացավ. հարցրեց, թե՞ ասացեք խնդրեմ՝ Շուն ու Կատուն և բանաստեղծությունն, սրանք ի՞նչ կապ ունեն իրար հետ, էն էլ ես տեսակ վայրենի լեզվով»:

ԵԼԺ 2, 89, 549:

1889, Թիֆլիս. – Գրում է «Ա՛խ, երանի թե լիներ մի հնար...» բանաստեղծությունը:

Հետագայում բանաստեղծը Ա. Աբովյանին գրում է. «Ես օր թղթերիս մեջ գտա մի ոտանավոր՝ փոքրիկ «экспромт», տակին գրած 1889 թ. «վեչերում». բանից դուրս է գալիս, որ մի տխուր բնավորության տեր սիրելի Նազելիի ուրախությունը ինձ շատ է դուր եկել և ես գրել եմ.

Ա՛խ, երանի թե լիներ մի հնար –

Այդ ժպիտը միշտ քո դեմքին մնար.

Ես վախենում եմ մի ժամից հետո

Անցնի խնջույքը, և կյանքից դժգոհ

Մտածմունքներով դարձյալ դու տխրես...

Ա՛խ, երանի թե մնային այդպես...» (ԵԼԺ 9, 104):

ԵԼԺ 1, 44, 553:

1889, *Թիֆլիս*. — Գրում է «Մանկություն» («Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 40, 551:

1889, *Թիֆլիս*. — Գրում է «Լոռեցի Սաքոն» պոեմի առաջին տարբերակը:

ԵԼԺ 3, 497- 501:

1889, *Թիֆլիս*. — Գրում է «Կալի երգը» («Կալ արա, գնանք...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 42, 552:

1889, *Թիֆլիս*. — Գրում է «Ալեք» պոեմը:

ԵԼԺ 3, 25, 502:

1889, *Թիֆլիս*. — Փոխադրում է Մ. Յու. Լերմոնտովի «Желание» բանաստեղծությունը՝ «Իդե» վերնագրով:

ԵԼԺ 2, 227, 587:

1889-1890 *ձմեռ*. — «Երիտասարդ Հայաստան» դաշնակցական խմբակի անդամ է (տես 1888, տարվա ընթացքում):

ԵԼԺ 9, 40, 490:

1890

Հունվարի 6. — Ստ. Զորյանի (Ռոստոմ) նամակը Թումանյանին:

Շնորհավորում է Սուրբ Ծնունդը և Մկրտությունը: Գրում է որոշ կենցաղային հարցերի մասին: Խնդրում է Գոլոշյանից վերցնել իր գիրքը և ուղարկել:

ԳԱԹ, ԹՖ, 1198:

Հունվարի 14 (հ. տ.), *Թիֆլիս*. — Թումանյանի անվանակոչության օրը:

Օ. Թումանյանը հիշում է. «Հունվարի 14-ին (հին տոմարով) Օհանեսի անվանակոչության օրն էր: Ծանոթ օրիորդները այդ օրը հավաքվեցին մեզ մոտ, և այդպիսով սկիզբ դրվեց հունվարի 14-ի տոնակատարության: Նվեր էին բերել մի թանա-

քաման, զույգ մոմակալներով (այժմ Թումանյանի թանգարանումն է), արծաթե գրիչ, ծոցատետր, ծաղիկներ և այլն»:

ԹԺՀ 334:

Հունվար, Թիֆլիս. — Տպագրվում է Լ. Մանվելյանի «Թումանյանի ստեղծագործությունը» հոդվածը:

«Մուրճ», 1890, թիվ 1:

Փետրվարի 26. — Տիգրան Վերանյանի նամակը Թումանյանին՝ Ջալալօղլուց:

Գրում է կենցաղային հարցերի մասին: Խնդրում է արագացնել ինչ-որ վկայականի գործը: Ակնարկում է իր՝ քահանա դառնալու մտադրության մասին:

ԳԱԹ ԹՖ, 2121:

Մարտ, Թիֆլիս. — Գրում է «Այդ ի՞նչ սրտամաշ տխրություն է քեզ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 45, 553:

Ապրիլի 1, Թիֆլիս. — Գրում է «Եթե իմ վերջին հայացքը մնա...» բանաստեղծությունը:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ բանաստեղծությունը ներշնչված է մի ծանոթ աղջկա հանդեպ երկար ժամանակ բանաստեղծի տածած սիրո զգացումից (ԹԺՀ, 345):

ԵԼԺ 1, 47, 554:

Ապրիլի 4, Թիֆլիս. — Թարգմանում է Ա. Ս. Պուշկինի «Заклинание» բանաստեղծությունը՝ «Եթե իրավ է, որ գիշերները...» սկսվածքով:

ԵԼԺ 2, 229, 588:

Ապրիլի սկիզբ, Թիֆլիս. — Ալեքսանդրյան այգում հրածեշտի հանդիպում ԱՆ. Արուսյանի հետ:

ԱՆ. Արուսյանը հիշում է. «Նշանակված ժամին երկուսս էլ այնտեղ էինք, բայց լուռ ու մտախոհ, կարծես կուրծքներս արճճի ծանրության տակ ճնշվելիս լինեին: Առաջինը ես ընդհատեցի լռությունը: «Դե, էլ ինչ ասես, ուհանես ջան, մնաս բարով, համա շուտ-շուտ նամակ գրի»: Հովհաննեսի սիրտը փուլ եկավ. հեկեկաց ու ինձ էլ վարակեց: Անխոս գրկախառնվեցինք, ջերմաջերմ

համբուրվեցինք ու բաժանվեցինք»։*

* ԱՆ. Աբովյանը, անգործ և անելանելի վիճակի մեջ լինելով, իր ազգականներից մեկի առաջարկությամբ մեկնում էր Պողոսկի նահանգի Կամենեց քաղաքը՝ որպես նոր բացվելիք խանութի գործակատար։
ԹԺՅ, 230:

Ապրիլի 14. – ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Խարկովից:

Բացիկ-նամակով հայտնում է բարեհաջող Խարկով հասնելու մասին. «...այն քաղաքը, որի նահանգը տարագրվածներն են արսորվում <...> մենք մի՞թե նույն մարդիկը չենք, գուցե այն զանազանությամբ միայն, որ առաջինները գոնե իրավունք ունին բողոքելու աշխարհիս օրենքի համաձայն, իսկ մենք մեր բողոքը մեր մեջն ենք խեղդում...»: Խոստանում է ուղարկել իր հասցեն, հաղորդել ճանապարհորդական տպավորությունները:
ԳԱԹ ԹՖ, 730:

Ապրիլի 18, Թիֆլիս. – Նամակ Ավետիք Արասխանյանին:
«Մեծապատիվ պարոն խմբագիր
«Մուրճ» ամսագրի

Չենք կարող թաքցնել այն զայրույթը և զզվանքը, որ հարուցեց «Մշակն» յուր այս տարվա N-ի* «Ֆելիետոնով» և N-ի «Մի բացատրությունով»՝ հրապարակախոսին և նույն իսկ սոսկ մարդուն անվայել անպատկառությամբ հարձակվելով Ձեզ վրա:

Արդ մենք, պարոն խմբագիր, բողոքելով այդ անպատվաբեր վարմունքի դեմ, հույս ենք տածում, որ անկարող կլինին այդ և նմանօրինակ լուտանքները Ձեզ հանել հայիոյանքների հրապարակը, և որ «Մուրճի» էջերը սուրբ կպահեք *հայիոյանքներից*, որից մենք կշտացել ենք:

Մնում ենք խորին հարգանքը՝

*Յովհաննես Թումանյանց
Զաքարիա Զալայանց
Սեդրակ Գրիգորյանց
Դավիթ Շահլամյանց»:*

* N-ը Գր. Արծրունին է, որ իր ֆելիետոնում և հոդվածում («Մշակ», 1890, N 36, 37) ծաղրել էր Ավ. Արասխանյանի ողջույնի խոսքը՝ Խրիմյան

Չայրիկի 70-ամյա հորեյլանի առթիվ, և «Իշխան Բիսմարկի հրաժարականը» հոդվածը («Մուրճ», 1890, No 3):

ԵԼԺ 9, 13, 477-479:

Ապրիլի 21, Թիֆլիս. – Գրում է «Մի՛ որոնիր մի ժամանակ...» բանաստեղծությունը:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ ոտանավորը նվիրված է իրենց տուն այցի եկած մի օրիորդի, որին ժամանակին անպատասխան սիրել էր բանաստեղծը (ԹԺՅ, 345):

ԵԼԺ 1, 49, 554:

Ապրիլի 21. – Նամակ Կամենեց-Պողոսկից՝ ԱՆ.Աբովյանից:
Ուղարկում է հասցեն և խոստանում գրել ճանապարհորդական տպավորությունները:

ԳԱԹ ԹՖ, 731 (211 լր.):

Ապրիլի 21, Թիֆլիս. – Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ ապրիլի 14-ի նամակը Խարկովից:

ԳԱԹ ԹՖ, 730:

Ապրիլի 22, Թիֆլիս. – Գրում է «Շատերի նման նա էլ խեղդվեցավ...» բանաստեղծությունը:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ այն ուղղված է «Չոփուռի տղաներին» դատապարտողների դեմ (ԹԺՅ, 346):

ԵԼԺ 1, 50, 555:

Ապրիլ, Թիֆլիս. – Գրում է «Խորհրդածություն» («Ո՞րն է դրախտը, — վայրն երանավետ...») բանաստեղծությունը:

Չետագայում 1-18 տողերի ինքնագիրը հեղինակը նվիրել է Յովհ. Մալխասյանին՝ ընծայականով. «Յիշատակ պ. Յ. Մալխասյանին, 29-ին հունվարի, 1891 թ., Թիֆլիս» (ԳԱԹ, Յովհ. Մալխասյանի ֆոնդ, թիվ 152):

ԵԼԺ 1, 51, 555:

Մայիսի 1, Թիֆլիս. – Գրում է «Մարգարե» բանաստեղծությունը՝ Գր. Արծրունու հրապարակախոսական գործունեության 25 - ամյակի առթիվ:

Տիգրան Փիրումյանը վկայում է. «Նույն Արծրունուն էր

վերաբերում նաև «Մարգարեն»։ բայց **Թումանյանը** կամեցավ այդտեղ իդեալական կերպարանք տալ՝ աչքի առաջ ունենալով նաև **Քրիստոսին**» (ԹԺՅ, 345)։

ԵԼԺ 1, 53, 555-556:

Մայիսի 3 .— Ս. Սիմեոնյանի նամակը բանաստեղծին՝ **Զալալօղլուց**։

Կոնստանտնուպոլիսի վերադարձրել որդու ծննդյան վկայականը, որտեղ ազգանունը սխալ է գրված եղել։ Խնդրում է Թումանյանի միջնորդությունը՝ ճշտված վկայականը որքան կարելի է շուտ ստանալու համար։

ԳԱԹ ԹՖ, 1982:

Մայիսի 4 .— Ան. Աբովյանի նամակը բանաստեղծին՝ **Կամենեց-Պոդոլսկից**։

Հիշեցնում է իրենց բաժանման օրը, անկեղծ ընկերական արցունքները. «մտերիմ – ընկերական սիրուց քաղցր սեր աշխարհում չունի գոյություն» (տե՛ս ապրիլի սկիզբ)։ Խոստանում է ուղարկել ճանապարհորդական տպավորությունները։

ԳԱԹ ԹՖ, 732:

Մայիսի 5 .— Ե. Երզնկյանի* նամակը Թումանյանին՝ **Կողբից**։

* Երզնկյանը բանաստեղծի մտերիմներից էր, հաղպատցի, Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, գավառական ուսուցիչ և բանահավաք։ Նամակով խնդրում է ուղարկել խոստացած «Գյուղական խալիֆան», «Սոկրատ» և այլ գրքեր, «Աղբյուր», «Նոր-Դար», «Մշակ» և այլ պարբերականներ։

ԳԱԹ ԹՖ, 1163:

Մայիսի 6, Թիֆլիս. — Մասնակցում է Գր. Արծրունու հոբելյանի առթիվ կազմակերպված ներկայացմանը Թիֆլիսի «Կուրբի» ամառային շենքում։

«Ես էլ <...> հուշարար էի. էհ, փառք Աստծո, հուշարար էլ դարձա. դերասան խո արդեն...(տե՛ս 1887, փետրվարի 12)»։

ԵԼԺ 9, 14, 479 – 481:

Մայիսի 7, Թիֆլիս. — Գրում է «A la՛ Նադսոն. Պոետին» բանաստեղծությունը։

Ռուս բանաստեղծ Ս. Յու. Նադսոնի՝ 1885 թ. հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուն մեծ ազդեցություն է գործել երիտասարդ բանաստեղծների, այդ թվում նաև Թումանյանի վրա, ինչի մասին վկայում է այս ոտանավորը։

ԵԼԺ 1, 54, 556:

<Մինչև մայիսի 8-ը>, **Թիֆլիս**. — Ստանում է Ան. Աբովյանի՝ 1890 թ. ապրիլի 14-ի և մայիսի 4-ի նամակները Խարկովից և Կամենեց – Պոդոլսկից։

ԵԼԺ 9, 14, 479:

Մայիսի 8, Թիֆլիս. — Գրում է «Փայլուն աստղիկ երկնադիտակ...» բանաստեղծությունը։

ԵԼԺ 1, 329, 645:

Մայիսի 8, Թիֆլիս. — Նամակ Կամենեց – Պոդոլսկ՝ Անուշավան Աբովյանին։

Տեղեկություններ է հաղորդում Գր. Արծրունու՝ այդ օրերին կատարված հոբելյանի մասին. «Իրավն ասած, անշուք էր և բռնի, ստոր միջոցներով սարքած բան, որ պատիվ չէր բերում հոբելյարին։ «Արծագանքն» ու «Նոր-Դարը» բավականին վնասեցին, իսկ «Մուրճն» ուղերձ ուղարկեց...»։

Հայտնում է, որ տպագրության է պատրաստում բանաստեղծությունները։

Ան. Աբովյանին է ուղարկում «Փայլուն աստղիկ երկնադիտակ» բանաստեղծությունը՝ հետևյալ բացատրությամբ. «Մի ժամ առաջ (ժամը 11-ն է) լուսամուտից նայում էի երկնքին, մի վառ աստղի, և մտքիս մեջ ասում, արդյոք դուն է՞լ ես նույն ժամին նույն աստղին նայում...»

Փայլուն աստղիկ երկնադիտակ,
Դուն, որ տեսնում ես ամեն բան,
Սառն հյուսիսի երկնքի տակ
Ունիմ ընկեր, տեսնո՞ւմ ես նրան...
Նա էլ ինձ պես
Նայո՞ւմ է քեզ...»։

ԵԼԺ 9, 14, 479:

Մայիսի 8, Թիֆլիս .- Ստանում է Ե. Երզնկյանի նամակը (տե՛ս մայիսի 5)։

«Մեր ազգային-եկեղեցական շաշիցը, չէ, ներողություն, լրբիցը՝ Եղիշեիցը, այսօր նամակ ստացա, գրում է, թե գրքեր ու դեղեր ուղարկիր, գրքեր հլա ուղարկեցի, իսկ դեղերի համար գրեցի, թե «Մարդ ոչ միայն դեղի կեցցե, այլ բանիւ աստուծոյ»։ ԵԼԺ 9, 14–15, 479-481։

Մայիսի 8, Թիֆլիս .- Նամակ Ե. Երզնկյանին (չի պահպանվել)։

ԵԼԺ 9, 14, 479։

Մայիսի 12, Թիֆլիս .- Գրում է «Գիշերային առաջին աստղի դիմաց» բանաստեղծությունը։

Տ. Փիրումյանը հիշում է. «Մի քանի հոգու հետ պատշգամբում նստած դիտում է երկինքը ու տեղնուտեղը ստեղծագործում և ներկա եղողներին թելադրում» (ԹԺՅ, 345-346)։

ԵԼԺ 1, 56, 556։

<Մինչև մայիսի 17-ը>, Թիֆլիս .- Ե. Երզնկյանին է ուղարկում «Սոկրատ» և «Հիմնարկություն գավառական ուսումնարանին» գրքերը, որ խնդրել էր նա (տե՛ս մայիսի 5)։

ԵԼԺ 9, 14, 479։

Մայիսի 17 .- Ե. Երզնկյանի նամակը բանաստեղծին՝ Կողբից։

Խնդրում է գտնել Գրիգոր Երիցյանին, վերցնել և ուղարկել այն դեղերը, որ վաղուց խնդրել էր (տե՛ս մայիսի 8)։ Շնորհակալ է ստացած գրքերի համար (տե՛ս մինչև մայիսի 17-ը)։

ԳԱԹ ԹՖ, 1164։

Մայիսի 18 .- Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից։

Ուրախ է, որ ստացել է բանաստեղծի նամակը։ Հայտնում է, որ մայիսի 8-ից ստանում է «Նոր-Պարը»։ Խորհուրդ է տալիս բանաստեղծությունները պարբերաբար տպագրել «Սուրճում»՝ գրական շրջանների կարծիքն իմանալու համար։ Անդրադառնում է կենցաղային որոշ հարցերի։ Ուղարկում է «Ճանապարհորդական տպավորությունների» Ա մասը։

ԳԱԹ ԹՖ, 733։

Մայիսի 18, Թիֆլիս .- Բաժանորդներին է տալիս «Բանաստեղծությունների» բաժանորդաթերթերը։

Այդ մասին նշում է թիվ 1 (11) ծոցատետրում. «1890 թ. մայիսի 18-ին «Բանաստեղծությունների» բաժանորդաթերթերը տվեցի»։

1. Մելքոնին (Ասլիբեկյանց)

2. Բագրատին (Թումանյանց)

3. Սիմեոնին (Ղլտչյանց (... (22 անուն)»։

Այնուհետև երկար ցուցակ՝ ունից ինչքան գումար է ստացել, ում ինչքան է ուղարկել, բաժանորդագրությամբ կամ վաճառելու ում քանի օրինակ գիրք է ուղարկել և այլն։

ՈՒՀ 5, 158 – 160։

Մայիսի 20 .- Գրում է «Չարամիտներին» բանաստեղծությունը։

ԵԼԺ 1, 57, 557։

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ Թումանյանը բանաստեղծությունը գրել է Թիֆլիսի Մթածմինդա սարից քաղաքը դիտելիս։

ԹԺՅ, 346։

Մայիսի 22 .- Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից։

Ուղարկում է «Ճանապարհորդական տպավորությունների» Բ մասը։

ԳԱԹ ԹՖ, 734. ԵԼԺ 9, 15, 481։

Մայիսի 24 .- Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից։

Ուղարկում է «Ճանապարհորդական տպավորությունների» Գ մասը։

ԳԱԹ ԹՖ, 735։

Մայիսի 26, Թիֆլիս .- Ստանում է Ան. Աբովյանի՝ մայիսի 18-ի նամակը Կամենեց-Պոդոլսկից։

ԳԱԹ ԹՖ, 733։

Մայիսի 26 .– ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Ուղարկում է «ճանապարհորդական տպավորությունների» 7 մասը:

ԳԱԹ ԹՖ, 736:

Մայիսի 26 .—Թիֆլիս է ժամանում իտալացի ողբերգակ դերասան Էռնեստո Ռոսսին:

Կայարանում նրան դիմավորում են մեծ շուքով (տե՛ս «Մշակ», 1890, թիվ 59): Որպես սիրողական խմբի անդամ՝ Թումանյանը ևս դիմավորողների խմբում էր. «Ես էլ էի սիրողների <խմբի> մեջ: Ռուս անտրեպրերնորը մեզ հրավիրեց Ռոսսուն դիմավորելու: Եվ ահա մենք, իբրև դերասանական խումբ, գնացինք կայարան Ռոսսուն ընդունեցինք ծաղկեփնջերով ու երաժշտությունով: Ռոսսին մեզ հրավիրեց իր բոլոր ներկայացումներին»:

ԵԼԺ 7, 260:

Մայիսի 28 .– ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Ուղարկում է «ճանապարհորդական տպավորությունների» Ե մասը:

ԳԱԹ ԹՖ, 737:

Մայիսի 30, Թիֆլիս .– Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ մայիսի 22-ի նամակը Կամենեց-Պոդոլսկից:

ԳԱԹ ԹՖ, 734:

Մայիսի 30, Թիֆլիս .– Ներկա է լինում Շեքսպիրի «Համլետի» առաջին բեմադրությանը՝ Էռնեստո Ռոսսիի մասնակցությամբ (տե՛ս մայիսի 26):

Բանաստեղծը հիշում է. «Համլետի ներկայացման գիշերն էր: <...> Գործողությունը վերջացավ: Վարագույրն իջավ: Թատրոնը դղրդաց միահամուռ ու անընդհատ ծափահարություններից: Ռոսսին ստիպված մի քանի անգամ բեմ դուրս եկավ, մինչև որ հասարակությունը հանգստացավ: Եվ հասարակությունը հանգստացավ թե չէ, նույնիսկ Ռոսսու թարմ խաղի ահագին տպավորության տակ գրեթե միաձայն արձակեց իր վճիռը:

– Սքանչելի է ... բայց Ադամյանին չի հասնիլ:

Ես իմ կյանքում, թերևս, երբեք ինձ էնքան հպարտ չեմ զգացել իբրև հայ, ինչպես էն գիշեր»:

ԵԼԺ 7, 260, 632:

<Մինչև ամառ>, Թիֆլիս. – Ընկերների առաջարկությամբ իր բանաստեղծությունների ժողովածուն ներկայացնում է գրաքննիչին՝ տպագրության թույլտվություն ստանալու համար:

Ա. Առաքելյանը հիշում է. «Թումանյանը մեր առաջարկությամբ իր կազմած ժողովածուն ներկայացրեց Թիֆլիսի գրաքննիչին՝ թույլտվություն ստանալու համար, որը բավական երկար պահելուց հետո մերժեց թույլտվությունը»:

ԹԺՂ, 289:

<Ամառ>, Թիֆլիս. – Բարեկամների խորհրդով բանաստեղծությունների ժողովածուն ուղարկում է Մոսկվա՝ տպարանատեր Մկրտիչ Բարխուդարյանին:

Ա. Առաքելյանը հիշում է. «Թումանյանը բարեկամների խորհրդով իր ժողովածուն ուղարկում է Մոսկվա, տպարանատեր Մկրտիչ Բարխուդարյանին, առաջարկելով թույլտվություն ստանալ և որոշ պայմաններով տպագրել»:

ԹԺՂ, 289:

Մինչև հունիսի 3 – ը, Թիֆլիս .– Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ մայիսի 28-ի նամակը:

ԵԼԺ 9, 15, 481:

Հունիսի 1, Թիֆլիս .—Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ մայիսի 24-ի նամակը:

ԳԱԹ ԹՖ, 735:

Հունիսի 2, Թիֆլիս .—Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ մայիսի 26-ի նամակը:

ԳԱԹ ԹՖ, 736:

Հունիսի 3, Թիֆլիս .– Նամակ Կամենեց – Պոդոլսկ՝ Անուշավան Աբովյանին:

Տեղեկացնում է, որ ստացել է նրա չորրորդ նամակը: Գրում է, որ զիջելով բարեկամների համառ հորդորներին, պատրաստ-

վում է տպագրության հանձնել «Բանաստեղծությունների» առաջին գիրքը. արդեն տպագրել է տվել բաժանորդաթերթերը:

Խիստ դժգոհություն է հայտնում ժամանակի մամուլում տիրող բարքերից, հատկապես միմյանց հանդեպ անհաշտ թշնամությունից. «Մամուլի մասին, որ մի՛ խոսալ. այնքան եմ զգված, որ չեմ ուզում կարդալ և ոչ մեկը. դրանց մասին, որպեսզի կարճ կտրեմ, այստեղ եմ դնում մի տուն իմ ոտանավորից.

Ահա գետնաքարշ և չարախնդում
Խումբերըն անսիրտ մարդ-հրեշների
Վիտում են անվախ հրապարակներում,
Իբրև առաջնորդ մարդոց մտքերի...»*

Վերջում ավելացնում է. «Այս նամակս գրել եմ հոգեկան մի սուրբ հուզմունքի ժամանակ, որ ընդդեմ է բարձրանում ամեն տեսակ խավարի և մոլության և բարձրանում է նրանց յուր հորձանքի, ալիքների ներքո խորտակելու...»:

*Քառատողը «Երանություն էր խոստացել հույսս ինձ» բանաստեղծությունից է (ԵԼԺ 1, 35):

ԵԼԺ 9, 15-18, 481:

Հունիսի 4, Թիֆլիս. — Ստանում է Աճ. Աբովյանի՝ մայիսի 28-ի նամակը Կամենեց-Պոդոլսկից:

ԳԱԹ, ԹՖ, 737. ԵԼԺ 9, 15, 481:

Հունիսի 12, Թիֆլիս. — Գրում է «Միամիտներին» («Երանի է ձեզ, որ չեք հասկանում...») բանաստեղծությունը:

Ըստ Տ. Փիրումյանի վկայության (ԹԺՄ, 346) նվիրված է այն խեղճ գյուղացիներին, որոնցից մեծամեծ կաշառքներ էին վերցնում Թիֆլիսի կոնսիստորիայի պաշտոնյաները:

ԵԼԺ 1, 59, 557:

Հունիսի 25, Թիֆլիս. — Գրում է «Ոհ, խնայեցե՛ք, մի՛ հիշեցնեք ինձ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 60, 558:

«Հունիսի առաջին կես», Թիֆլիս. — Գրում է «Անուշ» պոեմի առաջին տարբերակը:

Այդ ժամանակ արդեն Մոսկվա էր ուղարկել իր առաջին ժողովածուի ձեռագիրը (տե՛ս հուլիսի 6):

ԵԼԺ 3, 79, 513:

«Մինչև հուլիս, Թիֆլիս». — Գրում է «Դարձ» պոեմը:

Պահպանվել է մի ինքնագիր՝ սևագիր, անավարտ: Մաքրագիր օրինակը կորել է, ինչի մասին բանաստեղծը հիշատակում է ն.թ. օգոստոսի 27-ին Աճ. Աբովյանին գրած նամակում (ԵԼԺ 24, 485):

ԵԼԺ 3, 143, 536:

Հուլիսի 4. — Աճ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Ուղարկում է «Ճանապարհորդական տպավորությունների» 2 մասը:

ԳԱԹ ԹՖ, 739:

Հուլիսի 4. — Աճ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Հայտնում է, որ ստացել է բանաստեղծի՝ հունիսի 3-ի նամակը: Խրախուսում է ընկերոջ մտադրությունը՝ տպագրության հանձնել իր բանաստեղծությունների ժողովածուն. «Շնորհավորում եմ, հոգիս, քո առաջին քայլը <...> ցանկանում եմ կատարյալ առաջադիմություն: <...> Ինչ վերաբերում է ասածդ՝ մեր տկար ուժերի կազդուրելու և ազգի և մարդկության բարօրության օգտին գործադրելու մասին մտածելը, այդ մասին մենք շատ ենք խոսացել, և ես չեմ մոռանալ...»:

Տալիս է նաև որոշ կենցաղային խորհուրդներ:

ՈՒՅ 4, 260-261:

Հուլիսի 5. — Գրում է «Հիշողություն հայրենիքից» («Այս կրծքի տակ ապականված...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 61, 558:

Հուլիսի 5, Թիֆլիս. — Գրում է «Ոհ, մեղմացնել չես կարող դուն...» բանաստեղծությունը:

Այս բանաստեղծության մասին Թումանյանն ակնարկում

է օգոստոսի 27-ին և սեպտեմբերի 28-ին ԱՆ. Աբովյանին ուղարկած նամակներում:

Առաջին նամակում. «Ստեփանի նամակի հետ մի ոտանավոր ուղարկեցի, կարծեմ թախծալի է, չէ՞...» (ԵԼԺ 9, 27, 485):

Հաջորդ նամակում. «Շատ ուրախացա քո նամակիդ վերջաբան ոտանավոր պատասխանովդ. վերջին երկու տունը հավանեցի, որոնք իբրև «հույս» պատասխանում են իմ «թախծին», իսկ մնացածը միևնույն է, թե հիվանդին ասես մեռի կամ անպատճառ կմեռնես» (ԵԼԺ 9, 40, 489):

ԵԼԺ 1, 64, 559:

Հուլիսի 5. — Հ. ճուղուրյանի (Սեդրակ Մովսիսյան) նամակը Թումանյանին՝ Ղազախից:

Խնդրում է տեղեկանալ և գրել, թե իր գործերի վերաբերյալ ի՞նչ տնօրինություն է եղել կոնսիստորիայում, արդյոք կա՞ն հակառակորդ թերթեր և ի՞նչ են գրում: Նաև հանձնարարում է ստուգել, թե իր անունը (Հարություն ճուղուրյան) ուսուցչական ցուցակների հավելվածում կա՞, թե ոչ:

ԳԱԹ ԹՖ, 1582:

Հուլիսի 5. — Գրառում թիվ 1(11) ծոցատետրում:

«Շուշի, զավոդի ծորում, հուլիսի 5-ին հայրենիք գնալիս.

Չորն ահավոր,
Ես մեղավոր
Միտքս մոլոր,
Սիրտս լքված,
Ահաբեկված.
Ես [Թույլ] գնում եմ...
Եվ [Պինդ] սեղմում եմ
Սառը փողը հրացանիս
[Աշխատում եմ]
[Սրտապնդում եմ]
Սակայն իզուր,
Դարձյալ սարսուռ,
[Մտքերս սև]
Դարձյալ <1 անընթ>

Օ՛, իմ հրացան,

Կրօքիս մեջ է թշնամին
Չորն ահավոր,
[Միտքս մոլոր ծայր ահավոր]
Կա հանցավոր.*
Ես կանգնում եմ
[Ես ինչ անեմ]
[Դողում եմ]
Ինձ քիչ մնաց
Որ հասնեի [զերեզմանիս] [տապանիս] վախճանիս,

պատանքիս»:

* *Կա նաև* կա մահապարտ:

ՈՒՀ 5, 161-162:

<*Մինչև հուլիսի 6-ը*>, *Թիֆլիս*. — Մի երեկո Ս. Հովվյանի հետ այցելում է «Մուրճի» խմբագրատուն:

«Անցյալ երեկոյան «Մուրճի» խմբագրատանն էինք (ես ու Սիմեոն Հովվյանը). ջերմ վիճաբանություններ տեղի ունեցան բանաստեղծության և բանաստեղծների մասին. գլխավորապես խմբագիրը և ճեմարանի ուսուցիչ Լիսիցյանն էին վիճում. վերջինս հերքում էր փաստերով «Մուրճի» բանաստեղծների բարձրությունը և ինքնուրույնությունը, որ սակայն Արասխանյանը պաշտպանում էր ամենայն ուժով: Լիսիցյանը պահանջում էր, որ տպվեն առայժմ բոլոր երիտասարդ բանաստեղծների ուղարկածները, որպեսզի նրանք սիրտ առնեն և իրանց գույնով ու ուժով մտնեն ասպարեզ և այն ժամանակ կարելի լինի իմանալ, թե որն է նրանցից իսկական բանաստեղծ, և ոչ թե հետ ուղարկել, վախեցնել և արհամարհանքով խորտակել նրա ունեցած-չունեցած ձիրքը»:

ԵԼԺ 9, 19:

<*Մինչև հուլիսի 6-ը (հունիսի վերջ, հուլիսի սկիզբ)*>, *Թիֆլիս*. — Նամակ Մոսկվա՝ ընկերոջը՝ Մ. Բարխուդարյանի տպարանի սրբագրիչ է. Ավետիսյանին (չի պահպանվել):

Նամակի հետ ուղարկում է «Բանաստեղծությունների» առաջին գրքի ձեռագիր տետրը (տե՛ս հունիսի առաջին կես):

ԵԼԺ 9, 18, 482:

Յուդիսի 6, Թիֆլիս. – Գրում է «Ո՛հ, թող սեր իմ, հրափետուր...» քառատող բանաստեղծությունը:

Ձեռագիրը՝ հունիսի 6-ին ԱՆ. Աբովյանին հղած նամակում. «Այստեղ անհնար է սիրել. ո՞ւմ սիրես. իսկ առանց սեր կյանք չկա. դուն սիրո ծնունդ և սիրո երգիչ, սիրո երկրպագու ես, դուն հասկանում ես որն է սերը. ես այստեղ սիրել չեմ կարող.—

Ո՛հ, թող սերն իմ հրափետուր
Դեպի հյուսիս խոյանա,
Ցնծա հոգիս այս տխուր,
Սիրոս առժամ հովանա...» (ԵԼԺ 9, 20):

ԵԼԺ 1, 330, 645:

Յուդիսի 6, Թիֆլիս. – Նամակ Մեծիբով՝ ԱՆ. Աբովյանին: Առաջին անգամ հիշատակում է «Անուշ» պոեմի մասին. «Իմ տետրակն արդեն ուղարկված է Մոսկվա տպագրելու... Չետո քեզ կուղարկեմ իմ նոր գրածներից (տետրակից հետո), ի թիվս այլոց և մի պոեմա «Անուշ» վերնագրով, Լոռու կյանքից...»: ԵԼԺ 9, 18, 482:

Յուդիսի 6, Թիֆլիս. —Նույն նամակում բողոքում է կյանքից, միջավայրից, խեղդող մթնոլորտից:

«Այստեղ շատ տխուր է, Անուշավան ջան, ոչ մի մխիթարության նշան չէ երևում մեր երկնականարի վրա. մարդիկ իրար ուտում են, կողոպտում են, սպանում են բարոյապես և, ո՛վ ամոթ, իրանց գարշելի բերանն առած՝ ամբողջ օրը ծամում են ազնվությունը և լուսավորությունը:

Ինձ, իրավն ասեմ, խեղդում է այս մթնոլորտը, չկա ընկերական շրջան, չկա գրականության մասին խորհող մարդոց շրջան, որ ղեկավարեին երիտասարդներին, չկա մի անկյուն, որ տիրած չլինի ավազակությունը, անառակ և ցուփ կյանքը, բռնությունը...»:

ԵԼԺ 9, 20:

Յուդիսի 10. – Է. Ավետիսյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Չայտնում է, որ ստացել է բանաստեղծի՝ մինչև հուլիսի 6-ը գրած նամակը (անհայտ) և բանաստեղծությունների տետրը՝

Մ. Բարխուդարյանի տպարանում տպագրելու համար: Խոստանում է ներկայացնել գրաքննիչին, որը Պետերբուրգից Մոսկվա է գալու նույն ամսի 15-ին: Վստահություն է հայտնում, որ 16-ին արդեն թույլտվությունը կլինի:

Տեղեկություններ է հաղորդում տպարանի և տպագրության պայմանների մասին:

Չետաքրքրվում է «Երիտասարդ Չայաստան» ընկերության գործերով. «Սիրելի Չովհաննես, արդյոք ինչպես է շարունակվում ձեր ընկերության գործը, կամ թե գոյություն ունի՞, թե ոչ: Խնդրեմ գրես»:

ՈՒՅ 4, 261-262:

Յուդիսի 11. – ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Ուղարկում է «Ճանապարհորդական տպավորությունների» վերջին է մասը:

ԳԱԹ ԹՖ, 739:

Յուդիսի 11, Թիֆլիս. —Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ հուլիսի 4-ի նամակը:

ԳԱԹ ԹՖ, 739:

Յուդիսի 15. – ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Բանաստեղծի՝ հուլիսի 6-ի նամակի պատասխանն է: Իր ուրախությունն է հայտնում նամակի համար: Ուզում է իմանալ Թումանյանի կարծիքը իր «Ճանապարհորդական տպավորությունների» մասին: Սրտմտած է, որ բանաստեղծը, թեև խոստացել էր, բայց չի այցելում իրենց ընտանիքին: Անհանգստացած է այն լուրից, թե «Նոր-Դարի» հրատարակությունը կարող է դադարեցվել. «Եղբայր, «Նոր-Դարի» մասին գրածդ լուրը ինձ մեծ ցավ պատճառեց <...> Ես քեզ հավատացնում եմ, որ «Նոր-Դարի» խափանվելով՝ ազգը մտավոր և բարոյական կողմից համարյա մի անփոխարինելի կորուստ կունենա...»: Ակնարկելով Ավ. Արասխանյանի և Ստ. Լիսիցյանի վեճը (տե՛ս մինչև հուլիսի 6-ը) նկատում է. «Բանաստեղծների և բանաստեղծու-

թյան մասին պ. Լիսիցյանի ունեցած գաղափարին ես շատ եմ հավան»:

ՈՒՅ 4, 262-265:

Հուլիսի 19, Թիֆլիս. — Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ հուլիսի 11-ի նամակը:

ԳԱԹ ԹՖ, 740:

Հուլիսի 24, Թիֆլիս. — Ստանում է ԱՆ. Աբովյանի՝ հուլիսի 15-ի նամակը Կամենեց-Պոդոլսկից:

ԳԱԹ ԹՖ, 741:

Հուլիսի 29, Թիֆլիս. — Նամակ Կամենեց-Պոդոլսկի՝ Անուշավան Աբովյանին:

Բանաստեղծական համեմատությամբ ցույց է տալիս, թե ինչ է սրտակից ընկերը հուզված ու նեղված հոգու համար. «...Իմ նամակները իմ գրելու ընթացքի տրամադրության նկարագիրներն են. ես չեմ կարող կեղծ նամակ գրել, պահել, ծածկել հուզմունքներս, երբ որ մի *սիրտ կա, որ ընդունակ է նրան մեղմացնելու*: Դու՛ն մի՛ նայիր, թե ինչ տեսակ և ինչու համար էին այդ հուզմունքները: Ինչի նման կլիներ, եթե ալեկոծված օվկիանոսի ալիքները հախուռն հորձանքով գնան միալար և ներկայացնեն մշտական անվերջ ալեկոծում: Դրա համար նրանց սպասում է ափին բարեկամը՝ ժայռը, որ այդ մոլեգնության կամ տանջանքի ժամին ցրում է նրանց ցավերը, մեղմացնում կրքերը և խաղաղություն տալիս...»:

Նեղացած է ընկերոջից, որ վիրավորական աստիճանի կոշտ արտահայտություններով էր հանդիմանել իրեն և տիկնոջը, որ դեռ չէին հասցրել այցելել նրա ընտանիքին՝ կնոջն ու մորը (տե՛ս հուլիսի 15):

ԵԼԺ 9, 21-23:

Հուլիսի 29, ժամը 10, Թիֆլիս. — Իր տանը հյուրընկալում է Ղ. Աղայանին և հայր Բեկնազարյանցին:

Կարդում են «Լռեցի Սաքոն» և «Արև ու Լուսինը»: Բալլադը արժանանում է ընդհանուրի հավանության. առաջարկում են անմիջապես տանել «Աղբյուր - Տարազովիչի»՝ խմբագրություն: Պոեմի շուրջ ծավալվում է բուռն բանավեճ: Հատկապես

Աղայանը հոգեբանորեն արդարացված չի համարում Սաքոյի խելագարվելը. «Դեռ կեսը չի ասած մի գոռգոռոց սարքեց, թե բոլորովին հոգեբանությանը հակառակ է Սաքոյին խելագարացնելը: <...> Ես (և Բեկնազարյանցը միայն այս հարցում) թունդ ընդդիմախոսեցինք, բայց, իհարկե, չկարողացանք համոզել, իսկ երբ ասացի, թե այս պոեման մի քանի ուսանողներ և գրողներ մի շատ հաջողված հոգեբանական ճշմարտություն են համարել և հավանել <...>, նրանք հոգեբանության այբբենն էլ չգիտեն...»:

* Նկատի ունի «Աղբյուր» և «Տարազ» պարբերականների խմբագիր Տիգրան Նազարյանցին:

ԵԼԺ 9, 23-24, 284

Հուլիսի 29, Թիֆլիս. — Մտադրություն՝ Ղ. Աղայանի խորհրդով «Արև ու Լուսին» բալլադը «Աղբյուրում» տպագրելու:

ԵԼԺ 9, 24:

Հուլիս, Թիֆլիս. — Գրում է «Այստեղ ահա ինչ են ասում» բանաստեղծությունը:

Չափածո նամակ է ԱՆ. Աբովյանին՝ կոնսիստորիայում տիրող բարքերի և իր վիճակի մասին: Հավանական է, որ «Պոետն ու Մուսան» պոեմի նախնական գրառումներից է:

Օգոստոսի 27-ին ԱՆ. Աբովյանին ուղղված նամակում բանաստեղծը տեղեկացնում է. «Քեզ վրա անցյալ ամսին մի ոտանավոր-նամակ էի գրել (ջգրու), բայց կորցրել էի. այս օրերս գտա, պատռվել է, կարտագրեմ կուղարկեմ» (ԵԼԺ 9, 26): Նույնը նաև սեպտեմբերի 28-ի նամակում. «Քեզ վրա մի ոտանավոր նամակ ունեմ, կորոնեմ, կուղարկեմ» (ԵԼԺ 9, 40):

Հայտնի չէ՝ ուղարկել է, թե ոչ:

ԵԼԺ 1, 331, 645-646:

Հուլիս, Թիֆլիս. — Գրում է «Նա մի տգետ, աղքատ մարդ էր...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 337, 646:

<Մինչև օգոստոսի 6-ը>, *Թիֆլիս*. — Նամակ Մոսկվա՝ Է. Ավետիսյանին (չի պահպանվել):

Է. Ավետիսյանի՝ օգոստոսի 6-ի պատասխան նամակից,

որ թումանյանը հրատարակչության առջև որոշ պայմաններ է դրել՝ իր գրքի տպագրության համար:

Ընդառաջելով է. Ավետիսյանի հետաքրքրասիրությանը՝ տեղեկություններ է հաղորդել դաշնակցական գաղտնի ընկերության «Երիտասարդ Հայաստանի» մասին, ակնարկել է նաև, որ ինքը այդ ընկերության անդամ է:

ԵԼԺ 9, 491:

Օգոստոսի 6. – է. Ավետիսյանի նամակը թումանյանին Մոսկվայից:

Հայտնում է, որ ստացել է թումանյանի նամակը (տե՛ս <մինչև օգոստոսի 6-ը>):

Գրում է, որ գրքի տպագրության համար բանաստեղծի առաջադրած պայմանները կկատարվեն. «Ինչ որ գրել եք, բոլորը կկատարվի»:

Շնորհակալություն է հայտնում նորաստեղծ «Երիտասարդ Հայաստան» ընկերության և դրան թումանյանի անդամակցության մասին ստացած տեղեկությունների համար. «Արդյոք նոր ընկերության մեջ թասիբ կա՞, թե ոչ. խնդրեմ գրես»:

ՈՒՀ 4, 265-266

Օգոստոսի 9. —Տ. Վերանյանի նամակը թումանյանին՝ Ջալալօղլուց:

Գրում է կենցաղային հարցերի մասին: Խնդրում է տեղեկանալ, թե ինչ ընթացքի մեջ է քահանա ձեռնադրվելու մասին իր դիմումը:

ԳԱԹ ԹՖ, 2122:

Օգոստոսի 12. – Ան. Աբովյանի նամակը թումանյանին՝ ճանապարհորդելիս:

Բանաստեղծից ստացած վերջին նամակի (տե՛ս հուլիսի 29) պատասխանն է: Կենցաղային խորհուրդներ է տալիս ընկերոջը: Ցավում է, որ նա վիրավորվել է կատակով արված իր դիտողություններից: Դրանց վերաբերյալ տալիս է բացատրություններ:

ԳԱԹ ԹՖ, 742:

Օգոստոսի 19. —Պողոս քահանա <Իսահակյանի> նամակը թումանյանին:

Հիշեցնում է «Արարատի» խոստացած համարը ուղարկելու մասին: Խնդրում է իր գրաբերին՝ եղբոր թոռանը, տալ ծննդյան վկայականը:

ԳԱԹ ԹՖ, 1229:

Օգոստոսի 20, Թիֆլիս. – Ստանում է Ան. Աբովյանի նամակը (տե՛ս օգոստոսի 12):

ԵԼԺ 9, 24, 484:

Օգոստոսի 25. – է. Ավետիսյանի նամակը թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ «ամսույս 27-28-ին «գրաքննական առյուծախնային» կատանան թումանյանի բանաստեղծությունների տետրը և կսկսեն տպագրությունը: Տեղեկություններ է հաղորդում տպագրության ծախսերի և որակի մասին: Վերջում. «Սիրելի Հովհաննես, խնդրեմ վերջին անցքերի մասին տեղեկություններ հաղորդես, որ շատ հետաքրքիր է ինձ, մանավանդ մեր տղերանց մասին...» (տե՛ս օգոստոսի 6):

ՈՒՀ 4, 266-257:

<Մինչև օգոստոսի 27>, Թիֆլիս. —Թումանյանին զինվոր են կանչում առաջիկա ամիսների համար:

ԵԼԺ 9, 27:

Մինչև օգոստոսի 27, Թիֆլիս. – Ան. Աբովյանին է ուղարկում «Ո՛հ, մեղմացնել չես կարող դուն...» բանաստեղծությունը (տե՛ս հուլիսի 5):

ԵԼԺ 9, 27, 485:

Օգոստոսի 27, Թիֆլիս. – Նամակ Ան. Աբովյանին:

Բողոքում է վերջինիս նամակների դժվարընթեռնելի ձեռագրից:

Հայտնում է, որ Սմբատ Շահագիզը «Ծիծաղի տոպրակ» խորագրով անեկդոտների ժողովածու է հրատարակում: Բայց «անունն ավելի գեղեցիկ է, քան իր վարմունքը»: Նկատի ունի, որ անեկդոտների մի մասը արտագրված է «Նոր-Դարից»:

Դրանք ժամանակին անստորագիր հրատարակել էր ինքը՝ «Մեր երկրի կյանքից» խորագրով (տե՛ս 1887, հուլիսի 24):

ԵԼԺ 9, 26, 484-485:

Օգոստոս .– Տպագրվում է «Արև և Լուսին» բալլադը («Աղբյուր», 1890, թիվ 8-9, էջ 20):

ԵԼԺ 2, 97, 551-552:

<Մինչև աշուն> .– Մ. Բարխուդարյանի հեռագիրը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ գրաքննիչի թույլտվությունն ստանալուն պես կսկսի «Բանաստեղծությունների» տպագրությունը. «По получению разрешения немедленно приступлю»:

ԳԱԹ ԹՖ, 1039:

Սեպտեմբերի 8 .– Ան. Աբովյանի նամակ-բացիկը Թումանյանին՝ Պրոսկուրովից:

Հայտնում է, որ զորքի հետևից գնալով՝ եղել է շատ տեղերում, ականատես է եղել զորախաղերի, զորահանդեսների, տեսել է կայսերը, կայսրուհուն և նրանց որդիներին:

Խոստանում է ամեն ինչի մասին մանրամասն գրել:

ԳԱԹ ԹՖ, 743:

Սեպտեմբերի 13 .– Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Յարմուխինցիից:

Բարբառով գրված կատակ-նամակ: Անհամբեր սպասում է իր «վրա» գրված ոտանավորին (տե՛ս հուլիս):

ԳԱԹ ԹՖ, 745:

Սեպտեմբերի 13 .– Մկրտիչ Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ «Բանաստեղծությունների» ձեռագիրը գրաքննիչը վերադարձրել է և արգելված ոչ մի տող չկա: Տեղեկացնում է, որ գրքի տպագրությունը սկսված է և խնդրում է «ուղարկել 60-75 ռուբլի սկզբնական ծախսերի համար»:

ՈՒՀ 4, 267:

Սեպտեմբերի 15, Թիֆլիս .—Ստանում է Ան. Աբովյանի՝

սեպտեմբերի 8-ի նամակը՝ Պրոսկուրովից:

ԳԱԹ ԹՖ, 743:

Սեպտեմբերի 15 .– Բ. Թումանյանի նամակ-բացիկը Թումանյանին՝ Մոսկվայից:

ԳԱԹ ԹՖ, 1224:

<Մինչև սեպտեմբերի 18-ը>, Թիֆլիս .– Ստանում է Մ. Բարխուդարյանի նամակը Մոսկվայից (տե՛ս սեպտեմբերի 13):

ԵԼԺ 9, 27, 485:

Սեպտեմբերի 18, երեկոյան .– Ստեփանյանից ստանում է չորս ռուբլի բաժանորդագին:

ԵԼԺ 9, 28:

Սեպտեմբերի 18-19, Թիֆլիս .– Նամակ Մոսկվա՝ Մ. Բարխուդարյանին:

Տեղեկացնում է, որ ուղարկում է 50 ռուբլի՝ գրքի տպագրության համար: Խնդրում է կենտրոնական գրավաճառանոցի հասցեով ուղարկել 600 օրինակ իր գրքերից:

ԵԼԺ 9, 27 - 28:

Սեպտեմբերի 19 .– Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Գրում է իր մեծակությունից, հայրենիքի ու հարազատների կարոտից: Շատ է զգում բանաստեղծ ընկերոջ կարիքը. «Այժմ ավելի ու ավելի ինձ համար անհետաձգելի պահանջ են դարձած քո նամակները իրենց հետաքրքիր բովանդակությամբ, որը հատուկ է քեզ: <...> Քո ներկայությունը ինձ համար անհրաժեշտ է մտավոր աշխատանքիս ժամանակ: <...> Ինչպես լուսինը առանց արեգակի օգնության լուսավորել չի կարող, նույնպես և ես էլ առանց քեզ հետ շփվելու ոչինչ մտավոր արտադրել չեմ կարող»:

ՈՒՀ 4, 268 – 269:

Սեպտեմբերի 19, Թիֆլիս .– Նամակ Շուլավեր՝ Օ. Թումանյանին:

Համառոտ տեղեկություններ է հաղորդում թիֆլիսյան իր առօրյայի մասին:

Տեղեկացնում է, որ 50 ռուբլի ուղարկել է Սկրտիչ Բարխուդարյանին՝ գրքի տպագրության համար: Ստեփանյանից ստացել է 4 ռուբլի (տե՛ս սեպտեմբերի 18, երեկոյան): Ավելացնում է. «Ալեքսանդրապոլից նամակ ստացա, շուտով այնտեղից էլ փող կգա:՝ Սմբատից փողերն ստացիր և թերթն ինձ ուղարկիր**»:

* Խոսքը վերաբերում է Գևորգ Միքայելյանից ստանալիք՝ «Բաստեղծությունների» առաջին գրքի բաժանաորդագին:

** Նկատի ունի շուկավերցի ուսուցիչ Սմբատ Շահագիզյանին (տե՛ս օգոստոսի 27):

ԵԼԺ 9, 28 – 29 486:

Սեպտեմբերի 20, Թիֆլիս .- Նամակ Շուկավեր՝ Օ. Թումանյանին:

Գրում է իրենց անձնական հարաբերությունների, մասնավորապես կնոջ՝ իր կյանքում կատարելիք դերի մասին. «Քո մեծ նշանակությունն ինձ համար մշտական է - հավիտենական. և դուն, ահա մի լուրջ խոստովանություն, իբրև իմ սիրո մարմնացումն, իբրև իմ բոլոր հոգեկան ունակությունների գաղափարատիպը, կարող ես ամեն կերպ ազդել ինձ վերա, այսինքն, այնպես անել, որ և մահացու լինի այդ ազդեցությունը և կենսատու»:

ԵԼԺ 9, 29 – 30:

Սեպտեմբերի 21, Թիֆլիս .- Ստանում է Բ. Թումանյանի նամակը՝ Մոսկվայից:

Նամակագիրը ներողություն է խնդրում նամակի ուշացման համար: Հայտնում է, որ չի կարողացել գտնել Սկրտիչ Բարխուդարյանի տպարանը: Ավելի հարմար է համարում, որ տպարանատերը գա իր մոտ: Ուղարկում է հասցեն:

ԳԱԹ ԹՖ, 1224:

Սեպտեմբերի 23, Թիֆլիս .-Ներկա է լինում խորեն եպիսկոպոս Նար-Պեյի քարոզին և պատարագին՝ վանքի ավագ եկեղեցում:

Թումանյանը լավ տպավորություն չի ստացել. «Հռչակավոր խորեն Նարպեյն այստեղ է. անիծվի դա իրան հռչակովը. քարոզ խոսաց, պատարագ արավ, զահլեներուս տարավ»:

ԵԼԺ 9, 40, 489:

<Մինչև սեպտեմբերի 24-ը>, Թիֆլիս .- Ստանում է Մ. Բարխուդարյանի՝ սեպտեմբերի 21-ի հեռագիրը:

Հայտնում է, որ գրքի տպագրության համար գրաքննության թույլտվությունը ստանալուն պես կգրադվի գրքի առաքման գործով:

ԵԼԺ 9, 31, 487:

Սեպտեմբերի 24, Թիֆլիս .- Նամակ Մ. Բարխուդարյանին: Հայտնում է, որ ստացել է վերջինիս հեռագիրը: Տեղեկացնում, որ բացի ուղարկած 50 ռուբլուց, ուղարկում է ևս 20 ռուբլի: ԵԼԺ 9, 31, 487:

Սեպտեմբերի 25 .- Սկրտիչ Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ ստացել է 50 ռուբլին՝ «Բանաստեղծությունների» տպագրության համար: Գրքի տպագրությունն ավարտված է: Լույսընծայման թույլտվությունն ստանալուն պես կսկսի առաքումը. «Երբ գրում էի նամակս, ձեռքիս տակ չկար ոչ մի պատրաստ օրինակ, որ ձեզ ուղարկեմ, այնուամենայնիվ մի կամ երկու օրից անշուշտ կստանաք»:

Վերջում. «Որքան հնարավոր է հսկել եմք տպագրության, որ մաքուր լինի և անսխալ: Թե որքան է դա հաջողվել, թողնում եմ Ձեզ դատելու»:

ՈՒՀ 4, 271:

Սեպտեմբերի 25, Թիֆլիս .- Գրառում թիվ 1(11) ծոցատետրում:

Տարբեր մարդկանցից ստացած և տարբեր մարդկանց վճարած գումարների ցուցակ է:

ՈՒՀ 5, 159:

Սեպտեմբերի 25 .-Օ. Թումանյանի նամակը ամուսնուն՝ Շուկավերից:

ԹՏԹ ՄՄ, 1269:

Սեպտեմբերի 25, Թիֆլիս .- Նամակ Շուկավեր՝ Օ. Թումանյանին:

Տեղեկացնում է, որ ստացել է կնոջ «երկրորդ նամակը» և

«կարոտով կարդացել». «Սիրտս լցվեցավ մի անսահման հրճվանքով և հպարտությամբ, երբ որ կարդացի այն տողերը, որ գրում ես, թե արտասվել ես իմ չգալուս համար... զարմանո՞ւմ ես, հոգիս, որ քո արտասուքով ուրախացա. զարմանալու ոչինչ չկա, շատ բնական է»:

Նամակի վերջում բերում է 1887 թ. գրված սիրային ոտանավորից մի հատված՝ իրենց «սիրո անցյալ արկածների» մասին (տե՛ս 1887, «Ղեկտեմբերի վերջեր»):

ԵԼԺ 9, 31-34:

Սեպտեմբերի 27, Թիֆլիս. — Օ. Թումանյանին է ուղարկում սեպտեմբերի 25-ին նրան հասցեագրած նամակը:

ԵԼԺ 9, 34, 488:

Սեպտեմբերի 27, Թիֆլիս. — Նամակ Շուլավեր՝ Օ. Թումանյանին:

Նամակին իբրև բնաբան՝ մի ոտանավոր քառատող.

...Արի՛, հոգիս, որ առանց քեզ
Կյանքը դառն է և անծուկ,
Արի՛, արի՛, որ նորոգես
Եվ մեր սերը վաղանցուկ...

«Հավիշտակված» է կնոջ սիրով, «տանջվում է» կարոտից. «Մի շատ ծիծաղելի թերահավատությամբ և անմիտ կասկածանքով ես տանջվում եմ, կարծելով, թե քեզ... կամ թե շատ ուշ եմ տեսնելու: Ի՞նչքան տխուր են անցնում առանց քեզ իմ ժամերը, նրանցից յուրաքանչյուրը մի ժանր բեռան նման է անցնում սրտիս վրայից և ես համրում եմ: Ոչ ոք չկա, որին նայելով կարողանայի քո պատկերը մոռանալ, ոչ ոք յուր խոսքով չի կարողանում սիրտս սփոփել, ոչ ոքի ժպիտ ու ծիծաղ ինձ չէ ուրախացնում, այլ, ընդհակառակը, զայրացնում է. ես կարծում եմ, թե դու դեռևս աղբյուրի մոտ նստած, Մուշեղը գիրկդ արտասվում ես... Ես չեմ ուզում ոչ ոք ծիծաղի: Ես զգում եմ և խոստովանում — չկա մեկ էակ, մեկ անձնավորություն, որ քեզ փոխարիներ ինձ համար»:

Հորդորում է կնոջը, որ հավատով նայի ապագային. «Հավատացիր, որ մեզ, մեր գալոց օրերին ոչինչ, ոչինչ վտանգ չէ

սպառնում. մեր ապագան ապահովված է և այս սրտի ցավով կտեսնեն մեր թշնամիները:

Ցավով տեղեկացնում է, որ կան շատ կեղծ բարեկամներ, որ նրան անընդհատ դողում են գծովել աներոջ հետ:

Իր զինվորագրության մասին (տե՛ս «մինչև օգոստոսի 27») որոշակի բան չկա, միայն հույս ունի, որ՝ «եթե գիրքս էլ ընդունելություն գտավ, ինձ էլ ինչևիցե մի նշանակություն կտա, ինձ համար ամեն ասպարեզում պրոտեկցիա կլինի»:

ԵԼԺ 9, 34 – 36:

Սեպտեմբերի 28, <29>, Թիֆլիս. — Ստանում է Ան.Աբովյանի նամակը (տե՛ս սեպտեմբերի 19):

ԵԼԺ 9, 37, 489:

Սեպտեմբերի 29, Թիֆլիս. — Թումանյանի հաղորդումը սրբազան Խորեն Նար-Պեյի՝ սեպտեմբերի 30-ին վանքի ավագ եկեղեցում կայանալիք քարոզի մասին:

«Սրբազան Խորեն Նար-Պեյը, որ այս շաբաթ ուղևորվելու էր Կ. Պոլիս, չուղևորվեց: Ինչպես լսում ենք, անցյալ կիրակվա քարոզը բավական չհամարելով, սրբազանը վանքի ավագ եկեղեցում մտադիր է մի ուրիշ քարոզ խոսել՝ վաղը, կիրակի օրը, սեպտեմբերի 30-ին: Գուցե և պատարագ անի»:

«Նոր - Դար», 1890, թիվ 147:

Սեպտեմբերի 28, <29>, Թիֆլիս. — Նամակ Անուշավան Աբովյանին:

Նամակի սկզբում գրում է ինչ-որ հանցանքի մասին, որ պիտի գործեր, բայց չի գործել. «...Այս մի ժամվան ընթացքում այնպիսի մի հանցանք գործեցի, որ ծանրանալու է իմ խղճիս վրա իմ ամբողջ կյանքում: Փառք աստծո, որ հանցագործությունն ընդհատվեցավ մի ոտնաձայնով, և ես ուշքի եկա. ասենք խելք չունեմ, որ ասեմ խելքի եկա: Ես բոլորովին հրաժարվում եմ եղելությունը պատմելուց, դա այն մի քանի գաղտնիքներից մեկը կմնա, որոնցից յուրաքանչյուր մի մարդ ունենալով, չէ հաղորդում աշխարհում և ոչ մեկին, որովհետև շրթունքները չեն գործում և յուր մարդկային զգացմունքները փակում են բերանը: <...> Գուցե ես մեղավոր չեմ... սաստիկ հուզված եմ: <...> Գուցե

գրել են և նախկին նամակներումս, որ անձնատուր են եղած իմ անզուսպ մոլություններին և ժամեժամ տեսնելով մահաբեր հետևանքներն ու նշանները՝ չեն զգաստանում»:

Տեղեկացնում է, որ իր բանաստեղծությունների ժողովածուն «սեպտեմբերի վերջին պատրաստ կլինի»: Հայտնում է մտադրությունը՝ «այս ձմեռ մի ուրիշը տպագրել տալու», որ «անհամեմատ բարձր կլինի»:

Ուղարկում է Օլգա Թումանյանին նվիրված «...ես ուզում եմ սեր երգել» բանաստեղծությունը (տե՛ս 1887, <դեկտեմբերի վերջեր>):

ԵԼԺ 9, 37 - 40:

Սեպտեմբերի 28, <29>, Թիֆլիս. – Խոստանում է Ան. Աբովյանին ուղարկել ոտանավոր – նամակ, որ գրել է արդեն:

Նկատի ունի «Այստեղ ահա ինչ են ասում...» սկզբնատողով ոտանավոր – նամակը, որ այնպես էլ չի ուղարկել:

ԵԼԺ 9, 40, 485, 489:

Սեպտեմբերի 29, Թիֆլիս. – Առավոտյան ստանում է ծանուցում՝ հոկտեմբերի 15-ին զինվորական ատյան ներկայացալու:

ԵԼԺ 9, 40:

Սեպտեմբերի 29, Թիֆլիս. – Գրում է կնոջն ուղղված «հրաժեշտի ոտանավոր» զինվորագրության ծանուցում ստանալու տպավորության տակ:

Հավանաբար խոսքը «Նրան» բանաստեղծության մասին է (ԵԼԺ 1, 67, 559):

ԵԼԺ 9, 40:

Սեպտեմբերի 30, Թիֆլիս. – Գրում է «Դեռ անհիշելի վաղ մանկությունից...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 66, 559

Հոկտեմբերի 1. – Դ. Շահլամյանցի նամակը Թումանյանին՝ Դսեղից:

Գրում է Դսեղ կատարած իր այցելության, ստացած տպավորությունների մասին: Հիացած է տեղի բնությամբ: Հետա-

քրքրվում է, թե ինչ վիճակում է գրքի տպագրությունը: Խնդրում է ուղարկել Մ. Նալբանդյանի «Մանկության օրեր» բանաստեղծությունը: Անդրադառնում է այլ կենցաղային խնդիրների:

ԳԱԹ ԹՖ, 1827:

Հոկտեմբերի 1. – Ա. Դլտճյանի նամակը Թումանյանին:

Հայտնում է, որ ստացել է բանաստեղծի վերջին բաց նամակը: Կարդացել է գրքի տպագրության հայտարարությունը: Տեղեկացնում է, որ ուղարկում է բաժանորդաթերթերը և որոշ գումար: Խնդրում է ուղարկել գրքեր՝ բաժանորդներին տալու համար:

ԳԱԹ ԹՖ, 1554:

Հոկտեմբերի 2. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Ախալցխայից:

Հայտնում է, որ «Նոր-Դարում» կարդացել է «Բանաստեղծությունների» տպագրության մասին հայտարարությունը («Նոր - Դար», 1890, թիվ 184): Խնդրում է ուղարկել 30 օրինակ՝ վաճառելու համար:

Ուզում է Շալամովի (Շահլամյանց) հասցեն:

Հետաքրքրվում է բանաստեղծի և Աղայանի վեճով՝ «Լոռեցի Սաքոյի» շուրջ (տե՛ս հուլիսի 29, ժամը 10):

ՈՒՀ 4, 272-273:

Հոկտեմբերի 3. – Է. Ավետիսյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ ստացել է բանաստեղծի վերջին նամակը և ուղարկած 70 ռուբլին:

Ջանք չի խնայել, որ գրքի տպագրությունը լինի մաքուր և անսխալ:

«Պ. Բարխուդարյանի ազնվության» մասին Թումանյանի լսած «վատ կարծիքի» առիթով գրում է. «Երանի հայոց բազմաչարչար ժողովրդի գեթ քառորդ մասը պ. Բարխուդարյանի բարի զգացմանց ու ազնվության տերն լինեին...»

Այս էլ պետք է ասած, որ Բարխուդարյանի ազնիվ կամ

անազնիվ լինելը քո գործի հետ բուլորովին կապ չունի... դուն քո գրքի տերը կլինես, նա իր փողի...»:

ՈՒՅ 4, 273-274:

Յոկտեմբերի 3. – Բ. Թումանյանի նամակը Յովհ. Թումանյանին՝ Մոսկվայից:

Շնորհավորում է «Բանաստեղծությունների» առաջին գրքի տպագրությունը: Տեղեկացնում է, որ հայ ուսանողության շրջանում ջերմ ընդունելություն է գտել: Հիացած է հատկապես «այստեղի իրավաբանական մասն ավարտած մեկ երիտասարդ՝ Աստվածատուրյանց ազգանունով»: «Սաքոն» էլ «գուցե ուսանողներից մեկը քննե»:

ՈՒՅ 4, 274-275:

Յոկտեմբերի 4, Թիֆլիս. – Մոսկվայից՝ Մ. Բարխուդարյանից ստանում է «Բանաստեղծությունների» առաջին գրքի երկու ազդորհնակ:

ԵԼԺ 9, 44, 493:

Յոկտեմբերի 5, Թիֆլիս. — Վերջնական մշակման է ենթարկում «Նրան» բանաստեղծությունը (տե՛ս սեպտեմբերի 29):

ԵԼԺ 1, 87, 559:

Յոկտեմբերի 6 Թիֆլիս. – Ա. Ղլտճյանից ստանում է 5 ռուբլի՝ գրքի բաժանորդաթերթի հետ:

ԵԼԺ 9, 43:

Յոկտեմբերի 6, Թիֆլիս. – 40 ռուբլի է ուղարկում Մոսկվա՝ «Բանաստեղծությունների» առաջին գրքի տպագրության ծախսերի համար:

ԵԼԺ 9, 42:

Յոկտեմբերի 7, Թիֆլիս. – Ստանում է Ա. Առաքելյանի՝ հոկտեմբերի 3 – 4 –ի նամակը (ԳԱԹ, ԹՖ թիվ 516):

ԵԼԺ 9, 43, 492:

Յոկտեմբերի 7, Թիֆլիս. – Ստանում է Բ. Թումանյանի նամակը՝ Մոսկվայից (տե՛ս հոկտեմբերի 3):

ԵԼԺ, 43, 492:

Յոկտեմբերի 7, Թիֆլիս. – Ստանում է Դ. Շահլամյանի՝ հոկտեմբերի 1-ի նամակը (ԳԱԹ, ԹՖ, թիվ 1827):

ԵԼԺ 9, 43, 492:

Յոկտեմբերի 7, Թիֆլիս. – Ստանում է Ա. Ղլտճյանի՝ հոկտեմբերի 1-ի նամակը (ԳԱԹ, ԹՖ թիվ 381):

ԵԼԺ 9, 43, 492:

Յոկտեմբերի 7, Թիֆլիս. – Նամակ Շուլավեր՝ Օ. Թումանյանին:

Հիմնականում իր զինվորագրության հարցի մասին է: Կինը մտահոգված է, առաջարկում է ամեն միջոցի դիմել՝ ազատվելու համար. «...ինչով որ լինի, միայն թե ազատվես, ուսուցչությամբ լինի, թեկուզ մշակությամբ լինի...»: Այդպիսի առաջարկը տխրեցրել է բանաստեղծին: Իր հոգեկան և ֆիզիկական դրության մասին գրում է. «Ես նկատում եմ՝ ֆիզիկապես բավականին ընկել եմ, մանավանդ այս վերջին օրերս. իսկ բարոյապես դեռ ընդդիմադրում եմ շրջապատող հանգամանքներին, և քեզանից է կախված հաղթանակը...»

– Վերջապես, չեմ ուզում ասել, բայց համբերությունս հատավ, շուտով արի. եթե ուշանաս, ես գրքերի բանը մի խումբ տղերանց կհանձնեմ և գյուղը կերթամ: Շատ ուրախ եմ, որ ձեզ այդքան հյուրասիրում են ձեր բարեկամները, բայց թող այդ խնջույքները չլինեն ձեր ուշանալու պատճառը, եթե իրավունք կտաք այսքանն ասել...»:

ԵԼԺ 9, 41-43:

Յոկտեմբերի 7, Թիֆլիս. – Ստանում է Օ. Թումանյանի՝ հոկտեմբերի 5 – 6 –ի նամակը (անհայտ է):

ԵԼԺ 9, 43, 492:

Յոկտեմբերի 9. — Յ. ճուղուրյանի նամակը Թումանյանին՝ Ղարաքիլիսայից:

Հայտնում է, որ մեկնել է Համամլու գյուղը՝ ուսումնաբանում ուսուցիչ աշխատելու: Պատմում է այնտեղ տիրող անօրինությունների, իր շուրջն ստեղծված վատ մթնոլորտի մասին: Բողոքում է, որ ամեն կերպ աշխատում են իրեն հեռացնել: Դիմել է թեմական տեսչին և եկել է Ղարաքիլիսա՝ պատաս-

խանն իմանալու, որ ուշանում է: Խնդրում է Թումանյանի միջ-
նորդությունը՝ Հայրիկ Բեկնազարյանցի խորհուրդն իմանալու:

Հետաքրքրվում է Թումանյանի գրքի տպագրության ըն-
թացքով: Խնդրում է գրքերը տանել իրենց տուն՝ բաժանորդնե-
րին հանձնելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1583:

Հոկտեմբերի <13>, Թիֆլիս. —Նամակ Սոսկվա՝ Բ. Թու-
մանյանին (չի պահպանվել):

Պատասխանն է Բ. Թումանյանի՝ հոկտեմբերի 3-ի նամակի,
որով նա տեղեկացնում էր, թե Թումանյանի գիրքը ջերմ ար-
ձագանք է գտել մոսկվահայության շրջանում (տե՛ս հոկտեմ-
բերի 3):

ԵԼԺ 9, 45, 494:

Հոկտեմբերի 14, Թիֆլիս. — Ստանում է Աճ. Աբովյանի նա-
մակը՝ Կամենեց-Պոդոլսկից (չի պահպանվել):

Բանաստեղծի՝ սեպտեմբերի 28-29-ի նամակի պատաս-
խանն է:

ԵԼԺ 9, 44, 493:

Հոկտեմբերի 14, Թիֆլիս. — Նամակ Կամենեց-Պոդոլսկի՝ Աճ.
Աբովյանին:

Բ. Թումանյանի նամակից (տե՛ս հոկտեմբերի 3) քաղվածք-
ներ բերելով՝ տեղեկացնում է. «... Երեկ Սոսկվայից նամակ եմ
ստանում, նամակագիրն ինձ շնորհավորելով՝ իբրև «առաջին
բանաստեղծի», հայտնում է, որ ես իմ «վեհ մտքերով ապշեցրել
եմ Սոսկվայի ուսանողությանը», թե՛ նրանք ասում են, «որ
տեսնենք, կերկրպագենք», թե՛ իմ բանաստեղծություններն այն-
տեղ շատ կտարածվեն, մի քանի հարյուր օրինակ ուզում են,
նույնիսկ ուսանողները տարածել և այլն, և այլն, այսպիսի ինձա-
նից շատ բարձր գովեստներ: Իրավն ասած, ես շշկված եմ»:
Հայտնում է նաև, որ պատրաստում է երկրորդ հատորը:

Պատասխանելով ընկերոջ ինչ-որ դիտողության՝ հավաս-
տիացնում է. «Ի դեպ, ասեմ, որ ընկերության ես այն անդամներից
եմ, որոնց մասին չի կարելի կասկածել անհեռատեսության
նկատմամբ, այս փորձից հետո եմ ասում»:

Գրում է. «Հոգևորականները գրքիցս հետո հիասթափված
են իմ վերաբերությամբ»:

ԵԼԺ 9, 44-47, 493-494:

Հոկտեմբերի 15. — Աճ. Աբովյանի նամակը Թումանյանին՝
Կամենեց-Պոդոլսկից:

Հայտնում է, որ ուղարկում է լուսանկարը: Անհանգստա-
ցած է բանաստեղծի զինվորագրության հարցով. խնդրում է ան-
հապաղ տեղեկություն տալ: Անդրադառնում է եկեղեցական
որոշ հարցերի. տեղեկացնում է եկեղեցական պատմությունն
ուսումնասիրելու իր մտադրության մասին: Ցանկանում է
իմանալ ընկերոջ խորհուրդը, թե ինչ ձեռնարկից կարելի է
օգտվել:

ԳԱԹ ԹՖ, 746:

Հոկտեմբերի 18. — Բ. Թումանյանն ստանում է բանաստեղ-
ծի նամակը (չի պահպանվել):

Բովանդակությանը ծանոթանում ենք Բ. Թումանյանի
պատասխան նամակից (տե՛ս հոկտեմբերի 23):

ՈՒՀ 4, 277-279:

Հոկտեմբերի 18, Թիֆլիս. — Գրում է «Ազդ» («Հեռացրեք
նրան աստծո սեղանից...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 68, 560:

Հոկտեմբերի 22. — Է. Ավետիսյանի նամակը Թումանյանին՝
Սոսկվայից:

Պատասխանն է բանաստեղծի շնորհակալական նամակի
(տե՛ս հոկտեմբերի <13>):

Հավաստում է, որ միշտ պատրաստ է ծառայելու նրա նման
հայրենասեր երիտասարդներին. «Ես արել եմ այն, ինչ որ իմ
պարտականությունն էր ու ինչ որ ամեն մի ընկեր, ամեն մի ծա-
նոթ կաներ իր ծանոթ ընկերի համար, մանավանդ Ձեզ պես մի
ընկերի համար, որը հոգով ու սրտով նվիրված է հայրենիքի
շահերին... Հայրենիքի, որ այսօր երկունքի մեջ է և դառն ար-
տասուք է թափում... իր զավակների թշվառության համար: Դուք,
որը մեր թշվառ հայրենիքի արտասուքի սրբիչ է հանդիսացել,
Դուք, որ պատրաստ եք ձեր անձը զոհել հայրենիքի համար,

հապա ինչպե՞ս չհարգել ձեզ և չնայել Ձեր գործին, որ նա մաքուր լինի: Ուզում եմ ասել, որ ինչ ուզեն Ձեզ պես երիտասարդները, պատրաստ եմ կատարելու»:

Տեղեկացնում է. «Ձեր «Բանաստեղծությունները», այո՛, այստեղ հավանում են, բայց չհավանողներ էլ կան: Քնքուշ մալխայան վարդը նույնիսկ փշեր ունի...»:

Հայտնում է նաև իր կարծիքը. «Իմ կարծիքով, Ձեզ հաջողվել է փոքր, կարճ բանաստեղծությունները, <...> երկար բանաստեղծություններ գրելը Ձեզ չի հաջողվում: Եթե մտադիր եք երկրորդ հատորն էլ կազմելու, խորհուրդ կտայի, որ երկար գրվածքներից խույս տայիք: Մեկ էլ խույս տվեք խորթ գյուղական անհասկանալի բառերից ու ծանոթություններից: Բանաստեղծության մեջ լինելով շատ ծանոթություններ, նա կորցնում է իր բանաստեղծական նշանակությունը, ինչքան էլ բանաստեղծական ձևով լինի գրված: Կարդացողը կարդացածը կիսատ թողնելով ու նայելով ծանոթություններին և ապա նորից շարունակելով ընդհատված տողը, այն համը չի ստանում, ինչ համ որ կարող էր ստանալ առանց կանգ առնելու կարդացած ժամանակը...»:

ՈՒՀ 4, 275 – 277:

Հոկտեմբերի 23. - Բ. Թումանյանի նամակը բանաստեղծին՝ Մոսկվայից:

Պատասխանում է հոկտեմբերի 18-ին Թումանյանից ստացած նամակին (անհայտ է): Հանգստացնում է բանաստեղծին, որի հարաբերությունները կոնսիստորականների հետ խիստ սրվել էին. «Այժմ դու ինձ գրում ես այդ անգութների բարբարոս վարմունքը դեպի քեզ, բայց իհարկե դու չպետք է նեղանաս կամ բարկանաս, այլ պետք է ցավես դոցա վերա, որովհետև դոքա չգիտեն, թե ինչ են անում...»:

Մանրամասն գրում է «Բանաստեղծությունների» տպագրությունն ավարտելու և տպագրված օրինակները հեղինակին առաքելն արագացնելու նպատակով իր մի քանի հանդիպումների մասին, և այն մասին, թե ինչ մեծ տպավորություն է թողել գիրքը ընթերցողների վրա»:

ՈՒՀ 4, 277-279, 330:

Հոկտեմբերի 23. – Մ. Ասլիբեկյանի նամակ-բացիկը Թումանյանին՝ Դիլիջանից:

Խնդրում է տեղեկացնել՝ գրքերն ստացել է, թե ոչ: Հայտնում է իր որպիսությունը:

ԳԱԹ ԹՖ, թիվ 932:

Հոկտեմբերի 24. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Պատասխանն է բանաստեղծի՝ հոկտեմբերի 14-ի նամակի:

Գոհունակություն է հայտնում, որ բանաստեղծը բարձր տրամադրության մեջ է, որ նրա «Բանաստեղծությունները» լավ ընդունելություն է գտնում: Այն մտահոգությանը, թե ժողովածուի բանաստեղծությունները «շատ անմշակ են և սկզբնական ձևի մեջ», պատասխանում է. «Բայց ես քեզ կասեմ, որ ասեմք անմշակ լինելն իհարկե ուրիշ է, բայց ինչ վերաբերում է սկզբնական ձևի մեջ լինելուն, ըստ իս, դա հենց մի առանձին քնքուշ տպավորություն պիտի որ թողնելիս լինի կարդացողի վրա»:

ՈՒՀ 4, 279-280:

Հոկտեմբերի 25. – Մ. Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Տեղեկացնում է, որ «Բանաստեղծությունների» տպաքանակի մի մասն արդեն ուղարկել է, մնացածն էլ «մոտ ժամանակներս» կաշխատի ուղարկել: Տպագրության ծախսերի համար 110 ռ. արդեն ստացել է, խնդրում է, որ «մնացյալ գումարը» շատ չուշացնի:

ՈՒՀ 4, 281:

Հոկտեմբերի 28, Թիֆլիս. – Գրում է «Որսորդներ» ոտանավորը (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 50, 496:

Հոկտեմբերի 29. — Տ. Վերանյանի նամակը Թումանյանին՝ Արմավիրից:

Գրում է իրեն վերաբերող կենցաղային հարցերի մասին: Խնդրում է զբաղվել կոնսիստորիայում գտնվող իր գործով:

ԳԱԹ ԹՖ, 2123:

Յոկտեմբերի <30>, Թիֆլիս.— Գրում է մետալոգին:

«Մենակ նկարչություն չեմ սովորել. մեկել օրն էլ մի մետալոգն եմ առել, հիմի վրեն ածըմ եմ «Յայրենիք սրբազան», «Մեր հայրենիք», «Արիացիր գոնիա» և այլն և այլն: <....> «Կեկել ջան» էլ եմ ածում»:

ԵԼԺ 9, 51, 496:

Յոկտեմբեր, Թիֆլիս. — Գրում է «Ոչ յօրինակ այլոց» («Ազատ, համարձակ բարձրացի՛ր, արատ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 69, 560:

Յոկտեմբեր, Թիֆլիս. — Գրում է «Դարծյալ նրանց» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 58, 557:

<Մինչև նոյեմբերի 1-ը>, Թիֆլիս. — Ստանում է Աճ. Աբովյանի երկու նամակները և լուսանկարը՝ Կամենեց-Պոդոլսկից (տե՛ս հոկտեմբերի 15 և 24):

ԵԼԺ 9, 48, 495:

<Մինչև նոյեմբերի 1-ը>, Թիֆլիս. — Սիրողական թատերախումբը հրավիրում է Թումանյանին՝ մասնակցելու նոր պատրաստվող ներկայացման փորձերին:

«Եկան յախիցս բռնեցին, շատ դես դեն թափ տվին բան չդառավ, փակագծում ասեմ, որ երգվել եմ էլ իբրև դերասան բեմ չի դուրս գամ, վա՛, զոռի բան խո չի: Վերջապես իրիկունս գնացինք փորձի. մի օյին հանեցի, որ էլ թողացին ոչ գլխարկս էլա վեր ունեմ, հենց դուրս արին: Եղնա գլխի եմ ընկել, որ դաստի եմ արել, եղունցս ձեռն եմ տալիս, թե որ ուրիշը չգտնենք, էլի դու պետք է գաս... նոր էլ ինչ, շան տղեք, դուրս արի՛ք, պրծանք».*

*Թումանյանն այնուամենայնիվ մասնակցել է այդ ներկայացմանը (տե՛ս 1891, փետրվարի 8):

ԵԼԺ 9, 50-51, 496:

Նոյեմբերի 1, Թիֆլիս. — Գրում է «Օ՛, ցած խոսքերով անդուն բերանի...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 338, 646:

Նոյեմբերի 1, Թիֆլիս. — Նամակ Կամենեց-Պոդոլսկի՝ Աճ. Աբովյանին:

Ի պատասխան ընկերոջ՝ եկեղեցու պատմությամբ զբաղվելու մտադրությանը (տե՛ս հոկտեմբերի 15)՝ խորհուրդ է տալիս օգտվել ոչ թե մեկ, այլ եղած բոլոր ձեռնարկներից, «որովհետև ոչ մեկը լիամասն տեղեկություն չի տալ Յայոց առաքելական և ընդհանրական եկեղեցու պարզ, անխմոր կազմության և նրա հաղթական անցյալի պատմության մասին»: Դատողություններ է անում հայոց եկեղեցու մասին, բարձր է գնահատում նրա դերը հայ ժողովրդի ինչպես պատմական, այնպես էլ ներկա կյանքում: Խորհուրդ է տալիս ընկերոջը չենթարկվել այդ դերը նսեմացնող «անդուռ բերաններին». «Յասկացրու այդ հիմարներին, որ Յայոց եկեղեցին այն է, որի ուղղությանը և ոգուն, իբրև մի փրկարար նավահանգստի, առանց նրան նկատելու, հառաջադիմելով դիմում է տառապանքներով լցված և զանազան ինկվիզիցիաներով առաջնորդվող, եկեղեցիներով կաշկանդված ու պատուհասված մարդկությունը: Յիշի՛ր նրանց միջին դարերը. պատմի՛ր, թե ինչքան ազատ է Յայաստանի եկեղեցին. ասա՛, որ նա դարերով մի ձեռքին խաչ մյուսին սուր, կռվել է բարբարոս, այո՛, նույնիսկ Յոզվմի և Յունաստանի նման աշխարհակալ քրիստոնյա պետությունների հետ, որոնք եկել խորտակվել են Յայոց «հավատո վեմի» վրա: Ավելացրու և այն ցավալի իրողությունը, որ մեր եկեղեցին այն չէ, ինչ որ տեսնում եք շնորհիվ ոչ միայն տգետ հոգևորականների, այլ նրանց իրանց օգտի համար բարձրացնողների...»:

Գրում է ընկերոջը, որ նամակներն ուղարկի ուրիշ հասցեով, քանի որ՝ «Կոնսիստորիայում իմ դրությունս առավել անտանելի է դարձած. բոլորի հետ մի տեսակ արհամարհական, թշնամական հարաբերության մեջ եմ»:

Տեղեկացնում է. «Մոսկվայում կրիտիկա է գրված գրքիս մասին, որ դեռ, ինչպես գրում եմ, կկարդացվի այնտեղի՝ գրականական ընկերության ժողովի առջև» (տե՛ս հոկտեմբերի 3):

Գրում է «երեք օր առաջ»՝ ժամը 10-ից 10 րոպե պակաս», Թիֆլիսում տեղի ունեցած երկրաշարժի մասին, «որ ընդամենը տևեց 3-4 վայրկյան, քիչ մնաց կործաներ քաղաքը». «Մեր տունն

այնպես շարժվեցավ, որ ես բոլորովին հավատացի մեր կյանքի վերջին: <...> Բոլորս միաժամանակ Աստված կանչելով սարսափի մեջ էինք...»:

ԵԼԺ 9, 48-51, 495-496:

Նոյեմբերի 1, Թիֆլիս. – Սկսում է գրել «Հառաչանք» պոեմի նախնական տարբերակը՝ «Ծեր այգեպանի պատմությունը» վերնագրով:

ԵԼԺ 9, 50, 496:

Նոյեմբերի 1, Թիֆլիս. – Ստանում է Մ. Բարխուդարյանի նամակը և գրքերն ստանալու ապահովագիրը՝ Մոսկվայից (տե՛ս հոկտեմբերի 25):

ԵԼԺ 9, 49, 495:

Նոյեմբերի 6, Մոսկվա. – Բազրատ Թումանյանն ստանում է բանաստեղծի նամակը (չի պահպանվել):

ՈՒՀ 4, 281:

Նոյեմբերի 10. – Բ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Մոսկվայից:

Նոյեմբերի 6 – ին բանաստեղծից ստացած նամակի պատասխանն է:

Հանգամանորեն գրում է «Բանաստեղծությունների» վաճառքի, ջերմ ընդունելության, տարբեր անձանցից լսվող կարծիքների մասին: Իր կողմից խորհուրդ է տալիս «բանաստեղծությունները գրելիս (պոեմաները առավել) համեմատել բնության հետ, թե դա կարող է իրական կյանքում գոյություն ունենալ»: Տեղեկացնում է. «*«Սաքոյի»* համար ասում են, թե դա մի փոքր անբնական է, թե նա այդպես շուտով չէր կարող խելագարվել և այլն»: «Բայց «Ալեքի» և «Մեիրու» վրա հափշտակված են, մանավանդ բանաստեղծությունները՝ «Մարգարեն», «Շատերի նման...», «Գիշերվա աստղի դիմաց», «Զարամիտներին», «Երանություն էր խոստացել հույսս ինձ», «Ինչ ես կատաղել...», հափշտակված են թե՛ վեհ մտքերի և թե՛ գեղարվեստականության վրա»:

Հավանաբար արձագանքելով բանաստեղծի հետաքրքրությանը՝ հայտնում է. «Գալով հայկական հարցին՝ այստե-

ղի ռուս լրագիրները համակրանքով են վերաբերվում: «Русская ведомость» լրագրի խմբագիրներից մեկը, որ հայ է Ջանշյան ազգանունով, նա Պոլիս է, և թղթակցություններ է լինում այդ լրագրի մեջ Պոլսից, որի մեջ գլխավորապես խոսում է հայկական հարցի մասին և գրում է այն դեպքերը, որ պատահում են այնտեղ»:

Տեղեկացնում է. «*«Հայաստան»* լրագիրը բոլորը ստանում են այստեղ, իմիջիայլոց և ես»:

ՈՒՀ 4, 281-282:

Նոյեմբերի 10. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Գրում է, որ բանաստեղծի նամակները իրենց ջերմությամբ մեծ մխիթարություն են իր համար՝ օտարության մեջ: Շնորհակալ է հայոց եկեղեցու մասին տված տեղեկությունների համար (տե՛ս նոյեմբերի 1):

Պատմում է մի պաշտոնաթող լեհ սպայի հետ հանդիպման, եկեղեցու, կայսեր և այլ հարցերի շուրջ ունեցած զրույցի մասին:

Խնդրում է մաս-մաս ուղարկել «Անուշ» պոեմը:

ԳԱԹ ԹՖ, 748:

<Մինչև նոյեմբերի 16-ը>, *Թիֆլիս*. – Նամակ Ախալցխա՝ Արամ Առաքելյանին՝ (չի պահպանվել):

Ա. Առաքելյանը հիշում է. «1890 թ. նոյեմբերին Ախալցխայում, ուր ուսուցչական պաշտոն էի վարում, ստացա Հովհ. Թումանյանից մի նամակ, հետը նոր լույս տեսած նրա անդրանիկ ժողովածուն, որն անչափ ուրախություն պատճառեց ինձ, և ես մի ոգևորված ու սրտառուչ նամակով շնորհավորեցի նրա գրական ասպարեզ գալու առաջին քայլը»:

ԹԺՀ, 289:

Նոյեմբերի 16. – Արամ Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Ախալցխայից:

Բանաստեղծից ստացած վերջին նամակի պատասխանն է:

Մանրամասն տեղեկություն է տալիս գրքերի վաճառքի և

բաժանորդներին առաքելու մասին: Գրում է. «Շնորհավորում եմ գրական առաջին փորձը, ցանկամ կատարյալ հաջողություն և հառաջադիմություն՝ հաղագս ազգասիրության և մարդասիրության»:

Թիֆլիսում տեղի ունեցած երկրաշարժի վախեցած նկարագրության (տե՛ս նոյեմբերի 1) առիթով կատակում է. «Անպիտան երկրաշարժը մի՞թե այնքան սաստիկ էր, որ կարողացավ ցնցել և տատանել մեծանուն բանաստեղծի՞ վայրը, ո՛չ, ո՛չ, այդ անկարող է, բնությունը չէ կարող մերձենալ քեզ այդպիսի չար դիտավորությամբ: Օ՛ն, արիացիր, ո՛վ մեծանուն, արի բանաստեղծ, շարժիր ոսկելար քնարդ, ոգևորիր մարդոց, միայն էնպես արա, որ մուզայիդ չփախցնես»:

ՌԻՂ 4, 283-284:

Նոյեմբերի 20. – Տ. Վերանյանի նամակը Թումանյանին՝ Արմավիրից:

Գրում է իր առօրյա կենցաղից: Նորից մեջտեղ է բերում քահանա ձեռնադրվելու իր խնդրագրի հարցը (տե՛ս նաև հոկտեմբերի 29): Խնդրում է ընկերոջը անպատճառ իմանալ սուրբ Առաջնորդի տրամադրությունը:

Ուրախ է, որ «Բանաստեղծությունները» լույս է տեսել:
ԳԱԹ ԹՖ, 2124:

Նոյեմբերի 21. —Մ. Ասլիբեկյանի նամակը Թումանյանին՝ Դիլիջանից:

Ներողություն է խնդրում նամակի ուշացման համար: Շտապ ուզում է գրքերից երեք-չորս օրինակ: Խնդրում է նամակաբեր տղային ընդառաջել կոնսիստորիայի հետ կապված հարցում:

ԳԱԹ ԹՖ, 933:

Նոյեմբերի 22, Թիֆլիս. – Գրառում թիվ 1 (11) ծոցատետրում:

«Բանաստեղծությունների» առաջին գրքի օրինակներն ստացած բաժանորդների ցուցակն է:

ՌԻՂ 5, 159 – 160:

Նոյեմբերի 24, Թիֆլիս. — Լուր Թումանյանի «Բանաստեղծությունների» առաջին գիրքն ստացվելու մասին:

«Մի շատ սիրուն և շնորհքով գրված գրքույկ ենք ստացել. դա Յովհաննես Թումանյանի (Դսեղցու) բանաստեղծությունների փոքրիկ ժողովածուն է» («Նոր - Դար», 1890, թիվ 184):
ԵԼԺ 9, 52, 497:

Նոյեմբերի 24, Թիֆլիս. – Լուր Թումանյանի «Բանաստեղծությունների» առաջին գիրքն ստացվելու մասին:

«Ստացանք Մոսկվայում, Մ. Բարխուդարյանի տպարանում, ներկա 1890 թ. տպված Յովհ. Թումանյանի «Բանաստեղծությունները». գիրքը շատ մաքուր է տպված: Արժե 35 կոպեկ, իսկ պոստի ծախսով 45 կոպեկ» («Մշակ», 1890, թիվ 135):
ԵԼԺ 9, 55, 497:

Նոյեմբերի 27, Թիֆլիս. – Նամակ Շիրակավան՝ Ա. Ղլտճյանին:

Գրում է գրքերի իրացման ընթացքի մասին: Տեղեկացնում է, որ տպագրության ծախսերից դեռ պարտք է մնացել 120 ռուբլի. «Ուրեմն քեզ վրա, ինչպես առհասարակ մի քանի ընկերներիս վրա է դրվում իմ 120 ռուբլին գրքերով հատուցելու պարտքը»:

ԵԼԺ 9, 51-52:

Նոյեմբեր 27, Թիֆլիս. – Գրառում թիվ 1 (11) ծոցատետրում:

«Բանաստեղծությունները» հասցեատերերին ուղարկելու և գումարային ստանալիքների մասին:

ՌԻՂ 5, 160:

Մինչև նոյեմբերի 29-ը, Թիֆլիս. – Ան. Արվյանին է ուղարկում «Բանաստեղծությունների» մեկ օրինակ:

ԵԼԺ 9, 53:

Մինչև նոյեմբերի 29-ը. – Ան. Արվյանին տեղեկացնում է, որ հոր օգնությամբ ազատվել է զինվորագրությունից:

«Այժմ կարող եմ քեզ ասել, որ զինվոր ընկա և... չէ, չէ՛, մեղա աստծու, պրծա և... այժմ ազատ եմ: Նրա մասին էլ ոչ ոք

չհոգաց, դարձյալ հայրս, բազմերախտ, բայց անբախտ հայրս...»:

ԵԼԺ 9, 52:

«Մինչև նոյեմբերի 29-ը», Թիֆլիս. – Նոր լույս տեսած «Բանաստեղծությունները» տանում է «Մուրճի» խմբագրատուն:

Ան. Աբովյանին գրում է. «... Երբ գիրքը տարա «Մուրճի» խմբագիր Արասխանյանի մոտ, տես նա ինչ ասաց գրքին նայելուց, մաքրությունն ու տիպը գովելուց հետո... «հետո *չվախեցա՞ք*, որ ոտանավոր գրեցիք», հասկանում ես ի՞նչ է ասում»:

ԵԼԺ 9, 54:

Նոյեմբերի 28 – 29. – Բ. Թումանյանը Մոսկվայում ստանում է բանաստեղծի նամակը (չի պահպանվել):

ԳԱԹ ԹՖ, 1228:

Նոյեմբերի 29 - դեկտեմբերի 1, Թիֆլիս. – Նամակ Ան. Աբովյանին:

Մանրամասն գրում է գրքի տպագրության ընթացքում ծագած ֆինանսական դժվարությունների մասին: Ընկերոջն է ներկայացնում գրքի մասին եղած կարծիքների ամփոփումը. «Ահա ընդհանուր կարծիքն իմ գրքիս մասին. կան մարդիկ, որ ասում են, թե բոլորը լավն է, սրանք սուտ են ասում կամ չեն կարողանում ջոկել. կան մարդիկ, որ պոեմներն են շատ գովում, կան որոնք փոքրիկ ոտանավորները: Բայց մի շատ համառ կարծիք կա (սրանց թիվը մեծ է, և առհասարակ լուսավորվածներն են) «Լոռեցի Սաքոյի» մասին, թե նա լինելով առողջ և աներկյուղ «*իզիթ*» չէր կարող վախենալ քաջքերից և *խելագարվել*: Ես թեև շատ պակասություն եմ խոստովանում իմ գրքում, բայց այս կարծիքին ես հավան չեմ: Դու խո լավ գիտես, որ կան մարդիկ՝ իզիթ մարդիկ, որ աշխարք վրա գա՛ աչք չեն ճախլ, ամա ինչ անես, մեռելից, անշունչ մեռելից, վախում են, սպանես, մի ավերակի մոտից մենակ անց չեն կենալ և այլն և այլն: Ինչևէ, տեսնենք» (տես հուլիսի 29, ժամը 10):

ԵԼԺ 9, 52-55:

Աշուն, Թիֆլիս. — Ծանոթանում է և մտերմանում է Մոսկվայի համալսարանի մի խումբ նախկին ուսանողների (Լևոն

Մանվելյան, Արշակ Բարխուդարյան, Մխիթար Տեր-Անդրեասյան) հետ:

ԱԻ, 287:

«Աշուն», Թիֆլիս. – Ա. Բարխուդարյանը (հետագայում մշակութային գործիչ, թարգմանիչ) ծանոթանում է Թումանյանի հետ՝ իր ուսանողական ընկերոջ՝ Դ. Թադևոսյանի տանը.

Ա. Բարխուդարյանը հիշում է. «Նրան մենք՝ ընկերներս խնդրեցինք մի երեկույթ սարքել, որպեսզի առիթ ունենայինք ծանոթանալու տեղական հասարակության հետ: Նա համաձայնեց:

Երեկույթին հրավիրել էր մի մեծ խումբ, գլխավորապես օրիորդներ և երիտասարդներ: Դրանց թվում էր և Թումանյանը, որին Թադևոսյանը ծանոթացրեց իբրև սկսնակ բանաստեղծի:

Երեկոն շատ ուրախ անցավ. խոսում էինք, խաղում էինք զանազան խաղեր, որոնց Թումանյանը մասնակցում էր եռանդուն կերպով: Նա ուժեղ տպավորություն էր թողել մանավանդ օրիորդների վրա. այդ երևում էր նրանց այն խոսակցությունից, որ տեղի էր ունեցել հաջորդ օրը.

— Աղջի՛, Սաթենիկ, գիտե՛ս երեկվա այն երիտասարդը, որով մենք հետաքրքրվում էինք, ի՞նչ հիասթափություն, ո՛չ միայն ամուսնացած է, այլև երեխայի տեր է»:

ԹԺԴ, 357:

Դեկտեմբերի 1, Թիֆլիս. – Տպագրվում է («Մշակ», 1890, թիվ 138) խաչ. Մալումյանի միտումնավոր ակնարկը բանաստեղծների նոր սերնդի մասին:

Չի ընդունում հատկապես նրանց, ովքեր տպագրվում էին «Մուրճում» և «Աղբյուրում» (Հովհաննիսյան, Ծատուրյան, Թումանյան). եթե նրանք «հենց ծնած օրն էլ Աբրահամի գոգը մտնեին, հավատացնում եմ, որ հայոց գրականությունը ոչ թե միայն մի բան չէր կորցնի, այլ շատ էլ օգուտ կունենար»:

Այս ակնարկի մասին բանաստեղծն Ան. Աբովյանին գրում է. «... «Մշակի» այսօրվան համարում խմբագրի փոխան Մալումյանը յուր ակնարկով ջուրն է քաշել հայոց՝ սունկի պես բսնող բանաստեղծներին, որոնց թվում հիշում է և ինձ: Այս ապտակը

(որն ինձ համար ոչինչ արժեք չունի) ես ներկայացնում եմ ինձ խրախուսող, քաջալերողներին: Հարակցում եմ և այս, որ ես կրն-դունեմ ամեն տեսակ աննպաստ կարծիք, եթե նա փաստ լիներ: Կասկածավոր մարդիկ ասում են, այդ զառանցանքը հառաջա-ցել է նրանից, որ «Նոր-Դարը» գովեց: «Նոր-Դարի» գովեստն էլ ես խո չեմ ասում, թե հալած յուղ է. նա էլ շատ է վեր քաշում: Ամեն մարդ մի տեսակ ծափ է տալիս, ես սպասում եմ տեսնեմ իմ դայդեն որը կլինի»:

ԵԼԺ 9, 55, 497:

Դեկտեմբերի 1, Թիֆլիս. – Այցելում է Պերճ Պռոշյանին:

«Այս երեկոյան գնացի Պերճի մոտ, նա ընծայեց յուր «Բողոք» և «Մշակին»... արագիրը ձգելուց, ինձ դարձյալ Վուլիմ-պոսի գագաթը բարձրացնելուց հետո, արձակեց»:

ԵԼԺ 9, 56:

Դեկտեմբերի 1. – Բ. Թումանյանի նամակը Հովհ. Թու-մանյանին՝ Մոսկվայից:

Երկու օր առաջ ստացել է բանաստեղծի նամակը (ան-հայտ): Ցավում է, որ գիրքը դեռ չի ստացել: Խոստանում է որոշ գումար վճարել Մ. Բարխուդարյանին: Հայտնում է, որ Աստվա-ծատրյանը խոստացել է Բարխուդարյանի մոտ բարեխոսել՝ Թու-մանյանի պարտքի վերաբերյալ: Հետաքրքրվում է բանաստեղ-ծի զինվորագրության հարցով. ազատե՞լ են, թե ոչ: Որպես գյու-ղացու նախապաշարուններին ծանոթ մարդ՝ հավանական է հա-մարում Սաքոյի խելագարությունը: Գրում է իրեն վերաբերող որոշ ուսումնական հարցերի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1228:

Դեկտեմբերի 2, Թիֆլիս. – Գրում է «Համերգ» («Վտակը ժայռից ներքև է թռչում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 70, 560:

Դեկտեմբերի 3. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Ստացել է «անուշաբույր ծաղկեփունջը»՝ «Բանաստեղծու-թյունները»: Ոգևորված և հիացած է բանաստեղծի տաղանդով:

Համամիտ է «Նոր-Դարի» գնահատականի հետ՝ «...այդ բանաս-տեղծությունները նման չեն այն աստիճանի և միանման «բա-նաստեղծություններին», որոնցով հեղեղել են մեր գրականու-թյունը և դեռ շարունակում են հեղեղել»:

ՌԻՀ 4, 284, 331:

«Մինչև դեկտեմբերի 6». – Ան. Աբովյանին է ուղարկում «Բանաստեղծություններ» ժողովածուն:

ՌԻՀ 4, 285:

Դեկտեմբերի 6. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Տեղեկացնում է, որ ստացել է «Բանաստեղծություններ» ժողովածուն: Իր հիացական կարծիքն է հայտնում համարյա բոլոր ստեղծագործությունների մասին մեկ առ մեկ: Համաձայն չէ Ղ. Աղայանի այն տեսակետին, թե Սաքոյի խելագարությունը համոզիչ չէ. «Թող ներվի ինձ ասել, որ պ. Աղայանը, յուր մեծ հռչակով և վիթխարի հասակով հանդերձ, չարաչար սխալվում է, որովհետև ոչ թե անբնական, այլ բնականից էլ բնական է Սա-քոյի խելագարվելը»: Գրում է. « «Մեհրի» պոեմայի մեջ իմ անձ-նավորությունս եմ տեսնում»:

Նամակի «չորրորդ երեսում» գրում է հայատառ թուրքերեն բայաթիների մի շարք:

ՌԻՀ 4, 285 – 288:

Դեկտեմբերի 6, Թիֆլիս. – Գրում է «Ընդունիր, իմ քույր...» բանաստեղծությունը:

Նվիրված է Դարյա Գուլոշյանին (տե՛ս ԱԻ, 201-202):

ԵԼԺ 339, 646:

Դեկտեմբերի 8. – Ա. Տեր-Խաչատրյանի նամակը Թու-մանյանին՝ Գուլագարակից:

Մամուլից (տե՛ս նոյեմբերի 24) տեղեկացել է, որ լույս է տեսել Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուն. «Շնորհավորում եմ, ուրեմն, եղբայր, որ քո շնորհալի բանաս-տեղծությունների փոքրիկ գրքուկը արժանացել է լրագրական

գովասանաց. ցանկանում են ավելի ևս հաջողություն՝ քաջ և շնորհալի լուռեցիների հիշատակը անասան պահելու համար»:
ՈՒՂ 4, 288:

Դեկտեմբերի 10. – ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց–Պոդոլսկից:

Բանաստեղծի՝ նոյեմբերի 29-ի նամակի պատասխանն է: Խորհուրդ է տալիս սրտի մոտ չընդունել մամուլի աննպաստ կարծիքները իր բանաստեղծությունների մասին: Ավելի շատ հավատա և վստահի իրեն, թող համոզված լինի, որ ինքը տաղանդավոր բանաստեղծ է:

ՈՒՂ 4, 289-291:

Դեկտեմբերի 11. – Մ. Ասլիբեկյանի նամակը Թումանյանին՝ Դիլիջանից:

Գրում է բացառապես իրեն վերաբերող նեղ անձնական հարցերի մասին:

ԳԱԹ ԹՖ, 934:

Դեկտեմբերի 11, 12. – Տպագրվում է Վարսամի (Մանուկ Աբեղյան) դրվատական հոդվածը Թումանյանի «Բանաստեղծությունների» մասին:

Գրախոսը բարձր է գնահատում բանաստեղծի ստեղծագործության ժողովրդական ոգին, էպիկական տարերքը: Վերլուծում է «Մեհրին», «Ալեքը», «Լոռեցի Սաքոն»։ «Մեր վիպերգական բանաստեղծության մեջ այդ երեք քերթվածները չունեն իրենց նմանը թե՛ կենդանությանը, թե՛ զգացմունքների բնականությանը»: Հատուկ շեշտում է «կանոնավոր», «գեղեցիկ» լեզուն:

«Նոր - Դար», 1890, թիվ 196, 197:

Դեկտեմբերի 12. – Թադևոս քահանա Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Դսեղից:

Խնդրում է գրաբեր Ամիրխան Վարդունյանցին, որ իրենց մոտ ազգականն է, ընդառաջել պետք եղած դեպքում:

ԳԱԹ ԹՖ, 1235:

Դեկտեմբերի 16. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Նուխիից:

Հարցնում է «Բանաստեղծությունների» տպագրության մասին: Խնդրում է գրքեր ուղարկել՝ բաժանորդներին հանձնելու:

ՈՒՂ 4, 291:

Դեկտեմբերի 18, Թիֆլիս. – Ստանում է Գր. Վանցյանի՝ դեկտեմբերի 16-ի նամակը:

ԳԱԹ ԹՖ, 2016:

Դեկտեմբերի 19. – Մելքոն Ասլիբեկյանի բացիկը Թումանյանին՝ Դիլիջանից:

Հայտնում է, որ ստացել է գրքերը: Խնդրում է ևս չորս օրինակ: Բարևում է տնեցիներին: Տեղեկություն է ուզում Շահլամյանի մասին:

ԳԱԹ ԹՖ, 935:

Դեկտեմբերի 22. – Մ. Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից: Խնդրում է ուղարկել գրքի տպագրության ծախսերից մնացած գումարը: Խոստանում է ուղարկել գրքի՝ իր մոտ մնացած մի քանի օրինակը:

ՈՒՂ 4, 292:

Դեկտեմբերի 23, Թիֆլիս. – Ստանում է Մ. Ասլիբեկյանի՝ դեկտեմբերի 19-ի բացիկը:

ԳԱԹ ԹՖ, 935:

Դեկտեմբերի 23. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Ախալցխայից:

Հայտնում է, որ ստացել է գրքերը: Գրում է խրախուսական տողեր. «Պետք է ասած, որ գիրքդ այստեղ ևս լավ տպավորություն թողեց և արդարացրիր իմ հույսս, որ տածում էի դեպի քեզ: <....> Աշխատիր ժողովրդի, բուն ժողովրդի շրջանից դուրս չգալ: <....> Բայց և այնպես աշխատիր, կարդա շատ, որքան կարող ես, ժամանակդ իզուր մի կորցնի, ես, իբրև ընկեր, անկեղծությամբ ասում եմ, որ ապագադ կարող է շատ լավ լինել, եթե մտավոր հորիզոնդ առավել ընդարձակ լինի, չվիատվես բոլորովին Մալունյանի սարսաղության վերա (տես՝ դեկտեմբերի 1): <....> Ուրեմն աշխատիր, բոլոր սրտով և վիրավիր փափագած

գործիդ և աշխատիր նպատակիդ հասնել, արդարացնել այն հույսը, որ ընդհանրապես հասարակությունն է քեզ վերա դնում և մասնավորապես քո ընկերներդ»:

ՈՒՅ 4, 292-293:

Դեկտեմբերի 25. — Ա. Ղլտճյանի նամակ-բացիկը թու-մանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Հայտնում է, որ ուղարկած գրքերը վաճառվում են: Խնդրում է «ծախսի մասին ոչինչ չասե», քանի որ ընկերներ են: Շատ է զբաղված, այդ պատճառով բացիկ է ուղարկում. ասելիք շատ ունի:

ԳԱԹ ԹՖ, 1155:

Դեկտեմբերի 25, Թիֆլիս. — Նամակ Վաղարշապատ՝ Ա. Ղլտճյանին:

Դժգոհում է, որ «շատ ժամանակ է» նրանից նամակ չի ստացել: Մտահոգված է ընկերոջ վիճակով, «ընդհանրապես ամեն մի սրտակից ընկերոջ վիճակ» իրեն «մտածել է տալիս». «ես շատ մելամաղձոտ, նեղսիրտ և բարկացկոտ եմ դարձել վերջին ժամանակներս: Գոնե չկա ընկերական շրջան, միայն նամակներով եմ մխիթարվում»:

Տեղեկություններ է հաղորդում «Բանաստեղծություններ» ժողովածուի արձագանքների մասին: Հիշում է հատկապես Մալումյանի հոդվածը (տես դեկտեմբերի 1) և ավելացնում. «Այս բանը մինչև անգամ զայրացրել էր, ում ասեմ, մի խոսքով ում պատահեցի զայրացած էին, մինչև անգամ մի քանիսը, Բեկ-նազարյանը, Պերճը, և այլն կանչեցին և մխիթարեցին. ծիծաղելի բան. առաջինը ոչինչ չկար, երկրորդը՝ ես բուլոբովին բանի տեղ չէի դնում, ինչպես և «Նոր-Դարի» չափից դուրս գովեստը (տես դեկտեմբերի 11, 12): Մինչև անգամ հետո բժիշկ Տեր-Գրի-գորյանն ասաց, որ Մալումյանն այդ հոդվածը գրելիս իմ գիրքս չէր կարդացել: Մի նորավարտ ուսանող գնացել էր Մալումյանին այսպես ասել — պարոն, դու այս գիրքը կամ չես կարդացել, կամ չես հասկացել: «ես նրա մասին ոչինչ չեմ ասել,— հայտնում է Մալումյանը,— նա միանգամայն արժանի է ինքնուրույն կրի-տիկային: «Նոր-Դարի» կրիտիկան կարդացած կլինես, «Մուր-

ճինը» հունվարին կլինի, «Աղբյուրումն» էլ կլինի: Հայտնի հայ-կաբան և անհայտ բանաստեղծ Ա. Եզեկյանը Բեկնազարյանի մոտ մեծ գովեստով էր խոսացել գրքի մասին, ասելով, որ 5 անգամ կարդացել է և մտադիր է բան գրելու: Ես կրկնում եմ, շատ համեստ կարծիք ունեմ իմ ոտանավորներիս մասին և տեսնելով այսքան համակրանք՝ շփոթված եմ»:

ԵԼԺ 9, 56-57, 498:

Դեկտեմբերի 27. — Տ. Վերանյանի նամակը թումանյանին՝ Արմավիրից:

Իր հիացմունքն է հայտնում «Բանաստեղծությունների» առաջին գրքի վերաբերյալ: Ուրախ է, որ թումանյանը, լինելով «Լոռու հարազատ զավակ», «պատիվ է բերում հայրենիքին». «ես վաղուց երազում էի տեսնել մեր Լոռուց մի բանաստեղծ... <...> և ահա իմ երազը, հոգիս, քո մեջ մարմնացած եմ տես-նում...»: Շատ է հավանել «Լոռեցի Սաքուն», «Ալեքը», «Մեհրին»: Այն տպավորությունն է ստացել, որ «Ալեքի» տերտերի նախա-տիպը բանաստեղծի հայրն է՝ տեր Թադևոսը: Թումանյանի տողերը՝ «Ծեր ծնակներ ծառախիտ. ջրեր անույշ ու վճիտ...» համեմատում է Ալիշանի «Ծովն ծփայր ծին ծիրանի, գոտի անվեր Հայաստանի» տողերի հետ, և ավելացնում. «Ո՛րքան քաղցրություն, ո՛րքան սահունություն, ո՛րքան ներդաշնակու-թյուն քո և նրա նկարագրությանց մեջ»: Ու վերջում. «Գրիր, հոգիս, գրիր, անմահացրու մեր անմահ Լոռին յուր բոլոր քունջ ու պուճախով... Հիշո՞ւմ ես «Ավազակները», հիշո՞ւմ ես Չո-փուռի տղերքը, քո տեղը որ լինեի նրանց էլ կանմահացնեի...»: ՈՒՅ 4, 394-396:

Դեկտեմբեր, Թիֆլիս. «Մի երկու նամակ» Կամենեց-Պո-դոլսկ՝ Անուշավան Աբովյանին՝ ի պատասխան վերջինիս դեկ-տեմբերի 3-ի նամակի (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 62, 499:

Դեկտեմբեր. — Գրում է «Երգչին» («Ապա, այն երգն ասա՛, երգիչ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 71, 561:

Դեկտեմբեր. – Գրում է «Իսրայել» («Պանդուխտ, հալածված, հոգնած, վշտաբեկ...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 72, 561:

<Դեկտեմբեր>. – Տպագրվում է հայտարարություն՝ Թումանյանի «Բանաստեղծություններ» գիրքը ստացվելու մասին:
* Բանաստեղծն սպասում էր, որ «Աղբյուրում» կտպագրվի նաև հայկաբան Ա. Եզեկյանի հոդվածը իր գրքի մասին (տե՛ս դեկտեմբերի 25), բայց տպագրվում է միայն հայտարարություն:
«Աղբյուր», 1990, թիվ 12:

1890. – Գրում է «Մեհրի» պոեմը:
Պոեմն արտահայտում է արևմտահայության կյանքի ու ճակատագրի հանդեպ բանաստեղծի հետաքրքրությունը, որ սկսվել էր 80-90-ական թվականներից և շարունակվում է մինչև գրական-հասարակական գործունեության վերջը (տե՛ս դեկտեմբերի վերջ):
ԵԼԺ 3, 35, 503:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Մեհրի» պոեմը:
ԲՄ I, 21-41:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Ալեք» պոեմը:
ԲՄ I, 42-54:

1890. – Առաջին անգամ տպագրվում է Պուշկինի «Закли-
нание» բանաստեղծության թարգմանությունը՝ «Եթե իրավ է, որ
գիշերները...» վերնագրով:
ԲՄ I, 79-80:

1890.— Առաջին անգամ տպագրվում է «Լոռեցի Սաքոն»
պոեմի առաջին տարբերակը:
ԲՄ I, 5-20:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Աղոթք» («Սողո-
մոնի պես, տեր...») բանաստեղծությունը:
ԲՄ I, 85:

1890.— Առաջին անգամ տպագրվում է «Ամառվա գիշերը

գյուղում» («Լուսընկա գիշեր...») բանաստեղծությունը՝ «Ամա-
ռային գիշերը գյուղում» վերնագրով:
ԲՄ I, 76-78:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Երանություն էր
խոստացել հույսս ինձ...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 88-91:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Ի՞նչ ես կատաղել
անմեղ արարքից...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 84:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Ես նայում եմ իմ
առջև...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 74:

1890 – Առաջին անգամ տպագրվում է «Ների՛ր, ո՛վ կույս,
որ հուզեցի...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 82:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Երբ ես տխուր,
հուսահատ...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 96:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Այդ ի՞նչ սրտա-
մաշ տխրություն է քեզ...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 67-69:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Եթե իմ վերջին
հայացքը մնա...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 83:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Պանդուխտն եր-
գեց օտար երկրում...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 72-73:

1890. – Առաջին անգամ տպագրվում է «Մի՛ որոնիր մի
ժամանակ...» բանաստեղծությունը՝ «N-ին» խորագրով:
ԲՄ I, 81:

1890.– Առաջին անգամ տպագրվում է «Շատերի նման նա էլ խեղդվեցավ...» բանաստեղծությունը:
ԲՄ I, 92:

1890 – Առաջին անգամ տպագրվում է «Մարգարե» («Երբ որ վեհության կնիքը ճակատին...») բանաստեղծությունը:
ԲՄ I, 97-98:

1890 – Առաջին անգամ տպագրվում է «Գիշերային առաջին աստղի դիմաց» («Արևը թռավ, երկինքն ու երկիր...») բանաստեղծությունը:
ԲՄ I, 86-87:

1890.– Առաջին անգամ տպագրվում է «Չարամիտներին» («Դուք մեծ հայրերի ընկած զավակներ...») բանաստեղծությունը:
ԲՄ I, 93-94:

1890.– Առաջին անգամ տպագրվում է «Միամիտներին» («Երանի է ձեզ, որ չեք հասկանում...») բանաստեղծությունը:
ԲՄ I, 95:

1890.– Առաջին անգամ տպագրվում է «Իդձ» («Ինչո՞ւ չեմ թռչում, վայրենի մի հավ...») բանաստեղծությունը՝ «Լեռնոնտովից փոխադրություն» ենթավերնագրով:
ԲՄ I, 70-71:

1890.– Առաջին անգամ տպագրվում է («Աղբյուր», թիվ 8-9, էջ 20) «Արև և Լուսին» բալլադը:
ԵԼԺ 2, 97, 551-552:

1890.– Գրում է «Կուրծքս երբեմն եռ է գալիս և ուռչում...» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 78, 562:

<1890>. – Գրում է «Գիշեր» բանաստեղծությունը:*

* «Հին կռիվը» պոեմի առաջին տարբերակի հատվածներից է:
ԵԼԺ 1, 76, 562:

1890.– Գրում է «Տարոնի առավուտը» («Կարմիր արևն առավուտյան...») բանաստեղծությունը:*

* «Հին կռիվը» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է:
ԵԼԺ 1, 74, 562:

1890.– Գրում է «Տարոնի գարունը» («Գարունն եկավ և թևերը...») բանաստեղծությունը:*

* «Հին կռիվը» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է:
ԵԼԺ 1, 73, 561:

1890.– Գրում է «Տապանագիր» («Կյանքի տղմի մեջ գլխովին թաղված...») բանաստեղծությունը:*

* Բանաստեղծության վերջին տողը հեղինակն օգտագործել է «Պոետն ու Մուսան» երգիծապոեմի «Փողի քսակը, փողի քսակը...» հատվածում:
ԵԼԺ 1, 81, 564:

1890.– Գրում է «Քրիստոս հարյավ հըրաշափառ...» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 80, 564:

1890.– Գրում է «Նկարիչ Գ. Բաշինջադյանի «Չորագետը գիշերով» նկարի առջև» («Արտիստ, քաջերի այս ծորն ահարկու...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 79, 563:

1890.– Գրում է «Նախերգանք» («Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով...») բանաստեղծությունը:*

* Պետք է լիներ «Հառաչանք» պոեմի նախերգանքը: Հետագայում բանաստեղծն այն դրել է իր մի քանի ժողովածուների սկզբում՝ որպես ամբողջ ստեղծագործության նախերգանք:
ԵԼԺ 1, 23, 544-545:

1890.– Գրում է «Անց կացան...» քառյակը:*

* «Հառաչանք» պոեմի հատվածներից է, որ բանաստեղծը հետագայում հրատարակել է որպես առանձին քառյակ:
ԵԼԺ 2, 7, 514:

1890.— Գրում է «Վերջացավ...» քառյակը:*

* «Հառաչանք» պոեմի հատվածներից է, որ բանաստեղծը հետագայում հրատարակել է որպես քառյակ:
ԵԼԺ 2, 8, 514:

1890.— Գրում է «Մերժված օրենք» պոեմը:
ԵԼԺ 3, 51, 505-512:

1890-ից սկսած .— Թումանյանն այլևս տիրացություն չի անում ո՛չ վանքի եկեղեցուն, ո՛չ էլ տեր Հովհաննեսի մոտ:
ԹԺՀ, 283:

1890, վերջեր. — Սկսում է աշխատել «Հառաչանք» պոեմի վրա:
ԵԼԺ 3, 509:

<1890>. — Գրում է «Դարձյալ նրանց» («Հայտնի եզվիտներ, ի՞նչ եք աղմկում...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 58, 557:

<1890>. — Գրում է «Հին կռիվը» պոեմի առաջին տարբերակը:*

Թումանյանը վկայում է, որ պոեմի մտահղացումը իրեն հուշել է հայտնի ազգային-հասարակական գործիչ Ստեփան Ջորյանը (Ռոստոմ). «Հետագայում էլ մի քանի պատմություններ արավ ու առաջարկեց, որ բանաստեղծության նյութ առնեմ: Ես նրա պատմածներից միայն մեկից, որ պատմեց 1890 թվականին, մի տերտերի ու իր աղջկա պատմությունից, օգտվեցի ու նյութ առա մի պոեմի: Պոեմը թեև գրելիս բոլորովին փոխվեց և ուրիշ բան դուրս եկավ, բայց ես նվիրեցի Ստեփանին: Բավական տարիներ առաջ ռուս ժանդարմները խուզարկեցին, տարան կորցրին էդ պոեմը և միայն մի երկու կտոր գտա պատահմունքով, որ տպվեցին «Տանը», «Երկրում» և «Հայոց լեռներում» վերնագրերով» (տե՛ս ԵԼԺ 7, 381-382):

* Ձեռագրից պահպանվել են միայն մի քանի հատվածներ:
ԵԼԺ 4, 59, 551-552:

1891

Հունվարի 1, Թիֆլիս. — Գրում է «Շնորհավոր Նոր տարի...» սկզբնատողով ոտանավորը:

Նվիրված է ԱՆ. Աբովյանին:
ԵԼԺ 1, 340, 647. ԵԼԺ 9, 58:

Հունվարի 1, Թիֆլիս. — Լույս է տեսնում («Մուրճ», 1891, թիվ 1, էջ 93-100) Լևոն Մանվելյանի գրախոսականը՝ Թումանյանի «Բանաստեղծություններ» գրքի մասին:

Հոդվածը գրվել է ի պատասխան Խաչ. Մալումյանի միտումնավոր հոդվածի (տե՛ս 1890, դեկտեմբերի 1): Հայտնելով իր անհամաձայնությունը քննադատի հետ՝ Լ. Մանվելյանը նկատում է, որ Թումանյանի «պակասությունները» թվելուց բացի պետք էր խոսել նաև «նորա արժանավորությունների մասին»: Հովհաննիսյանից սկսած մինչև Թումանյան նշանավոր փուլ է համարում մեր բանաստեղծության պատմության մեջ: Կարծում է, որ Թումանյանը նման չէ ո՛չ մեր հին, ո՛չ նոր բանաստեղծներին, կանգնած է առանձնակի, ինքնուրույն է. «Նա մի տեսակ նորություն է մեզ համար, այդ առանձնահատկությունը ժողովրդական տարրն է»:

«Մուրճի» խմբագրատանը քննարկվում է Մանվելյանի հոդվածը: Թումանյանը համաձայն չի եղել գրախոսի որոշ դիտողությունների հետ. «Ես խմբագրատանը նույնիսկ ոտանավորների բառերով հերքեցի այն կետերը, որոնց զարկել էր կրիտիկոսը»:

ԵԼԺ 9, 64:

Հունվարի <5>, Թիֆլիս. — Նամակ Կամենեց -Պոդոլսկ՝ ԱՆ. Աբովյանին:

Նամակն սկսել է գրել «Նոր տարու առաջին օրը»՝ «Շնորհավոր Նոր տարի» ոտանավորով (տե՛ս հունվարի 1):

Շարունակության մեջ տեղեկացնում է, որ սպասում է «Մուրճի» հունվարյան համարին, ուր գրախոսական կա իր գրքի մասին (տե՛ս հունվարի 1). «Խմբագիրը փոխել է յուր կարծիքը իմ մասին»: Գրում է, որ «հայրենակից երիտասարդներից» ստացել է «բազմաթիվ և ոգևորված նամակներ»: Գրքի

տպագրության ընթացքում նյութական շատ «նեղություններ» է կրել: Խնդրում է նամակն ստանալուն պես 18 ռուբլի ուղարկել Մոսկվա՝ տպարանատեր Բարխուդարյանին, որին պարտք էր 30 ռուբլի. «12 ռուբլու գիրք ծախելով այնտեղ ուսանողները տվել են. մնացած 18 ռուբլու համար երաշխավորել են, բայց նրանց մուննաթից լավը քո ուղարկելն է»:

ԵԼԺ 9, 58 – 59:

Հունվար <1-6>, Թիֆլիս. – «Սուրճում» (1891, թիվ 1) լույս է տեսնում Լ. Մանվելյանի «Մեր նոր բանաստեղծներից» վերնագրով ոտանավորը.

Երգեցե՛ք խրոխտ... Փույթ չէ, թըշնամին
Թո՛ղ մաղձով լցված՝ ձեզ ծաղըր անե,
Հավաստի եղե՛ք՝ գալիք սերունդին
Նոցա ծաղրանքը չըպիտի հասնե:

Ամսագրի աշխատակից Արշակ Բարխուդարյանը վկայում է, որ ոտանավորը ուղղված էր մի կողմից Թումանյանին, մյուս կողմից՝ նրան չարամտորեն քննադատողներին:

ԹԺՀ, 360 – 361:

Հունվարի 9, Թիֆլիս. – Երեկոյան ընդունում է Տ. Փիրումյանին:

Նրա համար կարդում է Ան. Աբովյանի նամակներից. «Անցյալ երեկոյան նամակներիցդ կարդացի Տ. Փիրումյանի մոտ (նա ինձ շատ մոտ է այժմ), նույնպես և «Ծորե ժպիտ» ոտանավորը. բավականին զվարճացավ և գովեց քեզ»: Այդ շրջանում Թումանյանը նոր էր մտերմացել Տիգրան Փիրումյանի հետ. «Նա ինձ շատ մոտ է այժմ»:

ԵԼԺ 9, 62:

Հունվարի 10, Թիֆլիս. – Ստանում է Ա. Հովվյանի նամակը: «Այսօր Աղասուց նամակ ստացա 7 ռուբլի փողի հետ, գրքի փող է այս էլ»:

ԵԼԺ 9, 62:

Հունվարի 10, Թիֆլիս. – Նամակ Կամենեց – Պոդոլսկ՝ Ան. Աբովյանին:

Գրում է նյութական հարատև գրկանքների հետևանքով

ստեղծված ընտանեկան ծանր կացության մասին՝ բնութագրելով այն իբրև «թշվառության անդունդ», «դժոխային վիճակ», «անվերջ տառապանքներից» ծնված անկում, երբ փակվում են ընտանեկան կյանքի երջանկության դռները, և թունավորվում է այդ կյանքի խաղաղությունը՝ դարձնելով իրեն «սարսափելի դյուրագրգիռ և բարկացկոտ». «Ես շշկված, հուսահատ ու զայրացած այսպես եմ որոշել, իմ անձս զոհել նրա* երջանկության համար, որի թշվառության անմեղ պատճառն եմ դարձել»:

* Նկատի ունի կնոջը:

ԵԼԺ 9, 60 – 61, 499:

Հունվարի 10, Թիֆլիս. — Մտադրություն՝ «Անուշը» «Սուրճում» տպագրելու (մտադրությունը չի իրականացել):

ԵԼԺ 9, 62, 499

Հունվարի 10, Թիֆլիս. – Գրում է «Խղճալի՛ մարդ, տոգորված ... » բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 82, 565:

Հունվարի 10. — Տ. Վերանյանի նամակը Թումանյանին՝ Արմավիրից:

Խնդրում է իր՝ հոգևոր նոր կոչում ստանալու գործին ընթացք տալ: Վրդովմունք է հայտնում, որ իր մասին կարծիք հարցրել են Զալալօղլու տերտերներից: Խորհուրդ է հարցնում՝ Առաջնորդին իր անունից խնդրագիր գրելու մասին: Հայտնում է, որ էջմիածնում հույս ունի դիմելու Նահապետյանին կամ Միխայել Ֆադեիչի եղբորը:

ԳԱԹ ԹՖ, 2126 (458 լր.):

Հունվարի 13, Թիֆլիս. – Գրում է «Ա՛խ, ես երանի...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 83, 565:

Հունվար <11-15>, Թիֆլիս. – Ստանում է Տ. Վերանյանի նամակը՝ Արմավիրից (տե՛ս հունվարի 10):

ԳԱԹ ԹՖ, 2126 (458 լր.):

Հունվարի 17, Թիֆլիս. – Իբրև դերասան՝ մասնակցում է

Գուցկովի «Ուրիել Ակոստայի» բեմադրությանը, որը տեղի է ունենում Թիֆլիսի բանկի շենքում:

Պիեսի բեմադրությունը մեծ հաջողություն չի ունենում: Բեմում թումանյանը խաղում է դերասաններ Պետրոսյանի, Ավայանի, տիկին Ջաբելի, Ա. Վրույրի հետ:

ԱԻ, 440-441. «Տարազ», 1891, հունվարի 20, թիվ 1, էջ 3:

✓ *Հունվարի 19 – 21, Թիֆլիս.* – Նամակ ԱՆ. Աբովյանին (չի պահպանվել):

Գրում է իր ընտանեկան անախորժությունների, աներոջ՝ Տեր-Հովհաննեսի ու զոքանչի ստեղծած անտանելի պայմանների մասին, որոնք ազդել են իր և կնոջ՝ Օլգայի հարաբերությունների վրա: Իրեն թվում է, թե Օլյան իրեն այլևս չի սիրում, իսկ զոքանչը գործիք է դարձել Տեր-Հովհաննեսի ձեռքին:

Բովանդակությունը՝ ԱՆ. Աբովյանի՝ հունվարի 28-ի պատասխան նամակից:

ԳԱԹ ԹՖ, 754 (441):

Հունվարի 23. – ԱՆ. Աբովյանի հեռագիրը թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Դժգոհում է, որ երկու ամսում գրած 10 նամակների պատասխանը թումանյանից չի ստացել: Խնդրում է իմանալ, թե ինչու «Նոր - Դարին» կես տարով բաժանորդագրվել է, բայց ոչ մի համար չի ստացել:

ԳԱԹ ԹՖ, 752 (439):

Հունվարի 28. – ԱՆ. Աբովյանի նամակը թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Խորհուրդներ է տալիս թումանյանին ընտանեկան անախորժություններից (տե՛ս հունվարի 10, հունվարի 19-21) չիուսահատվել, կնոջ արհամարհանքին պատասխանել «քաղցր խոսքով», 2-3 ամսով հեռանալ Դսեղ՝ Օլյային ասելով, որ հեռանում է հավիտյան՝ հանուն կնոջ երջանկության՝ «որպեսզի դու գոնե երջանիկ լինես, ինչ հաջաթ, թե ես տառապանքների մեջ հյուծվեմ»:

Գրում է, որ թումանյանի խնդրանքը՝ 18 ռուբլի ուղարկել

Մ. Բարխուդարյանին (տե՛ս հունվարի <5>), ուշ է տեղ հասել (հունվարի 27-ին) ճանապարհների փակ լինելու պատճառով: Հունվարի 28-ին փողն արդեն ուղարկել է Մոսկվա:

ԳԱԹ, ԹՖ, 754 (441):

Հունվար, Թիֆլիս. – Ավ. Արասխանյանը հրավիրում է թումանյանին աշխատակցելու «Մուրճին»:

ԵԼԺ 9, 65:

Հունվար, Թիֆլիս. – Նամակ Գր. Վանցյանին (չի պահպանվել):

Խնդրում է իր գրքի բաժանորդագրությունից ստացած գումարները ուղարկել: Նամակի բովանդակության մասին տեղեկությունը՝ Գրիգոր Վանցյանի՝ փետրվարի 8-ի նամակում:

ԳԱԹ ԹՖ, 2017 (987):

Հունվար, Թիֆլիս. -- Նամակ Մոսկվա՝ Մ. Բարխուդարյանին (չի պահպանվել):

Նամակով թումանյանը հայտնել է, որ Բարխուդարյանը 12 ռուբլի ստանալիք գումար ունի: Այդ 12 ռուբլին առաջացել էր «Բանաստեղծությունների» վաճառքից, որը Մոսկվայի ուսանողները պիտի հանձնեին նրան:

Նամակի բովանդակությունը՝ Մ. Բարխուդարյանի պատասխան նամակից (տե՛ս փետրվարի 8):

ՈՒՀ 4, 296:

Փետրվարի 8. – Գր. Վանցյանի նամակը թումանյանին:

Գրում է, որ թումանյանի նամակին պատասխանելու համար պիտի Արամի հետ գրագրություն բանար, խնդրեր նրան՝ ուղարկել բաժանորդագրությունից ստացված գումարը:

Ուզում է Ղլտճյանի հասցեն: Հարցնում է Դավիթ Շահլամյանից:

ԳԱԹ ԹՖ, 2017 (987):

<Մինչև փետրվարի 8>, Թիֆլիս. — Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունից ստանում է Հովհանու Դարդելիի «Ժամանակագրություն հայոց» գիրքը (1891, Պետերբուրգ) և

ուղարկում Անուշավան Աբովյանին:

ԵԼԺ 9, 63, 500:

Մինչև փետրվարի 8, Թիֆլիս. — Շիրվանզադեն խոստանում է «Արծազանքում» հողված գրել Թումանյանի և Յովհաննիսյանի մասին:

Բանաստեղծը գրում է Ան. Աբովյանին. «Անցյալները կոնցերտում Շիրվանզադեն երկար խոսելով իմ բանաստեղծությունների մասին, ասաց, որ «Արծազանքը» լույս տեսնելուն պես (մարտին) երկար խոսելու է իմ և Յովհաննիսյանի մասին»:

* Շիրվանզադեն խոստումը չի կատարել:

ԵԼԺ 9, 65, 500:

Մինչև փետրվարի 8, Թիֆլիս. — Մասնակցում է Շիլլերի «Ավազակների» ներկայացման փորձերին:

✓ ԵԼԺ 9, 65:

Փետրվարի 8, Թիֆլիս. — Նամակ Կամենեց-Պոդոլսկի՝ Ան. Աբովյանին:

Տեղեկացնում է, որ «բռնի խաղաղություն է տիրում» իրենց ընտանիքում: Օլգան էլ է դժգոհ իր ծնողներից. «Նա յուր հոգու բոլոր զորությամբ *ատում է* այդ երկուսին, և առհասարակ այս կյանքը: Այս ատելությունն է, որ այժմ նրան ստիպում է շուտ-շուտ բացականչել — Ա՛խ, երանի մենք ջոկ լինենք սրանցից, թեկուզ հաց մուրանք»:

Քաղվածաբար ներկայացնում է Լ. Մանվելյանի հողվածի բովանդակությունը (տե՛ս հունվարի 1):

Տեղեկացնում է, որ մասնակցել է «Ուրիել Ակոստայի» ներկայացմանը, հաճախում է նաև Շիլլերի «Ավազակների» փորձերին:

Նամակի վերջին էջի վրա նկարում է «Աֆրիկայից մի տեսարան» և կողքին ավելացնում՝ «լավ չեղավ»:

ԵԼԺ 9, 62-64:

Փետրվարի 8. — Մ. Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Գրում է, որ ստացել է Կամենեց-Պոդոլսկից ուղարկված 18 ռուբլին (տե՛ս հունվարի 28): Բանաստեղծի ակնարկած 12

ռուբլին (տե՛ս հունվար) դեռ չի ստացել:

Հայտնում է. «Ձեր գրքերից ինձ մոտ մնացել է մինչև 30 օրինակ: Որքան ժամանակ է, պատրաստվում եմ ուղարկել, բայց միշտ ուշանում է: Պետք է ասած, որ սաստիկ ծանրաբեռնված եմ գործերով և շատ անգամ մոռանում եմ անելիքս: Եթե կամենաք, կուղարկեմ, իսկ եթե ոչ՝ թողեք մնան ինձ մոտ, գուցե կամաց-կամաց վաճառվին»:

Ու՛Յ 4, 296:

Փետրվարի <8-9>, Թիֆլիս. — Տպագրվում է («Մուրճ», 1891, թիվ 2, էջ 198) «երգչին» («Ապա, այն երգն ասա՛, երգիչ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 9, 65:

Փետրվարի <10-12>, Թիֆլիս. — Նամակ Ան. Աբովյանին (չի պահպանվել):

Գրում է իրենց ընտանեկան կյանքը խաղաղվելու, իր հանդեպ Օլգայի ջերմ վերաբերմունքի և սիրո մասին: Անուշավանը սխալվում է՝ Օլգայի մասին վատ գրելով: Խնդրում է ոչնչացնել իր նախորդ նամակը (տե՛ս փետրվարի 8), ուր գրել էր, թե Օլգան ատում է ծնողներին, «իսկ իր մոտ ապաստան ու հովանի չի գտնում»:

Հարցնում է Ան. Աբովյանի կարծիքը «Անուշ» պոեմի մասին:

* Նամակի բովանդակությունը՝ ըստ Ան. Աբովյանի՝ պատասխանի (տե՛ս փետրվարի 18):

ԳԱԹ ԹՖ, 755 (442):

Փետրվարի 14, Թիֆլիս. — Մասնակցում է Շիլլերի «Ավազակներ» պիեսի ներկայացմանը:

Ներկայացումը տեղի է ունենում Թիֆլիսի բանկի շենքում: Խաղում է ճանաչված դերասան Գևորգ Պետրոսյանի հետ, որը ստանձնել էր Կարլ Սոորի դերը: Անհայտ է, թե Թումանյանն ինչ դեր է կատարել: Հայտնի է միայն, որ այդ դերը «բավական պատասխանատու» է եղել:

ԵԼԺ 9, 501. ՄԻ, 441. «Տարագ», 1891, փետրվարի 17, թիվ 7, 105:

Փետրվարի 14. – 3. Ստեփանյանի նամակը **Թումանյանին՝ Շուշիից:**

Ցավում է, որ շուտով կայանալիք հարսանիքում ինքը չի լինելու, իսկ **Թումանյանն** ու **Օլյան** կլինեն և թող իր փոխարեն էլ ուրախանան: **Խնդրում է շնորհավորել Մածոյին:** Գրում է, որ **Շուշիում Թումանյանի գրքերի պահանջ** կա: Միայն մի գրավաճառ 10 օրինակ է խնդրել: Մի բողոքական էլ մի օրինակ տարել է 25 կոպեկով. «Տանք, եթե ծախվում է, վերցնի»:

ԳԱԹ ԹՖ, 2001 (446 լր.):

Փետրվար 17–20, Թիֆլիս.– Նամակ **Շուշի՝ 3. Ստեփանյանին (չի պահպանվել):**

Հակոբ Ստեփանյանի՝ փետրվարի 14-ի նամակի պատասխանն է: Հավանաբար **Թումանյանը** հետաքրքրվել է իր գրքերի վաճառքի հարցով:*

* Նամակի բովանդակությունը՝ ըստ 3. Ստեփանյանի՝ փետրվարի 24-ի նամակի:

ԳԱԹ ԹՖ, 2002 (446 լգ.):

Փետրվարի 18. – Գր. Վանցյանի նամակը **Թումանյանին՝ Վարդաշենից:**

Հայտնում է, որ Արամի հետ երկար նամակագրությամբ ճշտել է **Թումանյանի գրքերի վաճառքի** հետ կապված հարցերը: Գրում է գրքերի բաժանորդաթերթերի մասին: Նամակում հիշատակվում են **Ղլտճյանը** և **Դավիթը:**

ԳԱԹ ԹՖ, 2017 (987):

Փետրվարի 18. – Ան. Աբովյանի նամակը **Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:**

Թումանյանի՝ փետրվարի 8-ի և <10-12>-ի նամակների պատասխանն է:

Ուրախ է, որ բանաստեղծի ընտանեկան կյանքը խաղաղվել է: Ներողություն է խնդրում, որ նրա նախորդ նամակներից (տե՛ս հունվարի 10) ազդված՝ վրդովմունք է հայտնել **Օլգայի** և նրա ծնողների հասցեին. «Խնդրեմ ինձանից նախընթաց ստացածդ նամակը (տե՛ս հունվարի 28) ոչնչացնես»:

Գրում է, որ անկախ ապրելու և ընտանեկան խաղաղու-

թյան համար նյութական միջոցներ են հարկավոր: Խորհուրդ է տալիս փող խնայել. «... Որքան կարող ես փող խնայիր, ծեռքը ընկածը, ռոճիկ է, թե գրքերից գոյացած փող, տուր պահպանողական արկղը... այս լավ մտածիր, որ անկախ լինելու և ուրիշի անախորժ ազդեցության տակից դուրս գալու համար, անշուշտ, փող է հարկավոր... Դու գիտես, սիրելիս, որ ես գաղափարական մարդ եմ և սաստիկ ատելի է ինձ մամոնայապաշտությունը, սակայն այս խոսքերը փորձերի վրա հիմնված եմ ասում»:

Ընկերոջ կատակին՝ դերասանությամբ և նկարչությամբ զբաղվելու մասին (տե՛ս փետրվարի 8), կատակով պատասխանում է. « «Անուշ» պոեմայիդ մասին ես հարցնում, է՛, ես ի՞նչ կարող եմ ասել, քանի որ բովանդակության հետ հիմնովին ծանոթ չեմ: Սակայն էլ ինչ հարկավոր է քեզ բանաստեղծությամբ կամ դերասանությամբ պարապելը, քանի որ նկարչությունը ավելի է աջողում քեզ, մի խոսքով՝ Այվազովսկին փաս էլի, նկարածիդ վրա հայիլ-մայիլ էլանք, տնաշեն, էդ թավուր շնորիք ունես էլ ո՞ր օրին ես պահում»:

ՈՒՀ 4, 296-299:

Փետրվարի 18. – 3. Խերոդինյանի նամակը **Թումանյանին՝ Մծաբա գյուղից (Սոխումի և Կրասնոդար, Գուդաուտայի շրջան):**

Հետաքրքրվում է **Թումանյանի ընտանիքով**, գյուղով, գյուղի դպրոցով: Հիշատակվում են **Գաբոն**, **Բարսեղ Քամալյանցը:**

ԳԱԹ ԹՖ, 1392 (350 լր.):

Փետրվարի 22, Թիֆլիս. – Գրում է «Երգչի վրեժը» («Ծանր հեծության ժամանակների...») բանաստեղծությունը:

Առիթը հավանաբար **Խաչ. Մալումյանի՝ «Մշակում»** տպագրված հայտնի «ակնարկն» է:

ԵԼԺ 1, 84, 565, ԱԻ, 269

Փետրվարի 24.— 3. Ստեփանյանի նամակը **Թումանյանին՝ Շուշիից:**

Գրում է, որ փետրվարի 24-ին ստացել է **Թումանյանի նամակը (տե՛ս փետրվարի 17-20):** Հայտնում է, որ գրքերից վեցը

վաճառվել են 15 % -ով (ապառիկ): Խնդրում է Խիզանյանին շուտ-շուտ տեսնել և ինչ որ տալու է, տա. «Մեծն էլ, փոքրն էլ»:
ԳԱԹ ԹՖ, 2002 (446 լր.):

Փետրվար, Թիֆլիս. – Սկսում է աշխատակցել «Մուրճ» ամսագրին:

Վարում է ամսագրի բանաստեղծության բաժինը:
ԵԼԺ 9, 65, ԱԻ, 289:

Փետրվար, Թիֆլիս. – Գրում է «Կանչ» («Եթե կաս, աստված...») բանաստեղծությունը:

Ինքնագիրը պահպանվել է «Մուրճի» արխիվում: Ինքնագրի վրա «Չթույլատրված» մակագրությունը վկայում է, որ գրաքննությունը արգելել է բանաստեղծության տպագրությունը:

ԵԼԺ 1, 85, 565:

<Մարտի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Մ. Ասլիբեկյանին (չի պահպանվել):

Հանդիմանում է ընկերոջը, թե ինչո՞վ է զբաղված, որ ուշադիր չէ իր եղբոր նկատմամբ:*

* Նամակի բովանդակությունը՝ ըստ Մ. Ասլիբեկյանի՝ մարտի 12-ի պատասխան նամակի:

ԳԱԹ ԹՖ, 936 (250 լր.):

<Մարտի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Մ. Ա. Թառայանին (չի պահպանվել):

Բովանդակությունն անհայտ է: Պահպանվել է այդ նամակի պատասխանը (տե՛ս մարտի 13):

ԳԱԹ ԹՖ, 1207 (496(3 լր.):

Մարտի 2, Թիֆլիս. – Նամակ Կամենեց-Պոդոլսկ՝ Ան. Աբովյանին:

Հայտնում է իր կարծիքը Ան. Աբովյանի «Մտքիս հիշատակարանը» և «Չայնիկ» ստեղծագործությունների մասին: Խորհուրդ է տալիս. «...Ինչ որ զգաս՝ այն գրիր: Քո մի պակասությունդ՝ այն է, որ ուզում ես ամեն բան միանգամից ասել կամ շատ բան ասել միաժամանակ»: «Չայնիկը» հավանել է և

մտադիր է հանձնել «Նոր-Դարին»:

Իր մասին գրում է. «Իմ ընտանեկան կյանքի մասին գուժելու բան չունեմ. սակայն այնքան թախծոտ եմ, որ եթե կարողանայի սրտիցս մի քանի խոսք հանել այս թղթի վրա քեզ հասցնելու, համոզված եմ, որ թուղթը կայրվեր»:

«Անուշի» ձեռագրից հատվածներ է ուղարկում ընկերոջը, այդ թվում ծոնը (տե՛ս ԵԼԺ 1, 87, 566).

ԱՆՈՒՇ

(Նվեր իմ ընկեր Ան<ուշավանին>)

Սիրելի՛ ընկեր, շատ ոգևորվել,
Շատ ես հառաչել դու նրա մասին,
Որ այսօր հոգուս թռիչք է տվել,
Որ պիտի երգեմ ես քո առաջին:

Բայց ես չեմ կարող այնպես հառաչել
Անգոր բառերով անվարժ տողերում.
Եվ ահա, ինչ որ գրչով նկարել,
Այն եմ սրտալի քեզ նվեր բերում:

Ընդունիր, հոգիս, նրա ծայները
Գուցե ականջիդ հարազատ հնչեն,
Հիշեցնեն անցած օրերի սերը,
Եվ քեզ քո սիրած տանջանքով տանջեն:

Մտադրություն ունի «Անուշը» տպագրել «Մուրճում»:
ԵԼԺ 9, 66-69, 501-502:

Մարտի 7, Թիֆլիս. – Գրում է «Պատվեր» («Կանա բանտի խորքից ելած հառաչանք...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 88, 566:

Մարտի 7. – Դ. Շահլամյանի նամակը Թուրանյանին՝ Դսեղից:

Դժգոհում է, որ ընկերոջից նամակ չի ստանում. «Կարծես թե ես էլ քո ընկերը չլինեմ. այնպես ես մոռացել: Ինչ է, ձեր տանը

գրիչ չկա, թե թանաք»: Ուզում է իմանալ՝ Թումանյանի գրքերից որքանն է վաճառվել, որքանը մնացել:

Մանրամասն ներկայացնում է գյուղի ուսումնարանի անմխիթար վիճակը: Խնդրում է հայտարարություն տալ թերթում, որ Դսեղի ուսումնարանը այրվել է: «Տավարի կոտորածի, ցորենի պակասուքի» պատճառով գյուղացիները անկարող են իրենց սեփական միջոցներով նոր ուսումնարան կառուցել, ուստի ուսումնասեր մարդկանց ուշադրությունը պիտի հրավիրել: Ուզում է Թումանյանի կարծիքը՝ այդ նպատակով փող հանգանակելու մասին:

Պատմում է, որ Երվանդի հարսանիքին լավ քեֆ են արել, ինքն էլ խաչեղբայրն է եղել: «Գիտեմ, Վահանի* մասին կիետաքրքրվես. նա ծույլ տղա է. այբ բենը շատ լավ սովորել է և բոլոր գրերը ճանաչում է, բայց դասը բոլորովին չի սովորում, կարծես այդ բավական չէ, տանեցոց ասում է, թե վարժապետը ծեծում է... աշխատում են լավ սովորի. միայն նա չէ սովորում»:

* Խոսքը Թումանյանի փոքր եղբոր մասին է, որի սովորելու խնդիրը միշտ հուզել է բանաստեղծին:

ԳԱԹ, ԹՖ, 1826 (419ա, լր.):

Մարտի 12. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Բանաստեղծի՝ մարտի 2-ի նամակի պատասխանն է:

Թումանյանի գովեստը իր «Չայնիկի» մասին «մասխարա» է համարում, ապա ավելացնում. « «Նոր-Դարին» տալու համար, ինչպես գրել ես, «Չայնիկը» բավական անմշակ է, ուստի տալուց առաջ, լավ կանեիր, եթե նեղություն հանձն առնեիր խորթ ու բորդերը հարթելու»: Խորհուրդ է հարցնում, թե ինչպես ավելի լավ գրի. «Իհարկե, մասնավորապես իմ կյանքից գրելու համար ինձ կարելի է, որ աջողվի, բայց խնդիրը նրանումն է, թե ուրիշ ի՞նչ կողմնակի կամ ուղղակի հարցեր էլ շոշափեմ կամ ուրիշ սազական ինչ նյութ և ինչ կերպ հետը կցեմ, որ գրածներս մերկ մասնավորական չլինեն»:

«Անուշը» «Մուրճում» տպելու բանաստեղծի մտադրությանը պատասխանում է. «... Պոեմայիդ սկզբի գլուխներից փոքր ի շատե մի հավաքական գաղափար կազմելով, եթե ինձ

կլեսես, խորհուրդ չեմ տալ «Մուրճի» կամ մի այլ ամսագրի մեջ տպելու: Իմ կարծիքով այսպիսի մի գեղեցիկ պոեման, որը *ճիշտ* գարդ էր կազմելու քո «Բանաստեղծությունների» II հատորի համար, ամսագրում տպվելով անշուշտ կորցնելու է յուր հարազատությունը...»:

ՈՒՅ 4, 299-301:

Մարտի 12. – Մ. Ասլիբեկյանի նամակը Թումանյանին:

Բանաստեղծի՝ մարտի սկզբի անհայտ նամակի պատասխանն է: Շնորհակալություն է հայտնում Թումանյանին՝ իր եղբոր նկատմամբ ուշադիր լինելու համար. «Իբրև ազնիվ ընկեր ուշադրություն եք դարձնում եղբորս վրա»:

ԳԱԹ ԹՖ, 936 (250 լր.):

Մարտի 13. – Մ. Թառայանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Ներողություն է խնդրում բանաստեղծի նամակի պատասխանը ուշացնելու համար՝ քաղաքից բացակա լինելու պատճառով, և խնդրում է 15 օրինակ Թումանյանի հրատարակած գրքույկից՝ վաճառելու համար:

ԳԱԹ, ԹՖ, 1207 (496(3 լր.):

Մարտի <13>, Թիֆլիս. – Հանդիպում է Ուզունլար գյուղի դպրոցի հոգաբարձու Ե. Խարազյանցին. «... ափսոս, որ շատ կարճ ժամանակ ունեցանք իրար հետ խոսելու երկու տիեզերափչակ բանաստեղծներ»:

ԵԼԺ 9, 70:

Մարտի 15, Թիֆլիս. – Երեկոյան ժամը 10-ին ծնվում է Թումանյանի երկրորդ զավակը՝ առաջին դուստրը՝ Աշխեն Թումանյանը:

ԵԼԺ 9, 69:

Մարտի 15, Թիֆլիս. – Նամակ Կամենեց-Պոդոլսկ՝ Ան. Աբովյանին:

Գրում է իրենց ընդհանուր կենցաղային հոգսերի մասին և թե ինչպես է ընթանում գրքերի վաճառքը. «Գրքերը կամաց վերջանում են. 250 հատ է մնացել, բայց փողերը ավելի կամաց

են գալիս»: «Երկչոտ մանուկ» վերնագրով մի ոտանավոր է գրել (անհայտ է): Դժգոհում է կոնսիստորիայում իր տաղտկալի ու ծանրաբեռնված աշխատանքից: Տեղեկացնում է, թե իր «Բանաստեղծություններ» ժողովածուն ինչպիսի արձագանք է գտնում ընթերցողների շրջանում:

ԵԼԺ 9, 69-72:

Մարտի 16. – Ան. Աբովյանի նամակ-բացիկը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Ուղարկում է իր «Չայնիկ» գրվածքից բաց թողնված մի մաս և խնդրում է ցանկացած տեղից ավելացումներ անել: Երաշխավորում է վարդաբլուրցի Եղիա Ջոհրաբյանին, որ «Չերդ բարձրության հետ ծանոթանա»:

ԳԱԹ ԹՖ, 757 (444):

Մարտի 24, Թիֆլիս. – Գրում է «Նվեր Ան. Աբ.-ին» բանաստեղծությունը:

Հանձնում է «Տարագին» տպագրության և ետ վերցնում՝ ստանալով խմբագրության մերժումը՝ «թուփն ինչպե՞ս կխոսա» պատճառաբանությամբ: «Տարագի» խմբագիր Տիգրան Նազարյանի մերժման պատճառներից մեկն էլ այն էր, թե Թումանյանը լավ ստեղծագործությունները միայն «Մուրճին» է տալիս (տե՛ս ԵԼԺ 9, 75):

ԵԼԺ 1, 89, 567:

Մարտ. – Տպագրվում է «Ախ, ես երանի...» բանաստեղծությունը («Մուրճ», 1891, թիվ 3, էջ 341):

ԵԼԺ 1, 83, 565:

<*Ապրիլի սկիզբ*>.- Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1891, թիվ 4, էջ 504) «Գութանի երգը» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 26, 547:

<*Ապրիլի սկիզբ*>, *Թիֆլիս.* – Մտադրություն «Մուրճին» տպագրության հանձնել «Կալի երգը» բանաստեղծությունը:

ԵԼԺ 9, 74, 503:

Ապրիլի 10, Թիֆլիս. – Գրում է «N N-ին» («Կյանքի հո-

սանքն յուր ընթացքում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 90, 567:

Ապրիլի 13. – Մասնակցում է Հրատարակչական ընկերության տարեկան ընդհանուր ժողովին:

Ընկերության 120 անդամների հետ գտնվում էր դահլիճում, ուր հայտնվում է նախագահը և հայտնում, որ ժողովը չի կայանալու: «Չես կարող երևակայել այն գոռում-գոչումը, ծվոցն ու ծղրտոցը, հռհռոցն ու բղավոցը, ծափն ու ծիծաղը, որ կարող էր սատանաներին դժոխքից խրտնացնել ու փախցնել»: Ցերեկով ժողովին ներկայանում է «Նոր - Դարի» խմբագիր հրատարակիչ Սպանդար Սպանդարյանը իր «համհարզներից կազմված վարչության հետ միասին»:

Վարչության ընտրությունները կայանում են երեկոյան: Նախագահում է Արծրունին: Թումանյանը երեկոյան նիստին նույնպես մասնակցում է: Ընկերության նախագահ է ընտրվում Ալ. Քալանթարը (մինչ այդ 1889-1890 թթ. Փիլ. Վարդապարյանն էր): Վարչության անդամներ են ընտրվում Արշակ Տեր-Գրիգորյանը, Արշակ Թադևոսյանը:

«Նոր-Դարը» այդ ընտրությունները համարում է ապօրինի:

ԵԼԺ 9, 73, 503:

Ապրիլի 15, Թիֆլիս. – Գրում է «Սարերում» («Մութը իջավ, գետինն առավ ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 92, 568:

Ապրիլի 16, Թիֆլիս. – Նամակ Ան. Աբովյանին:

Գրում է Մակար կաթողիկոսի մահվան, Հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովի (տե՛ս ապրիլի 13) մանրամասնությունների մասին: Ինչպես նաև «Նվեր Ան. Աբովյանին» բանաստեղծությունը (տե՛ս մարտի 24) առանց վերնագրի ու առաջին տան: Եվ քանի որ «Տարագի» խմբագրի կարծիքով թուփը չէր կարող խոսել, Թումանյանը որոշել է խոսեցնել գարնանը:

ԵԼԺ 9, 72-75, 503:

Ապրիլի 20. – Մ. Ասլիբեկյանի նամակը Թումանյանին՝ Դիլիջանից:

Ներսիսյան դպրոցի դասընկերը շնորհավորում է բանաստեղծի Ջատիկը: Հարցնում է Մուշեղից:
ԳԱԹ ԹՖ, 937 (531):

Ապրիլի <20-21>, Թիֆլիս. – Նամակ ԱՆ. Արուսյանին (չի պահպանվել):

Գրում է «Տարագի» խմբագրի հետ ունեցած իր զրույցի մասին բանաստեղծության վերաբերյալ: Խոստովանում է, որ Ամենայն հայոց հայրապետի մահը շատ է դառնացրել իրեն, քանի որ կաթողիկոսը ինչ անձնավորություն էլ լիներ և ինչ թերություններ էլ ունենար, հարկավոր է ցավել..., մանավանդ որ մարդը տքնում էր հոգուտ ազգի:

Տեղեկություններ է հաղորդում Հրատարակչական ընկերության գործերի մասին:*

* Նամակի բովանդակությունը՝ ըստ ԱՆ. Արուսյանի պատասխան նամակի (տե՛ս ապրիլի 28):

ԳԱԹ ԹՖ, 759 (446):

Ապրիլի 25, Թիֆլիս. – Գրում է «Երբ տեսնում եմ մարդ տակավին...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 93, 568:

Ապրիլի <26-27>, Թիֆլիս. – Բաց նամակ Ա. Ղլտճյանին (չի պահպանվել):

Նամակի մասին հիշատակում է Ղլտճյանը իր պատասխանում. «Ստացա վերջին բաց նամակդ ամսույս 1-ին (մայիսի), շատ իրավացի է ասածներդ: Այս երեկո կուղարկեմ ուզածդ. քաղաք (Ալեքսանդրապոլ) եմ գնալու դորա համար»:

ԳԱԹ ԹՖ, 1557 (381/3 լր.):

Ապրիլի 28. – ԱՆ. Արուսյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Բանաստեղծի՝ ապրիլի <20-21>-ի նամակի պատասխանն է: Գրում է հայրենիքի կարոտի մասին: Արհամարիում է «Տարագի» խմբագրի «Տիկլանի» կարծիքը Թումանյանի բանաստեղծությունների մասին: Ցավ է հայտնում կաթողիկոսի մահվան առիթով:

ԳԱԹ ԹՖ, 759 (446):

Ապրիլ. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1891, թիվ 4, էջ 593-596) «Ախթամար» բալլադը:
ԵԼԺ 2, 100, 553:

Մայիսի 4. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Բաշ-Շիրակից:

Խնդրում է հետաքրքրվել, թե ինչու չեն ուղարկում Ներսիսյան դպրոցի ուսուցչի իր վկայականը:

ԳԱԹ ԹՖ, 1557 (381(3 լր.)), ԹԹ 3212:

Մայիսի 6, Թիֆլիս. – Մասնակցում է Գր. Արծրունու գործունեության 25-ամյա հոբելյանի առթիվ ժողովարանում տրված ներկայացմանը:

Բանաստեղծը հետագայում հիշում է. «... Արծրունու հոբելյանին, երբ հուշարարը հրաժարվում էր յուր պաշտոնը կատարելուց, հոբելյանի առթիվ ժողովարանում տրվելիք ներկայացման ժամանակ, ես, չնայելով իմ ընտանեկան դրությանս, աչքի առաջ ունենալով իմ պաշտոնից զրկվելն ևս, ներկա լինելով կոնսիստորիայի և առաջնորդարանի կատաղի թշնամական սպառնալիքներին և ցույցերին հոբելյանի և հոբելյարի դեմ, որն անշուշտ երկյուղ է ազդելու մի գրագրի, այո՛, ես հանձն առա հուշարարի պաշտոնը և կոնսիստորից սպառնալիքներով բեռնավորված գնացի ժողովարան իմ հարգանքս մատուցանելու...»:

ԵԼԺ 9, 89:

Մայիսի 7, Թիֆլիս. – Գրում է «Կորուստից հետո» («Խնդրիր, սիրտ իմ կարոտակեզ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 94, 568:

Մայիսի 14. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Բաշ-Շիրակից:

Գրում է, որ իրենց պարտքն է իրար օգնել՝ «դու ինձ, ես քեզ», ինչպես նաև Թումանյանի բանաստեղծություններից ստացած իր տպավորությունները. «Կարդացի բանաստեղծություններդ: Կարդացի քննադատությունը, վնաս չունի, լավ է, իհարկե, կան նաև ավելորդ նկատողություններ:

Հիանալի էր վերջինը՝ «Արի գութան, վարի գութան»-ը: Երգիր, սիրելիս, գյուղացու կյանքը, նրա հոգսն ու վիշտը, նրա տանջանքն ու երջանկությունը: Երգիր, շատ երգիր, այդ մեր ամենիս սրտին մոտիկ»:

ԳԱԹ ԹՖ, 1558 (381/4 լր.), ԹԹ 3213:

Մայիսի 22. – Մ. Ասլիբեկյանի բաց նամակը Թումանյանին: Խնդրում է Գոլովինսկի պողոտայում բնակվող Տեր-Սարգսյանին հայտնել հոգաբարձության խնդրանքը՝ ուղարկել Թումանյանի գրքերի հաշիվը:

ԳԱԹ ԹՖ, 938 (532):

Մայիսի 27, Թիֆլիս. – Գրում է «Հրաժեշտ» («Այստեղ ահա կբաժանվենք...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 96, 569:

Մայիսի 27. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Վիեննայից:

Գրում է, որ զբաղվում է գինու վաճառքով, քաղաքից քաղաք է անցնում: Մտադիր է սեպտեմբերին գալ Թիֆլիս:

ԳԱԹ ԹՖ, 760 (447):

<Գարուն> .-3

Գրում է «Հուսահատությունը տիրել է կյանքին...» բանաստեղծությունը:

Նվիրված է Պետրոս Ադամյանին, որն այդ օրերին մահավերջ էր հիվանդ էր:

ԵԼԺ 1, 95, 569:

Հունիսի <4>. – Գրում է «Խեղճ Ադամյան» («ճանաչում էի ես նրան, ընկեր...») բանաստեղծությունը:

Հունիսի 4-ը Պետրոս Ադամյանի մահվան օրն է:

ԵԼԺ 1, 97, 569:

Հունիսի 4. – Ե. Ջոհրաբյանի նամակը Թումանյանին՝ Գորիից:

Հաղորդում է տեղեկություններ Երվանդի կամ Սենեքերիմի մասին: Այդ տեղեկություններն ստացել էր Ջալալօղլու քահանայից: Գրում է. «Ձեր բանաստեղծությունները կարդացի

և կարդում եմ ..., գյուղական կյանքի նկարագրությունները երբեմն խիստ գրավիչ են և գավառական դարձվածքների պատշաճ գործածությունները»:

ԳԱԹ, ԹՖ, 1194 (329 լր.):

Հուլիսի <2-3>. – Թիֆլիսից Դսեղ մեկնելիս իջևանում և գիշերում է թուրքաբնակ Սարվան գյուղում:

Այդ մասին կնոջը գրում է. «Առաջին գիշերը Սարվանում անտանելի էր <...> մի կողմից՝ միտքս էր տանջում ինձ, սիրտս էր կտրատում, մյուս կողմից՝ մոծակն ու լուսն, և ես ամբողջ գիշերը անքուն նստեցի ֆուրգոնում: Ժամը մոտավորապես մեկին թեյ պատրաստեցին, ֆուրգոնի մեջ մթնում խմեցի, բայց հետո, երբ մոմ վառվեցավ, նայեցի, բաժակի տակ մնացած ցեխի մեջ լիքն էին թիթեռներ և զանազան միջատներ...»:

ԵԼԺ 9, 75:

Հուլիսի 4. – Հասնում է Ջալալօղլի, որտեղ ձի է ձեռք բերում և ուղևորվում է Դսեղ:

ԵԼԺ 9, 76:

Հուլիսի <5-6>. – Հյուրընկալվում է Վարդաբլուր գյուղում:

ԵԼԺ 9, 76:

Հուլիսի 7. – Հասնում է Դսեղ:

Մայրը սարն էր գնացել: Տանը պարզում է, որ ոչ այնքան իրեն, որքան Օլգային ու երեխաներին են սպասելիս եղել:

ԵԼԺ 9, 76:

Հուլիսի 7. – Ան. Աբովյանի նամակ-երկտողը Թումանյանին՝ Լիտիցայից:

Ուղարկում է իր նոր հասցեն:

ԳԱԹ ԹՖ, 761 (448):

Հուլիսի 7, Դսեղ. – Գրում է «Դերասան Ադամյանի մահը» («Ոգևորողն ընկավ արդեն...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 98, 570:

Հուլիսի <8-10>. – Կնոջ համար ուղարկում է գաթա, մեղր և սերուցք:

ԵԼԺ 9, 76, 80-81:

Յուլիսի <8-20>. – Ամեն օր որսի է գնում:
ԵԼԺ 9, 78:

Յուլիսի 11, Դսեղ. – Նամակ կնոջը՝ Օ. Թումանյանին:
Գրում է ճանապարհի դժվարությունների մասին: Շատ է
ափսոսում, որ կինն ու երեխաներն էլ իր հետ գյուղում չեն. «Արի
դարձյալ, որ առանց քեզ կյանքը դառն է և անձուկ...»:
ԵԼԺ 9, 75 – 77:

Յուլիսի 11, Դսեղ. – Նամակ «Մշակի» աշխատակից, հրա-
պարակախոս Ա. Ապրեսյանցին (չի պահպանվել):
Գրում է, որ վաճառելու գրքերը չուղարկի մինչև իր Թիֆլիս
գալը. ուղարկի միայն բաժանորդներինը:
ԵԼԺ 9, 76:

Յուլիսի 17, Դսեղ. – Գրում է «Աստղերի հետ» («էյ աստ-
ղեր, աստղեր...») բանաստեղծությունը:
Թումանյանը իր այդ բանաստեղծության մասին դատերն
ասել է.. «Հիշում եմ «էյ աստղերը» գրելու օրը: Դսեղ էի. Ձաղի
ծորն էի գնացել որսի: Կալի ժամանակ էր. ծորից դուրս եկա մեր
կալը. կալի մոտ էլ դագան էր. աստղալից գիշեր էր, պառկեցի
դագից հեռու, կալի մոտ ու էնտեղ էր, որ գրել եմ «էյ աստղերը...»
(ՆԹ 32, էջ 240):
ԵԼԺ 1, 99, 570-571:

Յուլիսի 20, Դսեղ. – Նամակ Օ. Թումանյանին:
Գրում է, թե իր հարազատները, հատկապես մայրը և
տատը ինչքան են վշտացած, որ Օլգան և երեխաներն էլ
գյուղում չեն. «...մի լավ բան ուտելիս իսկույն լացակումած մայրս
ասում է՝ քոռանամ ես, յարաբ Օլես էլ ուտում ա, էրնեկ ըստեղ
ըլի մի քիչ ուտի: Մի հով տեղ ման գալիս՝ յարաբ երեխեքս էն
շոգումը ինչ են անում. մի տեղ ման գալիս՝ էրնեկ երեխես (քեզ
համար է ասում) էստեղ ըլի ման գա: Մի խոսքով ես մնացել եմ
ապշած»:
Դժգոհում է, որ իր գրած երկու նամակները կնոջից ան-
պատասխան են մնացել. «Գուցե չգիտես, թե քո նամակը ինչ է
ինձ համար, այդ պատճառով ես այդքան անտարբեր»:
ԵԼԺ 9, 77-79:

Յուլիսի 20, Դսեղ. – Առավոտյան գնում է անտառ՝ մոռ
հավաքելու: Բաղ է որսում: Սարում այցելում է մորը և այնտեղից
նրա հետ վերադառնում:
ԵԼԺ 9, 78:

Յուլիսի 20, Դսեղ. – Համագյուղացի Գաբոյի հետ ութ գա-
թա և երկու խաչգաթա է ուղարկում կնոջ ու երեխաների համար:
ԵԼԺ 9, 78:

Յուլիսի 20, Դսեղ. – Մտադրություն մինչև օգոստոսի 7-ը
լինել Թիֆլիսում:
Ծնողներն ու բարեկամները խնդրում են ավելի երկար
մնալ, նույնիսկ առաջարկում են բժշկի թուղթ ներկայացնել
կոնսիստորիային:
ԵԼԺ 9, 78 – 79:

Յուլիսի 20 կամ 21, Դսեղ. – Հյուրընկալում է Շուլավերի
տանուտեր, օրիորդաց դպրոցի հիմնադիր, հասարակական
գործիչ և զավակներից մեկի կնքահայր Ս. Պառավյանցին:
ԵԼԺ 9, 78:

Յուլիսի <24-27>. – Դսեղից գալիս է Ջալալօղլի՝ մասնակ-
ցելու Սուրբ Սարգսի ուխտին:
Իջևանում է հորաքրոջ աղջկա՝ Եղիսաբեթի տանը: Բարե-
կամների ու հարազատների՝ հորաքրոջ, նրա ամուսնու՝ Սարգիս
Հակոբյանի, վերջինիս քրոջ՝ Վառինկայի, Աղասի Հովվյանի և
այլոց հետ ուրախ ու զվարճալի «ժամեր է անցկացնում»:
ԵԼԺ 9, 79-81:

Յուլիսի 28. – Մոր, քրոջ, տատի և բարեկամների հետ
Ջալալօղլուց գնում է ուխտի՝ Սուրբ Սարգիս:
Հույս ուներ այնտեղ տեսնել Հովհաննես քահանա Մարտի-
րոսյանին, որը, սակայն, այդ տարի չէր եկել: Ուխտի էր եկել նաև
կնոջից նամակ ստանալու ակնկալիքով: Երեկոյան, երբ ուխտից
վերադառնում են Ջալալօղլի, Վարսենիկը նրան հանձնում է
երկու նամակ՝ մեկը կնոջից, մյուսը Անուշավան Աբովյանից (այդ
նամակները չեն պահպանվել):
ԵԼԺ 9, 79:

Յուդիսի 28. – Սուրբ Սարգսից Ջալալօղլի վերադառնալու ճանապարհին ծիով հանկարծ հայտնվում է երկու կառքերի արանքում:

Վտանգավոր փորձությունից դուրս է գալիս անվնաս. «Բարեբախտաբար ուրիշ վնաս չպատահեց, միայն շալվարս վերևից մինչև ներքև ճղվեցավ. այսօր Վառինկի* մայրը շինեց»:

* Վառինկան Թումանյանի հորաքրոջ անուսնու քույրն էր:

ԵԼԺ 9, 80:

Յուդիսի 29, Ջալալօղլի. – Նամակ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է Սուրբ Սարգիս կատարած ուխտի և Ջալալօղլիում անցկացրած օրերի մասին: Տեղեկացնում է, որ մայրը իրենց համար նվեր է պատրաստել. «Մայրս քեզ համար բաներ էր պատրաստել <...> ես չգիտեմ, ո՞ր խալիչեն ջոկեմ 5-6 խալիչաներից, չգիտեի, ո՞րն այդտեղ ավելի կհավանեիք, բայց որովհետև մայրս ստիպում էր, որ առայժմ մեկը բերեմ մեր կարավաթի առջև ոտներուս տակը ձգելու, ես վերջի փոքրը և ամենից կոտրը...»:

ԵԼԺ 9, 79-81:

Յուդիսի 29, Ջալալօղլի. — Կնոջն ուղարկում է 1 ռուբլի. խոստանում է քաղաքում լինել մինչև օգոստոսի 8-ը:

ԵԼԺ 9, 81:

Յուդիսի 29, Ջալալօղլի. – Աղասի Յովվյանի հետ «մի քանի վիզիտներ» է անում:

ԵԼԺ 9, 79:

Օգոստոսի <1-5>. – Ջալալօղլուց Դսեղ ճանապարհին երկու-երեք օր կանգ է առնում Արդվի գյուղում:

Կնոջը գրում է. «Երկու, թե երեք օր մնացի Արդվի գյուղում՝ Յովվյանցների մոտ, չէին թողնում, հետո նրանք եկան հետս մեր տանը մի քանի ժամանակ մնալու, բայց նրանք մեր գյուղից մի օրից հետո վերադարձան իրենց գյուղը...»:

ԵԼԺ 9, 82:

Օգոստոսի 3. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ սրբազանի մահվան մասին: Նորդարականները խնդրել էին սինոդին՝ նրան թաղել Թիֆլիսի Բաղեշ վանքի բակում:

ԹՏԹ, 2631:

Օգոստոսի <3-6>. – Ներսիսյան դպրոցի որդեգիրները իրենց ուսուցիչներով՝ 20-25 հոգի, գալիս են Դսեղ՝ գյուղի հնություններն ու ավերակները տեսնելու, և հյուրընկալվում են Թումանյանների տանը:

Բանաստեղծը գրում է կնոջը. «Աշակերտները երկու օր մեզ մոտ մնացին»:

Խումբը ղեկավարում էին Իս. Չարությունյանը, Արշակ Սպարապետյանը և Կարապետ Աբուլյանը: Թումանյանը իր բանաստեղծություններից նվիրում է խմբի ղեկավարներին և աշակերտներ Ավ. Ապրեսյանին, Ստ. Դեմուրյանին, Գր. Աղաջանյանին և ուրիշների: Այդ խմբին Թումանյանը դիմավորել է ուսուցիչ, բանահավաք Եղիշե Երզնկյանի հետ:

Թումանյանը ուղեկցում է նրանց Ս.Գրիգոր հնադարյան վանքը: Նրանց հետ էր նաև գյուղի տանուտերը, որ խորհուրդ է տալիս բանաստեղծին օգտվել ժողովրդական անսպառ զրույցներից, հեքիաթներից և ավանդություններից. «Օգտվեցեք դրանցից, զրի առեք այդ նյութերը, մաղեցեք, զտեցեք, հոգի ու շունչ տվեք»:

Թումանյանը Յովվյանի հետ երգում է Սարգիս Կուկունյանցին նվիրված Բ. Թադևոսյանի «Երբ ավելոծ ծովի վրա» երգից հատված, որը սովորեցնում է երեխաներին:

ԵԼԺ 9, 81-82. ԹԺՅ, 381:

Օգոստոսի 6. – Շ. Երզնկյանի նամակը Թումանյանին՝ Չաղպատից:

Խնդրում է իր խնդրագրին համար տալ և պահանջել ստացական կամ երկու օրինակ իր պայմանագրից:

ԳԱԹ ԹՖ, 1166 (324 լր.), ԹԹ 2502:

Օգոստոսի 7, 8, Դսեղ. – Նամակ կնոջը՝ Օ. Թումանյանին: Գրում է Շուլավերով Թիֆլիս գնալու մտադրության, հողմախառն ու հորդ անձրևների, սար ու ձոր անվերջ ոտնատակ անելու, որսի գնալու և իր առօրյայի մասին:
ԵԼԺ 9, 82-84:

Օգոստոսի 13, Թիֆլիս. – Տպագրվում է Գր. Արծրունու ֆելիետոնը՝ Ասիացի ստորագրությամբ:
Խիստ քննադատում և ծաղրում է Թումանյանի «Կուրծքս երբեմն եռ է գալիս ու հուզվում...» բանաստեղծությունը:
«Մշակ», 1891, թիվ 90, էջ 2-3:

Ամառ, Թիֆլիս. – Ծանոթանում է Գ. Ասատուրի հետ վերջինիս եղբոր տանը:
Գ. Ասատուրը հիշում է, թե ինչպես բանաստեղծին շրջապատել էին 5-6 աշակերտուհիներ: Նրանց մեջ էր նաև Օլգա Տեր-Աստվածատրյանը: 15-ամյա այդ աղջիկը (Գևորգ Ասատուրի հորեղբոր դուստրը) արժանանում է բանաստեղծի առանձնահատուկ ուշադրությանն ու համակրանքին: Հաճախ է հաճույքով ունկնդրում նրա՝ դաշնամուրի նվագը:
ԹԺՀ, 351:

Ամառ. – Թումանյանն ընտանիքով հանգստանում է Դսեղում:
ԹԺՀ, 231:

Ամառ, Դսեղ. – Երկտող Ջալալօղլի՝ Ան. Աբովյանին:
Հասցեատերը հիշում է. «Ծննդավայրս հասնելուց հետո, երկու շաբաթ անց, Թումանյանից մի փոքրիկ թղթի կտոր եմ ստանում հետևյալ բովանդակությամբ՝ «Ե՞ս, թե՞ դու»: Միտքը հասկացա, այսինքն՝ ի՞նքը գա ինձ տեսության, թե՞ ես գնամ»:
ԹԺՀ, 231:

Սեպտեմբեր 10. – Ս. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Թումանյանին է ուղարկում իր թարգմանությունները, որ նա տպագրի «Մուրճում»:

Գրում է. «Այդտեղ եղած ժամանակս էլ ասում էի, որ քո բանաստեղծության գրավիչ, համակրելի և էական կողմն է՝ ուղղության տեսակետից՝ ժողովրդականությունը, իսկ ձևի արտահայտության և ոճի կողմից՝ բանաստեղծական ազատ լեզուն, ճոխ բաների գեղուն շարահարությունը և անբռնագրոսիկ բաշխումն մտքի ու զգացմունքի:

Անշուշտ, այս վերջինով չպետք է բավականանաս և ամեն բան վերջացած համարես. չկարծես, թե մի քանի մանուկ և երեխայամիտ անձանց գովասանությունը քեզ համար վճռական գրավական կլինի»:

ԳԱԹ ԹՖ, 1536 (380 լր.):

Սեպտեմբերի 17. – Ստ. Սկրտչյանի (Տեր-Միքայելյան) նամակը Թումանյանին՝ Դսեղից:

Ստ. Սկրտչյանը ուսուցիչ է եղել Դսեղում: Նամակը գրել է առանց Թումանյանին անձամբ ծանոթ լինելու. «Նշանվածս օրից Ձեր և Ձեր ծնողի և իմ հոգևոր հոր՝ տեր Թադևոսի բարի ու մարդասեր հոգու համբավը բավականին ճանաչված և այժմ ամսիս 12-ից սկսած Ձեր ծնողի հյուրասիրությանն արժանացած լինելով՝ վստահում եմ սույն նամակը գրել՝ հուսալով, որ ներողամիտ կգտնվեք դեպի ինձ»: Թումանյանի գործերից հաջողված է համարում «Չարամիտներին» և «Միամիտներին», որովհետև առաջինները վերջիններին իրենց ձեռքին խաղալիք են դարձնում, հասարակության ամեն մի անշահասեր մշակի հալածում: Ինքը ելիզավետալու գավառի Բանանց գյուղից է, 13 տարի ուսուցչությամբ պարապած մեկը: Գյուղը գործ է ուղարկել կոնսիստորիային՝ իրեն քահանա ձեռնադրելու համար, և անպատասխան մնացել: Մինողը պահանջել է գործը, բայց ինչ է եղել, ինքը չգիտի, խնդրում է հետաքրքրվել իր գործով և եթե արգելք կա, օգնել վերացնելու. «Ձեր տանը Ձեր թանաքով և գրչով եմ գրել: Գրիչը մաշված է, իսկ ես նոր գրիչ չունեի: Անճոռնի և տգեղ գրությանս ներողամիտ եղեք: Այսուհետև, երբ լավ գրիչներ ուղարկեք ինձ համար, գեղեցիկ կգրեմ: <...> Ժողովրդին մատչելի անհրաժեշտ ընթերցանության համար գիրք չգիտեմ որտեղից ձեռք բերեմ՝ տոն օրերում և մանավանդ ձմեռ»:

վա երկար գիշերները կարողալու համար, դրանց մեջ պիտի լինի և Պալասանյանի «Հայոց պատմությունը»: Մեծահույս եմ»:

ԳԱԹ ԹՖ, 2244 (492(5 լր.):

Սեպտեմբերի 25. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Կողբից:

Բանաստեղծին է ներկայացնում ուղարկած գրքերի 38 օրինակի վաճառքի հաշվետվությունը: Գրում է նաև իր ուղևորության մասին՝ Էջմիածնից Երևան, Ալեքսանդրապոլ, Ղարս, Կողբ:

ԳԱԹ ԹՖ, 1559 (811):

Սեպտեմբեր, Թիֆլիս. – «Սուրճի» խմբագրատանը ծանոթանում է Փիլիպոս Վարդապարյանի հետ:

ԱԻ, 334:

<Սեպտեմբեր>. – Ան. Աբովյանը գալիս է Դսեղ՝ հանդիպելու Թումանյանին:

Միասին որսի են գնում, այցելում են Ս. Գրիգորի ավերակ վանքը:

Նախքան Թիֆլիս վերադառնալը Թումանյանը հոր հետ փոխայցելության է գնում Ան. Աբովյանին: Եգոր Խարազյանին էլ հետները վերցնելով՝ իջնում են ձորը՝ Դեբեդ գետում ձուկ որսալու:

ԹԺԴ, 231:

<Հոկտեմբերի 10 >. – Նամակ Ս. Ասլիբեկյանին (չի պահպանվել):

«Ստացա քաղցրացող նամակդ, որի մեջ ներկայանում են ընկերական անկեղծ սիրո զգացմունքները, ուստի հայտնում եմ անցած բոլոր շնորհակալություններս», – կարդում ենք պատասխան նամակում:

ԳԱԹ ԹՖ, 939 (250 լր.), ԹԹ 2611:

Հոկտեմբերի 10, Թիֆլիս – Գրում է «Երբ խոսում էիր, պատմում էիր ինձ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 100, 571:

Հոկտեմբերի 17, Թիֆլիս. – Ներկա է լինում ֆրանսիացի

հեղինակներ Էժեն Սյուլի և Պրիզարի «Փարիզի աղքատները» մելոդրամայի ներկայացմանը Թիֆլիսի վրաց ազնվականների՝ բանկի թատրոնում:

Թումանյանը գրում է Ան. Աբովյանին. «Անցած օրերը գնացի թատրոն, որովհետև այդ երեկոյան տպավորությունը մեծ եղավ ինձ վրա, ուզում եմ հիշատակել. ներկայացնում էին «Փարիզի աղքատներ» պիեսան: Թեև մամուլը չհավանեց (պիեսան, ոչ թե խաղը)*, որովհետև ֆրանսիական ռեպերտուարից դուրս է ընկած, բայց ինձ շատ ազդեց, քան թե նրանք, որ դուրս չեն ընկած, և ես այն երեկո զգացված էի»:

Ներկայացումից բացի՝ բանաստեղծին հուզում է նաև երկու հանգամանք. մեկ այն, որ ճեմասրահում շրջողներից ոչ մեկը չի նկատում մի հայ կնոջ չափազանց անվայելուչ պահվածքը «մի անճոռնի օֆիցերի հետ»՝ ամուսնու աչքի առաջ, մեկ էլ այն, որ իր հավանած գեղեցիկ օրհորդի մասին լավ կարծիք չի հայտնում իր ընկեր Փիրումյանը. Այո՛, այս երեք բանը ինձ շատ հուզեցին»:

* Մելոդրամայի մասին բացասական հոդված էր տպագրել «Մշակը» (1891, թիվ 118):

ԵԼԺ 9, 86-87, ԱԻ, 441:

Հոկտեմբերի 20. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Ուզունլարից:

Խնդրում է իմանալ, թե օձնեցի Մեխակ Դարչինյան Ջուրաբյանը որ թվի ծնունդ է. մոտ 19-20 տարեկան է:

ԳԱԹ ԹՖ, 762 (449):

Հոկտեմբերի 23. – Ստ. Տեր-Միքայելյանի (Մկրտչյան) նամակը Թումանյանին՝ Դսեղից:

Խնդրում է իր գործից (տե՛ս սեպտեմբերի 17) տեղեկություն տալ. ձեռքից եկածը չխնայել. «Այլև Ձեր բարեկամ տեր Հովհաննես հորն էլ իմ վիճակը նկարագրելով՝ միջնորդ ուղարկեք սրբազանի մոտ, որպեսզի գոնե այժմ Սինոդն գործս ուղարկիլ բարեհաճի»: Լսել է, որ Մամբրե սրբազանը չի կամենում քահանայացուների գործը ուղարկել Սինոդ, որովհետև քահանաներ շատ կան: Ինքն էլ խոստանում է իր ձեռքից եկածը անել. Դսեղում Վահանի հետ պարապել, քանի որ ուսումնարանը

դեռ բացված չէ: Խնդրում է եղբոր՝ Վահանի համար բոլոր առարկաների տեսքերը ուղարկել և Տեր-Սարգսյանի գեղագրության օրինակների վերջին տիպը: Հաղորդում է Ստեփան Մամիկոնյանի բարևները և խնդրում Ներսիսյան դպրոցի երրորդ դասարանի գրքերն ուղարկել, ինչպես նաև մի արկղ գրիչ՝ իր համար:

ԳԱԹ ԹՖ, 2245 (493/5):

Հոկտեմբերի 23, Թիֆլիս. – Նամակ Ուզունլար՝ ԱՆ. Արովյանին:

Տեղեկացնում է. «Սուքիաս և Ներսես եպիսկոպոսները կայսեր՝ սեպտեմբերի 19-ի ստորագրած բարձրագույն հրամանի համաձայն՝ զրկվեցան իրանց ունեցած բոլոր պաշտոններից <...> ամսույս 15-ին հիշյալ եպիսկոպոսները առանձին վազոնով, ժանդարմների հսկողության ներքո, գնացին Ռուսիայի խորքերը ամառանոց (աքսոր)»: Այնուհետև երկար գրում է պատճառների շուրջ տարածված ասեկոսեների մասին:

Հայտնում է, որ պատրաստում է «գրքի երկրորդ հատորը»: Այդ առիթով խոսք է բացում Արծրունու Ֆելիետոնի մասին (տե՛ս օգոստոսի 13): Մեկ ամ մեկ հերքում է իր հասցեին արված բոլոր քննադատական դիտողությունները. «...պետք է պատասխանեմ և պատասխանի վերջը «ամենագետ» Արծրունուն մի տուն ոտանավոր նվիրեմ իրան հանգի (որ գրել էր Հարոյի վրա),

Այն ժամանակ երբ վարում էի

ես պաշտոնը ֆելիետոնիստի,

Այնպիսի բաներ գրում էի,

Որ խելքս չէր կտրում իսկի»:

Անկախ այս ամենից՝ ինքը Արծրունուն ավելի է հարգում, քան նրանով կեղծ հիացողները: Հետո ավելացնում է. «Այնուամենայնիվ, ուրիշին հարգելուց առաջ ես ինձ եմ հարգում – իմ կարծիքս և իմ հասկացողությունս, ինչ չափով էլ որ կան: Ես իմ «ես»ը ո՛չ «Նոր-Դարի», ո՛չ «Մշակի», ո՛չ «Մուրճի» և ուրիշի ազդեցությանը չեմ զոհելու երբեք, բայց կհարգեմ և կպաշտեմ մինչև անգամ, եթե կա մի հանրօգուտ միտք, ուրիշ բան է, եթե դրանք մի մի Քրիստոս լինեին, թող ինձ *անգույն* անվանեն, ինչպես և կոչում են, որովհետև ոչ մեկի զինվորը չեմ (աստված փրկի, ազատի)»:

Ընկերոջ խնդրանքին (տե՛ս հոկտեմբերի 20)՝ գրում է. «Քո ամենախոնարհ հրամանը կատարեցի <> Օձնա մետրիկական մատեանում 1872 թ. գրված է No 3, հունվար15-31, *խորեն* . հայրը Դարչին Ջուրաբյան, մայրը Հռոմոսիմ Պետրոսյան. մեխակ չկա, բայց դարչինը գտա»:

ԵԼԺ 9, 84-90:

Հոկտեմբերի 23. – Մելքոն Ասլիբեկյանի նամակը Թումանյանին՝ Վլադիկավկազից:

Գրում է իր մասին՝ Թիֆլիսից հեռանալուց հետո, թե ինչպես է հասել Վլադիկավկազ, հանդիպել Անուշավանին: Բողոքում է սարսափելի ցրտից: Հայտնում է իր նոր աշխատավայրը: ԳԱԹ ԹՖ, 939 (250 լր.):

Հոկտեմբերի <26>. – Դուրս է գալիս Թիֆլիսից և ուղևորվում Դսեղ:

ԵԼԺ 9, 90:

Հոկտեմբերի <26>. – Թիֆլիսից դուրս գալիս գնում է մի բաշլուղ 2 ռուբլի 8 կոպեկով:

Այդ բաշլուղը նրան Սարվանուն անցկացրած ցրտաշունչ գիշերվա ընթացքում փրկում է «ցրտահար լինելուց»:

ԵԼԺ 9, 91:

Հոկտեմբերի 26 լույս 27-ի գիշեր. – Գիշերն անցկացնում է Սարվան գյուղում:

«Դարձյալ այդ անիծած Սարվանում մնացի մի գիշեր», – գրում է կնոջը:

Բորչալուի թուրքաբնակ այդ գյուղում փորձում է պատըսպարվել ցրտից մի կիսավեր խանութում: Հարբած խանութպանի ռուս ծառան անվերջ թեյ է մատուցում և պատմում է խանութպանի քրոջ՝ այդ օրը տեղի ունեցած հարսանիքի մասին: Հետո գալիս են զուռնաչիները, որպեսզի հյուրերին «քեֆ ցույց տան»: Թումանյանը ճարահատ մինչև գիշերվա 12-ը մնում է ֆուրգոնում: Ժամը 12-ին դուրս է գալիս ֆուրգոնից. «Գիշերվան սառնաշունչ քամին սրի նման կտրատում էր մեր երեսն ու ձեռքերը, շրթունքներիցս արյուն եկավ, իսկ մարմնով փայտից չէինք զանազանվում: <...> Եթե բաշլուղը չէր եղել (տե՛ս

հոկտեմբերի 26), ես անշուշտ ցրտահար էի լինելու: Այդ բաշ-
լուղին եմ պարտական իմ երկու ականջով և վերջապես ամբողջ
գլխովս»:

Մի մալական քուրքը տվել էր ֆուրգոնում պառկած իր
կնոջը և թունամայանի նիտոդոթյուն է անում, թե ինչու չի
ամուսնանում, եթե այդքան մրսում է: Բանաստեղծը պատաս-
խանում է. «Ամուսնացել եմ, բայց քեզ նման հիմար չեմ, որ կնիկս
էլ բերեմ, պալտոս նրա վրա գցեմ ու տկլոր կանգնեմ»:

ԵԼԺ 9, 91, 94-95:

Յոկտեմբերի 27-ի առավոտյան ժամը 5. – Հասնում է Ռա-
տևան:

Թիֆլիսից 60 կմ հեռավորության վրա գտնվող գերմանա-
կան գաղութ էր: Նրան դիմավորում են վանքի և առաջնորդա-
րանի մի քանի ծառաներ՝ իրենց հայրենակիցների հետ: Նրանց
տեսքը հուզում է բանաստեղծին. «Այդ թշվառներն իրանց տկլոր
ու կապտած մարմնով այդ սոսկալի ցրտին մարդի սիրտ էին
կտրատում, դու մի՛ ասիլ խեղճերը սոված են և միևնույն ժամա-
նակ ո՛չ հաց ունեն, ո՛չ փող. ինձ տեսան թե չէ, ուրախացան»:
Թունամայանը նրանց մի ռուբլի է տալիս և մի նամակ, որ հասցնեն
իր աներոջը՝ Բադալ Մաճկալյանին:

ԵԼԺ 9, 91-92, 508:

Յոկտեմբերի 27 լույս 28-ի գիշեր. – Ռատևանից հեռա-
նալով 15 կմ հասնում է Ջալալօղլի տանող ճանապարհին ան-
տառի մեջ գտնվող ապակու ավերված մի գործարան՝ «շուշի
գավոդ»:

Կնոջը գրում է. «Ես մի գիշեր դողացի, առավոտյան վեր
կացանք, տեսանք ծյուն է եկել, երկու ռոմ խմացրին, տաքացա,
բայց սիրտս տակն ու վրա էր անում»:

ԵԼԺ 9, 91-92, 508:

Յոկտեմբերի 28. – Հասնում է Ջալալօղլի:

Կանգ է առնում մի ծանոթ երիտասարդի խանութում:
Բարեկամներից ոչ մեկին չի այցելում: Ստադրվում է առավոտ-
յան գնալ Դսեղ կամ Ուզունլար, հետո Դսեղ:

ԵԼԺ 9, 92:

Յոկտեմբերի 29, Ջալալօղլի. – Այցելում է պրիստավ
իշխան Վաչնաձեին:

Իր լայնեզր գլխարկով, եվրոպական հագուստով, իր անձը
ներկայացնելիս խոսելու վստահ եղանակով թունամայանը ազ-
դեցիկ տպավորություն է թողնում պրիստավի վրա. «Մեր խո-
սակցությունն այնքան մտերմիկ դարձավ, որ ես սկսեցի նրան
հանդիմանել, կակող-կակող ձեռք առա յուր գրության համար,
որ փոխանակ հորս միջոցով ինձ իմացնելու, գրել է Թիֆլիսի
պոլիցիային. նա սկսեց մեղադրել տանուտերին և ասաց. «Այժմ
կաշխատեմ քեզ տված նեղության համար լավություն անել. որ
օրը կգա զինվորական ատյանը, ինքս կխնդրեմ, որ ամենից
առաջ, նույնիսկ առաջին օրը, երբ կսկսվի ընտրությունը, քեզ
չափեն (*չափելու համար եմ կանչված*) և բոլորովին կպրծնես,
իսկ եթե կուզես գնա գյուղ, բայց մինչև նոյեմբերի 6-ը արի, որ
չափվես»:

ԵԼԺ 9, 92:

Յոկտեմբերի 29, Ջալալօղլի. – Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝
Օ. Թունամայանին:

Պատմում է Թիֆլիսից Ջալալօղլի իր արկածների, հանդի-
պումների մասին: Ստադիր է Թիֆլիս վերադառնալ Շուլա-
վերով:

ԵԼԺ 9, 90-93:

Յոկտեմբերի 30, Ջալալօղլի. – Այցելում է հորաքրոջ
աղջկան՝ Եղիսաբեթին:

Վերջինս տունը վարձով էր տվել: Չկամենալով նեղություն
պատճառել՝ սուրճ խմելուց հետո գնում է գիշերելու Օծուն՝ քեռու
տղաների մոտ:

ԵԼԺ 9, 93:

Յոկտեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ»,
1891, 10, էջ 1180) «Երգչի վրեժը» («Ծանր հեծության ժամա-
նակների...») բանաստեղծությունը:

«Երգչի վրեժը» բանաստեղծի բարեկամների կողմից ըն-
կալվեց իբրև Գր. Արծրունու (Ասիացի) երգիծական ֆելիետոնի

պատասխան, մինչդեռ այն գրվել էր Խաչ. Մալունյանի հոդվածի առիթով (ԱԻ, 269):

ԵԼԺ 9, 84, 565:

Հոկտեմբեր, Թիֆլիս. – Պատրաստում է «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը (տե՛ս հոկտեմբերի 23):

ԱՆ. Աբովյանին գրում է. «Պատրաստում եմ գրքիս երկրորդ հատորը, այսինքն՝ արտագրում եմ»:

ԵԼԺ 9, 87:

Հոկտեմբեր, Թիֆլիս. – «Անուշից» մի հատված կարդում է բանահավաք, գավառական ուսուցիչ Եղիշե Երզնկյանի մոտ:

ԱՆ. Աբովյանին գրում է. « «Անուշի» կեսիցն սկսած կարդացի մեր «երանյալ շաշի» (Եղիշեի) մոտ, քեզ կհայտնի յուր կարծիքը»:

ԵԼԺ 9, 87:

Հոկտեմբեր, Թիֆլիս. – Կոնսիստորիայում հանդիպում է Ե. Երզնկյանին:

ԱՆ. Աբովյանին գրում է. «...եկավ կոնսիստորիան, իրան վարդապետության գործից հարցրեց – քեզ բացասեց Սինոդը, – հայտնեցին անդամները. և ի՞նչ ես կարծում ինչ արավ, անդամները հեռացան թե չէ, սկսեց խաղ ասել ու պար գալ. ես զմայլված այս բանից, սրտիս հրճվանքը միայն կարողացա արտահայտել, բացականչելով՝ «երանյալ շաշ» »:

ԵԼԺ 9, 90:

Հոկտեմբերի 31 – նոյեմբերի 2. – Մորեղբոր տղաների հրավերով երկու օր մնում է Օծունում՝ Անուշավան Աբովյանի տանը:

Կնոջը գրում է. «... մեր քեռոնց տղերքը ինձ հրավիրեցին Օծուն, գնացի և երկու օր էլ մնացի այնտեղ, լավ ժամանակ անցկացրինք նրանց մոտ (Աբովյանցների)»:

ԵԼԺ 9, 93:

Նոյեմբերի 3. – Օծունից գալիս է Դսեղ:

ԵԼԺ 9, 93:

Նոյեմբերի 4, Դսեղ. – Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օ. Թունանյանին:

Գրում է, թե ծնողները որքան հոգատար են Օլգայի և երեխաների հանդեպ, պատրաստ են տան բոլոր բարիքներից առատորեն բաժին հանել նրանց:

Իր համար դժվար է կնոջից հեռու լինելը. «... Խոստովանում եմ. որ ամեն բան տանելի է, թե ցուրտ, թե պակասություն, թե վտանգ, միայն անկարելի է դիմանալ սիրած կնոջ կարոտին <...> Ես արդեն տեսնում եմ, որ չեմ կարողանում տանել նույնիսկ մի քանի օրվա անջատումը, նույնպես և այսպիսի հազար ու մի դրություններ տանջում են իմ սիրտը, բայց իմ հպարտ ինքնասիրությունը ծածկում է ամեն բան և ես լռում եմ շատ անգամ, բայց այդպիսի լռությունը սարսափելի է, նա կործանում է առանց աղմուկի»:

ԵԼԺ 9, 93-94:

Նոյեմբերի 6. – Գնում է Ջալալօղլի՝ զինվորագրության համար վիճակահանությանը մասնակցելու (տե՛ս հոկտեմբերի 29):

Հանդիպում է հոր՝ տեր Թադևոսի հետ, որ Ջալալօղլի էր եկել՝ որդու զինվորագրության գործով զբաղվելու: Իջևանում է «քեռոնց (Աբովյանների) աղջկերանց մոտ»:

ԵԼԺ 9, 92, 93, 95:

Նոյեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը, Ջալալօղլի. – Փրկվում է վառարանի շնուլ գազով խեղդվելու վտանգից:

Կնոջը գրում է. «... Երեկոյան սենյակի տաքության համար շուտ փակեցինք վառարանը: Գիշերվան մի ժամանակը տերտերը ծայն տվեց մեզ և հազիվ կարողացավ դուռը բանալ սենյակի, իսկ մենք չէինք կարողանում գլուխներս վեր քաշել, հազիվ առավոտը հասնելով՝ ինձ մեծ դժվարությամբ կարողացան ազատել սաստիկ ուզարից»:

ԵԼԺ 9, 95:

Նոյեմբերի 7, Ջալալօղլի. – Շարունակում է նոյեմբերի 4-ին սկսած նամակը Օլգա Թունանյանին:

Գրում է, որ գիշերը «ուզարից» խեղդվելու վտանգից մի կերպ փրկվելուց հետո դեռ ուշքի չի եկել՝ «խելքս գլուխս չի»: Տեղեկացնում է, որ իր զինվորագրության վիճակահանությունը վաղն է լինելու՝ «ինձ վաղն են չափելու»: Միշտ կնոջն է հիշում. «Ամեն րոպե քեզ են հիշում»: Դժգոհում է, որ կնոջից նամակ չի ստանում: Մինչև ամսի 12-ը թիֆլիսում կլինի:
ԵԼԺ 9, 95:

Նոյեմբերի 8, Ջալալօղլի. – Ազատվում է զինվորագրությունից:
Կնոջը գրում է. «Չափեցին և դուրս եկավ հասակիս բարձրության հետ կուրծքս համեմատ առողջ. կարմիր բիլետ տվին. այդ բոլորը միևնույն է, թե ազատված եմ»:
ԵԼԺ 9, 98:

Նոյեմբերի 9, Ջալալօղլի. – Նամակ թիֆլիս՝ Օ. Թումանյանին:
Խիստ վիրավորված է, որ թիֆլիսից բացակայելու 20 օրվա ընթացքում կնոջից ոչ մի նամակ չի ստացել. «Ի՞նչ է ապացուցում քո այդքան սառնությունը կամ դու զգո՞ւմ ես, թե ինչպես եմ ես սրտակտրվում, որքան եմ տանջվում. իհարկե, քեզ համար զգալի չեն երևի այսպիսի բաներ... <> ոչ մի բան ինձ առայժմ չի կարողանում ազդել կողմնակի, որ սիրտս հանգստանա կամ կարողանամ ուրախանալ, քանի որ մտքիցս չի գնում, որ այսպիսի օրերում, երբ նամակ են գրում ուրիշները, սիրտ են տալիս, թեև երկյուղ չկա մեջտեղը, այնինչ՝ քեզանից մի խոսք, մի տող չեն ստացել և վերադառնում են այդ պատճառով սրտաբեկ: Թող ինձ զինվոր տանեին, միայն թե քո քաջալերությունը գոնե ինձ հետ լիներ, ես դարդ չէի անիլ, այնինչ՝ այժմ, թեկուզ ազատված, բայց տխուր եմ»:
ԵԼԺ 9, 96-98:

Նոյեմբերի 9, Ջալալօղլի. – Հրավիրված է «մի տեղ երեկոյան թեյի», ճաշին «Սարգիս* քեռանց տանն» է:
Այստեղ «չատ են դարդ անում Երվանդի** համար, մանավանդ Վառիկեն շատ է լաց լինում»: Բանաստեղծի հետևից «ման գալիս են եղել», որ գա, ուրախացնի, սիրտ տա:

* Սարգիս Հակոբյանը Թումանյանի հորաքրոջ ամուսինն է, Վառիկան՝ նրա քույրը (ԵԼԺ 9, 505):
** Երվանդ Մամիկոնյանի մասին Թումանյանը գրում է ԱՆ. Աբովյանին. «Մեր գյուղացի Երվանդ Մամիկոնյանը, որ գյուղում գրագիր է և որն արդեն նշանված է Գեղամ վարդապետի քրոջ վրա, յուր եղբոր հետ մի հարսն են փախցրել: «Նոր-Դարուն» կկարդայիր» (ԵԼԺ 9, 66):
ԵԼԺ 9, 97:

Նոյեմբերի 9. – Ձիով վերադառնում է Դսեղ:
ԵԼԺ 9, 98:
Նոյեմբերի 9. – Գրում է «խոստովանություն» («Քո աչքերում, որ փայլում է...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 101, 571:

Նոյեմբերի առաջին տասնօրյակ. – Նամակ Արսեն Ղլտճյանին (չի պահպանվել):
Հիշատակությունը՝ պատասխան նամակում. «Վերջապես ստացա նամակդ և ահա շտապով պատասխանում եմ»:
ԳԱԹ ԹՖ, 1560 (381/5 լր.):

Նոյեմբերի 12. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին:
Թումանյանի անհայտ նամակի պատասխանն է: Խոստանում է ուղարկել գրքերի վաճառքից գոյացած գումարը: Գրում է, որ ներկայացում է պատրաստում: Թումանյանից գրքեր (պիեսներ) է ուզում: Նաև տեղեկություններ Վանցյանի մասին: Հարցնում է Մուշեղից:
ԳԱԹ ԹՖ, 1560 (381(5 լր.):

Նոյեմբերի 16, թիֆլիս. – Ստանում է իր գրքի բաժանորդագրությունից գոյացած գումարը:
Ուղարկել էր Ներսիսյան դպրոցի ընկերներից Ա. Առաքելյանը (տե՛ս փետրվարի 8):
ԳԱԹ ԹՖ, 2017(987):

Նոյեմբերի 18. – ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին:
Գրում է հոկտեմբերի 27-ի ուխտագնացության մասին: Հիշում է Օծունում անցկացրած օրերը. «Բայց և այնպես մեր այն մի օրվա որսի գնալը քաղցր տպավորություն թողեց հիշողությանս մեջ»:

ԳԱԹ ԹՖ, 763 (450):

Նոյեմբերի 18. – Սարգիս քահանա Տեր-Սարգսյանի նամակը Թումանյանին՝ Գյուլագարակից:

Խնդրում է տեղեկություններ հաղորդել իր փեսա Ասատուրի մասին ինչ-որ վկայականի վերաբերյալ:

ԳԱԹ ԹՖ, 2249 (493/8 լր.):

Նոյեմբերի 30. – Վ. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Արճեշից:

Վ խնդրում է արճեշցի մի գուղացու գործին կոնսիստորիայում ընթացք տալ:

ԳԱԹ ԹՖ, 2200 (493/6 լր.):

Նոյեմբեր. – Տպագրվում է («Մուրճ», 1891, 11, էջ 1304) «Աստղերի հետ» («Է՛յ աստղեր, աստղեր ...») բանաստեղծությունը՝ առանց վերնագրի:

ԵԼԺ 9, 99, 570:

< Աշուն >. – Ավ. Իսահակյանի հետ այցելում է նրա մորաքրոջ որդի Յովի. Կոստանյանին և ծանոթանում:

ԹԺՂ, 461:

Դեկտեմբեր, Թիֆլիս. – Տպագրվում են («Մուրճ», 1891, 12, էջ 1500) «N N – ին» («Կյանքի հոսանքն յուր ընթացքում...») բանաստեղծության երեք քառատողերը:

ԵԼԺ 1, 90, 567:

1891, Թիֆլիս, – Գրում է «Ախթամար» բալլադը:

Տիգրան Փիրումյանը հիշում է. «Երբ ես սրանից մի քանի ամիս առաջ այդ ավանդությունը պատմեցի Յովի. Թումանյանին, նա հենց նույն օրը կազմեց դրանից մի սիրուն ոտանավոր, որ տպվեցավ «Մուրճ» ամսագրի չորրորդում» («Տարագ», 1893, թիվ 3): Թումանյանն ինքը հաստատում է. «Այս ավանդությունն ինձ պատմել է Տ. Փիրումյանը, որ մի քանի տարի ապրել է Վան»:

ԵԼԺ 2, 100, 553:

1891. – Գրում է «Սիրելի աչեր...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 103, 447:

1891. – Թարգմանում է Վ. Ա. Ժուկովսկու «Աքիլլես» բալլադը:

Այս շրջանում բանաստեղծը ձգտում էր ավելի խորը ճանաչել անտիկ աշխարհի պատմությունն ու մշակույթը: Դրանով էր պայմանավորված նրա բուռն հետաքրքրությունը դասական ռոմանտիկական պոեզիայի նկատմամբ: Թարգմանությունը այդ հետաքրքրության արտահայտություններից է:

ԵԼԺ 4, 109, 586:

1891. – Ղ. Աղայանի ազդեցությամբ հարում է Հնչակյան կուսակցությանը:

ԱԻ, 369:

1891. – Գրում է «Ուրու» («Դո՞ւ ես, իմ սիրուն...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 102, 571:

1891. – Գրում է «Թե հոգնել ես, հաղթահարված...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 104, 572:

1891. – Սկսում է հաճախել անգլերենի դասընթացների՝ աշակերտելով անգլիական փոխիյուպատոս Մուրտազին:

Նպատակ ուներ «Շիլիոնի կալանավորը» անմիջապես բնագրից թարգմանել:

ԹԺՂ, 352:

1890 թ. վերջից 1892 թ. հունվարի 27. – Նամակներ Ա. Ղլտճյանին (չեն պահպանվել):

Ա. Ղլտճյանը հիշում է. «Այդ շուրջ մեկ տարվա շրջանին Օվանեսի ինձ գրած նամակները կամ ոչնչացրել են և կամ կորել են: Ես հիշում եմ, որ որոշ կասկածելի նամակներ ոչնչացրի, բայց չեմ հիշում նրանց բովանդակությունը: Ինձ թվում է, թե հնչակյանների հետ կապ հաստատելուն էին վերաբերում, որոնց Օվանեսը ինձ գրած մի նամակի մեջ «թունդ կարմիրներ» անունն է տալիս»:

ԱԻ, 368:

Հունվարի 6, Թիֆլիս. – Ականատես է լինում Ջրօրհների ծիսակատարության համար կառուցված ժամանակավոր կամրջի խորտակմանը:

Ա. Ղլտճյանին գրում է (տե՛ս հունվարի 27), «... Այդ սարսափելի աղետը կատարվեցավ իմ աչքի առջև: <...> դեմոնստրացիաներ եղան առաջնորդարանի առջև»:

ԵԼԺ 9, 99, 509-510:

Հունվարի 9, Թիֆլիս. – Գրում է «Երբ գիշերային...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 105, 572:

Հունվարի 13, Թիֆլիս. – Գրում է «Ռոմանս» («Երկու աչքով լալիս էր նա...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 107, 572-573:

Հունվարի 15. – Ս. Տեր-Հովհաննիսյանի նամակը Թումանյանին՝ Կողբից:

Գրում է, որ ստացել է Թումանյանի բաց նամակը, և զայրույթը (հերսը) իջել է: Գրում է իր՝ գրադարան կազմելու մասին և խնդրում է Թումանյանի գիրքը, որ նա պիտի ուղարկեր դպրոցի հասցեով: Շնորհավորում է Նոր տարին:

ԳԱԹ ԹՖ, 2226 (496/11 լր.):

Հունվարի 16. – Ս. Ասլիբեկյանի նամակը Թումանյանին՝ Վլադիկավկազից:

Ուղարկում է 3 ռուբլի, որպեսզի բանաստեղծը փոխանցի «Աղբյուրին» ու «Տարագին» և ամսագրի համապատասխան համարներն ուղարկի իրեն:

ԳԱԹ ԹՖ, 940 (533):

Հունվարի 18, Թիֆլիս. – Գրում է «Քրիստոսն անապատում» («Անապատի մեջ խավար ու տխուր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 108, 573:

Հունվարի 20, Թիֆլիս. – Գրում է «Երագ» («Գիշերն երգում հալածում էին...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 109, 573:

Հունվարի 22, Թիֆլիս. – Գրում է «Մութն էր երկինքը, ոչ ոք չըտեսավ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 110, 574:

Հունվարի 26, Թիֆլիս. – Մասնակցում է Մակար կաթողիկոսին հաջորդող նոր կաթողիկոսի «ընտրության համար եկեղեցական պատգամավորների ընտրությանը»:

Ա. Ղլտճյանին գրում է (տե՛ս հունվարի 27), «Ես թեև, որպես խոխա, այսինքն անչափահաս (ոչ 25 տարեկան) զրկվում էի ձայն տալու իրավունքից, մանավանդ արգելած էր կոնսիստորը, այնուամենայնիվ խառնվեցի»:

ԵԼԺ 9, 99, ԹԺՅ 282 – 283:

Մինչև հունվարի 27, Թիֆլիս. – Ջրօրհների կամրջի խորտակման առիթով Սինոդի ուղարկած քննիչ հանձնաժողովը հարցաքննում է Թումանյանին՝ իբրև ականատեսի:

Ա. Ղլտճյանին գրում է. «Մեզ արդեն քննել են»:

ԵԼԺ 9, 99:

Հունվարի 27, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Ա. Ղլտճյանին:

Գրում է իր «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի տպագրության նախապատրաստական աշխատանքների մասին: Ուղարկում է բաժանորդաթերթը: Գրում է նաև տպագրության սպասվելիք ծախսերի, «ջրօրհների կամրջի» խորտակման (տե՛ս հունվարի 6), կաթողիկոսական ընտրության համար եկեղեցական պատգամավորների ընտրությանը իր մասնակցության (տե՛ս հունվարի 26) մասին:

ԵԼԺ 9, 99-100:

Հունվարի 31. – Ս. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է, որ ստացել է Թումանյանի ուղարկած շաբաթաթերթը:

ԳԱԹ ԹՖ, 1538 (798):

Հունվար. – Տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 1, էջ 32) «Ազդ» («Հեռացրեք նրան աստծո սեղանից...») բանաստեղծությունը՝ «Պահպանողականներին» ենթավերնագրով:

Բանաստեղծությունը մարտահրավեր էր Մամբրե Եպիսկոպոսին (ԱԻ, 215):
ԵԼԺ 9, 68, 560:

Փետրվարի 1, Թիֆլիս. – Մի անձնավորության տանը, որին բանաստեղծը հիշում է անվան սկզբնատառով՝ Տ., տեսնում է ռուս գեղանկարիչ Ի. Ն. Կրամսկոյի «Քրիստոսն անապատում» կտավը (1872 թ.) և զարմանքով նմանություն է նկատում այդ նկարի և 14 օր առաջ իր գրած «Քրիստոսն անապատում» բանաստեղծության միջև:

Թումանյանի ընտանեկան արխիվում պահվում է մի ձեռագիր պատառիկ, որտեղ բանաստեղծը թողել է հետևյալ գրառումը. « «Հիսուսն անապատում», Կրամսկոյի նկարը, Живописное обозр. 87 г., երես 229: «Հիսուսն անապատում» ոտանավորը գրելուց հետո 92 թ. փետրվարի 1-ին տեսա Տ.-ի մոտ»:
ԵԼԺ 1, 573:

Փետրվարի 1. – Ս. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է. «Պետք է զարմանաս, որ մի օր հետո դարձյալ նույն մարդուց ստանում ես նույնպես բաց նամակ»: Խնդրում է բարեգործական ընկերության քարտուղարից կամ որևէ ուրիշ մեկից իմանալ՝ արդյոք մի ամիս առաջ Բաքու քաղաքից Ս. Հովվյանից խնդիր ստացել են, թե ոչ:

ԳԱԹ ԹՖ, 1539 (799):

<Փետրվարի սկիզբ>, Թիֆլիս. – «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը ուղարկում է Մոսկվա՝ Մ. Բարխուդարյանին՝ տպագրության:

ԱԻ, 319:

<Փետրվարի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Դերբենդ՝ Գրիգոր Վանցյանին (չի պահպանվել):

Հավանաբար շնորհավորել է ընկերոջը ինչ-որ հոդվածի

առթիվ: Հայտնել է, որ տպագրության է ուղարկել «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը:

Նամակի բովանդակությունը՝ ըստ Վանցյանի պատասխանի (տե՛ս փետրվարի 18):
ԳԱԹ ԹՖ, 2018 (988):

<Փետրվարի սկիզբ>, Թիֆլիս. – Բաց նամակ Կամենեց-Պոդոլսկ՝ Ան. Աբովյանին (չի պահպանվել):

Տեղեկությունն այդ մասին պահպանվել է Ան. Աբովյանի պատասխան նամակում (տե՛ս մարտի 10):
ԳԱԹ ԹՖ, 764 (451):

Փետրվարի 11, Թիֆլիս. – Գրում է «Բանաստեղծը ծերացել է...» բանաստեղծությունը:

Նվիրված է Ռ. Պատկանյանին: Ձեռագիրը բանաստեղծի լուսանկարի վրա է:
ԵԼԺ 1, 111, 574:

Փետրվարի 13, Թիֆլիս. – Նամակ Տ. Փիրումյանին: Շնորհավորում է ընկերոջը անվանակոչության օրվա առթիվ՝ բերելով իր մտերմական սիրո հավաստիքը մի քանի տող ոտանավորով.

Որպես անկեղծ
Նա քեզ սիրել,
Սիրում է դեռ,
Ազնիվ ընկեր:

ԵԼԺ 9, 100, 510:

Փետրվարի 16. – Ե. Խարազյանի նամակը Թումանյանին՝ Ուզունլարից:

Խնդրում է աջակցել իր բարեկամ և համազյուղացի Ալեքսանդր Բեգլարյան Կոստանդյանցի համար ծննդյան վկայական ձեռք բերելու գործով դատաստանական գործավարությանը:
ԳԱԹ ԹՖ, 1391 (493/2):

Փետրվարի 18. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Դերբենդից:

Բանաստեղծի անհայտ նամակի (տե՛ս <փետրվարի

սկիզբ>) պատասխանն է: Հայտնում է իր զարմանքը «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը շուտափույթ տպագրության հանձնելու առթիվ և մտավախությունը գրքի տպագրության ծախսերի հետ կապված. «Գրքիդ երկրորդ հատորը այդպես շուտափույթ տպագրության հանձնելը ինձ զարմացնում է. հույս ունես, որ ծախքդ հանես կամ գրքիդ ծախքը հանեցիր...»:

Ուղարկում է ութ բաժանորդի բաժանորդագրության վարձը՝ 4 ռուբլի:

ԳԱԹ ԹՖ, 2018 (988):

Փետրվարի 27, Թիֆլիս. – Հայոց հրատարակչական ընկերության վարչության նիստը որոշում է Թումանյանին ընտրել ընկերության իսկական անդամ:

ԵԼԺ 9, 511:

Փետրվար. – Տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 2, էջ 263) «Մութն էր երկինքը, ոչ ոք չտեսավ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 110, 574:

Մարտի 1, Թիֆլիս. – Հայոց հրատարակչական ընկերության գրությունը Թումանյանին:

Տեղեկացվում է, որ նա վարչության փետրվարի 27-ի նիստի որոշմամբ ընտրվել է ընկերության իսկական անդամ:

ԵԼԺ 9, 511:

<Մարտի սկիզբ>. – Ա. Ղլտճյանի միջոցով Ավ. Իսահակյանին է ուղարկում «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի բաժանորդաթերթը:

Նույն օրերին Ա. Ղլտճյանը Իսահակյանին գրում է. «Թումանյանը կուղարկե քեզ վրա իր «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի բաժանորդաթերթը. բաժանորդներ կգտնես. այս հատորը թե բովանդակության որակի և թե քանակի կողմից կրկնակի արժեք ունի առաջին հատորի վերաբերմամբ. հարկավոր է նրան օգնել. նա մյուս շատ բանաստեղծներից չէ. նա բոլորովին այլ ոգով և նոր ինքնուրույն ուղղությամբ է գրում. խոսքս պոեմաների մասին է:

Նեղություն հանձն առ և կատարիր. այդ ես խնդրում եմ քեզանից»:

ԱԻ, 244:

Մարտի 10. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենց – Պոդոլսկից:

Գրում է, թե ինչու է այդքան երկար տևել Թիֆլիսից Կամենց – Պոդոլսկ հասնելը: Ներկայացնում է ձգձգված ճանապարհի մանրամասները, ուշանալու պատճառները: Եվ հետո. «Խնդրեմ հակիրճ կերպով և օրինակով բացատրես, թե ի՞նչ է մի գրքի հանգույցը և լուծումը»:

* Պատասխան նամակում (տե՛ս մարտի 24) Թումանյանն այս առիթով կատակում է. «Ես որ նամակիդ մեջն ես բաները կարդացի, ասի, ախպեր, սրանք ինչ պետք է լինեն. վերջը միտս եկավ, որ լուծումը անպատճառ ապտեքումը կգտնեմ, ասացի, հալբաթ հանգույցի համար էլ կհարցնեմ մագազիններումը կամ բախկալխանումը. ո՞վ գիտի, կարելի է ագուրցի լինի դազախների մոտ:

Ապտեք գնալիս ճանապարհին պատահեց մի ծանոթ ուսումնական, թե՛ էդ ո՞ւր ես գնում. պատմեցի:

Սա սկսեց ծիծաղել, ես մնացի կանգնած երեսին պելացած. վերջն ուշքի եկավ, թե՛ այ՛ տնաքանդ, *հանգույցը* էն ա, որ մի վեպի կամ պիեսայի մեջ, օրինակի համար, առաջ ծանոթացնում են գործողներին, նրանց նպատակը, ձգտումը, հանգամանքները կապում են իրար կամ իրար դեմ դնում և ապա՝ երբոր բանը բացվում է, վերջանալու համար, և մոտենում է վախճանին աստիճանաբար, այդ էլ կոչվում է *լուծումն*»:

Սրանից դենը դու գիտես. բայց այս ձևականությանը, կանոններին աշխատիր չստրկանաս»:

ԳԱԹ ԹՖ, 764 (451):

Մարտի < 10-20 >, Թիֆլիս. – Նամակ Պետերբուրգ՝ Բ. Թումանյանին (չի պահպանվել):

Հանդիմանում է նամակը ուշացնելու համար: Տեղեկությունը՝ պատասխան նամակում:

ԳԱԹ ԹՖ, 1229 (647):

Մարտի 12, Թիֆլիս. – Գրում է «Առավոտ» («Սրտամաշ տաղտուկ ծանր գիշերի...») բանաստեղծությունը:

Բանաստեղծության տպագրված օրինակի վրա կա հեղինակի ընծայականը. «Յուր պատվարժան բարեկամ Մեսրոպ ք. Մեյանին Յովհաննես Թումանյանից»:

ԵԼԺ 1, 112, 574:

Մարտի 14, Թիֆլիս. – Գրում է «Մարշ» («Կեցցե՛ «Մշակ» և ժողովուրդ...») բանաստեղծությունը:

Գրության շարժառիթը կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու համար Թիֆլիսի թեմի պատգամավորի ընտրությունն է (տե՛ս հունվարի 26): Սկզբում Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Մամբրե եպ. Սանասարյանի նախաձեռնությամբ պատգամավոր է ընտրվում «Արծագանքի» խմբագիր Աբգար Յովհաննիսյանը: Թումանյանին դուր չի եկել այդ ընտրությունը, որ հետագայում Սինոդի կողմից չեղյալ է հայտարարվել, և պատգամավոր է ընտրվել Գր. Արծրունին: Թումանյանը դա համարել է երիտասարդության հաղթանակ:

ԵԼԺ 1, 341, 647-648:

Մարտի 18, Թիֆլիս. – Գրում է «Իմ սերը» («Ես սիրել եմ վարդը տըժգույն...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 113, 575:

Մարտի 18. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Ուղարկում է իր հիշատակարանից որոշ հատվածներ և խնդրում է Թումանյանին միացնել ամբողջացնել. «Սիրելի Յովհաննես, եթե նյութերը կտոր-կտոր գրեմ, արդյոք կարելի կլինի՞ հետո միացնել»: Գրում է «Նոր - Դարում» մարտի 8-ի ընտրությունների վերաբերյալ հրապարակումների մասին:

ԳԱԹ ԹՖ, 765 (419ա.):

Մինչև մարտի 20-ը, Թիֆլիս. – Ազատվելով զբաղեցրած պաշտոնից՝ հեռանում է կոնսիստորիայից:

Կոնսիստորիայից հեռացվելու անմիջական առիթը սուր ընդհարումներն էին թեմական առաջնորդ Մամբրե եպ. Սանասարյանի և նրա կողմնակիցների հետ, մասնավորապես նրանց դեմ գրած ծաղրական ոտանավորները՝ «Չարամիտներին»,

«Դարձյալ նրանց», «Ազդ» և այլն:

ԵԼԺ 3, 133, 534. ԱԻ, 216:

Մարտի 20. – Գրում է «Յիշիր...» («Յուր չար բախտի ճանկում բռնված...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 114, 575:

Մարտի 20, Թիֆլիս. – Հայոց հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովը որոշում է Թումանյանին գրասենյակապետի պաշտոն տալ ընկերության գրասենյակում:

ԵԼԺ 9, 511:

Մարտի 22, Թիֆլիս. – Աշխատանքի է անցնում Հայոց հրատարակչական ընկերության գրասենյակում՝ իբրև գրասենյակապետ, ամսական 20 ռ. աշխատավարձով:

Այդ պաշտոնին նշանակվել էր Պռոշյանի, Աղայանի, Արասխանյանի աջակցությամբ: Փիլ. Վարդազարյանը առաջարկել էր քառակի ավել աշխատավարձով մի պաշտոն, սակայն մերժվել էր: Թումանյանը գերադասել էր ընդունել Ալ. Քալանթարի՝ հրատարակչական ընկերությունում աշխատելու հրավերը՝ «իբրև գրական շրջան»:

Գրասենյակապետը պետք է անդամագրեր մարդկանց և ամեն մեկից ստանար 6 ռուբլի՝ պայմանով, որ տարվա վերջին նրանց նույն գումարով գիրք տար: «Օհանեսի աշխատավարձն էր 20 ռուբլի ամսական, բայց այդ աշխատանքից նա ավելի վնաս էր ունենում, քան օգուտ՝ մեկին երկու անգամ էր գիրք տալիս, մյուսին անդամագրում էր առանց փողի և այսպես պարտքերի տակ ընկավ ու գրասենյակը թողեց»:

ԱԻ 315. ԹԺԳ, 335:

Մարտի 24, Թիֆլիս. – Գրում է «Սովի ժամանակներից» պատմվածքը:

Ան. Աբովյանին գրում է. «Այսօր առավոտյան գրասենյակն եկա և մենակ լինելով մի սորումը վեց թերթից մի վեպ գրեցի, առանց ստորակետ դնելու: Այս վեպիկը պատմում է «Գյուղացու ծախորդությունը»:

ԵԼԺ 9, 103, 512:

Մարտի 24, Թիֆլիս. – Նամակ Կամենեց-Պոդոլսկ՝ Աճ. Աբովյանին:

Հայտնում է, որ «ազատված է կոնսիստորիայի գրագրի պաշտոնից». «Խորին տրտմությամբ ետ եմ նայում հինգ հոգեհան տարիների անցյալիս վերա, որպես մի գերեզմանի, մի դժոխքի, որից դուրս եմ եկել (?), բայց արդյոք առո՞ղջ եմ մնացել, կենդանի՞ եմ – ահա խնդիրը: Մարմնով՝ ո՛չ, բոլորովին ոչ. իսկ հոգուս ընդունակությունների մեծ մասը կորցրել եմ: <....> Կոնսիստորիայում, մանավանդ վերջին օրերս, հաճախակի վիճաբանություններով անտանելի էր դառել իմ մնալս»:

Գոհ է հրատարակչական ընկերությունում զբաղեցրած նոր պաշտոնից. «Ներկա պաշտոնիցս շատ գոհ եմ առ այժմ. գոնե գործ ունեմ կրթված շրջանի հետ»:

ԵԼԺ 9, 101:

Մարտի <25-27>, Թիֆլիս. – Նամակ Ս. Հովվյանին (չի պահպանվել):

Տեղեկությունը՝ պատասխան նամակում:

ԳԱԹ ԹՖ, 1540 (800):

Մարտի 29. – Բ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Պետերբուրգից:

Գրում է, որ Թումանյանի գիրքը Պետերբուրգում հնարավոր չէ տպագրել, քանի որ հայերեն տառեր ունեցող «Скорородов»-ի գրաշարը քաղաքում չէ: Գրում է նաև այդ հարցում իրենց հետագա ծրագրերի մասին: Խորհուրդ է տալիս դիմել Մոսկվա՝ Ս. Բարխուդարյանին:

ԳԱԹ ԹՖ, 1229 (647):

Մարտի 29. – Ս. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Խնդրում է հետաքրքրվել Արասխանյանին ուղարկած իր ոտանավորների ճակատագրով. «Ձարմանալի է, չգիտեմ, Պ. Արասխանյանը իմ ուղարկած ոտանավորները չի ստացել, թե ստացել է, չի ուզում կամ գուցե արժան չի համարում «Մուրճում» տպագրելու, ինձ համար գաղտնիք է մնում»:

ԳԱԹ ԹՖ, 1540 (800):

Մարտի երրորդ տասնօրյակ. – 20 ռուբլով ավելանում է Թումանյանի աշխատավարձը:

Հայոց հրատարակչական ընկերության վարչությունը հաշվի է առնում, որ գրասենյակային գործերը գնալով շատանում են: Այդ շրջանից սկսած Թիֆլիսի ոստիկանապետին ընկերությունը պիտի հաշվետվություն ներկայացներ իր գործունեության մասին՝ հիմնադրման օրվանից մինչև 1882 թվականը: Հարկավոր էին ելքի ու մուտքի վերաբերյալ ամենամսյա հաշվետվություններ: Այդ գործը Թումանյանի սրտովը չէր, որովհետև չէր սիրում հաշիվներ պահել. «Գրքերն ապառիկ տալիս էր վաճառելու զանազան անձանց և գրավաճառանոցների: Մոռանում էր վավերագիր կազմել փոստով ուղարկված գրքերի մասին, երբեմն հաշվի պատճենը չէր թողնում գործերում, ստիպված հաճախորդի խոսքին էր հավատում: <....> Նա նույնիսկ անկարող էր լինում պարզել, թե ում է ուղարկել գրքերը, որպեսզի կարելի լիներ պարզել»:

Դրա համար էլ բանաստեղծը հետագայում հրաժարվում է այդ պաշտոնից:

ԹԺՀ, 352:

<1892>, մարտ, Թիֆլիս. – Նամակ Դ. Շահլամյանին (չի պահպանվել):

Հավանաբար շարադրում է կոնսիստորիայից իր դուրս գալու պատճառները: Տեղեկությունը՝ պատասխան նամակում: ԳԱԹ ԹՖ, 1829 (419բ լր.):

<1892>, Մարտ. – Դ. Շահլամյանի նամակը Թումանյանին՝ Դսեղից:

Բանաստեղծի չպահպանված նամակի պատասխանն է: Գրում է, որ ստացել է այդ նամակը: Ուրախ է, որ Թումանյանը դուրս է գալիս կոնսիստորիայից. «Միայն քեզ խնդրում եմ, որ դեռ տեղ ճարես և հետո դուրս գաս»:

ԳԱԹ ԹՖ, 1829 (419բ լր.):

Մարտ, Թիֆլիս. – Գրում է «Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 115, 575:

Մարտ, Թիֆլիս. – Տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 3, էջ 414) «Քրիստոսն անապատում» («Անապատի մեջ խավար ու տխուր...» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 108, 573:

Մարտ - ապրիլ. – «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի տպագրության հետ կապված բանակցություններ հրատարակիչ Ս. Բարխուդարյանի հետ:
ԱԻ, 320:

Ապրիլի 5, Թիֆլիս. – Գրում է «Օր. Բ-ին» («Դու արտասվում ես, և քո ծանրավիշտ...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 116, 576:

Ապրիլի 7. – Ան. Արուսեանի նամակը Թումանյանին:
Շնորհավորում է Թումանյանի նոր պաշտոնը. «Ուղիղն ասած, ինձ դուր էր գալիս քո նախկին պաշտոնը»: Դժգոհում է, որ Թումանյանը Հրատարակչական ընկերության գործերի մասին իրեն տեղյակ չի պահում: Պատմում է իր տպավորությունները սպիտակ հաց վաճառող 14-ամյա մի աղջկա մասին, որը սիրահարվել է իրեն: Իսկ ինքը, խղճի խայթ զգալով հանդերձ, զվարճալի ժամանակ է անցկացնում. «Ուրախացնում եմ օրիորդին իմ ներկայությամբ»: Խորհուրդ է հարցնում Թումանյանից՝ ինչ անել. «Ես կարող եմ վերջ տալ այս դրությանը, որովհետև, ինչպես ասացի, սիրահարված չեմ: Բայց այդպիսով նրան բարոյապես սպանած կլինեմ»:

ԳԱԹ ԹՖ, 766 (452):

Ապրիլի 8. – Ս. Ասլիբեկյանի նամակը Թումանյանին՝ վաղիկավկազից:

Շնորհավորում է բանաստեղծի Ջատիկը: Տեղեկացնում է, որ 14 բաժանորդ ունի: Խոստանում է գոյացած գումարը շուտով ուղարկել, իսկ այդ պահին ուղարկում է միայն 3 ռուբլի:

ԳԱԹ ԹՖ, 941 (534):

Ապրիլի 13, Թիֆլիս. – Գրում է «Կասկած» («Ո՞վ ես, չար ոգի, դու, որ իմ սրտում...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 117, 576:

Ապրիլի 14, Թիֆլիս. – Ստանում է Ան. Արուսեանի՝ ապրիլի 7-ի նամակը:

ԳԱԹ ԹՖ, 766 (452):

Ապրիլի < 20-22 >, Թիֆլիս. – Ստանում է նամակ Ա. Հովվյանից:

Գրում է, որ թեև արդեն 11 տարի է, ինչ Ախալքալաքի գավառում ուսուցիչ է, այդպիսի «սկանդալներ» չէր տեսել, ինչպիսին եղավ թեմական տեսչի նշանակած ուսուցիչների՝ Գ. Ջաղյանի և Եղիայի միջև:

ԳԱԹ ԹՖ, 1530 (791):

Ապրիլի 28. – Ս. Ասլիբեկյանի նամակը Թումանյանին՝ վաղիկավկազից:

Ուղարկում է գրքի բաժանորդագրությունից գոյացած 4 ռուբլի գումարը: Տեղեկացնում է, որ շուտով էջմիածնից Թիֆլիս է գալու եպ. Կարապետ Արզումանյանը: Թումանյանը նրան պիտի հյուրընկալի իր տանը կամ տեղավորի հյուրանոցում, քանի որ էջմիածնի առաջնակարգ մարդկանցից է. «Պահանջում եմ քեզանից հրամայական եղանակով որպես և դու իրավունք ունես հրամայելու ինձ՝ խեղդվիր»:

Այս պարոնի և առհասարակ այսպիսի պարոնների՝ դեպի ինձ ունեցած համակրությունը այն աստիճան է հասած, որ եթե շապիկս հանելու լինեմ, իրավունք չունեմ խոսելու»:

ԳԱԹ ԹՖ, 942 (535):

Ապրիլի < 28 – 29 >. – Մի գյուղացու ձեռքով երկու նամակ է ուղարկում Արագովա (Ախալքալաք)՝ Ա. Հովվյանին:

Բովանդակությունն անհայտ է: Հավանաբար գրել է ընտրություններում 22 մշակականների հաղթանակի մասին: Պատասխան նամակում Հովվյանը տեղեկացնում է. «Այս րոպեիս ստացա գյուղացու ձեռքով ուղարկած երկու նամակներդ էլ»:

ԳԱԹ ԹՖ, 1531 (793):

Ապրիլի 30. – Ա. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Արագովայից (Ախալքալաք):

Պատասխանն է Թումանյանի երկու նամակների, որ նա ուղարկել էր մի գյուղացու միջոցով: Տեղեկացնում է, թե ինչ

Յուճիսի 13.– Ս. Յովվյանի նամակը Թումանյանին՝ Ախալցխայից:

Ուզում է «Նոր -Դարի» ուսանավորն ուղարկել «Մուրճին», բայց վախենում է՝ չտպագրեն:
ԹՏԹ, 1529:

Յուճիսի 25, Թիֆլիս. – Ստանում է նամակ «Մուրճի» խմբագրությունից Ա. Արասխանյանի ստորագրությամբ:

Արասխանյանը խնդրում է Թումանյանին, քանի որ Լևոն Մելիք-Աղամյանը բացակա էր, սրբագրել «Մուրճի» հերթական համարը, հատկապես Խալաթյանցի գրախոսականը, ուր գրաբար շատ բառեր կան, իսկ շաբաթ օրը, երբ Լևոնը գա, հանձնել նրան:

ԳԱԹ ԹՖ, 981 (547):

Յուճիսի 24, 29, Թիֆլիս. – Նամակ Ան. Աբովյանին:

Գրում է Թիֆլիսում տարածված խոլերայի մասին: Նկարագրում է իր առօրյան. ցերեկվա ժամը 10-ին գնում է գրասենյակ, երեկոյան կողմ՝ «Մուրճի» խմբագրություն, այնտեղից՝ թատրոնի այգի՝ գարեջուր խմելու և այլն: Գրում է, որ երիտասարդ աղջիկների շրջանում իր սիրային բանաստեղծությունները մեծ հաջողությամբ («խոլերայի արագությամբ») տարածվում են: Տեղեկացնում է, «որ հայոց լուսավորիչների՝ գրողների ապահովության համար ընկերություն է կազմվում՝ ֆոնդ են հիմնում» (տե՛ս հունիսի 7):

Գիրքը տպագրվում է: Սպասում է, որ երրորդ սրբագրության համար իրեն կուղարկեն: Յավանական է համարում, որ «մի երկու ամիս Լոռի անցկացնեն»՝ խոլերայից հեռու մնալու համար:

ԵԼԺ 9, 104 – 107, 512-514:

Յուճիսի 26, Թիֆլիս. – Գրում է «Օտարության մեջ» («Իմ եղբայրները օտարության մեջ...») բանաստեղծությունը:

Թումանյանի գիտական կենսագիրը, վկայակոչելով Ան. Աբովյանի, Ա. Ղլտճյանի, Ս. Յովվյանի և ուրիշների նամակները, գրում է. «Անշուշտ, իր պանդուխտ հայրենակիցների և ընկեր-

ների այդ նամակներն են Թումանյանին ներշնչել «Օտարության մեջ» բանաստեղծությունը» (ԱԻ, 250):

ԵԼԺ 1, 120, 577:

Յուճիսի 30, Թիֆլիս. – Գրում է «Լսո՞ւմ ես դու էլ, թե ինչ են խոսում...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 120, 577:

Յուճիս. – Տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 6, էջ 884) «Ռոմանս» («Երկու աչքով լալիս եր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 107, 572-573:

Յուլիսի < 5-7 >, Թիֆլիս. – Նամակ Ան. Աբովյանին (չի պահպանվել):

Բովանդակությունը՝ ըստ Ան. Աբովյանի պատասխանի (տե՛ս հուլիսի 12). «Երկու թերթից բաղկացած նամակը ստացա: Չես բացատրում միառժամանակ Չաքարիա դառնալուդ պատճառը»: «Այս անգամ հայկական գրականության վերաբերությամբ շատ քիչ բան ես գրել»: Բայց խոստացել է հաջորդ նամակում խոսել գրականությունից: Յետաքրքրվել է՝ նա գրականությամբ պարապում է, թե ոչ:

ԳԱԹ ԹՖ, 767 (453):

Յուլիսի 12. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Մեծիբուժեից:

Բանաստեղծի՝ հուլիսի <5-7>-ի անհայտ նամակի պատասխանն է:

Գրում է, որ գրականությամբ պարապելու համար խոչընդոտներ կան: Սկսել է գրել կարճ-կարճ արձակ բանաստեղծություններ: Պատմում է լեհ լուսանկարիչ Գրեյցեմի մասին: Դա հետաքրքրել է Թումանյանին, և նա ընդգծել է նամակի հետևյալ տողերը. «Գրեյցեմը ինքը աշխատակցում է լեհական մի հրատարակության (ժուռնալ), որը հրատարակվում է Վարշավայում, որտեղ բացառապես տպագրվում են հայտնի գործիչների կենսագրությունը՝ առանց ազգի խտրության»: Գրեյցեմը ցույց է տվել, որ Բ տառի տակ Բեիբությանի կենսագրությունն է, Ա տառի տակ՝ Այվազովսկու և Այվազյան եպիսկոպոսի: Առաջար-

կում է Թումանյանին գրել խաչատուր Աբովյանի և Մ. Նալբանդյանի կենսագրությունները, ինքը կթարգմանի ռուսերեն և կտա Գրեյցեմին, որին խոստացել է:

ԳԱԹ ԹՖ, 767 (453):

Յուլիսի 15. – Ընտանիքով դուրս է գալիս Թիֆլիսից և ուղևորվում Լոռի:

Գյուղ էին գնում դիֆտերիայի և խոլերայի վտանգից խուսափելու համար:

ԵԼԺ 9, 108:

Յուլիսի 17. – Գրում է «Ամառային երեկո» («Ամռան գիշերվա երկինքն աստղալի...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 123, 578:

Յուլիսի 18. – Թիֆլիսից Բորչալուի ճանապարհով Լոռի գնալիս կանգ է առնում Շուլավերում:

Յուրընկալվում է Շուլավերի տանուտեր, իր գավակներից մեկի կնքահայր պ. Սիմոն Պառապյանցի տանը: Հանդիպում է աներոջ՝ Թիֆլիսի կոնսիստորիայի անդամ տեր Հովհաննեսի հետ:

ԵԼԺ 9, 109:

Յուլիսի 18, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Ավ. Արասխանյանին:

Գրում է Բորչալուի գավառի հատկապես թուրքաբնակ գյուղերում տարածված խոլերայի մասին. «Երկրորդ շաբաթն է, որ Բորչալուի գավառում խոլերա կա և այդ մասին տեղեկություն չկա տված ուր հարկն է: <....> Անշուշտ օգնությունն ուշանալու է, և ճարակումն էլ լինելու է սաստիկ»:

ԵԼԺ 9, 108 – 109, 514:

Յուլիսի 18, Շուլավեր. – «Մուրճի» խմբագրին է ուղարկում երկու ոտանավոր:

Խոսքը «Օտարության մեջ» (տե՛ս հունիսի 26) և «Լսո՞ւմ ես դու էլ, թե ինչ են ասում» (տե՛ս հունիսի 30) բանաստեղծությունների մասին է:

ԵԼԺ 9, 109, 514:

Յուլիսի 21, Ջալալօղլի. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդագարյանին:

Գրում է Մոսկվայում հրատարակվող «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի տպագրության հետ կապված խնդիրների մասին. «Ձեր նամակից ցավով իմացա, թե ես չեմ կարող տեսնել գրքի երրորդ սրբագրությունը (տե՛ս հունիսի 24, 29), սակայն այդ կարևոր էր, որովհետև ես այնտեղ ուղղելու բաներ ունեի»:

Տեղեկացնում է, որ Շուլավերի ժողովարանը «Մուրճի» մայիսի համարը չի ստացել: Խնդրում է մի «Մուրճ» էլ իրեն ուղարկել:

ԵԼԺ 9, 109:

Յուլիսի <25 – 28>. – Նամակ Մ. Թումանյանին (չի պահպանվել):

Նամակի մասին հիշատակությունը և մոտավոր բովանդակությունը Մ. Թումանյանի պատասխանում (տե՛ս հունիսի 30):

Բանաստեղծը գրել է. «Այս նամակը գրելիս սաստիկ կարկուտ է գալիս»: Հավանաբար բնության տարերջը համեմատել է իր մռայլ տրամադրության հետ, որի պատճառը կենցաղային հոգսերն էին: Ցանկություն է հայտնել, որ իշխանուհին փորձի գրել: Դիտել է, որ նա սիրում է անալիզներ անել:

ՈՒՀ 4, 308-310:

Յուլիսի 26. – Գրում է «Սըրտիս թագուհի...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 124, 578:

Յուլիսի 30. – Մ. Թումանյանի նամակը բանաստեղծին՝ Թիֆլիսից:

Գրում է. «Վերջապես ստացա Ձեր նամակը. ես շատ էի զարմանում, որ Դուք նամակ չեք գրում և շարունակ հարցնում էի թե՛ Ռուստեմից, թե՛ Ֆիլիպից, բայց նրանք էլ չէին ստանում»: Ամեն կերպ աշխատում է փարատել բանաստեղծի մռայլ տրամադրությունը, կատակներ է անում:

Ամիսներ սպասում է, «թե երբ կվերջանա ամառը, երբ

նորից բուրբ միասին կժողովենք, որ կարդանք, վիճենք, դատենք: Ա՛խ, որպիսի զվարճություն ինձ համար այդպես ժամանակ անցկացնել, կյանք է և եթե ինձանից խլեն այդ զվարճությունը, ես, ով գիտե, չդիմանամ: Բայց ով կարող է խլել, ես կմրցեմ մինչև վերջին շունչս և չեմ զիջիլ ոչ մեկի առաջ: Ինձ թվում է, որ ես չեմ ապրում, ուզում եմ ջնջել այս ամիսները, թեև երբ ժամանակ եմ ձեռք գցում, իսկույն սկսում եմ երազել իմ սիրած նյութերի վրա և երբեմն այնպես հեռու եմ գնում, որ արթնանալը դժվար է լինում»:

Վերջում քաջալերում է բանաստեղծին. «Դուք միք հուսահատվի, Ձեզ ուրախ պահեցեք, ես ամեն ջանք գործ կդնեմ Ձեզ այդ նեղ դրությունից հանելու համար: Աստված ողորմած է, կարելի է Ձեր հանգամանքները փոխվեն դեպի լավը»:

ՈՒՅ 4, 308-310:

Յուլիս – օգոստոս, Թիֆլիս. – Առաջին անգամ տպագրվում են («Մուրճ», 1892, թիվ 7-8) «Օտարության մեջ» («Իմ եղբայրները օտարության մեջ...») (էջ 1045) և «Լսո՞ւմ ես դու էլ, թե ինչ եմ խոսում...» (էջ 1046) բանաստեղծությունները:

ԵԼԺ 1, 120-121, 577-578:

Յուլիսի վերջից մինչև օգոստոսի 12. – Մի քանի օր Դսեղում է:

Օգոստոսի 12-ին Ավ. Արասխանյանին գրում է. «Ես մինչև օրս մեր գյուղումն էի: Մայրս սաստիկ հիվանդ էր, գնացել էի տեսնելու»:

ԵԼԺ 9, 110:

Օգոստոսի 12. – Դսեղից վերադառնում է Ջալալօղլի:

ԵԼԺ 9, 110:

Օգոստոսի 12, Ջալալօղլի. – Ստանում է Գր. Վանցյանի նամակը (չի պահպանվել):

Նամակի «հետի թերթը» ուղարկելով Արասխանյանին՝ Թումանյանը գրում է. «Խնդրում է ուշադրություն դարձնել «Մուրճում» տպագրելի յուր «Բոշաներ» հոդվածի մեջ եղած օտարազգի բառերի ճշտության վրա: Այս թերթը պարունակում

է նույն բառերը պարզ և մեկին գրած, որ Դուք աչքի առաջ ունենաք տպագրության ժամանակ, եթե կպատահեն դժվար ընթեռնելի օտարազգի բառեր»:

ԵԼԺ 9, 1101:

Օգոստոսի 12. – Մ. Բարխուդարյանի նամակը Փիլ. Վարդապարյանին:

Գրում է, որ Թումանյանի «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի տպագրության վերաբերյալ խոսել է Ա. Ջարգարյանի հետ: Հայտնում է, որ հեղինակի կատարած փոփոխությունները հաշվի են առնված:

ԳԱԹ ԹՖ, 3050 (1658):

Օգոստոսի 12. – Մ. Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Գրում է. «Ես զարմանում եմ, թե ինչպես կարելի է խնդրել, որ երրորդ սրբագրությունը ես Ձեզ ուղարկեմ (տե՛ս հունիսի 24, 29, հուլիսի 21), չնշելով թե քանի օր տառերը բռնված պիտի լինին առաջին երկու սրբագրությունով, երկու շաբաթ էլ պետք կլինի սպասել, որ երրորդ սրբագրությունը ստացվի: Այդպիսի գործի համար ահագին քանակությամբ տառեր են պետք, կրկնակի գին և այն ժամանակ հազիվհազ տարին մի քանի գիրք կարողանանք տպել»:

Տեղեկացնում է, որ բանաստեղծի նախորդ «ուղղելիքը աչքի են առնված»: Հայտնում է, որ առաջին գրքից իր մոտ օրինակներ կան մնացած. երկրորդ գրքի հետ դրանք էլ կուղարկի:

ՈՒՅ 4, 310-311:

Օգոստոսի 12, Ջալալօղլի. – Նամակ Թիֆլիս՝ Ավ. Արասխանյանին:

Գրում է մոր հիվանդության, Գր. Վանցյանից ստացած նամակի և մի քանի գյուղերում տարածված խոլերայի մասին:

ԵԼԺ 9, 110, 514:

Օգոստոսի 14, Ջալալօղլի. – Գրում է «Օ՛, լո՛ւռ կաց, ընկեր, այդ ի՞նչ ես ասում...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 125, 578:

Օգոստոսի 31. – Ան. Աբովյանի բաց նամակը Թումանյանին՝ Մեծիբուժեից:

Գրում է, որ խոլերան ուզում է հիմա էլ իրենց մոտ հյուր գալ: Խնդրում է իրեն պատասխանել Կամենեց – Պոդոլսկի հասցեով սեպտեմբերի 5-6-ը:

ԳԱԹ ԹՖ, 768 (211 լր.):

Աշնանամուտ. – Հանդիպում է Ս. Հովվյանի հետ:

Ջրուցում են հրատարակվելիք գրքի մասին: Հովվյանը խոստանում է բաժանորդներ գտնել:

ԹԺՀ, 258:

<Սեպտեմբերի սկիզբ>, Թիֆլիս. – Բաց նամակ Ան. Աբովյանին (չի պահպանվել):

Այդ մասին տեղեկությունը՝ Ան. Աբովյանի պատասխան նամակում (տե՛ս սեպտեմբերի 17):

ԳԱԹ ԹՖ, 769 (454):

Սեպտեմբերի 7. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Եջմիածնից:

Գրում է, որ արդեն սարկավազ է, շուտով վարդապետ է դառնալու: Խնդրում է Թումանյանի գրքերից, ներկայացնում է դրանց վաճառքի գումարային հին հաշիվները:

ԳԱԹ ԹՖ, 1561 (381/6 լր.):

Սեպտեմբերի առաջին տասնօրյակ. – Լոռուց՝ Դսեղից, վերադառնում է Թիֆլիս:

Սեպտեմբերի 12-ին Ա. Ղլտճյանին գրում է. «Ես նոր եմ վերադարձել գյուղից, ամառանոց էինք գնացել»:

ԵԼԺ 9, 111:

Սեպտեմբերի 12, Թիֆլիս. – Նամակ Ա. Ղլտճյանին:

Շնորհավորում է ընկերոջը՝ Արսեն անունով կուսակրոն արեղա ձեռնադրվելու կապակցությամբ: Գրում է. «Սիրելի ընկեր, հայոց կուսակրոն հոգևորականությունը այս օրերում ծանր գործ ունի կատարելու. մեր ներկա վիճակի բարվոքման և ապագայի ապահովության խնդիրը դրված է նորա առաջին, դու էլ մտնելով այդ դասակարգի մեջ, պատասխանատու հո-

գատարի պարտականություն ես հանձն առնում: Դու, անշուշտ, քաջ զգում ես այս բոլորը, և ես սրտումս հույս տածելով քո ապագա ազգանվեր և լուսամիտ գործունեության նկատմամբ, համբուրվելով շնորհավորում եմ սրբազան պաշտոնդ և խորասիրտ մաղթում եմ հաջողություն...»:

Տեղեկացնում է, որ Ղլտճյանի համար գրքեր է գնել, պատվիրում է. «Դու աշխատիր գրքեր շատ ունենալ»: Առաքելյանը և Վանցյանը «գրականության մշակ են դարձել»: Մեծ աղմուկ է հանել և անախորժ տպավորություն թողել Գամառ Քաթիպայի «Աստառը» պարսավագիրը՝ Գր. Արծրունու և նրա կնոջ մասին: ԵԼԺ 9, 110-111, 516:

Սեպտեմբերի 17. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց-Պոդոլսկից:

Բանաստեղծի՝ սեպտեմբերի սկզբի անհայտ բաց նամակի պատասխանն է: Գրում է. «Բաց նամակդ ստացա, հուսով եմ, որ փակն էլ արդեն ճանապարհին կլինի»:

Հետաքրքրվում է Գրոմնիցկու «Армяне в Польше» գրքով (Վարշավա, 1889): Ներկայացնում է գրքի համառոտ բովանդակությունը: Ուզում է իմանալ, թե Թիֆլիսում հայտնի՞ է այդ գիրքը: Խնդրում է գրքի հայերեն կամ ռուսերեն թարգմանությունը:

ԳԱԹ ԹՖ, 769 (454):

Սեպտեմբերի 21. – Ջ. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Խնդրում է «Մշակի» խմբագրությունից իմանալ՝ Թումանյանի միջոցով ուղարկված հոդվածը տպագրվելու է «Մշակում», թե ոչ: Եթե չի տպագրվելու, խնդրում է այնտեղից վերցնել ու հանձնել «Մուրճին»: Իսկ եթե ուշ են տպագրելու, պատրաստ է մի քանի բան ավելացնել:

ԳԱԹ ԹՖ, 2187 (1140):

Սեպտեմբերի 25. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Գրում է «Իմ եղբայրները օտարության մեջ...» (տե՛ս հունիսի 26, հուլիս-օգոստոս) բանաստեղծությունից իր ստացած

տպավորության մասին. «Կարծես իմ սրտից են բխել այդ խոսքերը. կրկնում են, չմոռանաս նախկին ուղղությունը. չմոռանաս այն ժողովուրդը, որ քեզ ծնել է: Երգիր ժողովրդի ցավն ու վիշտը, հոգսն ու թշվառությունը: Սաքոներիդ ձեռից բաց չթողնես»:

Խնդրում է Թումանյանի գրքից «մի 15 հատ»: Հարցնում է օրիորդ Աննա Սահակյանից, խնդրում է Վրթանես Փափազյանի հասցեն: Հետաքրքրվում է. «Ի՞նչ եղավ հայոց թատրոնի բանը, պիտի կայանա՞ թե ոչ»:

ՈՒՀ 4, 311:

<Սեպտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Նամակ Մոսկվա՝ Մ. Բարխուդարյանին:

Դժգոհում է, որ «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի տպագրությունն ուշանում է. «...Մի՞թե ուսանողները ինձանից առաջ էին գործը հանձնել ձեր տպարանին*, եթե այդպես էր, յուր ժամանակին կհայտնեիք»:

* Խոսքը վերաբերում է «Հօգուտ ռուս սովյալների» ժողովածուին, որ հրատարակվում էր Մոսկվայի հայ ուսանողների նախաձեռնությամբ: Լույս է տեսել 1892 թ. աշնանը:

ԵԼԺ 9, 111-112, 516 - 517:

<Սեպտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Նամակ Բ. Թումանյանին (չի պահպանվել):

Խնդրում է Մոսկվայից ստանալ իր գրքերը: Տեղեկությունը՝ պատասխան նամակում (տես՝ հոկտեմբերի 23):

ԳԱԹ ԹՖ, 1230 (648):

Սեպտեմբեր, Թիֆլիս. – Տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 9, էջ 1273) «Ամառային երեկո» («Ամռան գիշերվա երկինքն աստղալի...») բանաստեղծությունը՝ առանց վերնագրի:

ԵԼԺ 1, 123, 578:

Սեպտեմբեր. – Գրում է «Տենչ» («Մեկն էլ այն է հոգուս անթիվ տենչերի») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 126, 579:

Հոկտեմբերի 14, Թիֆլիս. – Գրում է գրախոսական Պ. Սո-

ճոռյանցի «Բանաստեղծություններ» (Ալեքսանդրապոլ, 1892) գրքի մասին:

Գիրքը համարում է խոտան, իսկ հեղինակին՝ «բանաստեղծի հռչակ ունենալու ցանկությամբ հիվանդացած», «բնատուր շնորհքից զուրկ, մտքեր, թեմաներ մուրացող, հանգեր թխող, անճոռնի աղաղակներով Օլիմպոսի գագաթը ձգտող, փառքերի ետևից ընկած» շատերից մեկը:

ԵԼԺ 6, 13-17:

Հոկտեմբերի 20. – Ան. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց – Պոդոլսկից:

Գրում է Միցկևիչի մասին «Նոր - Դարում» տպագրված մատենախոսության մասին: Ինքը այդ համարները կորցրել է: Խնդրում է Թումանյանին ծարել և ուղարկել իրեն, եթե հնարավոր է, ռուսերեն թարգմանությամբ, եթե ոչ, ստիպված կլինի ինքը թարգմանել:

ԳԱԹ ԹՖ, 770 (455):

Հոկտեմբերի 23. – Բ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Մ. Պետերբուրգից:

Գրում է, որ ստացել է Թումանյանի գրքերը: Հարցնում է բանաստեղծի կարծիքը իր և Ալ. Մելիքյանցի թարգմանությունները տպագրելու մասին: Հետաքրքրվում է հրատարակչական ընկերության պայմաններով:

ԳԱԹ ԹՖ, 1230 (648):

Հոկտեմբերի 25. – Մ. Բարխուդարյանի հեռագիրը Թումանյանին՝ Մոսկվայից:

Գրում է, որ «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը պատրաստ կլինի նոյեմբերի 1-ին:

ԳԱԹ ԹՖ, 1040 (566):

Հոկտեմբերի 27. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին:

Գրում է, որ ստացել է Թումանյանի նամակը: Խնդրում է գրքերից 20 օրինակ ուղարկել: Ինչ-որ թարգմանություն է անում ռուսերենից, որը կուղարկի «Մուրճին»:

ԳԱԹ ԹՖ, 1562 (812):

Հոկտեմբերի 28. – Ա. Տեր-Հակոբյանի նամակը Թումանյանին՝ Շուլավերից:

Նամակաբերը Արշամի աներոջ որդին էր՝ Աբրահամը, որ գալիս էր վկայագիր ստանալու: Խնդրում է Թումանյանին օժանդակել խնդրի արագ լուծմանը, քանի որ նոյեմբերի 1-ին արդեն կանչված է զինապարտության:

ԳԱԹ ԹՖ, 2213 (493/7):

<Հոկտեմբերի վերջ>, Թիֆլիս. – Բաց նամակ ԱՆ. Աբովյանին (չի պահպանվել):

Հավանաբար ԱՆ. Աբովյանի վերջին նամակի (տե՛ս հոկտոմբերի 20) պատասխանն է: Հարցնում է Միցկևիչի մասին գրված հոդվածներից «Նոր - Դարում» և այլուր, հատկապես «Նոր - Դարի» այն համարի մասին, որտեղ տպագրվել է Միցկևիչի մասին մատենախոսական: Տեղեկությունը՝ պատասխան նամակում (տե՛ս նոյեմբերի 17):

ԳԱԹ ԹՖ, 771 (456):

<Հոկտեմբեր>, Թիֆլիս. – Տպագրվում են («Մուրճ», 1892, թիվ 10, էջ էջ 1433, 1434) և «Օ», լու՛ռ կաց, ընկե՛ր, այդ ի՞նչ ես երգում...» և «Ա՛խ, ո՛րքան փարթամ կյանքը ծաղկում է...» բանաստեղծությունները:

ԵԼԺ 1, 119, 125, 577, 578:

Նոյեմբերի 1. – Հ. Ստեփանյանի նամակը Թումանյանին՝ Շուլշից:

Գրում է, որ 18-19 օր է, ինչ ստացել է իր նամակի պատասխանը: Հարցնում է Թումանյանի նորածին երեխայի անունը:

ԳԱԹ ԹՖ, 2003 (446 լր.):

<Նոյեմբերի սկիզբ>, Թիֆլիս. – Բաց նամակ ԱՆ. Աբովյանին (չի պահպանվել):

Հետաքրքրվում է Միցկևիչի մասին տպագրված հոդվածներով՝ «Նոր-Դարում» և այլուր: Հարցնում է մասնավորապես «Նոր-Դարի» այն համարի մասին, որտեղ տպագրվել է Միցկևիչի մասին խմբագրական:

Տեղեկությունը՝ պատասխան նամակում (տե՛ս նոյեմբերի 17):

ԳԱԹ ԹՖ, թիվ 771 (456):

Նոյեմբերի 17. – ԱՆ. Աբովյանի նամակը Թումանյանին՝ Կամենեց - Պոդոլսկից:

Հետաքրքրվում է «Նոր - Դարի» 1890 թ. այն համարներով, ուր նյութեր կան Միցկևիչի մասին: Տեղացի ոմն պ. Գրիցին գարմացել է, որ լեհացի գրողները հայերի մասին այնքան շատ գրվածքներ ունեն, իսկ հայերը լեհացիների մասին՝ գրեթե ոչինչ: Դրա համար, Գրիցինի խնդրանքով, ուզում է «Նոր - Դար» պարբերականում տպագրված գովեստի խոսքերը Միցկևիչի մասին թարգմանաբար ներկայացնել լեհերին:

«Քանի դու պստիկ մարդ էիր, այդ ժամանակ ծուլություն չէր նկատվում քո մեջ, իսկ այժմ, որովհետև տաղանդիկ շնորհիվ մեծ մարդ ես դարձել, ծուլացել ես մեզ նման պզտիկ մարդերի նկատմամբ»:

«Սակայն իսկական բանաստեղծի կոչումը չէ կարող պարունակել յուր մեջ հպարտության ոգին: <...> Քո բարեկամները յարաբ ովքե՞ր են, արդյոք չի կարելի, որ դրանց խնդրես իմ մասին էլ մի կարգադրություն անեն, էս չարքաշ կյանքից ազատեն»:

Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես քո թե՛ մտավոր և թե՛ նյութական առաջադիմության մասին նույնքան ուրախ եմ, որքան որ ուրախ կլինեի ինքս ինձ համար:

<...> Չերոնց բարևում եմ փոխադարձաբար:

Իսկ քեզ ո՛չ բարևում, և ո՛չ էլ բարևդ ընդունում եմ»:

ԳԱԹ ԹՖ, 771 (456):

Նոյեմբերի 23. – Մ. Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Ներողություն է խնդրում գրքի տպագրությունն ուշացնելու համար: Պատճառը գրաշարների պակասն է եղել: Տեղեկացնում է. «Վերջապես տպագրությունը ավարտեցինք և այսօր գրքերի մի մասը ճանապարհ եմ ձգում պ. Փ. Վարդազարյանի անունով, իսկ մյուս մասը կուղարկեմ, երբ գրաքննությունից կստանամ լույս հանելու իրավունքը»:

ՈՒՀ 4, 312:

Նոյեմբերի 27. – Մասնակցում է Գր. Արծրունու թաղման արարողությանը:

Հուլարկավորության ժամանակ ծանոթանում է Ախալքալաքից իբրև թաղման պատգամավոր եկած Ջալալ Տեր-Գրիգորյանի հետ: Բազարնայա փողոցին ուղղահայաց փողոցներից մեկում՝ Հրատարակչական ընկերության գրասենյակում՝ «Մշակի» խմբագրատնից ոչ այնքան հեռու, թումանյանը կատարում էր թաղմանը եկած պատգամավորների և ծաղկեպսակների գրանցումը (կատարում է թվով 308 գրանցում):

ԹԺՀ, 400-401:

Նոյեմբերի 30. – Սարգիս քահանա Տեր - Սարգսյանի նամակը թումանյանին՝ Գյուլագարակից:

Դիմում է թումանյանին «անմոռաց եղբայր իմ» արտահայտությամբ և խնդրում տեղեկություն հաղորդել կոնսիստորիայում իր որդուն ծննդյան վկայական տալու մասին դիմումի վերաբերյալ: Խնդրում է կոնսիստորիայից ստանալ և շտապ ուղարկել, իր կողմից ողջունել Կարապետ Արտամիջյան տեր Հովհաննես հորը:

ԹՏԹ, 2229:

Նոյեմբերի <երրորդ տասնօրյակ>, Թիֆլիս. – Մոսկվայից ստանում է «Բանաստեղծությունների» երկրորդ գրքի երկու ազդօրինակ:

ԵԼԺ 9, 517:

Նոյեմբերի <երրորդ տասնօրյակ>, Թիֆլիս. – Նամակ Մոսկվա՝ Մ. Բարխուդարյանին:

Դժգոհում է «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի տպագրության որակից. «...արտաքինը այլանդակ է ուղղակի ... Ավելի խայտառակ է ներքին մասը. առաջին կարդալով 40 սխալ գտա: Դուք անկարելի եք համարում երրորդ սրբագրության իմ տեսնելը, և երաշխավորում տպագրության մաքրության համար (տե՛ս օգոստոսի 12): Այժմ, ասացեք խնդրեմ, կարելի՞ է տալ հասարակությանը մի 160 երեսանոց գիրք, այն էլ բանաստեղծություններ, այսքան սխալներով: Ձեր սրբագրողը կամ հայերեն չի իմացել, կամ, ինչպես ասում են, գլխիցն

ըռադ է արել, բայց այդ չի կարելի ներել. պետք է հասկանալ, թե ինչ նշանակություն ունի հեղինակի համար ընդհանրապես, և բանաստեղծի համար մասնավորապես, ամեն մի խոսք, մի կետ»:

ԵԼԺ 9, 112-113:

Նոյեմբեր. – Մոսկվայում 1200 տպաքանակով լույս է տեսնում «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը:

ԵԼԺ 9, 517:

Նոյեմբեր, Թիֆլիս. – Կովկասի հայոց հրատարակչական ընկերության գրասենյակում ծանոթանում է Ավ. Իսահակյանի հետ:

Իսահակյանը դեռ Գևորգյան ճեմարանի աշակերտ էր և եկել էր Թիֆլիս՝ թումանյանի «Բանաստեղծությունների» առաջին հատորի վաճառքից գոյացած գումարը հեղինակին հանձնելու: Հարցնում է իր գրքի թողած տպավորության մասին: Իսահակյանը մի քանի ոտանավոր է արտասանում առաջին հատորից և հեղինակից նվեր ստանում երկրորդ հատորը:

Իսահակյանը հիշում է. «Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա թումանյանից: Վարմունքը պարզ էր և ընկերական: Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի՛ ներքին լույսով: Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն: Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա»:

ԹԺՀ 7:

Նոյեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 11, էջ 1564) «Կասկած» (Ո՞վ ես, չար ոգի, դո՛ւ, որ իմ սրտում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 117, 576:

Նոյեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 11, էջ 1583) «Տենչ» («Մեկն էլ այն է հոգուս անթիվ տենչերի...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 126, 579:

Դեկտեմբերի 27, երեկոյան ժամը 10 լույս 28-ի գիշեր, ժամը

1. – Մասնակցում է Ս. Աղաբալյանի հարսանիքին և ընտրվում թամադա:

ԹԺՅ, 401:

Դեկտեմբեր. – Լույս է տեսնում Տ. Փիրումյանի հոդվածը: Գրում է, որ ինքն է թումանյանին պատմել «Ախթամար» բալլադի հիմքում ընկած լեգենդը (տե՛ս նաև՝ 1893, մարտ-ապրիլ):

«Աղբյուր», 1892, թիվ 12:

Դեկտեմբեր, Թիֆլիս. – Գրում և տպագրում է («Մուրճ», 1892, թիվ 12, էջ 1800) «Մոռացված սեր» («Սիրում էի երբեմն քեզ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 127, 579:

Դեկտեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1892, թիվ 12, էջ 1815) «Օր. Օ. Գ.-ի ալբոմում» (Ի՞նչ ես ուզում, որ թողնեի...)» բանաստեղծությունը (տե՛ս 1893, հունվարի 6):

ԵԼԺ 1, 133, 581:

1892, Թիֆլիս. – Գրում է «Վատ օրեր» («Ցուրտ է, իմ ընկեր, ու հողմ ահագին...») ոտանավորը:

ԵԼԺ 1, 128, 579:

1892, Թիֆլիս. – Հոր՝ տեր Թադևոսի, կնոջ և 3-ամյա որդու՝ Մուշեղի հետ մտնում են Գոլովինսկի (այժմ՝ Ռուսթավելի) պողոտայում գտնվող երկհարկանի խաղալիքի խանութը:

Երբ տեր Թադևոսը թոռնիկի համար խաղալիք է գնում (ծի լծած մի կառք), թումանյանը խնդրում է իր համար էլ խաղալիք գնել. «Ես էլ քո երեխեն եմ, ինձ համար էլ առ»: Հայրը նրա համար ևս գնում է մի խաղալիք՝ կեզլի:

ԹԺՅ 335:

1 8 9 3

Հունվարի 6, Թիֆլիս. – Գրում է «Օր. Օ. Գ.-ի ալբոմում» («Ի՞նչ ես ուզում, որ թողնեի...») բանաստեղծությունը:

Բանաստեղծությունը գրված է Օ. Գիրգիոյանի ալբոմում:

Թումանյանը մտադիր է եղել տպագրել «Մուրճի» 1893 թ. առաջին համարում: Բայց ստացվում է այնպես, որ հանդեսի 1892 թ. թիվ 12-ում բանաստեղծի արդեն շարված մի թարգմանությունը վերջին պահին գրաքննությունն արգելում է: Ազատված էջում զետեղվում է այս բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 133, 581:

Հունվարի 16. – Թիֆլիսի «Новое обозрение» լրագրում առաջին անգամ ռուսալեզու մամուլում քննադատական արձագանք թումանյանի ստեղծագործությունների մասին:

Հեղինակը Շիրվանզադեն էր: Նա իր հոդվածում ներկայացնում է 1890-1892 թթ. «Մուրճ» ամսագրում տպագրված գործերի տեսությունը, որտեղ առանձնացնում է Հովհ. Թումանյանին, մասամբ էլ («отчасти») Լ. Մանվելյանին: Գրում է, որ թումանյանի լավագույն ստեղծագործություններում «пробиваются искренние чувства и проблески благородных порывов»: Հիմնական արժանիքը համարում է բնականությունն ու պարզությունը («естественность и простота»):

“Новое обозрение”, հունվար:

Հունվարի երկրորդ կես, Թիֆլիս. – Նամակ Գր. Վանցյանին (չի պահպանվել):

Նամակի հետ գրքեր էլ է ուղարկել: Գրում է, թե «Մուրճի» այդ համարում ոչինչ չունի: Բովանդակությունը՝ ըստ պատասխան նամակի (տե՛ս հունվարի 26):

ԳԱԹ ԹՖ, 2021 (990):

Հունվարի 24. – Ան. Աբովյանի նամակը թումանյանին՝ Կոմենեց-Պոդոլսկից:

Թումանյանը Ան. Աբովյանի խնդրանքով նրան նյութական օժանդակություն է ցույց տվել: Ան. Աբովյանը շնորհակալություն է հայտնում. «Ինձ ու ինձ ամաչում եմ, թե ինչպես ես քեզ այդքան նեղություն տվի <...> շնորհակալության համար բառ չեմ գտնում: Հավատացիր, որ շատ հարուստներից կարող էի ստանալ, սակայն երբ որ մի մարդու հետ ես մտերմություն չունեմ, քաղցից կմեռնեմ ու մի կտոր հաց չեմ ուզիլ <...> անիծում եմ ինձ, որ քեզ բան ասի: Ես երբեք չեմ ցանկանալ այն եղբայ-

րական սերը, որը տածում եմ դեպի քեզ իդեալապես, նյութապաշտության գույն տալ դորան...»:

ԳԱԹ ԹՖ, 772 (211 լր.):

Հունվարի 26. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին:

Խնդրում է, որ իր թարգմանությունները Հրատարակչական ընկերությունը տպագրի, եթե ոչ, թող համծնի «Աղբյուրին»:

Վարձատրություն չի ուզում, միայն մաքուր ու լավ թղթի վրա տպագրեն:

ԳԱԹ ԹՖ, 2021 (990):

Հունվարի 31. – Հ. Ստեփանյանի նամակը Թումանյանին՝ Շուշիից:

Խնդրում է ուղարկել «Նոր - Դարի» կրիտիկան «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի մասին, հետն էլ՝ «Շուտով ուղարկիր մի հինգ օրինակ, մեկը ես վերցնեմ, չորսն էլ բաժանորդ գրողներին տամ»:

ԳԱԹ ԹՖ, 2005 (446):

Հունվար. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1893, թիվ 1, էջ 77) «Կալի երգը» («Կալ արա, գնանք...») բանաստեղծությունը՝ «Լոռեցունց» ենթավերնագրով:

ԵԼԺ 1, 42, 552:

Փետրվարի 1, Թիֆլիս. – Գրում է «Օրորոցագող» («Կես գիշերին մութ խրճիթում...») բալլադը:

ԵԼԺ 2, 103, 554:

Փետրվարի 4. – «Բանաստեղծությունների» առաջին հատորի մեկ օրինակ և երկրորդ հատորը միասին՝ շքեղ կազմով, նվիրում է Դարյա Գուլոշյանին:

Հեղինակի ընծայականը. «Եղբայրական սիրո հետ օրիորդ Դարյա Գուլոշյանին նվիրում է հեղինակը» և ապա՝ «Ո՛հ, մեղմացնել չես կարող դուն...» բանաստեղծության 17-24 տողերը.

ես ուզեցի արդար երգել
եվ օրհնություն, և անեծ,
Սիրով սրտերը բորբոքել,
Որ նախանձը բաժանեց,
Կյանքի աղմուկն ու գոյության

Պատերազմը տմարդի,
Արգելեցին լիաբերան
Երգել գեղմունքն իմ սրտի:
ԵԼԺ 1, 64, 559. ԱԻ, 201-202:

Փետրվարի 12, Թիֆլիս. – «Համլիկ» դրամայի առաջին ծրագրային գրառումները ծոցատետրերից մեկում:

ԱԻ, 542-543:

Փետրվարի 22. – Ավ. Տեր-Իրաննիսյանի (Ասպետ)՝ նամակը Թումանյանին՝ Ագուլիսից:

Նամակն ստացվել է «Մուրճի» հասցեով: Գրում է, որ իր մասին կարող է տեղեկություններ ստանալ Հայկ Գևորգյանից: Խնդրում է իր՝ Թումանյանի և Վաղարշակ Համբարձումյանի հասցեն:

ԳԱԹ ԹՖ, 945 (251 լր.):

Փետրվարի 24. – Դ. Գուլոշյանի նամակը Թումանյանին:

Ափսոսում է, որ երկար չի կարող գրել, քանի որ դպրոցներում ահագին խռովություններ են տեղի ունեցել, որոնց հետևանքով հնարավոր է՝ թողնեն ուսումնարանը և հեռանան, թեև իրենք՝ ապստամբողները, մեծամասնություն են կազմում:

Իր և աշակերտուհիների կողմից շնորհակալություն է հայտնում բանաստեղծին «ընծաների համար» (տե՛ս փետրվարի 4):

ԳԱԹ ԹՖ, լ.գ. 296, ԹԹ, 2522:

Փետրվար. – Տպագրվում է («Մուրճ», 1893, թիվ 2, էջ 267-268) «Օրորոցագող» բալլադը՝ «ժողովրդական առասպել» ենթավերնագրով:

Հեղինակի ծանոթագրությունը. «Հայոց գյուղերում ընդունված է գոյությունը մի չար ոգու, որի պաշտոնն է գիշերը, մեծերի քնած ժամանակ խեղդել տղա երեխաներին օրորոցում կամ փոխել՝ տեղը մի դև դնելով: Ձանազան գավառներում այլ և այլ անուններ ունի այս դևը, Լոռի կոչվում է օրորոցագող»:

ԵԼԺ 2, 103, 554:

Մարտի 1. – Սեդրակի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Նամակը գրում է Թումանյանի բարեկամներից (ազգականներից) մեկի հանձնարարությամբ: Հիշեցնում է, որ իր «Սասուն» խորագրով գործը ուղարկել է Հրատարակչական ընկերությանը և ոչ մի պատասխան չի ստացել: Խնդրում է ուղարկել «Սասունի» ծրարը. ստացե՞լ են, թե՞ ոչ, և ստացած 28 ռ. գումարը ինչ նպատակով է եղել:

ԹՏԹ, 2523:

Մարտի 9. – Ա. Ղլտճյանի նամակը Ավ. Իսահակյանին (տե՛ս 1892, <մարտի սկիզբ>):

ԳԱԹ ԹՖ, 3096 (509 լր.):

Մարտի <14-15>, Թիֆլիս. – Նամակ Գր. Վանցյանին (չի պահպանվել):

Այդ մասին հիշատակություն կա Աղասի Հովվյանի մարտի 16-ի նամակում. «Անցյալ օրը Վանցյանը քեզանից նամակ էր ստացել. գրել էիր. «Աղասու նամակը նրան հասցրու», այնինչ ինձ վրա նամակ չկար ստացված»:

ԳԱԹ ԹՖ, 1534 (795):

Մարտի 16. – Ա. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Արագովայից:

Գրում է, որ չնայած երկու նամակին պատասխան չի ստացել, երրորդն է գրում՝ հուսալով պատասխան ստանալ այս անգամ, իմանալ քաղաքի նորությունները. «Իսկ մեզանում, գիտես արդեն գյուղական անշարժ կյանքը, այնպիսի աչքի ընկնող բան չկա, որ հաղորդեմ»: Նամակի հետ ուղարկում է ջութակի աղեղը, որի մագերը մաշվել, թափվել են և խնդրում է Դվորցովայա փողոցի վրա գտնել համապատասխան մասնագետին և լարերը ձգել տալ:

ԳԱԹ ԹՖ, 1534 (795):

Մարտի <18-20>, Թիֆլիս. – Այցելում է Թիֆլիսի անատոմիական թատրոնի դահլիճ՝ ներկա լինելու սպանված ընկերոջ՝ Տ. Օքոնյանի մարմնի հերձման տխուր արարողությանը:

Հեռանում է սաստիկ ծանր տպավորությամբ. «Մի բութ դանակով կտրատում էին վերքերը, լայնացնում էին. և, բացի այն տխուր տպավորությունը, որ թողեց սպանված ընկերոջս

դին, մարմնիս վրա ցավում են սաստիկ այն տեղերը, ինչ տեղեր կտրատում էին նրա վրա»:

ԵԼԺ 9, 114:

<Մարտի երկրորդ տասնօրյակ>, Թիֆլիս. – Հանդիպում է Ա. Կրասիլնիկյանի հետ:

Վերջինս հեղինակից վերցնում է նրա «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի 30 օրինակ՝ վաճառելու նպատակով:

ԵԼԺ 9, 115:

Մարտի 22, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Ա. Ղլտճյանին: Տեղեկացնում է, որ ուղարկում է «Բանաստեղծությունների» երկրորդ հատորից 40 օրինակ, որից 20-ը բաժանորդների, 12-ը Տիգրան սարկավազ Բաղդասարյանի և 8-ն էլ վաճառքի կամ նվիրատվության համար: Ցավում է, որ գրքերը չի կարողանում կազմած ուղարկել:

Հետաքրքրվում է. «Իսկի գրեցին ոչ, թե գիրքս ինչ տպավորություն թողեց կարդալուց հետո. երևում է, որ շատ աննկատելի է մնացել և չի արժանացել ուշադրության»:

ԵԼԺ 9, 114, 517-518:

Մարտի 22, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Հովվյանին:

Գրում է, որ «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի տպագրությունն ավարտվել է: 150 օրինակ արդեն ստացել է: Ուղարկում է 20 օրինակ՝ 8-ը բաժանորդներին, 12-ը «անհապաղ» վաճառքի համար:

ԵԼԺ 9, 115 – 116:

Մարտի 28, Թիֆլիս. – Գրում է «Քրիստոս հարյավ... Ա՛խ, և այս հոժ...» բանաստեղծությունը:

Թիվ 12 ծոցատետրում պահպանված ինքնագիրը արտագրված է Օ. Գիրգիդյանի ալբոմից: Վերնագրից առաջ՝ բանաստեղծի նշումը. «Օսանի ալբոմից, գրած 93 III / 28, Չատկին, экспромт»:

ԵԼԺ 1, 134, 581-582:

Մարտի <28 – 29>. – Տեղեկացվում է, որ Ա. Հովվյանը

Բարձրում արդեն ստացել է «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի՝ վաճառքի համար նախատեսված օրինակները (տե՛ս մարտի 31):

Ս. Դովվյանը գրում է. «Ստացա ուղարկած գրքերը. համարիր, թե բոլորը ծախել են»:

ԳԱԹ ԹՖ, 1541 (801):

Մարտի 30, Թիֆլիս. – Անդրադառնում է «Հաշտություն» («Կովկասի ամպամած երկինքը պարզվեց...») բանաստեղծությանը:

Գրված է մեկ տարի առաջ: Կրկին անդրադառնալով՝ Թումանյանն ստեղծում է ինքնագիր նոր տարբերակ:

ԵԼԺ 1, 132, 451, 580-581:

Մարտի 31. – Ս. Դովվյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է, որ չի հիշում՝ բաժանորդների բաժանորդավճարը ուղարկել է, թե ոչ, խնդրում է հիշեցնել, որ բոլորը միասին ուղարկի:

ԳԱԹ ԹՖ, 1541 (801):

Մարտ. – Առաջին անգամ լույս է տեսնում («Մուրճ», թիվ 3, էջ 433-435) «Հառաչանք» պոեմի առաջին հատվածը (29-108 տողերը)՝ «Հառաչանք» պոեմայից» վերնագրով:

Պոեմի տպագրությունը ժամանակին խանգարվել էր գրաքննչական արգելքների պատճառով, իսկ ամբողջական ձեռագիրը ըստ երևույթին կորել է բանաստեղծի ձեռքակալության ժամանակ ոստիկանության բռնագրաված ձեռագրերի հետ: Տպագրված հատվածը «Հառաչանքի» առաջին տարբերակի «Վերջերգն» է:

ԵԼԺ 3, 507. ԱԻ 524:

<1893 Մարտ>, Թիֆլիս. – Գրում է «Գերեզմաններում վաղուց հանգչում են...» բանաստեղծությունը:

Նվիրված է Չոփուրի ըմբոստ տղաների հիշատակին:

ԵԼԺ 1, 345. ԱԻ 524:

Մարտ. – Լույս է տեսնում («Մուրճ», 1893, թիվ 3, էջ 457-

460) Ղ. Աղայանի «Դովի. Թումանյանի «Անուշից» մի ճաշակ» հոդվածը:

Գրված է «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի առիթով: Ընդգծում է Թումանյանի ստեղծագործության օրգանական կապը հայրենի երկրի ու ժողովրդի հետ: Գրում է. «Վերջին ժամանակներս մեր գրականության նորատունկ բուրաստանի մեջ մինը մյուսի հետևից դուրս եկան նոր-նոր ժաղիկներ, նորերումս փթթեց մի նոր ժաղիկ ևս՝ անուշահոտ ու համեստ, ինչպես վճիտ աղբյուրների ավերում բուսած մանուշակը Գուգարաց աշխարհում»:

ՂԱԵԺ, էջ 221 – 224:

Մարտ. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1893, թիվ 3, էջ 421) «Վատ օրեր» («Ցուրտ է, իմ ընկեր, ու հողմ ահագին...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 128, 579:

Մարտ - ապրիլ. – Լույս է տեսնում Տիգրան Փիրումյանի հոդվածը Թումանյանի «Ախթամարի» ժողովրդական աղբյուրի մասին (տե՛ս 1891, Թիֆլիս):

«Տարագ», 1893, թիվ 3:

Ապրիլի 2. – Զ. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Տեղեկացնում է, որ Գրիգորն այդ տոներին Ախալքալաքում էր, դեռ չի եկել: Նրա բացակայության պատճառով Թումանյանի գրքերը փոստից դեռ չեն ստացել, իսկ ինքը անհամբերությամբ սպասում է և հուսով է, որ հաջողությամբ կտարածեն: Շնորհավորում է «մեծարելի» Ղ. Աղայանի հոդվածի առթիվ (տե՛ս մարտ): Նրա պես զգացմունքի մարդու, սրտով խոսող, անկեղծ մարդու կարծիքը հաջողության մեծ գրավական է համարում: Խնդրում է իմանալ, թե Զրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովը Սեդրակի «Սասունի» մասին (տե՛ս մարտի 1) ինչ վերջնական տնօրինություն է արել, նա էլ իր հերթին խնդրում է, որ Թումանյանը չզլանա տեղեկություն տալ:

ԳԱԹ ԹՖ, 2188 (1141):

Մինչև ապրիլի 8-ը. – Ախալքալաք՝ Գր. Վանցյանին է

ուղարկում իր գրքերն ու մի նամակ (չի պահպանվել):

Գրում է, որ Մովսես Կաղանկատվացու գրքերը դեռ չի գնել, բայց կգնի ու կուղարկի: Հարցնում է Վանցյանի՝ «Մուրճում» տպված նամակի մասին. «Ինչի՞ ես հարցնում «Մուրճում» տպած նամակիս մասին. նա ինձ վրա լավ տպավորություն թողեց, գրիր հարցմանդ պատճառը», - իր հերթին հարցնում է Վանցյանը:

Տեղեկությունը՝ ըստ Վանցյանի պատասխանի (տե՛ս ապրիլի 8):

ԳԱԹ ԹՖ, 2022 (991):

Ապրիլի 8. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Գրում է Ախալքալաքի ընթերցողների՝ Թումանյանի «Բանաստեղծությունների» երկրորդ հատորից ստացած տպավորության մասին. «Ուզում էի մի քննադատություն գրել, կանգ առնելով մանավանդ «Կանչի» վրա, սակայն Աղայանցը կանխեց և վախեցա ցենզուրան թույլ չտա:

«Կանչը» ամեն տեղ ֆուրոր է անում. Это действительно высокохудожественное произведение. Եթե, Հովհաննես ջան, ուրիշ ոչ մի բան չգրեիր, այդ ստեղծագործությունդ բավական էր քեզ բանաստեղծի մեծ կոչմանը արժանացնելու: Ունիս, այո՛, և ուրիշ գեղեցիկ բաներ, ունիս և շատ թույլ բաներ, բայց «Կանչը» դա գլուխգործոց է, դա մի գոհար է <...> ես և շատերը ինձ հետ քեզանից սպասում էինք ժողովրդական ոգու արտահայտություն՝ գեղարվեստական արվեստով արտաբերված, այդ ուղղությամբ գրածներիցդ այս գրքում ամենահաջողակը «Ախթամարն» է <...> «Անուշիդ» առաջին մասը շատ է ձգձգված և ըստ իս, շատ էլ աջողակ չէ: «Մերժված օրենքը» գեղեցիկ է: Լիրիքականներդ, ինչպես ասացի, առհասարակ հաջողակ են, թարգմանություններդ, թեև բնագրի հետ չեմ համեմատել, բայց անհաջող են երևում: Թարգմանություններից մի քիչ ձեռ քաշի: Ի վերջո «Գիշերային մտածումները», «Խորհրդածությունը» և այլք ընտիր բաներ են»:

Խնդրում է նորություններ գրել «Մշակի» և Հայրիկի մասին: Իր «Սենյակս» գործի անհաջողությունից զարմացած է, մտածում է, թե թարգմանության լեզուն է վատ, բայց բովանդակու-

թյունը անպայման գովելի է: Շնորհակալություն է հայտնում ուղարկած գրքերի համար, տեղեկացնում է, որ 2 – 3 օրում Աղասին գրքերից 10-ն է հասցրել վաճառել, բայց կարծում է, թե դժվար բոլորը կարողանա վաճառել, քանի որ գրքերից մի քանիսը ներկոտ են:

ՌԻՀ 4, էջ 313-314:

Ապրիլի 12. – Ասպետի (Ավ. Իոաննիսյան) նամակը Թումանյանին:

Ուղարկում է 3 ռուբ. 30 կոպեկ. «2 ռուբ. 70 կոպեկը հոգուս պարտքն է, որ այս կյանքում ուզում եմ վճարել, մնացած 60 կոպեկը հատկացնում եմ ազնիվ զգացմունքներիդ ժողովածուին»:

ԳԱԹ ԹՖ, 946 (251 լր.):

Ապրիլի 13. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Տեղեկացնում է, որ վաղուց է գրքերն ստացել ու վաճառել: Գոյացած գումարը պատրաստվում է փոստով ուղարկել: Գրի-գորի հետ շատ են հերախացել Թումանյանի նոր գրքի առիթով: Խնդրում է հավատարիմ մնալ առաջին հատորի ոգուն. «Ուղղությունիցդ մի փոքր շեղվում ես»: «Շատ գեղեցիկ է «Կանչը», գործերիդ մեջ անգին գոհարն է այդ կտորը <...> Ուզում եմ մի բանաստեղծություն գրեմ ու նվիրեմ քեզ <...> հաջող համազանքի եմ սպասում»:

ՌԻՀ 4, 314:

Ապրիլի 16. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Էջմիածնից:

Գրում է, որ այդ օրը վեղարի և փիլոնի չափսը առել են, հաջորդ կիրակի կլինի ձեռնադրությունը (տե՛ս 1892, սեպտեմբերի 12): Խնդրում է չմոռանալ Սպենդիարյանին իմաց տալ, որ գրքերը վաճառվում են: Հաջորդ նամակով խոստանում է ուղարկել 10 – 20 ռուբլի: Շտապ խնդրում է ևս 15 օրինակ առաջին և երկրորդ հատորներից: Ցանկանում է բաժանորդագրվել «Մուրճին»:

ԳԱԹ ԹՖ, 1563 (813):

Ապրիլի 17. – Գր. Վանցյանի նամակը *Թումանյանին՝ Ախալքալաքից*:

Ստացել է *Թումանյանի* նամակը և զարմացել, որ *Թիֆլիսում* ուզած գիրքը չկա. «Բա մենք գավառներում ի՞նչ գտնենք. գոնե Մակար վարդապետի «Աղվանից աշխարհը» ուղարկիր: Խնքազրությունը չուղարկեց: Ուղարկիր նաև «Սենյակս» »:

ԳԱԹ ԹՖ, 2023 (992):

Ապրիլի 24, Թիֆլիս. – Օ. Գիրգիդյանի ալբոմում գրում է «Ատելուս համար» քառատողը.

Ատելուս համար
Դեռ չեմ զղջացել,
Բայց սիրուս համար
Շատ եմ ողբացել:

ԵԼԺ 1, 135, 582:

Ապրիլի 25, Թիֆլիս. – Գրում է «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա» («Մխիթարություն, սգավոր Վրաստան...») բանաստեղծությունը:

Իբրև «Մուրճի» ներկայացուցիչ՝ մասնակցում է Ն. Բարաթաշվիլու աճյունը Գանձակից *Թիֆլիս* տեղափոխելու առիթով կազմակերպված սգո միտինգին և հայերեն կարդում իր բանաստեղծությունը: Նույն սգո հանդեսում այդ բանաստեղծության վրացերեն թարգմանությունը կարդում է թաղման կարգադրիչ հանձնաժողովի անդամ Ախնազարովը:

ԵԼԺ 1, 136, 582:

<Ապրիլի վերջ – մայիսի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Գր. Վանցյանին (չի պահպանվել):

Խոստանում է առաջիկայում ավելի մանրամասն գրել:

Նամակի մասին տեղեկությունը պահպանվել է Վանցյանի պատասխանում (տե՛ս մայիսի 30), «Շնորհակալություն երկրորդ բաց նամակիդ համար»:

ԳԱԹ ԹՖ 2024 (993):

Մայիսի 7. – Եղիշե Մադաթյանի նամակը *Թումանյանին*՝ Բաքվից:

Շնորհակալություն է հայտնում «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը նվեր ստանալու համար: Խոստանում է մի բան գրել *Թումանյանի* մասին «Մուրճի» մոտակա համարներից մեկում. «Իսկ այժմ ավելորդ չեմ համարում կրկին հայտնելու, որ իմ կարծիքս Ձեր տաղանդի մասին ընդհանրապես շատ նպաստավոր է»:

ՈՒՅ 4, 315:

Մայիսի 10, Թիֆլիս. – Բաց նամակ Ախալքալաք՝ Գր. Բալասանյանին (չի պահպանվել):

Նամակի մասին տեղեկությունը՝ Գր. Բալասանյանի պատասխանում (տե՛ս մայիսի 13):

ԹՏԹ, 3224:

Մայիսի 11. – Թարգմանում է Շելլիի «Good night»՝ «Բարի գիշեր» («Բարի գիշեր՝ ո՛, ո՛ չ երբեք, իմ անգին...») բանաստեղծությունը:

Թարգմանությունը կատարված է Բալմոնտի ռուսերեն թարգմանությունից, Շելլիի ստեղծագործությունների առաջին հատորի 1893 թ. հրատարակությունից, որը մինչև օրս պահվում է *Թումանյանի* անձնական գրադարանում:

ԵԼԺ 2, 236, 590:

Մայիսի 13. – Գր. Բալասանյանի նամակը *Թումանյանին*՝ Ախալքալաքից:

ԳԱԹ Լ.գ. 271. ԹՏԹ 3224:

Մայիսի 20, Թիֆլիս. – Նամակ Էջմիածին՝ Ա. Դլտճյանին:

Շնորհավորում է Սիմեոնի արեղա ձեռնադրվելը՝ Արսեն անունով (տե՛ս նաև 1892, սեպտեմբերի 12, 1893, ապրիլի 16), «Հավատում եմ, որ պիտի լինես «Հովիւ քաջ, որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց», թեև մենք ոչխարներ չենք»:

Թող այդ սրբազան հոգսերի լծի տակ ևս քեզ առաջնորդեն և ոգևորեն այն փայլուն իդեալները, որ փայփայել են ազատ օրերում: Դժվարության ժամանակներում հիշիր Ներսեսներ, Սահակ, Դևոնդ, Եղիշե... և ամեն բոպե մտաբերիր, որ դու նրանց ժողովուրդն են հովվում: Աշխատիր, ընկեր, հովվել և պահ-

պանել այդ վեհերի հոտը ջրերի ակերի հանգստյան տեղերում, դալար մարգերում, և լինել նորա համար վահան՝ թշնամիների դեմ»:

Տեղեկացնում է, որ «Բանաստեղծությունների» առաջին և երկրորդ հատորներից ուղարկում է 25 օրինակ՝ վաճառքի և ծանոթ - բարեկամներին նվիրելու համար:

ԵԼԺ 9, 116 – 117:

Մայիսի 20. – Ա. Ղլտճյանի միջոցով ճեմարանի տեսուչ Լևոն Խոջոյան արեղային նվեր է ուղարկում «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը:

ԵԼԺ 9, 117:

Մայիսի 23. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Ախալցխայից:

Ներողություն է խնդրում, որ ուշացրել է ուղարկել գրքերի վաճառքից գոյացած գումարը. պատճառը՝ «ոչ թե գրքերի ուշ վաճառվելն է, այլ ծուլությունս, բայց ոչինչ, ուշ լինի, նուշ լինի: Վաղ ուղարկեի, մինչև հիմա ծախսած կլինեիր...»:

Գրում է. « «Կանչը» արդեն բերանից բերան է ընկել: Երբ արդար զայրույթ ուզում ես հայտնել կյանքի և աստծո կարգավորության դեմ, այն ժամանակ արտահայտվում է քո ոտանավորով. «Եթե կաս, աստված և...»: Վերջապես ամենահաջող կտորն է ամբողջ գրվածքիդ մեջ»:

«Նոր լուրեր» է ուզում «գլխավորապես Հայրիկի և «Մշակի» մասին. «Այստեղ զանազան աննպաստ լուրեր են պտտվում, փարատիր շուտով, անհամբեր սպասում են: Գրիր մանրամասն երկուսի մասին էլ»:^{*}

^{*} Խոսքը վերաբերում է Սկրտիչ Խրիմյանի՝ կաթողիկոս ընտրվելուն և Գր. Արծրունու մահից հետո «Մշակի» ճակատագրին:

ՈՒՀ 4, 315-316:

Մայիսի 20. – Ալ. Ծատուրյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Գրում է, որ պատրաստվում է հրատարակել «մի ճոխ և մեծահատոր» ժողովածու՝ Աբովյանի հիշատակին, և խնդրում է Թումանյանի աջակցությունը. «Վստահանում եմ հուսալու, որ համակրելով նախածեռնությունս՝ չեք զլանա մեծ հայրենասերի

հիշատակին նվիրված ժողովածուին մասնակցել գրական որևէ վաստակով»:

ԳԱԹ ԹՖ, 1406 (742):

Մայիսի 24. – Ջ. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Գրում է, որ ստացել է «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը: Մանրամասն շարադրում է գրքից ստացած տպավորությունները: Առաջին գրքի հետ համեմատած՝ «մեծ առաջադիմություն» է նկատում, մասնավորապես ընդգծում է, որ «բուն ժողովրդական ոգով խմորված երկերի» կողքին բանաստեղծին «ուրիշ հարցեր էլ են հուզում». «... Միայն ժողովրդական բաներ գրել կարելի էր տալ ավելի նվազ շնորհք ունեցող մեկին: Իսկ իմ անկեղծ խորհուրդն է տաղանդդ *բազմակողմանի* զարգացնել»: Շատ է հավանում բնության «*նկարագրությունները*» հատկապես նրա համար, որ դրանք «*օրյեկտիվ*» են, այսինքն՝ բանաստեղծը ներկայացնում է ոչ թե բնության «ազդեցություններից առաջացած զգացմունքները, հոգեկան տրամադրությունները», այլ բնությունն այնպես, ինչպես որ կա, մի հանգամանք, «որ զեղարվեստական մեծ նշանակություն ունի»: «Սիրո երգերի» գլխավոր արժանիքը համարում է այն, որ «հերոսուհիները» հաճախ հանդես են գալիս «բնության ծոցում». «Այն հոգեկան տրամադրությունը, որ առաջ է գալիս բնության տեսարանի և սիրելի, համակրելի, բնությունը համահավասար սիրող կնոջ ընկերակցության ազդեցությունից, այնքան վեհ և սուրբ է, որ միայն բանաստեղծը կարող է արտահայտել. անկասկած է, որ այդ զգացմունքները երջանիկ են, թևավորում են մեր հոգին և դարձնում են մեզ աստվածաման»: Պոեզիան համարում է «մի լուսատու փարոս». «Բանաստեղծները այդ փարոսի բոցերից պետք է վառեն այն ջահերը, որով ուզում են լույս սփռել ամենուրեք»: Փափագում է իր ընկերոջը տեսնել «միշտ կանգնած բանաստեղծի այս վեհ, վսեմ կոչման վրա»: Եվ ապա. «Սիրելի Հովհաննես, եղիր մեզ համար լուսավորող, պայծառ գաղափարներ տարածող ոգի, սովորեցրու մեզ մտածել և զգալ, ամեն մի լավ բան սիրել, ամեն մի ազնիվ բան համակրել և, իհարկե, ատել, ինչ որ ատելի է, ապրել ոչ թե

հաշվով, շահի համար, այլ հավատով: Փայլիր մեզ համար, ինչպես մի առաջնորդող աստղ, այն ժամանակ մենք կգանք քո ետևից դեպի իդեալը, զգալով մեզ բախտավոր, ոգևորված...»: ՈՒՅ 4, 316-319

Մայիսի 29. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Էջմիածնից:

Խնդրում է Մալունյանին հաղորդել, որ ուզածն ուղարկել է, և զարմանում է, թե ինչու չի ստացել: Գրում է, որ արդեն արել է իր առաջին պատարագը: Իր օրհնությունն է ուղարկում Թումանյանի ընտանիքին: Գրում է նաև հոգևորական դառնալու առաջին պահերի իր ապրումների, պատասխանատվության մասին: Հիշվում են Գյուլնազարյանը, Մալունյանը:

ԳԱԹ ԹՖ, 1564 (814):

Մայիսի 30. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Հարցնում է, թե երբ ուղարկի գրքերի վաճառքից գոյացած գումարը: Խնդրում է իր ուղարկած նամակը տպագրել հաջորդ օրվա «Նոր-Դարում» կամ «Տարազում». որպեսզի օր առաջ Ալեքսանդրապոլն էլ աշխատի Հայրիկից խնդրել, որ նրա ճանապարհը «մեր կողմով» անցնի: Թող իմանան, թե ամառը որտեղ է լինելու: Գրում է, որ ամառվա վերջում կլինի Թիֆլիսում և կհանդիպի Թումանյանին:

ԳԱԹ ԹՖ, 2024 (993):

Մայիս. – Տպագրվում է («Մուրճ», 1893, թիվ 5, էջ 520) «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա» բանաստեղծությունը: ԵԼԺ 9, 136, 582:

Մայիս. – Լույս է տեսնում («Մուրճ», 1893, թիվ 5, էջ 741-749) «Սովի ժամանակներից» պատմվածքը: ԵԼԺ 5, 7, 743:

Մայիս – հունիս. – Լույս է տեսնում («Աղբյուր», 1893, թիվ 5-6, էջ 198) «Աղբյուր» («Սարի լանջին, ժայռի տակ...») բանաստեղծությունը: ԵԼԺ, 131, 580:

Հունիս. – Եղիշեի (<Երզնկյան>) նամակը Թումանյանին՝ Արդվիից:

Խնդրում է գործը տնօրինել այնպես, որ Լոռու գործակալ քննիչ կաշառակեր Վարդան վարդապետի «իզն ու թոզն չի երևա Լոռվա գավառումը»:

Անուշավանի միջոցով ստացել է բանաստեղծի երկրորդ գիրքը, կարդացել, շատ է ուրախացել, որ իր ընկերը էլ «Մալինկի պոետ» չէ, այլ «կատարելության հասակի բանաստեղծ»:

ԳԱԹ ԹՖ, 1165 (316 լր.):

<*Հունիսից հետո*>. – Երգիչներ Ստ. Բարխուդարյանի և Ալ. Մամաջանյանի հետ երբեմն այցելում է Ա. Բարխուդարյանի վարժուհիների հետ գրականության պարապմունքներին:

Ինչպես հիշում են ընկերները, այդ պարապմունքների ավարտը սովորաբար վերածվում էր գրական երեկույթի. «Թումանյանը պատմում էր անեկդոտներ և սրամիտ պատմվածքներ»: Այդ երեկույթներին մասնակցել է նաև Հովհաննես Խիզանյանը: Դրանք սովորաբար տեղի են ունեցել մասնակցող վարժուհիների բնակարաններում կիրակի օրը: Այդ խմբի հետ Թումանյանը երբեմն գնացել է զբոսանքի Թիֆլիսի բուսաբանական այգու սարը կամ ավելի հեռու՝ Ավճալա կամ Օրթաճալա: Այդ խմբի մեջ է եղել նաև Աշխաբադից նոր եկած մի երիտասարդ՝ թառ նվագող Ջանբաբյանը:

ԹԺՂ, 364 – 365:

Հուլիսի 4. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Գրում է, որ անդրանիկ զավակն է ունեցել: Այդ մասին Թումանյանը պիտի տեղյակ պահի Ջալալին և Սեդրակին. «Գուշակությունը, Հովհաննես, կատարվեց, կինս տղա բերեց»:

Ուղարկում է գրքերի վաճառքից գոյացած 19 ռուբ. գումարը: Խնդրում է նամակին անմիջապես պատասխանել՝ գրելով Հայրիկի ու «Մշակի» մասին:

ԳԱԹ ԹՖ, 915 (519):

<*Հուլիսի երկրորդ տասնօրյակ*>. – Ճանապարհորդում է

Բորչալուի գավառում, Հովհաննես քահանա Մարտիրոսյանի հետ:

Կոնսիստորիայի հանձնարարությամբ վերջինս պիտի քններ տեղի քահանաների չարաշահումների մասին բողոքները: Օգտվելով առիթից՝ թումանյանն ուսումնասիրում է գավառի կյանքը: Արդյունքը լինում է «Բորչալվում» ակնարկը:

ԵԼԺ 9, 119. ԹԺՅ, 210:

Հուլիսի <11 – 12>, Հաղպատ. – Վատառոյջ է:

Կնոջը գրում է. «Ես մի քիչ մրսեցի, խինա խմեցի, անցավ»:

ԵԼԺ 9, 117:

Հուլիսի 13, Հաղպատ. – Նամակ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է, որ կարոտում է կնոջն ու երեխաներին. «Քեզ և երեխաներին գրեթե ամեն գիշեր երազում տեսել եմ, բայց երբեմն շատ անհանգստացնող երազներ եմ տեսնում»:

ԵԼԺ 9, 117:

Հուլիսի 13. – Հաղպատից ուղևորվում է Սանահին:

ԵԼԺ 9, 117:

Հուլիսի <15-16-ից մինչև 20-21-ը>. – Դսեղում է:

Կնոջը գրում է. «Մեր գյուղում շատ ուրախ ժամանակ անցկացրինք. առաջուց տերտերն եկել էր Ջալալօղլուց, բավական գինի-արաղ էր բերել: Ռոստոմն էլ գնաց սարից Սոնին բերեց, երեք գառը և զանազան ուտելիք. հրավիրվեցինք երկու տեղ էլ, ձեր կենացն էլ խմեցինք»:

ԵԼԺ 9, 118 – 119:

Հուլիսի 21, Ջալալօղլի. – Գիշերում է Ն. Բախշինյանի տանը*:

* Թումանյանի տանտիրուհին Ջալալօղլում 1892 թ.:

ԵԼԺ 9, 118:

Հուլիսի 21, Դսեղ. – Գրում է «Հոսի՛ր, արտասուքս անկեղծ տխրության...» բանաստեղծությունը:

ԵԼԺ, 137, 582:

Հուլիսի 22, Ջալալօղլի. – Նամակ Օ. Թումանյանին:

Գրում է իր տանտիրուհու՝ Նատալյա Բախշինյանի տանից:

Գիրքը նվիրում է հորաքրոջ ամուսնու՝ Սարգիս Հակոբյանի քրոջը՝ Վառիճկային:

ԵԼԺ 9, 118 – 119:

Հուլիս. – Մարց գյուղում՝ Տ. Դավթյանի տանը, ժանոթանում է Մառի հետ:

Ծանոթության հաջորդ օրը երեքով գնում են Ս. Գրիգորի վանքը, որի մոտ գտնվում էին Սիրուն խաչը և Ագռավավանքը: Մառի հետ գնում է Հաղպատ և Սանահին՝ հնությունները տեսնելու: Անցնում է Բարդուտներ կոչված անտառամասով՝ Լորուտ գյուղը և Մարցը իրարից բաժանող սահմանում, որտեղ կար մի մեծ գերեզմանատուն՝ զանազան մահարձաններով:

ԹԺՅ, 210:

Հուլիս. – Տպագրվում է («Տարագ», 1893, թիվ 7, էջ 101) «Սըրտիս թագուհի...» բանաստեղծությունը՝ «Կարոտ» վերնագրով:

ԵԼԺ 1, 124, 578:

Օգոստոսի 1. – Տ. Վերանյանի նամակը Թումանյանին՝ Ջալալօղլուց:

Գրում է, որ սպասում է տեղեկություն Թումանյանի՝ Թիֆլիս հասնելու մասին: Խնդրում է դիմել տեղի Հովհաննեսին, որ գործը Սինոդ ուղարկելն շտապեցնի: Խնդրում է նաև տեղեկացնել, թե կոնսիստորիան գործը Սինոդ երբ կուղարկի:

ԳԱԹ ԹՖ, 2127 (458 լր.):

Օգոստոսի 2. – Բ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Պետերբուրգից:

Գրում է, որ չունի Թումանյանի բանաստեղծությունների ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ հատորները, իսկ Մ. Բարխուդարյանը շատ խաբեբա մարդ դուրս եկավ:

ԳԱԹ ԹՖ, 1231 (649):

Օգոստոսի 31, Թիֆլիս. – Հանդիպում նորընտիր կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հետ «Սուրճի» խմբագրատանը:

ԵԼԺ 9, 150, 544:

<Սեպտեմբերի սկիզբ>. – Գրում է Մոսկվա՝ Ալ. Ծատուրյա-

նին և ուղարկում մի բանաստեղծություն՝ նվիրված Խ. Աբովյանին:

Բանաստեղծությունը նախատեսված էր Խ. Աբովյանին նվիրված գեղարվեստական ժողովածուի համար, որ ծրագրել էր հրատարակել Ալ. Ծատուրյանը (տե՛ս մայիսի 20): Ծրագիրը չի իրականացնում, իսկ Թումանյանի բանաստեղծությունը կորչում է:

Ուղարկում է նաև «Армянские беллетристы» ժողովածուի վրիպակների ցանկ, որ Ալ. Ծատուրյանը հանձնում է Մ. Բերբերյանին և Յու. Վեսելովսկուն:

Տեղեկացնում է, որ ռուսերեն թարգմանված և տպագրության պատրաստ են «Ախթամարն» ու «Համերգը»:

ԳԱԹ ԹՖ, 1407 (743):

Սեպտեմբերի 22. – Ալ. Ծատուրյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Շնորհակալություն է հայտնում Թումանյանի ուղարկած բանաստեղծության համար (տե՛ս սեպտեմբերի սկիզբ): Բայց ցավով գրում է, որ ժողովածուի գործը գլուխ չի գալիս. «Խնդիրք ու հրավերս մեր գրական մշակներից շատ քչերի սրտում արձագանք գտան»:

Տեղեկացնում է, որ «Армянские беллетристы» ժողովածուի կազմման աշխատանքները ղեկավարում են Յու. Վեսելովսկին և Մ. Բերբերյանը: Հայտնում է. «Կողմնակի կերպով հայտնի է ինձ, որ Ձեր բանաստեղծություններից առայժմ թարգմանված պատրաստ են «Ախթամարը» և «Համերգը» »:

ԳԱԹ ԹՖ, 1407 (743):

Սեպտեմբերի 24. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Գրի է առնում և ուղարկում ուսուցիչների ապահովությանը նվիրված մի քանի ժողովներից ստացած տպավորությունները. «Ուսումնական հարցը կարծեմ առաջինը պիտի լինի, որ պիտի գրավե Հայրիկի ուշադրությունը»: Խնդրում է իր հոդվածի տպագրությունը «Մուրճի» սեպտեմբերի համարին հասցնել, եթե Արասխանյանը չցանկանա, թող հանձնի «Տարագին»:

ԳԱԹ ԹՖ, 2025 (994):

Սեպտեմբերի 27, Թիֆլիս. – Նամակ եղմիածին՝ Ա. Ղևոնդյանին:

Իբրև Կովկասի Հայոց հրատարակչական ընկերության գրասենյակապետ՝ խնդրում է ուղարկել ընկերությունից ստացած գրքերի ցուցակը:

ԵԼԺ 9, 119 – 120, 520:

Սեպտեմբեր. – Տպագրվում է («Մուրճ», 1893, թիվ 9, էջ 1348) «Այվազովսկու նկարի առջև» բանաստեղծությունը՝ «Այվազովսկու ծովանկարի առաջ» վերնագրով:

ԵԼԺ 1, 139, 453:

Սեպտեմբեր, Թիֆլիս. – Գրում է «Հայ ուխտավորին» («Գնան բարով, այ ուխտավոր...») բանաստեղծությունը:

Ն. Թումանյանը հիշում է բանաստեղծի խոսքերը. « «Հայ ուխտավորին» էքսպրոմտ է. Խրիմյանի ընտրության առթիվ չորս հոգի քեֆ սարքեցինք Օրթաճալում, էն քեֆին գրեցի» (Ն. Թումանյան, ԴԶ, էջ 240):

ԵԼԺ 1, 140, 583-585:

Սեպտեմբեր. – Տպագրվում է («Մուրճ», 1893, թիվ 9, էջ 1329) «Պոետին» («Մեր ուշքն ինչո՞ւ ես կախարդում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 138, 583:

Սեպտեմբեր – նոյեմբեր. – Գրում է «Անմիություն կամ որն է խենթ» մանրապատումը Արասխանյան – Վարդազարյան վեճի մասին:

Այդ վեճը ցավ է պատճառել Թումանյանին: Դրա մասին է վկայում մանրապատումի ոտանավոր հատվածը.

Ա՛խ, անիրավ անմիություն,
Մտար «Մուրճ» - ի խմբագրատուն,
Սևատեսիլ, չար ու դաժան,
Ընկերներին արիր բաժան.

Մեկը փախավ, մյուսը մնաց կենտ...

Բայց ո՞րն է խենթ...

ԵԼԺ 5, 501 – 502:

<Յոկտեմբերի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Բաթումի՝ Արշ. Ծատուրյանցին (չի պահպանվել):

Խնդրում է իր գրքերի վաճառքից գոյացած գումարը ուղարկել Թիֆլիս: Բովանդակությունը՝ ըստ պատասխան նամակի (տե՛ս հոկտեմբերի 24):

ԳԱԹ ԹՖ, 1413 (354 լր.):

Յոկտեմբերի 16-18. – Իր բնակարանում կազմակերպում է ժողով՝ քննելու համար «Մուրճի» խմբագիր Ա. Արասխանյանի և հրատարակիչ Փ. Վարդազարյանի միջև ծագած տարածայնությունները, որ պիտի հանգեցնեին պառակտման:

«Վկաներն» էին Յակոբ Անագյանը, Սամվել Բալադյանը, Փևրոզ Բաշինջադյանը, Յովհաննես և Արշակ Բարխուդարյանները, Սեդրակ Թառայանը և Գրիգոր Վարդանյանը: Այդ մասին Թումանյանը գրում է Աղայանին. «Բաժանման ժամանակ միջի մարդն էլ ես էի. կազմեցինք և մի ընկերական ատյան, և մեր տանը երկու ժողով անելով՝ բաժանեցինք» (ԵԼԺ 9, 121):

ԱԻ, 332:

Յոկտեմբերի 19. – Իր դիմումի համաձայն՝ ազատվում է Թիֆլիսի Յայոց հրատարակչական ընկերության գրասենյակապետի պաշտոնից:

Ալ. Քալանթարին գրում է. «Թողնելով պաշտոնս՝ հայտնում եմ Ձեզ և վարչությանը իմ խորին շնորհակալությունը՝ սիրալիր վարմունքի և այն համբերության համար, որով համբերեցիք իմ հաշիվներին ու գործակատարությանը»:

Պաշտոնից հրաժարվելու պատճառը Փ. Վարդազարյանի և Ա. Բարխուդարյանի հետ հրատարակչական նոր ընկերություն կազմելու ծրագիրն էր:

ԵԼԺ 9, 120, 521:

Յոկտեմբերի 24. – Արշ. Ծատուրյանցի նամակը Թումանյանին՝ Բաթումից:

Խոստանում է տեղեկացնել գրքերի վաճառքից գոյացած գումարի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1413 (354 լր.):

Յոկտեմբերի 26, ժամը 9 1/2, Թիֆլիս. – Մասնակցում է

«Խրճիթներ և միայն խրճիթներ», «Յեղեղ» կամ «Ժողովուրդ» հրատարակչական ընկերության առաջին խմբագրական ժողովին՝ Փ. Վարդազարյանի բնակարանում:

Ժողովին ներկա էր նաև Ա. Բարխուդարյանը:

Թումանյանը կազմում է այդ ժողովի արձանագրությունը, որտեղ մասնավորապես նշվում է. «Ժամանակի պահանջներին համապատասխանող և զանազան ընկերություններ հիմնելու միտք արժարժելու համար բրոշյուրներ, որոնք միանգամայն ծանոթացնեին ժողովրդին իրեն տրված օրենքների ու արտոնությունների հետ»:

1. Բրոշյուրներ ինքնուրույն և թարգմանական:

2. Յայկական գեղարվեստական գրականություն:

3. Թարգմանական գեղարվեստական գրականություն:

Խմբագրական կազմի մեջ մտնում են երեքը՝ Փ. Վարդազարյան, Ա. Բարխուդարյան, Յ. Թումանյան, իսկ իրավական և փաստական հրատարակիչը Փ. Վարդազարյանն էր: Թումանյանը պիտի վարձատրվեր թե՛ իբրև խմբագիր ու աշխատակից, թե՛ իբրև սրբագրիչ:

ԱԻ, 340:

Յոկտեմբեր. – Դադարում է «Մուրճին» աշխատակցելուց և ամսագրի խմբագրական ժողովներին մասնակցելուց:

«Մուրճից» հեռանում է Արասխանյանի և Վարդազարյանի միջև ծագած վեճի պատճառով: Փորձում է համոզել Վարդազարյանին, որ «մի կերպ հաշտվի հանգամանքների հետ» կամ հեռանալիս չպահանջի, որ ինքն էլ հեռանա: Արասխանյանն էլ առաջարկում էր հարաբերությունները խզել Վարդազարյանի հետ: Թումանյանը հեռանում է «Մուրճից» «լուռ, առանց թշնամանքի», բարոյական պատճառներից դրդված: Ջալալ Տեր-Գրիգորյանը հիշում է Թումանյանի խոստովանությունը. «Մոռացել էի, որ Ավետիքի հետ խռով եմ... Մի ինչ-որ երեկույթի ժամանակ անգիտակցաբար մոտեցա նրան, թևանցուկ արի ու էդ ժամանակ միայն հիշեցի, որ խռոված եմք, բայց երկուսս էլ հուզվեցինք ու մեզ ու մեզ հաշտվեցինք»:

ԹԺՅ, 406:

Յոկտեմբեր, Թիֆլիս. – Սկսում է գրել «Դեպի հայրենիք»

կամ «Դեպի գյուղացին» խորագիրը կրող վեպը, որը այդպես էլ մնում է անավարտ:

Վեպի հերոսը՝ Սուրենը, այսպես է դիմում քաղաքի երիտասարդությանը. «Դեպի հայրենիք, դեպի ժողովուրդը, դեպի մեր եղբայրը... Երիտասարդության մեջ, ինտելիգենցիայի մեջ, մամուլի մեջ, գրականության մեջ, հասարակության մեջ մի խուլ իրարանցում կա արդեն, որ տակավին անորոշ է, բայց յուր բոլոր ձևերով ձգտում է մի կողմ՝ դեպի մեր հողը, դեպի մեր ժողովուրդը, դեպի մեր եղբայրը...»:

ԱԻ, 341:

Նոյեմբերի 4, Թիֆլիս. – Երեկոյան դիտում է Սունդուկյանի «Ամուսինները» պիեսի ներկայացումը:

Հեռանում է տխուր տպավորությամբ. «մի շատ անպետք ու անլազաթ բան, որ իսկի պատիվ չի բերում «Պեպոյի» հեղինակի գրչին»:

ԵԼԺ 9, 121:

Նոյեմբերի 5. – Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպը հանձնում է կազմատուն:

Աղայանին գրում է. «Ձեր գոված ուստաուկես Մոսեսն ու յուր գրաշարը ինձ թուրքացրին, մինչև տպեցին: Թուղթի համար ստորագրություն տվի Տեր-Սարգսյանին»:

ԵԼԺ 9, 120:

Նոյեմբերի 5, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Ղ. Աղայանին:

Գրում է ասեկոսեների մասին, թե իբր Աղայանը, որպես գևորգյան ճեմարանին կից Վարժոցի ղեկավար, ճեմարանականների մեջ դժգոհություն է հրահրում կաթողիկոսի դեմ:

Ցանկանում է Աղայանի միջոցով իր «Բանաստեղծությունները» նվիրել Հայրիկին:

ԵԼԺ 9, 120 – 121:

<Նոյեմբերի 5-ից հետո>. – Էջմիածին է ուղարկում է Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպի երկրորդ գրքի նմուշն ու հաշիվը:

ԵԼԺ 9, 120 – 121:

Նոյեմբերի 6. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Առաջարկում է, որ իր հողվածը (տե՛ս սեպտեմբերի 24) Թումանյանը վերցնի և պահի իր մոտ, քանի որ հողվածի տպագրությունն այդ պահին միայն վնաս կարող էր բերել:

ԳԱԹ ԹՖ, 2026 (995):

Նոյեմբերի <8 – 12>. – Բաց նամակ Ղազարոս Աղայանին (չի պահպանվել):

Հավանաբար հարցրել է, թե ինչ է գրքի գինը, կամ ինչ անի տպագրված օրինակները:

ԵԼԺ 9, 122, 524:

Հոկտեմբերի 29. – Ստ. Տեր-Սկրտչյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հիշեցնում է, որ Թումանյանը Նազարեթյանի միջոցով պահանջել էր Ա. Կրասիլնիկյանի անունով ուղարկել հրատարակչական ընկերության գրքերի հաշիվները, որքանը իրենց է վերաբերում: Հիմա էլ ինքն է խնդրում Թումանյանին ուղարկել իրենց ուղարկած գրքերի հաշիվը:

Հայկ Գյուլամիրյանի՝ այդ ամառ «կորած» թարգմանությունը Անուշավան Քալանթարը Թումանյանին է ուղարկել՝ ցենզուրայի հոգսերը քաշելու համար: Փոխանցում է Գյուլամիրյանի խնդրանքը, որ շտապ տպագրվի:

ԳԱԹ ԹՖ, 2246 (496/13):

Նոյեմբերի 17, Թիֆլիս. – Մասնակցում է խնջույքի Ս. Պառայանցի տանը:

Ներկա է եղել նաև թեմական տեսուչը՝ Մելյան քահանան: Աղայանին գրում է. «Երեկ Ձեր կենացը խմեցինք նրա տանը»:

ԵԼԺ 9, 122 – 123:

Նոյեմբերի 18, Թիֆլիս. – Հանդիպում է հայր Բեկնազարյանին:

Բեկնազարյանի միջոցով փող պետք է ստանար՝ Աղայանի գրքի տպագրության ծախսը հոգալու համար: Բայց նա ասում է, թե ինքը չի կարող Տեր-Ղևոնդյանից փող ստանալ: Թուման-

յանը կարծում է, որ այդ հարցում կարող է օգնել ինքը՝ Աղայանը:
ԵԼԺ 9, 122:

Նոյեմբերի 18, Թիֆլիս. – Նամակ էջմիածին Ղ. Աղայանին:
Գրում է «Արություն և Մանվել» վեպի տպագրության և
կազմելու աշխատանքների մասին: Խոստանում է Աղայանին
նրա «Իմ կյանքի գլխավոր դեպքերի» («Մուրճ», 1893, 4 – 12)
սրբագրությանը հետևել: Տեղեկություններ է հաղորդում Թիֆ-
լիսի հայ մշակութային կյանքի առօրյա անցուդարձերի, մաս-
նավորապես իրենց նոր հիմնադրած հրատարակչական ընկե-
րության գործերի մասին: «Բանաստեղծությունները» «շուտով
կուղարկի Հայրիկին» (տե՛ս նոյեմբերի 5): Հայտնում է, որ ավար-
տել է «Լոռեցի Սաքոն» և «Արևն ու Լուսինը» երկերի վերամշակ-
ման աշխատանքները. «Լոռեցի Սաքոյի» մեջ Դուք մի սխալ էիք
ցույց տալիս, այդ սխալը ես այժմ եմ գլխի ընկել և ուղղել. այդ
պոեման կլավանա»: Խնդրում է Աղայանի աշխատակցությունը
իրենց «խրճիթներ, միայն խրճիթներ» հրատարակչական ընկե-
րությանը (տե՛ս հոկտեմբերի 26), «Ձեր խոնարի ծառան էլ, որ
խմբագրական ժողովը կազմող երեքից մինն է, խնդրում է ի դի-
մաց նույն ժողովի՝ Ձեր աշխատակցությունը՝ հրապարակա-
խոսություն, վեպ, ոտանավոր, ինչ որ լինի: Աշխատակիցները
վարձ են ստանում»:

ԵԼԺ 9, 122 – 124:

Նոյեմբեր. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ էջմիած-
նից:

Խնդրում է, որ երբ «Մուրճից» արտատպեն իր «Իմ կյանքի
գլխավոր դեպքերը», ուշադիր լինի, սրբագրի և համեմատի:
Խոստանում է. « «Բանաստեղծություններդ», ես կմատուցանեմ
Նորին Վեհափառության» (տե՛ս նոյեմբերի 18): Գրում է, որ ուրա-
խանալու առիթ չունի. «Արիստակեսը իր հրաժարականով մեծ
վտանգից ազատեց մեր կուսակցությունը: Արիստակեսի հրա-
ժարականը և իմ միջամտությունը Հայրիկին ետ կանգնեցրեց
այդ քայլից: Այժմ Արիստակեսը բավականին մոտիկ է Հայրիկին
և ավելի մոտենալու առիթներ կան: «Մշակին» շատ համակրում
է Հայրիկը»: Լսել է, որ Սուրենյանը պիտի գա էջմիածին՝ իբրև

թեմի կառավարիչ: Հայտնի է իբրև նորդարական»:
ԳԱԹ ՂԱՖ, 133:

Նոյեմբեր. – Փիլ. Վարդազարյանը ամսական 25 ռուբլի
նպաստ է նշանակում Թումանյանին:

ԹԺՀ, 372:

Նոյեմբեր. – Հրավեր է ստանում աշխատակցելու Հայ
բանվոր հեղափոխականների ասոցիացիայի «Ազատ Հայաս-
տան» թերթին:

Թեև բանաստեղծի պատասխանը անորոշ էր, բայց անունը
գրում են աշխատակիցների ցուցակում:

ԹԺՀ, 390:

Նոյեմբեր. – Ծանոթանում է Ս. Խանոյանի հետ իր հարևան
Նազարեթյանների տանը:

Այդ ժամանակ Թումանյանն ապրում էր Նորաշենի թա-
ղում՝ վաճառական Ղևոնդյանի տան երկրորդ հարկում, իսկ
Սարգիս Խանոյանի ազգական Նազարեթյանները՝ երրորդ
հարկում:

ԹԺՀ, 389:

Աշուն. – Փ. Վարդազարյանի օժանդակությամբ լույս է
տեսնում Թումանյանի «Դաշնակներ» ժողովածուն:

ԱԻ, 335:

Դեկտեմբերի 5. – Մոսկվայում լույս է տեսնում «Ախթա-
մար» բալլադը Կ. Բալմոնտի ռուսերեն թարգմանությամբ
("Ахтамар". Народная легенда):

Журнал "Семья", Москва, 5 декабря, No 55, стр. 2.

Դեկտեմբերի 30. – «Մշակի» «Ներքին լուրեր» բաժնում
տպագրվում է հաղորդում Թումանյանի «Դաշնակներ» ժողո-
վածուն ստացվելու մասին:

«Մշակ», 1893, թիվ 27, էջ 3:

Դեկտեմբերի 30. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝
Ախալցխայից:

Շնորհավորում է Նոր տարին, բարի Կաղանդը. «... սաղ

ըլնես, չաղ ըլնես, դոչաղ ըլնես: Նոր տարին ունեցած շնորհքդ շատացնես... և մեծ բանաստեղծի անուն վաստակես»:

ԳԱԹ ԹՖ, 916 (520):

Դեկտեմբեր, Թիֆլիս. - Նամակ Ախալցխա՝ Արամ Առաքելյանին (չի պահպանվել):

Այդ մասին տեղեկությունը՝ Արամ Առաքելյանի նամակում (տե՛ս դեկտեմբերի 30), «Նամակդ ստացա, բայց չպատասխանեցի, որովհետև մինչև գրելս արդեն պատասխան ստացած կլինեիր իրանից»: Այդ պատճառով հասցեատերը չի պատասխանել Թումանյանի հարցերին:

ԳԱԹ ԹՖ, 916 (520):

1893. – Սոսկվայում լույս է տեսնում «Армянские беллетристы, драматургия и поэты» ժողովածուի երկրորդ հատորը՝ Յու. Վեսելովսկու և Մ. Բերբերյանի խմբագրությամբ:

Մ. Բերբերյանի առաջաբանում խոսվում է նաև Թումանյանի ստեղծագործության մասին (էջ 567-570): Գրքի տպաքանակի վրա գրաքննությունն արգելք է դնում և գրեթե ամբողջապես ոչնչացնում:

«Սուրճ», 1893, թիվ 6, էջ 976-979:

1893. – Գրում է «Այվազովսկու նկարի առջև» («Ելած օվկիանի անգուսպ ալիքներ...») բանաստեղծությունը:

Հավանական է, որ գրվել է Այվազովսկու 1870-ական թվականների «Կապույտ ծովանկարներ» կամ 1880 – 1890 - ական թթ. «Արծաթավուն ծովանկարներ» կտավներից որևէ մեկի ազդեցության տակ:

ԵԼԺ 1, 139, 453:

1893. – Թարգմանում է Բայրոնի «Շիլիոնի կալանավորը»:

Պոեմին նախօրոք ծանոթ է եղել ժուկովսկու ռուսերեն թարգմանությունից: Երբ Թումանյանը Արասխանյանին առաջարկում է «Սուրճում» տպագրել «Բորչավիում» ակնարկը, խմբագիրը մերժում է՝ առաջարկելով տպագրության հանձնել «Շիլիոնի կալանավորը». «Իբրև հողվածագիր հայտնի չեք, «Շիլիոնի կալանավորը» տվեք»:

ԵԼԺ 4, 115, 590-595:

1893. – Գրում է «Խրճիթում» («Մանուկները գոռում-գոչում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 143, 585:

1893. – Թարգմանում է որոշ հատվածներ Բայրոնի «Չայլդ Ջարոլդի երգից»:

Վերնագրել է Թումանյանը: Իրականում Բայրոնի պոեմի այդ հատվածը՝ հերոսի հրաժեշտի խոսքը Բրիտանիայից հեռանալիս, վերնագրված չէ:

ԵԼԺ 4, 126, 595:

1893.- Մտադրվում է «մի բան հյուսել» Արտաշես Բ-ի և նրա որդի Արտավազդ Բ-ի մասին:

Այդ նպատակով ուսումնասիրում է Խորենացու «Հայոց պատմության» Թիֆլիսի 1913 թ. հրատարակությունը, այդ պատմության աշխարհաբար թարգմանչի՝ Խորեն Ստեփանյանի կազմած ծանոթագրությունները, որոնք կցված էին թարգմանությանը (Ս. Պետերբուրգ, 1889): Ծանոթանում է Արտաշեսի, Սաթենիկի և Արտավազդի մասին առասպելական հատվածների բանագետների բանավոր և գրավոր մեկնություններին:

ԵԼԺ 6, 18, 569-570: ԱԻ 532:

1893, *Թիֆլիս.* – Գրում է «Նա նստած էր...» («Նա նստած էր դաշնամուրի առաջին...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 142, 585:

1893. – Տպագրվում է («Տարագ», 1893, թիվ 41, էջ 632) «Նա նստած էր...» («Նա նստած էր դաշնամուրի առաջին...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 142, 585:

1893. – Տպագրում է «Նա նստած էր...» («Նա նստած էր դաշնամուրի առաջին...») բանաստեղծությունը:

«Տարագ», թիվ 41, էջ 632:

1893.- Հնչակյան կուսակցության անդամ է: ԳԱԹ, ՂԱՖ, 133:

1893 դեկտեմբեր – 1894 հունվարի սկիզբ. - Գրում է երգի-ծական մանրապատումների շարք՝ «Կարելի է, թե չէ», «Ճեմարանն ավարտողներին», «Հայոց գրողներին», «Ամնիաբանություն կամ որն է խենթ», «Դարձյալ կոիվ կամ տեսուչն է մեծ, թե՞ սանահայրը», «Կտակը», «Ազգային հանելուկ», «Հրեշտակը», «Վերջին դատաստանը»:

Մանրապատումների մեջ երգիծվում են 90-ական թվականների առաջին կեսի մամուլի և մտավորականության բարքերը: «Կարելի է, թե չէ» մանրապատումում ծաղրում է «Նոր - Դար» թերթի տասնամյա հոբելյանը, որը լրանում էր 1894 թ. հունվարին: «Ամնիաբանություն...» մանրապատումը անդրադառնում է Վարդազարյանի և Արասխանյանի վեճին (տե՛ս սեպտեմբեր-նոյեմբեր): Այդ մանրապատումները հանձնում է «Տարագ» թերթի խմբագիր Տիգրան Նազարյանին՝ տպագրության: Վերջինս մտադիր էր այդ նյութը զետեղել «Տարագ» շաբաթթերթի 1894 թ. հունվարյան համարում:

ԵԼԺ 5, 498-507, 807-810:

1893. – 1894. – Գրում է «Խավարի մեջ» դրամայի սևագիր հատվածներ:

ԱԻ, 545:

1893 – 1894. - Գրում է «Խրախուսողները», մեկ այլ տարբերակով՝ «Տուկլուզյանի կարծիքը, պ. Կարապետի փլավը և իմ հոբելյանը» երգիծական պատմվածքը:

Ծաղրում է մամուլի բարքերը, մեկենասներին և «խրախուսողներին», որոնք, իրենց բարերարությունը և օգնությունը անվերջ հիշեցնելով, «երես զարկելով», երիտասարդ գրողին հասցնում են այն դրության, որ կորչում է գրելու տրամադրությունը...

ԵԼԺ 5, 451, 803. ԱԻ 527-528:

1893 – 1894. – Ա. Բարխուդարյանի ընկերակցությամբ հաճախում է գաղտնի «վեչերիկաների»:

Դրանք հիմնականում ունեին հասարակական – քաղաքական ուղղվածություն: Կազմակերպվում էին ռուսական համալսարանական քաղաքների «ուսանողական վեչերիկաների»

օրինակով: Բացվում էին սեղաններ, հրավիրվում էին թատրոնի դերասաններ, լինում էին ճառեր, նվագածություն, պարեր: Մուտքը վճարովի էր. օգուտը հատկացվում էր որևէ քաղաքական նպատակի: Օրինակ՝ այդ վեչերիկաներից մեկի հավաքած գումարով օգնել են Սախալին աքսորված ազգային - ազատագրական շարժման գործիչ Սարգիս Կուկունյանցին:

ԹԺՂ 366, 942:

1893 – 1894, Թիֆլիս. – Նամակ Փիլ. Վարդազարյանին (չի պահպանվել):

Գրում է, որ «Քյոռոզլին», «Քաջերի կյանքիցը» գրաքննությունը արգելել է, իսկ «Շիլիոնի կալանավորը», «Տաճկական գրականությունը» թույլատրել է:

ԱԻ, 350-351:

1 8 9 4

Հունվար, Թիֆլիս. – Հոդված՝ Ա. Ղլտճյանին ներկայացված մեղադրանքներից պաշտպանելու նպատակով (չի պահպանվել):

Ներկայացնում է տպագրության, բայց մերժվում է «Ցենզորը բռնեց»:

ԵԼԺ 9, 128, 530:

<Մինչև հունվարի 27-ը>, Թիֆլիս. – Այցելում է մանկավարժ, գրավաճառ Ն. Տեր-Ղևոնդյանին:

Պետք է ստանար «Արություն և Մանվել» վեպի օրինակների վաճառքից գոյացած գումարը (տե՛ս նաև նոյեմբերի 5): Աղայանին տեղեկացնում է. «Տեր-Ղևոնդյանի մոտ գնացի, որ փողերն ստանամ, ասաց, որ Բեկնազարյանցն արդեն ստացավ: Բեկնազարյանցն էլ հիվանդ է» (տե՛ս հունվարի 27):

ԵԼԺ 9, 125, 528:

Հունվարի 27, Թիֆլիս. - Նամակ Էջմիածին՝ Ղ. Աղայանին: Գրում է, որ իրենց «նվաստ ընկերությունը» մտադիր է հրատարակել Աղայանի մանկական երգերը՝ ««Դաշնակների»

ծնով»: Տեղյակ է պահում Աղայանի անձի և գործի շուրջը նորդարականների տարածած բամբասանքներին. «Քո մասին ինչ որ լրագիրներում ցեմզորը թույլ չի տալիս, բերանացի են գոռում հայոց եզվիտները: Այս երկու օրս տարածել են, թե Աղայանցն արդեն ման է գալիս Թիֆլիսում, մինչև անգամ ինձ ասացին, որ տեսել են կլուբի առաջին: <...> Բայց կարող եմ հավատացնել, որ այնքան Սպանդարի տասնամյակի համար չեն աշխատում պահպանողականները, որքան ճեմարանից քեզ արտաքսելու»: ԵԼԺ 9, 125, 126:

Յուզվարի 30, Թիֆլիս. – Տանից դուրս է գալիս կայարան գնալու և Ա.Ղլտճյանին էջմիածին ճանապարհելու համար:

Չի հաջողվում: Կաթոլիկների փողոցում Յնչակյան կուսակցության անդամները (կարմիրները) Թումանյանին ստիպում են, որ մասնակցի այդ օրվա «Մողնականների» ժողովին, որտեղ Մարիամյան – Յովնանյան օրհորդաց դպրոցի հոգաբարձությունների ընտրության համար պատգամավորներ պիտի առաջադրեին և քվեարկեին. «Ինչ արի, չարի, չկարողացա ազատվել»: Այդ ժողովի պատճառով չի կայացել նաև Նուրե Սողայանի և նրա քրոջ հետ ժամադրությունը. «Երկու քույր սպասել են մինչև կեսգիշեր, ես խաբել եմ, չեմ գնացել»:

ԵԼԺ 9, 127, 529-530:

Յուզվարի 31, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Ա. Ղլտճյանին: Գրում է. «Լուսանկարդ ես բոլորովին չհավանեցի՝ չհավանեցի դիրքդ, պոզան, ավիսոս, ես քեզ հետ պավիլիոն չբարձրացա»: Տեղեկացնում է, թե ինչու չի կարողացել գնալ կայարան՝ ընկերոջը ճանապարհելու (տե՛ս հունվարի 30): Հաղորդում է կենցաղային և այլ տեղեկություններ:

ԵԼԺ 9, 126-128:

Փետրվարի 10. – Գր. <Վանցյանի> նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Խնդրում է իր կատարած փոխադրությունը հանձնել հրատարակչական ընկերությանը, նամակները հանձնել հասցետերերին: Խորհուրդ է տալիս Թումանյանին ավարտին հասցնել «Արտավազը»: էջմիածնից (Սիմոնից) վատ լուրեր է լսել: Տեղե-

կություններ է ուզում «Մշակի» և Հայրիկի մասին:

ԳԱԹ ԹՖ, 2027 (997):

<Փետրվարի առաջին կես>. – Գր. Վանցյանի միջոցով Ախալքիսա՝ Ա. Առաքելյանին է ուղարկում «Դաշնակների» 100 օրինակ (տե՛ս փետրվարի 14):

ԳԱԹ ԹՖ, թիվ 917 (247ա, լր.):

Փետրվարի 14. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Ախալքիսայից:

Գրում է, որ ստացել է Թումանյանի ուղարկած «Դաշնակներ» ժողովածուի 100 օրինակ: Հարցնում է էջմիածնից և Հայրիկից: Խնդրում է տեղեկություններ հաղորդել իր հետ քաղաքային դպրոցում աշխատելու համար քննություն տված երկու ուսուցիչների՝ Մատթեոս Զյուրքչյանի և Մարտիրոս Սվաճյանի վկայականի մասին: Խնդրում է նաև գնալ «Մշակի» խմբագրատուն և իմանալ իր ուղարկած թղթակցությունները չտպելու պատճառը:

ԳԱԹ ԹՖ, 917 (245ա լր.):

Փետրվարի 17. – Ա. Ղլտճյանի նամակ-բացիկը Թումանյանին՝ Վաղարշապատից:

Գրում է, որ Թումանյանը մինչև իր նոր հասցեն ստանալը նամակ չգրի: Կաթողիկոսը ուղարկում է իրեն երնջակ՝ դպրոց բացելու: «Ինչ որ է, դրան ասում են քաղաքավարի աքսոր» (տե՛ս փետրվարի 18):

ԳԱԹ ԹՖ, 1565 (815):

Մինչև փետրվարի 18-ը, Թիֆլիս. – Գրում է «էջմիածնի ամբարի մկներին» վերնագրով բանաստեղծությունը (չի պահպանվել):

Հավանաբար ունեցել է երգիծական բնույթ և ուղղված է եղել էջմիածնի միաբանների դեմ: Հանձնվել է «Տարագին», բայց չի տպագրվել, և ինքնագիրը կորել է:

ԵԼԺ 9, 129, 532. ԱԻ, 499:

Մինչև փետրվարի 18-ը, Թիֆլիս. – Սկսում է գրել «Եթե այդպես է, մենք կխորտակենք Այն պատվանդանը, որ մենք

կառուցինք...» սկզբնատողերով բանաստեղծություն:

Բանաստեղծությունը չի շարունակվել: Այն պետք է արտահայտեր երիտասարդության հիասթափությունը նորընտիր կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի գործունեությունից:*

* Արիստակես Եպիսկոպոս Սեդրակյանին ազատել էր Գևորգյան ճեմարանի տեսչի, Կարա-Սուրգային՝ երգի ուսուցչի պաշտոններից, փոփոխություններ էր մտցրել «Արարատի» խմբագրության մեջ, Թիֆլիսի թեմի առաջնորդ էր նշանակել Գևորգ Եպիսկոպոս Սուրենյանին և այլն: ԵԼԺ 9, 128-129, 531:

Փետրվարի 18, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Ա. Ղլտճյանին:

Իր դժգոհությունն է հայտնում կաթողիկոսի պահվածքից. «Թե ինչ տպավորություն թողեց Հայրիկի այդ կարգադրությունը,* չեմ գրում, որովհետև ուրիշ շատ, մի խոսքով էլ ինչ շատ, բոլորը մարդու հուսահատեցնում, զայրացնում են: Շուտով կունենանք մեծ ժողով այդ մասին մտածելու: Գրում ես, թե ոտանավորը (տե՛ս 1893, սեպտեմբեր) կորցնեն, ինչու կորցնեն. այն կմնա իբրև հիշատակ մեր առաջին զգացումների...»:

*Կաթողիկոսի կարգադրությամբ Ա. Ղլտճյանը հեռացվելու էր էջմիածնից՝ Նոր Նախիջևանի երնջակա վանքում դպրոց հիմնելու պատրվակով: Իրական պատճառը «Նոր-Դարի» և «Արծազանքի» չարախոսություններն էին:

ԵԼԺ 9, 128 – 129, 531:

Փետրվարի 19, Թիֆլիս. – Ստանում է Ա. Ղլտճյանի՝ փետրվարի 17-ի նամակ-բացիկը՝ էջմիածնից:

ԵԼԺ 9, 531:

Փետրվարի <20 – 21>, Թիֆլիս. – Նամակ Ա. Ղլտճյանին (չի պահպանվել):

Հիշատակությունը՝ Ա. Ղլտճյանի պատասխան նամակում. «Ստացա նամակդ. շտապում եմ պատասխանել» (տե՛ս փետրվարի 23):

ԳԱԹ ԹՖ, 1566 (816):

Փետրվարի 23. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ էջմիածնից:

Գրում է, որ մի քանի գործեր կան, որ Խրիմյան կաթողի-

կոսը պիտի կարգադրի: Պոլսի պատրիարքը վարում է ազգավնաս գործունեություն. պիտի զբաղվի դրանով: Պիտի կանխի արևմտահայության գաղթը, Տաճկահայաստանում ու մոտակա մի քանի գավառներում սովի առաջն առնի: Դպրոցական խնդիրը կարգադրելու համար պարտավոր է զեղծարարներին չպաշտպանել և գրողներին պատժել: Հանգամանորեն թվում է Խրիմյան կաթողիկոսից ընդհանուր դժգոհության բոլոր պատճառները:

ԳԱԹ ԹՖ, 1566 (816):

Մարտի <1–4>, Թիֆլիս. – Այցելում է Ս. Բեկնազարյանցին: Միասին կարդում են վերջինիս ինքնակենսագրությունը՝ գրված «վիպական ձևով»:

ԵԼԺ 9, 130, 533:

Մարտի 3. – Արշամ Տեր-Հակոբյանի նամակը Թումանյանին՝ Շուլավերից:

Խնդրում է, որ իր որդու ծննդյան վկայականը կոնսիստորիայից դուրս բերի և մոր՝ Սոնայի հետ Շուլավեր ուղարկի:

ԳԱԹ ԹՖ, 2214 (<493> լր.):

Մարտի 4, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Ղ. Աղայանին:

Գրում է. «Ինքնակենսագրությունդ չէի կարող սրբագրել (տե՛ս նոյեմբերի 18), որովհետև վաղուց տպված վերջացած էր»: Անդրադառնում է Արասխանյանի և Փիլ. Վարդազարյանի վեճին (տե՛ս հոկտեմբերի 16-18): Հայտնում է, որ Արասխանյանը պատրաստվում է նույնիսկ իր դեմ հողված գրել: Սպառվել է «Դաշնակների» 2400 օրինակ: Խնդրում է աշխատակցել «Հորիզոն» 6-ամսյա ժողովածուին՝ զգուշացնելով. «Հրապարակախոսություն չլինի, այդպիսի իրավունք չունենք»:

ԵԼԺ 9, 129-131, 532- 533:

Մարտի 8. – Ա. Ղլտճյանի բաց նամակը Թումանյանին՝ էջմիածնից:

Գրում է, որ գնում է Երևանի նահանգի Նախիջևան քաղաքը: Խնդրում է ուղարկել իր «պատկերները» (տե՛ս հունվարի 31) և տալ նաև Սպանդարյանին:

ԳԱԹ ԹՖ, 1567 (817):

«Մարտի առաջին կես», Թիֆլիս. - Նամակ Ժիտոմիր՝ ԱՆ. Աբովյանին (չի պահպանվել):

Դժգոհում է իր առողջական վիճակից և հոգեկան դրությունից, անքուն գիշերներից, Անուշավան Աբովյանի՝ «Նոր - Դարում» տպված հոդվածից, որտեղ քննադատվել էր «Մշակը»: Լուրեր է հաղորդում Էջմիածնից:

Նամակի բովանդակությունը՝ ըստ ԱՆ. Աբովյանի պատասխանի (տե՛ս մարտի 31):

ԳԱԹ ԹՖ, 773 (457):

Մարտի <երկրորդ տասնօրյակ>. - Նամակ Ս. Բալայանին (չի պահպանվել):

Պահանջում է Ս. Բալայանից ուղարկել հոդվածը. «Ստացա հրամայողական նամակդ, ուղարկի՛ր հոդվածը»: Հոդվածը եղել է պատմական թեմայով և նվիրված պատմության մեջ ժողովրդի դերին:

Նամակի մասին հիշատակությունը՝ ըստ Ս. Բալայանի պատասխանի (տե՛ս մարտի 29):

ԳԱԹ ԹՖ, 1006 (271 լր.):

Մարտի <25-30>, Թիֆլիս. - Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպից 200 օրինակ ուղարկում է Երևան, 100 օրինակ հանձնում է գրավաճառին:

ԵԼԺ 9, 131:

Մարտի 26, Թիֆլիս. - Մասնակցում է Հայոց հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովին:

Ելույթ է ունենում «թարգմանական հեղեղի» դեմ. «Հրատարակչական ընկերությունը սաստիկ նպաստելով թարգմանությանը, խեղդում է ինքնուրույն գրականությունը»: Հրատարակչական ընկերության հրատարակած 12 գրքերից 5-ը եղել էր թարգմանական: Թումանյանի ելույթի հիմնական միտքն այն էր, որ չի կարելի թարգմանությունը խրախուսել ավելի, քան ինքնուրույն գրականությունը, որ անհրաժեշտ է զանազանել ինքնուրույն գրողի աշխատանքը թարգմանողի աշխատանքից, գրողի տաղանդը՝ թարգմանողի եռանդից և բարձրացնել ինքնուրույն գրականության գինը գոնե երկու անգամ:

Թումանյանի առաջարկի շուրջ վեճեր են առաջանում, որոշում են արտակարգ ընդհանուր ժողով գումարել այդ խնդիրը քննելու նպատակով: Խնդրում են Թումանյանին գրավոր ներկայացնել առաջարկը: Թումանյանի առաջարկի շուրջ ծագած բանավեճի ժամանակ բանաստեղծի պաշտպանությամբ հանդես է գալիս Սիմոն Ջավարյանը: Հակառակ բանակում է եղել հավանաբար Ավ. Արասխանյանը. «Եվ դրանք իրանց գրականության տերեր ու դատախազներ են համարում, և դրանք խմբագիրներ են, Արասխանյանի նման խմբագիրներ, որ այնքան է հասկանում գեղարվեստական գրականությունից, որքան բորչավեցի թարջաման՝ Շուբերտի սերենադը»:

ԵԼԺ 9, 132-133:

Մարտի 29. - Ս. Բալայանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Թումանյանի անհայտ նամակի (տե՛ս մարտի <երկրորդ տասնօրյակ>) պատասխանն է: Գրում է, որ ենթարկվում է բանաստեղծի «հրամանին». «Պոետները ոչ թե անձնավորությամբ, այլ իրանց խոսքով դիմում են ամենաբռնակալ մարդկանց, անգամ հրամայում, այժմ ևս քո խոսքերը և ոչ անձնավորությունդ, հրամայում են ուղարկել, ես էլ ուղարկում եմ»:

Խոսքը պատմական թեմայով գրված հոդվածի մասին է (տե՛ս մարտի 24), որ հեղինակը չէր պատրաստել տպագրության համար. «Իմ համեստ կարծիքն այն է, որ այսպիսի հոդվածները ժողովրդին ավելի կարևոր են, քան լուրջ քննադատականները, որովհետև ժողովուրդը պատմություն չգիտի, եթե գիտի, շատ վատ, որքան նա ընդունակ չէ լուրջ պատմական, գիտական հոդվածներ կարդալ, այնինչ այս տեսակ խոսակցության ձև ունեցող հոդվածներով նաև պատմության հետ է ծանոթանում, և քննական ոգով նայում»:

Հարցնում է, թե «ինչու նոր «Դաշնակներ» Թումանյանը չի տպագրում, խոստանում է անձամբ վաճառել 600 – 700 օրինակ. «Մանավանդ եթե միշտ Ձատիկ լինի»: Գրում է, որ արդեն վաճառել է «Դաշնակների» «նոր սերիան» և խոստանում է դրանը շուտով ուղարկել:

ԳԱԹ ԹՖ, 1006 (271 լր.):

Մարտի 31. – Ան. Արուսյանի նամակը թուվանյանին՝ Ժիտոմիրից:

Բանաստեղծի անհայտ նամակի (տե՛ս <Մարտի առաջին կես>) պատասխանն է: Գրում է. «Նամակիցդ շատ աննպաստ կարծիք եմ կազմում քո հոգեկան ու մարմնական առողջության վրա: Կարծեմ անբնական չպիտի համարես, որ այդ հանգամանքը իմ հոգու վրա ծայրահեղ աստիճանի ծանր տպավորություն է գործում»:

Գրում է «Մշակի» և «Նոր - Դարի» նկատմամբ իր վերաբերմունքի մասին. միտք չի ունեցել «Նոր-Դարում» տպած իր հոդվածում «Մշակին» պախարակել, պախարակելին մեկին գովելու համար մյուսին «ցեխը կոխելն» է: Խոստովանում է, որ հանգուցյալ Արծրունու մեծության առաջ միշտ պատկառել է: Հիշում է, որ Քալանթարի հետ ծանոթացավ թուվանյանի միջոցով:

Գրում է «Դեպի Անհունը» պոեմի մասին. « «Կենդանի թաղվածը» անունով նոր պոեմադ, եթե չեմ սխալվում, հենց քո կյանքից պետք է լինի... մի՞թե այդ է բանաստեղծի կոչումը. ինչո՞ւ ես կյանքի հոսանքի առաջ ընկճվում և ուզում գրվածքներումդ էլ հուսահատություն ներշնչել ընթերցողների մեջ – կյանք տուր գրվածքներովդ և հավատ ներշնչիր ընթերցողներիդ մեջ: Նույնիսկ սեփական կյանքովդ օրինակ հանդիսացիր»:

ԳԱԹ ԹՖ, 773 (457):

Մարտի 31, Թիֆլիս. – Ղ. Աղայանին է ուղարկում Պետերբուրգի «Надежда» ծովային, գետային և ցամաքային ճանապարհներով ապրանքների փոխադրման ապահովագրական ընկերության Թիֆլիսի գործակալներից ստացած անդորրագիրը:

Ընկերությունը պարտավորվում էր Աղայանի գրքերը տեղափոխել Երևան (տե՛ս մարտի <25-30>):

ԵԼԺ 9, 131, 533:

Մարտի 31, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Ղ. Աղայանին:

Բացատրում է, որ չի կարողացել Աղայանի «ինքնակենսագրությունը» ուղարկել՝ տպարանի հետ կապված խնդիրների

պատճառով: Ծանոթացնում է Թիֆլիսում Աղայանի հրատարակվող և հրատարակվելիք գրքերի տպագրության պայմաններին: Պատմում է հրատարակչական ընկերության ժողովում իր ելույթի և նրա արծագանքների մասին (տե՛ս մարտի 26): Հայտնում է, որ թեմական առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Սուրենյանը պաշտոնագրել է Հովհ. քահանա Մարտիրոսյանին:

ԵԼԺ 9, 131 – 134:

Մարտ - ապրիլ, Թիֆլիս. – Գրում է «Դեպի Անհունը» պոեմի առաջին տարբերակը՝ թվագրելով 1894:

Բանաստեղծն ուզում էր հատուկ ընդգծել այդ թվականը, որովհետև հասուն տարիքում նա մի առանձին հպարտությամբ էր մտածում, որ լինելով շատ երիտասարդ՝ կարողացել է ստեղծել այդպիսի փիլիսոփայական խորքի մի գործ: Նվարդ թուվանյանի հավաստմամբ՝ թուվանյանը «սիրում էր «Դեպի Անհունը» ու զարմանում, որ 24 տարեկան հասակում էդ տեսակ բան է գրել՝ իր տարիքից վեր ու վաղ» (ՀԶ 175, 232):

Թուվանյանն առանձնացնում է 1894-ը՝ իբրև պոեմի մտահղացման և նախնական տարբերակի ստեղծման տարի: Բայց առաջին տարբերակը այս թվին լիովին ավարտված չի եղել: Պոեմի այդ տարբերակը ունեցել է «ճերմակ աղավնի» վերնագիրը. գրել է բանաստեղծական բարձր ոգևորության վիճակում՝ «1894 թ. Նորաշենի փողոցում, Տեր-Ղևոնդյանի տանը, մի եռօտանի, հին, կոտրած սեղանի վրա»:

ԵԼԺ 3, 111, 524. ԵԼԺ 9, 136:

<*Մարտ-ապրիլ*>. – Արսեն (Ղլտճյան) վարդապետի նամակը թուվանյանին:

Վաղուց նամակ չի գրել: Լուսանկարներն ստացել է: Խնդրում է հետաքրքրվել, թե քոջ որդին՝ Բագրատը, Ներսիսյան դպրոցի որ դասարանում է, հոգ տանել նրա հետագա քայլերի մասին, ճանապարհել Ալեքսանդրապոլ:

ԳԱԹ ԹՖ, 1568 (821):

Ապրիլի 5. – Ս. Բալայանի նամակը թուվանյանին՝ Բաքվից: Հայտնում է, որ «Համբարձում Առաքելյանի ձեռքով» ուղարկում է թուվանյանի ուզած հոդվածը, խնդրում է կամ պա-

հել մոտը, կամ հանձնել «Մուրճին» տպագրության:
ԳԱԹ ԹՖ, 1007 (271 լր.):

Ապրիլի 17, Թիֆլիս. – Նամակ Երնջակ՝ Ա. Ղլտճյանին:

Ա. Ղլտճյանի՝ մարտի 8-ի բաց նամակի պատասխանն է: Շնորհավորում է Ձատիկը: Հաջողություն ու համբերություն է ցանկանում ընկերոջը նոր աշխատավայրում. «Թող ոչ թե քսորավայրերն ու բնակատեղիքը լինեն քո տխրության և ուրախության պատճառները, ոչ թե բնակարաններիդ ու խցերիդ փոփոխությունը լինի վշտերիդ ու հոգսերիդ առարկան, այլ գաղափարներիդ ու սկզբունքներիդ հաստատությունն ու պաշտպանությունը»:

Ազգագրական և բանահյուսական նյութեր է խնդրում «Արտավազդ Բ» դրամայի համար. «Դու այժմ մի երկրում ես, որտեղ շատ բան կլինի մնացած հին ժամանակներից: Քո գիտցած և լսած ժողովրդական երգերդ կգրես ու կուղարկես ինձ, քեզանից հիշատակ քո քսորանքի օրերից: Անհասկանալի բաները բացատրիր, մեկ էլ գրիր ինձ, թե այդտեղ մեկին մյուսի վրա սիրահարեցնելու համար ինչ միջոց են գործ դնում կամ ինչ ծաղիկ և ինչպես. հետո ատել տալու համար»:

ԵԼԺ 9, 134-135:

Ապրիլի 17, Թիֆլիս. – Նամակ Ա. Աբովյանին:

Շնորհավորելով Ձատիկը՝ հույսի ու մխիթարանքի խոսքեր է ասում պանդխտության, քսորի մեջ գտնվող ընկերոջը. «... Թող այսօրվան ի մեռելոց հարյալի անմահ գաղափարները լինեն քո պանդխտության օրերի մխիթարանքը, նորա քարոզած համբերությունը լինի քո հոգու վահանը հուսահատության դեմ»:

Դժգոհում է, որ «*շատ մեծացել է*» բարեկամների շրջանը, հաճախացել են ամենօրյա հյուրասիրությունները, ժամանակ չի մնում պարապելու համար. «Սակայն այս անվերջ անքուն գիշերները ինձ ա՛յնքան ռոմանների, բանաստեղծության նյութ են տալիս, որ թե ծովերը թանաք դառնան, անտառները գրիչ՝ չեն վերջացնիլ»: Գրում է նաև, որ Ա. Աբովյանը սխալվում է՝ կարծելով, թե «Դեպի Անհունի» նյութը իր անձնական կյանքից է:

ԵԼԺ 9, 135 – 136:

Ապրիլ. – Սկսում է «Արտավազդ Բ» դրամայի շարադրանքը (տե՛ս 1893):

«Արտավազդ Բ» դրամայի որոշ հատվածներ թումանյանը կարդում է Նար - Դոսի և Վրեն Տաշրացու մոտ: Տաշրացին հիշում է. «Մի անգամ Հովհաննեսը Նար - Դոսի և իմ ներկայությամբ կարդաց իր նոր սկսած «Արտավազդ Երկրորդ» պատմական դրամայի առաջին կտորները: Եվ մեզ թվաց, թե մեր առաջ Շեքսպիրն է կանգնած և կարդում է իր «Ռիչարդ Երկրորդը» » (ԹԺՀ, 298):

ԵԼԺ 9, 136, 535:

<Ապրիլ-մայիս>, Թիֆլիս. – Ստանում է Ս. Բալայանի հոդվածը (տե՛ս մարտի 29):

Հոդվածը Ավարայրի ճակատամարտի մասին է և նախատեսված է «Հորիզոն» հանդեսում տպագրելու համար: Դա Վարդանանց տոնի առթիվ Ս. Բալայանի կարդացած դասախոսության շարադրանքն էր: Հոդվածը լույս չի տեսնում հավանաբար գրաքննության արգելքի պատճառով:

ԱԻ, 380:

Մայիսի <9-10>, Թիֆլիս. – Բաց նամակ Գր. Բալասանյանին (չի պահպանվել):

ԹՏԹ, 3224:

Մայիսի 13. – Գր. Բալասանյանի բաց նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Ցանկություն է հայտնում իմանալ այն մանրամասնությունների մասին, որոնք հետաքրքրել են Թումանյանին: Իր հերթին խնդրում է պատասխանել իր հարցերին:

ԹՏԹ, 3224:

Հունիսի 13. – Ս. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Գրում է իր թարգմանած «Հաջի Աբրեքը» տպագրելու մասին:

ԳԱԹ ԹՖ, 1542 (804):

Հունիսի վերջ - հուլիսի սկիզբ, Թիֆլիս. – Կայարանից

Անի է ճանապարհում Հովի. Խիզանյանին և Ա. Բարխուդարյանին:

Հիշելով, որ մոռացել է նամակ գրել Արագովա գյուղում ուսուցիչ Հովվյանին՝ Ա. Բարխուդարյանի հիշատակարանում մատիտով գրում է. «Այս հիշատակարանը ում ձեռքում որ տեսնես, նրան իմ տեղը կընդունես, իսկ եթե նա սև ու կարճահասակ չլինի, իմացիր, որ հիշատակարանը գողացել են իմ սիրելի Անդրեասից»:

ԹԺՀ, 377:

<Հունիսի վերջ – հուլիսի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակներ՝ ուղղված ախալքալաքցի ուսուցիչներին:

Խնդրում է, որ աջակցություն ցույց տան Հովհաննես Խիզանյանին և Անդրեաս Բարխուդարյանին դեպի Անի ուղևորության ընթացքում: Նամակներն ուղարկում է Խիզանյանի և Բարխուդարյանի միջոցով:

ԹԺՀ, 377:

<Հուլիսի առաջին օրեր>. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Էջմիածնից:

Տեղեկացնում է, որ արդեն Էջմիածնում է: Գրում է անձնական բնույթի հարցերի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1569 (3817 լր.):

Հուլիսի 20. – Ճանապարհվում է Դսեղ Ա. Բարխուդարյանի, Ս. Սահակյանի և Հովի. Խիզանյանի հետ:

Ուտքով շրջում են Ախալքալաքի գավառում, հանդիպում են Ջալալօղլուն և մի շաբաթ մնում այնտեղ:

«Ջալալօղլուն տեղի մտավորականները՝ ուսուցչուհի օր. Ն. Գրիգորյանը և գյուղատնտես Սարգիս Սահակյանը, խնջույք կազմակերպեցին անտառում: Սահակյանը երգում էր և կիթառ նվագում: Թումանյանի խնդրանքով մի քանի անգամ երգեց «В стране свободы песни льются, в стране неволи песен нет, там стоны раздаются, свобода – жизнь, свобода – свет»:

ԹԺՀ, 366, 377, 378:

Հուլիսի 20, Ալավերդի. – Նամակ Թիֆլիս Փիլ. Վարդապարյանին:

Գրում է Անդրեաս Բարխուդարյանի, Սարգիս Սահակյանի և Հովի. Խիզանյանի հետ դեպի Դսեղ ճամփորդության մասին: ԵԼԺ 9, 136 – 137, 536:

<Հուլիսի վերջ>, Ջալալօղլի. – Շնորհավորական նամակ - հեռագիր է ուղարկում Արշակ Բարխուդարյանին նշանադրության կապակցությամբ:

Նամակ-հեռագիրն ուղարկում է Արշակի եղբոր՝ Անդրեաս Բարխուդարյանի միջոցով, որի հետ մոտ երկու շաբաթ ճանապարհորդում էր Լոռու սարերում և գյուղերում: Բերդում գյուղացիների այն հարցին, թե «ի՞նչու են պարապ տեղը կոշիկ մաշում», կատակելով պատասխանում է. «Անդրեասի համար հարսնացու ենք փնտրում»: Հեռագրում եղել է նաև ոտանավոր: Նամակ – հեռագիրը Ա. Բարխուդարյանը ճանապարհին կորցրել է:

ԹԺՀ, 366 – 367:

Հուլիս, Թիֆլիս. – Ստ. Սուլխանյանի և Գր. Տեր-Նիկողոսյանի հետ նախաձեռնում է թատերական խումբ կազմել տեղի և Պոլսի թատերասերների ուժերից:

Այդ նպատակով հրավիրում է բժիշկ Վ. Արծրունուն, Ստ. Լիսիցյանին և Ա. Թարխանյանին:

«Թատրոն» գրական և թատերական հանդես, 1894, 2, էջ 133, ԱԻ, 443:

<Հուլիսի վերջ – օգոստոսի սկիզբ>. – Գնում է Մարց՝ այցելելու Տ. Տեր-Դավթյանին և նրա դստերը՝ Վ. Գևորգյանին:

Թումանյանի հետ զալիս է նաև հայրը՝ տեր Թադևոսը: Նրա հետ էր նաև իր չոնգուրը, որով նվագում էր զանազան ասիական մեղեդիներ:

ԹԺՀ, 210:

Օգոստոսի 4. – Տպարանատեր Հովի. Մարտիրոսյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Պատմում է իրենց տան պահարանից պահակի՝ ոմն Հակոբի կատարած գողության մասին: Հարցուփորձով իմացել են, որ այդ տղան Չոփուռանց մեկնումեկի ժառանգն է: Մի պարոնի խորհրդով դիմում է Թումանյանին, որ նա գտնի այդ գողի

անցաթղթի պատճենը և ուղարկի իրենց՝ դիվանատան միջոցով.
«Եթե որևէ ծախս պահանջվելու լինի, արեք ու ինձանից կրկնա-
պատիկը կստանաք: Մնան միշտ ձեր լավությունը չմոռացող
տպարանատեր Հովհաննես Մարտիրոսյանց»:

ԳԱԹ ԹՖ, 1683 (500/3):

Օգոստոսի 13. – Մոր՝ Սոնայի, Ռոստոմի, Իսկուհու և Ար-
տաշեսի հետ գալիս է Ղարաքիլիսա:

Հանդիպում է օր. Փուղինյանին (դերասանուհի Մայսուր-
յան): Երեկոյան Փուղինյանների հրավերով ընթրում է նրանց
տանը:

ԵԼԺ 9, 137:

Օգոստոսի 14, Ղարաքիլիսա. – Նամակ Օ. Թումանյանին:
Գրում է, որ բազմաթիվ հրավերներ է ստանում. «...Այնքան
տեղ եմ խոսք տվել, որ չգիտեմ ինչ պետք է անեմ: ... Էլ դադար
չունեմ. գյուղացիք կալերից պոճել են, տանում են այս գյուղը,
այն գյուղը, և շարունակ քեֆեր ենք անում...»: Տեղեկացնում է,
որ երկու շաբաթից թիֆլիսում կլինի:

ԵԼԺ 9, 137 – 138:

Օգոստոսի <15 – 24>. – Օ. Թումանյանի և Ա. Բարխու-
դարյանի նամակները Հովհ. Թումանյանին (չեն պահպանվել):

Օ. Թումանյանը իր դժգոհությունն է հայտնել ամուսնուն,
որ չի կարողանում պահել ամուսնական գաղտնիքը. «... Մի՞թե
մեղք է, որ քեզ մի գաղտնիք գրեմ... մի՞թե միշտ ամեն բան
կասեն սրան նրան... մի՞թե մեր մեջ գաղտնիք չպետք է լինի և
այլն, և այլն...»:

ԵԼԺ 9, 139:

Օգոստոսի 24, Ջալալօղլի. – «Семья» շաբաթաթերթում
(1893, 55) կարդում է «Ախթամարի» Բալմոնտի ռուսերեն թարգ-
մանությունը:

ԵԼԺ 9, 140, 539:

Օգոստոսի 24 – 25, Ջալալօղլի. – Նամակ թիֆլիս՝ Օ. Թու-
մանյանին:

Գրում է, որ տեղին չեն կնոջ հանդիմանությունները (տե՛ս

օգոստոսի 14), թե ինքը չի կարողանում ամուսնական գաղտնիք
պահել. «Դու սխալվում ես ... ես շատ գաղտնապահ եմ – նայած,
թե որքան թանկ է գաղտնիքը և վտանգավոր»: Հաղորդում է
տեղեկություններ կենցաղային առօրյայից: Տեղեկացնում է, որ
4 – 5 օր գյուղերը ման գալուց հետո կվերադառնա և կպատ-
րաստվի Շուլավերով թիֆլիս գալու. «Ինչ լավ կլիներ, եթե դուք
էլ Շուլավեր լինեիք»:

ԵԼԺ 9, 138 – 141:

Օգոստոս, Ջալալօղլի. – Իբրև խաչեղբայր՝ մասնակցում
է կնոջ ազգականուհու՝ Գիրգիդյան Օսանի աղջկա մկրտու-
թյանը:

Կնոջը գրում է. «Օսանի աղջիկը մկրտեցինք, անունը
դրինք Նվարդ»:

ԵԼԺ 9, 139:

Օգոստոս. – Խանգարում է քրոջ՝ Իսկուհու նշանա-
դրությունը:

Կնոջը գրում է. «Իսկուհուն մի նոր մուշտարի էլ էր դուրս
եկել՝ հարուստ ազնվական, բայց ես տղային չէի հավանում, թեև
մերոնք խոսք էին տվել, համարյա նշան, այդ քանդեցի»:

ԵԼԺ 9, 140:

Օգոստոս. – Հաղպատ գալիս իջևանում է Ա. Երզնկյանի
տանը:

Երզնկյանը Թումանյանի ազգականն էր, հետագայում՝
ՀՕԿ-ի փոխնախագահ:

ԹԺՀ, 487:

Ամառ. – Լոռու Վարդաբլուր գյուղում մի ժեր գյուղացուց
լսում և գրի է առնում «Հազարան բլբուլ» հեքիաթի մի տար-
բերակ:

Այդ տարբերակը Թումանյանը մինչև կյանքի վերջն էլ
համարում էր «ամենահինն ու ամենալավը»: Առհասարակ այս
շրջանում բանաստեղծը խոշոր աշխատանք է կատարում՝ հայ-
կական հեքիաթի միջազգային զուգահեռները հավաքելու և
ուսումնասիրելու համար:

ԵԼԺ, 4 566:

Սեպտեմբերի 9, Շուլավեր. – Հյուրընկալվում է շուլավեր-
ցի հասարակական գործիչ, տանուտեր Վ. Մեիրաբյանի տանը:
ԵԼԺ 9, 141:

Սեպտեմբերի 9, Շուլավեր. – Նամակ Դսեղ՝ հորը՝ Թ. Թումանյանին:

Գրում է, որ Շուլավերում է. «Այս քանի օրս մնացինք այս-
տեղ»: Խնդրում է գրել Արտաշի մասին:

ԵԼԺ 9, 141:

Սեպտեմբերի 10. – Թումանյանի նախաձեռնությամբ և երկ-
ամսյա ջանքերից հետո կազմվում է Թումանյանի նախաձեռ-
նած (տե՛ս հուլիս) թատերասերների դերասանական խումբը:

«Սուրճ», 1895, թիվ 2, էջ 321 – 322:

Սեպտեմբերի <երկրորդ տասնօրյակ>. – Հասնում է
Թիֆլիս:

ԵԼԺ 9, 138:

<Սեպտեմբեր – հոկտեմբեր>, Թիֆլիս. – Այցելում է Ս. Հով-
վյանին:

Ս. Հովվյանը ամռանը ոտքը կոտրելուց 57 օր հետո
հանգրվանել էր Պողոս Հովվյանի մոտ: Թումանյանը սրամտում
է, թե Պետրոս Մելքունյանի (ուսուցիչ, «Սուրճի» աշխատակից)
անեծքներից է Սիմեոնը ոտքը կոտրել: Պատմում է անեկդոտներ
լոռեցիների կյանքից: Ս. Հովվյանը հիշում է. «Հովհաննեսն առա-
ջինն էր, որ ինձ այցելության եկավ՝ իր սրախոսություններով և
ընկերական ջերմագին վերաբերմունքով ինձ մխիթարելու»:

ԹԺՀ, 258:

Հոկտեմբերի 2, Թիֆլիս. – Մասնակցում է Գրական ֆոնդ
(«Հայ գրագետներին օգնելու ընկերություն») ստեղծելու նա-
խապատրաստական երկրորդ ժողովին:

Կարդում է առաջին ժողովի արձանագրությունը (տե՛ս
1892, հունիսի 7): Դրանով ավարտվում է Թումանյանի մասնակ-
ցությունը այդ ժողովներին:

ԵԼԺ 9, 513:

Հոկտեմբերի 3, Թիֆլիս. – Հեռագիր (չի պահպանվել)
Դսեղ՝ Թ. Թումանյանին՝ քեռակնոջ՝ Նատալիայի մահվան
առիթով:

ԵԼԺ 9, 141:

Հոկտեմբերի 4, Թիֆլիս. – Նամակ Դսեղ՝ Թ. Թումանյանին:
Գրում է. «Ամսույս 7-ին անպատճառ եղեք Գյառգյառ կամ
Ջալալօղլի մեր բարեկամներով՝ Քոչնանցով և մի քանի պատ-
վավոր քահանաներով»: Պետք է դիմավորեին Բուղդան քեռու
կնոջ՝ Նատալիայի հուղարկավորության թափօրին:

Նաև հայտնում է. «Տերտերը կաթողիկոսից խաչ ու կոնդակ
ստացավ, առաջնորդի հետ էլ քաղցր հաշտվել են» (տե՛ս մարտի
31):

ԵԼԺ 9, 141 – 142:

Հոկտեմբերի 4, Թիֆլիս. – Նամակ Ջալալօղլի՝ Ե. Ղուլին-
յանին:

Խնդրում է տեղեկացնել հորը՝ տեր Թադևոսին, քեռու՝
Բուղդան Թադևոսյանի կնոջ՝ Նատալիայի մահվան մասին, որ-
պեսզի հայրը իր բարեկամներով ընդառաջ գնա թաղման թա-
փօրին:

ԵԼԺ 9, 142:

Հոկտեմբերի 8, Թիֆլիս. – Թարգմանում է Նեկրասովի
«Внимая ужасам войны» (1854 թ.) բանաստեղծությունը՝ «Մայ-
րը» վերնագրով:

Թարգմանությունը կատարում է տեր Հովսեփի մոտ:

ԵԼԺ 2, 237, 590-591:

<Նոյեմբերի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Ա. Ղլտեյանին
(չի պահպանվել):

Այդ մասին հիշատակությունը՝ պատասխան նամակում.
«Նամակդ ստացա, շատ երկար սպասում էի, խիստ էի զայրացել
քո դեմ»:

ԳԱԹ ԹՖ, 1570 (818), ԹՏԹ 1729:

Նոյեմբերի 1. – Տ. Վերանյանի նամակը Թումանյանին՝ Ջա-
լալօղլուց:

Խնդրում է հնարավորին չափ շուտ գնալ նահանգական ատյան և իմանալ՝ տերտերությունից իր արձակուճակը կատարվել է, թե ոչ, և ինչ հրամանով. «Այս երկու օրը գնացել էի Շուլավեր, որտեղ Պապյանից իմացա, որ դու արդեն գնացել ես Թիֆլիս. պետք է խոստովանեմ, որ քեզ այնտեղ՝ Շուլավերում, լավ բամբասեցին»:

ԳԱԹ ԹՖ, 2128 (1069):

Նոյեմբերի 11. – Գրաքննությունը թույլ է տալիս «Հորիզոն» հանդեսի տպագրությունը:

ԱԻ, 343:

Նոյեմբերի 19. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Նախիջևանից:

Բանաստեղծի՝ նոյեմբերի սկզբի անհայտ նամակի պատասխանն է: Գրում է. «Ես քեզ կուզեմ տեսնել մեր քնարերգության առաջին շարքերում»: Կարդացել է հավանաբար Չոպանյանի «Պետրոս Դուրյան» ուսումնասիրությունը: Դուրյանի քնարերգության վերլուծությունները իրեն չեն բավարարել: Ներսիսյան դպրոցի դասախոսությունները Դուրյանի մասին ավելի բարձր է համարում: Խնդրում է Պեշիկթաշյանի մասին գիրք ուղարկել, որ կարողանա համեմատել:

ԳԱԹ ԹՖ, 1570 (818):

Նոյեմբերի երկրորդ կես. – Սկսվում է «Հորիզոն» հանդեսի առաջին գրքի տպագրությունը:

Ա. գրքում տպագրվում են Թումանյանի ինքնուրույն ու թարգմանական մի քանի գործեր: Այդ առաջին գրքով էլ ավարտվում է Հովհ. Թումանյանի, Ա. Բարխուդարյանի և Փ. Վարդազարյանի «խրճիթներ և միայն խրճիթներ» կամ «Ժողովուրդ» հրատարակչական ընկերության գործունեությունը:

ԱԻ, 342 – 343:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է «Աղքատի պատիվը» պատմվածքը («Հորիզոն», Ա. գիրք 1894, էջ 101-105):

Ինքնագիրը չի պահպանվել: Պահպանվել է «Հորիզոնի» բնագիրը՝ հեղինակի ուղղումներով:

ԵԼԺ 5, 27-33, 745:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 149-167) «Բորչավիւում» ակնարկը:

ԵԼԺ 6 27-48, 570:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 109-110) «Լեռների հովիվը» պատմվածքը:

ԵԼԺ 5, 34-36, 745:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 168-176) «Խորենացու «Տենջայր Սաթենիկ» հատվածի առթիվ» հոդվածը:

ԵԼԺ 6, 18-27:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 87-96) «Քաջերի կյանքից» պատմվածքը:

ԵԼԺ 5, 16-26, 743:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 97-98) «Հին օրհնություն» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 28, 548:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», 1894, Ա. գիրք, էջ 99) «Մի հառաչանք» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 149, 587:

<Նոյեմբեր-դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 106-107) «Երկինք և Երկիր» բալլադը:

ԵԼԺ 2, 105, 554:

<Նոյեմբեր-դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 112) Նադսոնի «Умерла моя

муза! Недолго она» (1885) բանաստեղծության թարգմանությունը՝ «Մեռավ իմ մուսան... Սակավ ժամանակ» վերնագրով: ԵԼԺ 2, 239, 591:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 111) Լերմոնտովի «Ангел» բանաստեղծությունը՝ «Հրեշտակ» վերնագրով և «Լերմոնտովից» ենթավերնագրով: ԵԼԺ 2, 238, 591:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 113) Բ. Հայնեի «Wandere!» բանաստեղծության թարգմանությունը՝ «Թափառիչ» վերնագրով և «Հայնեից» ենթավերնագրով: ԵԼԺ 2, 240, 591-592:

<Նոյեմբեր - դեկտեմբեր>. – Առաջին անգամ տպագրվում է («Հորիզոն», Ա. գիրք, 1894, էջ 83-86) Բայրոնի «Չայլդ Հարոլդի երգը»: Հատված է «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմից: ԵԼԺ 4, 126, 595:

<Նոյեմբեր-դեկտեմբեր>, Թիֆլիս. – «Նոր - Դարի» խմբագրատանը տեղի է ունենում լռեցիների խորհրդակցություն: Նպատակն էր իրենց հայրենակից բանաստեղծին՝ Թումանյանին, նյութապես օժանդակել, որ գնա արտասահման կրթություն ստանալու և ուսումնասիրելու համաշխարհային գեղարվեստը: Այդ որոշմանը Թումանյանին տեղյակ պահելու համար ներկայացուցիչներ են ընտրվում «Նոր - Դարի» թղթակից և սրբագրիչ Վրեն Տաշրացին և առևտրական ֆիրմայի գործակատար Արամ Թադևոսյանը: Նրանք հանդիպում են բանաստեղծին, որը և նրանց բացատրում է այդ բարի ցանկության անհրաժեշտությունը: Վ. Տաշրացին հիշում է. «... Հարկավոր էր զգալի գումար, որի ձեռքբերումը անչափ դժվար էր: Եվ այսպիսով մեր իղձը մնաց անկատար»: ԹԺՀ, 298:

Դեկտեմբերի 20-ից հետո. – Ա. Թառայանի նամակը Թումանյանին՝ Լայպցիգից:

Գրում է, որ տեղեկություններ է հավաքում բոլոր վայրերում հայերի տնտեսական կյանքի վերաբերյալ: Խնդրում է իր լուման բերել այդ աշխատանքին՝ տեղեկություններ հաղորդելով Լոռու հայերի տնտեսական կյանքից: Խնդրում է ուշադրություն դարձնել նաև քաղաքի տնտեսական կյանքին: Թող տեղեկությունները հանձնի Լևոն Համբարձումյանին: «Բայց ոտանավոր ձեռք չգրեք», - կատակում է Թառայանը: ԳԱԹ ԹՖ, 1220 (331 լր.):

1894. – Առեղծվածային պայմաններում ինքնասպանություն է գործում Թումանյանի մտերիմ ընկերներից մեկը՝ «Հնգյակի» անդամ Դ. Շահլամյանը:

Ինքնասպանության պատճառը հայտնի է եղել միայն Թումանյանին: Բայց բոլոր նրանց, ովքեր կամեցել են այդ գաղտնիքը իմանալ, Թումանյանը պատասխանել է. «Իմս չէ, որ քեզ տամ»: ԱԻ, 222:

1894. – Շնորհավորական հեռագիր Ագուլիս՝ Վահան Պետրոսյանին՝ նրա հարսանիքի առիթով:

Շնորհավորել է նաև նրա հարսնացու Վարսենիկին, Վահանի հայր Նիսիան, մայր Ալմաստին և խաչեղբայր Արիստակես Ջարգարյանին (Ռուստեմ): Հեռագիրը գրված է եղել լատիներեն տառերով, բայց հայերեն ոտանավորով: Ա. Բարխուդարյանը հիշում է. «Հեռագիրը հասել է Ագուլիս՝ զվարճություն պատճառելով հարսանքավորներին»: Հեռագիրը պահպանվել է Ջարգարյանների և Վարդազարյանների հաշվապահ Մկրտիչ Շահնաբաթյանի մոտ, հետո կորել է:

ԹԺՀ, 372:

1894. – Փիլ. Վարդազարյանի հիվանդ մայրը Ա. Բարխուդարյանի միջոցով կտակ է կազմում:

Ա. Բարխուդարյանը հիշում է, որ կտակով 25000 ռուբլի գումար պետք է հասներ աղջիկներին ու թոռներին, իսկ 1500 ռուբլի՝ Թումանյանին՝ արտասահմանում ճանապարհորդելու

նպատակով: Դրանից հետո կտակագիրը դեռ երկար է ապրում, ու թեև կտակում այդ գումարը կար, բայց իրականում այլևս չկար:

ԹԺՅ, 372:

1894. – Իր լուսանկարը նվիրում է Ա. Խանոյանին՝ «Սիրելի Խանոյանին» մակագրությամբ:

Հետագայում ժանդարմական գնդապետը Խանոյանի տունը խուզարկելիս այդ լուսանկարը տանում է պահնորդական բաժին:

ԹԺՅ, 390:

1894. – Գրում է ոտանավոր (չի պահպանվել) «Էջմիածնի ամբարի մկներին» վերնագրով (տե՛ս փետրվարի 18):

Ոտանավորը հանձնել է տպագրության «Տարագ» շաբաթաթերթին, սակայն գրաքննության կամ խմբագրության արգելքով լույս չի տեսել:

ԱԻ, 499:

1 8 9 5

Հունվարի <սկիզբ>, Թիֆլիս. – Հնչակյան կուսակցության ժողովում ընտրվում է «Հանգանակող և գործադրող կոմիտե» Թումանյանի մասնակցությամբ:

Նպատակն էր օգնել արևմտահայ գաղթականությանը, ավելի որոշակի՝ Սասունի կոտորածներից տուժածներին:

ԵԼԺ 9, 143, 540:

Հունվարի 10. – Ա. Ղլտճյանի նամակ - բացիկը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Շնորհավորում է բանաստեղծին անվանակոչության օրվա (հունվարի 14) առթիվ: Խնդրում է իրեն չմոռանալ և նամակ գրել:

ԳԱԹ ԹՖ, 1571 (ց 2, 38/8). ԵԼԺ 9, 143, 540:

Հունվարի 14, Թիֆլիս. – Տոնում է անվանակոչության օրը: Ա. Ղլտճյանին գրում է. «Այս տարի առաջին անգամն է, որ

անվանակոչությունս հանդիսավոր տոնեցի»:

ԵԼԺ 9, 143, 540:

Հունվարի 16, Թիֆլիս. – Թումանյանի մասնակցությամբ տեղի է ունենում «մի նոր ժողով»՝ «Հանգանակող և գործադրող կոմիտե»-ի հետ կապված (տե՛ս հունվարի <սկիզբ>):

«Կոմիտե»-ի հաստատումը ձգձգվում է: Տեղի են ունենում վիճաբանություններ, ընտրություններ տեղի չեն ունենում: Վճռում են «միայն երկու բան». «Գլադստոնին և Իզմիրլյանին ուղերձներ ուղարկել»:

ԵԼԺ 9, 143:

Հունվարի 17-18, Թիֆլիս. – Նամակ Հին Նախիջևան՝ Ա. Ղլտճյանին:

Ընկերոջ ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, որ գաղթականներին օգնելու նպատակով երկու կարևոր ժողով է գումարվում, բայց «խմբագիրները չեն հրավիրվում»:

Գրում է իր հետ պատահած «մի անախորժ դեպքի մասին». «Մի տիկին բավական ժամանակ ինձ հետամուտ էր լինում: Նրա բոլոր արտահայտություններից ես շուտով նկատեցի զգացմունքի անմաքրությունը և ամեն ջանք արեցի, որ անհայտության խավարում այդ կապը կտրեր և ոչ ոք չիմանար...»: Այնուամենայնիվ տհաճ բամբասանքներ են տարածվում, և բանաստեղծից մեծ ջանքեր են պահանջվում՝ իր անմեղությունն ապացուցելու համար:

Ուզում է ընկերոջ կարծիքն իմանալ «Հորիզոնի» մասին:

Հիշեցնում է. «Ինչպես գիտես, երկու Արտավազդ էի սկսել: Մեկն արդեն հրատարակեցի և մկրտեցինք անցյալ օրերը*, իսկ մյուսը դեռ կիսատ է (տե՛ս 1894, ապրիլի 17):

Վատ տրամադրության մեջ է. «... Կուզեմայի քեզ մոտ լինել, խցումդ մի ամիս վեր ընկնել, հանգստանալ, նորոգվել»:

* Խոսքը վերաբերում է որդուն՝ Արտավազդին (ծն. 1894, նոյեմբերի 23):

ԵԼԺ 9, 143-147, 540-542:

Հունվարի 20. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Նախիջևանից:

Թումանյանի՝ հունվարի 17-18-ի նամակի պատասխանն է: Խորհուրդ է տալիս առօրյա կենցաղային «խնդիրներին» ուշադրություն չդարձնել, զբաղվել իր կրթության հարցով, լեզուներ սովորել, ճանապարհորդել: «Միայն դու կարող ես հոմերի «Իլիականը», «Ոդիսականը» թարգմանել, որի համար արժեք, որ դու հունարեն սովորեիր. դրա թարգմանությունը մեր գրականության նոր մեծ դարագլուխ կկազմեր: Եթե չես կարող լեզվագետ դառնալ, գոնե սովորիր նոր մի երկու – ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և դրանց միջոցով ծանոթացիր դրանց գրականության հետ: Քեզ հարկավոր է այդ երեք լեզուն սովորել, ուսումնասիրել այս ազգերի գրականությունը և ճանապարհորդել <...>: Անգլերեն անպատճառ պիտի սովորես, որովհետև ես կուզեի, որ Բայրոնը թարգմանեիր: Դու միայն կարող ես հասկանալ այդ *Մեծ* բանաստեղծի հույզերը և թարգման հանդիսանալ *նույն* ուժովը <...> :

Այսպես ուրեմն, իմ կարծիքս է որ դու պիտի շարունակես կրթությունդ արտասահմանում՝ մասնագիտություն ընտրելով գրականությունը»:

Իր հիացնունքն է հայտնում «Հորիզոնի» վերաբերյալ:
ԳԱԹ ԹՖ, թիվ 1572:

«Հունվարի 22» . – Տպագրվում է («Տարագ», 1895, թիվ 3, էջ 43-45) եր. Պալյանի պարսավագիր-հողվածը Թումանյանի «Հորիզոնում» լույս տեսած ստեղծագործությունների մասին:

Այսպես՝ «Չայլո Հարոլդի երգի» թարգմանության մասին ավելորդ է խոսել – իսկա Բայրոնը մի գաճաճ է դուրս եկել պարոնի շաբլոնի միջից «Քաջերի կյանքից» (նույն հեղինակի) չգիտեմ ի՞նչ բան է, նախերգա՞նք «Վերջ Հայաստանի»-ի, թե՞ այլ բան, իսկ Չորագետի նկարագրությունն էլ նմանողություն է Աբովյանի Ջանգու գետի նկարագրության «Հին օրհնություն» ոտանավորը (նույն հեղինակի) արտահայտում է հեղինակի սիրահարությունը դեպի իր պապերը: «Խելոք պապերի» խրատները շատ են դուր գալիս պարոնին «Աղքատի պատիվը» (նույն հեղինակի) անհամ պատմվածք է, զուրկ որևէ նշանակությունից, «Երկինք և երկիր» (նույն հեղինակի) նյութը շատ է տարածված, անզոր «Բորչավույն» (նույն հեղինակի) պա-

րոնը սիրահարված է իր հայրենիքի վրա որ կողմը դառնում ես - Դսեղ, Չորագետ և Լոռի...» և այլն:

ԱԻ, 348:

«Հունվար». – Փիլ. Վարդապարյանի երկտողը Թումանյանին:

Սիրողների մի խումբ մի շատ բարի նպատակով ուզում է հայերեն ներկայացում տալ: Ես հրաժարվեցի, բայց խորհուրդ տվի, որ քեզ դիմեն. և խոսք եմ տվել, որ դու հանձն կառնես մասնակցել իբրև մրցող Ադամյանի: Կզնաս և առանց նազի հանձն կառնես 1-2 դեր»:*

* Պետք է ենթադրել, որ խոսքը վերաբերում է Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա» դրամայի բեմադրությանը (տե՛ս փետրվարի 6):

ՌԻՀ 4, 322:

Հունվար, Թիֆլիս. – Հոդված է գրում Շանթի մասին՝ «Հորիզոնի» համար (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 147, 542:

Հունվար, Թիֆլիս. – Թումանյանի մասնակցությամբ մի խումբ գրողներ ստեղծում են գրողների միություն:

Որոշում են իրենց ստեղծագործություններից մի ժողովածու կազմել և բարեգործական կամ մարդասիրական ընկերության միջոցով հրատարակել՝ հօգուտ գաղթականների*:

* Թիֆլիսում այդպիսի միություն պաշտոնապես չի եղել: Գրողների խումբը հավանաբար գործել է «Հանգանակող և գործադրող կոմիտեի» կազմում (տե՛ս հունվարի սկիզբ):

ԵԼԺ 9, 156, 549-550:

Հունվար, Թիֆլիս .- Նամակ «մի պարոնից» Թումանյանին: Գրում է. «Տանն սպասիր, երեկոյան ժամը 6-ին մոտո՞ր եմք գալու»:

Ժամը վեցին «մի խումբ հայրենակիցներ և ընկերներ» այցելում են բանաստեղծին: Հայտնում են, որ վճռել են նրան օգնելու նպատակով ստեղծել մի «ընկերություն», դրամական միջոցներ հայթայթել և ուղարկել արտասահման՝ ուսում ստանալու (տե՛ս 1894, նոյեմբեր-դեկտեմբեր), «Շատ խոսեցինք, զգացված ճառեր ասացինք, իմիջիայլոց ես նրանց ասացի, պարոններ,

դուք արդեն գործի կեսն արիք, թեկուզ և դուք եկած լինեիք ինձ խաբելու, այնուամենայնիվ օրհնյալ լինի և այդ խաբեությունը. բանաստեղծին էլ հարկավոր են պատրանքներ, ոգևորություն: Ես այժմ զգում եմ, որ մենակ չեմ, այժմ հավատ զգացի դեպի իմ ուժերս, այժմ զորացա այն գիտակցությամբ, թե ես էլ մի բան եմ, գնահատված եմ (թերևս արժանիքից ավելի) և հոգածության առարկա եմ, հույսերի ապավեն եմ: Այս բոլորը իմ պարտքս ծանրացնում են և քաղցրացնում»:

ԵԼԺ 9, 146-147:

Հունվար, Թիֆլիս. – «Հայրենակիցներին և ընկերներին» պատմում է իր ծրագրերի, երազանքների մասին (տե՛ս հունվարի 17-18):

«Շեքսպիրը և մի քանի ընտիր կլասիկներ լավ ուսումնասիրել», «ճանապարհորդել, ժողովուրդն ուսումնասիրել, մարդուն լավ ճանաչել»: Թումանյանի մեծագույն երազանքն է եղել ճանապարհորդել Եվրոպայում: Ճանապարհորդությունը նա համարում էր գրողի զարգացման կարևորագույն գործոններից մեկը: Սակայն նրան այդպես էլ չի հաջողվում իրականացնել իր երազանքը:

ԵԼԺ 9, 146. ԱԻ, 429:

Փետրվարի 1, Թիֆլիս. – Ձեռք է բերում Շեքսպիրի դրամատիկական երկերի ժողովածուի (թարգմ. Ն. Կետչերի) VII հատորը:

Անձնական գրադարանում պահվող այս գրքի վերջին էջին կա բանաստեղծի մակագրությունը՝ «95. II. 1. կարտում տարած փողով»:

ԱԻ, 451:

Փետրվարի 6, Թիֆլիս. – Ղ. Աղայանի և Շիրվանզադեի հետ երկրորդ անգամ մասնակցում է Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա» դրամայի բեմադրությանը (տե՛ս <հունվար>):

ԱԻ, 442:

Փետրվարի 7, Թիֆլիս. – Ստանում է Ա. Ղլտճյանի՝ հունվարի 10-ի նամակը՝ Նախիջևանից:

ԳԱԹ ԹՖ, թիվ 1571:

Փետրվարի 9. – Հակոբ Սառիկյանի նամակը Թումանյանին՝ Վաղարշապատից:

Ուղարկում է իր կատարած փոքրիկ թարգմանությունը և խնդրում բանաստեղծին անձամբ ներկայացնել զրաքննչական կոմիտե, քանի որ այդ դեպքում գործը չի ձգձգվի: Ներողություն խնդրելով՝ տպագրության հետ կապված բոլոր հոգսերը (բացի նյութականից) թողնում է Թումանյանին:

ԳԱԹ ԹՖ, 1966 (436):

Փետրվարի 9. – Հաղորդագրություն «Մշակի» թիվ 16-ի «Ներքին լուրեր» բաժնում:

Հաղորդվում է. «Երկուշաբթի, փետրվարի 6-ին, բանկի թատրոնում, դերասաններ Պետրոսյան և Հարությունյան, մասնակցությամբ սիրողների, ներկայացրին Գուցկովի «Ուրիել Ակոստա»: Այս անգամ ներկայացմանը մասնակցում էին բոլորովին նոր սիրողներ՝ մեր ժերունի գրող Ղազարոս Աղայան և մի քանի երիտասարդներ՝ Մեծատուրյան, Մելիք-Բախտամյան, Շիրվանզադե, Թումանյան, մի օրիորդ, որ համեստությամբ թաքնված է երեք աստղի տակ, և մի քանի ուրիշ անձինք: Սիրողների խաղի վրա, իհարկե, կրիտիկական խիստ աչքով չէ կարելի նայել, և հենց այդ պատճառով ներողամիտ պետք է լինել դեպի նրանց պակասությունները»:

«Մշակ», 1895, թիվ 16, հինգշաբթի. ԱԻ, 442:

Փետրվարի 10, Թիֆլիս. – Ձեռք է բերում «Համլետի» 1886 թ. ֆրանսերեն առանձին հրատարակությունը:

Թումանյանի գրադարանում պահվող այս գրքի վրա նշված է. «95, II. 10, Թիֆլիզ»:

ԱԻ, 454:

Փետրվարի 14. – Հ. Սառիկյանի նամակը Թումանյանին: Գրում է, որ ամսի 10-ին ուղարկել է իր թարգմանությունը (տե՛ս փետրվարի 9), հավանաբար ստացել է: Խնդրում է 1-2 բառի թարգմանությունը ճշտել և ավելացնել:

ԳԱԹ ԹՖ, 1967 (974):

Փետրվարի 16, Թիֆլիս. – Նամակ - երկտող Ավ. Արասխանյանին:

«Խնդրեմ շարունակեցեք ուղարկել մեզ «Մուրճը» նախկին տարիների հասցեով՝ տեր Հովհաննեսսին, Նորաշենի փողոց»:

ԵԼԺ 9, 147:

Փետրվարի 24. – Հ. Սառիկյանի կարճ նամակը թումանյանին՝ Գեչրուկից:

Գրում է, որ ստացել է թումանյանի բաց նամակը: Շնորհակալ է: Կրկնում է, որ գրքի հետ կապված մանրամասները թողնում է նրան:

ԳԱԹ ԹՖ, 1968 (975):

<Փետրվարի վերջեր>, Թիֆլիս. – Ծանր հիվանդանում է և երեք շաբաթ պառկում:

ԵԼԺ 9, 147:

Փետրվար. – Տպագրվում է («Մուրճ», 1895, թիվ 2, էջ 316) Ավ. Արասխանյանի «Վեցամսյա գրական ժողովածուների առիթով» հոդվածը:

Գրեթե ամբողջությամբ նվիրված է Փ. Վարդազարյանի և Հովհ. Թումանյանի հետ իր ունեցած վեճին: Գրում է, որ «Հորիզոնի» հրատարակության անհրաժեշտությունը չկար, քանի որ այն կապված չէ ոչ մի սերնդի, «չկուլայի» կամ նույնիսկ մի խմբի ձգտումների հետ: ԹՖայած տարածայնություններին՝ բարձր է գնահատում թումանյանին՝ համարելով ամսագրի սյունը: «Հորիզոնի» հեղինակներից միայն նրան է համարում «Մուրճի» իսկական աշխատակից»: Եվ «եթե ուժերի ջլատման մասին է խոսքը, «Հորիզոնի» գրողներից միայն պ. Թումանյանը կարող է ակնարկվել»: Նրա հեռանալը «Մուրճից» բացատրում է փողատարությանը (ԹՄ, 22, 907):

ԱԻ, 337-338, 347:

Մարտի 3. – Փիլ. Վարդազարյանի նամակը թումանյանին: Խնդրում է վերադարձնել Մեծատուրյանից ստացած տոմսակները:

ԳԱԹ ԹՖ, 2041:

<Մարտ. առաջին տասնօրյակ>. – Փիլ. Վարդազարյանի նամակը թումանյանին:

Հետաքրքրվում է բանաստեղծի առողջական վիճակով և խնդրում է հայտնել հիվանդության մասին «մանրամասնաբար»:

ԳԱԹ ԹՖ, 1049:

<Մարտ. առաջին տասնօրյակ>, Թիֆլիս. – Նամակ Փիլ. Վարդազարյանին (չի պահպանվել):

Մանրամասն տեղեկություններ է հայտնում իր հիվանդության մասին: Պատասխան նամակում Փիլ. Վարդազարյանը այս նամակը կոչել է «բյուլլետեն»:

ԳԱԹ ԹՖ, 2101 (1045):

<Մարտ. առաջին տասնօրյակ>. – Փիլ. Վարդազարյանի նամակը թումանյանին:

Հայտնում է, թե ստացել է «բյուլլետենը» (թումանյանի նամակը հիվանդության մասին): Խորհուրդ է տալիս հետևել հիվանդությանը և ապա. ««Հորիզոնի» մասին կատարյալ լռություն, ոչ մի տեղից ոչ մի ձայն»:

Կարդացի՞ր արդյոք «Մշակի» առաջնորդողը նոր հրատարակությունների մասին. նախանձելի փառասիրություն»:

ԳԱԹ ԹՖ, 2101 (1045):

Մարտի կեսեր. – Փիլ. Վարդազարյանի անթվակիր նամակը թումանյանին:

Գրում է, որ «Մուրճի» 2-ը լույս է տեսել: Կարդացել է իրենց ու «Հորիզոնի» մասին հոդվածները (տե՛ս փետրվար):

ԳԱԹ ԹՖ, 2077 (1012):

<Մարտի 20-21>, Թիֆլիս. – Նամակ Հին Նախիջևան՝ Ա. Ղլտճյանին:

Գրում է իր տևական հիվանդության մասին (տե՛ս փետրվարի վերջեր): Խոստովանում է ընկերոջը, թե ինչպիսի ծանր հոգեկան ապրումներ է ունենում իր ընտանիքում տիրող անախորժ վիճակի պատճառով: * Ծիծաղելի է համարում ընկերոջ այն հավատը, թե աները՝ տեր Հովհաննեսը, հանձն կառնի իր ընտանիքի հոգսը, եթե ինքը գնա արտասահման ուսանելու. «Դրանք իմ հափշտակվող բնավորության և պատանեկան պարզամտության ու անկասկած հավատի աջակցությամբ ինձ դրել

են մի այնպիսի դրության մեջ, որ շատ է ստոր իմ հոգու համար, և շատ է զգվելի ամեն մի քիչ, շատ քիչ ազնիվ մարդու համար, դրել են մի հոտած, ամուր գառազդում և կռանչելով ծաղրում են իմ զգացմունքները ամեն րոպե, և ես ամեն րոպե ստիպված եմ լուռ աղաղակելու «Լինե՞լ, թե՞ չլինե՞լ»:

Իմ միտքս այն չէ, որ մի քանի խոսքով նկարագրեմ իմ ընտանեկան վիճակի ծանր-ծանր պատկերն ու պատմությունը, և այդ ինչպես կարելի է: Ուզում եմ ասել, որ շատ հրեշավոր է երբ չկա հոգեկան ամենափոքր խաղաղություն, ավելի ճիշտ՝ երբ հոգին ամեն վայրկյան լիքն է հուսահատության սառը խավարով և վրդովմունքի տանջանքով, երբ մարդու բոլոր մտքերն ու զգացմունքները հալածված են հալածանքի ամենասուկալի ծևով: Այդ դրությունից ազատվելուց, դուրս գալուց առաջ մտածել զարգացման, ոգևորության մասի՞ն: Ո՛չ, իմ սիրելի ընկեր, այդ անկարելի է, որովհետև անբնական է»:

* Չունենալով նյութական ապահովություն՝ Թումանյանն ընտանիքով ապրում էր աներոջ՝ Յովհաննես քահանա Մարտիրոսյանի տանը: Դա առիթ էր ստեղծում ընտանեկան անախորժությունների, մանավանդ որ բանաստեղծը հրաժարվել էր քահանա ձեռնադրվելուց:

ԵԼԺ 9, 147-149, 542-543:

Մարտի 21, Թիֆլիս. – Նամակ Ավ. Արասխանյանին:

Գրության առիթը Արասխանյանի «Վեցամսյա գրական հանդեսների առիթով» հոդվածն է (տե՛ս փետրվար), որտեղ հոդվածագիրը Թումանյանի հեռանալը «Մուրճից» բացատրում է նրա փողոսափրությանը: Դա շատ է վիրավորել բանաստեղծին, և նա, ամսագրում իրենց համատեղ աշխատանքից բազմաթիվ վեճեր ու տարաձայնություններ հիշելով, ապացուցում է, որ իր հեռանալը «Մուրճից» տեղի է ունեցել ոչ թե նյութական-շահադիտական, այլ բարոյական դրդապատճառներով: Հիշեցնում է. «... Հիշո՞ւմ եք, երբ Դուք ինձ հրավիրեցիք «Մուրճին» աշխատակցելու (Ա. գիրքս հրատարակելուց հետո), հայտնեցիք ինձ արդեն հայտնի «Մուրճի» ֆինանսական դրությունը և հետևել խոստացաք վարձատրել: Ես մերժեցի, թեև այն ժամանակ ընտանիքի տեր էի և ստանում էի ամսական 16 ռ. 66 կոպեկ կոնսիստորից: Նրանից հետո դուք ինձ մի չեկ տվիք, ես դարձյալ

հայտնեցի, թե Ձեզ և թե հրատարակչին, որ վարձատրություն չեմ ուզում և հրաժարվեցի: Վերջին օրերում ուզում էիք ինձ վարձատրել երեք տարվան աշխատակցությանս համար, չեկ գրել, որ հրատարակչի՞նք վճարի. ես դարձյալ մերժեցի, գլխավորապես ձեռն պատճառաբանելով: Դուք վկա էիք իմ այս վարմունքին, որ ես թողեցի Վարդազարյանցի առաջարկած 80 ռուբլիանոց պաշտոնը և ընտրեցի հրատարակչական ընկերության գրասենյակը 20 ռ. ռոճիկով, իբրև գրական շրջան: Էլ ուրիշ փաստեր չեմ բերում, ոչ էլ նրա վրա եմ գնում, թե Դուք երեք տարվա ընթացքում, որ այնքան մոտիկ եք եղել, ի՞նչ փողոսափրություն, ի՞նչ կասկածելի հատկություն եք տեսել կամ ի՞նչպես եք ճանաչել ինձ»:

Վերջում հույս է հայտնում, որ Արասխանյանը հետ կվերցնի իր խոսքերը. «Խնդրում եմ հանուն այն բարեկամության, որ ունեցել ենք երբևիցե, ինձ չհարկադրեք անախորժ բացատրություններ տալու»:

ԵԼԺ 9, 150-152, 543-545:

Մարտի 21. – Ավ. Արասխանյանի նամակը Թումանյանին:

Գրում է, որ իր հոդվածում ինքը չի ուզեցել վիրավորել բանաստեղծին: Քաղվածաբար բերում է մի քանի տող հոդվածից. «Յովհաննես Թումանյանը կապվեց մի հրատարակիչ պարոնի հետ, - տպված է հոդվածում, - որը նորան ապահովում էր մի այլ բանով (ռոճիկով, փողով), որ ոչ մի կապ չունի գրականության հետ, հետևապես և ոչ մի կապ «Մուրճի» հետ, բայց որը (ռոճիկը, փողը), ով գիտե, նորա համար գուցե ամեն բանից քաղցր էր այդ ժամանակ»:

Ապա շարունակում է. «Այս տողերով ես բացատրում էի Ձեր կապվելը Վարդազարյանցի հետ, որի «Հորիզոնը» նյութ էր կազմում իմ հոդվածի»:

Իմ գրածը ուրեմն այս է, թե Դուք կապվեցիք Վարդազարյանցի հետ միայն այն պատճառով, որ նա, այդ Վարդազարյանցը, Ձեզ դրամական ապահովություն էր տալիս, ապահովություն, որից Դուք զուրկ կմնայիք «Մուրճին» աշխատակցելով»:

ԳԱԹ ԹՖ, 982 (548):

Մարտի 21. – Առաջին հիշատակությունը Բայրոնի «Շիլիո-
նի կալանավորը» պոեմի՝ թումանյանի թարգմանության մասին
(թարգմ. ժամանակը՝ 1893 – 1895):

ԵԼԺ 4, 115, 591:

Մարտի 22. – Մխիթար Տեր-Անդրեասյանի նամակ-բացիկը
Թումանյանին՝ Բաքվից:

Հանդիմանում է բանաստեղծին՝ նամակներն ուշացնելու
համար: Հայտնում է, որ կարող է այլևս նամակ չգրել, քանի որ
ինքը գալու է Թիֆլիս:

ԳԱԹ ԹՖ, 2156 (1120):

Մարտի 25, Թիֆլիս. – Ստանում է Ս. Տեր-Անդրեասյանի՝
մարտի 22-ի նամակ-բացիկը Բաքվից:

ԳԱԹ ԹՖ, 2156 (1120):

Մարտի 29. – Ս. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Բաք-
վից:

Խնդրում է անհապաղ անցնել «Արծազանքի» և «Մշակի»
խմբագրություններ և հայտարարություն տպել տալ իր թարգ-
մանության («Սպարտակ») տպագրության մասին:

ԳԱԹ ԹՖ, 1543:

Մարտի 30. – Թումանյանի նախաձեռնությամբ տպա-
գրվում է լուր («Մշակ», 1895, թիվ 37) Ղ. Աղայանի նյութական
ծանր դրության մասին:

ԵԼԺ 9, 153, 546:

Մարտ, Թիֆլիս. – Հոդված՝ Ղ. Աղայանի նյութական ծանր
վիճակի մասին:

Հոդվածը տանում է «Մշակի» խմբագրատուն: Բայց՝ «հող-
վածս հավանեցին, իսկ միտքը՝ ոչ – ժամանակն առարկելով»:
Դրա փոխարեն տպագրում են հայտարարություն (տե՛ս մարտի
30):

ԵԼԺ 9, 153:

<Մարտից հետո>, Թիֆլիս. – Ընտանիքով տեղափոխվում
է նոր բնակարան՝ Շավրի Կարապետի տուն:

Օ. Թումանյանը հիշում է. «1895 թվականին փոխադրվե-

ցինք Խլեբնայա պլոշչադ (Շավրի Կարապետի տունը): Օհա-
նեսն այստեղ էլ սենյակ ուներ, որ պատշգամբի մյուս ծայրին
էր: Ընկերները հավաքվում էին այդ սենյակում: Ամենից հաճախ
նրա մոտ լինում էր դերասան Կարապետ Գալֆայանը, որ նյու-
թական ծանր դրության մեջ էր. Օհանեսը նրան միշտ օգնում
էր, նույնիսկ վերջին կոպեկը չէր խնայում: Օհանեսն ասում էր,
որ Գալֆայանին առաջին անգամ հանդիպել է մի ածխավաճառի
խանութում, ծանոթացել է հետը և հրավիրել իր մոտ»:

ԹԺՀ, 336, 939:

Ապրիլի 4. – Ա. Արասխանյանի նամակը Թումանյանին:
Թումանյանի՝ մարտի 21-ի նամակի առնչությամբ անդրա-
դառնում է բանաստեղծի՝ «Մուրճից» հեռանալու և դրա հետ
կապված խնդիրներին:

ԳԱԹ ԹՖ, 983:

Ապրիլի 25. – Ա. Արասխանյանի նամակը Թումանյանին:
Հիշեցնում է, որ նա, լինելով «Մուրճի» աշխատակից, կա-
տարելու էր նաև սրբագրիչի պարտականություններ՝ ռոճիկով:
ԳԱԹ ԹՖ, 984:

Մինչև ապրիլի 14-ը, Թիֆլիս. – Շարունակում է աշխատել
Լերմոնտովի «Սժիրի» պոեմի թարգմանության վրա:
ԵԼԺ 9, 154:

Մինչև ապրիլի 14-ը, Թիֆլիս. – Ընկերներով գումարում
են ժողով՝ Ղ. Աղայանին նյութական օգնություն ցույց տալու
նպատակով:

Ա. Ղլտճյանին գրում է. «Ժողովն ընտրեց 4 հոգի, իմի-
ջիայլոց և ինձ, բայց ես հանձն առա միայն քարտուղարության
համար, որովհետև իմ ամունը հարուստների մոտ հեղինա-
կություն չի ունենալ: Ինչևիցե, արդեն սկսված է գործունեու-
թյունը, բայց դու գիտես ինչ տեսակ է լինում ժողովի գործու-
նեությունը, պաշտոնական, սառն ու դանդաղ:

Կարճ կտրեմ, որոշված է հանգանակել նեղ-հարուստ
շրջանում, իմիջիայլոց դիմել և քեզ, հանգանակելու քո վիճա-
կում, հարուստներից»:

ԵԼԺ 9, 153-154:

Ապրիլի 14, Թիֆլիս. – Նամակ Հին Նախիջևան՝ Ա. Ղլտճյանին:

Գրում է Ղ. Աղայանի նյութական ծանր վիճակի և նրան օգնելու իր ջանքերի մասին. «Դու պետք է ներկա լինեիր այն տեսարանին, երբ ամեն կողմից մերժված, ընտանիքից ստացած նախատական նամակն առաջին, նա կոտրված ու լցված, մի քանի կցկտուր խոսքեր արտասանեց ու գլուխը ներքև թողնելով, սպիտակ միրուքը բռնած աշխատում էր հետ կուլ տալ արտասուքները, որոնք սակայն երևացին, որպես 33 տարվան գրական գործունեության հաղթանակի նշաններ»:

Այնուհետև հայտնում է, որ ընկերներով որոշել են ժողով անել՝ Աղայանին օգնություն կազմակերպելու համար (տե՛ս մինչև ապրիլի 14-ը): Տեղեկացնում է նաև. «Թե ինձ հարցնես, ես «Մծիրին եմ շարունակում և մի քանի այլ բաներ»: «Նոր բաներ» ասելով՝ հավանաբար նկատի ունի «Լոռեցի Սաքոյի» վերամշակումը, «Շիլիոնի կալանավորի» թարգմանությունը, «Դաշնակների» նոր գրքույկը:

ԵԼԺ 9, 152-154, 546-547:

Մինչև ապրիլի 15-ը, Թիֆլիս. – Կարդում է Մ. Աբեղյանի ձեռագիր մի հոդվածը *կայծակի* դիցաբանության մասին և խորեն Նար – Պեյի «Սուվերը հայկական» ժողովածուն:

ԵԼԺ 9, 154-155, 547:

Ապրիլի 15, Թիֆլիս. – Նամակ Փիլ. Վարդազարյանին:

Տեղեկացնում է, որ կարդացել է Աբեղյանի հոդվածը և Նար-Պեյի ժողովածուն (տե՛ս <մինչև ապրիլի 15-ը>):

Աբեղյանի հոդվածի մասին գրում է. «Շատ կարևոր ու նշանավոր է նյութը, հմուտ մարդու ձեռքով է գրված, բայց շատ է ձգձգված: Այս հոդվածում միայն *կայծակի* դիցաբանության մասին է խոսում, ապացուցում է, որ *Ծովինարն* է նորա այլաբանությունը, սակայն սխալներ կան. օրինակ, իբրև թե լոռեցիք կայծակին ծովինար են ասում: Լոռեցիք ոչ թե ծովինար, այլ ծովիան են ասում, և այն էլ ոչ թե կայծակին, այլ փայլակին...»:

Նար-Պեյի մասին. «Նար-Պեյի «Սուվերը» շատ հիմար բան է եղել. այսքան սուվերներից ոչ մեկի մեջ բանաստեղծության սուվեր անգամ չկա»:

ԵԼԺ 9, 154, 547:

Ապրիլի 22. – Տպագրվում է («Շավիղ», 1895 թիվ 14) Վրթ. Փափազյանի գրախոսությունը՝ «Հորիզոն» հանդեսի գրական բաժնի մասին:

Անդրադառնում է նաև Հովհաննես Թումանյանի բանաստեղծություններին:

«Հայ քննադատական մտքի պատմության մատենագիտություն», Երևան, 1987, էջ 466:

Ապրիլի 25, Թիֆլիս. – Նամակ Ավ. Արասխանյանին:

Խնդրում է իրենց հարաբերությունների մեջ որոշակիություն մտցնելու համար պատասխանել հետևյալ հարցերին, ինչպես՝

«1. Դո՞ւք եք ինձ հեռացրել «Մուրճից», թե ես եմ հեռացել:

2. Դուք ինչպե՞ս իմացաք՝ պ. Վարդազարյանի հետ ես ինչի համար և ինչ պայմանով էի կապվել:

3. 1893 թ. վերջին ամիսներին ինձ տանո՞ւմ էիք Ձեր խմբագրական ժողովներին, թե չէ, և այդ ժողովներում տվե՞լ եք ինձ կարդալու և կարծիք հայտնելու համար, օր. Մելքունյանի քննադատությունը՝ Հովհաննիսյանի բանաստեղծությունների մասին, Շաթիրյանի «Մծիրին», Արզահատյանի վեպիկը (մի ինչ-որ երեցի մասին) և այլն, որոնք և օրերով, եթե ոչ շաբաթներով եղել են մոտս:

4. 1894 թ. հունվարին ի՞նչ է ասել Ձեզ պ. Վանցյանը յուր հոդվածի և ինձ գրած նամակի մասին:

5. Խնդրեմ Ըայեք 1893 թվականի Ձեր չեկերի տետրակին, այնտեղ կա՞ իմ անունով մի չեկ «Սովի ժամանակներից» վերնագրով գրվածքիս համար, որ տպված է «Մուրճի» No 5-ում 1893 թ.:

Եվ 6. Դուք գրում եք, թե ինձ միակ գնահատողն եք եղել և պաշտպանել եք ոչ միայն դրսի մարդկանցից (!), այլև «Մուրճի» գրողներից (սկզբի տարում), խնդրեմ տաք այդ գրողների անունները»:

ԵԼԺ 9, 155-156:

Ապրիլի 25. – Ավ. Արասխանյանի նամակը Թումանյանին: Բանաստեղծի հարցումների պատասխանն է՝ բավական կոպիտ ու վիրավորական ոճով:
ԳԱԹ ԹՖ, 984:

Ապրիլի 25. – Տիգրան Վերանյանի նամակը Թումանյանին՝ Ջալալօղլուց:

Գրում է բանաստեղծի հանդեպ սիրո, ընկերական զգացմունքների, իր անձնական կյանքի մասին: Ուրախ է, որ Թումանյանն ամռանը պատրաստվում է գալ Լոռի: Խնդրում է հետը բերել բավական քանակությամբ իր գրքերից, քանի որ շատերն են ուզում:

ԳԱԹ ԹՖ, 2130:

Ապրիլի 30. – Սարգիս քահանա Տեր-Սարգսյանի նամակը Թումանյանին:

Գրում է ինչ-որ ծննդյան վկայականի և անձնական-կենցաղային այլ խնդիրների մասին:

ԳԱԹ ԹՖ, 2251:

Մայիսի 2. – Ե. Ջոհրաբյանի նամակը Թումանյանին՝ Ջալալօղլուց:

Խնդրում է Կոնստանտնուպոլիսից տեղեկանալ և իրեն շտապ հայտնել՝ ինչ վիճակում է իրենց գյուղի (Վարդաբլուր) քահանայության խնդիրը:

ԳԱԹ ԹՖ, 1195:

Մայիսի 5, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Յուզի. Յուզիանցիսյանին:

Հայտնում է, որ Թիֆլիսի «գեղարվեստական գրողների» միությունը (տե՛ս հունվար) որոշել է կազմել մի ժողովածու բոլոր գրողների մասնակցությամբ և հրատարակել հոգուտ գաղթականների: Խնդրում է Յուզիանցիսյանի կարծիքն ու մասնակցությունը:

ԵԼԺ 9, 156, 549-550:

Մայիսի 9. – Փիլ. Վարդազարյանի երկտողը Թումանյանին:

Հայտնում է, թե վճռել է չհրատարակել Ղ. Աղայանի «Քյոռօղլին» թողնելով ցանկացողներին: Իր կարծիքով՝ սա երկուստեք թեթևություն կբերի և՛ իրեն, և՛ գրողին:
ԳԱԹ ԹՖ, 2042 (1013):

<Գարուն>. – Բաքու է մեկնում՝ իբրև «հնչակյան կենտրոնական մարմնի ներկայացուցիչ»:

Սիմ. Հովվյանը հիշում է. «Նա եկել էր իբրև հնչակյան պրոպագանդիստ կամ ներկայացուցիչ, բայց այդ ուղղությամբ շատ քիչ բան ուներ անելու: Եվ երբ որ խոսք էր լինում նրա առաքելության մասին, իր յուճոհիստական ձևերով ձեռք էր առնում մեզ, ասելով.՝ Տո՛, հնչակյանս ո՞րն է, դաշնակցականս՝ ո՞րը:՝ Այնքան սրամիտ կերպով էր ասում այդ խոսքը, որ մենք էլ նրա հովին էինք ընկնում և սկսում հարցը կատակի տալ»:

ԹԺՀ, 246-267. ԱԻ, 378:

<Գարուն>. – Թումանյանի առաջին այցելությունը Բաքու՝ «Օջախին».*

Ս. Հովվյանը հիշում է. «... Թիֆլիսից Բաքու էր եկել Ղ. Աղայանը <...> Աղայանից հետո եկավ Յուզի. Թումանյանը: Ինչպես հետո պարզվեց, նրան Աղայանն արդեն պատմել էր «Օջախի» մասին՝ իրազեկ անելով «Օջախի» բնորոշ կողմերին և անց ու դարձին: Եվ ահա մի գեղեցիկ օր, առանց ժամանման օրը և ժամը նախօրոք հայտնելու, մեզ սյուրպրիզ-անակնկալ պատրաստելու համար, մեր սիրելի Ուհանեզը կանգնած է «Օջախի» դռանը... Իրարանցում, հանդիսավոր ընդունելության պատրաստություն և պաշտոնական դիմավորում... Բաց ենք անում դուռը... հանդիսավոր, խորհրդավոր պահ... Էլ ո՛չ բարև, ո՛չ աստծու բարին, Օհաննեսն իր մշտաժպիտ դեմքով «Օջախի» շենքում կանգնած է և մեկ աջ է նայում, մեկ ձախ ու հանպատրաստից «Օջախին» նվիրված մի ոտանավոր արտասանում՝ ամեն տան վերջը կրկնելով.

Այ... ձեր «Օջախումը»,

Ձեր «Օջախի» պուջախումը...

Մենք մնացել էինք հիացած, այնքան սրամիտ ու բնորոշ էր այդ կարճ ոտանավորը, թեև միանգամայն անհարմար տպագրության... Արտասանում էր այդ հանպատրաստից հորի-

նած բանաստեղծությունը, ձեռքերը թափահարում և արտասանությանն առանձին բնորոշ շեշտ տալիս ու միշտ կրկնում վերջին երկտողը...

«Օջախ» հա՛ «Օջախ», ձենը սաղ աշխարհ եք գցել,- ասաց Յովհաննեսը,- և հիմա նոր սկսեց «բարով, աստծու բարին» ասել <...> Երկու-երեք շաբաթ մնաց Բաքվում Յովհաննեսը և հենց գալու րոպեին իսկ իր հռչակավոր ուղերձի հիման վրա միաձայն «Օջախի» պատվավոր անդամ ընտրվեց»:

* «Օջախը» 1890-ական թվականներին Բաքվի հայ մտավորականներից կազմված մի խմբակ էր: Թումանյանը մտերիմ էր նրա անդամներից Սեդրակ (Արսեն) Բալայանի, Մկրտիչ Բեգլարյանի, Սիմեոն Յովկյանի, Սահակ Մատինյանի, Արամ Նազարեթյանի և Միսակ Օհանյանի հետ, որոնք, բացի Օհանյանից և Բեգլարյանից, Բաքվի Սեսրոպյան և Յոփսիսիյան դպրոցների ուսուցիչներ էին (ԵԼԺ 1, 187, 599):

ԹԺՅ, 261-262:

<Գարուն>, Թիֆլիս. – Ղ. Աղայանի հետ անհաջող փորձ են անում՝ փրկելու վարարած Քուռ գետում խեղդվող մի շան:

Շիրվանգաղեն հիշում է. «... Եվ Աղայանը վճռում է շանը փրկել: Բայց ի՞նչպես – Յովհաննես Թումանյանի աջակցությամբ: Աղայանը շտապում է իր բարեկամին կանչելու, և շուտով մեր բանաստեղծները մի-մի մահակով զինված վազում են գետափը: Շունը դեռ թմբի վրա է և շարունակ ոռնում է, օգնություն աղերսելով: Փրկարարներն սկսում են գոռալ, աղաղակել ու մահակները զարկել ջրին: Ոչինչ չի օգնում: Հանկարծ նրանք ետ են նայում և տեսնում են, որ ամբոխը հըռ-հըռ ծիծաղում է:

- Թո՛ղ, Յովհաննես, թո՛ղ, չեղավ,- ասում է Աղայանն առանց շփոթվելու:

Եվ երկու բարեկամները, մահակները դեն գցելով, շտապում են ամբոխի քրքիջներից փախչել:

- Ա՛յ տղա, տե՛ս, է՛,- եզրակացնում է Աղայանը,- մենք հեռվից եկել ենք այստեղ մի շուն ազատելու, ազգը մեզ մի շան տեղ չի դնում, թողել է անոթի»:

ԹԺՅ, 396:

<Հունիսի 17>, Թիֆլիս. – Նամակ-երկտող Փիլ. Վարդազարյանին:

Գրում է. «Ընտանիքիս հետ գնում եմ գյուղը: Առաջիկա հուլիս-օգոստոս ամիսների համար ինչ որ տալու ես, եթե կարող ես, միասին տուր, որովհետև հետո չեմ կարող ստանալ, մեր կայարանում փող չեն ընդունում»:

ԵԼԺ 9, 157, 550:

Հուլիսի 3. – Ա. Բարխուդարյանի նամակը Փիլ. Վարդազարյանին՝ «Գիքորը» պատմվածքի մասին:

Պատմվածքը նախատեսված էր տպագրել «Հորիզոն» հանդեսի երկրորդ գրքում: Ա. Բարխուդարյանը «Գիքորը» պատմվածքի նյութը նորություն չի համարում մեր գրականության մեջ և համեմատելով Րաֆֆու «Ոսկի աքաղաղ» և Շիրվանգաղեի «Գործակատարի հիշատակարանը» վիպակների հետ՝ առաջնությունը տալիս է վերջին երկուսին: Գրում է, որ գրողը պետք է ներկայացնի տեղական առանձնահատկությունները: Թերևս ընկերոջ դիտողությունները հաշվի առնելով է, որ Թումանյանը հետաձգում է «Գիքորի» տպագրությունը:

ԵԼԺ 5, 747. ԱԻ, 351-552:

Հուլիսի 10, Ջալալօղլի. – Նամակ-երկտող Թիֆլիսի Փիլ. Վարդազարյանին:

Տեղեկացնում է. «Հաջողությամբ հասանք Դսեղ (տե՛ս հունիսի 17): Լավ ենք: <...> Նամակ գրիր (Джелалоглы О. Туманяну):

ԵԼԺ 9, 157:

Հուլիսի 12, Ջալալօղլի. – Նամակ Թիֆլիսի Ղ. Աղայանին: Տեղեկացնում է. «Ընտանիքով հասել եմ հայրենիք»: Հարցնում է Աղայանի «ընտանեկան դրության», «տիկնոջ ծննդաբերության» մասին, Թիֆլիսում են մնալու, թե՞ ոչ, Շիրվանը գնա՞ց, թե՞ չէ՞:

* Ըստ երևույթին Շիրվանգաղեն, «Հանգանակող և գործադրող կոմիտեի» հանձնարարությամբ, պետք է մեկներ Ռուսաստանի հայաբնակ քաղաքների՝ հօգուտ արևմտահայ գաղթականության հանգանակություն կազմակերպելու:

ԵԼԺ 9, 157-158, 551:

Հուլիսի 18. – Ս. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է, որ ուրախությամբ ստացել է բանաստեղծի նամակը (չի պահպանվել): Անցել է նոր պաշտոնի՝ Շահգիդանյանի գործարանում: Շատ զբաղված է, ինքն էլ դարձել է մի մեքենա, իսկ սիրտը «մազուքի չափ սև է»: Շատ է վախենում կորցնել հոգու փոքրիկ մնացորդը: Անհամբեր սպասում է թումանյանի նամակին:

ԳԱԹ ԹՖ, 2157 (1121):

Յուլիսի 20. - Փիլ. Վարդապարյանի նամակը բանաստեղծին թիֆլիսից:

Տեղեկացնում է, որ պատվիրված փոստով ուղարկել է ինչ-որ մեկի թարգմանությունը Լերմոնտովից («Դևը»): Ինքը չի հավանել: Թարգմանիչը բանաստեղծ չէ: Ուղարկում է իբրև նորություն:

ԳԱԹ ԹՖ, 2043 (1014):

Օգոստոսի 9. - Ս. Պառավյանի նամակը թումանյանին՝ Ջալալօղլուց:

Տեղեկացնում է, որ Սրբազանը ժամանելու է Ջալալօղլի: Տեր Թադևոսը ևս պետք է գա՝ սրբազանի հետ շրջելու: Սրբազանը գիշերելու է իրենց տանը, այնուհետև մեկնելու է Հաղպատ:

ԳԱԹ ԹՖ, 1938:

Յուլիսի 29. - Թիվ 6 (2) ծոցատետրում գրառում է աշուղական մի ոտանավոր՝ «Հոգու - մարմնի խեր ու շառը հարցընես...» սկզբնատողով:

ՌԻՀ 5, 222:

<Ամառ, օգոստոսի սկիզբ>. - Ընտանիքով Դսեղում հանգստանալիս հաճախ լինում է Մարցում՝ այցելելով Տ. Տեր-Ղավթյանին և նրա դստերը՝ Վ. Գևորգյանին:

Վ. Գևորգյանը հիշում է, որ բանաստեղծի հետ գալիս էր նաև հայրը՝ տեր Թադևոսը, որ իր հետ բերում էր չոնգուրը և նվազում ասիական մեղեդիներ: Թումանյանը զրույցների ժամանակ խոսում էր իր ծրագրերից, ասում, որ այդ տարի շատ բան ունի գրելու:

Հիշում է նաև, որ օգոստոսի սկզբին Մարց է գալիս Թիֆլիսի թեմական առաջնորդ Սուրենյանց եպիսկոպոսը: Մի դեպքի առիթով թումանյանն ընդհարվում է նրա հետ, որից հետո ատելությամբ է լցվում եպիսկոպոսի նկատմամբ:

ԹԺՀ, 210-211:

Օգոստոսի 16. - Գրառում թիվ 6 (2) ծոցատետրում՝ մի քանի տող ժողովրդական բանահյուսությունից.

« (Վրա տալուց առաջ)

- Տո հարս, արի գնանք էրը, արի գնանք էրը:

- Ի, ես ի՞նչ ա ես քուփակը ես սահաթին կամենում:

- Հարս, արի գնանք էրը:

Երբ որ վրա են տալիս:

- Հարս:

- Էրն էր մոտի՞կ, թե՞ Ղարս:

ՌԻՀ 5, 226 (22):

Օգոստոսի 21, Թիֆլիս. - Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Գրում է. «Ետ են ուղարկում «Դևը». այդ թարգմանիչը ոչ թե բանաստեղծ չի, ինչպես երևում է բանաստեղծի էլ ծանոթ չի: Զգիտեմ՝ ինչու ես ուղարկել» (տես հուլիսի 20):

Գրում է նաև Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարության մասին, որտեղ, եթե Վարդապարյանը հարմար գտնի, կարող է եկամտաբեր ներդրում անել:

ԵԼԺ 9, 158, 551-551:

<Ամառ>. - Լոռու Վարդաբլուր գյուղում գրի է առնում «Հագարան բլբուլի» առաջին տարբերակը:

ԵԼԺ 4, 578:

Սեպտեմբերի 4, Օծուն. - Գրառում թիվ 6(2) ծոցատետրում՝ անելզոտ:

«Տեր Բաղդասարի վրա գանգատ էին տվել, թե մի հարսի խաբել է, թե արի, սերմը շինի: Տարել է տուն, բռնաբարել: Զննության ժամանակ ժողովրդի մեջ երբ հայտնեցին, թե խնդիրը սովորն ուրիշն է, տեր Բաղդասարը լսելուց հետո թե՛ Աստված

ջանս սաղ թողա, ես դրա կնկան էլ սերմը շինել սովորցնեմ»:
ՈՒՅ 5, 230 (57):

Սեպտեմբերի 5, Օծուն. – Գրառում թիվ 6(2) ծոցատետրում՝ խաչատուր Աբովյանի մասին:

«Օծունում պատմում են.

խաչատուր Աբովյանը այստեղ եղած ժամանակ երկու շահով մարդիկ էր վարձում ու մեծ-մեծ քարեր գլորել տալիս ձորի գլխիցն ու նայում, զվարճանում էր»:

ՈՒՅ 5, 226 (29):

Սեպտեմբերի 20. – Գրառում թիվ 6(2) ծոցատետրում:

«Ձաղի վիրի ճգնավորի նորաշեն (նորոգած) խորանի դրած քարերը իրարից քցել ջարդել էին.

Թվ.	ՈՂԹ	
689		1895
+		-
<u>551</u>		<u>1240</u>
1240		655
մյուսը ՈՂԵ		695 <+ 551 = 1246>
		-
		<u>689</u>
		6

Ես Գրիգոր՝ որդի Սարժյան
բերդ
ինձ խոստովանելն...»:

ՈՒՅ 5, 236 (71):

Սեպտեմբերի 27, Դսեղ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլիպոս Վարդապարյանին:

Գրում է գյուղի իր առօրյայի մասին. «Այս ամառ շատ աղմկալի եղավ ինձ համար, թեև ես սաստիկ ցանկանում էի մի քանի լուռ ու միայնակ օրեր անցկացնել անտառներում և թարմանալ, կազդուրվել հոգով ու մարմնով: Շարունակ նոր-նոր մարդիկ, նոր հյուրեր, այս կողմ, այն կողմ, տեսություններ, պատիվներ (պատիժներ), հարայ հրոց, մի խոսքով զահլես գնաց: Մի ահագին սնդուկ լիքը գիրք էի բերել հետս, ոչ միևը

չկարողացա կարդալ. միայն «Մծիրիի» շուրջն են բոլորել, մի քանի բաներ նայել և այլն»:

Նոր տպավորությունները շատ տխուր են. «...Մի շպար ունի մեր կյանքը, նրա ետևը սոսկալի է»: Պատմում է հարևան գյուղում անցկացրած մի հյուրընկալության մասին: Հյուրընկալող ընտանիքը արտաքնապես բարեկեցիկ է: Իրականում երեխաները կիսաքաղց են, իսկ տանտերը, որ շրջակայքում «անվանի» մարդու համբավ ունի, մի սովորական վաշխառու է. «Այս մի դեպք է, թերևս, սովորականներից մեկը, բայց շատ խոր ազդեց ինձ և շատ է բնորոշում մեր ապականված, ստոր կյանքը»:

Վերջում. «Մի լավ ամենօրյա զվարճություն ունեմ՝ այդ որսորդությունն է, իսկապես, թափառելը անտառներում, սար ու ձորերում: Ստնում են մենակ ամենավտանգավոր տեղեր, և այդ ինձ մի առանձին բավականություն է տալիս: Մի տեղ էի գնացել. երբ որ իմացան տանըցիք ու գյուղացիք արգելեցին, որ մյուս անգամ մենակ չմտնեմ այնտեղ, որ հայտնի արջանոց է և կասկածավոր տեղ է: Ես մյուս օրը թաքուն դարձյալ գնացի այնտեղ, թեև մի քիչ էլ մի բանից վախեցի: Այստեղն ինձ համար մի սիրելի զբոսավայր է դարձել»:

ԵԼԺ 9, 159-162, 552:

<Օգոստոս – սեպտեմբեր>, Դսեղ. – Շարունակում է աշխատել Լերմոնտովի «Մծիրի» պոեմի թարգմանության վրա:
ԵԼԺ 9, 159:

<Սեպտեմբեր>, Դսեղ. – Թունանյաններին է այցելում Թիֆլիսի թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Սուրենյանցը:

Բանաստեղծը Վարդապարյանին գրում է. «Առաջնորդը մեր տանն էր. մազալու բաներ կպատմեմ, գրելու տեղ չկա: «Հորի-զոնն» ուզեց, «Բորչավիում» հողվածը կարդաց ու հիշատակարանում նկատողություններ արավ»:

ԵԼԺ 9, 162:

<Հոկտեմբերի 10 – 12>. – Դսեղից ընտանիքով վերադառնում է Թիֆլիս:

ԵԼԺ 9, 162:

<Յոկտեմբեր>, Թիֆլիս. – Ծանոթանում է Գ. Լևոնյանի հետ, որ այցելության էր եկել Թումանյանին Բեհրուտովյան փողոցի նրա տանը:

Թումանյանը հեռակա կերպով ծանոթ էր Լևոնյանին «Մշակում» անստորագիր տպագրված հոդվածներից, որտեղ սուր քննադատության էր ենթարկվել նրա «Հայոց պարբերական մամուլը. պատմական տեսություն սկզբից մինչև մեր օրերը (1794 – 1894)» աշխատությունը: Պատճառը, անտարակույս, Լևոնյանի «Մշակի» մասին արված դիտողություններն էին:

ԹԺՅ, 436, 951:

<Նոյեմբերի սկիզբ>. – Սկսում է ճանապարհորդել Թիֆլիս - Բորժոմ - Ախալցխա - Ախալքալաք – Կարս - Ալեքսանդրապոլ – Ղարաքիլիսա - Դիլիջան - Երևան - Էջմիածին երթուղով:

Շրջագայության նպատակն էր օգնել հայ գաղթականությանը՝ կազմակերպելով տեղական կոմիտեներ («Հանգանակող և գործադրող կոմիտեի» անդամ լինելով՝ նա ուներ այդ հանձնարարությունը): Միևնույն ժամանակ նա ուներ ճանապարհորդական իր անձնական հետաքրքրությունները: Օրինակ՝ Երևանի թեմական դպրոցում հանդիպումներ է ունենում տեղի մտավորական և հոգևորական գործիչների հետ (ԱԻ, 371 – 373):

ԵԼԺ 9, 162, 552:

<Նոյեմբերի սկիզբ>. – Թիֆլիսից գնում է Բորժոմ, ապա Ախալքալաք:

Կնոջը գրում է. «Մինչև Բորժոմ շատ լավ եկա, նրանից հետո ֆայտոնով էի, դարձյալ լավ էր, թեև ցուրտ: Բորժոմից սկսեց ձյունը»:

ԵԼԺ 9, 163:

<Նոյեմբերի սկիզբ>. – Ժամանում է Ախալքալաք:

Ջալալ Տեր-Գրիգորյանը հիշում է, որ մինչև իր գալը բանաստեղծին ընդունում է տանտիրուհին՝ Սոֆյա Տեր-Ստեփանյանը, որ ինքնուս, հասարակ կին էր, գրականությանը լավ ծանոթ: Նա իր դիտողություններով ու դատողություններով մեծ տպավորություն է թողնում բանաստեղծի վրա:

ԹԺՅ, 401:

Նոյեմբերի 9, Ախալքալաք. – Օր. Երանյակ Վարդանյանցին է նվիրում «Ժպտուն աչքեր» («Դու մի՛ հավատա ժպտուն աչքերին...») բանաստեղծությունը՝ գրված 1894 թ.:

ԵԼԺ 1, 586:

<Նոյեմբերի առաջին տասնօրյակի վերջ>. – Ախալքալաքից մեկնում է Ալեքսանդրապոլ:

Ավ. Իսահակյանը հիշում է. «1895 թվի ձմեռնամուտին Օհաննեսը երևաց Ալեքսանդրապոլում: Գալիս էր Թիֆլիսից՝ Ախալցխայի և Ախալքալաքի վրայով, գնում էր Երևան, Էջմիածին: Ինչ-որ միսիայով էր շրջում նա: Հայ կյանքը ալեկոծված էր արևմտահայերի ջարդերի սարսափելի լուրերով և ջարդերին ականատես, փախած հայ գաղթականների սրտակեղեք պատմություններով: Ամեն գիտակից հայ ծանր մտահոգություններ ուներ արևմտահայերի և հայկական հարցի ճակատագրի նկատմամբ: Անշուշտ, Օհաննեսի ուղևորությունը կապված պիտի լիներ այդ դրության վերաբերյալ գործերի հետ: Այդ օրերից անցել է ավելի քան 50 տարի և մոռացել եմ, թե ի՞նչ էր Օհաննեսի դերը այս գործերի մեջ, թեև նա անվերջ տեսակցությունների մեջ էր քաղաքի ինտելիգենցիայի և հասարակության ներկայացուցիչների հետ, հետաքրքրվում էր գաղթականների վիճակով և տեսրակներ էր լցնում նրանց պատմածներով»:

Ըստ Իսահակյանի հուշերի՝ Թումանյանը հյուրընկալվում է նրանց տանը: Մեկ շաբաթ հետո մեկնում է Կարս, որտեղից էջմիածնի վրայով պետք է գնար Երևան:

ԹԺՅ, 8, 905:

Նոյեմբերի 11. – Գրում է «Ո՞վ տարավ» («Դուք ինձանից տարաք հիշատակարան...») բանաստեղծությունը:

Նվիրված է օր. Երանյակ Վարդանյանցին (տե՛ս նոյեմբերի 9), հետագայում՝ Գյուլգալյան, Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, գյուղատնտես Տիգրան Գյուլգալյանի կինը:

ԵԼԺ 1, 152, 589:

<Նոյեմբերի կեսեր>, Ալեքսանդրապոլ. – Ավ. Իսահակյա-

ցին է նվիրում «Երկու սև ամպ» բանաստեղծության հեղինակային ընդօրինակությունը:

ԹԺՂ, 9. ԵԼԺ 1, 588:

Նոյեմբերի <19>, Գիշեր. – Ալեքսանդրապոլից հասնում է Կարս:

Կնոջը՝ Օ. Թումանյանին գրում է. «Գիշերը հասա Կարս և իջել եմ մեր Մեխակի ու Նիկոլայի մոտ (Տիգրանի եղբայրները): Բարևում են նրանք և տիկիները, որ շատ ցանկանում են տեսնել, նույնպես և օրհորդները: Ես շատ լավ եմ և ուրախ»:

ԵԼԺ 9, 162, 552:

Նոյեմբերի 20, Կարս. – Նամակ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է, թե ինչպես է ընթանում ճանապարհորդությունը: Տեղեկացնում է. «Վաղը կամ մյուս օրը Կարսից դուրս կգամ Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա և ապա Էջմիածին: Էջմիածին գուցե մի քանի օր մնամ, հեռագիր կտամ, որ նամակ գրես Էջմիածին»:

ԵԼԺ 9, 162, 552:

Նոյեմբերի <21-22>. – Կարսից վերադառնում է Ալեքսանդրապոլ:

ԵԼԺ 9, 162, 552:

Նոյեմբերի <23-25>. – Ալեքսանդրապոլից կառքով գնում է Ղարաքիլիսա, ապա՝ Դիլիջան:

Կնոջը գրում է. «Դիլիջանում սաստիկ տաքություն տվեցի և հիվանդացա: Ձանազան միջոցներ ձեռք առա և այնպես հիվանդ-հիվանդ հասա Երևան»:

ԵԼԺ 9, 164:

Նոյեմբերի <25>, Դիլիջան. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 165, 553:

Նոյեմբերի <26>. – Դիլիջանից հասնում է Երևան:

Կնոջը գրում է. «Երևանում «Фрашция» հյուրանոցում էի»:^{*}

^{*} Հյուրանոցը գտնվում էր ներկայիս Շահումյան փողոցում՝ արդարադատության նախարարության շենքի մոտակայքում:

ԵԼԺ 9, 164, 553:

Նոյեմբերի 27, Երևան. – Այցելում է թեմական դպրոց (տե՛ս Նոյեմբերի սկիզբ):

Կնոջը գրում է. «...Ինչպես ամեն տեղ, այստեղ էլ թե՛ տեսուչը, թե՛ ուսուցիչները շատ սիրով ընդունեցին, ներկա եղա դասերին, նախաճաշեցինք միասին, և եկա Էջմիածին»:

ԵԼԺ 9, 164:

Նոյեմբերի 27. – Երևանից հասնում է Էջմիածին:

Թիվ 7(1) ծոցատետրում գրառում է. «27 նոյեմբ. 95 թ. ժ. 4, հասա Էջմիածին:

Գմբեթները ներկել են տվել, <1 անընթ>. Մատթեոսը՝ կապույտ, Գեորգը՝ փոքրերը կարմիր, որ կան այժմ, ավագը՝ մուգ դեղին» (ՈՒՀ 5, 239 (27)):

Իջնում է Ղազարապատ հյուրանոցում: Կնոջը գրում է. «Իջա Ղազարապատ, շատ սիրով ընդունեցին, մի լավ սենյակ պատրաստեցին, ամեն հարմարություն տվին. բայց Մեսրոպ վարդապետն իմանալով, իսկույն տարավ յուր սենյակները – այժմ էլ նրա մոտ եմ»:

ԵԼԺ 9, 164, 553:

Մինչև նոյեմբերի 30-ը, Էջմիածին. – Այցելում է Գևորգյան ճեմարան, լինում թանգարանում և մատենադարանում:

ԵԼԺ 9, 164, 166:

Նոյեմբերի 30, Էջմիածին. – Այցելում է Հռիփսիմեի տաճար՝ երեմիա եպիսկոպոսի հետ:

ԵԼԺ 9, 164:

Նոյեմբերի 30, Էջմիածին. – Լինում է կաթողիկոսի մոտ:^{*}

Կնոջը գրում է. «Շատ երկար խոսեցինք: Երբ որ եկա տուն, Մեսրոպի հետ զնացինք շրջելու, երկու անգամ մարդ էր ուղարկել, թե՛ էգուց էլ արի մոտս և առանց ինձ տեսնելու չզգաս: Էգուց էլ կզնամ, կտեսնեն ու դուրս կգամ Էջմիածնից, թե հաջողի»:

^{*}(Ղա բանաստեղծի երկրորդ հանդիպումն էր կաթողիկոսի հետ: Առաջինը տեղի էր ունեցել երկու տարի առաջ «Մուրճի» խմբագրատանը (տե՛ս 1893, օգոստոսի 31)):

ԵԼԺ 9, 165, 553:

Նոյեմբերի 30, Էջմիածին. – Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Նկարագրում է Թիֆլիսից Էջմիածին ճանապարհորդությունը: Հատկապես հանգամանորեն ներկայացնում է Էջմիածնում անցկացրած օրերը՝ այցելություններ, հանդիպումներ և այլն. «3-4 օր է այստեղ եմ, նամակի եմ սպասում և չկա: Շուտով, գուցե վաղը կհեռանամ Էջմիածնից և մի քանի օրից հետո ճանապարհ կընկնեմ դեպի Թիֆլիս»:

ԵԼԺ 9, 163-165:

Նոյեմբերի 30, Թիֆլիս. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդագարյանին:

Մանրամասնություններ է հաղորդում իր ճանապարհորդությունից, թե ինչպես ամեն տեղ իրեն մեծարանքով են ընդունում, պատիվներ տալիս. «... Ես չգիտեի, թե այսքան ուշադրության արժանացած կլինեմ: Խեղճ ժողովուրդ, որ յուր աղքատությունովն էլ է ուրախանում»:

Տեղեկացնում է, որ «Հորիզոնը» «շատ են հավանել» Ռուսաստանի հայ ուսանողները, նույնիսկ իր «Երկինք ու Երկիրը» թարգմանել են գերմաներեն:

Լավ տպավորություն չի ստացել միաբանությունից և առհասարակ վանքի գործերից. «Միաբանությունը վատ տպավորություն թողեց, բացի մի քանի ընտրյալներից: Բարոյական և մտավոր կողմը ողորմելի է, իսկ տնտեսականը՝ տանող-տանողի: Գնացինք Հռիփսիմեի վանքը, շատ բան տեսանք, բայց չեմ մոռանալ այն ստորերկրյա մութ կատակոմբները, որտեղ մի ժամանակ (30 տարի առաջ) վարդապետները կեղծ դրամ էին կտրում: Թանգարանում թանկագին բաներ կան, բայց ճաշակ չկա, այս բանը ոչ մի տեղ չկա, ոչ վեհարանում, ոչ ճեմարանում և ոչ մի տեղ: ճեմարանը մի խղճալի բան է: Սենյակները փոքր, մութ, 140 աշակերտ Ներկա եղա տեսչի օգնական աստվածաբան Կարապետ վարդապետի դասին միացյալ երեք լսարանում: Երբ դասը վերջացավ, հայր սուրբը դարձավ ինձ, թե՛ ձեզ շատ ծանծրացրինք:– Երևի միշտ այսպես չի

լինի, – պատասխանեցի ես, բայց, իհարկե, իսկույն կոծկեցի այս պարզ ասած ճշմարտությունը քաղաքավարության կոծկով»:
ԵԼԺ 9, 165-167, 554:

Մինչև դեկտեմբեր, Թիֆլիս. – Թումանյանների ընտանիքը տեղափոխվում է նոր բնակարան:

Օ. Թումանյանը հիշում է, որ բնակարանը Բեհբության փողոցում էր՝ թիվ 38, Թումեյի բակը (Շադինովների տունը): Ուներ չորս սենյակ, որոնցից մեկը բանաստեղծի առանձնասենյակն էր:

ԹԺՀ, 336, 939:

Դեկտեմբերի <8 – 10>. – Էջմիածնից վերադառնում է Թիֆլիս:

ԵԼԺ 9, 167

Մինչև դեկտեմբերի 12-ը, Թիֆլիս. – «Պատվիրված բանդերոլով» Ս. Հովվյանին է ուղակում Լեոնոստովի «Հաջի Աբրեկ» պոեմի նրա թարգմանությունը:

«Մուրճի» խմբագիրը մերժել էր թարգմանությունը տպագրել՝ փոխարենը տպագրելով նույն պոեմի՝ Հակոբ Տեր-Գևորգյանի թարգմանությունը: Թումանյանը դա անարդար է համարում ընկերոջը հորդորելով. «Հրատարակիր քեզ մերժողներին խայտառակելու համար, թեկուզ դու էլ խայտառակվես, բան չկա»:

ԵԼԺ 9, 168, 554:

Մինչև դեկտեմբերի 12-ը, Թիֆլիս. – Մտադիր է «մի երկու փոքրիկ բան հրատարակել»:

Նկատի ունի «Դաշնակներ» (փոփոխված) ժողովածուն, «Լոռեցի Սաքոն», Բայրոնի «Շիլիոնի կալանավորը», Լեոնոստովի «Մծիրին», որոնք առանձին գրքերով լույս են տեսնում 1896-ին:

ԵԼԺ 9, 168, 554:

Մինչև դեկտեմբերի 12-ը. – Մտադրություն Բաքու գնալու:
ԵԼԺ 9, 168:

Դեկտեմբերի 12, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ս. Հովվյանին:

Տեղեկացնում է, որ վերադարձել է Թիֆլիս: Էջմիածնում «երկար» խոսել է կաթողիկոսի հետ: Եվ կատակում է. «Բայց դու հասկացող մարդ ես, բանը խո երկարությունը չի: Արասխանյանն էլ քեզանից երկար է, սակայն չկարողացավ երկու «Հաջիների» լավն ու վատը ջոկել, որ թարգմանելուց ավելի հեշտ է, և տպեց մի բան, որ ինչպես պատմում են, գրաշարներն էլ էին ամաչում շարելիս: Ես մի քանի տող համեմատեցի, և ճիշտ որ...» (տե՛ս մինչև դեկտեմբերի 12-ը):

Անդրադառնում է նաև նույն «Մուրճում» տպագրված «Մծիրի» պոեմին՝ դարձյալ Հ. Տեր-Պետրոսյանի թարգմանությամբ. «Դրանից պակաս չէր «Մծիրին», որի մեջ, ինչպես ինքն ասում էր, Լ. Մանվելյանցն էլ յուր ոգին էր դրել. խմբագրինն ու թարգմանիչինն էլ խո կար ու կար, և ես կարծում եմ՝ սրանից է, որ փախել է Լերմոնտովի ոգին: Այո՛, մի կենդանի խմբագիր յուր աշխատակիցներով միշտ կարող է մեռելների ոգիները հալածել, այն էլ մեր անխիղճ դարում»:

Հայտնում է նաև, որ վերջապես առանձնասենյակ ունի՝ արձաններով ու պատկերներով շքեղազարդված (տե՛ս մինչև դեկտեմբեր):

ԵԼԺ 9, 167, 554:

Դեկտեմբերի 13, Թիֆլիս. – Նամակ-երկտող Փիլ. Վարդազարյանին:

«Մի հողված ունիմ՝ ուզում եմ յուր սկզբնական ձևով քեզ մոտ կարդալ. ե՞րբ ժամանակ կունենաս, որ *շնորհ անես այցելել իմ սենյակը՝ կարդամ*»:

ԵԼԺ 9, 168, 555:

Դեկտեմբերի 16. – Սեդրակ Բալայանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Խնդրում է «Տարազից» հետ վերցնել իր գրած «Վարդանանց ճառը». մի խումբ գրասերներ ուզում են տպել: Նաև խնդրում է ներկայացնել գրաքննիչին և շտապ ուղարկել իրեն՝ Վարդանանց տոնին տարածելու համար: Թումանյանին հրավիրում է իրենց մոտ՝ Բաքու:

ԳԱԹ, ԹՖ, 1008:

Դեկտեմբերի 18. – Գր. Վանցյանի նամակը Թումանյանին՝ Բեռլինից:

Պատմում է Գերմանիայում իր ուսանողական կյանքի մասին: Անդրադառնում է գերմանացիների կենցաղին, սովորույթներին: Հանդիմանում է Թումանյանին լուրջյան համար. «Զգիտեմ քեզ ի՞նչ է պատահել. քնարդ լռեցրել ես: «Հորիզոն» մի՞թե այլևս չպիտի հրատարակեք: – Բաց արա քնարիդ ձայնը լսենք և ուրախանանք: Գեթ նամակ գրի՛ր, երկա՛ր, մանրամասն: Թիֆլիսից չենք ստանում համարյա ո՛չ լրագիր և ո՛չ նամակ. ուստի երևակայիր, որ քու նամակդ եթե բազմաբովանդակ լինի *ամեն տեսակ* մեր ներքին և արտաքին կյանքին վերաբերող լուրերով, Բեռլինի ամբողջ հայ ուսանողության շնորհակալությանը պիտի արժանանաս»:

ԳԱԹ ԹՖ, թիվ 2029:

Դեկտեմբերի 26. – Տպագրվում է («Մշակ», 1895, թիվ 149) «Հրատարակչական ընկերության* «Լոտոն»» հոդվածը:

Ընկերությունը «մի գեղեցիկ «խաղալիք» է հրատարակել հայ երեխայի համար – լ ո տ ո, պատկերներով, պատկերներն էլ չորս լեզվով բացատրված»: Հոդվածում ցույց են տրվում և բացատրվում թույլ տրված սխալները:

* Հրատարակչական ընկերությունը հիմնադրվել է 1880 թ.: Սինչև 1882 թ. կոչվել է «Հայերեն գրքերի հրատարակության Թիֆլիսի ընկերություն», ապա՝ «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերություն»: 1900 թ. մարտի 15-ին Կովկասի կառավարչապետ Գ. Ս. Գուլիցիցի հրամանով փակվել է, ապա կրկին բացվել և կոչվել «Կովկասի հայոց հրատարակչական ընկերություն»:

ԵԼԺ 6, 49, 571:

<Դեկտեմբեր>, Թիֆլիս – Նամակ-երկտող Փիլ. Վարդազարյանին:

« «Հորիզոնի» համար նոր նյութ է եկել – արի կարդանք. մեկ էլ կողմնակի հետաքրքիր նորություն կա»:

ԵԼԺ 9, 169, 555:

1895. – Գրում է «Բայրընին» («Ի՛նչ մեծ հանճարով, ո՛վ հսկա պոետ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 153, 589:

1895. – Տպագրվում է («Թատրոն», 1895, թիվ 1, էջ 132-133) «Խեղճ Աղամյան» («ճանաչում էի ես նրան, ընկեր...») բանաստեղծությունը (տե՛ս 1891, հունիսի <4>):

ԵԼԺ 1, 97, 569-570:

1895. – Տպագրվում է («Տարագ», 1895, թիվ 16, էջ 238) «Գիշեր» («Եկավ գիշերն, սփոփանքը...») բանաստեղծությունը՝ «Հատված պոեմից» ենթավերնագրով:

«Հին կռիվը» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է (Ե. Զրբաշյան, Թումանյանի պոեմները, Ե., 1986, էջ 267-268):

ԵԼԺ 1, 76, 562:

1895. – Գրառում թիվ 6(2) ծոցատետրում: «Սասունի սովյալների օգտին ժողովելիս:

Ձալալօղլի, երբ գործակալը (հայրս) ցուցակ առաջարկեց, ուսուցիչները (Շահեն, Ջոհրապ) փողոցում բազմության մեջ գոռալով, ծիծաղելով քարոզում էին չտալ, իսկ քահանան (տեր Մկրտիչ) զոռով մի ռուբլի ստորագրելուց հետո, վերջը ջնջեց, տակը գրեց՝ չեմ տալիս:

Ինձանից հրաման էր ուզում պսակի:

Անձրևով մեռելը ճանապարհին վեր է դնում ու հայիոյում, թե փող գցեցեք:

Ջրօրհներին փող հավաքելու հանդեսը (տարեկան): Ղարիբ ղոնախը հիվանդացել էր, տանում է, դնում հարևանի տունը, այնտեղ մեռնում է, չի թաղում մինչև հարևանից թաղման փողն առնում է»:

ՈՒՀ 5, 227 (36):

✓ 1895. – Գրում է «Գիքորը» պատմվածքը:

Նախատեսված է եղել տպագրել «Հորիզոնի» Բ. գրքում, որ այնպես էլ լույս չի տեսնում, և «Գիքորն» էլ մնում է անտիպ մինչև 1907 թվականը:

ԵԼԺ 5, 37-53, 546:

1895. – Ավարտում է Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմի թարգմանությունը:

ԵԼԺ 4, 115-125, 591:

✓ 1895. – Թիվ 7(1) ծոցատետրում գրառում է «Զարթիր, լաո, օգնե հայուն» երգի մի տարբերակ:

Չուր ե՞րբ մնամ զիշու դռներ,

Չերթամ գտնիմ զիմ խեղճ գառներ,

Չուգիմ զիմ բախչայի ծառներ,

Զարթիր լաո, օգնե հայուն:

Իլաճ մնացել ա Ռուսիային,

Սպանել են ջոջ ափոյին,

Խաբար արեք քուրդ ափոյին,

Զարթիր լաո, օգնե հայուն:

Խեղճ մշեցին մնաց լալով,

Մեռավ թուրքի պարտքը տալով,

Օտար երկրներ ման գալով,

Զարթիր լաո, օգնե հայուն:

մեռնեմ քրզի

1895 թ.

Վ. Վարդանյանց

ՈՒՀ 5, 237 (14)

1895. – Տպագրվում է հոդված («Մշակ», 1895, թիվ 50) «Պոլեմիկան հայոց մամուլի մեջ» վերնագրով:

Հեղինակը պատասխանում է Արասխանյանի «Վեցամսյա գրական ժողովածուների առիթով» (տե՛ս 1895, փետրվար) հոդվածին:

ԵԼԺ 9, 149, 544:

1895. – Մասնակցում է Ա. Բարխուդարյանի տանը՝ ընտանեկան շրջանում, շարունակվող (սկսվել էին նախորդ տարվանից) Տուրգենևի գրվածքների ընթերցումներին:

Այդ ընթերցումներից մեկի ժամանակ տեղի է ունենում վիճաբանություն Ա. Բարխուդարյանի և Թումանյանի միջև՝ Լերմոնտովի և Բայրոնի շուրջ: Բանաստեղծը նախապատվությունը տալիս է Բայրոնին, իսկ Բարխուդարյանը՝ Լերմոնտովին: Վիճաբանությունն այնքան սուր բնույթ է ստանում, որ

դառնում է պատճառ երկու բարեկամների մտերմության խզման: ԹՖայած առիթից առիթ կատարված փոխայցելությունների մտերմությունը այնպես էլ չի վերականգնվում:

ԹԺԴ, 367-368:

1895. – Տպագրության է պատրաստվում «Յորիզոնի» երկրորդ գիրքը:

Խոստացել էին աշխատակցել նաև Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը և Մ. Աբեղյանը:

ԱԻ, 344:

1895. – Հովհ. Կոստանյանի նամակը Թումանյանին:

Առիթը եր. Պալյանի պարսավագիր-հոդվածն էր (տե՛ս <հունվարի 22>): Գրում է. «Այս օրերս զգվանքով կարդացի իրան հայոց Բելինսկի երևակայող դատարկաբան եր. Պալյանի կրիտիկան, ներողություն՝ ցնդաբանությունը «Տարագ»-ի մեջ»:

ԱԻ, 348:

1895.- Գրառում թիվ 6(2) ծոցատետրում:

«Շիրվանգադե.

Սաստիկ նախանձոտ: Եթե մեկը մեկի հետ լավ էր լինում կամ մի հեղինակի հավանում էր, ամեն կերպ աշխատում էր խառնել, վատաբանել»:

Շարունակ ինձ հորդորում էր մի վատ բան գրել այս կամ այն անձնավորության դեմ և, մանավանդ (95թ.), «Մշակի» ու տպել՝ օգտվելով իմ տրամադրությունից, որ խոսում էի նրանց պակասությունների մասին»:

ՈՒՀ 5, 230 (51, 52):

<1895>. – Գրում է «Քեզ, գոված մուսա, ես չեմ ճանաչում...» սևագիր բանաստեղծությունը:

Առաջին անգամ հրատարակել է Ա. Ինճիկյանը (ԲԵՀ, 1972, 1, էջ 154) գրության հավանական թվականը համարելով 1895-ը:

ԵԼԺ 1, 346, 649:

<1895>. – Գրում է «Երկաթուղու շինությունը» պատմվածքը:

Գրության առիթը Թիֆլիս-Կարս երկաթուղու սկսված շինարարությունն է (մանրամասն տե՛ս էդ. Ջրբաշյան, Թումանյան. ստեղծագործության պրոբլեմներ. «Երկաթուղու շինությունը» պատմվածքի ստեղծագործական պատմությունից», Ե., 1988, էջ 476-479):

ԵԼԺ 5, 54-57, 748:

<1895>. – Փիլ. Վարդազարյանի նամակը «Արոր» տպարանին:

Անցյալ տարի ուղարկել է 50 օրինակ «Յորիզոն» և խնդրում է գոյացած գումարը, հետո նաև մնացածը հանձնել Թումանյանին:

ԳԱԹ ԹՖ, թիվ 3115 (1063):

<1895-ի վերջ – 1896-ի սկիզբ>. – Գրում է «Հարություն» («Քրիստոս հարյավ... երկինք գնաց...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 154, 590:

<1895 վերջ – 1896 սկիզբ>. – «Դաշնակները» հրատարակության պատրաստելու ընթացքում կատարում է «Հառաչանք» պոեմի վերջնական խմբագրությունը:

ԱԻ, 482:

1895 – 1896.- Թումանյանը մի խումբ ընկերներով գնում է Հաղպատ:

Խումբը Թումանյանի ղեկավարությամբ ծանոթանալու էր Լոռու բնությանը, հնություններին, գյուղացիների նիստուկացին: Հաղպատից նրանց ընկերանում է Արամայիս Երզնկյանը:

ԹԺԴ, 487:

1895 – 1896. – Գրում է «Իգիթ Հակոբից» պատմվածքը՝ հայկական կոտորածների թեմայով:
ԵԼԺ 5, 469-472, 805:

<1895-1896>. – Նոյեմբերյան ճանապարհորդության, կոտորածներից մազապուրծ արևմտահայ գաղթականների հետ հանդիպումների տպավորության տակ գրում է մի շարք չափածո և արձակ ստեղծագործություններ:

Դրանցից են՝ «Երկու սև ամպ», «Գիշեր» (հատված պոեմից), «Գաղթականի երգը» բանաստեղծությունները, «Լեռների հովիվը» և «Երկու հայր» (այստեղ պատմվող դեպքին թումանյանը հավանաբար ակնատես է եղել կամ լսել ու գրի առել 1895 թ. նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին էջմիածնում), ինչպես նաև «Սրափ պապին», «Սև ճանապարհ», «Վեճ», «Բարեգործություն» անավարտ պատմվածքները:

ԱԻ, 373-374 – 375:

<1895 – 1896>. – Գրում է «Երանի նըրան, ով որ քընեած...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 155, 590:

<1895-1896>. – Փիլ. Վարդազարյանի նամակ-երկտողը թումանյանին:

Հայտնում է, որ Կ. Գալֆայանը գալու է գրասենյակ՝ 10 ռ. ստանալու: Գրում է. «Եթե «Գիքորը» արտագրած պատրաստ է, հանձնիր գրաքննիչին»:

ԳԱԹ ԹՖ, թիվ 2088:

<1895-1896>. – Փիլ. Վարդազարյանի անթվակիր նամակը թումանյանին:

Կարդացել է «Անուշը»: Ուղարկում է արված դիտողությունները:

ԳԱԹ ԹՖ, թիվ 2083:

1895-1896. – Փիլ. Վարդազարյանի նամակը թումանյանին:

1 8 9 6

Հունվարի 4, Թիֆլիս. – Ծանոթանում է երգահան Ա. Մանուկյանի հետ:

Հանդիպումը կայանում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության հիմնադրած կարուձևի դպրոցի շրջանավարտ և նույն դպրոցի դասատու Օվսաննայի տանը՝ վերջինիս անվանակոչության տոնին: Օվսաննան Ազատ Մանուկյանի աշակերտի քույրն էր:

ԹԺՀ, 507:

Հունվարի 12. – Ա. Ղլտճյանի բացիկ-երկտողը թումանյանին՝ Նախիջևանից:

Սպասում է բանաստեղծ ընկերոջ մանրամասն նամակին՝ հատկապես էջմիածնի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1573:

Հունվարի 14, Թիֆլիս. – Գրում է «Հույս» («Մթնեց... Ինչու՞ են տխուր, իմ ընկեր...») բանաստեղծությունը:

Առաջին անգամ հրատարակելով այս և «Քեզ, գոված մուսա, ես չեմ ծանաչում...» ոտանավորները Արամ Ինճիկյանը ծանոթագրել է. «Արտահայտում են ազգային մեծ բանաստեղծի միասնությունը հայրենիքի քաղաքական ճակատագրի հետ, նրա հոգու անվեհերությունը և աննկուն հավատը տառապող ժողովրդի «գալոց օրերի» - լուսավոր ապագայի նկատմամբ»: (ԲԵՀ, 1972, 1, էջ 51):

ԵԼԺ 1, 355, 651-652:

Հունվարի 16, Թիֆլիս. – Ստանում է Ա. Ղլտճյանի երկտող - բացիկը (տե՛ս հունվարի 12):

Հունվարի 20, Թիֆլիս. – Կարճ նամակ Փիլ. Վարդազարյանին:

Անձնական - կատակային բնույթի է: Իրենց տուն է հրավիրում Փիլ. Վարդազարյանին, քոջը՝ տիկին Լիզային՝ ամուսնու հետ: Կատակով տրտնջում է «Դաշնակների» երկրորդ գրքի ծավալից:

ԵԼԺ 9, 170, 555:

<Հունվար>. – Տպագրվում է («Տարագ», 1896, թիվ 1, էջ 2) «Նոր տարի» («Դու էլ արի...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 145, 586:

<Հունվար - փետրվար>, Թիֆլիս. – Նամակ Փիլ. Վարդազարյանին (չի պահպանվել):
Ընկերոջը հրավիրում է իր մոտ:
ԳԱԹ ԹՖ, 2082:

<Հունվար - փետրվար>. – Փիլ. Վարդազարյանի նամակերկտողը Թումանյանին:

Հայտնում է, որ չի կարող գնալ բանաստեղծի մոտ. զբաղված է. «Նոր գլխի ընկա, որ երևի կռվել ես քարտուղարի հետ ու այդ է պատճառը, որ Աղայանցի «Քյոռօլի» մնում է ընկած ինձ մոտ»:

ԳԱԹ ԹՖ, 2082 (1044):

<Տարվա սկիզբ>, Թիֆլիս. – Ավարտում է «Մծիրի» պոեմի թարգմանությունը:
ԵԼԺ 4, 131-154, 598:

Փետրվարի 1. – Տ. Փիրումյանի նամակը Թումանյանին:
Հայտնում է, որ բերել է իր «Հիշողություններ վանեցիների կյանքից» գրքի երկրորդ մասը. եթե Փիլ. Վարդազարյանն ասի, կհանձնի նաև երրորդը: Փողի կարիք ունի. ակնկալում է Վարդազարյանից մի փոքր գումար ստանալ, որ շատ հարկավոր է իրեն: Եթե չուղարկի, ինքը նրանից չի նեղանա, քանի որ շատ լավություն է արել իրեն: Գիրքը չի տպագրվում՝ «Հորիզոնի» հրատարակությունը դադարելու պատճառով:

ԳԱԹ ԹՖ, 2330:

Փետրվարի 3, Շահալի. – Նամակ Ղսեղ՝ Ե. Ղուլյանին:
Գրում է, որ նա և բոլոր նրանք, ում հողերով անցնելու է երկաթուղին, ամսի 6-ին պետք է ներկայանան Շահալի գյուղը, որպեսզի ինժեների և հողաչափի հետ լուծեն իրենց խնդիրները: Պետք է անպայման ներկայանան, «որովհետև երկրորդ անգամ կոմիսիան էլ չի գալու»:

ԵԼԺ 9, 170-171, 555-556:

Փետրվարի 12. – Շուլավերցի Ս. Պառավյանի նամակը Թումանյանին՝ Բեռլինից:

Կնոջը տարել է բուժման: Հիացած է քաղաքով, մարդկանց նիստուկացով: Ուրախ է Աղայանի ազատության համար. կարդացել է «Մշակում»: Հանդիպել է այնտեղ գտնվող մի քանի ընդհանուր ծանոթների: Անդրադառնում է որոշ կենցաղային հարցերի:

ԳԱԹ ԹՖ, 1939:

Մինչև փետրվարի 21-ը. – Փիլ. Վարդազարյանը գրաքննության է ներկայացնում Թումանյանի «Քաջերի կյանքից» պատմվածքը և իր «Տաճկական գրականություն» թարգմանությունը ֆրանսերենից՝ առանձին հրատարակության թույլտվություն ստանալու համար:

Թումանյանի պատմվածքն արդեն տպագրվել էր «Հորիզոն» հանդեսի Ա. գրքում: Գրաքննության էր ներկայացվել տպագրված տեքստը՝ հեղինակի ուղղումներով, առանձին հրատարակելու համար: Գրաքննչական կոմիտեում պահպանվել է պատմվածքի այդ տեքստը (ՎԿՊԱ, ֆ, 480, ց. 1, գ. 1385, թթ. 133բ - 138 բ):

ԵԼԺ 5, 16-26, 743-744. ԱԻ, 351:

Փետրվարի 21. – Գրաքննչական կոմիտեն մերժում է «Քաջերի կյանքից» պատմվածքի տպագրությունն առանձին գրքույկով:

Ցենզուրային կոմիտեի որոշումը. «По журналу ценз. комитета 21 февраля 1886 г. определено: в виду циркуляра Глвн. управления по делам печати, напечатание настоящей брошюры под заглавием “Из жизни героев”, воспретить и удержать таковую при делах комитета: (ЦГИА Груз. ф 480, оп 1, д. 1385, л. 133 б):

ԵԼԺ 9, 174, 557:

Փետրվարի 21. – Սիմ. Հովվյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Սիմ. Հովվյանը «Օջախի» հիմնադիր անդամներից էր, բանաստեղծի հայրենակիցը և մտերիմը: Ներսիսյան դպրոցը և

Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո 90-ական թվականներին Բաքվում զբաղվում էր մանկավարժությամբ. նաև գրական փորձեր էր անում, սակայն անհաջող: Նամակում հայտնում է. «Ուսումնարանները փակվել են, սոված չմնալու համար ուզում եմ գրականությամբ պարապել»: Ուղարկում է իր կատարած թարգմանությունը: Խնդրում է գրաքննիչից թույլտվություն ստանալ տպագրության համար:

ԳԱԹ ԹՖ, 544 (803):

<Փետրվար>. – Ս. Վարդազարյանի ավբոնում գրում է Բայրոնի «Չայլդ Յարուլդ» պոեմի մի հատվածի («Ինեսին») թարգմանության առաջին տարբերակը:

ԵԼԺ 4, 129-130, 596:

<Փետրվար>. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին:

Հիշեցնում է, որ հանձնել է բանաստեղծին «Քյոռոզլիի» տպագրության ցանկը: Դրված է երեք տեղ. «1. Տարագում, 2. Մուրճում. 3. Աղայանցի՝ իրա գրքում»: Պատվիրում է բոլորը մի տեղ հավաքել և ներկայացնել ցենզորին:

ԳԱԹ, ԹՖ, 2080 (լ.գ. 454):

Մարտի 1, Թիֆլիս. – Նամակ Բոլնիս Խաչեն՝ Ղ. Աղայանին:

«Մի ժամից հետո» Բաքու է գնալու: «Քյոռոզլին» կազմել (տե՛ս նախորդը) ու հանձնել են ցենզորին. «... Մի փոքրիկ «Ղաշնակների» նման գրքույկ էլ ենք ուզում կազմել քո մանկական ոտանավորներից»: Տեղեկացնում է. «Հարց է բարձրացել Կովկասյան գրողների ապահովության ֆոնդ հիմնել. «Кавказ»-ն է գործին գլուխ կանգնում»: Լսել է, «որ իբր թե «Մշակի» խմբագրատան մեջ խռովություն կա. տեր ու տնօրեն Մալումյանը վատ է վարվում խմբագրամուսակի Քալանթարի հետ»:

Գրում է նաև իրենց ընդհանուր նյութական հոգսերի մասին. «Հա, քիչ էր մնում՝ մոռանում էի փողի մասին գրելու: Սարգսին* տվեցի քառասուն ռուբլի, մնացած տասն ռուբլին երբոր տիկինը գա, նրան կտամ կամ հետո կգրես՝ բան կառնեմ կղարկեմ: Հիմա չեմ կարողանում բանն այնպես իրար զցել, ֆինանսական դրությունս այսքան միայն կարող է ինձ պարզերես անել:

ճիշտն ասեմ. երբոր քո փողերի պավեստկեն ստացա՝ շատ զարմացա, իհարկե, թե այս որտեղից պիտի լինի, և շատ էլ ուրախացա, որովհետև հարկավոր էր. չորս երեխա մի կողմից էին հիվանդ և այլն: Հանկարծ տեսնեմ ներս եկավ մի քեզ լավ ծանոթ գրականական մարդ թե՛ նեղության մեջ եմ, ինձ համար որտեղից որ է պետք է այսքան փող ճարես: Ասում եմ, ախպեր, հրես մի պավեստկա եմ ստացել, թե իմը կլինի՝ հո շատ լավ, թե ուրիշի կլինի՝ այն էլ կտեսնենք ինչ մարդ է, էն ու գյորա կվարվենք: Գնացինք միասին ստացանք, տեսանք Աղայանցին, և բաժանեցին զհանդերձս նորա ի միջի իւրյանց»:

* Աղայանի եղբայրն է:

ԵԼԺ 9, 172-173, 556-557:

Մարտի 1. – Մեկնում է Բաքու:

Ղ. Աղայանին ուղղած նամակում (տե՛ս նախորդը) գրում է. «ես երեկ պետք է Բաքու գնայի, բայց չկարողացա, բարեբախտաբար ընկավ այսօր, այնպես որ եղբայրդ՝ պ. Սարգիսը, վրա հասավ»:

ԵԼԺ 9, 172:

Մարտի 2. – Գրաքննության թույլտվությունը՝ Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմի՝ Թումանյանի թարգմանությունը առանձին գրքույկով տպագրելու համար:

ԵԼԺ 4, 115, 590:

<Մարտի 2-ից հետո>. – Առանձին գրքույկով տպագրվում է Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմի Թումանյանի թարգմանությունը (Բայրոն, Շիլիոնի կալանավորը, թարգմ. Հովհաննես Թումանյանց, հրատ. Փիլիպոս Վարդազարյանի, Թիֆլիս, 1896, 23 էջ, գրաքննական թույլտվությունը՝ 1896 թ. մարտի 2-ին):*

* Պոեմի հետ մույն գրքում տպագրվում է նաև «Բայրոնին» բանաստեղծությունը (ԵԼԺ 1, 589):

ԵԼԺ 4, 115, 590:

Մարտի 6. – Գրաքննությունը թույլատրում է «Լոռեցի Սաքոն» պոեմի՝ առանձին գրքույկով տպագրությունը:

ԵԼԺ 3, 500:

Մարտի 11. – Գրաքննչական կոմիտեից ստանում է Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմի իր թարգմանությունը և Ռ. Ջիովանուլիի «Սպարտակ» վեպի՝ Ս. Յովվյանի թարգմանության տպագրության թույլտվությունը:

ԵԼԺ 9, 175, 557-558:

<Մարտի 12>. – Նամակ Փիլ. Վարդազարյանին:

Հայտնում է «Քյոռզոլին» և «Քաջերի կյանքից» ստեղծագործությունների տպագրության արգելման, «Տաճկական գրականություն» (տե՛ս մինչև փետրվարի 21-ը) և «Շիլիոնի կալանավորը» ստեղծագործությունների հրատարակության թույլտվության մասին (տե՛ս մինչև փետրվարի 21-ը):

ԵԼԺ 9, 174, 557:

Մարտի 14, Թիֆլիս. – Գրաքննչական կոմիտեին է հանձնում «Լոռեցի Սաքոն» պոեմը:

ԵԼԺ 9, 557-558:

Մարտի 14. – Մեկնում է Շուլավեր:

ԵԼԺ 9, 174, 558:

Մարտի <15, 16>, Շուլավեր. – Նամակ - երկտող Թիֆլիսի Փիլ. Վարդազարյանին:

Գրում է. «Բանն այնպես եղավ, որ ես էլ գնացի Շուլավեր. երկուշաբթի երեկոյան կգամ: «Տաճկական գրականությունը» (տե՛ս մարտի 12) առայժմ մոտոդ պահիր: «Սաքոն» երկուշաբթի կտան. հանձնիր տպարանին կամ թե թող մինչև գալս: «Շիլիոնը» թող մնա մինչև գամ»:

ԵԼԺ 9, 174, 557-558:

Մարտի 18. – Շուլավերից վերադառնում է Թիֆլիս:

ԵԼԺ 9, 174, 558:

Մարտի 19, Թիֆլիս. – Գրաքննչական կոմիտեից ետ է վերցնում «Լոռեցի Սաքոն» պոեմը՝ տպագրության թույլտվությանը:

ԵԼԺ 9, 174, 558:

Մարտի 24. – Տպագրվում է («Տարագ», թիվ 12, էջ 181) «Հարություն» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 154, 590:

Մարտի 24, Թիֆլիս. – Գրում է «Երբ թույլ եք տալիս, որ ձեր ալբոմում...» բանաստեղծությունը:

Գրված է Մարիամ Վարդազարյանի ալբոմում և նվիրված է նրան: Միտքն այն է, թե օրհորդական ալբոմներում պետք է գրել միայն չափածո:

ԵԼԺ 1, 356, 652:

<Մարտի վերջեր>. – Ս. Յովվյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից (տե՛ս ԳԱԹ ԹՖ, թիվ 805):

Հանձնարարում է Թումանյանին «Արծազանքում» կամ «Մշակում» հայտարարություն տպագրել տալ Ռ. Ջիովանուլիի «Սպարտակ» վեպի իր կատարած թարգմանության տպագրության մասին*:

* Թարգմանությունը լույս է տեսնում 1896 թ. Բաքվում:

ԵԼԺ 9, 175, 558-559:

Ապրիլի 6, Թիֆլիս. – Գրաքննչական կոմիտեին է հանձնում Լեոնոնտովի «Մծիրի» պոեմի իր թարգմանությունը:

ԵԼԺ 9, 174, 558:

Ապրիլի 7. – Հ. Սառիկյանի նամակը Թումանյանին՝ Գեջրլուից:

Անդրադառնում է «Մշակի» և «Տարագի»՝ այդ օրերի հայտարարություններին՝ Ղ. Աղայանի նյութական ծանր կացության մասին: Գրում է «Այս տարի սեպտեմբերին լրանում է նրա մանկավարժական գործունեության 25-ամյակը: Ցանկալի էր, որ այդ ծերունին վարձատրվեր թե՛ բարոյապես, թե՛ նյութապես»: Ավելացնում է, որ եթե Ներսիսյան դպրոցը, ուր նա ծառայել է, և որի ծայնը ամեն տեղ կլսվի, չի կազմակերպի հոբելյանի տոնակատարությունը, կովկասի 600 հայ ուսուցիչները կարող են այդ գործը կատարել՝ թեկուզ տնավարի ձևով:

ԳԱԹ ԹՖ, 1969 (976):

<Ապրիլի 8, 9>, Թիֆլիս. – Նամակ - երկտող Փիլ. Վարդազարյանին:

Գրում է. «Ղաշնակներն» էլ են ղրկում. «Սծիրիի հետ երկուսն էլ ներկայացրու ցենզորին»:

ԵԼԺ 9, 174, 558:

Ապրիլի 9, Թիֆլիս. – Գրաքննչական կոմիտեից ետ է վերցնում «Սծիրիի» թարգմանությունը (լուսապատճենը ԹԹ, ՓԲ, 39(4/395):*

* «Սծիրի պոեմի թարգմանությունը գրաքննությանը հանձնելու և հետ վերցնելու մասին ԵԼԺ-ում հակասական տեղեկություններ կան. ըստ հ. 9-ի՝ «գրաքննությանը հանձնվել է 1896 թ. ապրիլի 6-ին և ետ ստացվել ապրիլի 9-ին» (էջ 558), ըստ հ. 4-ի՝ «գրաքննական թույլտվությունը՝ 1896 թ. ապրիլի 10-ին» (էջ 597):

ԵԼԺ 9, 174, 558:

Ապրիլի 9. – Փիլ. Վարդազարյանը գրաքննչական կոմիտեին է հանձնում Թումանյանի «Ղաշնակներ» գրքույկը՝ հրատարակության թույլտվություն ստանալու համար:

ԵԼԺ 9, 558:

Ապրիլի 9, Թիֆլիս. – Նամակ Բաբու՝ Ս. Հովվյանին:

Տեղեկացնում է, որ «Սպարտակ» վեպի՝ Ս. Հովվյանի թարգմանության մասին հայտարարությունները (տես <մարտի վերջեր>) տարել է «Արծազանքի» և «Մշակի» խմբագրատներ. «Երկու խմբագրություններն էլ ձրի ընդունեցին տպելու»: Բարգավաճում է ցանկանում «Օջախին», ողջույններ է հղում խմբակի «արտաքին ու ներքին անդամներին»:

ԵԼԺ 9, 175-176:

Ապրիլի 15. – «Ղաշնակների» փոփոխված տարբերակը գրաքննությունը թույլատրում է տպագրության:

ԱԻ, 482:

Գաղուն, <մարտ, ապրիլ>, Թիֆլիս. – Թումանյանն Ավ. Իսահակյանի միջոցով ծանոթանում է իրենց տուն այցի եկած Գ. Դեմիրճյանի հետ:

Դեմիրճյանն այդ ժամանակ Ներսիսյան դպրոցի աշակերտ էր: Բանաստեղծը զովեստով է խոսում «Մուրճ» ամսագրում տպված նրա բանաստեղծությունների մասին: Գրական նյութերի շուրջ գրույցից հետո Թումանյանը կարդում է «Սծիրիի» իր

նոր կատարած թարգմանությունը՝ արժանանալով ընկերների հավանությանը և լսելով նրանց մի քանի դիտողությունները: Ավ. Իսահակյանը հիշում է. «Օհանեսը կարդաց «Սծիրիի» իր նոր կատարած թարգմանությունը, որ մենք հավանեցինք՝ մեկերկու նկատողություններ անելով»:

ԹԺՀ, 9, 909. ԵԼԺ 4, 598:

<Մինչև մայիս>. – Լեոն կարդում է առանձին գրքույկով լույս տեսած «Լոռեցի Սաքուն» և հավանում:

Լեոն հիշում է. «1896 թվին ... Հովհաննես Թումանյանը հրապարակ հանեց իր «Լոռեցի Սաքոյի» երկրորդ հրատարակությունը: Ես իմ ձեռքն էի առել «Մշակի» գրախոսական բաժինը, կարդացի Թումանյանի այդ պոեման, հավանեցի, թե և նա դեռ նախնական չտաշված ու չկոկված խմբագրությունն էր ներկայացնում և մի փոքրիկ գրախոսական հոդված գրեցի»:

ԹԺՀ, 51, 914:

Մայիսի 4. – Տպագրվում է լուր («Նոր - Դար», 1896, թիվ 78) Թումանյանի «Սծիրիի» թարգմանությունը լույս տեսնելու մասին:

ԵԼԺ 9, 559:

<Մայիսի սկզբներ>, Թիֆլիս. – Նամակ-երկտող Փիլ. Վարդազարյանին:

Գրում է. «Առավոտյան արի ինձ մոտ. մի թեթև խմբագրական ժողով կազմենք և որոշենք, թե որտեղ ինչքան գիրք ենք ղրկելու»:

* Խոսքը վերաբերում է առանձին գրքույկներով լույս տեսած «Ղաշնակներ» ժողովածուին, «Լոռեցի Սաքուն» պոեմին, Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» և Լերմոնտովի «Սծիրի» պոեմներին՝ Թումանյանի թարգմանությամբ:

ԵԼԺ 9, 176, 559:

<Մայիսի 16, 17>, Թիֆլիս. – Նամակ-երկտող Փիլ. Վարդազարյանին:

Հրավիրում է՝ երեկոյան մասնակցելու Ներսիսյան դպրոցի վերջին դասարանի քննությանը հայ գրականությունից: Հետաքրքրվում է երիտասարդ դերասան Կարապետ Գալֆայանին

իր միջնորդությամբ կազմակերպված օգնության խնդրով:

ԵԼԺ 9, 176, 559:

Մայիսի 18, Թիֆլիս. – Ընծայական մակագրություն «Ռաշ-նակների» տիտղոսաթերթի վրա. «Յովհաննեսին – Յովհան-նեսից»:*

* Գիրքը նվիրել է բանաստեղծ Յովհաննես Յովհաննիսյանին: Պահվում է ԳԳ Ազգային գրադարանի անձեռնմխելի ֆոնդում:

ՈՒՅ 4, 249:

<Մայիսի 18>, Թիֆլիս. – Նամակ-երկտող Փիլ. Վարդա-զարյանին:

Յրավիրում է իր մոտ՝ դերասան Կ. Գալֆայանին՝ օգնելու մասին տեղեկություն իմանալու, «Գիքորի» և «Խորտակվածի» «բանը կարգադրելու» և «Մշակում» տպված գրախոսականը կարդալու:*

* «Խորտակվածը» վերնագիր թումանյանի մոտ այլ տեղ չի հանդիպում: Ա. Ինճիկյանը ենթադրում է (ԱԻ, 488-490), որ դա «Պոետն ու մուսան» պոեմի նախնական տարբերակի վերնագիրն է՝ «Խոր-տակված կյանք»:

ԵԼԺ 9, 177, 560-561:

<Մայիսի 18>, Թիֆլիս. – Ստանում է նույն օրը Փիլ. Վար-դազարյանին ուղարկած երկտողի պատասխանը:

Յայտնում է, որ Գալֆայանը կարող է բարեգործական ընկերության գրասենյակից ստանալ 10 ռուբլի: «Գիքորը», եթե արտագրած պատրաստ է, պատվիրում է հանձնել գրաքննչին:

ԳԱԹ ԹՖ, 2088 (1056):

Մայիսի 18. – Լեոյի գրախոսականը «Լոռեցի Սաքոյի» 1896 թ. առանձին գրքույկով հրատարակության մասին (տե՛ս <մայիսի 18>):

Գրում է. «Պաթալոզիական զգացումների, շինժու, անհիմն և անհասկանալի՝ վշտի երգիչների մեջ, որոնք մեր գրականու-թյան մեջ, դժբախտաբար, բավական շատ են, պ. Թումանյանց ցույց է տվել, որ կա ոգևորության մի այլ աշխարհ, ուր ճշմարիտ, առողջարար ներշնչումն պատճառում է հայրենի բնությունը, ժողովուրդը իր ավանդություններով և հասկացողություններով:



Հովհ. Թումանյան



Հայրը՝ Տեր-Թադևոս



Մայրը՝ Սոնա Քոչարյան



Օլգա Մաճկալյան



Թումանյանը որդու՝ Համիկի հետ, 1898թ.



Թումանյանը զավակների հետ 1902թ.



Դ. Դեմիրճյան, Ավ. Բասիակյան, Ղ. Աղայան, Լ. Շանթ, Հովհ. Թումանյան, Ն. Աղբալյան 1902թ.



Թումանյանը և Բասիակյանը Անիում,
Աշոտ Ռդորմաճի շիրմի մոտ, 1901թ.



Թումանյանը Վերնատանը



Շոզեֆինա Զարգարյան, Մարիամ Թումանյան, Արիստակես Զարգարյան, Հովհ. Թումանյան, Ֆիլիպ Վարդազարյան
1903թ.



Հայրական տունը, Դսեղ



Զալալօղլու գրադարանը



Հովհ. Թումանյան



Իշխանուհի Մարիամ Թումանյան



Հ. Կոստանյան, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան
Ալեքսանդրապոլ, 1901թ.



Հովհ. Թումանյան 1902թ.



Հովհ. Թումանյան, Կարապետ Գալֆայան



Հովհ. Թումանյանը Թմուկ բերդի ավերակները դիտելիս
Ջավախք, 1901թ.



Հովհ. Թումանյանը Բելի Կյուչում 1902թ.



Հովհ. Թումանյանը և
Ֆիլիպ Վարդազարյանը պատշգամբում, 1901թ.



Հովհ. Թումանյան Ուրավել, 1901թ.



Արսեն Ղլտճյան 1868-1944



Հ. Թումանյան, 1904թ.

.... Նա շատ է երգել Լուու սարերը և նրանց «աժդահա հովիվներին»: Եվ երգել է լավ. նրա ոտանավորների մեջ շատ աջողվածները լեռների նկարագրություններն են: Կարելի է ասել, որ հայրենի լեռնոտ երկիրը և այնտեղ ապրող մարդիկ իրանց չարքաշ կյանքով, իրանց հնադարյան հասկացողություններով, համարձակ ու անվախ սրտով կազմում են այն ընտանի միջավայրը, ուր պ. Թումանյան գտնում է զգացմունքի, ոգևորության կայծեր, ուր նրա գրիչը համարձակ է, պատկերացնող: Կտորներ կան լեռների նկարագրությունների մեջ, որոնք կատարելապես գեղեցիկ են, ներկայացնում են հիացած սրտի սիրուն նվերները բնության ահեղ տեսարաններին»:
«Մշակ», 1896, թիվ 57:

Մայիսի 27. – Թումանյանը գրաքննչական կոմիտեից հետ է վերցնում Լերմոնտովի «Հաջի Աբրեկ» պոեմի՝ Ս. Հովվյանի թարգմանությունը (տե՛ս 1895, դեկտեմբերի 12)՝ հրատարակության թույլտվությամբ*:

* Հանձնել էր Փիլ. Վարդազարյանը մայիսի 24-ին:

ЦГИА Груз. ф 480, оп 1, д 1313, л. 111:

Մայիսի 29. – Փիլ. Վարդազարյանը Թումանյանի «Գիքորը» հանձնում է Թիֆլիսի գրաքննչական կոմիտե՝ առանձին տպագրության թույլտվություն ստանալու համար*:

* Պատմվածքը մամուլի գործերի՝ Թիֆլիսի կոմիտեի գրանցման մատյանի 26-րդ համարում գրանցվում է հետևյալ մակագրությամբ. «“Григорий”, из жизни приказчиков темных рядов Тифлиса, сочинение Оганеса Туманяна» ԵԼԺ 5, 746:

ԵԼԺ 9, 177, 560:

Մայիսի 29. – Գրանցում թիվ 7(1) ծոցատետրում:

«Մայիսի 29-ի գիշերը հայրս չքնեց: Ամբողջ գիշերը խոսում էր իրան-իրան: Կոնսիստորը 105 ռուբլի պարտք էր դրել վրեն, որը զուր դուրս եկավ: Գյուղում գործերի քննության ժամանակ հալածել, դուրս էին արել Սամսոն Հարությունյանի դրդմամբ, համախոսական էին գրել ևն, և այդ օրը հրաժարական տվեց Դսեղից ու գիշերը խոսում էր իրան-իրան»:

ՈՒՀ 5, 251 (94):

<Մայիս>. – Տպագրվում է Հար. Թումանյանի ծավալուն գրախոսականը («Մուրճ» 5, էջ 642 – 657) «Մծիրիի» թարգմանության մասին:

Գրախոսը Թումանյանի թարգմանությունը համեմատում է Հ. Տեր-Պետրոսյանի թարգմանության հետ (տե՛ս 1895, դեկտեմբերի 12)՝ նախապատվությունը տալով վերջինին: Առհասարակ գրախոսը բացահայտ միտում ունի՝ նսեմացնելու Թումանյանի աշխատանքը: Որքան կարող է գովաբանելով Տեր-Պետրոսյանի թարգմանությունը՝ եզրակացնում է. «Դրա հակառակն է Թումանյանի «Մծիրին», որը բացի շատ բազմաթիվ սխալներից, չունի Լերմոնտովի գերազանց պոեմայի ոգին, այնպես որ ոչ մի սրբագրությամբ չի կարելի ուղղել: Հով. Թումանյանցին ճանաչում էինք իբրև հեղինակ հաջողակ ինքնուրույն ոտանավորների՝ մանավանդ գյուղական կյանքից, բայց նա իր Մծիրի-ով ու Շիլիոնի կալանավոր-ով ապացույցներ է տալիս, որ Լերմոնտովներն ու Բայրոնները նրան մատչելի չեն» («Մուրճ», 1896, թիվ 5, էջ 652):

ԵԼԺ 4, 598-599:

Գարուն, Թիֆլիս. – Առանձին գրքույկներով լույս են տեսնում «Դաշնակներ» (փոփոխած) ժողովածուն, «Լոռեցի Սաքոն» պոեմը, Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» և Լերմոնտովի «Մծիրին»՝ Թումանյանի թարգմանությամբ:

ԵԼԺ 9, 167, 554:

Հունիսի 3. – Թիֆլիսի գրաքննչական կոմիտեի կողմից տրվում է «Գիքորի» առանձին տպագրության թույլտվությունը:

Պատմվածքը պետք է տպագրվեր «Հորիզոն» հանդեսի 2-րդ գրքում: Քանի որ այդ գիրքը այնպես էլ լույս աշխարհ չի գալիս, «Գիքորը» երկար ժամանակ մնում է անտիպ:

ԵԼԺ 9, 177, 560. ԵԼԺ 5, 746:

Հունիսի 7. – Թիֆլիսի գրաքննչական կոմիտեն ստորագրությամբ Թումանյանին է վերադարձնում «Գիքորը» պատմվածքի ձեռագիրը՝ տպագրության թույլտվությամբ (ՎԿՊԱ, ֆ 480, ց.1, գ.1290, թ. 31):

ԵԼԺ 5, 746. ԱԻ, 351:

Օգոստոսի 12. – Կ. Գալֆայանի նամակ-բացիկը Թումանյանին՝ Դիլիջանից:

Գրում է, որ իր նախորդ նամակով խնդրած գիրքը բանաստեղծը չի ուղարկել, նամակին էլ չի պատասխանել:

ԳԱԹ ԹՖ, 1068:

Օգոստոսի 14, Թիֆլիս. – Ստանում է Կ. Գալֆայանի՝ օգոստոսի 12-ի նամակ-բացիկը՝ Դիլիջանից:

ԳԱԹ ԹՖ, 1068:

Օգոստոսի 21. – Գր. Բաղդյանի նամակ-երկտողը Թումանյանին՝ Բաքվից:

Ուղարկում է Թումանյանին պարտք երկու ռուբլին և շնորհակալություն հայտնում նեղության ժամանակ իրեն օգնելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1021:

Օգոստոսի 22. – Ար. Աբովյանի նամակը Թումանյանին:

Խնդրում է քոռջը տեղավորել Ներսիսյան դպրոցում:

ԳԱԹ ԹՖ, թիվ 778 (լր. 213):

✓ *Օգոստոսի 27, Թիֆլիս.* – Ծնվում է Համլիկ Թումանյանը:

Գրառում թիվ 6(2) ծոցատետրում. «96 թ. օգոստ. 27, ծնվեց Համլիկը: Ծնվելու ժամանակ Նվարդը լաց ըլելով վազեց, ընկավ իմ սենյակը: Հարցնում եմ՝ ո՞վ ծնվեց: Թե՛ մայրիկի փորիցը մի երեխա դուրս եկավ, և կրկին լաց է լինում: 5 կ. տվեցի, որ մի՞րգ առնեն ուտեն, թե՛ սեմինդ առնենք, ասում եմ՝ փորներդ կցավի: Աշխենը թե՛ մայրիկի փորը խո սեմինդից չիցավեց, երեխիցը ցավեց»:

ՈՒՀ 5, 231 (59):

Սեպտեմբերի 1. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Աղստաֆայից:

Մոտ ապագայում ստիպված է թողնել Աղստաֆան: Խնդրում է բանաստեղծին, եռանդուն կերպով հաջողեցնել խոստացած պաշտոններից մեկը, քանի որ ապրելու և զավակներին ապրեցնելու միջոցներ չունի:

ԳԱԹ ԹՖ, 918 (լր. 247ա):

Սեպտեմբերի 11. – Ս. Օհանյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Օջախի հիմնադիր անդամներից է: Հայտնում է Թիֆլիսից ստացած իր տպավորությունները և որ Բաքվից բացի ուրիշ տեղ չի կարող ապրել: Տեղեկություններ է հաղորդում իրենց ընդհանուր ծանոթներից: Մասնավորապես գրում է. «... Սահակը (Մատինյան) և Սիմեոնը (Հովվյան) դեռ բանաստեղծական շրջանումն են. մինը «Հաջի Աբրեկն» է կարգի բերում տպագրելու համար, մյուսը դրա միջին պատահած խորթն և մազալու ոճերն է հանում, որ անաստված Լեոյի ճանկը չընկնի և դարձյալ խաղք ու խայտառակ չդառնա... Ծիծաղելին նա է, որ Սահակն էլ է գրականության նվիրվել: Երեկվա ցորենի փողոտաչին այսօր տենդենցիոզնի վեպեր է թարգմանում և իրան նման էլ մեկենաս է գտել...»:

ԳԱԹ ԹՖ, 2356:

Սեպտեմբերի 18, Թիֆլիս. – Գրում է «Կաղնի» բանաստեղծությունը:

Ունի «Հայրիկին» ենթավերնագիրը և «Նվեր իշխ. Մ. Թ.» ընծայականը:

ԵԼԺ 4, 217, 619:

Սեպտեմբերի 25, Թիֆլիս. – Գիրգիդյանց Ղավիթ քահանայի բողոքը Թիֆլիսի եկեղեցու գործակալ Ղևոնդ ավագ քահանա Խարազյանցի դեմ՝ իրեն հասցված վիրավորանքների համար:

Բողոքը գրված է Թումանյանի ձեռքով:

ԳԱԹ ԹՖ, 3286:

Սեպտեմբերի 29. – Տպագրվում է («Տարագ», 1896, թիվ 38, էջ 599-601) Թումանյանի «Արգելքներ» հոդվածը:

Հոդվածի գրության շարժառիթը «Մշակի», 1896, թիվ 104-ում տպագրված «Արգելքներ կյանքի մեջ» վերնագրով առաջնորդողն էր: Առաջնորդողն բարձրացված խնդիրը Թումանյանը կենսական է համարում. «Այդ գաղափարի և իրական

կյանքի անհաշտությունն է, ծրագիրների և նրանց գործադրության տարբերությունն է, որ մենք ամեն օր տեսնում ենք մեր կյանքում»: Բայց հենց առաջնորդողի տակ տպագրված էր «Վերջին շունչը» վերնագրով մի հաղորդում գյուղական ուսուցչի օրագրից: Հեղինակը գրում է, թե ինչպես ինքը գրի է առել դատավորի թելադրած անարդար վճիռը, որով մահամերձ հիվանդ գյուղացին 30 ռուբլի պարտքի դիմաց զրկվում է իր ընտանիքի գոյության միակ միջոց 200 ռուբլիանոց այգուց: Գյուղական ուսուցիչը չքմեղանում է, թե ինքը ականա է մասնակցել այդ անարդար գործին, և խիղճը հանգիստ է: «Դրանից հետո եկեք իրարից զանազանեցեք մի զռեհիկ դատավոր, մի վաշխառու, մի վարժապետ», – շարունակում է Թումանյանը և եզրակացնում. «Հասարակական կյանքի ու բախտի վրա դեռ երկար է տևելու չարության ու տգիտության բռնությունը, որովհետև գաղափարի մշակն էլ է նրանց կողմը»:

ԵԼԺ 6, 50-53, 571:

<Սեպտեմբեր>. – Ծանոթանում է բժիշկ Ար. (Ռուստեմ) Զարգարյանի հետ՝ Փիլ. Վարդազարյանի միջոցով:

ԹԺՀ, 386-387:

Հոկտեմբերի 1. – Գրառում 6(2) ծոցատետրում:

«96թ. [սեպտեմբերի 30] հոկտ. 1

Մուշեղին ու Աշխենին տարա Տեր-Հովսեփյանի պանսիոնը: Առավոտը վաղ վեր էին կացել, պատրաստվել, նախաճաշիկը մի բուլկի, մի կտոր պանիր ու խաղող վերցրել: Նվարդին ստիպում էին, թե դու արի բալկոնիցը տես, մենք ոնց ենք ուսումնարան գնում...»:

ՌԻՀ 5, 231 (60):

<1896>, հոկտեմբերի 12. – Գրառում թիվ 6(2) ծոցատետրում.

«Ինձ՝ հոկտ. 12 վրդովված [հայտնեց] ասում է*, [ահա բանից] երևում է (գաղթականներն) են պատմել), որ տաճիկները հայերին դուրսիցաներով (մահակ) և կացիներով են կոտորում, ոչ թե հրացաններով: Ահա սրա դեմ պետք է բողոքել: Չէ՞ որ մարդկանց այդպիսով ավելի են տանջում»:

* Խոսակիցը հավանաբար նախորդ (39) գրառման մեջ հիշատակված Գրիգոր Վարդանյանն է:

ՈՒՅ 5, 228 (40):

Յուլյանյանի 13. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Աստրախանից:

Նեղացած է ընկերոջից, որ նամակ չի գրում: Հայտնում է, որ իր պաշտոնը բարձրացրել են: Արտասահման գնալը չի հաջողվել: Խոստանում է մանրամասն նամակ գրել:

ԳԱԹ ԹՖ, 1574:

Յուլյանյանի 13. – Սկսվում է Թումանյանի «Յամլետ» ողբերգությունն Շեքսպիրի» հոդվածի տպագրությունը («Տարազ», 1896, թիվ 40):*

Հոդվածը նվիրված է «Յամլետի» Հովհ. Մասեհյանի թարգմանության (Հրատարակ. Հայոց հրատարակչական ընկերության, 1894, Թիֆլիս) քննությանը:

✧ Սկսվում է ազգային մշակույթների համար Շեքսպիրի թարգմանության նշանակության մասին դիտողությամբ. «Շեքսպիրը դարձել է մի չափ՝ ազգերի զարգացման աստիճանն որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է. եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»:

Բարձր է գնահատում Մասեհյանի թարգմանությունը. «Այս տեսակետից մենք կարող ենք ասել, թե հառաջադիմություն ենք արել, որ, սակայն, ինձ թվում է մի թռիչք, մի հանկարծակի թռիչք»: Միաժամանակ, համեմատելով մի քանի ռուսերեն թարգմանությունների հետ, ամում է կարևոր դիտողություններ: Քննադատում է Հրատարակչական ընկերությանը, որ թարգմանությունը լույս աշխարհ է եկել առանց խնամքով խմբագրության և բազմաթիվ վրիպակներով:

Իր թարգմանության երկրորդ (1921) հրատարակության մեջ Մասեհյանը հաշվի է առել Թումանյանի դիտողությունները:

* Հոդվածի տպագրությունը շարունակվում է «Տարազի» 1896 թ. 41, 43, 44, 45 համարներում:

ԵԼԺ 6, 53-81, 572:

Յուլյանյանի 21. – Կ. Գալֆայանի նամակը Թումանյանին՝ Ախալցխայից:

Խնդրում է ամեն գնով ձեռք բերել և իրեն ուղարկել «Ոճրագործի ընտանիքը», նաև մեկ-երկու տողով պատասխանել նամակին:

ԳԱԹ ԹՖ, 1069:

Յուլյանյանի 24. – Կ. Գալֆայանի բացիկ-երկտողը Թումանյանին Ախալցխայից:

Հայտնում է, որ շաբաթ օրը լինելու է Թիֆլիսում: Եթե խնդրած գիրքը դեռ չի ուղարկել, թող չուղարկի:

ԳԱԹ ԹՖ, 1070:

Յուլյանյանի 26, Թիֆլիս. – Ստանում է Կ. Գալֆայանի՝ հոկտեմբերի 24-ի բացիկ-երկտողը:

ԳԱԹ ԹՖ, 1070:

Յուլյանյանի. – Գրառում թիվ 6(2) ծոցատետրում:

«96 թ. հոկտեմբերին (պանսիոն գնալու երկրորդ ամսին) տեսնում ենք, որ երեխաները փոխանակ ուղղակի պանսիոնից Садовая փողոցով գալու, ուրիշ կողմից Большая кривая փողոցով են գալիս: Հարցնում ենք պատճառը: Աշխենը թե՛ հայրիկ, ևս Մուշեղը ամեն օր արձակելուց հետո Լյուլին տանում է իրանց տուն ու հետո այնտեղից գալիս: Հենց էն ա Լյուլի հետ ա ման գալիս: Խաղալու ժամանակ էլ չի խաղում, դուրս չի գալիս, նրա հետ մնում ա դասարանը:

Մուշեղը թե՛ Հայրիկ, սուտ ա ասում: Աշխենը թե՛ Հա, սուտ են ասում, դու հենց նրա հետ չե՞ս ման գալիս. էն երգի ժամանակ էլ մենք ասում ենք елка, елка, դու ասում ես Мела, Мела, ինչ որ տանում ես, նրան ես տալիս:

Այստեղ Մուշեղը շփոթվեց և չէր իմանում ինչ ասի՝ Մայ-

րի՛կ, էնենց սիրուն ա որ, մեր Արտիկի մազերի նման մազեր ունի: Տանըցիք սկսեցին բարկանալ, նախատել և արգելեցին, որ էլ մյուս անգամ նրա հետ չտեսնեն»:

ՈՒՅ 5, 231-232 (61):

Չոկտեմբեր. – Գրառում թիվ 6 (2) ծոցատետրում:

1896 թ. հոկտ. Թիֆլիսի բարեգործական ընկերության խորհուրդը մասնաժողով էր ընտրել սովյալներին հոգ տանելու (ընդամենը մի քանի տասնյակ հոգի էին): Թշվառությունը ծայրահեղ էր: Դեռ տարրական պետքերը չլրացրած՝ մասնաժողովում Գրիգոր Վարդանյանը (տե՛ս <1896>, հոկտեմբերի 12) հարուցում է գաղթականների համար ծառաներ վարձելու խնդիրը: Մյուս օրը, երբ գաղթականներին հայտնում է, թե շուտով ձեզ համար ծառաներ կվարձենք, թշվառներն ապշած, չէին իմանում ինչ ասեն»:

ՈՒՅ 5, 227-228 (39):

Նոյեմբերի 3. – Գրառում թիվ 6(2) ծոցատետրում:

«Գրիգոր Արծրունին *ինձ ամեն օր* (96 թ., նոյեմբ. 3) էր ասում, որ գրեմ, և նրանից առաջ էլ շատ անգամ խնդրում էր, որ իրան աշխատակցեմ»:

ՈՒՅ 5, 230 (54):

Նոյեմբերի 6, 7, Թիֆլիս. – Նամակ Հաշտարխան՝ Ա. Ղլտճյանին:

Գրում է Թիֆլիսի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Սուրենյանցի անօրինությունների, առհասարակ հոգևորականության ընկած բարքերի մասին: Տեղեկացնում է, որ իրեն այցելության է եկել «Նոր-Դարի» խմբագրին ժամանակավորապես փոխարինող Մինաս Բերբերյանը. «Լավ ծրագիրներ ունի, բայց տեսնենք...»:

Մտադիր է ճանապարհորդել Երևանի նահանգում՝ գաղթականների վիճակին ծանոթանալու նպատակով. «Ես սաստիկ ցանկանում եմ մի ճանապարհորդություն անել դեպի Իգդիրի կողմերը: Երևանի նահանգում և գյուղերում ու ճանապարհներին տեսնել պանդուխտներին: Թեև ծմեռը խիստ է, բայց այս

ցանկությունս այնքան մեծ է, որ ոչ մի ծմեռ արգելք չի կարող լինել, միայն փողի խնդիր կա: Տեսնենք ինչպես է լինում, թե չեղավ, շատ կվշտանամ»*:

* Բանաստեղծի այդ ցանկությունը մնացել է անկատար:
ԵԼԺ 9, 177-180, 561-562:

Դեկտեմբերի 18. – Տպագրվում է («Новое обозрение, 1896, No 4456») Մինաս Բերբերյանի ակնարկը Թումանյանի մասին («Критические заметки об армянской литературе»):

ՈՒՅ 4, 327:

1896. – Գրառում 7(1) ծոցատետրում:

«Մազերիս մի սակավ մասն սպիտակել է, մյուսը մինչև կեսը սև է, կեսից վեր սպիտակ, կոտրվում են իրանց – իրանց, մարմինս այրվում է, ցնցվում եմ, մորթիս փտածի նման պլոկվում է»:

ՈՒՅ 5, 251 (95):

1896. – Գրում է «Յե՛յ, ափսոս էջեր...» բանաստեղծությունը:

Վերաբերում է Մարիամ Վարդազարյանի ալբոմում գրած «Երբ թույլ եք տալիս, որ ձեր ալբոմում» (տե՛ս մարտի 24) բանաստեղծության առիթով ծագած ընկերական վեճին՝ օրիորդական ալբոմներում արծա՞կ գրել, թե՞ չափածո:

ԵԼԺ 1, 358, 653:

1896. – Գրում է «Կարծես թե քիչ էր, ինչ որ արեցին...» բանաստեղծությունը:

Թումանյանի «Երբ թույլ եք տալիս, որ Ձեր ալբոմում...» բանաստեղծության կապակցությամբ Մխ. Տեր-Անդրեասյանը և Փ. Վարդազարյանը նույն Մ. Վարդազարյանի ալբոմում առարկում են նրան. «Արծակ գրողները ներքուստ համոզված են լինում և երբեմն իսկ ստիպված են լինում օրը ցերեկով խոստովանելու, որ իրանք իրանց բանաստեղծներ համարողների ահագին մեծամասնությունը լոկ նախալներ են»: Բանաստեղծությունը այդ դիտողության պատասխանն է:

ԵԼԺ 1, 357, 652:

1896. – Լույս է տեսնում Լերմոնտովի «Մծիրի» պոեմի՝ Թումանյանի թարգմանությունը՝ առանձին գրքուկով (Լերմոնտով, Մծիրի, թարգմ. Հովհաննես Թումանյանց, հրատ. Փիլիպոս Վարդապարյանի, Թիֆլիս, 1896, 35 էջ):

ԵԼԺ 4, 597:

1896. – Գրում է «Այ՛ ծիծեռնակ...» բանաստեղծությունը: Գրված է 1895 թ. նոյեմբերին հայ գաղթականների հետ հանդիպման տպավորությունների հիման վրա՝ պանդխտության երգերի նմանողությամբ:

ԵԼԺ 1, 359, 653. ԱԻ, 374:

1896. – Թումանյանի գրական բարեկամների շրջանն է մտնում բժիշկ Արիստակես (Ռուստեմ) Ջարգարյանը՝ Փ. Վարդապարյանի միջոցով:

Ջարգարյանը ազուլեցի էր, Փ. Վարդապարյանի մորաքրոջ տղան: Ավարտել էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Տակավին անժանոթ թումանյանին, դեռ ուսանող՝ 1892 թ. աջակցում է բանաստեղծի երկրորդ ժողովածուի տպագրությանը: 1896-ին վերադառնալով Թիֆլիս՝ բաց է անում մանկաբուժական կաբինետ և իր բնակարանում կազմակերպում մի շարք դասախոսություններ մանուկների առողջության մասին: Այս դասախոսություններից մեկի ժամանակ էլ ծանոթանում է Թումանյանի հետ:

ԱԻ, 399, 400:

1896. – Տպագրվում է (ԴՓ, էջ 3) «Հառաչանք» պոեմի «Նախերգանքը» (1 – 28 տող):*

* Հետագայում բանաստեղծի կողմից դիտվել է իբրև ինքնուրույն բանաստեղծություն: Պահպանելով խորագիրը՝ բանաստեղծն այն գետեղել է իր ժողովածուների սկզբում իբրև բնաբան:

ԵԼԺ 3, 67-68, 507.

1896. – Մի հանդիպում Ան. Աբովյանի հետ Թիֆլիսում:

Վերջինս հիշում է. «1896 թ. Թիֆլիսում ծառայում էի մի տախտակի շոգե-սղոցարանում՝ վարիչի, հաշվապահի և գանձապահի պաշտոններով: Երբ մի անգամ Թումանյանն իմացավ

իմ պաշտոնների անունները, ասաց. «Առաջին երկուսը չլինեին էլ, վնաս չունի, կարևորը վերջինն է»:

ԹԺԴ, 232:

1896. – Գրում է «Անդարձ ճամփորդներ» («Իմ անցած կյանքն ու հին տարին...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 157, 591:

1896. – Գրում է «Գաղթականի երգը» («Կռունկն երկընթում ճամփա կրհանի...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 156, 590:

1896*. – Գրում է «Տրտմության սաղմոսներից» («Տե՛ր, մինչև ե՞րբ մեր աչքերը քեզ մնան...») բանաստեղծությունը:

* Տարբեր հրատարակություններում հանդիպում է նաև գրության 1898 թվականը:

ԵԼԺ 1, 165, 593:

1896. – Շ. ստորագրությամբ գրախոսություն է տպագրվում («Տարագ», 1896, թիվ 16, էջ 257) Բայրոնի «Շիլիոնի կալանավորի» թումանյանի թարգմանության և «Լոռեցի Սաքուն» պոեմի մասին:

«Հայ քննադատական մտքի պատմության մատենագիտություն», 1987, էջ 452:

1896. – Առաջին անգամ տպագրվում է (ԴՓ, էջ 30-31) «Ժպտուն աչքեր» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 148, 586:

1896. – Առաջին անգամ տպագրվում է (ԴՓ, էջ 39-40) «Նմանություն» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 150, 587:

1896. – Առաջին անգամ տպագրվում է (ԴՓ, էջ 19) «Երկու սև ամպ» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 151, 588-589:

1896. – Առաջին անգամ տպագրվում է «Բայրոնին» բանաստեղծությունը՝ «Շիլիոնի կալանավորը» պոեմի՝ Թումանյանի թարգմանության հետ առանձին գրքով:

ԵԼԺ 1, 153, 589:

1896. – Ձեռք է բերում լուսանկարչական ապարատ:

Նվ. Թումանյանը հիշում է. «Առաջին լուսանկարչական ապարատը, մայրիկի ասելով, հայրիկը գնել էր 1896 թվականին:

Վերնատանը հայրիկն ուներ երեք լուսանկարչական ապարատ: Լուսանկարում էր մեզ՝ երեխաներիս, մոտիկ ընկերներին ու բարեկամներին, վերնականներին ու հյուրերին, գանազան տեսարաններ, որ բացվում էին վերնատան պատուհանից ու պատշգամբից: Իսկ մեծ եղբայրս լուսանկարում էր հայրիկին ու իր ընկերներին»:

ԹՄՊ, 19:

<1896>. – Փիլ. Վարդազարյանի անթվակիր նամակը Թումանյանին:

Հայտնում է, որ հանձնել է «Քյոռօղլիի» տպագրության ցանկը: Խնդրում է հանձնել գրաքննիչին:

ԳԱԹ ԹՖ, 2080:

<1896>. – Փիլ. Վարդազարյանի անթվակիր երկտողը Թումանյանին:

Հայտնում է, որ չի կարող գալ Թումանյանի մոտ զբաղվածության պատճառով: Գլխի է ընկել, որ բանաստեղծը կռվել է գրաքննչական կոմիտեի քարտուղարի հետ, դրա համար էլ «Քյոռօղլին» դեռևս մնում է իր մոտ:

ԳԱԹ ԹՖ, 2082:

1895-1897, *Դսեղ – Թիֆլիս*. – Գրում է բազմաթիվ ժողովրդական առակներ ու լեգենդներ՝ Լոռու բարբառով (չեն պահպանվել):

Բանաստեղծը հիշում է. «Մի ժամանակ (1885-1887) էդ տեսակ բաներ, ժողովրդական առակներ ու լեգենդներ շատ էի գրում բարբառով ու շատ էլ ունեի, բայց որովհետև չէի պահում, դես դեն կորան...»:

ԵԼԺ 2, 550:

<1895-1897>, *օգոստոսի 20*. – Հովհ. Կոստանյանի նամակը Թումանյանին՝ Ջալալօղլուց:

Խնդրում է իր եղբոր աղջկան օգնել՝ ձեռք բերելու ուսուցչի աշխատանք:

Հիշեցնում է, որ ժամանակն է Դսեղում շինել Փարվանայի պալատը և տեղափոխել այնտեղ գրադարանը: Դրան սպասում է ազգը:

ԳԱԹ ԹՖ, 1432:

1 8 9 7

Հունվարի 1. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», 1897, թիվ 1, էջ թ) «Անդարծ ճամփորդներ» («Իմ անցած կյանքն ու հին տարին...») բանաստեղծությունը՝ «Դեպի հավիտենություն» վերնագրով:

ԵԼԺ 1, 157, 591:

Հունվարի 4, Թիֆլիս. – Գրում է «Էքսպրոմտ» («Երբեմն իմ մուսան՝ յուր խելքը կորցրած...») բանաստեղծությունը:

Ինքնագիրը՝ Օ. Գրիգորյանի ալբոմում՝ «Экспр.» վերնագրով:

ԵԼԺ 1, 361, 653-654:

Հունվարի 8, երեկոյան, Թիֆլիս. – Ստանում է Փիլ. Վարդազարյանի նամակը (չի պահպանվել):

Հավանաբար բանաստեղծին տեղեկացրել է նրան հատկացված նպաստը դարարեցնելու մասին: Բովանդակությունը՝ ըստ Թումանյանի պատասխանի, ուր գրում է. «Գալով քո նամակին, ես զարմանում եմ, որ դու գրում ես, թե ես կարող եմ քեզանից նեղանալ նպաստների ընդհատելու պատճառով»:

ԵԼԺ 9, 181, 562:

Հունվարի 9, Թիֆլիս. – Նամակ Փիլ. Վարդազարյանին:

Նախորդ օրվա երեկոյան ստացած անհայտ նամակի պատասխանն է: Իր երախտագիտությունն է հայտնում ընկերոջը՝ ծանր պահին իրեն օգնության հասնելու համար և ավելացնում. «Ճշմարիտն ասեմ, ես վաղուց, ամեն անգամ, երբ կարիքից ստիպված դիմում էի քեզ կամ ընդունում էի քո որոշած նպաստները, շատ էի քաշվում, թեև դու ինքդ էիր այդպես սահմանել և միշտ էլ այնպես էիր տալիս, որ կարծես թե պարտ լինեիր: Եվ շարունակ մի հնար էի մտածում, որ կարողանայի մեր կապն

ազատել դրամական հարաբերությունից և չհարստահարել քո զգացմունքները, որ չեն փոխիլ ոչ մի դրամական օժանդակության հետ: Այժմ դու հավատա, որ ես թեև տակավին իմ որոնած հնարը չեմ գտել, բայց կատարվում է իմ սրտալի բաղձանքը՝ մնում է մեր հարաբերության զուտ բարոյական, աննյութական կողմը, որով միայն դու եզակի և անփոխարինելի ես ինձ համար»:

ԵԼԺ 9, 181-182, 562:

Հունվարի 16. – Փիլ. Վարդազարյանի նամակ - երկտողը Թումանյանին:

Խնդրում է անհապաղ գտնել աշուղ Ջիվանու հասցեն և ուղարկել իշխանուհի Մարիամ Թումանյանի մոտ. վերջինիս կազմակերպելիք ներկայացման համար անհրաժեշտ են տաճկահայկական երգեր:

ԳԱԹ, ԹՖ, 2044 (1015):

Հունվարի 17, Թիֆլիս. – Գրում է «Նամակ խմբագրության» հոդվածը:

Գրված է՝ ի պատասխան Արշակ Հարությունյանի «Նամակ խմբագրության» հոդվածի («Մշակ», 1897, թիվ 6), ուր ծաղրի էր ենթարկվում երիտասարդ դերասան Կարապետ Գալֆայանը: Վերջինս մեկենասների օգնությամբ մեկնել էր Փարիզ՝ կատարելագործվելու և արդեն ուներ հաջողություններ: Թումանյանը ցույց է տալիս հոդվածագրի բարոյական սնանկությունը և պաշտպանելով երիտասարդ դերասանին՝ եզրակացնում. «Այս տողերով, մենք էլ հանուն հայ բեմի, բողոքում ենք դերասան Հարությունյանի վարմունքի դեմ և հայտնում ենք մեր զայրույթը համանման երևույթը դատապարտող անհատներին»:

ԵԼԺ 6, 82-83, 573:

Հունվարի 18. – Գրառում 6(2) ծոցատետրում:

«Վաղուց < 1 ամրնթ. > լինելով գրողների մի ընկերություն՝ 97 թ. հունվարի 18-ին հրավիրեցի մի 7 - 8 հոգու ինձ մոտ, առաջուց նրանց համաձայնությունը առնելով, որ կհաշտվեն իրար հետ և կտանեն թե՛ անձնական և թե՛ կուսակցական հակառակ համոզմունքները ևն, ևն»:

ՌԻՀ 5, 232, (62):

Հունվարի 26. – Տպագրվում է («Տարագ», 1897, թիվ 4) Թումանյանի «Նամակ խմբագրության» հոդվածը (տե՛ս հունվարի 17)՝ ի պատասխան Արշակ Հարությունյանի հոդվածի: ԵԼԺ 6, 573:

Հունվարի 31. – Ասպետի (Ավ. Տեր-Իոաննիսյան) բացիկը Թումանյանին՝ Լոզանից:

Խնդրում է շտապ ուղարկել «Բանաստեղծությունները»: Նվիրելու է մի հայախոս շվեյցարուհու: «Մի երկու կտոր» էլ կարդալու է մոտ ապագայում կազմակերպվելիք երեկույթին:

ԳԱԹ ԹՖ, 947:

<*Հունվար*>*, *Թիֆլիս.* – Նամակ-երկտող Փիլ. Վարդազարյանին:

Գրում է. «Այսօր ամբողջ օրը տանն եմ լինելու. եկ ինձ մոտ. համ հիվանդ եմ՝ կտեսնես, համ էլ ես քեզ կտեսնեմ ու կխոսանք, կկարգադրենք գործերը: Թեկուզ հենց հիմա արի. Պռոշի հետ էլ խոսացի, Փիրումյանի հետ էլ»:

* ԵԼԺ-ում տարեթիվը սխալմամբ նշված է 1898:

ԵԼԺ 9, 182, 562:

<*Հունվար*>, *Թիֆլիս.* – Իր բնակարանում հրավիրում է «գրողների մի խմբի» ժողով:

✓ Նպատակն էր՝ «... մի գրական (թելետրիստների) շրջան կազմելու, հարկ եղած ժամանակ գրական մարդկանց և գրականության շահերը պաշտպանելու և գրական զանազան խնդիրներ հարուցանելու և վճռելու»: Ժողովներին մասնակցում են Աղայանը, Պռոշյանը, Շիրվանզադեն, Մուրացանը, Վրթ. Փափազյանը, Լ. Մանվելյանը և ուրիշներ՝ ընդամենը 12 հոգի: Մինչև մարտ ամիսը տեղի է ունենում 6 – 7 ժողով: Սակայն գրական այդ ընկերությունը չի հարատևում:

ԵԼԺ 9, 184, 563:

<*Հունվար - փետրվար*>. – Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության անդամներից (Ս. Բալայան, Ա. Նազարեթյան և մյուսներ) «այցետոմսեր» Թումանյանին:

Առաջարկում են «դիմում անել» ընկերությանը՝ նյութական օգնություն ստանալու համար:

ԵԼԺ 9, 184, 563:

Փետրվարի 5. – Ս. Բերբերյանի նամակը Թումանյանին՝ Բահնուտից:

Դժգոհություն է հայտնում «Նոր -Դարի» ժամանակավոր խմբագրի (տե՛ս նույնների 6,7) պաշտոնից իրեն ազատելու կապակցությամբ: Գրում է, որ Թիֆլիսից հեռացել է ընդմիջտ. «... բայց իմ սրտիս մեջ միշտ վառ կմնան մի քանի անձանց պատկերները, որոնց մեջ Ձերը առանձին տեղերից մեկն է բռնում: Բանաստեղծին մաղթում է ստեղծագործական առաջադիմություն:

ԳԱԹ ԹՖ, 1051:

<Փետրվարի կեսերից հետո>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Սիսակ Օհանյանին (չի պահպանվել):

Նամակի մասին հիշատակությունը՝ Ս. Բալայանին և Ա. Նազարեթյանին ուղղած նամակում (տե՛ս մարտի 5):

ԵԼԺ 9, 185, 563:

Մ *<Փետրվար – մարտ>.* – Մամուլի հաղորդումը՝ Բաքվի Մարդասիրական ընկերության կողմից Աղայանի, Շիրվանզադեի, Թումանյանի որդիներին նպաստ հատկացնելու մասին:

«Բաքվի Մարդասիրական ընկերության խորհուրդը յուր վերջին նիստերից մեկում վճռել է որդեգրել պ.պ. Ղազարոս Աղայանի, Շիրվանզադեի և Յովի. Թումանյանի որդիներից միմի հոգի, վճարելով հիշյալ անձերից առաջիններին 300-ական և երրորդին՝ 240-ական ռուբլի... Ուրախությամբ ենք արձանագրում այս իրողությունը: Սա առաջին դեպքն է, որ որևէ հայկական ընկերություն նպաստ է տալիս այն մարդոց, որոնց գլխավոր արժանիքը նոցա տաղանդն է ու գրական գործունեությունը: Եվ ընտրությունը Մարդասիրական ընկերության կողմից գեթ սկզբի համար, մեզ թվում է և՛ հաջող, և՛ բնորոշ: Մեր գիտեցածովը, այդ երեք գրագետներն էլ ծանրաբեռնված են բազմանդամ ընտանիքներով: Հիշյալներից երկու վերջինները պ.պ. Շիրվանզադեն և Թումանյանը, սոսկ գրագետների

տիպարներ են դժվար հարմարվող մասնավոր ծառայության պայմաններին, և հետևապես նոցա համար դժվար է կողմնակի վաստակ ունենալը: Պ. Աղայանը, ճիշտ է, ունի նաև մանկավարժական կոչում, և հայտնի է թե իբր գրագետ և թե իբր ուսուցիչ, տարածված դասագրքերի հեղինակ և փոքրերի դաստիարակ, մի հանգամանք, որ գալիս է օգնելու գոյության կռվում, բայց վաստակավոր գործչի տարիքը, կից դպրոցական վատ հանգամանքների հետ, զգալապես չեզոքացնում են այդ մեծ առավելությունները»:

«Մուրճ», 1897, 2-3, էջ 404-407:

<Փետրվարի վերջ կամ մարտի սկիզբ>. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին:

Հիշեցնում է, որ հանձնել է «Քյոռուլիի» տպագրության ցանկը՝ երեք տեղ՝

1. Տարագ. 2. Մուրճ. 3. Աղայանի գիրքը:

Պատվիրում է ներկայացնել ցենզորին:

ԳԱԹ ԹՖ 2080 (լ.գ. 454):

<Մարտի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ներսես Աբելյանին (չի պահպանվել):

Հիշատակությունը՝ Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության խորհրդին ուղղած նամակում (տե՛ս մարտի 24):

ԵԼԺ 9, 186, 564:

Մարտի 3. – Արամ Նազարեթյանի* նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է, որ հայկական դպրոցները փակվելու կապակցությամբ կառավարությունն արգելել է նաև «Օջախի» գործունեությունը: Բայց ընկերությունը «քեֆերի» ձևով շարունակում է իր գործունեությունը: Նկարագրում է այդպիսի մի «քեֆ», որտեղ տեղի են ունեցել անդամների ընտրություններ: Հրավիրում է բանաստեղծին. «Ադա՛, եթե կարող ես, եկ, մի քիչ մասխարություններ կանենք: Ճանապարհածախսդ «Օջախը» կհոգա»:

* ՈՒՀ 4-ում (324-325)՝ Առաքելյան Արամ:

ՈՒՀ 4, 324-325:

Մարտի 5, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Բալայանին և Ա. Նազարեթյանին:

Խրախուսում է Բաքվի Մարդասիրական ընկերության ջանքերը՝ կարիքավոր հայ գրողներին օգնություն հասցնելու համար. «Առաջին անգամ հրապարակում ձեր ծայնը բարձրացավ այդ խնդիրը պաշտպանելու համար, դուք հայտարարեցիք, որ գրողն ու կյանքը այնպիսի հարաբերության մեջ են մեզանում, և ես, որպես ձեր ընկերը և մի մարդ, որի բոլոր մտքերն ու զգացմունքները պատվում են գրականության շուրջը, որ յուր էությունն ու կյանքի խորհուրդը գրականության հետ կապված է զգում, որ վաղաժամ, բայց մեծ փորձով գիտե, թե ինչ բան է առօրյա կյանքի և գրական կոչման այն զարհուրելի երկպառակությունը, որ հոշոտում, քայքայում, պատառ-պատառ է անում մարդու բոլոր ույժերն ու ընդունակությունները, — իմ կողմից հայտնում եմ ձեզ իմ սրտալի շնորհակալությունը այն ծայնի համար, որ դուք բարձրացրիք Մարդասիրական ընկերության այս տարվա ժողովում, այս ծածուկ, բայց զարհուրելի դրամային վերջ տալու համար, և թեկուզ երբեք էլ վերջ չիքնի, այսուամենայնիվ, այն էլ մեծ մխիթարանք է, որ համազգաց սրտեր կան և համակրություն»։ Դառնությամբ արձանագրում է, որ հայ մամուլը, հատկապես «Մշակը», հաճախ բացասաբար է վերաբերվում այդպիսի ձեռնարկումներին:

Անդրադառնալով նյութական օգնություն ստանալու համար Մարդասիրական ընկերությանը դիմելու իրեն արված առաջարկին (տե՛ս հունվար - փետրվար) գրում է. «Կրկին գալով ինձ, ես ձեզ բաց սրտով ու պարզ ասեմ, որ որքան մեծ է իմ նյութական կարիքը՝ հազար անգամ ավելի մեծ է այս տեսակ կյանքից ազատվելու ցանկությունը, այս կյանքից, որ ինձ համար այնքան կորստաբեր է եղել և այժմ էլ միայն մի դազադի նշանակություն ունի: Ասում եմ այնքան մեծ է այս հեռանալու, շունչ քաշելու, սթափվելու ցանկությունն իմ մեջ, որ ինձ անիրագործելի ցնորք է թվում: Անիրագործելի, մանավանդ, երբ սրա հետ հաշվի առնենք, որ միաժամանակ զարգանալու խնդիր ունեն առաջս դրած և ընտանեկան դրություն:

Եվ թեև այս բոլորը կապված են նյութական խնդրի հետ և կարող էին գոնե մասամբ լուծվել իմ դիմումով, որ դուք

ապսարել եք, թե անեմ ընկերությանը, ես դժվարանում եմ, չեմ կարող անել...»:

Մտավախություն է հայտնում «Օջախի» գոյության համար. «Աստծու խաթեր «Օջախը» չքանդեք»:

ԵԼԺ 9, 183-185 563-564:

Մարտի 9. – Կ. Գալֆայանի նամակը Թումանյանին՝ Փարիզից:

Հանդիմանում է բանաստեղծին՝ իր նամակներին չպատասխանելու համար: Հայտնում է իր դերասանական գործունեությանը վերաբերող ուրախալի լուրեր՝ խոստանալով հետո գրել ավելի մանրամասն:

ԳԱԹ ԹՖ, 1071:

Մարտի 9. – Ա. Նազարեթյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է Շիրվանզադեի և Աղայանի որդիներին նպաստ հատկացնելու մասին, և որ մոտակա նիստում կլուծվի նաև Թումանյանի որդու՝ Սուշեղի հարցը (տե՛ս <փետրվար – մարտ>):

ԳԱԹ ԹՖ, 1801 (541):

Մարտի 9.- Ա. Առաքելյանի (տե՛ս նաև մարտի 3) նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Տեղեկություններ է հաղորդում «Օջախի» գործերի մասին. « «Օջախի» գրականությունը շատ հարստացել է, կանոնադրությունը մշակել է նվաստս, արխիվարյուսը — գրաբար ոսկեղենիկ լեզվով գրել է «Օջախի» պատմությունը... Այժմ էլ մի դասագիրք (хрестоматия) ենք կազմում «Օջախի» անունով, ուր մտնում են ու հավաքվում «Օջախի» արձակ ու չափածո երկերը, շուտասելուկները, զվարճալիքները և այլն: Եթե գաս, շատ նյութ կունենաս ուսումնասիրելու, ադա, իսկապես հարմարեցրու, մին մեզ տես, գալուդ դեպքում քո անտիպ ձեռագիրներիցդ բեր, հրատարակողներ կգտնենք, նաև կբերես քո տպած աշխատություններիցդ մի-մի օրինակ, նվեր Գ. Մելիքյանին, կգաս նորան վիզիտ կանես, կնվիրես աշխատություններիցդ, նա շատ կզգացվի»:

Հայտնում է, որ Մարդասիրական ընկերությունից նպաստ ստանալու համար կարիք չկա հատուկ դիմումի (տե՛ս մարտի 5), «խորհուրդը արդեն վճռել ու որոշել է մի միջոց, այն է՝ համաձայն կանոնադրության՝ մանուկներ որդեգրելու ու կրթելու պատրվակով կառաջարկեն ձեզ մի որոշ նպաստ: Աղայանինը, Շիրվանինը արդեն վճռված է, քոնն էլ այս առաջիկա նիստին ձևականապես կվճռվի»:

Ու՛ր 4, 322-323:

Մարտի 13. – Տեղի է ունենում Մարդասիրական ընկերության խորհրդի նիստը:

Որոշվում է նպաստ հատկացնել գրողներին:

«Արծազանք», 1897, թիվ 33:

Մ *Մարտի 18.* – Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության խորհրդի թիվ 32 գրությունը՝ թուճանյանին, Աղայանին, Շիրվանզադեին դրամական նպաստ տրամադրելու մասին:

«խորհուրդը, վերջապես, յուր ամսույս 13-ին կայացյալ նիստի թիվ 11 օրագրությամբ որոշեց մեր հայտնի գրականներից առայժմ ՚ի նկատի առնել միմիայն Ձեզ, պ.պ. Ղազարոս Աղայանին և Ալեքսանդր Մովսիսյանին (Շիրվանզադե), և ձեր ընտանեկան առօրյա հոգսերի մի չնչին մասը ընկերությունը յուր վերա առնելով՝ միջոց տա ձեզ բացառապես գրականությանը նվիրվելու և նրանով զբաղվելու»:

Որոշվում է նպաստը հատկացնել որդիների անուններով: Թուճանյանի ավագ որդուն 240 ռ., որ կուղարկվի տարեկան երկու նվազով: Տեղեկություններ են խնդրում որդու մասին:

ԳԱԹ ԹՖ, 1482:

Մարտի 21. – Ս. Բալայանի հաղորդագրությունը՝ Բաքվի Մարդասիրական ընկերության խորհրդի՝ մարտի 13-ի նիստի մասին:

«Մարդասիրական ընկերության խորհուրդը յուր՝ ամսույս 13-ի նիստում որոշել է նպաստներ տալ տարեկան 300-ական ռուբլի մեր գրական աշխարհում հայտնի երեք գործիչների – պ.պ. Ղ. Աղայանցին, Շիրվանզադեին և Հովհ. Թուճանյանցին: Հարգելի խորհուրդը իր այս նշանավոր որոշումով մի կողմից

հարգել է այս տարվա ընդհանուր ժողովի հանդիսականների միահամուռ և բուռն ցանկությունը՝ կարելույն չափ օգնել մեր հայտնի և կարիք ունեցող գրականագետներին, և մյուս կողմից՝ սկզբունքով վերջնականապես լուծել է այն բանակռիվը, որ հայտնի դավանանքի պատկանող մարդիկ անտեղի կերպով հարուցին և աշխատեցին այդ խնդիրը մի կերպ մեռցնել...»:

«Արծազանք», 1897, թիվ 33:

Մ *Մարտի 21.* – Ձ. Տեր-Գրիգորյանի նամակը թուճանյանին՝ Ախալքալաքից:

Շնորհավորում է անցած անվանակոչության օրվա առթիվ. ժամանակին չի կարողացել շնորհավորել՝ տեղում չլինելու պատճառով: Մաղթում է ընկերոջը «առողջ և երկար կյանք, գրչի բեղմնավորություն, գրականական փառք»:

Անդրադառնում է «Համլետի» թարգմանության մասին թուճանյանի հոդվածին (տե՛ս 1896, հոկտեմբերի 13), «Մեծ հետաքրքրությամբ «Տարագում» կարդում էի «Համլետի» թարգմանության քննադատությունը և ամեն մի դիտողություն գտնում էի շատ խելացի. ամեն մի համարը ստանալիս հետաքրքրվում էի, թե ո՞վ պիտի լինի այս պարոնը (քննադատը), ճշմարիտն ասած՝ երբեք չէի մտածում, թե կարող է քոնը լինել: Որքա՛ն ուրախացա, երբ վերջը ստորագրությունդ կարդացի: Ինչպես երևում է, այժմս լուրջ ես աշխատում գրական զարգացում ձեռք բերել. քո հարուստ տաղանդը գրական զարգացումի հետ հրաշքներ կարող է գործել»:

Կարդացել է «Տարագում» տպագրված «Արտավազդի» սկիզբը. նախ կարծել է, թե թուճանյանինն է, ապա ուրախացել է, որ իրենը չէ: Հուսով է, որ բանաստեղծը մշակում է հին պոեմները և գրում նորերը. «Անհամբեր սպասում եմ, թե «Անուշիդ» նոր, փոփոխած հրատարակության և թե մյուս, դեռ չտպագրված պոեմներիդ հրատարակությանը («Հառաչանքի» և «խորտակվածի»). որքան հիշում եմ, այսպես ասացիր նոր պոեմայիդ անունը»):

Ցավում է, որ գժտվել են Արասխանյանի հետ. եթե ինքը ներկա լիներ, կհաշտեցներ:

ԳԱԹ ԹՖ, 2190:

Մարտի 22. – Տեղի է ունենում Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովը:

Ժողովում խոսք է գնում այն մասին, թե Շիրվանզադեն ընկերությունից կանխավճար է ստացել Վ. Կորոլենկոյի ստեղծագործությունների թարգմանության համար, բայց լրիվ չի կատարել, ուստի պարտք է մնացել ընկերությանը: Այդ առիթով Թումանյանի ասածները ժողովի արձանագրության մեջ ներկայացվել են խեղաթյուրված, և բանաստեղծը բողոքում է. «Իմ խոսակցությունից արձանագրված է միայն մի նախադասություն և այն էլ այն ձևով, որ կարծել է տալիս, թե ես պ. Քալանթարի ասածները պ. Շիրվանզադեին հայտնելը մի հանցանք էմ համարում և ուզում եմ այդ հանցանքը հերքել ինձանից: Ես, ընդհակառակը, այն կարծիքն եմ հայտնել, և այժմ էլ այն կարծիքն եմ, որ պ. Քալանթարի ասածները պետք է հայտնել պ. Շիրվանզադեին, որովհետև դա շոշափում էր գրող կոչված մարդու վարկը...»: Ժողովի՝ անվանի գրողին վարկաբեկող որոշումը Թումանյանը համարում է «խուժանական լոգիկա»:

ԵԼԺ 9, 187-189, 565-566:

Մարտի 24, Թիֆլիս. – Շնորհակալական նամակ Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության խորհրդին:

Տեղեկացնում է, որ ստացել է ընկերության խորհրդի թիվ 32 գրությունը (տե՛ս մարտի 18): Տվյալներ է հաղորդում անդրանիկ որդու մասին, որին ընկերությունը նպաստ էր նշանակել. «Նա ծնվել է 1889 թ. օգոստոսի 15-ին, անունը Մուշեղ է և անցյալ տարվանից սովորում է քաղաքումս օր. Տեր-Հովսեփյանի պանսիոնում»:

Ընկերության այն ակնարկին, թե ինքը պետք է զբաղվի միայն գրականությամբ, բանաստեղծը պատասխանում է. «Ինչ վերաբերում է բացառապես գրականությամբ պարապելու խնդրին, դրա համար կարող է ապահով լինել ընկերությունը, որովհետև այդ արդեն որոշված է իմ ներքին հակումներով ու զգացմունքներով, այն հոգեկան հատկություններով ու սիրով, որով բնությունը անխզելի պայման է հաստատել իմ և գրա-

կանության մեջ: <...> Ես <...> ոչ մի նշանավոր անցյալ ունեմ և ոչ գրական մեծ գործեր եմ կատարել, որ արժանի լինեի այդ ուշադրությանը և հոգածությանը և ինձ թվում է, որ այս դեպքում խորհուրդդ ինձ խրախուսում և քաջալերում է ապագայի համար, ես էլ կաշխատեմ զոնե ապագայում արժանի լինել այդ զգացմունքին...»:

ԵԼԺ 9, 186-187, 564:

Մարտի 24, Թիֆլիս. – Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության խորհրդին է ուղարկում որդու «120 ռուբլի կիսամյա թոշակը» ստանալու անդորրագիրը:

ԵԼԺ 9, 186:

Մարտի 25. – Ս. Գուլամիրյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Ձարմանք է հայտնում, որ իր նամակը տեղ չի հասել: Խնդրում է «Բարձրաքաշ ս. Գրիգորի վանքը» հողվածը արտագրել և նորից ուղարկել «Արաքսի» ընթացիկ համարում տպելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1111:

Մարտի 25. – Տպագրվում է («Տարագ», 1897, թիվ 12, էջ 203) Թումանյանի «Նամակ խմբագրության» հողվածը:

Խոսքը Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովի մասին է (տե՛ս մարտի 22): Գրում է, որ «ընդհանուր ժողովը մի հայիոյանք էր հայոց գրողներին և գրականությանը», քանի որ փոխանակ լուրջ գրական հարցեր քննարկելու, զբաղված էր միայն վաստակավոր գրողներին անվանարկելով. «Արդ, որպես մի սոսկ պաշտոնյա հայոց գրականության, որպես մի մարդ, որ իրան կապված է զգում այդ գրականության շահի և պատվի հետ – այս մի քանի տողով բողոքում եմ և հայտնում իմ զգվանքը այն մարդկանց, որ հորինեցին մի այդպիսի ժողով և այնտեղից դուրս եկան ու դեռ տպագրեցին, պարծեցան թե մենք 100 ձայն ունեինք հակառակորդների 10-ի դեմ և զավառներում թող փչելու համար, իրանց նողկալի վարմունքը գաղափարական ցույց տալու համար չքաշվեցին հնա-

րելու և տարածելու մի այսպիսի սուտ – թե այդ հակառակորդները, այդ 10-ը հոգին «Մուրճի», «Տարագի», «Արծազանքի» և «անանուն» թերթի մնացած կուսակցություններն էին»:

ԵԼԺ 6, 84, 173:

Ապրիլի 5. – Տպագրվում է «Գրողի օրագիրը» վերնագրով հոդված՝ «Գրող» ստորագրությամբ:

Պատասխանն է թումանյանի «Նամակ խմբագրության» հոդվածի (տե՛ս մարտի 25):

«Մշակի»՝ «Գրող» ծածկանվան տակ թաքնված աշխատակիցը, շոքանցելով հարցի էությունը, վիրավորական հիշոցներ է թույլ տալիս բանաստեղծի հասցեին. «Մի երիտասարդ՝ Յովհաննես թումանյանց, բայց թողնենք նրան, – «գի ոչ գիտեզինչ գործե», նա ինքն իրան թաղեց հենց իր հոդվածով, որի մեջ նա, *խուժանի* այդ հարազատ զավակը, արիստոկրատական ծիրանի հագած, արշավանք է սկսում *խուժանի* դեմ»:

«Մշակ», 1897, թիվ 40:

Ապրիլի 7, Թիֆլիս. – Նամակ Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության վարչությանը:

Խոսքը ընկերության ընդհանուր ժողովի մասին է (տե՛ս մարտի 22): Թումանյանը վերստին բողոքում է գրողների հանդեպ վարչության պահվածքի դեմ: Մեջ է բերում այն խոսքերը, որ ասվել էին Աղայանին, երբ նա, կարիքի մեջ լինելով, կանխավճար էր խնդրել ընկերությունից. «Ձեզ կանխավճար չենք կարողանում տալ, որովհետև տալիս ենք, հետո անախորժ բաներ են դուրս գալիս. ա՛յ, օրինակ, Շիրվանզադեին էլ տվինք. մնացել է պարտ, էլ չենք կարողանում ետ ստանալ, հիմա ի՞նչ անենք, գնանք տունը վեր գրե՞նք»:

Բանաստեղծի դժգոհությունը ուղղված էր մասնավորապես ընկերության վարչության նախագահ Ալ. Զալանթարի դեմ:

ԵԼԺ 9, 187-189, 565:

Ապրիլի 7. – 2. Տեր-Գրիգորյանի նամակը թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Շնորհավորում է բանաստեղծին Բաքվի Մարդասիրական ընկերության կողմից նրա որդուն նպաստ հատկացնելու առթիվ (տե՛ս մարտի 21): Ուրախ է, որ թումանյանի «անունը դրվում է Աղայանցի նման մարդու անվան կողքին»: Հայտնում է, որ հետևում է մամուլում ընթացող բանակոչվածներին:

Մեծ ցանկություն ունի ամառն անցկացնել ծննդավայրում՝ Լոռում. հարցնում է բանաստեղծի կարծիքը:

ԳԱԹ ԹՖ, 2191:

Ապրիլի 10. – Տպագրվում է թղթակցություն, թե իբր թումանյանը պարտք է Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությանը:

Մասնավորապես ասվում է. «Ցույց տալու համար, որ վարչությունը վերին աստիճանի քնքուշ է վերաբերվել դեպի աշխատավորները և չէ ցանկացել ոչ ոքին «ոտնակոխ անել», մենք ձեր առաջ կդնենք մի քանի փաստեր: Ովքեր են ընկերությունից դժգոհները. Պ. Պռոշյան, Հ. Թումանյան, Շիրվանզադե, Վ. Փափազյան և այլն: Արդ՝ Պռոշյան, իր թարգմանության համար վերցրել է ավանս, հակառակ այն ժամանակվա ընդունված կարգի: Թումանյան չորս տարի արդեն ընկերությանը պարտ է մոտ 60 ռուբլի և չէ տալիս»:

«Մշակ», 1897, թիվ 42:

Ապրիլի 10. – Նամակ Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությանը:

« «Մշակ» լրագրի այսօրվա համարում տպված է, թե ես ընկերությանը մոտ 60 ռ. եմ պարտ և *չեմ տալիս* : Որովհետև այս լուրը արատավորում է իմ պատիվը, ուստի խնդրում եմ հարգելի վարչությանդ ինձ հայտնել, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է եղել, որ այն պարտքը, որ ես պարտ եմ ընկերությանը, այսօր դուրս է եկել հրապարակ այն թերթում, որի խմբագիրը վարչության պ. նախագահն է և այն էլ այսպիսի զրպարտությամբ հանդերձ, թե ես *չեմ տալիս*: Ես կարծում եմ վարչությունը այդ կարծիքին լինել չի կարող, թե ես խույս եմ տալիս իմ պարտքից, քանի որ այդ

պարտքի մի մասը վճարել են ես, մնացածի համար ստորագրություն են տվել, իսկ անցյալ տարվանից վարչության թղթով պատվեր են ընդունել թարգմանելու Բելիմսկու գրվածքը Լերմոնտովի մասին, և այն ի հաշիվ հիշյալ պարտքի, ինչպես խոսացել են հատկապես վարչության պ. նախագահի հետ: Այդ մասին խնդրում են վարչության կարծիքը»:

ԵԼԺ 6, 90:

Ապրիլի 11. – Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության անդամ-քարտուղար Կ. Գյուլնազարյանի նամակ-երկտողը Թումանյանին:

Հայտնում է, որ վարչությունը ստացել է բանաստեղծի՝ ամսի 7-ի և 10-ի գրությունները: Առաջինը կցել է գործին, իսկ երկրորդը վերաբերում է «Մշակի» խմբագրությանը, ուր և կարող է դիմել:

ԳԱԹ ԹՖ, 1089:

Ապրիլի 13. – Տպագրվում է («Տարագ», 1897, թիվ 14, էջ 236-238) «Ընդդիմախոսություն» հոդվածը:

Պատասխանում է «Մշակում» տպագրված «Գրողի օրագիրը» հոդվածին (տե՛ս ապրիլի 5): Մասնավորապես իր հասցեին նետված «խուժանի հարազատ զավակ» արտահայտության առիթով գրում է. «Այո՛, պ. *խավարամիտ*, (այս գրչի սխալ չի), ինացած եղեք և զարմացած էլ մնացեք, որ տեղը եկած ժամանակ ես հանգիստ խղճով և մաքուր ոգևորությամբ արշավանք կսկսեմ և՛ այն *խուժանի* դեմ, որի հարազատ զավակն են ես և որին սիրում են: Ես չեմ ծառայում և չեմ ծառայելու *խուժանի* հաճույքին ու ծայնին, այլ այն գաղափարներին, որ բարձրացնելու են նրան: Այս թող լինի մի հայտարարություն ձեզ զարմացնելու համար և մի երդում այն *խուժանի* առաջ, որի կյանքի խորհուրդն ինձ համար այնքան թանկ է և սուրբ: Ո՛չ, պ. *Գրող*, իմ նամակում գործածած *խուժանական* բառը վերաբերում է ձեզ և ձեր ընկերներին: Ես իսկի չեմ էլ մտածել ձեզ համեմատել այն *խուժանի* հետ, որի հարազատ զավակն են ես, որովհետև ձեր և այն *խուժանի* մեջ սար ու ձորեր կան»:

ԵԼԺ 6, 84-88, 574:

<Ապրիլ>, Թիֆլիս. – Պատասխան Հրատարակչական ընկերության գրությանը (տե՛ս ապրիլի 11):

Գրում է. «Վարչությունը իր No 150 գրության մեջ ինձ տված պատասխանով ակնհայտնի դաշնակից է հանդիսանում «Մշակ» լրագրին: Նա ոչ միայն իրան պատասխանատու չի համարում, երբ իմ մուրհակը իր գանձարանից դուրս է եկել հրապարակ, այլև չի կամենում պատասխանել գոնե իմ այն հարցին, թե ես խույս եմ տվել իմ պարտքից, թե չէ: Նա այսպիսով ինձ զրկում է իր միջոցով ճշմարտությունից օգտվելու և զրպարտությունը հերքելու հնարավորությունից... <....> Այսպիսով ինձ համար մնում է ցավով որոշել և կտրել իմ հարաբերությունները Հայոց հրատարակչական ընկերության հետ... <....> Ես միայն զգացմունքներով կարող եմ կապված լինել ընկերության հետ և ոչ թե թարգմանության պատվերներով, իսկ երբ զգացմունքները վերացած են մեջտեղից, մեր մեջ չի կարող լինել որևէ հարաբերություն»: Գրության հետ ուղարկում է իր 53 ո. 52 կոպեկ պարտքը և հրաժարվում Բելիմսկու հոդվածի թարգմանության պատվերից (տե՛ս ապրիլի 10):

ԵԼԺ 6, 91-92:

<Ապրիլ-մայիս>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Նազարեթյանին և Ս. Բալայանին (չի պահպանվել):

Խնդրում է միջնորդել, որպեսզի Մարդասիրական ընկերությունը օգնություն ցույց տա արտասահմանում սովորող Կ. Գալֆայանին:

ԵԼԺ 9, 189, 566:

Մայիսի 4. – Տպագրվում է («Տարագ», 1897, թիվ 16, էջ 270-273) «Իմ հաշիվը հրատարակչական ընկերության հետ» հոդվածը:

Մանրամասն և հիմնավոր բացատրություններ է տալիս ընկերության այն հայտարարության վերաբերյալ, թե Թումանյանը պարտք է Հրատարակչական ընկերությանը և չի ուզում վճարել (տե՛ս նաև ապրիլի 10, <ապրիլ>):

ԵԼԺ 6, 88-92, 574:

Մայիսի 4. – Տպագրվում է («Տարագ», 1897, թիվ 16, էջ 270) «Նամակ խմբագրին» հոդվածը:

Գրության առիթը «Տարագի» թիվ 14-ում տպագրված մի հոդված է, որտեղ այն միտքն է արտահայտվում, թե Ալ. Զալանթարը և մյուսները դեռ Գր. Արծրունու կենդանության ժամանակ դավադրություններ էին սարքում «Մշակը» և նրա խմբագրին տապալելու համար: Թումանյանը՝ իբրև մասնակից այդ ժողովների, վկայում է, որ դա ոչ թե դավադրություն էր, այլ դժգոհություն Արծրունու վարած քաղաքականությունից. «Այդ տրտունջը ուներ իր հիմունքները, որոնք շատ թարմ ու լուրջ էին այն ժամանակ: Այդ ժողովներում խոսողները ապացուցում էին, որ Արծրունին վաղուց սպառվել է, իրան շրջապատել է գյաղաներով, դարձել է մի անտանելի բռնակալ կուսակցություն, իսկ *Մշակը* մի անպետք թերթ, որ ոչինչ չի տալիս, խաբում է երիտասարդությանը և այլն: <...> Կրկնում են, այնտեղ ոչ դավաճաններ կային ու ոչ դավադրություն, եթե այս բառերը գործ եք ածել իրանց իմաստով. այն ժողովները և դժգոհությունները, մանավանդ այն ժամանակ, շատ հասկանալի էին, բայց նրանից հետո պատահածներն էին շատ տխուր և զարմանալի»:

ԵԼԺ 6, 92-93, 574:

Մայիսի 13. – Առաջին անգամ ռուսերեն թարգմանությամբ տպագրվում է «Երկաթուղու շինությունը» պատմվածքը՝ «Накануне» վերնագրով:

Թարգմանիչը Փիլ. Վարդազարյանն էր՝ «Эли» ստորագրությամբ:

ԵԼԺ 5, 54-57, 748:

Մայիսի 30, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Սահակ Մատինյանին (չի պահպանվել):

Խնդրում է, որ «Օջախի» պատմության պատճենն ուղարկի: Բովանդակությունն՝ ըստ Ա. Նազարեթյանին ուղղած նույն օրվա նամակի:

ԵԼԺ 9, 189, 567:

Մայիսի 30.- 2. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Հայտնում է, որ մեծ ուշադրությամբ հետևում է «Մշակի» և Հրատարակչական ընկերության դեմ բանաստեղծի և Աղայանի վարած բանակռիվներին: Ինքն էլ այն կարծիքին է, որ Հրատարակչական ընկերությունը անիրավացի է վարվել Շիրվանզադեի հետ, ուստի Թումանյանի և Աղայանի միջամտությունը տեղին է:

«Новое обозрение» No 4456-ում կարդացել է Մինաս Բերբերյանի քննադատական ակնարկը (տե՛ս 1896, դեկտեմբերի 18): Համակարծիք է հոդվածագրին՝ այն տարբերությամբ, որ ինքը Թումանյանին համարում է և՛ լիրիկ, և՛ էպիկական բանաստեղծ, իսկ Բերբերյանը՝ միայն էպիկ:

Նույն լրագրում (տե՛ս մայիսի 13) կարդացել է «Накануне» գեղեցիկ պատկերը և հիացել:

Մինչև հունիսի 20-ը կաշխատի լինել Թիֆլիսում և մեծ ցանկություն ունի հանդիպելու բանաստեղծին:

ԳԱԹ ԹՖ, 2192:

Մայիսի 30, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Նազարեթյանին:

Կրկնում է իր միջնորդությունը՝ Կ. Գալֆայանին օգնելու մասին (տե՛ս <ապրիլ-մայիս>): Ներկայացնելով Աղայանի նյութական վատ վիճակը՝ հիշեցնում է նրան, ինչպես և իրեն ու Շիրվանզադեին դրամական օգնություն ցույց տալու ընկերության խոստումը:

Խնդրում է հիշեցնել Սահակ Մատինյանին, որ ուղարկի «Օջախի» պատմության պատճենը:

ԵԼԺ 9, 189-191, 566-567:

<*Մայիս*>. – Կ. Գալֆայանի նամակը Թումանյանին՝ Փարիզից (չի պահպանվել):

Հայտնում է, թե Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությունը մերժել է իրեն նյութական օգնություն ցույց տալ՝ պատճառաբանելով, թե իրավունք չունի իր «գործունեությունը Ռուսաստանի սահմաններից դուրս տարածելու»:

ԵԼԺ 9, 189-190, 566:

Մայիս. – Գրառում թիվ 7(1) ծոցատետրում: Բանաստեղծը գրում է.

«Երեկ Աղայանցի մոտ էի: Ինձ մոտ տեսել էր «Психология народов» և առել կարդացել: Մենակ նստած էր յուր սենյակում, դուռը փակած:

- Ի՞նչ ես անում մենակ,- հարցրի ես:

- Ուզում եմ տիեզերական օրենքը գտնել:

- Ի՞նչ օրենք:

- Մի այնպիսի օրենք, որից ծագում են բոլոր օրենքները:

Օրինակ՝ աշխարհքում ամեն բան ծագում է հավասարության: Լեռները ցածրանում են, դաշտերը բարձրանում և այլն:

- Արի՛ գտնենք:

Սկսեցինք խոսել, վիճել: Մյուս սենյակից երեխան եկավ: Բարկացավ, դուրս արավ: Կինը եկավ, դուրս արավ: Աղջկերքը ասում են՝ ախր փող տուր, գնում ենք առուտուր ամենք (բաժինքի համար):

- Մենք բան ունենք, խանգարիլ միք, գնացեք, դուռը փակեցեք: Էլ փողն ո՞վ կտա, դասից էլ պրծանք:

- Ինչպե՞ս թե դասից պրծար:

- Բաս, այս օրվանից էլ դաս չունեն: Միհրանյանցի երեխաներին էլ դաս չեն տալու: Ինչպես երևում է՝ գործը վատ է գնում: Վերջապես դու ասում ես աշխարհը, բնությունը հավասարության չի ծագում...»:

ՈՒՅ 5, 247(71):

Հունիսի 17. – Գրառում թիվ 7(1) ծոցատետրում:

«Երեկոյան ժամը 7-ին Օրթաճալից ես ու Սանդրոն ճանապարհ դրինք Աղայանցին դեպի գյուղ (կամ Բելի-Կյուլ):

- Այսուհետև էլ ո՛չ գրականություն, ո՛չ բանաստեղծություն, հերիք էր, ինչ օրեր որ քաջեցի, հիմի ես ձեր առաջ մին էլ երդվում եմ, որ պետք է հարստանամ:

Ու նստեց ֆուրգոն»:

ՈՒՅ 5, 247, (73):

Հուլիսի 6. – Գրառում թիվ 8(3) ծոցատետրում:

«Առավոտյան ժ. 7-ին ընտանիքով Թիֆլիսից դուրս եկանք Լոռի»:

ՈՒՅ 5, 251, (2):

Հուլիսի 21. – Ա. Մարկոսյանի նամակ-բացիկը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Հայտնում է իր անկեղծ սերը բանաստեղծի նկատմամբ: Խնդրում է անհապաղ տեղեկություն հաղորդել առողջական վիճակի մասին: Բարևներ է հղում Գալֆայանից, որ խնդրում է իրեն նամակ գրել:

ԳԱԹ ԹՖ, 1676:

Հուլիսի 23, Ղսեղ. – Ստանում է Ա. Մարկոսյանի՝ հուլիսի 21-ի նամակ-բացիկը:

ԳԱԹ ԹՖ, 1676:

Հուլիսի 25, Ղսեղ. – Ստանում է Ն. Բախչինյանի նամակը Ջալալօղլուց:

Լսել է, որ բանաստեղծը Ղսեղում է: Հրավիրում է իրենց մոտ ընտանիքով կամ առանձին, ինչպես կամենա. շատ կարևոր խոսակցություն ունի հետը:

ԳԱԹ ԹՖ, 1017:

<Հուլիս>. – Թումանյանը և Աղայանը, գտնվելով նյութական ծանր կացության մեջ, ստանում են Բաքվի մարդասիրական ընկերության ուղարկած 300-ական ռուբլիները (տե՛ս մարտի 21):

ԵԼԺ 9, 566:

Օգոստոսի 19, Ղսեղ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Գրում է. «Գալուս օրից մի քանի օր անց դողով (лихорадка) բռնվեցի ու մինչև օրս սաստիկ տանջվեցի: Բոլորովին բանից ընկել, թեփ եմ դարձել: Նոր եմ անկողնից վեր կացել. այս նամակը գրելիս էլ աչքերս շաղվում են, շուտ-շուտ գլուխս պտտվում է: Մի քիչ կազդուրվեմ, մտադիր եմ լեռները բարձրանալ: Ես որ նամակ չեմ գրել, տեսնում ես, թե ինչ է եղել պատճառը, իսկ դու չեի՞ր կարող մի երկու տող գրել, թե՞ հասցես չգիտեիր»:

ԵԼԺ 9, 191, 567:

Օգոստոսի 21, Դսեղ. – Նամակ Թիֆլիս՝ Ա. Մարկոսյանին (չի պահպանվել):

Գրում է իր հիվանդության մասին
ԳԱԹ ԹՖ, թիվ 1678:

<Օգոստոս>, Դսեղ. – Մովսես Արագու առաջին հանդիպումը և ծանոթությունը Թումանյանի հետ:

Արագին հիշում է. «Բանաստեղծը մեզ ընդունեց շատ սիրալիր, այն բացառիկ քնքշությամբ, որն այնպես տպավորվում է պատանիների սրտում: ... Ներս հրավիրեց իր առանձնասենյակը, որ գտնվում էր տան ծախս կողմի ծայրին: <...> Նկատելով գրադարակի վրա շարած Գրանտի հանրագիտարանի հատորները, <...> մենք վերցրինք հատորներն ու սկսեցինք թերթել:

– Էս հանրագիտարանն ինձ բավականին պետք է գալիս, – ասաց Թումանյանը, – երբեմն գյուղացիք խորհուրդ են հարցնում զանազան օրենքների մասին, ես էլ նրանց օգնության եմ հասնում, նայում հանրագիտարանը, բացատրում, երբեմն էլ հիվանդությունների մասին եմ տեղեկություններ տալիս: <...>

Նա շատ դժգոհ էր իր վերջին տարիների կյանքից և ասում էր, որ գրողը պետք է լուրջ աշխատի, որպեսզի կարողանա տիրապետել իր արվեստին:

– Մի ժամանակ ինչ անմիտ կյանք էինք վարում. օր չէր անցնում, որ մի տեղ երեկույթի, ընթրիքի, քեֆի չգնայինք... Գիշերը ցերեկ էինք դարձրել, ցերեկը՝ գիշեր... Օրերն անցնում էին երազի նման, ետևից թողնելով մի կսկիծ՝ թե ժամանակն անցավ, ու տակին էլ բան չմնաց... <...>

Երեկոյան համեստ ընթրիքից հետո մենք պառկեցինք դուրսը՝ պատշգամբում ու երկար շարունակում էինք գրույցը:

Լուսնյակ գիշերն ավելի էր տրամադրում Թումանյանին: Նա պատմում էր իր որսորդական դեպքերից, խոսում էր գյուղացիների մասին: Հիշողությանս մեջ մնացել է նրա վերաբերմունքը դեպի բնության գեղեցկությունները, նրա հյութեղ նկարագրությունները: Նա ասում էր, որ առանձնապես մի «սրբազան» վերաբերմունք ունի դեպի արևածագը: Նրա ասե-

լով՝ դրանից ավելի վեհ ու սքանչելի տեսարան չկա բնության մեջ, մանավանդ անտառապատ լեռներում: Համեմատություն անելով ծովի հետ՝ նա ավելի գեղեցիկ էր համարում լեռները, անտառները»:

ԹԺՀ, 521-527:

<Օգոստոս>, Դսեղ. – Գրում է «Եղջերուի մահը» պատմվածքը:

Արագին հիշում է. «Երբ մենք հարցրինք, թե ինչ նոր բան է գրել, նա վերցրեց սեղանի վրայից նոր վերջացրած մի ձեռագիր՝ իրեն հատուկ խոշոր տառերով գրած: Զիջելով մեր խնդրանքին, Թումանյանն սկսեց կարդալ մի փոքրիկ պատմվածք, ավելի ճիշտ՝ արձակ բանաստեղծություն՝ «Եղջերուի մահը» վերնագրով»:

ԹԺՀ, 523:

Սեպտեմբերի 3, Դսեղ. – Նամակ - երկտող Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

«Նամակս շատ վաղուց է գրած (տե՛ս օգոստոսի 19), փոստի կայարանը հեռու է, տանող չեղավ. ես էլ կրկին հիվանդացա, հիմա էլ հիվանդ եմ: Կրկին ու կրկին բարևում եմ և համբուրում»:
ԵԼԺ 9, 192:

Սեպտեմբերի 11. – Ա. Մարկոսյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Հետաքրքրվում է բանաստեղծի առողջությամբ: Հայտնում է իր հատուկ համակրանքը նրա նկատմամբ: Անդրադառնում է անձնական բնույթի ինչ-ինչ հարցերի: Հաղորդում է Կ. Գալֆայանի բարևները, վերջինիս Փարիզի հասցեն: Խնդրում է առանց ուշացման նամակ գրել, հատկապես՝ գյուղական կյանքի տպավորությունները:

ԳԱԹ ԹՖ, 1678

Սեպտեմբերի 20. – Մ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Իմացել է, որ բանաստեղծը գյուղում հիվանդացել է և հետաքրքրվում է նրա առողջությամբ: Խորհուրդ է տալիս վերա-

դառնալ Թիֆլիս՝ լրիվ ապաքինվելու համար: Եամակի վերջում՝ Փիլ. Վարդազարյանի կատակային երկտողը. նույնպես անհանգիստ է ընկերոջ առողջության համար:

ԳԱԹ ԹՖ, 2036:

<Սեպտեմբեր>.- Բանաստեղծը ստանում է Մ. Վարդազարյանի անթվակիր նամակը՝ ի պատասխան իր՝ օգոստոսի 19-ի նամակի և սեպտեմբերի 3-ի երկտողի:

Մարուսյան գրում է իր՝ բանաստեղծի հայրենի գյուղում լինելու, ջերմով հիվանդանալու մասին. երևում է, որ իրենք էլ նոր են վերադարձել ամառանոցից. ուրեմն սեպտեմբեր է:

ԳԱԹ ԹՖ, 1006. ԹՏԹ, 1368:

Հոկտեմբերի 17. – Ա. Մարկոսյանի նամակ-երկտողը Թումանյանին:

Խնդրում է իր նամակը հանձնել Սահակին և ուղարկել Չոպանյանի «Ծաղիկի» համարները, որքան որ ունի. շուտ կվերադարձնի:

ԳԱԹ ԹՖ, 1679:

Հոկտեմբերի 31. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին:

Ստացել է բանաստեղծի նամակները, բայց առայժմ պատասխանելու ժամանակը չէ: Խնդրում է գտնել և ուղարկել իր համագյուղացիներից մեկի ծննդյան վկայականը՝ զինվորագրությունից ազատելու համար: Մի քանի օրից կլինի Թիֆլիսում և մանրամասն կպատմի իր մասին:

ԳԱԹ ԹՖ, 816:

Նոյեմբերի 6. – Գր. Բալասանյանի (Բալասյան) նամակ-բացիկը Թումանյանին՝ Շուլավերից:

Տեղեկություններ է հայտնում Ղ. Աղայանի մասին: Խնդրում է «Բանաստեղծություններից»: Ողջույններ է ուղարկում Շիրվանզադեին, Աղբալյանին:

ԳԱԹ ԹՖ, 1010:

<Աշուն>, Թիֆլիս. – Ա. Ղլտճյանի համար կարդում է «Հառաչանք» պոեմը:

Ա. Ղլտճյանը հիշում է. «1894 թ. սեպտեմբերին նա ինձ կարդաց մի քանի հատվածներ, որոնք հետո իրար հետ պիտի կցվեին լրացուցիչ պատկերներով... Այդ պոեման 1896 թ. համարյա վերջացած էր, քանի որ 1897 տարվա աշնանը Թիֆլիսում եղած ժամանակ Օվանեսը կարդաց այն: Մնում էին միայն մի քանի շտրիխներ անել՝ ամբողջ շաղախը միացնելու և ամբողջացնելու համար»:

ԵԼԺ 3, 509-510:

Դեկտեմբերի 14, Թիֆլիս. – Գրում է «Տպավորություններ» («Հա՛, կյանքումս ես միշտ այսպես եմ եղել») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 158, 591:

<Մինչև դեկտեմբեր>, Թիֆլիս. – Տեղափոխվում են Ռտիշչևսկայա փողոց՝ Սվեշնիկովի տունը:

Օ. Թումանյանը հիշում է. «1897 թվականին փոխադրվեցինք Ռտիշչևսկայա փողոց Սվեշնիկովի տունը: Այստեղ սենյակների դասավորությունը շատ անհարմար էր: Օհանեսն առանձին սենյակ չուներ, և դա նրան շատ էր ջղայնացնում: Այդ պատճառով շատ անախորժ խոսակցություններ էին ծագում մորս և Օհանեսի միջև: Մինչ այդ, երբ մենք ապրում էինք մորս՝ Շուշանիկի, և տեր Հովհաննեսի հետ միասին, նրանք մեզ շատ էին օգնում տան բոլոր հոգսերում, թե՛ նյութապես, թե՛ երեխաներին խնամելով: Բայց Սվեշնիկովի տանը ծագած անախորժությունների պատճառով ստիպված եղանք բաժանվել»:

ԹԺՅ, 338:

Դեկտեմբերի 17, Թիֆլիս. – Գրում է «Հայի զարմանքը» («Մեր բեմի ծիծաղ, քսանհինգ տարի...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 160, 591:

Դեկտեմբերի 17. – Թիֆլիսի Ազնվականական թատրոնում դերասան Գ. Տեր-Դավթյանի բեմական գործունեության քսանհինգամյակին նվիրված հոբելյանական հանդեսին կարդացվում է «Հայի զարմանքը» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 160, 591-592:

Դեկտեմբերի 21. - Տպագրվում է («Տարագ», 1897, թիվ 49, էջ 789) «Հայի զարմանքը» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 160, 592:

<Դեկտեմբեր>, Թիֆլիս. - Երեքսենյականոց բնակարան են վարձում Ելիզավետյան փողոցում:

Օ. Թումանյանը հիշում է. «Մենք 1897 թ. դեկտեմբերին երեք սենյականոց բնակարան վարձեցինք Ելիզավետյան փողոցում, իսկ մայրս փոխադրվեց Բեհբության փողոցի No 50 տունը: Մուշեղը և Աշխենը մնացին մորս մոտ, որովհետև նրանք հաճախում էին Տեր-Հովսեփյանի պանսիոնը (Բեհբության փողոցում) (տե՛ս մարտի 24)»:

ԹԺՀ, 338:

<1897, դեկտեմբեր>, Թիֆլիս. - Գրում է «Հայի տրտունջը» («Ձարմանք բան է մեր բախտն, ախպեր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 162, 592:

1897. - Առաջին անգամ տպագրվում է («Արաքս» գրական - գեղարվեստական պատկերազարդ հանդես, երկրորդ գիրք, էջ 47-49) «Բարձրաքաշ ս. Գրիգորի վանքը» հոդվածը՝ «Տեղացի» ստորագրությամբ:^{*}

* Որ հոդվածի հեղինակը Թումանյանն է, ապացուցել է Ա. Ինճիկյանը (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, թիվ 2, էջ 161-163):

ԵԼԺ 6, 93, 575:

1897. - Գրում է «Արտիս խոստումը» («Դաշնակառար պոետն երբոր...») բանաստեղծությունը՝ Մարիամ Վարդազարյանի ալբոմում:

ԵԼԺ 1, 362, 654:

1897. - Գրում է «Երկար գիշերներ» («Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 164, 592:

1898

Հունվարի 1, Թիֆլիս. - Գրում է «1 հունվարի» («Շնորհավոր Նոր տարի...») բանաստեղծությունը:

Ձեռագիրը՝ Ս. Վարդազարյանի ալբոմում՝ 98 թվագրությամբ:

ԵԼԺ 1, 363, 654:

Հունվարի 1, Թիֆլիս. - Գրում է «1898 հունվարի 1» քառատողը:

Եկավ նոր տարին - փոխվեցավ հինը,

Արդյոք կըփոխվի նաև իմ կինը

Թե ոչ նոր տարին և ոչ նոր տեղը

Չեն փոխում հոգին կամ թե ուղեղը:

ԳԱԹ ՓՎՖ, թիվ 413:

Հունվարի 1. - Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», թիվ 1, էջ 8) «Հայի տրտունջը» («Ձարմանք բան է մեր բախտն, ախպեր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 162-163, 592:

Հունվարի 5. - Կանխազգում է հոր մահը:

Ն. Թումանյանը հիշում է բանաստեղծի պատմածը. «Պարզ զգացել եմ հորս մահը: 1898 թվականն էր՝ ջրօրհների երեկոն, Թամանշյանների տանը ընթրիքին հանկարծ թվաց, թե հայրս մեռավ: Տրամադրությունս վատացավ, տխրեցի, հյուրերը նկատեցին, հանգստացրին, բայց ոչինչ չօգնեց: Եկա տուն: Երեք օր հետո մարդ է գալի գյուղից՝ թե հայրդ ջրօրհների գիշերը մեռել է (հունվարի 5-ին)»:

ՆԹ ՀԶ, 195-196:

Հունվարի 5. - Վախճանվում է Թումանյանի հայրը՝ տեր Թադևոսը:

ԵԼԺ, 9, 567:

Հունվարի 8. - Բանաստեղծը գնում է Դսեղ հոր մահվան առիթով:

Վրեն Տաշրացին հիշում է. «1898 թ. հունվար ամիսն էր, երբ վախճանվեց բանաստեղծի հայրը՝ տեր Թադևոս քահանան: Թադևոսն եկել էին Լոռու ամեն կողմերից:

Հեռագրել էինք Թումանյանին: Թիֆլիսից եկավ բանաստեղծը հենց թաղման ժամանակ: Նա իրեն շատ մխիթարված զգաց, երբ տեսավ այնքան մեծ բազմություն հավաքված և ի միջի այլոց ասաց հետևյալը.

– Բարեկամներ, ես մինչև հիմա էն կարծիքին էի, որ մեռելի վրա հավաքվելն ավելորդ է: Բայց հիմա տեսնում եմ, որ այդ կարծիքն անհիմն է: Թվում է, թե շրջապատված էսքան սրտակիցներով ու վշտակիցներով, թեթևանում ու մեղմանում է իմ վիշտը, որ ես կրում եմ իմ հոր կորուստով: Ուրեմն, հնուց մնացած էս սովորությունն իր խոր ու փիլիսոփայական իմաստն ունի»:

ԹԺՅ, 310:

Հունվարի 10. – Միհրան Բաղդասարյանի նամակը Թումանյանին՝ Ուզունլարից:

«Անկեղծ սրտով» վշտակցում է բանաստեղծին՝ հոր մահվան կապակցությամբ:

ԳԱԹ ԹՖ, 1020 (276 լր.):

«Հունվարի երկրորդ կես». – Այցելում է Թիֆլիսի առաջնորդարան՝ Խրիմյան Հայրիկին:

Խոսում են գրականության ու հայ գրողների մասին: Հայրիկն ասում է. «Գրականություն դադարեր է, խեղճ գրողներ ինչպես գրեն, չգիտեն ասարուստի մասին մտածեն, թե գրվածքին մասին»:

ԵԼԺ 9, 194, 568:

Հունվարի 14. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին:

Հետաքրքրվում է «ճիշտ իրան աքսորու՞մ եմ, թե չէ»:

ԵԼԺ 9, 194:

Հունվարի 21. – Ա. Ջարգարյանի նամակը Թումանյանին: Ուրախ է, որ Թումանյանի ընտանիքը ցանկանում է տեղափոխվել հայրենի գյուղ:

ԳԱԹ ԹՖ, 175 (623):

Հունվարի 27. – Ծնվում է բանաստեղծի վեցերորդ երեխան: Անուշ Թումանյանը:

ԵԼԺ 9, 193, 567:

«Մինչև փետրվարի 22-ը», Թիֆլիս. – Փ. Վարդազարյանի, ինժեներ Յ. Քաջազունու, բժիշկ Վ. Արծրունու, փաստաբան Բաբաջանյանի, իշխանուհի Մ. Թումանյանի, բժիշկ Ջարգարյանի և Տ. Հովհաննիսյանի մասնակցությամբ կազմում են «մի գրական շրջան»:^{*}

^{*} Այդ գրական շրջանը, ինչպես նաև մեկ տարի առաջ կազմակերպվածը (տե՛ս 1897, հունվար) երկար չեն գոյատևել, բայց հիմք են հանդիսացել ապագա «Հինգշաբթիների» և «Վերնատան» համար:

ԵԼԺ, 194–195, 568:

Փետրվարի 22, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Նազարեթյանին:

Գրում է իր նյութական ծանր վիճակի մասին: Խնդրում է ժամանակին ուղարկել Բաքվի Մարդասիրական ընկերության կողմից նշանակված զումարը՝ պարտքերը վճարելու համար:

ԵԼԺ 9, 193-194:

«Փետրվարի 22-ից հետո». – Սկսվում են իշխանուհի Մ. Թումանյանի տանը ամեն հինգշաբթի տեղի ունեցող երեկոները, որոնք ուղղակի «Հինգշաբթիներ» էին կոչվում:

Այդ երեկոներին մշտապես ներկա էին իշխանուհին, Հովհ. Թումանյանը, Փ. Վարդազարյանը և Ա. Ջարգարյանը: Երբեմն մասնակցում էին Աղայանը, Շիրվանզադեն, Շանթը, Դեմիրճյանը և գրական-հասարակական այլ գործիչներ: Թումանյանը եղել է «Հինգշաբթիների» կենտրոնական դեմքը: Երեկոների մասնակիցներին զբաղեցնում էին հիմնականում մշակութային-հասարակական հարցեր:

ԵԼԺ 9, 568. ԱԻ, 412-414:

«Փետրվարի վերջ». – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին Աղստաֆայից:

Գրում է, որ ո՛չ աշխատանք ունի, ո՛չ էլ հույս: Օգնություն է խնդրել Բաքվի ծանոթներից: Նույն հարցով դիմում է նաև Թումանյանին:

ԳԱԹ ԹՖ, 919 (247ա, լր.):

Մարտի 9, Թիֆլիս. – Նամակ Փ. Վարդազարյանին:

Խնդրում է բանկի պարտամուրհակը «դարձյալ երկու շաբաթով» հետաձգելու մասին, մինչև տեղ հասնի Բաքվի Մարդասիրական ընկերությունից ստանալիք գումարը:
ԵԼԺ 9, 195:

Մարտի 6. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Աղստաֆայից:

Խնդրում է օգնել իրեն՝ Բաքվում աշխատանքի տեղավորվելու:

ԳԱԹ ԹՖ, 920 (247ա, լր.):

Մարտի 9. – Ա. Առաքելյանի նամակը Թումանյանին՝ Աղստաֆայից:

Խնդրում է Թումանյանի միջամտությունը Ստեփան Սուլխանյանին՝ Գանձակում «Նադեժդա» ընկերության գործակալի թափուր տեղում աշխատանքի անցնելու համար, մինչև Բաքվից աշխատանքի հարցով լուր ստանալը:

ԳԱԹ ԹՖ, 921 (247ա, լր.):

Մարտի 14. – Տպագրվում է («Տարագ», 1898, թիվ 14 «Տրտմության սաղմոսների» Բ մասը («Աստված, ինչպես ծուխ օրերըս անցան...»):

ԵԼԺ 1, 166, 593:

Մարտի 18, Թիֆլիս. – Նամակ Մ. Թումանյանին (չի պահպանվել):

Հետաքրքրվում է նրա հիվանդ երեխայի առողջական վիճակով և «Մշակում» տպագրված ինչ-որ հոդվածով:

ԳԱԹ ԹՖ, 1241 (656):

Մարտի 18. – Մ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին:

Նամակի հետ ուղարկում է իր երկու գրվածքը և խնդրում խմբագրել ու հանձնել «Տարագին»՝ տպագրելու: Գրում է. «Հարցնում եք «Մշակի» հոդվածի մասին, շատ բան ունեմ ասե-

լու, հետո կխոսենք. ես սպասում էի այդպիսի բանի. «Մշակը» չպետք է տպեր, բայց այստեղ խառն է Առաքելյանը»:

ԳԱԹ ԹՖ, 1241 (656):

Մարտի 28, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Մարդասիրական ընկերության գրասենյակ՝ Աստվածատուր Գալստյանին:
Խնդրում է ուղարկել իր և Ղ. Աղայանի թոշակները:
ԵԼԺ 9, 195, 569:

Ապրիլի 2. – Ատրպետի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:
Խնդրում է Թումանյանի մոտ եղած իր երկու գործերը հանձնել գրությունը ներկայացնողին:
ԳԱԹ ԹՖ, 968 (258 լր.):

Ապրիլի 14. – Բաքվի Մարդասիրական ընկերությունից ստանում է իրեն հատկացված նպաստը*:

* Պահպանվել է ստացականը (ԹԹ, թիվ 967ա):

ԵԼԺ 9, 568:

Ապրիլի 30. – Մ. Խոջայանի նամակը Թումանյանին՝ Գանձակից:

Խնդրում է տեղեկություն հայտնել աներոջ (Աղայանի) գործի վերաբերյալ, քանի որ նրանից նամակ չեն ստանում: Իր և Հռիփսիմեի անունից շնորհակալություն է հայտնում Թումանյանին՝ շնորհավորական հեռագրի համար:

ԳԱԹ ԹՖ, 1403 (233 լր.):

<Ապրիլ>. – Թումանյանի տանը մոտ մեկ ամիս ապրում է Ղ. Աղայանը Նոր Նախիջևան աքսորվելուց առաջ:
ՆԹՀԶ, 13:

Մայիսի 1. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», թիվ 9, էջ 153) «Երկար գիշերներ» («Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 164, 592:

Մայիսի 18. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նախիջևանից:

Հայտնում է, որ ծովային ճամփորդությունը հրաշալի է եղել: Ուղարկում է իր նոր հասցեն:
ԹԹ, թիվ 914:

Մայիսի 20. – Ա. Ա. Ծոցիկյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:
Խնդրում է իր «Վեհ. Հայրիկը Բաքվում» գործը ներկայացնել գրաքննությանը և արտոնագրի հետ ուղարկել իրեն:
ԳԱԹ ԹՖ, 1414 (355 լր.):

Մայիսի 22, Թիֆլիս. – Գրում է «Մոռացված վարդեր» («Ձեր վարդերը թողիք մեզ մոտ...») ոտանավորը:
Ուղղված է Փիլ. Վարդապարտյանի քրոջը՝ Մարիամին (Մարուսյա):*

* Մարիամ Վարդապարտյանը Թումանյանի տուն այցելած մի օր գրողից նվեր է ստանում վարդերի մի փունջ: Գնալիս աղջիկը մոռանում է վերցնել այն իր հետ: Հետևյալ օրը բանաստեղծը նրան է ուղարկում մոռացված փունջը այս ոտանավորի հետ:
ԵԼԺ 1, 168, 594:

<Գարուն>. – Աքսորի ճանապարհին Ավ. Իսահակյանը կանգ է առնում Թիֆլիսում և հյուրընկալվում Թումանյանի մոտ:
Երեկոյան բանաստեղծը կարդում է «Դեպի Անհունը» պոեմը: Իսահակյանը հիշում է, թե ինչպես հուզված երևակայությամբ գիշերը անհեթեթ երազներ է տեսնում: Երբ առավոտյան այդ մասին պատմում է բանաստեղծին, վերջինս ասում է. «Սա լավ նշան է, որ պոեմն ազդեցություն է թողնում, բայց իմ պոեզիայի ոճին չի բռնում: Խորթ զավակ է այս պոեմն ինձ համար, նյութն էլ, գրելածն էլ: Բայց թող լինի, իմանան, որ ֆուլկլորից դուրս էլ կարող եմ բան գրել»:
ԹԺՀ, 10, 906:

Հունիսի 4, Թիֆլիս. – Նամակ Ախալքալաք՝ Ջալալ Տեր-Գրիգորյանին (չի պահպանվել):
Շնորհավորում է վերջինիս նշանվելը, հայտնում է իր հոր մահվան, զոքանչից բաժանվելու, հիվանդ լինելու մասին:
ԳԱԹ ԹՖ, 2193 (1146):

<Հունիսի կեսեր>. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նախիջևանից:

Պատմում է քաղաքի ներքին կյանքի մասին: Հույս ունի Բարբարե Քանանյանից մի գումար ստանալ և դրանով թոշակի նման մի բան նշանակել տալ բանաստեղծի համար: Հորդորում է չհուսահատվել:
ԳԱԹ ԹՖ, 823 (479ա):

Հուլիսի 1. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Կիսլովոսկից:

Գրում է, որ Թումանյանից երկար ժամանակ լուր չունի. նրա մասին լսում է ուրիշներից: Ցավում է, որ բանաստեղծը հիվանդացել է. լսել է Ղազարոսից: Իր մասին բավական հետաքրքիր նյութեր ունի. մտադիր է դրանք ուղարկել Թումանյանին: Տեղեկացնում է իր հետագա անելիքների մասին:
ԳԱԹ ԹՖ, 1575 (381/10 լր.):

Հունիսի 15. – Ջալալ Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Անհանգստություն է հայտնում բանաստեղծի հիվանդության համար և ցավակցություն՝ հոր մահվան առթիվ: Հրավիրում է Ախալքալաք՝ ընտանիքով ամռանը հանգստանալու և իր հարսանիքի խաչեղբայրը լինելու:
ԳԱԹ ԹՖ, 2193 (1146):

Հուլիսի 5. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», թիվ 26, էջ 153) «Հայի ցավը» («Հայը թեև շատ ցավ ունի...» բանաստեղծությունը՝ «Նվեր մշակին» ենթավերնագրով:
ԵԼԺ 1, 169, 594-595:

Հուլիսի 12. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», 1898, թիվ 27, էջ 505-506) «Գրական «մագանդա»» («Այսքան երազ, որ մենք հայերս...») երգիծական բանաստեղծությունը՝ «Նվեր իմ բարեկամ Ղ. Աղայանցին» ենթավերնագրով:
ԵԼԺ 1, 171, 595:

<Հուլիսի կեսեր>, Թիֆլիս. – Նամակ Կիսլովոսկի՝ Ա. Ղլտճյանին:

Հայտնում է աներոջ տնից հեռանալու հետ կապված անախորժությունների, իրենց պապական հողերը կորցնելու, հոր մահվան հետևանքով իր հոգեկան ծանր կացության մասին: Դժգոհում է հատկապես նյութական դժվարություններից. «Ճշմարիտ որ դժվար բան է, հարցնելու բան է, երբ որ մի մարդ զուրկ նյութական կարողությունից, զուրկ ուսումից, զուրկ կյանքի մեջ գործ կատարելու ընդունակություններից և պատրաստություններից, ըստ ամենայնի տհաս ու անպատրաստ, դեռ պատանեկան հասակից ծանրաբեռնվում է մեծ ընտանիքի հոգսերով ու գրական պարապմունքներով: Ճշմարիտ որ բավական դիմացկուն պետք է լինի հոգին, այն հոգին, որ յուր մեջ կրում է գրական կոչման ավյունն ու ձգտումը, որ կարողանա դիմանալ այս երկու իրար ճնշող, իրար մեռցնող ազդեցությունների՝ ընտանեկան հոգսերի տառապանքին և գրական ձգտումների հուզմունքին, որոնք միասին, միաժամանակ և անդադար մաքառում են անվերջ»: Վերջում գրում է Շուլավեր գնալու մտադրության մասին:*

* Նամակն ընդհատվել է և շարունակվել մի շաբաթ հետո:
ԵԼԺ 9, 196-200, 569 – 570:

Հուլիսի 29. – Տպագրվում է («Новое обозрение», 1898, թիվ 5004) «Тифлисский уезд, 25-го июля» հոդվածը՝ «Т» ստորագրությամբ:

Բորչալուի ճանապարհներին և բնակավայրերում շահատակություններ անող ավազակախմբերի արարքները նկարագրող թղթակցություններից առաջինն է:

ԵԼԺ 6, 97-98, 575:

Հուլիսի 29. – Ա. Դևոյանի նամակը Թումանյանին՝ Կիսլովոդսկից:

Պատրաստակամություն է հայտնում՝ ապահովելու Թումանյանի զավակների կրթության ծախսը: Խնդրում է իրեն ուղարկել տարեկան ծախսի չափը:

ԳԱԹ ԹՖ, 1576 (320):

<Հուլիսի երրորդ, օգոստոսի առաջին տասնօրյակներ>.

– Երկու նամակ Փիլ. Վարդապարյանին (չեն պահպանվել):
ԵԼԺ 9, 200, 571:

<Հուլիսի վերջ>. – Գնում է Շուլավեր և մնում մինչև սեպտեմբերի վերջը:

Շուլավերից թղթակցություններ է ուղարկում Թիֆլիսի «Новое обозрение» թերթին՝ Բորչալուի գավառի ավազակների շահատակությունների մասին:

ԵԼԺ 9, 201:

Օգոստոսի 13. – Տպագրվում է («Новое обозрение», 1898, թիվ 5018) Բորչալուի գավառում գործող ավազակախմբերին վերաբերող շարքի (տե՛ս հուլիսի 29) հերթական թղթակցությունը՝ «Нам сообщают» վերնագրով:*

* Այս և հետագա թղթակցություններն այս թեմայով անստորագիր են:

ԵԼԺ 6, 98, 577:

Օգոստոսի 14. – Տպագրվում է («Новое обозрение», 1898, թիվ 5019) հիշյալ շարքի նոր թղթակցությունը՝ «В дополнение ко вчерашнему» վերնագրով:

ԵԼԺ 6, 99, 577-578:

Օգոստոսի 14-16, Շուլավեր. – Նամակ Թիֆլիսի՝ Փիլիպոս Վարդապարյանին:

Տեղեկացնում է Շուլավերում անցկացրած իր «լավ» օրերի մասին. «Քեֆեր ենք անում, կոնցերտներ ենք տալիս, ոտանավորներ ենք գրում և, վերջապես, ավազակների մասին լուրեր են դրկում «Новое обозрение»-ին»:

ԵԼԺ 9, 201, 571:

Օգոստոսի 16, Շուլավեր. – Գրում է «Պաշտոնու տրտունջը» երգիծական ոտանավորը՝ շուլավերցիների կազմակերպած ինչ-որ ներկայացման ժամանակ կարդալու համար (չի պահպանվել):*

* Ոտանավորը մեծ աղմուկ է հանում, և ներկայացման կազմակերպիչները հրաժարվում են կարդալուց. «Սպառնալիքն այնքան մեծ եղավ, որ երիտասարդները պատրաստած ոտանավորը հանեցին ցուցակից, վախենալով, որ ինձ հետ անախորժություն պատահի, ինչպես

նամակներով ու պատգամավորների բերանով սպառնում էին» (տե՛ս օգոստոսի 17, 18-ին Ար. Ջարգարյանին գրած նամակը, ԵԼԺ 9, 201-202):

ԵԼԺ 9, 201:

<Մինչև օգոստոսի 17-18>, Թիֆլիս. – Նամակ Ար. Ջարգարյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 201, 572:

Օգոստոսի 17. – Տպագրվում է («Новое обозрение», 1898, թիվ 5021) հիշյալ շարքի հերթական թղթակցությունը՝ «Дерзкий грабеж близ Аджикенда» խորագրով:

ԵԼԺ 6, 99-102, 578-581:

Օգոստոսի 17-18, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս Արիստակես Ջարգարյանին:

Մասնավորապես գրում է. «Այստեղ կամաց-կամաց էլ պարապում եմ. մի քանի բան եմ գրել, որոնցից երկուսը ժողովրդական բաներ են»: * Գրում է նաև «Պաշտոնու տրտունջը՝ երգիծական ոտանավորի (տե՛ս օգոստոսի 16) հանած աղմուկի մասին. «Այնպես մի աղմուկ, մի խռովություն ընկավ, որ ներկայացման երեկոյան, եթե նայեիր փողոցները, կկարծեիր, թե մի կարևոր բունտ կա գյուղում: Ծիծաղելին այն էր, որ ամբոխն ավելի խիստ էր հուզվել: Սպառնալիքն այնպես մեծ եղավ, որ երիտասարդները պատրաստված ոտանավորը հանեցին ցուցակից, վախեցնալով, որ ինձ հետ անախորժություն պատահի»:

* Նկատի ունի «Պողոս-Պետրոս», «Անհծած հարսը» լեգենդները: ԵԼԺ 9, 202, 572:

Օգոստոսի 20. – Տպագրում է («Новое обозрение», 1898, թիվ 5024) շուլավերյան շարքի հերթական թղթակցությունը՝ «Еще о разбое близ Аджикенда» վերնագրով:

ԵԼԺ 6, 102-104, 581-583:

Օգոստոսի 24. – Ջ. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Հայտնում է, որ իմանալով բանաստեղծի ցանկությունը՝ սեպտեմբերին Ախալքալաք գնալու, հետաձգել է ամուսնությունը, մինչև նրա գալը: Ուզում է իմանալ՝ չի՞ փոխել արդյոք մտադ-

րությունը, որպեսզի նշանակվի հարսանիքի օրը, և բանաստեղծը լինի խաչեղբայր:

ԳԱԹ ԹՖ, 2194 (1147):

Օգոստոսի 27. – Տպագրում է («Новое обозрение», թիվ 5031) հիշյալ շարքից «О преследовании разбойников в казахском уезде» թղթակցությունը:

ԵԼԺ 6, 104-106, 583-584:

Օգոստոսի 29. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Տեղեկացնում է, որ Մոսկվայում է:

ԳԱԹ ԹՖ, 1577 (381/11 լր.):

<Օգոստոսի երրորդ տասնօրյակ>, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Ոգևորված ընկերոջ «մտածած երկու միջոցով», * որոնց նպատակն էր ինչ-որ չափով թեթևացնել բանաստեղծի ընտանիքի նյութական հոգսերը՝ գրում է. «.... բանաստեղծությունն էլ խո պիտի չի, որ ամեն տեղ և ամեն ժամանակ մարդ փչի: Բանաստեղծը միայն խաղաղության մեջ կարող է ամփոփվել, ոգևորվել ու ստեղծագործել, մանավանդ մեծ գործեր, օրինակ պոեմ, դրամա և այլն: Ես այսքան բան որ ունեմ կիսատ պռատ ընկած, նրանից հո չի, որ ուժս չի պատել, այլ նրանից, որ խանգարվել եմ...»:

Պատմում է զավեշտական մի դեպք: Երկար փնտրտուքից հետո վերջապես իմանում է, որ իր ուզած «Հազարան բլբուլ» հեքիաթը կարող է պատմել 90 տարեկան մի ծերունի: Մինչև նրան գտնում է, պարզվում է, որ մի օր առաջ մահացել է. «Ո՞վ գիտի հետն ինչ մտավ հողի տակն ու հավիտյան կորավ»:

* Հավանաբար բանաստեղծին առաջարկվել էր ընտանիքը թողնել Շուլավերում և վերադառնալ Թիֆլիս՝ դրամական ինչ-ինչ խնդիրներ կարգավորելու համար: Խորհուրդ էր տրվում նաև միառժամանակ ապրել գյուղում, եթե բարեկամները կարողանային տարբեր ճանապարհներով 1000 ռուբլու եկամուտ ապահովել բանաստեղծի համար (տե՛ս սեպտեմբերի 21 ԳԱԹ ԹՖ թիվ 1175 (623):

ԵԼԺ 9, 203-204, 572-573:

<Ամառ, Շուկավեր>. – Գրում է «Պողոս-Պետրոս» բալլադը (տե՛ս օգոստոսի 17-18):

ԵԼԺ 2, 112-114, 556:

<Ամառ, Շուկավեր>. – Գրում է «Անիծած հարսը» բալլադը: ԵԼԺ 2, 107-109, 555:

Սեպտեմբերի 3. – Տպագրվում է («Новое обозрение», 1898 թ., թիվ 5037) «Ограбление близ селения Кизил-Аджило» թղթակցությունը:

ԵԼԺ 6, 106-107, 585-586:

Սեպտեմբերի 13. – Ե. Թոփչյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Խմբագրական մասնաժողովի անունից Թումանյանից մեկ-երկու բանաստեղծություն է խնդրում Պետերբուրգի հայ ուսանողության հրատարակելիք ժողովածուի համար:

ԳԱԹ ԹՖ, 1221 (336):

Սեպտեմբերի 19. – Տպագրում է («Новое обозрение», թիվ 5051) «В понедельник 14-го сентября» թղթակցությունը:

ԵԼԺ 6, 107-108, 586-587:

Սեպտեմբերի 21. – Ա. Զարգարյանի նամակը Թումանյանին:

Խորհուրդ է տալիս կամ ընտանիքը թողնել Շուկավերում և գնալ Թիֆլիս՝ նյութական խնդիրները լուծելու, կամ մնալ գյուղում և ծանոթ-բարեկամների ուղարկած նպաստով ապահովել որոշակի գումար (տե՛ս <օգոստոսի երրորդ տասնօրյակ>):

ԳԱԹ, ԹՖ, 1175 (623):

Սեպտեմբերի 24. – Տպագրում է («Новое обозрение», թիվ 5056) «Шулаверы, 18-го сентября» թղթակցությունը:

ԵԼԺ 6, 108-109, 587-588:

Սեպտեմբերի 28-29, Թիֆլիս. – Նամակ Ա. Զարգարյանին:

Տրտնջում է հայ գրողի նյութական անապահովվածությունից: Անհրաժեշտ է համարում հասարակական հոգածու-

թյուն գրողների հանդեպ. «Ինչու չպետք է այդ էլ համարվի մի պաշտոն, որ արժանի է վարձատրության»: Մասնավորապես գրում է. «Մի հոգի, որ ընդունակ է բարձր ներշնչումների, մի սիրտ, որ կարող է հուզվել ուժեղ զգացմունքներով, մի միտք, որ ընդունակ է վերասլաց թռիչքների, վերջապես, մի մարդ, որ բանաստեղծ է, մեղք բան է, որ մատնված լինի չնչին հոգսերի գերության, չնչին, բայց մաշող հոգսերի, որոնք, իբրև խոչընդոտներ, հաղթահարելու փոխանակ՝ բարդվում են օրեցօր՝ հորինելով մի շատ տխուր մաքառում, մի կռիվ, որ իսկի չարժե գոհին – զոհին, որ ի ծննդե նշանակված է եղել բոլորովին այլ խորհրդով»:

Երախտագիտությամբ խոստովանում է, որ իր նյութական հոգսերը թեթևացնելու համար շատ բան են արել իր ընկերներն ու բարեկամները, հատկապես Փիլ. Վարդազարյանը. «Այդ բարեկամությունը իմ գրական հաջողության տեսակետից տվել է յուր արդյունքը և շատ բան է փրկել այն հանգամանքների ճակատից, որ օրհասական խստությամբ ինձ պաշարել էին այն ժամանակ, երբոր նա ինձ մոտեցավ»:

ԵԼԺ 9, 205-206:

<Սեպտեմբեր>, Շուկավեր. – «Տարագի» խմբագրությանն է ուղարկում մի թարգմանություն, որ չի տպագրվում:

ԳԱԹ, ԹՖ, թիվ 1128 (612):

<Չոկտեմբերի 10-14>. – Շուկավերից հեռագիր Նոր Նախիջևան՝ Ղ. Աղայանին (չի պահպանվել):

ՂԱ ԵԺ 4, 557:

Չոկտեմբերի 11. – Հոգևորական Հովսեփի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Ցանկանում է վերականգնել իրենց նամակագրությունը՝ հետազայում իրար հետ կապ պահպանելու համար: Ռոստովում հանդիպել է սրբազանի հետ: Եղել է Բալուդյանի բնակարանում:

ԳԱԹ ԹՖ, 1529 (499/7):

Չոկտեմբերի 16, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Մարդասիրական ընկերության խորհրդին:

Գրում է. «Խոնարհաբար խնդրում եմ հարգո խորհրդիդ,

որ այն թոշակադրամը, որ ես իմ որդու անունով ստանում եմ Մարդասիրական ընկերությունից, առաջիկա տարվանը՝ յուր ժամանակին, երբ որոշված կլինի ուղարկել, այդտեղ հանձնել պ. Արսեն Կրասիլնիկյանին»:

ԵԼԺ 9, 207:

Յոկտեմբերի 16, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Աստվածատուր Գալստյանին:

Գրում է. «Մեծարգո պ. Գալստյան,

Մարդասիրական ընկերության խորհրդին խնդրել եմ, որ առաջիկա տարվա իմ թոշակը յուր ժամանակին բարեհաճի հանձնել պ. Արսեն Կրասիլնիկյանին: Եթե խորհուրդն իմ խնդիրն ընդունի, պ. Կրասիլնիկյանն այժմ ինձ կուղարկի այդ գումարը, որ հետո ինքն այդտեղ ստանա: Միաժամանակ դիմում եմ Ձեզ, խնդրում եմ, որ հաջողացնեք, հավատացած լինելով, որ այդ օգնությունը մեծ կլինի ինձ համար»:

ԵԼԺ 9, 207-208:

Յոկտեմբերի 20. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Տեղեկացնում է, որ Ս. Թումանյանը Ս. Շահագիզի հետ խոսել է բանաստեղծի մասին, լավ տպավորություն է ստացել: Ինքն էլ իր հերթին կաջակցի Երվանդ Շահագիզի միջոցով: Հայտնում է, որ Ս. Բերբերյանի հետ «մի գրական գործ» են սկսել: Թարգմանում է Բելլամիի վեպը, ակնարկում է, որ Թումանյանը դեմ է եղել դրան: Հանդգում է բանաստեղծին ետ կանգնել Ղարաբաղ գնալու որոշումից և մեկնել Եվրոպա՝ նոր տպավորություններ ձեռք բերելու. «Փախիր դեպի Եվրոպա: Ղարաբաղը չի փախչում: Նա մի քանի տարի կմնա քարացած և ինչ որ այժմ ունի, մի քանի տարուց հետո էլ նա ցույց կտա քեզ նույնը»: խնդրում է Թումանյանի միջամտությունը, որ էջմիածնից իր թոշակը ժամանակին ուղարկեն:

ՂԱԵԺ 4, 557-560:

Յոկտեմբերի 22, Թիֆլիս. – Հրավեր է ստանում մասնակցելու հոկտեմբերի 25-ին տեղի ունենալիք «Մուրճի» տասնամյակին նվիրված «հացկերույթին»:

Հրավիրագիրը ի դիմաց մասնաժողովի ստորագրել են Գրիգոր Վարդանյանը և Գևորգ Ղարաբյոզյանը:

ԳԱԹ ԹՖ, 2111 (506 լր.):

Նոյեմբերի 12. – Խորեն Խրիմյանի նամակը Թումանյանին՝ էջմիածնից:

Ի պատասխան Թումանյանի նամակի՝ հայտնում է Սինոդի որոշումը՝ Ղ. Աղայանի կենսաթոշակը շարունակելու մասին: Խնդրում է հատկացված գումարը ստանալուն պես ուղարկել Աղայանին:

ԳԱԹ ԹՖ, 1405 (233 լր.):

Նոյեմբերի 13. – Սահակ Գալֆայանի նամակը Թումանյանին՝ Փարիզից:

Հաղորդում է եղբոր՝ Կարապետ Գալֆայանի դերասանական հաջողությունների մասին: Ուղարկելով վերջինիս հասցեն՝ խնդրում է, որ Թումանյանը արձագանքի նրա նամակներին և ուղարկի իր մոտ մնացած նրա մի քանի լուսանկարները:

ԳԱԹ ԹՖ, թիվ 1078 (288 լր.):

Նոյեմբերի 21. – Ե. Թովչյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Գրում է, որ ուսանողական խմբագրական հանձնաժողովը որոշել է պատրաստվող ժողովածուում (տե՛ս սեպտեմբերի 13) տպագրել միայն ուսանողների գործերը: Ներողություն է խընդրում Թումանյանի բանաստեղծությունները հետ ուղարկելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1222 (336):

Նոյեմբերի 21. – Արիստակես (Ռուստեմ) Ջարգարյանի նամակը Թումանյանին:

Իր ուրախությունն է հայտնում, որ Թումանյանը գնացել է Շուլավեր: Ցանկանում է գումարով օգնել բանաստեղծին:

ԹՏԹ, 1384:

Նոյեմբերի 26. – Գրում է «Այսօրից ահա անում եմ ես ուխտ...» ռոտանավորի առաջին երկու տողը.

Այսօրից ահա անում են ես ուխտ,
Որ այսուհետև չըխաղամ էլ թուղթ:*

* Այս և մյուս երկտողերը գրված են Ս. Վարդապարյանի ալբոմում:
ԵԼԺ 1, 368, 655:

Նոյեմբերի 29. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», 1898, թիվ 46, էջ 1036) «Այն օրից» («Այն օրից, ինչ որ նրան թաղեցին...») բանաստեղծությունը:
Գրված է հոր մահվան առիթով:
ԵԼԺ 1, 173, 595-596:

Աշուն. – Գրում է «Արծիվն ու կաղնին» բալլադը:*

* Ըստ Ն. Թումանյանի վկայության՝ այս ավանդությունը, ինչպես նաև «Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառականները» բանաստեղծին պատմել է նրա մեծ մորեղբայրը «սարից գալիս, ճամփին») տես ԹՄՊ, 1938, էջ 31):
ԵԼԺ 2, 110-11, 555-556:

Դեկտեմբերի 7. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:
Խնդրում է իմանալ, թե ինչու էջմիածնից իրեն հատկացված նպաստը չեն ուղարկում:
ԵԼԺ 9, 575:

Դեկտեմբերի 18. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:
Նեղսրտում է, որ Թումանյանը մանրամասն նամակներ չի գրում իրեն: Դարձյալ հիշեցնում է, որ բանաստեղծը էջմիածնին միջնորդություն անի՝ իր թոշակի համար: Գրում է, որ հիվանդ է. «Երեկ իմ տաքությունը քառասուն աստիճանի հասավ»:
ԳԱԹ ԹՖ, 817 (232 լր.):

Դեկտեմբերի 20. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», 1898, թիվ 49, էջ 1104) «Եղջերուի մահը» պատմվածքը:
ԵԼԺ 5, էջ 58-59, 749:

Դեկտեմբերի 20. – Տպագրվում է («Տարագ», 1898, թիվ 49, էջ 1113-1114) «Տաղանդ և բթամտություն» հոդվածը:

Պաշտպանում է դերասան Կարապետ Գալֆայանին «Մշակի» և «Մուրճի» հարձակումներից:
ԵԼԺ 6, 109-112, 588-589:

Դեկտեմբերի 24, Թիֆլիս. – Գրում է «Այսօրից ահա անում են ես ուխտ...» ոտանավորի երկրորդ երկու տողը.
Բայց բանը շուտով այնպես պատահեց, որ բանաստեղծը խոսքը չըպահեց:
ԵԼԺ 1, 368, 655:

Դեկտեմբերի 27, Թիֆլիս. – Չափածո նամակ Ղ. Աղայանին:

Իմ սիրելի Ասլան-ապեր,
Մինչև այսօր բախող կապ էր.
Փողո շուտով պիտի ստանաս,
Հանկարծակի հարստանաս.
Երեք օր էլ կացիր հալա...
Քո կարոտյալ Ասլան-բալա:
Մինչև գրեն հրամանը,
Ինչպես ասաց խրիմյանը:

Ոտանավորում խոսքը վերաբերում է խրիմյան Հայրիկի հետ Թումանյանի բանակցությունների՝ Ղ. Աղայանին նպաստ նշանակելու մասին: Դեռևս 1894-ի աշնանը կաթողիկոսը խոստացել էր Աղայանին 100 ռ. թոշակ նշանակել, բայց խոստումը չէր կատարել: Հաջորդ հանդիպման ժամանակ՝ 1898-ի հունվարին, Թումանյանը խրիմյանին նորից է հիշեցնում իր խոստումը: Այդ մասին Ա. Նազարեթյանին հասցեագրած նամակում (տես փետրվարի 22) գրում է. «...Աղայանցին տարեկան 100 ռ. է խոստացել, զոնե այն էլ չտվեց, չնայելով, որ Աղայանցի մասին ես շատ պատմեցի, ինքն էլ ցավակցություն հայտնեց» (ԵԼԺ 9, 194):
ԵԼԺ 1, 367, 655:

Դեկտեմբերի 28. – Գրում է «Այսօրից ահա անում են ես ուխտ...» ոտանավորի վերջին քառատողը.

Էլ ինչ թաքցնեն, եղուկ իմ հոգուն,
Երկու անգամ էլ տարվել են թաքուն,

Բայց թե չըթողնեմ այժմ թղթախաղ,
Ուրեմն էլ չըկա ինձ նման սարսաղ:

ԵԼԺ 1, 368, 655:

1898. – Գրում է «Խորհրդավոր ծերունի» պատմվածքը:
ԵԼԺ 5, 65-66, 749-750:

1898. – Գրում է «Տրտմության սաղմոսներից» շարքի Ա
մասը («Տե՛ր, մի՛նչև երբ մեր աչքերը քեզ մընան...»):
ԵԼԺ 1, 165, 598:

1898. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», թիվ
15, էջ 305-306) «Գարնան հիշողություն» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 167, 594:

1898. – Գրում է «Տխուր գիշեր, տրտում գիշեր...» բանաս-
տեղծությունը:
ԵԼԺ 1, 174, 465, 596:

1898. – Ծանոթանալով Վահան Միրաքյանի «Լալվարի որ-
սը» պոեմի նախնական ձեռագիր տարբերակին՝ լուսանցքում
գրում է.

Սիրեցի, Կոնո, քո անուշ երգը,
Թող Աստված օրհնի Գուգարքի բերքը:

ԵԼԺ 1, 369, 656:

1898. – Գրում է «Ողջույն քեզ, ծով, ինչո՞ւ ես մռնչում...»
բանաստեղծությունը՝ հոր՝ տեր Թադևոսի վիճակային դրա-
մական հաշիվներին վերաբերող թղթերի 4-րդ էջում:*

* Դրամական հաշվետվություն, որ Թումանյանը գրել է հավա-
ցաբար տեր Թադևոսի փոխարեն նրա մահից հետո:
ԹՏԹ, 192-193. ԹԸԱ, թիվ 53:

1898. – Գրականության մասին դասախոսություններ է
կարդում նոր կազմակերպված «Ծիածան» աշակերտական
ընկերության բարձր դասարանցիների համար:

Մարգար Ավետիսյանը հիշում է. «Թումանյանի պարապ-
մունքները տարբերվում էին մեր մյուս բոլոր դասախոսների պա-
րապմունքներից: Նա չէր «դասախոսում». չունեի կազմած ծրա-

գիր, չունեի պարապմունքի այն մեթոդները, որ գործադրում էին
մյուս դասախոսները:

Ավելի շուտ դրանք ազատ զրույցներ էին, քան սիստեմա-
տիկ դասախոսություններ: Սակայն ոչ մի պարապմունք այնպես
կենդանի չէր անցնում և, կարող եմ ասել, այնքան բան չէր տալիս
մեզ, որքան Թումանյանի «անծրագիր», «անմեթոդ» զրույցը:
Ոչ մի դասախոսություն այն հաճույքը չէր պատճառում մեզ, ինչ
որ Թումանյանինը: Երկու-երեք, շատ անգամ ավելի ժամեր
նստում էինք, և ժամանակն այնպես էր անցնում, որ մեզ թվում
էր, թե դեռ նոր ենք սկսելու ու պարապմունքներից դուրս ենք
գալիս ոչ հոգնած, այլ ավելի թարմացած:

Պետական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները, որ
հայ պատմության, գրականության մասին գաղափար չունեին,
նույնպես հիացմունքով էին լսում Թումանյանին և խոր ակնա-
ծանքով ու սիրով կապված էին նրա հետ»:

ԹԺՅ, 174:

1898. – Հարստացնում է իր գրադարանը նոր գրքերով:

Հակոբ Ստեփանյանը հիշում է. «...Եղբայրս՝ Հովհ.
Ստեփանյանը, 80-ական թվականներին Հավլաբարում ապրող
շատ հայտնի Հակոբ վարժապետ Կարինյանից գնում է վերջինիս
գրադարանի մի մասը: Եղբորս մահվան (1898), իմ բանտար-
կությունների ու հետագա թափառումների հետևանքով այդ
գրքերը մնացել էին բարեկամներիս մոտ. սրանց ջախելները
մտադրվում են գրքերը վաճառել և փող շինել: Այդ մասին լսում
է Հովհաննեսը և նրան հաջողվում է ձեռք բերել գրքերի միայն
մի մասը. դրանց մեջ էին Հայկազյան երկհատոր մեծ բառարանը,
Ռոլանի «Հռովմա պատմությունը» (երեք հատոր), Չամչյանի
«Հայոց պատմությունը» և այլն»:

ԹԺՅ, 294:

1898. – Առաջին անգամ տպագրվում է (ԱՄ, թիվ 54, էջ 19-
20) «Արծիվն ու կաղնին» բալլադը՝ «Ժողովրդական ավանդու-
թյուն» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 110-111, 555-556:

իր ոտքի տակ հող չունի. *քաղաքական* ուժ չունի»: ԴԱԵԺ 4, 556-557:

Մարտի 20, <26>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Արսեն Դլտճյանին:

Ընկերոջից օգնություն է խնդրում՝ պարտքերը մարելու համար: Հայտնում է Խրիմյան կաթողիկոսի՝ էջմիածին մեկնելու, Թիֆլիսում բարեգործական ընկերություն բացվելու մասին: ԵԼԺ 9, 209-210, 575-577:

Ապրիլի 5. – Գր. Բալասանյանի նամակը Թումանյանին՝ Շուկավերից:

Հայտնում է ամռանը Շուկավեր գնալու իր մտադրության մասին: Գրում է, որ «Տարազում» տպագրվելու համար հայտարարություն է ուղարկել: Հետաքրքրվում է Թումանյանի՝ ամառվա ծրագրերով: Ուզում է իր գրածները ցույց տալ Թումանյանին՝ նրա կարծիքը իմանալու համար:

ԳԱԹ ԹՖ, թիվ 1011 (556):

<Մինչև ապրիլի 8-ը>. – Իր ստեղծագործություններից Նոր Նախիջևան՝ Մ. Բերբերյանին է ուղարկում՝ նրա նախածեռնությանը նախապատրաստվող «Կյանք» ամսագրում տպագրելու համար (տե՛ս ապրիլի 8):

ԳԱԹ ԹՖ, 438 (ց. 2, 282):

Ապրիլի 8. – Մինաս Բերբերյանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Հայտնում է հրատարակվելիք «Կյանք» ամսագրի արգելման մասին: Խնդրում է տեղեկացնել բոլոր բաժանորդներին և վերադարձնել բաժանորդագրության վճարները: Բանաստեղծի ուղարկած գործի մասին գրում է. «Քո ուղարկածդ այստեղ կկարդանք, հետո քեզ կուղարկեմ ետ»:

ԳԱԹ ԹՖ, 1053 (282 լր.):

Ապրիլի 9. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Գրում է, որ տեղափոխվելու է Ղրիմ՝ Թեոդոսիա: Տեղեկացնում է, որ իր հիսնամյակը լինելու է 1912 թվին և հույս ունի, որ կապրի մինչև այդ տարին: ԹՏԹ, 833:

Ապրիլի 11. – Տպագրվում է («Տարազ», 1899, թիվ 13, էջ 315-316) «Մեր գրական վարք ու բարքից» հոդվածը:

Բողոքում է «Մշակի» և «Նոր-Դարի» այն մտայնության դեմ, թե հայ գրողները ժողովրդի միայն վատ կողմերն են նկարագրել և դրանով «վնասել են ժողովրդի զարգացման գործին և հուսահատեցրել են»: Դա համարում է նախատինք և զրպարտություն հայ գրողների հասցեին:

ԵԼԺ 6, 113, 589:

Ապրիլի 18. – Առաջին անգամ տպագրվում է («Տարազ», 1899, թիվ 14, էջ 344) «Գաբո բիծու շերամապահությունը» պատմվածքը:

ԵԼԺ 5, 67-68, 750:

Ապրիլի 18, Թիֆլիս. – Օ. Գիրգիոյանի ալբոմում գրում է չափածո երկտող.

Էլ չեմ կարող գրել «ծեռաց».

Սիրտս վաղուց է մեռած...

ԵԼԺ 1, 370, 656:

Ապրիլի 28. – Մեսրոպ քահանա Մեյանի նամակը Թումանյանին՝ Բաթումից:

Գրում է, որ «Հազարան բլբուլի» իր խոստացած գրառումը չունի: Ներողություն է խնդրում թյուրիմացության համար:

ԳԱԹ ԹՖ 1726 (891):

Ապրիլ. – Առաջին անգամ տպագրվում է (ԱՄ, էջ 11-15) «Կտակ» («Դե գրի, տեր հայր: «Յանուն հոր և որդոյ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 181, 598:

Մայիսի 3. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին: Հայտնում է, որ արդեն հին Խրիմում է: Գրում է իր քայ-

քայլած առողջության վրա տեղի բնության բարերար ազդեցության մասին:

ՂԱԵԺ 4, 562-563:

Մինչև մայիսի 6-ը. – Ստանում է Ալ. Ծատուրյանի բանաստեղծությունների 1898 թ. հրատարակությունը՝ ընծայականով: ԵԼԺ 9, 210, 577:

Մայիսի 6, Թիֆլիս. – Նամակ Մոսկվա՝ Ալ. Ծատուրյանին: Շնորհակալություն է հայտնում, որ ստացել է վերջինիս բանաստեղծությունների 2-րդ գիրքը (տե՛ս հունվարի 30): Հույս է հայտնում, որ իրենց միջև կստեղծվի ընկերական փոխհարաբերություն. «Դժբախտաբար մեր գրողների մեջ կապ ու հարաբերություն չկա, այնինչ մենք ունենք ընդհանուր ցավեր ու շահեր, որ կարևոր են դարձնում այդ հարաբերությունը, մենք զգացմունքներ ու մտածմունքներ ունենք, որ միմիայն իրար կարող ենք հայտնել ու խոսել»:

ԵԼԺ 9, 210-211, 577:

Մայիսի 6, Թիֆլիս. – Ալ. Ծատուրյանին է ուղարկում ԱՄՆ-ով տպագրված իր ժողովածուն՝ ջերմ ընծայականով:*

* Ժողովածուն ամփոփում էր «Անբախտ վաճառականները», «Կտակ», «Տխուր զրույց», «Արծիվն ու կաղնին», «Արջաորս» ստեղծագործությունները:

ԵԼԺ 9, 210:

Մայիսի 6, Թիֆլիս. – Նամակ Մոսկվա՝ Ս. Շահազիզին (չի պահպանվել): Նամակի հետ ուղարկում է իր «գրքույկները»:

Ալ. Ծատուրյանին գրում է. «Պ. Շահազիզի հասցեն չգիտեի: Նրա անունով նամակն ու գրքույկները Ձեզ եմ ուղարկում, խնդրում եմ հանձնեք և ներքե նեղության համար»:

ԵԼԺ 9, 211, 577:

Մայիսի 9. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Հին Դրիմից:

Հայտնում է, որ ստացել է 60 ռուբլի: Գրում է իր առողջական ու նյութական վիճակի վատթարացման մասին: Գանգատվում է հոգու և մարմնի ստացած նորանոր հարվածներից: Հու-

սահատված է. «Չարժե ապրել, զոռով ապրել չի լինիլ»: ԳԱԹ ԹՖ, 818 (473ա):

Մայիսի 15. – Գրաքննչական կոմիտեին է հանձնում Լ. Մանվելյանի բանաստեղծությունների և պոեմների ժողովածուն՝ տպագրության թույլտվություն ստանալու համար: ЦГИАГРУЗ, Ф 480, оп 1, д 1313:

Մայիսի 16. – Տպագրում է («Տարագ», 1899, թիվ 17, էջ 409) «Մեր ազգային վիպասան Պերժ Պռոշյանցին՝ իր քառասնամյակին» բանաստեղծությունը: ԵԼԺ 1, 178, 597:

<Մայիս>. – «Մուրճը» «Չանազան լուրեր» բաժնում անդրադառնում է Կ. Գալֆայանի խնդրին:

Այն կարծիքն է հայտնում, թե Թումանյանը Գալֆայանի հարցում «Մուրճի» հետ չէ՝ հանդեսում բավականաչափ չզնահատվելու պատճառով:

«Մուրճ», 1899, թիվ 5, էջ 561-563:

Հունիսի 5. – Խնդրագիր Թիֆլիսի նահանգապետին:

Տեղեկանք է խնդրում առ այն, որ ինքը երբևէ դատի կամ քննության տակ չի եղել և օրենքով զրկված չէ ունեցվածքի իրավունքից:*

* Այս խնդրագիրը գրվել էր Թումանյան գերդաստանի հողային սեփականությունը դստեղջիներից ապօրինաբար բռնագրավվելու կապակցությամբ:

ԵԼԺ 9, 211, 578

Հունիսի 10. – Գրաքննչական կոմիտեից վերցնում է Լ. Մանվելյանի բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուն՝ տպագրության թույլտվությամբ (տե՛ս մայիսի 15):

ЦГИАГРУЗ, Ф 480, оп 1, д 1313, л 37:

Հունիսի 10. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ էջմիածնից:

Տեղեկացնում է, որ վանքի վիճակը անմխիթար է: Հայոց հայրապետի փոխանորդի հետ զրույց է ունեցել. մտադիր են

իրեն Ախալցխա ուղարկել, ինքը չի համաձայնում: Գրում է իր հետագա անելիքների, հիշատակարանի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1578 (381(12 լր.):

Հունիսի 11. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Հին Խրիմից:

Տեղեկացնում է, որ վերջապես ստացել է Թումանյանի «երկար նամակը»: Ուրախությունն է հայտնում Պ. Պռոշյանի հոբելյանի հաջող անցնելու առթիվ: Լավատեսորեն է խոսում իր առողջական վիճակի մասին. «Հիմա իմ քեֆին քեֆ չի հասնիլ»: Նյութապես էլ ապահովված է: Ավելի շատ մտահոգված է Թումանյանի նյութական վիճակը թեթևացնելով: Մ. Բերբերյանի «Կյանքը» ցենզորն արգելել է: Գոհ է, որ Թումանյանն աշխատակցում է «Տարագին»: Բայց Արասխանյանից էլ «չպետք է խռովել, որքան էլ որ մեղավոր լինի նա, ընդհակառակը՝ պետք է առավել ևս մոտենալ»:

ՂԱԵԺ 4, 563-567:

Հունիսի 11. – Լ. Մանվելյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Շնորհակալություն է հայտնում իր ժողովածուի հանդեպ Թումանյանի հոգացողության համար: Խնդրում է ստանալուն պես իրեն տեղեկացնել: Պուշկինի «Ջրահեղձի» թարգմանությունը հաջող է համարում, «Օլեգի երգը» չի կարդացել: Հայտնում է իր կարծիքը «Պուշկինի քնար» թարգմանական ժողովածուի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1663 (389 լր.):

<Հունիսի կեսեր>. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Նկարագրում է քաղաքի արտաքին ու ներքին բարեմասնությունները, իր կղզիացած վիճակը, կյանքի էժանությունը: Հայտնում է, որ Արսեն վարդապետն էլ է այնտեղ և մտահոգված է, թե ինչպես Թումանյանին տնտեսապես օժանդակի:

ԹՏԹ, 836:

Հունիսի 15-16. – Նամակ Բաքու՝ Լ. Մանվելյանին (չի պահպանվել):

Նամակի հետ ուղարկում է նաև Լ. Մանվելյանի բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուի ձեռագիրը: Հարցնում է «Նոր դրամայի» մասին, խնդրում է հետաքրքրվել Բաքվից ստանալիք թոշակով:

ԳԱԹ ԹՖ, 865:

Հունիսի 18. – Լ. Մանվելյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Շնորհակալություն է հայտնում իր բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուի ձեռագրի պատճառով բանաստեղծի «քաշած նեղության» համար: Հայտնում է, որ թեպետ դժգոհ է կրճատումներից, բայց ձեռագրերը հանձնել է տպագրության «Արոր» տպարանին, իսկ մյուսները (հանածները) կտպագրի հետագայում: Հայտնում է նաև, որ թոշակի մասին հարցրել է բարեգործական ընկերության քարտուղար Գալըստյանին, որը պատասխանել է. «Երեկ նիստ են ունեցել և վճռել են՝ գրագետների թոշակները ուղարկել կիսամյակը լրանալուց անմիջապես հետո»:

Գրում է իր հետագա ծրագրերի, իր նոր դրամայի մասին, որով հետաքրքրվել է Թումանյանը:

ԳԱԹ ԹՖ, 1664 (865):

Հուլիսի 5. – Ղ. Աղայանի բաց նամակը Թումանյանին՝ Հին Ղրիմից:

Հայտնում է երեք լուր. մի տիկնոջից ստացել է 25 ռ., Բաքվից ստացել է թոշակի կեսը, Պռոշյանից ստացել է 50 ռ.: Մինչև վերադառնալը ապահով է:

ԳԱԹ ԹՖ, 820 (475ա):

Հուլիսի 7. – Կ. Գալֆայանի նամակը Թումանյանին՝ Փարիզից:

Դժգոհում է, որ իրենց նամակագրությունը դադարել է: Գրում է, որ հաջողությամբ Օթելլո է խաղացել, մամուլի արձագանքը գերազանց է:

ԳԱԹ ԹՖ, 1072 (287 լր.):

Հուլիսի 9. – Ս. Շահագիզի նամակը Թումանյանին՝ Յալթայից:

Թումանյանի անհայտ նամակի (տե՛ս մայիսի 6) պատասխանն է: Շնորհակալություն է հայտնում ստացած գրքերի համար (տե՛ս մայիսի 6): Դժգոհում է Կովկասի կառավարչության՝ Բարեգործական ընկերության կանոնադրության մեջ կատարած նոր փոփոխություններից: Դրանցով արգելվում էր բարեգործական գումարները օգտագործել մշակութային նպատակներով: Շահագիզն այն կարծիքին է, որ Աբովյան-Նազարյան ֆոնդի գումարները առաջվա պես պետք է ծառայեն իրենց նպատակին: Խոստանում է սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին Մոսկվա հասնելուն պես կարգավորել այդ ֆոնդից Թումանյանին նյութական օգնություն տրամադրելու գործը. «Ձեզ խոստանում եմ, որ սիրտս սաստիկ վրդովված է նոր կանոնադրությունից, որովհետև ես հայտնի տեսնում եմ, որ «բոլոր ճանապարհները տանում են դեպի Դոմ»: <....> Ասում եմ, որ ես մեծ ցավ եմ զգում, որովհետև մեր հայրենակիցներից շատերը տեսնելով գործի հաստատությունը, խոստացել էին մեզ նպաստելու և ընդարձակելու ֆոնդի միջոցները, իսկ այժմ չգիտեմ ինչ կլինի»:

ԳԱԹ ԹՖ, 1831 (935):

Հուլիսի 16, Դսեղ. – Գրառում թիվ 8(3) ծոցատետրում.

«1899 թ. հուլիսի 16-ին քեռի Սիմոնը պատմեց.

Մի ծիտ բռնել էին, դրել մի ոսկե ղափազում, որ երգի, ուրախանան: Սա հենց միալար ձեն էր տալիս՝ վա՛յ վաթան, վա՛յ վաթան: Բերին, սրա ղափազն ավելի սիրունացրին, շաքար ուտացրին, շաքարի հաց: Էլի՛ վա՛յ վաթան, վա՛յ վաթան: Զանեցին թե՛ սրան բաց թողեք, տեսնենք ուր է գնում, սրա վաթանը ո՞րն է: Գնաց, մտավ ջրափերի չայլըը – խոտերի մեջ: Էն օրվանից երգում է՝ վա՛յ վաթան: Մի քանիսն ասում են (հանքիձեն), թե էն օրվանից սկսեց երգել՝ ա՛յ վաթան, ջա՛ն վաթան, ջա՛ն վաթան: Ասում էին, որ սա տորոլ է (торол), արտույտը»:

ՈՒՀ 5, 251-252:

Հուլիսի 18. – Տպագրվում է («Տարագ», թիվ 26, էջ 615-616) «Ընդդիմախոսությունը» հոդվածը:

ԵԼԺ 6, 115, 589:

Հուլիսի 23, Դսեղ. – Ստանում է Ս. Շահագիզի նամակը Յալթայից (տե՛ս հուլիսի 9):

ԵԼԺ 9, 212:

Հուլիսի 24, Դսեղ. – Նամակ Բորժոմ՝ Իշխանուհի Ս. Թումանյանին:

Գրում է գյուղի իր առօրյայի մասին: Մի քիչ տկարություն է ունեցել, որ անցել է: Զբաղվում է լեզենդներ ու զրույցներ հավաքելով: Գյուղացիների շրջանում բժշկի հռչակ է ստացել: «Միաժամանակ դատավորի ու քարոզչի գործ էլ եմ կատարում»: Կարևորում է բանահյուսության բացառիկ դերը ազգային գրականության զարգացման համար. «Ամեն մի ազգի բանաստեղծությունն ժողովրդական լեզենդաներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի: Մտածում եմ այնպես անեմ, որ միառժամանակ՝ մի կամ երկու ամիս, ընտանիքիցս ազատվեմ, կարողանամ, մի քանի տեղեր կան, շրջեմ, հարց ու փորձ անեմ»: Տեղեկացնում է. «Արդեն մի երկու լավ բաներ եմ գտել»:

* Խոսքը վերաբերում է «Վա՛յ վաթան» և «Թռչունն ու մուկը» լեզենդներին (ԵԼԺ 9, 578):

ԵԼԺ 9, 211-213, 578-579:

Հուլիսի 24, Դսեղ. – Նամակներ Փիլ. Վարդազարյանին և Ար. Զարգարյանին (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 212:

Հուլիսի 26. – Մկ. Բարխուդարյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ տպարանը տեղափոխելու ժամանակ գրքերի պահեստում հայտնաբերվել են Թումանյանի «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի օրինակներ, որոնք ծանրոցով ուղարկել է Թիֆլիս:

ՈՒՀ, 4, 328:

Հուլիսի 30. – Իշխանուհի Ս. Թումանյանի նամակը Թումանյանին՝ «Բորժոմից»:

Հայտնում է, որ երեք օրով գնացել է Կոջոր, հանդիպել է Փիլ. Վարդազարյանին և Ար. Ջարգարյանին: Դժգոհում է, որ օրերն անցնում են ծանծրալի. «Ես այս օրերը կջնջեի»: ԹՖայած դրան՝ քաջալերում է բանաստեղծին, որ այդ օրերին Դսեղում էր, խոստանում է ամեն ջանք գործ դնել՝ նրան «այդ նեղ դրությունից հանելու համար»:

ԳԱԹ ԹՖ, 1242 (658):

Օգոստոսի 12, Թիֆլիս. – Նամակ Բորժոմ՝ իշխանուհի Մ. Թումանյանին:

Խորհրդածում է կյանքի ու մարդու մասին: Դժգոհում է, որ «այս օրերը, հիրավի, ափսոսանքի արժանի օրեր են և միայն կյանք մաշելու ընդունակություն ունեն»: Մարդու կյանքում կարևորում է «վսեմ բաների», հատկապես պոեզիայի դերը. «Ամեն բան, ինչ որ գուրկ է պոեզիայից, արժանի է ջնջվելու, ինչպես այս օրերը, որ միայն տրտունջ են հարուցում»: Դիտում է, որ «կինը էական նշանակություն ունի մարդու», մանավանդ զգայուն մարդու վրա. «Երբոր մարդ ու կին մի ներդաշնակություն չեն կազմում, երբոր մեկը չի հանդիսանում իբրև լրություն մյուսի, այնտեղ մարդկային կյանքը և ամուսնությունը կորցնում է իր գերագույն խորհուրդը, դառնում է մի անտանելի, չնչին, բայց մաշող պայքարի հանդես և դժբախտության աղբյուր»: Ասում է, որ այդ միտքն է դրված «Թռչունն ու մուկը» լեգենդի հիմքում: Ցավով գրում է, որ իր «Բանաստեղծությունների» 2-րդ հատորից 500-600 օրինակ մոռացված մնացել է Մոսկվայի տպարանում (տե՛ս հուլիսի 26):

ԵԼԺ 9, 213-215, 579:

Սեպտեմբերի 4. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Գրում է, որ ցարի հրամանով բոլոր աքսորյալների հետ ինքն էլ է հեռանում Ռոստովի մարզից: Իր ընտրությամբ՝ տեղափոխվում է Ղրիմ՝ Թեոդոսիա: Ուղարկում է հավաստագիր, որ «1898-ի օգոստոսից սկսած մինչև 1899-ի ապրիլի վերջը» էջմիածնից ստացել է իր հասանելիք թոշակը: Նորից հայտնում է, որ «Մինասի «Կյանքը» <...> դեռ չծնած՝ մեռավ»: Պռոշյանի

հոբեյանը կատարել են. «Մոտ երկու հարյուր մանեթ զուտ արդյունք ստացվեց»: Իր 50-ամյակը 1912 թվականին է. հույս ունի, որ կապրի մինչև այդ օրը:

ԳԱԹ ԹՖ, 821 (476ա):

Սեպտեմբերի 19. – Ընտրվում է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունից վերակազմված Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության վարչության փոխանդամ:

ԵԼԺ 9, 580:

Սեպտեմբերի 20. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Թեոդոսիայից:

Տեղեկացնում է, որ արդեն Թեոդոսիայում են: Բանաստեղծի նամակներն ստացել է: Շնորհավորում է Թումանյանի 7-րդ զավակի ծնունդը: Հայտնում է իր նոր հասցեն:

ԳԱԹ ՂԱՖ, 142:

Սեպտեմբերի 27, Թիֆլիս. – Գրում է «Սիրելի» («Խորն է քո հոգին երկնքի նման...») բանաստեղծությունը:

Գրված է Փիլ. Վարդազարյանի մի ոտանավորը կարդալուց հետո:

ԵԼԺ 1, 371, 503, 656-657:

<Սեպտեմբեր>. – Գրում է «Ափսո՛ս» («Լսի՛ր, սիրտս երգ է ասում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 180, 597-598:

<Սեպտեմբեր>.- Գրում է «Օ՛, սիրտ իմ, սիրտ իմ, տակավին մատաղ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 372, 657:

Հոկտեմբերի 7. – Գր. Բալասանյանի նամակը Թումանյանին՝ Շուլավերից:

Հորդորում է բանաստեղծին մի քանի ոտանավորներ տալ «Լուսնայի» 1900 թվի հունվարի համարին, որտեղ լույս է տեսնելու նրա «Սասունցի Դավիթ» պոեմի առաջին մասը: Հարցնում է ընտանիքից, նորածին երեխայից, քաջալերում է Թումանյանին՝ իբրև գրողի:

ԳԱԹ ԹՖ, 1012 (272 լր.)::

Հոկտեմբերի առաջին տասնօրյակ, Շուլավեր. – Նամակ
Թիֆլիս՝ Դ. Դեմիրճյանին (չի պահպանվել):

Հայտնում է, որ երեխաների հիվանդանալու պատճառով
«դեռևս» Շուլավերում է մնալու*:

* «Քո նամակը ստացա. իհարկե, այդ պարկապզուկը ավելի հար-
ցական էր, քան՝ պատասխանական», - գրում է Դեմիրճյանը թու-
մանյանի այդ նամակի մասին՝ ըստ երևույթին նկատի ունենալով այն,
որ ավելի շատ հետաքրքրվել է Դեմիրճյանով, քան թե գրել է իր մասին:

ԳԱԹ ԹՖ, 1128 (612):

Հոկտեմբերի 13. – Դ. Դեմիրճյանի նամակը թումանյանին՝
Թիֆլիսից:

Հետաքրքրվում է թումանյանի նյութական վիճակով,
հարցնում է, թե երբ է գալու Թիֆլիս, հայտնում է Գերմանիա
գնալու իր նպատակը չիրագործվելու մասին, խնդրում է, որ
դիմի Փ. Վարդազարյանին և Բորիսին՝ «այն կտակից մի բան
ստանալու համար», ինչպես և բժիշկ Ջարգարյանին և իշխա-
նուհի թումանյանին, որ արտասահման «գոնե մի երկու տարի
գնալու համար միջոց ճարեն»:

ԴԵԺ XIV, 298-301:

Հոկտեմբերի 25. – Կ. Գալֆայանի նամակը թումանյանին՝
Փարիզից:

Գրում է իր ուսման հաջողությունների մասին: Տեղեկաց-
նում է՝ պ. Տեր-Սարգսյանը նամակով հայտնել է, որ հրաժար-
վում է վճարել իր ուսման վարձը: Այլևս չի դիմանում նյութական
ծանր վիճակին, վիրավորական նամակներին, ստորացում-
ներին:

ԳԱԹ ԹՖ, 1073 (287 լր.):

Հոկտեմբերի 25. – Ղ. Աղայանի հեռագիրը թումանյանին՝
Թեոդոսիայից:

Տեղեկացնում է, որ Թեոդոսիայից հետ է գալիս:

ԳԱԹ ԹՖ, 822 (480):

Հոկտեմբերի 29. – Նամակ Ղ. Աղայանին (չի պահպանվել):
ՂԱԵԺ 4, 569:

Հոկտեմբերի 31. – Արսեն <Սարկոսյանի> նամակը
Թումանյանին՝ Բաթումից:

Հայտնում է, որ կատարում է իր խոստումը Բաթումից
նամակ գրելու մասին, էլի է գրելու: Թումանյանից սպասում է
նույնը:

ԳԱԹ ԹՖ, 1680 (553):

Նոյեմբերի 16. – Ցիկլաուրի Գեորգիի նամակը թուման-
յանին՝ <Թիֆլիսից>:

Հին հագուստ է խնդրում թումանյանից՝ այդ հագուստով
նավի վրա աշխատելու համար. դա կընդունի իբր մեծ օգու-
թյուն: Նպատակ ունի հասնել Օդեսա և իր բոլոր փաստաթղթերը
հետ վերցնել:

ԳԱԹ ԹՖ, 2299 (478 լր.):

Նոյեմբերի 25. – Ղ. Աղայանի նամակը թումանյանին՝
Թեոդոսիայից:

Գրում է, որ գալու օրերը մոտենում են: Բայց ո՛չ ծախսելու
փող ունի, ո՛չ ճանապարհածախս: Խնդրում է թումանյանի օգ-
նությունը:

ԳԱԹ ՂԱՖ, թիվ 143:

Նոյեմբերի 6. – Ղ. Աղայանի նամակը թումանյանին՝ Թեո-
դոսիայից:

Գրում է, որ ստացել է թումանյանի՝ հոկտեմբերի 29-ի նա-
մակը: Թումանյանի հաղորդած լուրին, թե Բաքվից իրենց թո-
շակը շարունակվում է, չի հավատում: Շուտով Թեոդոսիայից
գալու է Թիֆլիս, թումանյանից խնդրում է իրենց համար բնա-
կարան գտնել:

ՂԱԵԺ 4, 569 – 570:

Նոյեմբերի 17-18, Թիֆլիս. – Նամակ Ս. Թումանյանին (չի
պահպանվել):

Գրում է «Новое Обозрение» թերթը դադարեցնելու, կա-
ռավարական հետապնդումների մասին:

ԳԱԹ ԹՖ, 1243 (657):

Նոյեմբերի 18. – Ստանում է Մ. Թումանյանի նույն օրվա նամակը:

Տեղեկացնում է, թե ինչ հալածանքների է ենթարկվում «Новое обозрение» թերթը:

ԳԱԹ ԹՖ, 1243 (657):

<Աշուն>. – Վարձում են նոր բնակարան՝ Բեհրության փ., թիվ 50, որտեղ պիտի ապրեին մինչև 1908 թ. աշունը:

Բանաստեղծի դուստրն հիշում է. «Բեհրության փողոցի այս տունն էր, որ դարձավ հայրիկի գրական ընկերների հավաքատեղի: Բնակարանը վերին հարկում լինելու պատճառով կոչվեց «Վերնատուն», իսկ խմբավորման անդամները՝ վերնականներ»:

ՆԹՅԶ, էջ 14:

<Աշուն>, *Թիֆլիս*. – Գրում է «Թռչունն ու մուկը» բալլադը: ԵԼԺ 2, 192, 571-572:

Դեկտեմբերի 1. – Գրաքննչական կոմիտեն արգելում է «Թատրոն» հանդեսում տպագրել «Պոետն ու Մուսան» պոեմը՝ հետևյալ մակագրությամբ. «По журналу цензурного комитета 1 декабря 1899 г. определено: В виду того, что настоящая статья не соответствует характеру издания, напечатание воспретить»:

ЦГИАГРУЗ, Ф 480, оп1 9(1517, л 11- 8, PP):

Դեկտեմբերի 2, Թիֆլիս. – Նամակ Ար. Ջարգարյանին:

Շնորհակալություն է հայտնում նամակի և ծրարած 15 ռուբլու համար: Միաժամանակ իր անկեղծ երախտագիտությունն է հայտնում բոլոր այն բարեկամներին, որոնցից ստանում է ոչ միայն նյութական, այլև բարոյական օգնություն:

ԵԼԺ 9, 216, 579

✓ *Դեկտեմբերի 2, Թիֆլիս*. – Երեկոյան ժամը 7-ին իշխանուհի Թումանյանի տանը տեղի է ունենում հերթական «հինգշաբթին», որին ներկա է լինում բանաստեղծը:

ԵԼԺ 9, 216, 579:

Դեկտեմբերի 30. – Ալ. Ծատուրյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է դեկտեմբերի 27-ին Յուրի Վեսելովսկու գրական գործունեության 10-ամյակի, այդ առիթով Մոսկվայի «մի խումբ գրասեր հայերի» կողմից հունվարի 22-ին ռուս հայագետի պատվո երեկո կազմակերպելու մասին և խնդրում, որ Թիֆլիսի գրական շրջաններում (հատկապես «Աղբյուրը» և «Տարագը») անարձագանք չթողնեն այդ ձեռնարկումը՝ շնորհավորական նամակներով և հեռագրերով:

ԳԱԹ ԹՖ, 1408 (744):

Դեկտեմբերի 31. – Առաջին անգամ տպագրում է («Տարագ», 1899, թիվ 50, էջ 1140) Ադամ Միցկևիչի «Աքերմանի դաշտերում» սոնետի կրճատ թարգմանությունը:

ԵԼԺ 2, 248, 593:

1899. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Նկարագրում է քաղաքը: Համեմատում է Թիֆլիսի հետ: Ընկերացել է Բերբերյանների ընտանիքի հետ: Հանդիպել է Արսեն վարդապետին, երկար զրուցել են Թումանյանի մասին:

ԳԱԹ ԹՖ, 823 (479ա):

1899. – Գրում և տպագրում է «Վայր ընկնող աստղեր» բանաստեղծությունը՝ «Նմանություն» ենթավերնագրով:

Նմանություն է Մ. Նալբանդյանի՝ Բերանժեից փոխադրած նույնանուն բանաստեղծության կամ պարոդիա է՝ գրված նույն մոտիվներով (տես էդ. Ջրբաշյան, Չորս գագաթ, Ե., 1982, էջ 78-79):

ԵԼԺ 1, 175-177, 596-597:

1899. – Առաջին անգամ տպագրվում է («Թատրոն», 1899, թիվ 6, էջ 87-88) «Որբը» բալլադը՝ «Որբ թռչունը» վերնագրով և «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 115-117, 557:

1899. – Առաջին անգամ տպագրում է («Տարագ», 1899,

թիվ 13, էջ 430) Ա. Պուշկինի «Օլեգի երգի» թարգմանությունը
ԵԼԺ 2, 241-244, 592:

1899. – Գրում և տպագրում է («Թատրոն», 1899, թիվ 2, էջ
88) «Օր. Մ. ին» ոտանավորը:

Գրված է Մ. Վարդազարյանի ալբոմում՝ «Ծաղիկներ» վեր-
նագրով:

ԵԼԺ 1, 179, 597:

1899. – Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյակի առթիվ թարգ-
մանում և տպագրում է (ԱՄ, 1899, թիվ 56, էջ 5-8) «Ջրահեղձը»
բալլադը:

ԵԼԺ 2, 245-247, 592:

1899.- Նամակ Մոսկվա՝ Սմբատ Շահագիզին:

Խնդրում է նյութապես օգնել իրեն Արսևյան – Նազարյան
ֆոնդի գումարներով: Նամակի հետ ուղարկում է նաև ԱՄ-ով
1899 թ. լույս տեսած իր գրքուկը:

ԳԱԹ ԹՖ, 1831 (935):

1899. – Առաջին անգամ տպագրվում է (ԱՄ, թիվ 54, էջ 21-
31) «Արջաորս» պատմվածքը:

ԵԼԺ 5, 60-64, 749:

1899. – Գրում է «Մամուլ» հոդվածը:

Մնացել է անավարտ: Կարծիք է հայտնում մամուլում տի-
րող բարքերի մասին. «Լրագիր եք ստանում: Այսօր կարդում
եք մի զրպարտություն, վաղը հայիոյանք, մյուս օրը սուտ, չոր-
րորդ օրը մի անճոռնի կարծիք, և այսպես շարունակ՝ օրեր,
ամիսներ, տարիներ... Եվ բացարձակ ստախոսության հետ
միասին այնդում է, թե ինքը մենակ է պաշտպանում ճշմարտու-
թյունը, անպատկառ հայիոյանքով ու ամբարտավանությամբ լի
հոդվածի վերջում մի քանի տող է կցում, թե համեստություն է
սովորեցնում, մի հրեշավոր կարծիք հայտնելիս, բողոքում է, թե
իրան ոչ ոք չի հասկանում, մենակ է մնացել»: Եվ ապա՝ «Գրա-
կանությունը, տպագրական խոսքը մի անհատի, մի ժողովրդի,
մի ազգի հոգեկան կարողությունն է, որ հանդես է հանում: Եթե
այդ անհատը կամ ժողովուրդը ունի բարոյական մի կոչում,

կյանքի մի վսեմ խորհուրդ, յուր մեջ կրում է մի աստվածային
տարր, նրա խոսքն էլ անշուշտ կլինի արտահայտություն
մաքրության, վեհության, ճշմարտության, բարոյական, անկա-
շառ դատողությունների, անկեղծ ու վսեմ մտածմունքների և
գեղեցիկ զգացմունքների»:

* Հոդվածի առիթը եղել է «Մշակի» 1899 թ. թիվ 184-ի մամուլի
բաժնի հրապարակումը, ուր բացասական անդրադարձ է եղել Թուման-
յանի մի քանի հոդվածներին՝ «Արգելքներ» («Տարագ», 1896, թիվ 36),
«Նամակ խմբագրության» («Տարագ», 1897, թիվ 12), «Տաղանդ և
բթանություն» («Տարագ», 1898, թիվ 42):

ԵԼԺ 6, 400-403, 632-633:

1899. – Առաջին անգամ տպագրում է (ԱՄ, թիվ 54, էջ 19-
20) «Արծիվն ու կաղնին» բալլադը՝ «Ժողովրդական ավանդու-
թյուն ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 110-111, 555-556:

1899. – «Վերնատուն» է հրավիրում Ղազար Տեր-Գրիգոր-
յանին (Ջավախեցի)՝ «Վերնատան» անդամ օծելու:

ԹԺԴ, 425:

1899. – Առաջին անգամ տպագրվում է (ԱՄ, թիվ 54, էջ
16-18) «Տխուր գիշեր, տրտում գիշեր...» բանաստեղծությունը՝
«Տխուր գրույց» վերնագրով:

ԵԼԺ 1, 174, 596:

1 9 0 0

Հունվարի 1, Թիֆլիս. – Գրում է «Շնորհավոր Նոր Կա-
ղանդ...» քառատողը:

Գրված է Մարիամ Վարդազարյանի ալբոմում՝ թվագրված
«1900, գիշ. ժ. 1»:

ԵԼԺ 1, 383, 661:

Հունվարի 2. – Արամ Ադամյանցի նամակը Թումանյանին՝
Թիֆլիսից:

Շնորհավորում է բանաստեղծին Նոր տարվա առթիվ՝
խնդրելով նրա միջամտությունն ու աջակցությունը՝ իր գրաբեր

բարեկամի համար բարեգործական ընկերությունից իբրև օգնություն մի վերարկու ստանալու:

ԳԱԹ ԹՖ, 782 (261 լր.):

Յուզվարի 11. – Ձեկուցագիր Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերության վարչությանը:

Վարչության հանձնարարությամբ Փիլ. Վարդազարյանի հետ ստուգել են ընկերության գրադարանը: Ձեկուցագրով ամփոփում են ստուգման արդյունքները և անում նոր առաջարկություններ:

ԵԼԺ 9, 217, 580:

Փետրվարի 8. – Ա. Ջարգարյանի նամակը Թումանյանին: Խնդրում է, որ բանաստեղծը տիկնոջ հետ ներկա լինի իրենց փոքրիկ մկրտության հանդեսին:

ԳԱԹ ԹՖ, 1176 (327 լր.):

<Փետրվարի կեսեր>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Նազարբեյանին:

Դժգոհում է գրականությամբ զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների բացակայությունից: Տեղեկացնում է, որ չի ստացել Մոսկվայից և Բաքվից խոստացված օգնությունը: Հայտնում է իր մի մտադրության մասին. «Մի պատկերագրող գիրք (լեգենդներ) եմ ուզում տպել – նկարչին պատվեր եմ տվել և մեջտեղ մնացել ամոթով»:* Նյութական օգնություն է խնդրում ընկերոջից:

* Այդ գիրքը չի տպագրվել՝ միջոցներ չլինելու պատճառով:

ԵԼԺ 9, 218-219, 581-582:

Փետրվարի 19. – Նամակ Բաքու՝ Ա. Ղլտճյանին:

Դարձյալ դժգոհում է ստեղծագործելու համար նպաստավոր պայմանների բացակայությունից: Ընկերոջ մտադրությունն իրեն արտասահման ուղարկելու մասին, համարում է ծիծաղելի կամ ուտոպիա. «Ես ավելի համեստ մի ցնորք ունեմ՝ զնալ մի երկու տարի մնալ Պետերբուրգ կամ Մոսկվա, բայց ամաչում եմ ասել»: Խնդրում է լուր տալ Բաքվից սպասվելիք օգնության մասին. «Վերջապես գրականություն ուզող ու հասկացող ժողովուրդը մի ձևով պետք է խրախուսի այդ գործը...»:

ԵԼԺ 9, 219-221, 582:

<Փետրվարի վերջեր>. – Նամակ Փիլ. Վարդազարյանին:

Հետաքրքրվում է, թե Բարեգործական ընկերությունը որևէ բանով չի՞ կարող օժանդակել Թիֆլիսի առաջին գիմնազիայի 10-րդ դասարանի աշակերտուհիներից մեկի («Ծիածան» աշակերտական ընկերության սաներից) առաջին կիսամյակի 33 ռուբլի ուսման վարձը փակելուն. հակառակ դեպքում կարտաքսվի գիմնազիայից*:

* Փ. Վարդազարյանը խորհուրդ է տվել դիմել Բարեգործական ընկերության նախագահ Ս. Դուլուխանյանին՝ նախապես տալով իր համաձայնությունը: 10 ռուբլով խոստացել է օգնել իշխանուհի Սարիամ Թումանյանը:

ԵԼԺ 9, 221, 582-583:

✓ *Փետրվար.* – Ընտանիքով տեղափոխվում է նոր բնակարան՝ Բեհբության փողոց, թիվ 50:

Բնակարանը վարձել էին նախորդ տարվա աշնանը (տե՛ս 1899 թ. աշուն) և այդ ամիսների ընթացքում հիմնովին նորոգել: Բնակարանը 5-րդ հարկում էր, ուր շաբաթը երկու անգամ հավաքվում էին Ղ. Աղայանը, Դ. Դեմիրճյանը, Ավ. Իսահակյանը և ուրիշ մտավորականներ: Ջրուցում էին գրականության, քաղաքականության, հասարակական զանազան հարցերի շուրջ: Աստիճանաբար այդ հավաքույթները վերածվում են գրական խմբակի, որն անվանվեց «Վերնատուն»: Անվանումը քաղաքացիություն ստացավ և ճանաչվեց հասարակության կողմից: «Վերնատան» մշտական այցելուներն էին գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ՝ Պ. Պռոշյան, Մուրացան, Վրթ. Փափագյան, Կոմիտաս, Գ. Բաշինջաղյան, Փ. Թերլեմեզյան և ուրիշներ:

ԹԺՅ, 11-12, 908:

Մարտի 12. – Գրախոսական Շեքսպիրի «Համլետ» ողբերգության Գարեգին Բաբազյանի թարգմանության մասին («Տարազ», 1900, թիվ 9, էջ 129-131):

Դիտողություններով համդերձ՝ ողջունելի է համարում «Համլետի» նոր թարգմանությունը: Ընդհանրապես թարգմանության մասին. «Թարգմանությունը ապակու տակ դրած մի

վարդ է. գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, երբ թարգմանվում է այնպիսի մի երկ, որի ամեն մի խուսքն ու նախադասությունը, չափած ու կշռած, ունեն հրեմց խոր նշանակությունն ու հաստատ տեղը: Այսօրինակ գործերից է Շեքսպիրի «Համլետը»...»:

ԵԼԺ 6, 124, 591:

Մարտի 17. – Հ. Դարչինյանցի նամակը Թումանյանին՝ Մեծ Դարաքիլիսայից:

Խնդրում է մի երիտասարդի մահարձանի համար տապանագիր գրել:

ԳԱԹ ԹՖ, 1126 (602):

Մարտի 30, Թիֆլիս. – Նամակ Ավ. Արասխանյանին:

Բանակցություններ է վարում «Մուրճի» հրատարակության իրավունքը Կոստանդին Կրասիլնիկյանին վաճառելու շուրջ:

ԵԼԺ 9, 222, 583:

Ապրիլի 2, Թիֆլիս. – Գրում է «Ես պատվեր ունեմ...» բանաստեղծությունը:

Չեռագիրը՝ Մ. Վարդազարյանի ալբոմում:

ԵԼԺ 9, 384, 661:

Մայիսի 12. – Հովհ. Քաջագունու նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Խոստանում է բանաստեղծին ապրիլ և մայիս ամիսների համար ուղարկել 80 ռուբլի և մինչև տարվա վերջը շարունակել նպաստը՝ ամսական 40 ռուբլի:

ԳԱԹ, ԹՖ, 2340 (1195):

Մայիսի 17. – Սահակ քահանա Ազատյանի նամակը Թումանյանին՝ Մեծ Դարաքիլիսայից:

Խնդրում է Թումանյանին տեղի հարուստներից մեկի

եղբոր հանգուցյալ որդու շիրմաքարի համար մի ոտանավոր շարադրել:

ԹՏԹ, թիվ 2668:

Մայիսի 30, Բաքու. – Գրում է «Օջախի երգը» չափածո կատակը:

Նվիրված է Բաքվի հայ մտավորականներից կազմված «Օջախ» անունով խմբակին: Դա տեղի է ունենում «Օջախին» բանաստեղծի երկրորդ այցելության ժամանակ:

ԵԺԼ 1, 187, 599-600:

Հունիսի 23, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդազարյանին (չի պահպանվել):

Ընկերոջը տեղեկացնում է, որ «մինչև օգոստոս փող ունի ձեռքը», թող ընկերը փող չուղարկի: Վարդազարյանը սխալ է հասկանում բանաստեղծին և նեղանում նրանից:

ԵԼԺ 9, 222-223, 583:

Հունիսի 24, Թիֆլիս. – Նամակ - երկտող Փիլ. Վարդազարյանին:

Բացատրում է նախորդ երկտողի նպատակը և պարզում թյուրիմացությունը:

ԵԼԺ 9, 222-223:

Հուլիսի 9. – Թովմաս վարդապետի երկտողը Թումանյանին:

Խնդրում է Խրիմյան Հայրիկի՝ Լոռում ճամփորդության ժամանակ եկած հյուրերին տեղավորել:

ԳԱԹ ԹՖ, թիվ 1334 (334լր.):

✓ <*Հուլիսի կեսեր*>, *Դսեղ.* – Հանդիպում է Խրիմյան կաթողիկոսին, լուսանկարում է նրան՝ ձի նստած*:

* Լուսանկարը պահպանվում է Թումանյանի թանգարանում (ԹԹ նկարների բաժին, թիվ 385(65)):

ԵԼԺ 9, 224-225, 584-585:

Հուլիսի 22. – Օ. Թումանյանի նամակը ամուսնուն՝ Դսեղից (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 410:

Հուլիսի 27. – Դիվանադպիր Կորյուն վարդապետի նամակը Թումանյանին՝ Էջմիածնից:

Վեհափառի պատվերով՝ խնդրում է Թումանյանին լուսանկարներից երկու օրինակ ուղարկել:

ԳԱԹ ԹՖ, 1446 (358 լր.):

<Հուլիսի վերջ>. – Ընտանիքն ուղարկում է Շուլավեր Թիֆլիսի շոգից ազատելու համար:

ԵԼԺ 9, 223-224:

Օգոստոսի 1, Թիֆլիս. – Նամակ Կիսլովոդսկ՝ Փ. Վարդազարյանին:

Գրում է Թիֆլիսի նորություններից և շոգերից: Միաժամանակ տեղեկացնում է, որ տանեցիներին ուղարկել է Շուլավեր և մի քանի օրից ինքն էլ է գնալու:

ԵԼԺ 9, 223-224, 584:

Օգոստոսի 5, Դսեղ. – Նամակ Բորժոմ՝ Մարիամ Թումանյանին:

Գրում է Դսեղում անցկացրած իր օրերի մասին. «Եկած օրիցս անդադար հյուրեր են եկել խմբերով – շարունակ նրանց մասին հոգալով, նրանց հետ այս ու այն կողմ ման գալով, ցույց տալով եմ եղել զբաղված»: Տեղեկացնում է. «Այստեղով անցավ Հայրիկը (կաթողիկոսը), խոսեցինք Ձեր մասին. հանձնարարեց, որ Ձեզ բարև գրեմ, գրեմ, թե Հայրիկին հանդիպեցի մի այսպիսի գյուղում, ասում էր այս գեղեցիկ լեռները թողած ինչ եք անում այդ *հոտած* Բորժոմում: *Հոտած*-ը նրա գործածած բառն է...»: Կաթողիկոսին նկարել է ձի նստած (տես՝ հուլիսի կեսեր): Ապա ավելացնում է. «Պետք է ասեմ, որ սաստիկ անշուք անցավ Հայրիկը, և ժողովուրդը՝ գյուղացին գրեթե տեղից չչարժվեց: Որքան ցավալի է այս երևույթը, սրանից ավելի տխուր տպավորություն է անում Վեհի՝ իրան սվիտան ըստ ամենայնի: Չարմանալի է. մեր կյանքում իսկի լուսավոր, մխիթարական բան չկա, բարձր բան չկա: Արդյոք իմ հոռետեսությունի՞ց է այսպես, բայց ես հոռետես չեմ. իսկապես չկա»:

ԵԼԺ 9, 224-225, 584:

<Օգոստոսի առաջին տասնօրյակ>, Դսեղ. – Նամակ Թիֆլիս՝ Փ. Վարդազարյանին:

Գրում է, որ Շանթն ու Դեմիրճյանը մի շաբաթ մնացել են իրենց տանը, սակայն «շատ անհարմարությունների» պատճառով ստիպված են եղել բաժանվել: Ստացել են Վարդազարյանի չափածո նամակը. «Շատ խնդացինք այդ անակնկալ սյուրարիզի առիթով և իսկույն ևեթ ընկանք հանգերի ետևից, սկսեցինք պատասխանը հորինել: Մինչև գիշերվա ժամը 2-ը <...> աշխատեցինք և ... երեք բանաստեղծ հավաքված չկարողացանք մի պատասխան գրել: Սակայն ես <...> մենակ մի պատասխան եմ գրել, որ հետո եմ ղրկելու քեզ Շուլավերից» (Վարդազարյանի չափածո նամակը և Թումանյանի պատասխանը չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 225-226, 585:

<Օգոստոսի առաջին տասնօրյակ>, Դսեղ. – Նամակներ Մարուսյա և Շուշան Վարդազարյաններին (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 226:

<Օգոստոսի կեսեր>, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փ. Վարդազարյանին:

Կարծիք է հայտնում նրա բանաստեղծությունների մասին, որ այնքան էլ նպաստավոր չէ. հավանում է միայն մեկը. «Մեկն ինձ դյուր եկավ՝ «Կուռքը»»: Գրում է, որ Շուլավերում կյանքը տաղտկալի է, չի կարողանում անել այն, ինչ մտածում էր. «Այստեղ, ինչպես և ամեն տեղ, բան չկա: ԵՉմարիտ որ, ոչ մի տեղ բան չկա, և կյանքն այնպես տափալ է, միօրինակ ծանծրալի, չնչին և դեպքերն ու հերոսներն այնքան մանր, ողորմելի: Այսպիսի ժամանակներում մարդ մտնում է իր պատյանը, ամփոփվում է իր մեջ ու ապրում իր մտքերում՝ իր ճաշակով ստեղծած աշխարհում: Եթե չխանգարեին՝ այդ ամենալավ տեղն է հիմա»:

ԵԼԺ 9, 226-227, 585:

<Օգոստոս>, Շուլավեր. – Գրում է «Ի՜նչպես սրտալի, ի՜նչպես կաթոզին...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 189, 600-601:

<Օգոստոս>. – Լ. Շանթի և Դ. Դեմիրճյանի հետ ճանփորդում է Լոռիում:

Դ. Դեմիրճյանը հիշում է. «Թումանյանն էր, Շանթը և ես: Քոլագերան կայարանից բարձրանալով Դսեղի թերակղզին՝ մենք զգացինք Թումանյանի «տան» շունչը: Մեզ համար մի դազա սարքեցինք Թումանյանենց տան առջև, ուր մենք գիշերն անց էինք կացնում» (տե՛ս <Օգոստոսի առաջին տասնօրյակ>):

ԹԺՂ, 28:

<Ամառ>. – Դսեղում՝ Թումանյանների տանը, հյուրընկալվում է Սիմակ Սահակյանը:

Ս. Սահակյանը հիշում է. «...Տան առաջը մեծ պարտեզ կար, ուր և մի վրան կար զարկած (տե՛ս օգոստոս): Ահա հենց այդ վրանում էլ ես առաջին անգամ ծանոթացա մեր մեծ բանաստեղծի հետ»:

ԹԺՂ, 530:

Սեպտեմբերի 2. – Կ. Գալֆայանի նամակը Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Խնդրում է «Համլետի» Մասեհյանի թարգմանությունը: Հետաքրքրվում է իր մասին եղած կարծիքներով: Ուզում է իմանալ հատկապես Թումանյանի կարծիքը: Մտադիր է Նոր Նախիջևանում Համլետ խաղալ:

ԳԱԹ ԹՖ, 1074 (287 լր.):

Սեպտեմբերի 13-14, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Խորհրդածում է կյանքի, սիրո, մարդ արարածի, մարդկային հարաբերությունների, իր ընկճված հոգեվիճակի, նյութական հոգսերի ու կարիքների մասին: Մասնավորապես գրում է. «... Եվ առհասարակ կյանքը, ինչ որ կա, զգվելու չափ անասնական է թվում ինձ ու բոլոր նրա հանդիսավոր շարժողություններն ու հուզումները՝ հասարակ, չնչին, մանր-մունր հանգամանքների քառասյին մի կուտակում, որ ապշեցնում է ապուշներից, վախեցնում ու ճնշում է ողորմելիներից, ու խղճուկների անհամար բազմությունը իրար խառնած, քշում, տանում իր հոսանքի հետ, տակն ու վրա անելով»: Հիշելով Վարդազարյանի արտահայ-

տությունը, թե «մարդկության մեծ բաժինը անասուններն են», հարում է. «Ես մի բարձր արհամարհանք եմ տածում դեպի այդ անասունները: Գուցե այս իմ հոգու արատներից է, որ հայտնում եմ, բայց այսպես է: Դրանց ես ավելի պարզ ու հասարակ, ավելի անկատար արարածներ եմ համարում, քան անասուններ. ճիճուներ են դրանք, որոնք սողում են ամեն տեղ և ծծում են ամեն տեղ: Չգիտեմ այն վսեմ շարժողությունը, որ կոչվում է թռիչք, և ոչ էլ ունեն այն ազնիվ սնունդի ճաշակը, որ կոչվում է հոգեկան վայելք: Դրանց մեջ չի ապրում ձգտումը կատարելության, որ դառնում է շատ խիզախների կորստյան պատճառը: Գերմարդն ստեղծելու ձգտումն էմ ասում, ինչպես ասում է Նիցշեն, կամ ինչպես Քրիստոսն է հորդորում, աստծու նման կատարյալ լինելու ձգտումը»: Իր հոգեկան կացության մասին. «Դու երևակայել չես կարող, որ ես զարմանալի կեղծ եմ: Ես լսում ու ժպտում եմ մեկին, հենց երբոր իսկապես ծիծաղում եմ նրա վրա ու արհամարհում, ես շատ կարևոր մարդու տեղ եմ դնում մեկին՝ հենց միաժամանակ իսկապես ոչինչ, մի չիք համարելով, վերջապես միշտ, գրեթե միշտ, այսպես, ասես թե ես չեմ ապրում, այլ մի դեր եմ կատարում, մի շատ հիմար դեր, որ տվել եմ մի ողբերգակ դերասանի մի վոդևիլի մեջ: Ես ինձ այդպես եմ զգում...»: Մեղմում է Վարդազարյանի բանաստեղծությունների մասին իր հայտնած կարծիքը (տե՛ս <Օգոստոսի կեսեր>, Շուլավեր). խոստովանում է, որ այդ բանաստեղծությունները իրեն նոր ընդհանրությունների առիթ են տալիս. «Կուռքը», օրինակ, «Ինչպե՛ս սրտալի, ինչպե՛ս կաթոզին» բանաստեղծության (տե՛ս օգոստոս) գրության շարժառիթն է: Գրում է, որ Հրատարակչական ընկերության փակման մասին արդեն գիտի:

ԵԼԺ 9, 228-232, 586:

Սեպտեմբերի 17. – Քահանա Սահակ Ազարյանցի նամակը Թումանյանին՝ Մեծ Ղարաքիլիսայից:

Խնդրում է տեղի հարուստներից մեկի՝ Ալեքսանդր Եդի-գարյանցի եղբոր հանգուցյալ որդու տապանաքարին փորագրելու համար մի ոտանավոր շարադրել (տե՛ս նաև մարտի 17, մայիսի 17):

ԳԱԹ ԹՖ, 785 (500) (1):

<Մինչև սեպտեմբերի 27-ը>. – Թարգմանում և «Տարագին» է ուղարկում Կոլցովի «Сяду я за стол: («Раздумье селянина») ոտանավորը՝ «Գեղջուկի մտածունքը» վերնագրով («Տարագ», 1900, թիվ 45):

Փիլ. Վարդազարյանին գրում է. «Անցյալ օրը տեղում (առավոտը) թարգմանեցի Кольцов-ի մի ոտանավորը – «Сяду я за стол» – ուղարկեցի «Տարագին»: Стол-ը շինել են գիտես ինչ – պատի տակ, և այս ոչ թե հանգի համար, այլ ավելի լուրջ խորհրդով: Եթե սեղան թարգմանեի – նստել են սեղան – այդ հայերեն կնշանակեր նստել են սուփրա: Եթե գրեի սեղանի մոտ – տգեղ էր: Վերջապես, բանաստեղծությունը հայերեն չէր լինի: Խեղճ հայ մարդու տարակուսանքի և մտածունքի տեղը – պատի տակն է» (ԵԼԺ 9, 235):

ԵԼԺ 2, 249, 593-594:

Սեպտեմբերի 27, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փ. Վարդազարյանին:

Վերլուծում է վերջինիս ուղարկած «նյութերը», այսինքն՝ բանաստեղծությունները: Այդ կապակցությամբ կարևոր դիտարկումներ է անում ստեղծագործության ձևի և բովանդակության մասին. «Յենց բանն էլ հայտնելու ձևի և ուժի մեջն է. արտահայտությունն է բանաստեղծությունը, ոչ թե միտքը»: Բանաստեղծությունը համեմատում է ներքին և արտաքին գեղեցկությամբ օժտված մարդկանց հետ. «Սրանք կենդանի բանաստեղծություններ են, բնության երգերն են: Ճշմարիտ. մի՞թե գեղեցիկ կնոջից ավելի սրտառուչ երգ կա կամ առաքինի մարդուց ավելի վսեմ բանաստեղծություն: <....> Ո՞ր բանաստեղծն է նոր միտք հայտնել: Ես, որ աստվածացնում են Շեքսպիրին, իսկի չեմ էլ մտածում, թե նա ինչ միտք է հայտնել, դրա վրա չեմ հիանում, այլ թե ինչպես է հայտնել: <....> Մի խոսքով, միևնույն հողը, որից բրուտը կճուճ է շինում, աստված՝ մարդ»:

ԵԼԺ 9, 233-236:

Սեպտեմբերի 27, Շուլավեր. – Գրում է «Սիրելի» («Խորն է քո հոգին երկընթի մման...») բանաստեղծությունը:

Գրված է Վարդազարյանի մի ոտանավորի տպավորության տակ՝ ընկերոջը հիշեցնելով. «Իհարկե, այս ոտանավորները մեր մեջ, այսպես ասենք, խաղալու համար են գրվում» (ԵԼԺ 9, 235): ԵԼԺ 1, 371, 656-657:

<Հոկտեմբերի սկզբներ>. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խորհուրդ է հարցնում իր նոր գրած «Երբ տխուր և միայնակ», «Խոնարհվիր» և «Իմ կտակը» բանաստեղծությունների մասին: Գրում է նաև, որ ուղարկում է 100 ռուբլի: ԵԼԺ 9, 241, 588:

<Հոկտեմբերի կեսեր>, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Առանձին-առանձին գրում է նրա ուղարկած բանաստեղծությունների մասին և եզրակացնում. «Մի խոսքով, այս անգամվա նյութերդ անհաջող են: Բան չհասկացա: Ինչպես երևում է տաղանդդ սպառվում է»: Առարկելով ընկերոջը, թե բանաստեղծության համար կարևորը միտքն է, բացատրում է. «Բանաստեղծության տեսակետից միտքը ինչ է որ – միայն նյութ, հում նյութ, մատերիալ: Բանաստեղծ չի նա, ով որ հայտնում է, թե մարդը ոչինչ է բնության առաջ. բանաստեղծը նա է, ով որ թեկուզ դրանք լսելուց հետո այնպես ներկայացնի ու պատկերացնի այդ հարաբերությունը, որ ընթերցողն զգա ու տեսնի...»: Տեղեկացնում է, որ «Հազարան բյուրբյուր» և «Սինամ թագավորի գաղտնիքը» հեքիաթների թեմայով ուզում է «հորինել մի արևելյան պոեմա». «Դրանով հետաքրքրվելով գտա, որ շատ անգամ տպված է, բոլոր ազգերն ունեն, պատմված է հազար ու մի ձևով, մինչև անգամ գիտնականները մեկնություն են տվել, թե գարնան գալն է հեքիաթի առարկան, բայց այդ բոլորից հետո ես ոչ միայն չթողի իմ հեքիաթը, այլ ավելի պինդ բռնեցի, ավելի ոգևորվեցի այդ նյութով. ով ինչպես ուզում է գրած լինի, ես էլ ինձպես են ասելու, և, մինչև անգամ, հանդգնություն ունեցա գիտնականների հակառակ իմ ունեցած մեկնությունը, միտքը նկատել հեքիաթի մեջ և այն զարգացնել ու երգել: Ինչպես դու գիտես, իմ կարծիքով բանաստեղծության ու մուզիկայի ծնունդն է հեքիաթի առարկան»:

Ուրիշների, նույնիսկ մտերիմ մարդկանց նյութական օգնության պատճառով իրեն նվաստացած է զգում. «Ես ինքս մեծ փափագն ու հակումն ունեմ ուրիշներին հովանավորելու, կամ ավելի լավ ասեմ, իմ ունեցածը ուրիշների հետ բաժանելու, ով կարիք կունենար: Այժմ, երբ բանը հակառակն է դուրս եկել, պետք է գործին այնպես չնայել, ինչպես, օրինակ, մեր լրագիրներն են հասկանում ու նայում. այսինչ չքավոր գրողին... բարերար... ողորմություն և այլն, և այլն»:

ԵԼԺ 9, 237-241:

<Հոկտեմբերի կեսեր>. – Մոսկվայի հայ ուսանողների (Գ. Խատիսյան և Լ. Նազարյան) նամակը Թումանյանին (չի պահպանվել):

Գրում են, թե պատրաստվում են գրական ժողովածու հրատարակել: Խնդրում են Թումանյանից ժողովածուի համար ուղարկել «Բանաստեղծը և սատիրը» («Պոետն ու Մուսան») երգիծական պոեմը:

ԵԼԺ 9, 239, 587-588:

<Հոկտեմբերի կեսեր>, *Շուլավեր*. – Ստանում է Փ. Վարդազարյանի ուղարկած 100 ռուբլին:

ԵԼԺ 9, 241, 588:

Հոկտեմբերի 21. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին՝ Ցյուրիխից:

Հիշում է Վերնատունը, խոսում է «Դեպի Անհունը» և «Սինամ թագավորը» հրատարակելու մասին: Հետաքրքրվում է Լ. Շանթի, Դ. Դեմիրճյանի, Ղ. Աղայանի դրությամբ: Այնուհետև գանգատվում է իր վիճակից. «Քեֆս վատ է, տրամադրությունս միշտ մռայլ. հույս, ոգևորություն, եռանդ բան չկա մեջս, բայց քաշեքաշ ապրում եմ, քաշեքաշ պարապում»:

ԱԻ ԵԺ 6, 28-29:

<Հոկտեմբերի վերջեր>, *Շուլավեր*. – Նամակ Մոսկվա՝ Փ. Վարդազարյանին:

Հայտնում է, որ պատրաստվում է ընտանիքով վերադառնալ Թիֆլիս: Մտահոգված է տան վարձի խնդրով: Խնդրում է ընկերոջից «մի բան անել»: Հասարակության մեջ արվեստա-

գետի անփոխարինելիությունը նկատի ունենալով՝ հիշում է Սեն-Սիմոնի խոսքերը՝ ուղղված իր հայրենակիցներին. «Դուք կարող եք փոխարինել ձեր գորականներին, եպիսկոպոսներին, իշխաններին, եթե նրանք թողնեն իրանց գործը կամ կոտորվեն, բայց դուք չեք կարող փոխարինել ձեր գրողներին ու ստեղծագործողներին և չեք կարող ոչ բանաստեղծություն գրել, ոչ վեպ, ոչ երաժշտություն հորինել...»: Հավանել է Վարդազարյանի «Ես ու իմ սիրտը» բանաստեղծությունը:

ԵԼԺ 9, 242-244, 588-589:

<Հոկտեմբերի վերջեր>, *Շուլավեր*. – Գրում է «Ափսոս...» («Լսիր, սիրտս երգ է ասում...») բանաստեղծությունը:

Գրված է Փիլ. Վարդազարյանի «Ես ու իմ սիրտը» բանաստեղծության տպավորության տակ:

ԵԼԺ 1, 180, 597-598:

✓ *Հոկտեմբերի 31*. – Վրթ. Փափազյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է ֆրանսիական բանկի աշխատանքից ազատվելու, ապա ատամնաբուժական դպրոց ընդունվելու մտադրության մասին: Խորհուրդ չի տալիս բանաստեղծին տերտեր դառնալ, քանի որ դա կնշանակեր հրաժեշտ տալ բանաստեղծությանը. «Այ տղա, քո ի՞նչ բանն է տերտեր դառնալը, խեղճ ես, հիմա էլի մեկ-մեկ, երբ դարդերդ շատանում են, կարողանում ես նստել գրելու, երբ տերտեր դառնաս, ոչ մի տող չես գրիլ, խելքիցդ հանիր այդ և մի կերպ յուրա գնա, մինչև տեսնենք՝ ինչ կարող եմ այստեղ անել քեզ համար էլ: Սմբատ Շահագիզը շուտով քեզ կուղարկի գրական ֆոնդի տոկոսներից, երևի մի 200 ռ. փող չեղածից լավ է: Մի խոսքով ինչ որ կանես արա, տերտեր չդառնաս»:

Ակնարկում է, որ Թումանյանը իր խոստացած մի գրվածքը ուղարկի տպվելիք ժողովածուի համար (տե՛ս <հոկտեմբերի կեսեր>):

ԳԱԹ ԹՖ, 2302 (1165):

Նոյեմբերի 1. – Տ. Նազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խնդրում է «Տարագի» 1900 թ. նոյեմբերի 2-ին տպագրվող «Իլյուստրասիոնի» «Սանահնի» տեսարանի բացատրությունը գրել և ուղարկել իրեն: Խնդրում է ուղարկել սրբազան Հասան Ջալալյանի ծանապարհորդությունը: «Ներփակյալ երկու նամակ Ձեզ - մեկը մտքի շտեմարանից, մյուսը <?>, ընտրեցեք որն էլ կամենաք, եթե երկուսին տիրանաք, ավելի լավ»:

ԳԱԹ ԹՖ, 1804 (925):

<Նոյեմբերի առաջին կես>. – Նամակ Մոսկվա՝ Վրթ. Փափազյանին (չի պահպանվել):

Հանդիմանում է ընկերոջը իրեն օգնելու նպատակով Գասպարյան ֆոնդին դիմելու համար:

ԳԱԹ ԹՖ, 2303 (1166):

Նոյեմբերի 14. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է իր հուսախաբությունը, որ գրքի տպագրությունը չի իրականացել: Խնդրում է Թումանյանին. «Քեզ մոտ և մեր տանը եղած իմ ծախու գրքերից երկու արկղ լցրու և ուղարկիր իմ անունով»: Խնդրում է նաև, որ բանաստեղծը «մի երկար նամակով» տեղեկացնի իր «այժմյան դրության, մտադրության ու հույսերի» մասին:

ԳԱԹ ԹՖ, 824 (477ա):

<Մինչև նոյեմբերի 21-ը>. – Մոսկվա՝ Վրթ. Փափազյանին է ուղարկում «Պոետն ու Մուսան» երգիծապոեմի ձեռագիրը՝ «Վտակում» տպագրելու համար (տե՛ս <հոկտեմբերի կեսեր>): ԵԼԺ 3, 531:

Նոյեմբերի 21. – Վրթ. Փափազյանի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ գրական ֆոնդից Թումանյանին նպաստ հատկացնելու համար դիմել է ոչ թե Գասպարյան ֆոնդին (տե՛ս <նոյեմբերի առաջին կես>), այլ Ս. Շահազիզին: Վերջինս նրան ուղարկել է 200 ռուբլի: Ապա ավելացնում է. «Այստեղ մի տիկին կա, ես նրա հետ խոսեցի և երևի թե կհաջողվի մի երեկույթ տալ այստեղ, որի արդյունքը (հույս ունենք 5-6000 ռ.) կհատկացվի

քեզ՝ քո ընտանիքին, հետո մտադիր եր, բացի դրանից ուսանողական կասսային առաջարկել քեզ նպաստ տալու ամսական 30 ռ., որ գաս Մոսկվա և 1-2 տարի ուսանես»:

<...> «Անկեղծ կերպով քեզ համարելով կովկասահայոց առաջին բանաստեղծը, կցանկայի, որ դու գայիր այստեղ և ուսանեիր մի քանի տարի: Այս այսպես: Գալով պոեմայիդ՝ կարդացինք և վճռեցինք անփոփոխ, առանց մի բառ իսկ փոխելու՝ տպագրել, որովհետև նրա մեջ չկա ոչինչ, որ դեմ լինի մեր ուղղության և կամ որին կարելի լինի ջնջել: Այդ կողմից ապահով եղիր. պոեմադ բոլորիս վրա շատ լավ տպավորություն թողեց: Ի սեր Աստծո, դեռ քահանա չդառնաս, դեռ սպասիր, իմացիր, որ քահանա դառնալով պիտի ստիպվես կամ գրիչդ կտորել և կամ տաղանդդ կորցնել»:

ԳԱԹ ԹՖ, 2303 (1166):

Նոյեմբերի 24. – Ա. Նազարեթյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է Կ. Գալֆայանի՝ Բաքվում կրած անհաջողության, հայ դերասանների միտումնավոր վերաբերմունքի և ընդհակառակը՝ ռուս դերասանների բարյացակամության մասին: Վերջում գրում է. «Բալայանի մոտ գնացինք, պատասխանեց, որ դու նամակ չես գրել և անհրաժեշտ է, որ իրանց՝ Շագիրդանովների կանտորան գրես, որպեսզի տան»:

* Ըստ երևույթին, Թումանյանը նամակ է գրել Նազարեթյանին և խնդրել Կ. Գալֆայանին տեր կանգնել:

ԳԱԹ ԹՖ, 974:

<Նոյեմբերի վերջ>, *Թիֆլիս*. – Նամակ-երկտող Փիլ. Վարդապարյանին:

Գրում է. «Արի մի քիչ գրույց անենք աշխարհքի ունայնության մասին: Մոսկվայից նամակ եմ ստացել. տես ինչ եմ գրում «Պոետի ու Մուսայի» մասին և պոետի մասին» (տե՛ս նոյեմբերի 21):

ԵԼԺ 9, 244, 589-590:

<Նոյեմբեր-դեկտեմբեր>, *Թիֆլիս*. – Երկտող Փ. Վարդապարյանին:

Գրում է. «Գալու՞ ես – գրական ցերեկույթ կազմենք»:
ԵԼԺ 9, 244:

<Նոյեմբեր-դեկտեմբեր>, Թիֆլիս. – Երկտող Փ. Վարդապարյանին:

Գրում է. «Թե ժամանակ ունես՝ արի մի քիչ զակագով բանաստեղծություն անենք»:

ԵԼԺ 9, 244:

Դեկտեմբերի 5, Թիֆլիս. – Ստանում է նամակ Զովհաննես Տեր-Մարտիրոսյանից:

Տեղեկություն է հաղորդում Թումանյանին՝ երեխաների, մասնավորապես Զամլիկի հիվանդանալու առիթով մոր անհանգստության մասին:

ԹՏԹ, 3822:

Դեկտեմբերի 7. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Շնորհավորում է Թումանյանի ութերորդ զավակի ծնունդը: Առաջարկում է՝ անունը դնեն Արեգ: Տեղեկություններ է հաղորդում իր աշխատանքի և առհասարակ կենցաղային կացության մասին: Այնքան էլ նպաստավոր կարծիքի չէ դերասան Գալֆայանի մասին, և հանդիմանում է Թումանյանին, որ մտադիր է Բաքվից ստանալիք իր թոշակը տրամադրել նրան: «Լսեցի, որ Փիլիպը հրատարակչական ընկերություն է կազմել: Ուրախացա, ենթադրելով, որ դու կարող ես պաշտոն ունենալ, գուցե ես էլ... Այս մասին մի տեղեկություն գրիր: Նոր «Մուրճին» կաշխատակցես անշուշտ, ուղղագրությունը *չփոխելու* պայմանով. ես նույնպես (հրավեր ստացել եմ)»:

ԳԱԹ ԹՖ, 478:

Դեկտեմբերի 18. – Վ. Միրաքյանի նամակը Թումանյանին՝ Շուլավերից:

Չտաքրքրվում է իր «Լավվարի որսը» պոեմի տպագրության գործով և խնդրում է լինել իր բարեխոսը, «որ գոնե ապահով դարձնի չմնա ծածկված թանձր խավարում»:

ՈՒՅ 5, 285-286:

Դեկտեմբերի 31, գիշեր. – Գրում է «Հանելուկ» («Հապա գտեք, էն ո՞վ էին...») ոտանավորը:

Ձեռագիրը՝ Մ. Վարդապարյանի ալբոմում՝ վերջինիս ամուսնության առիթով:

ԵԼԺ 1, 386, 662:

1900. – Տպագրվում է («Տարագ», «Իլյուստրացիոն» հավելված թիվ 45, էջ 66) «Раздумье селянина» բանաստեղծության Թումանյանի թարգմանությունը՝ «Գեղջուկի մտորումները» վերնագրով և «Կուլցովից» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 249-250, 593-594:

1900. – Տպագրում է («Տարագ», 1900, թիվ 50, էջ 764) Ֆելիցիա Հիմենսի «To My Mother» բանաստեղծության թարգմանությունը ռուսերենից՝ «Նանիկ ասա ինձ» վերնագրով (հետագայում «Հիվանդ եմ, մայրիկ»), «Հիմենսից» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 251, 594-595:

1900. – Գրում է «Ինչո՞ւ եղպես ինձ մոռացար» ոտանավորը:

ԵԼԺ 1, 188, 600:

1900. – Ավ. Իսահակյանի բաց նամակը Թումանյանին՝ «Եվրոպա հասնելուց մի քանի օր հետո» (չի պահպանվել):
ԱԻԵԺ, 6, 28

1900.- Գրում է «Մեր սիրելի հայր ճուղուրով...» սկզբնատողով բանաստեղծությունը:

Գրված է Գ. ճուղուրյանի դստեր՝ Արուսյակի ծննդյան առթիվ:

ԵԼԺ 1, 385, 661-662:

1900. – Գրում է «Զի Աստված ընդ մեզ է...» բանաստեղծությունը:

Հիմքում լեզգի ասպատակների դեմ հայ ժողովրդի պայքարի դեպքերն են:

ԵԼԺ 2, 195-197, 572:

1900. – Գրում է «Խոստովանանք» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 406, 668:

1900. – Թովմա վարդապետի նամակը Թումանյանին՝ Նոր Բայազետից:

Խնդրում է իր որդեգիր Արտաշես Ղարիբյանցի ոտանավորները տպագրել. «Կարդալով «Տարագում» Ձեր ժողովի մասին և քո անդամությանդ մասին, առա նորանից մուսայի արտադրություններից 3 ոտանավոր և մեկ պատկեր <....> քո հավանությամբ տեղավորելու այն ժողովածուի մեջ, որ պիտի Ձեր հավանությամբ լույս տեսնի Ղ. Ալիշանի հիշատակին»:

ԳԱԹ ԹՖ, 1215 (334 լր.):

1900. – Անդամագրվում է Ե. Լալայանի հիմնադրած Ազգագրական հրատարակչական ընկերությանը և ընտրվում հանդեսի խմբագրական հանձնաժողովի անդամ:

ԼԿ, 16:

1900. – Թիֆլիսի պահնորդական բաժնի գործակալների կողմից ճանաչվում է իբրև կասկածելի անձ: Անունը գրանցվում է քաղաքական անբարեհույսների ցանկում:

ԼԿ, 15-16:

1 8 9 0 - ա կ ա ն ն եր

Գրում է «Տրտմության սաղմոսներից» շարքը:

Գրում է «Երմեկ թիթեռ ես լինեի...» ոտանավորը:
ԵԼԺ 1, 184, 598:

Գրում է «Կորած ցնորքներ» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 185, 598-599:

Գրում է «Մութ ու խավար իմ հայրենիք...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 186, 599:

Գրում է «(Հատված)» («... Ամեն բան երկրում ունի մի սահման...») քառատողը Օ. Գիրգիդյանի ալբոմում:

ԵԼԺ 1, 373, 657:

Գրում է «Ի՞նչ է բույրը ծաղկի» սկզբնատողով բանաստեղծությունը Օ. Գիրգիդյանի ալբոմում:

ԵԼԺ 1, 374, 657:

Գրում է «Է՛յ, գիժ ջահելներ, վառ-վառ ծաղիկներ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 375, 658:

Գրում է «Չոնգուրիս» ոտանավորը:

ԵԼԺ 1, 376, 658:

Գրում է «Հայոց ապաբախտ գրողը նստած...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 377-378, 658:

Գրում է «Այժմ ահա ազատ եմ ես...» ոտանավորը:

ԵԼԺ 1, 379, 659:

Գրում է «Սիրելի ընկեր, որ պատահեցիր...» ոտանավորը:*

* Բանաստեղծն այս ոտանավորը Մարիա Կոնոպնիցկայայի «Պրոմեթեոս և Սիզիֆ» դրամատիկական երկի մի հատվածի ազատ թարգմանության հետ նվիրել է Փ. Վարդազարյանին:

ԵԼԺ 1, 380, 659:

Գրում է «Ես քո լեզվով եմ ուզում քեզ սիրել...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 381, 660:

Գրում է «Անուշ ընկեր» ոտանավորը:

ԵԼԺ 1, 382, 660-661:

Գրում է «Երկու արշավանք» բալլադը:

ԵԼԺ 2, 190-191, 571:

Գրում է «Չարության սկիզբը» բալլադը:

ԵԼԺ 2, 186-187, 570-571:

Գրում է «Կաչաղակների ծագումը» բալլադը:

ԵԼԺ 2, 188-189, 571:

Գրում է «Միշկեն» պատմվածքը:

ԵԼԺ 5, 483-484, 805:

Գրում է <Հանեսն ու Խուդին> պատմվածքը:
ԵԼԺ 5, 486-488, 806:

Գրում է <Կտակը> մանրապատումը:
ԵԼԺ 5, 503-504, 808:

Գրում է «Նեսոյի քարաբաղնիսը» պատմվածքի նախնական տարբերակը՝ «Թե հարևանները ինչպես կտրեցին Կիրակոս բիծու դողը» խորագրով:
ԵԼԺ 5, 613-615, 754:

Կատարում է «Տանջող ծայներ» գրառումը:
ԵԼԺ 5, 561, 813:

Կատարում է <Ժողովում նա վեր է կենում> գրառումը:
ԵԼԺ 5, 561-562, 813:

Կատարում է <Ի սկզբանե էր բանն-ի> գրառումը:
ԵԼԺ 5, 563, 814:

Գրում է «Վիգեն Մամիկոնյան» պատմական երկի մի սևագիր հատված:
ԵԼԺ 5, 488-489, 806:

Գրում է <Մեծ որդին> դրամատիկական հատվածը:
ԵԼԺ 5, 546-547, 811:

Թարգմանում է Բայրոնի «Մնաս բարյավ» («Մնաս բարյավ և թե կուզես...») բանաստեղծությունը Ի. Վ. Կոզլովի ռուսերեն թարգմանությունից:
ԵԼԺ 2, 310-312, 614:

Թարգմանում է «Վայրենի պապուասների երգը ֆրանսիացիների վրա: Իդարա բանաստեղծուհին երգում է եղեգնի ձայնակցությամբ» բանաստեղծությունը:
ԵԼԺ 2, 313-314, 614

Թարգմանում է Մարիա Կոնոպնիցկայայի «Պրոմեթեոս և Սիզիֆ» դրամատիկական պոեմից մի հատված:
ԵԼԺ 2, 315, 615:

Գրում է «Ուսման անառակ զավակներ» հոդվածը:
ԵԼԺ 6, 404-408, 633:

Գրում է «Գրողի նամակները» հոդվածը:
Նամակի ձևով գրված այս պատառիկներով բանաստեղծն իր կարծիքն է հայտնել ժամանակի կենցաղի, մշակույթի ու սոցիալական հարաբերությունների մասին:
ԵԼԺ 6, 408-412, 634:

Գրում է <Գյուղական ուսումնարանների առիթով> սևագիր հոդվածը:
Հիշեցնում է 1898 թ. գրված «Պաշտոնու տրտունջը» երգիծական բանաստեղծությունը:
ԵԼԺ 6, 413-414, 634:

Գրում է «Գործն սկսված է» սևագիր հոդվածը:
ԵԼԺ 6, 414-415, 634:

Գրում է «Հովհաննես թագավոր (1021- 1022)» ողբերգության մի քանի հատված:
ԵԼԺ 5, 552-559, 812:

1 9 0 1

Տարեմուտ, Թիֆլիս. – Գրում է «Դարամիջի ժամին» («Ինչպես երկու ահեղ սարեր...») բանաստեղծությունը:
Ձեռագիրը՝ Մ. Վարդազարյանի ալբոմում:
ԵԼԺ 1, 190, 601:

<Հունվարի կեսեր>. – Առաջին անգամ «Իմ դարողը» վերնագրով տպագրում է («Մուրճ», 1901, թիվ 1, էջ 44) «Ինչու՞ էդպես ինձ մոռացար...» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 188, 600:

Հունվարի 19. – Վ. Միրաքյանի նամակը Թումանյանին՝ Շուլավերից:
Ամանորյա մաղթանքներից հետո գրում է. «Սիրելի Հովհաննես, միտդ է, որ Որսս * թողի քեզ մուտ, չլինի հոտել է, էլ

բանի պետք չի: Ես մի բաց նամակ էլ առաջ եմ գրել քեզ նրա մասին (տե՛ս 1900, դեկտեմբերի 18), բայց ոչ մի տեղեկություն չստացա: Նորից խնդրում եմ, եթե մի որևէ քայլ արած ես այդ մասին՝ նեղություն քաջի ինձ հայտնել: Այս նամակաբեր եղբայրս՝ Սանդրոն, ի դեպ, քեզ կտեսնի, գոնե նրա հետ մի բան հայտնի բերանացի կամ գրավոր»:

* Խոսքը «Լավարի որսը» պոեմի մասին է:
ՈՒՅ 5, 286:

Հունվարի 30, Թիֆլիս. – Գրում է «Ռուստեմին» բանաստեղծությունը:

Ուղղված է իր բժիշկ ընկերոջը՝ Արիստակես (Ռուստեմ) Ջարգարյանին:

ԵԼԺ 1, 191, 601:

<Հունվար – մարտ>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Ղլտճյանին:

Շնորհակալություն է հայտնում 100 ռ. ուղարկելու համար: Պատրաստվում է 3 օրով շտապ գյուղ մեկնել: Այնուհետև գրում է, որ մի պահ, Աղայանի և Հովհաննես քահանայի (կնոջ հայրացուի) խորհրդով, որոշել էր քահանա դառնալ, բայց երբ այդ մասին իմացել են «մոտիկ բարեկամները»՝ իշխ. Մ. Թումանյանը, Փիլ. Վարդազարյանը, բժ. Ար. Ջարգարյանը, չեն համաձայնել, դիմել են կաթողիկոսին, Ալ. Մանթաշյանին և այլ մարդկանց՝ օգնելու իրեն՝ դուրս գալու ֆինանսական ճգանաժամից:

ԵԼԺ 9, 245-246:

<Հունվար – մարտ>. – Երեք օրով «շտապ» այցելում է Դսեղ:

ԵԼԺ 9, 245:

<Չմեռ>. – «Տրտմության սաղմոսներ» շարքից ոտանավորներ է կարդում Խրիմյան Հայրիկին:

Ալեքսանդրապոլից Խորեն Խրիմյանին գրում է. «Մի շարք ոտանավորներ եմ գրում, որոնց ընդհանուր վերնագիրն է «Տրտմության սաղմոսներ»: Այդ «Տրտմության սաղմոսներից» մի քանիսը այս ծմեռ կարդացի Հայրիկին: Նրան դուր եկան և

ես խոստացա, որ կուղարկեմ «Արարատին» »:
ԵԼԺ 9, 276:

<Մինչև փետրվարի 27-ը>. – Նամակ Բաքու՝ Ղ. Աղայանին (չի պահպանվել):

Խնդրում է հետաքրքրվել, թե ինչու չի ստանում Շահգեղյանի խոստացած նպաստը:

ԳԱԹ ՂԱՖ, 146:

<Փետրվար>. – Ստ. Լիսիցյանի երկտողը Թումանյանին: Տեղեկացնում է, որ Մելիք Ղարաօյրոյանի հետ իրեն այցելության է գալու՝ «Աղբյուր - Տարագի» մասին զրուցելու համար: ԳԱԹ ԹՖ, 1343 (343):

<Փետրվարի վերջ – մարտի սկիզբ>. – Ստ. Լիսիցյանի երկտողը Թումանյանին:

Խնդրում է շտապ ուղարկել փոփոխված «Հոպուլը» («Անիծած հարսը»)՝ «Մուրճի» թիվ 3-ում տպագրելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1342 (343):

Մարտի 2. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Բաքվից: Հայտնում է Շահգեղյանի՝ Թումանյանին հատկացված նպաստը փետրվարի 27-ին ուղարկած լինելու մասին:

ԳԱԹ ՂԱՖ, 146:

<Մարտի 5-6>. – Նամակ Բաքու՝ Ղ. Աղայանին (չի պահպանվել):

Հայտնում է, թե չի ստացել Շահգեղյանից սպասվելիք գումարը:

ԳԱԹ ՂԱՖ, 145:

Մարտի 10. – Ղ. Աղայանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է, թե Արամ Նազարեթյանը թաքցրել է Շահգեղյանից * նպաստը չստանալու իսկական պատճառը, այն է՝ թե Թումանյանը չի ստեղծագործում: Նոր միջամտությունից հետո կրկին խոստացել են ուղարկել: Այնուհետև նամակագիրը խնդրում է նորից խոսել կաթողիկոսի հետ իր նպաստի մասին և հայտնում, որ մայիսի վերջին Թիֆլիսում կլինի:

* Նաև՝ Շագիդանով (տե՛ս ԵԼԺ 9, 249): Հունիսին տակավին այդ խոստումը չէր կատարել:

ՂԱԵԺ IV, 573-574:

<Մինչև մարտի 15-ը>. – Ստ. Լիսիցյանի երկտողը թումանյանին:

Խնդրում է ուղարկել խոստացած «Հոպոպը».* «Թիվ 3-ը արդեն շարված է և ես կցանկանայի այդ համարում զետեղել Ձեր այդ փոփոխված բանաստեղծությունը»:

* Խոսքը վերաբերում է «Անիծած հարսը» բալլադին:

ԳԱԹ ԹՖ, ց.2, թիվ 343:

Մարտի 22. – Պետերբուրգի գրաքննչական կոմիտեն թույլատրում է «Վտակ» ժողովածուի հրատարակությունը:*

* Այստեղ տպագրվելու էր թումանյանի «Պոետն ու Մուսան» երգիծապոեմը (տե՛ս 1899, «մինչև նոյեմբերի 21-ը»):

ԵԼԺ 9, 603-604:

<Մարտ>. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1901, թիվ 3, 65-68) «Անիծած հարսը» բալլադը՝ «ժողովրդական լեգենդա» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 107-109, 555:

<Մարտի վերջ - ապրիլի սկիզբ>, *Թիֆլիս*. – Նամակ Փարիզ՝ Կ. Գալֆայանին (չի պահպանվել):

Խնդրում է ուղարկել իր լուսանկարները: Նամակի մասին հիշում է Կ. Գալֆայանը հուլիսի 7-ին թումանյանին ուղղված նամակում:

ԹՏԹ, 2495. ԳԱԹ, 1075, (լ.ց. 287):

Ապրիլի 11. – Ս. Հախումյանի նամակը թումանյանին՝ Փարիզից:

Խնդրում է դառնալ «Ժամանակ գրական-գիտական, գեղարվեստական և քաղաքական» վեցամսյա հանդեսի մշտական աշխատակից և «հնար եղածին չափ շուտով» ուղարկել «անտիպ ու չափավոր ընտիր գրվածքներից մին երկուսը «Ժամանակի» 1. N-ում տպագրելու համար». «Մեծարգո պարոն, խմբագրությունս, հարգելով Ձեր տաղանդը և խոստովանելով, որ նա բեղմնավոր է հայրենի գրական անդաստանի վրա, հրավիրում

է Ձեզ մասնակցելու սրբազան գործունեության և սպասում է Ձեր պատասխանին»*:

* Չի թղթակցել:

ՈՒՀ 5, 286-287:

Ապրիլի 30. – Ներսես վրդ. Դանիելյանի նամակը թումանյանին՝ Կ. Պոլսից:

Խնդրում է Կիլիկիայի որբերի օգտին պատրաստվելիք ժողովածուի համար լուսանկարի հետ ուղարկել 2-3 թերթից բաղկացած որևէ ստեղծագործություն՝ պատրիարքարանի հասցեով:

ԳԱԹ ԹՖ, 1120 (305):

<Հունիսի սկիզբ>. – Ստանում է Մեսրոպ քահանա Մեյլանի «Քահանայական խնդրի շուրջը» գիրքը:

ԵԼԺ 9, 246:

Հունիսի 7, Թիֆլիս. – Նամակ Բաթում՝ Մեսրոպ քահանա Մեյլանին:

Շնորհակալություն է հայտնում նրա «Քահանայական խնդրի շուրջը» գիրքը ստանալու համար: Իր կարծիքն է հայտնում Ար. եպիսկ. Սեդրակյանի «Քահանայական խնդիր» աշխատության (1900, Մոսկվա) առիթով Լեոյի, «Մշակի» և Մեյլանի միջև ծագած բանակռվի մասին:*

* Սեդրակյանի գիրքը կոչված էր նպաստելու քահանաների վիճակը բարելավելուն, նրանց կրթական մակարդակը բարձրացնելուն, քննադատում էր քահանաների ձեռնադրման ապօրինությունները, կաշառակերությունը և այլն: Քննադատելով Սեդրակյանին՝ Մեյլանը այն կարծիքին էր, որ կուսակրոն հոգևորականները ազգին արժեքավոր քահանաներ տալու համար պետք է նախ իրենք նվիրված լինեն ժողովրդին, և պահանջում էր, որ թեմական առաջնորդները ոչ թե նշանակվեն կաթողիկոսի կողմից, այլ ընտրվեն ժողովրդական քվեարկությամբ: Թումանյանը բաժանում էր Մեյլանի տեսակետը: Բացի «Մշակից» ու Լեոյից՝ Սեդրակյանի կողմնակիցներից էին նաև Աղայանը և Արասխանյանը:

ԵԼԺ 9, 246-247, 591-592:

Հունիսի 7. – Մտադրություն «շուտով» ամառանոց գնալու: ԵԼԺ 9, 247:

Յուճիսի 7. – Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության Ախալցխայի, Ախալքալաքի և Գորիի գավառապետի տեղակալի գրությունը Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետին:

Պահանջում է ուղարկել Չայ բարեգործական ընկերության վարչության անդամների կազմի լրիվ ցուցակները՝ նշելով հատկապես 1900 թ. անվստահելիների անունները: Գրությանը կից ցուցակներում երկու տեղ նշվում է նաև Թումանյանի անունը: Ըստ որում բարեգործական ընկերության իսկական անդամների ցուցակում Թումանյանի անունն ընդգծված է և կողքին հարցական դրված: Թումանյանը նշված է նաև վարչության անդամների շարքում, որտեղ հանդիպում են նաև Փիլ. Վարդապարյանի, Ալ. Քալանթարի և այլոց անունները:*

* Բնագրերը պահպանվում են Վրաստանի պետական արխիվում, լուսապատճենները՝ Թումանյանի տուն-թանգարանում:

ԹՏԹ, ՓԲ, թիվ 42:

Յուճիսի <առաջին կես>, Թիֆլիս. – Մտադրություն Ղ. Աղայանի հետ ճամփորդելու գավառներում՝ նյութեր հավաքելու նպատակով:

* Մտադրությունը չի իրականացել:
ԵԼԺ 9, 249:

Յուճիսի, <առաջին կես>. – Ա. Ղլտճյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից (չի պահպանվել):

Խորհուրդ է տալիս բանաստեղծին, որ խնդիր գրի՝ դրամական նպաստ ստանալու համար կամ անձամբ գա Բաքու:
ԵԼԺ 9, 247:

Յուճիսի <առաջին կես>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ա. Ղլտճյանին:

Ստացած նամակի պատասխանն է: Չի ընդունում ընկերոջ խորհուրդը կամ Աղայանի կարծիքը՝ նպաստի հարցը լուծելու համար անձամբ Բաքու գնալ: «Եթե այդ քո ասած մարդիկը <...> այնպիսի մարդիկ են, որ գրականությանը մոտենում են անկեղծ զգացումներով ու գիտակցաբար, այն ժամանակ իմ գալն ավելորդ է»: Պետք է իմանան, որ գրողի առջև նվաստացուցիչ

պայմաններ դնելով՝ վիրավորում են նրա արժանապատվությունը. «Գրողի հետ չպետք է պայմաններ կապել, գրողին պետք է ընթացք տալ, հնար տալ, և նա կտա այն, ինչ որ թերևս չեն էլ սպասում»: Վերջում այնուամենայնիվ ներկայացնում է իր իրական կացությունը. «Այս ընթացքիս այնպիսի կարիքների առջև եմ կանգնած և այնքան ստիպողական, որ մնացել եմ չվարած – անկարելի է այս օրով գրականությամբ պարապել, անկարելի է այսպես շարունակել. կամ դեսը, կամ դենը»:

ԵԼԺ 9, 248-249:

Յուճիսի <առաջին կես>, Թիֆլիս. – Գրական հավաքույթների Թումանյանի տանը:

Ա. Ղլտճյանին գրում է. «Գրական ժողովներ ենք անում ինձ մոտ»:

* Նկատի ունի «Վերնատան» հավաքները:
ԵԼԺ 9, 249:

Յուճիսի <առաջին կես>. – Պ. Կիրկեսալովի նամակը Թումանյանին՝ Ուրավելից:

Տեղեկություններ է հաղորդում առողջարանի պայմանների, մասնավորապես վարձու տրվող կացարանների և սննդի մասին:

ԹՏԹ, 2288:

Յուճիսի 12. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Բուդապեշտից:

Թիֆլիսից մինչև Դանուբ՝ նախ գնացքով, ապա ծովով ճամփորդության մանրամասն նկարագրությունն է: Նամակի սկզբում խոստովանում է, թե ինչպիսի հոգեկան կապերով է կապված եղել թիֆլիսյան միջավայրի և անձամբ Թումանյանի հետ. «Այս բոլոր հառաջաբանը միայն անոր համար է, որ հասկնաս, թե որչափ մոտիկ ես դուն սրտիս: Ես ատիկա այն ժամանակ ամբողջովին գիտակցեցի, երբ Թիֆլիսը ալ ետևս էր. ես հիմա սկսեմ եմ հասկնալ, որ Թիֆլիսի հետ կապված եմ եղած, որ մոտ երկու տարվան հող տեղի կյանքս վրայես առանց շոշափման անցած չէ: Նու՛ր, այս խոստովանանքես վերջը, որ քեզի համար գուցե շատ ալ «դատարկ բան» էր, անցնեմ խոստումիս՝

ճամփորդությանս նկարագրին»։ ճանապարհորդական տպավորությունները մանրամասն ներկայացնելուց հետո՝ վերջում. «Դուն ալ կգրես ինձի, հա՛, մանավանդ, շատ հետաքրքիր եմ գիտնալու՝ ինչ եղավ վիճակդ: Ես գրեթե վստահ եմ, որ այս նամակս ամառանոցդ կկարդաս»:

Ուր 4, 338-340:

Յուճիսի 13. – Կ. Գալֆայանի նամակը Թումանյանին՝ Ախալցխայից:

Խնդրում է տեղեկություններ հաղորդել տեղի թատերական ընկերության մասին. ո՞ր դերասաններն են մասնակցելու, ովքե՞ր են անդամները և ինչ կարգադրություն է եղել իր մասին: Հայտնում է, որ մի քանի օրից մեկնում է Ուրավել և համոզում է Թումանյանին՝ ընկերանալ իրեն:

ԳԱԹ ԹՖ, 1075 (287):

Յուճիսի 21. – Ժամանում է Ուրավել:

ԵԼԺ 9, 250:

Յուճիսի 21 կամ 22, Ուրավել. – Բացիկ Վիճիսի՝ Ս. Թումանյանին (չի պահպանվել):

Բացիկի մասին հիշատակվում է Ս. Թումանյանի պատասխան նամակում (տե՛ս հուճիսի 24):

Յուճիսի 22, Ուրավել. – Նամակ Բելի Կյուլչ՝ Օ. Թումանյանին:

Գրում է Ուրավելում տեղավորվելու, ամառանոցային անհարմարությունների, դերասան Կ. Գալֆայանին և ուրիշ ծանոթների հանդիպելու մասին. «Գալուս օրը հայտնվեց, որ ես այդ քաղաքում անծանոթ մի դարիբ չեմ. հայտնվեցին շատ բարեկամներ, որոնցից շատերին, իհարկե, չեմ ճանաչում: Բանից երևաց այստեղ գիտեն ոտանավորներս անգիր, գիտեն՝ որ թվին ինչ գիրք եմ տպել, որ թերթում ինչ եմ գրել և այլն. մի խոսքով, շուտով տարածվեց, որ ես ազգային մի ջոջ եմ...»: Վերջում հետաքրքրվում է. «Աղայանը փող ունի, թե չէ - կիմանաս»:

ԵԼԺ 9, 249-251:

Յուճիսի 24. – Ս. Թումանյանի՝ հուճիսի 24-ի նամակը Հովհ. Թումանյանին՝ Վիճիսից:

Հայտնում է, որ հուճիսի 23-ին Թումանյանից նամակ է ստացել:

ԳԱԹ ԹՖ, 1244 (g.2), 659:

Յուճիսի 26, Ուրավել. – Ս. Շահագիզի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

ԵԼԺ 9, 264, 598:

<Յուճիսի վերջ – հուլիսի սկիզբ>, Ուրավել. – Ստանում է երկու նամակ կնոջից (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 254, 594:

<Մինչև հուլիսի 1-2-ի գիշեր>, Ուրավել. – Ղըրխքեսալովից լսում ու գրի է առնում «Հոգեհան» լեզենդը:

ԵԼԺ 9, 253, 594:

Յուլիսի 2, Ուրավել. – Գրում է «Հոգեհան» բալլադը:

ԵԼԺ 9, 253:

Յուլիսի 2, Ուրավել. – Նամակ Վիճիսի՝ Ս. Թումանյանին:

Գրում է առողջարանային անհետաքրքիր կյանքի, վարձած սենյակի, իր ստեղծագործությունների տարածված լինելու մասին: Քաղաքագլուխը խոստացել է լավ հարմարություններ ստեղծել իր համար. «Կամաց – կամաց դարձա նշանավոր հյուր, մինչև անգամ հրավիրել եմ Ախալցխա»: Հանդիպել է դերասան Գալֆայանին, որ շարունակ խոսում է ««Մշակի» լրբության կամ ամուսնական կյանքի օգտակարության մասին»: Դժգոհելով, որ տեղացիները անկիրթ են ու ձանձրալի, տեղեկացնում է. «Մոտ օրերս եկավ մի ծանոթ ընտանիք, մի ջահել տիկին, և Ուրավելի անտառը կենդանացավ նրա սրտալի ծիծաղով ու երգով: Շատ դյուրեկան երգել գիտի, ինքն էլ մի շատ սիրալիկ ու զգայուն տիկին է և ահա ես կավալերություն եմ անում բնության ծոցում և դաշտերից վայրենի ծաղիկներ եմ քաղում նրա համար»:

ԵԼԺ 9, 251-253, 593:

Յուլիսի 8. – Ս. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին: Խորհուրդ է տալիս զգուշանալ բուժվողներից, լավ հետևել

սննդին, ուտել կաթնեղեն, ծու: Խորհուրդ է տալիս հեռու մնալ Ղըրխքեսալովից, եթե նա է, որի մասին «Մշակը» գրում է, թե շահագործում և ճնշում է բանվորներին:

ԳԱԹ ԹՖ, 660:

Յուլիսի 10, Ուրապել. – 10-12 հոգի երիտասարդներ ի պատիվ բանաստեղծի քեֆ, ուրախություն են կազմակերպում անտառում:

«Գետի վրա ոչխար մորթեցինք, քեֆ արինք – վարժապետ, ստուղենտ, գիմնազիստ, բժիշկ, ինչ որ կուզես. ես էլ թամադա էի: Լավ քեֆ արինք»:

ԵԼԺ 9, 254:

Յուլիսի 10, երեկոյան, Ուրապել. – Թումանյանի ղեկավարությամբ բացօթյա ներկայացում:^{*}

«Իրիկունը երիտասարդներն ու ուսուցիչները ներկայացրին «Կռթ – կռթ» վոդևիլը բալկոնում, իսկ ժողովուրդը կանգնած էր բաց օդում. ռեժիսորն էլ ես էի»: Ուսուցիչների և երիտասարդների ուժերով բացօթյա ներկայացվում է Վասակ Մադաթյանի «Կըռթ – կըռթ» մեկ արարվածով վոդևիլը:^{*}

^{*} Վասակ Մադաթյանի վոդևիլի ծեռագիր մեկ օրինակը պահպանվում է Թումանյանի անձնական գրադարանում (ԹԹ, 10 (682):

ԵԼԺ 9, 255, 594:

Մինչև հուլիսի 11-ը, Ուրապել. – Չորս նամակ Օ. Թումանյանին (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 254, 594:

Յուլիսի 11, Ուրապել. – Նամակ Բելի Կյուլջ՝ կնոջը:

Գրում է. «Երեխեքն ինչի՞ նամակ չեն գրում. համբուրիր, իմ կողմից ասա, որ գրեն: Աշխենին ուշք դարձրու, որ արենպակաս չմնա: Այդտեղ Արփենիկի համար շատ լավ է. նրան կրային ջուր էր հարկավոր հենց: Արեգը երևի լղարել է ատամից: Թող միշտ գնան այգին, երբեմն գյուղից դուրս տարեք: Մուշեղը թող Աղայանցի Մուշեղի հետ երբեմն հայերեն պարապի: Բարևիր Աղայանցներին: Ափսոս, միասին չեղանք – քեֆեր անեինք»:

ԵԼԺ 9, 255:

Յուլիսի 11, Ուրապել. – Կնոջը գրում է, որ նամակ է ստացել Շուշանից (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 255:

Յուլիսի 11. – Պատասխան նամակ Շ. Վարդազարյանին (չի պահպանվել):

Նամակի բովանդակության մասին կնոջը կատակով գրում է. «Գրել եմ, որ այստեղ շատ օրիորդների ու տիկիճների հետ զվարճանում եմ, սիրահարություններ եմ անում, իսկ Օլին գրում, որ տխուր է»:

ԵԼԺ 9, 255:

Մինչև հուլիսի 16-ը, Ուրապել. – Նամակ Բելի Կյուլջ՝ Օ. Թումանյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 256:

Յուլիսի 16, Ուրապել. – Ստանում է նամակ Բելի Կյուլջից՝ Օ. Թումանյանից (չի պահպանվել):

Նեղանում է, որ ամուսինը նամակ չի գրում:

ԵԼԺ 9, 256, 595:

Յուլիսի 16. – Լ. Շանթի՝ բացիկը Թումանյանին՝ Անվերսից: «Էլեգիա» վերնագրով մի կատակ-ոտանավոր է «Վերնատան» մասին.

Ոսկի լուսինը աղտոտ երկինքեն
Ապշած կը նայեր «Վերնատան» գլխին,
Ուր կը մլավեր խոր ներշնչանքեն
Լքված, միայնակ, պոչավոր ոգին,^{*}
Պոչավոր ոգին «նոր» քերթողության,
Որու ապերախտ սաներն աներես
Նոր ոգիներու երկըրպագության
Ելեր են գացեր. մեկը, է՛, Անվերս,^{**}
Առջևը հաշիվ, մուրհակ, տոմարներ,
Երկրորդը անտառ է քաշվեր, կըսեն^{***}
Տարփանքով կախված «ծուլության» ուսեն,
Իսկ թե երրորդը^{****} ո՞ր դի է կորեր
Չըգիտե ոչ ոք
Ոչ-ոք այդ մասին,
Ոչ իսկ բազմահագ

Vis – a vis ոգին:

* Բացիկի նկարը վերևից պատկերում է կլոր լուսինը՝ մարդկային կերպարանքով, որ նայում է ներքևում՝ տների տանիքին, նստած երկար պոչով սև կատվին:

** Խոսքը վերաբերում է իրեն՝ Շանթին:

*** Նկատի ունի Թումանյանին:

**** Դեմիրճյանն է:

ՈՒՅ 4, 340-341:

Մինչև հուլիսի 17-ը, Ախալցխա. – Ստանում է նամակ Շ. Վարդազարյանից (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 257:

Մինչև հուլիսի 17-ը, Ուրավել. – Նամակ Շ. Վարդազարյանին և իշխանուհի Մ. Թումանյանին (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 257:

Յուլիսի 17, առավոտյան ժամը 5, Ուրավել. – Ընդունում է Ախալցխայից եկած մի խումբ ուսանողների և գիմնազիստների:

Եկել էին բանաստեղծին հրավիրելու Ախալցխա:

ԵԼԺ 9, 256-257:

✓ *Յուլիսի 17, Ախալցխա.* – Նամակ Բելի Կյուլչ՝ կնոջը:

Գրում է, որ Ախալցխայում է. «...Տեսնես ոնց են պատիվ տալիս այստեղ: Ոչ մի բան չթողին ես առնեմ, ոչ մի կողմ թեքվեմ: Տեսնես ինչ առոք-փառոք, ծառայով ու ինչ սրբիչներով բաղնիս տարան. այժմ էլ եկել՝ նոր բաղնիս արած, սուրճն առաջիս գրում եմ քեզ: Ահա այս մարդիկ են, որ երբ ինձ մոտ են գալիս՝ տրտնջում են»: Կնոջ միջոցով բարևներ է ուղարկում Աղայանցներիին, ափսոսալով, որ միասին չեն. «...Ասա ափսո՛ս, ի՛նչ քեֆեր կանեինք: Այստեղ մի կաթիլ գինի չեմ խմում»:

ԵԼԺ 256-257:

Յուլիսի 17. – Օ. Չեչմաճյանի* նամակը Թումանյանին՝ Բելի Կյուլչից:

* Ըստ Թամար Թումանյանի բանավոր վկայության՝ Օսաննա Գիրգոյանի ամուսնական ազգանունն է:

ԳԱԹ ԹՖ, թիվ 1919 (499(2)):

Մինչև հուլիսի 18, Ուրավել. – Ստանում էր «Новое обозрение», «Մշակ», «Տարագ» պարբերականները:

«Ուրիշներն էլ ինձանից են վերցնում. գրադարանը իմ տունն է»:

ԵԼԺ 9, 259:

Յուլիսի 18. – Վերադառնում է Ուրավել:

ԵԼԺ 9, 258:

Յուլիսի 18, Ուրավել. – Նամակով Ախալքալաք այցելելու հրավեր է ստանում:

Երեկոյան էլ մի խումբ ախալքալաքցիներ են այցելում բանաստեղծին՝ նույն հրավերով. «...Ուզում են տանել, ով գիտի, գուցե գնամ. շատ է ալարս գալիս»:

ԵԼԺ 9, 258:

Յուլիսի 18, Ուրավել. – ճաշում է Պետրոսյանների տանը:

Յրավիրել էր տանտիրուհին՝ Օ. Թումանյանի ընկերուհին:

ԵԼԺ 9, 258:

Յուլիսի 18, գիշեր. – Նամակ Բելի Կյուլչ՝ Օ. Թումանյանին:

Գանգատվում է, որ ժամանակ չունի պարապելու, հաճախակի հանդիպումներն ու այցելությունները հնարավորություն չեն տալիս: Նամակի հետ ուղարկում է նաև իր ամառանոցային լուսանկարը*:

* Նկարը պահպանվում է ԹՏԹ, թիվ 664 ալբոմում:

ԵԼԺ 9, 258:

Յուլիսի 18, Ուրավել. – Աբասթունան գնալու վերջնական որոշում չի ընդունել:

«Դժվար թե գնամ Աբասթունան. հյուրանոցները բոլորը այնպես են բռնված, որ ոչ մի տեղ չկա. մեծ հյուրանոցի տերը ինձ հետ մոտիկ ծանոթացավ. ասում է օրական 10 ռուբլիանոց նոմերներ են մնում, բայց, ասում է, քեզ մի բանով կգոհացնենք, արի. իհարկե այսպես չեմ գնալ, գուցե Վարդազարյանների տեղն էլ նեղ եղավ, մանավանդ Մարուսյան ու Յուլյան էլ գնացել են»:

ԵԼԺ 9, 258-259:

✓ *Չուլիսի 19, Ուրավել.* – Նամակ Վիճիսի Ս. Թուճանյանին:

Իշխանուհու՝ հուլիսի 8-ի նամակի պատասխանն է: Գրում է, որ իր առողջական վիճակը լավ է, բուժումը հաջող է ընթացում: Ամուսնանալուց հետո առաջին անգամ զգում է ազատ լինելու հաճույքը. «Այժմ էլ թեև ազատ չեմ զգում ընտանիքիս հոգսից, բայց գիտեմ, որ նրանք էլ լավ են, և միայն կարոտ է, որ զգում եմ, ոչ թե ծանրություն, որ զգացել եմ միշտ: Իսկ *կարոտը* ինձ համար ամենաթանկագին զգացումն է: Առհասարակ հագուրդը, կուշտ լինելը, ավելի ճիշտ՝ հղփանալը, իջեցնում է մարդուն ներքև: Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան: Իդեալներն ինչ են որ – հոգու կարոտներ: Եվ հենց սրա համար է լավ մենակությունը. մենակության մեջ ամենավսեմ հաճույքներ կան և դրանք այն բոլորներն են, երբ մարդու հոգին լա՛յն, խաղա՛ղ, անվրդո՛վ ծփում է ու սիրտը քաղցր-քաղցր ծնւում՝ երբեմն որոշ, երբեմն անորոշ կարոտներով: Եվ այդ բոլորների մեջն է, որ հայտնագործություններ են անում մարդիկ, ստեղծագործում են, իհարկե, ևս առավել բանաստեղծ մարդիկ»:

Այս կապակցությամբ հիշում է Նիցշեին ու մեջբերում վերջինիս մի միտքը բանաստեղծների մասին. «Բոլոր բանաստեղծները հավատում են, թե ով որ կանաչի մեջ լեռան մենավոր լանջում պառկած հսկի, երկնքի ու երկրի մեջ գոյություն ունեցող շատ բաներ կիմանա: Եվ երբ բանաստեղծներից տիրում է քնքուշ տրամադրությունը, նրանք միշտ հավատում են, թե բնությունն ինքը սիրահարված է իրանց վրա ու իրանց ականջին շշնջում է խորհրդավոր, սիրային, շողոմարար ճառեր, և դրանով թռչում են նրանք մահկանացուների առաջ»:

Անդրադառնալով Ս. Թուճանյանի նոր ծրագրերին, գրում է նաև իր նոր ծրագրերի մասին, որ վերաբերում են ճամփորդությանը դեպի Աբասթուման, Ախալքալաք, Անի:

Ղըրխքեսալովի մասին իշխանուհու ակնարկին պատասխանում է. «Ղըրխքեսալովի մասին էիք գրել: Ձեր գրելուց առաջ նա ինձ մանրամասնորեն պատմեց իր գործը: Իր պատմելով՝ ինքն արդար է և հերքել է, գործն էլ դատաստանով տարել է: Ե՛հ, ինձ ինչ. ո՞վ է անպայման լավ մարդը. ավելի լավ է մարդը

իրենից լավություն պահանջի, ուրիշի վատությունը շատ էլ վտանգավոր բան չի լավ մարդու համար, եթե միայն ինքը ճիշտ որ լավ է»:

Հայտնում է. «... Արդեն՝ ծանոթների մի մեծ շրջան ունեմ այս փոքրիկ ամառանոցում, որ չեն թողնում... տխրեմ»:

ԵԼԺ 9, 259-261:

Մինչև հուլիսի 20-ը, Ուրավել. – Մտադրություն՝ ճամփորդելու գյուղերում:

Նպատակն էր լեզենդներ, նյութեր, աշուղների և աշուղության մասին տեղեկություններ հավաքել: Բայց մտադրությունը փոխել է. «Լավ կլինի առայժմ մի առողջանամ, բայց որքա՛ն, որքան մեծ բան է, եթե գրողը կարողանա ճանապարհորդել, ուսումնասիրել իր ժողովուրդն, ուսումնասիրել նրա ավանդությունները, լեզուն, ադաթները: Սաստիկ զգում եմ այս կարիքը ամեն անգամ, երբ լինում եմ ժողովրդի մեջ – ծո՛վ է, ծո՛վ»:

ԵԼԺ 9, 263-264:

Մինչև հուլիսի 20-ը, Ուրավել. – Մտանում է Փիլ. Վարդագարյանի նամակը՝ Թիֆլիսից (չի պահպանվել):

Հետաքրքրվում է բանաստեղծի հավաքած ավանդություններով:

ԵԼԺ 9, 263:

Մինչև հուլիսի 20-ը, Ուրավել. – Մի աշուղից լսում է «նշանավոր Սայաթ-Նովայի թուրքերեն մի երգը»:

ԵԼԺ 9, 263:

Մինչև հուլիսի 20-ը, Ուրավել. – Նամակ Փիլ. Վարդագարյանի քրոջ աղջկան (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 264:

Չուլիսի 20, Ուրավել. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդագարյանին:

Գրում է առողջարանում տիրող վիճակի, իր առօրյայի, բուժման ընթացքի մասին. «Ես շատ շուտ կազդուրվեցի: Քրիստոսի նման մարդ եմ, որքան էլ մեռած լինիմ, երեք օրում հարություն եմ առնում»: Առողջարանային առաջին օրերին վայելել

է մենակութեան «տխուր բավականութիւնը» (տե՛ս հուլիսի 19-ը). «Սրտիս ուզած ժամանակ խոսում էի Շեքսպիրի, Գյոթեի, Նիցշեի ու Բրանդեսի հետ ու կրկին խաղա՛ղ մենակ մտորում, մինչև որ Գալֆայանը գոռում էր դիմացի բլրից – բանաստեղծ հայոց, այստեղ՝ անտառում, քո մուսաները ման են գալիս և այլն, և այլն, և դաչնիկները դուրս էին թափվում թամաշա անելու «խելառին»...»:

Նամակով Փիլ. Վարդազարյանին է ուղարկում մի թուրք աշուղից իր լսած՝ Սայաթ-Նովայի թուրքերեն երգը* նրա կարծիքն իմանալու համար:

Տեղեկացնում է, որ շատ լեզբեղներ է գրի առել, մեկն էլ մշակել է (տե՛ս հուլիսի 2):

* Բանաստեղծը շփոթում է. նրա լսած թուրքերեն երգը աշուղ Փասանդիինն է «Սայադի և Սադաթի» հեքիաթից:

ԵԼԺ 9, 262-264, 597:

<Հուլիսի 21, 22>.- Ստանում է Հովի. քահ. Մարտիրոսյանի նամակը Աղբուլաղից (Բելի Կյուլ):

Հայտնում է, որ Աղայանների հետ են, պատրաստվում են հաջորդ օրը ընտանիքով գնալ Շամշուղա՝ ժամանակ անցկացնելու... Գանգատվում է տանտիրուհուց, որի պատճառով գուցե Շուշինկեն (Օ. Թումանյանի մայրը) երկու երեխաներով ամսի վերջին գնա Շուլավեր. «Մեր բաղերի մրգերը այնտեղ փչանում են, իսկ մենք այստեղ ամենայն օր առնում ենք փողով»:

Ստադրություն հնարավորության դեպքում օգոստոսի 15-ին գնալ Աբասթուման:

ԵԼԺ 9, 270:

Հուլիսի 23, Ուրավել. – Հյուրընկալում է Փիլ. Վարդազարյանի հարազատներին:

«Լիզան, Աքելն ու Կատյան 23-ին եկան Ուրավել և այսօր (հուլիսի 27) գնում են... Ուզում էին ինձ հետները տանել՝ չգնացի»:

ԵԼԺ 9, 264-265:

Հուլիսի 24. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թուման-

յանին (ԳԱԹ ԹՖ, թիվ 1016) և Շանթի բացիկը (տե՛ս հուլիսի 25-26):*

* Այս նամակը Թումանյանն ըստ երևութին ստացել է իր՝ հուլիսի 27-ի նամակը ուղարկելուց հետո, որտեղ դժգոհում է. «Ձարմանալի է, իսկի նամակ չես գրում»: Շանթի բացիկը Թիֆլիսում ստացվել է հուլիսի 16-ին: Գուցե նախ ուղարկվել է Կոջոր, որտեղ գտնվում էր Փիլ. Վարդազարյանը, ապա՝ Ուրավել:

ԳԱԹ ԹՖ, 1016 (89(2)):

Հուլիսի 26, Ուրավել. – Լուսանկարվում է Փիլ. Վարդազարյանի՝ իրեն հյուր եկած հարազատների հետ (տե՛ս հուլիսի 23):

ԵԼԺ 9, 265:

Հուլիսի 27, Ուրավել. – Նամակ Փիլ. Վարդազարյանին:

Հայտնում է ճանապարհորդելու իր մտադրությունը. «Ուզում եմ օգոստոսի սկզբից դուրս գամ Ուրավելից, մի քանի օր մնամ Աբասթուման ու գնամ անցնելու Ախալքալաքի և Շիրակի գավառներով դեպի Թիֆլիս: Ուզում եմ՝ Անի էլ գնամ: Ախալքալաքից հրավիրել են, սպասում են»:

ԵԼԺ 9, 265:

Մինչև հուլիսի 30-ը, Ուրավել. – Ստանում է Ս. Թումանյանի բաց նամակը (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 268:

Մինչև հուլիսի 30-ը, Ուրավել. – Ստանում է նամակներ դուստրերից՝ Աշխենից և Նվարդից (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 266, 598:

Հուլիսի 30, Ուրավել. – Բաքվեցի քահանա Գեղամյանի ընտանիքի հրավերով այցելում է նրանց՝ սուրճի:

ԵԼԺ 9, 266:

Հուլիսի 30, գիշեր, ժամը 11, Ուրավել. – Նամակ Բելի Կյուլ՝ կնոջը:

Տեղեկացնում է, որ Աբասթումանից իրեն հյուր են եկել Փիլ. Վարդազարյանի հարազատները (տե՛ս հուլիսի 23): Գրում է. «Ինչ-որ տխուր տրամադրություն ունեմ: Այժմ ավելի հաճախ

եմ հիշում քեզ ու երեխաներին և անհամբեր սպասում եմ ամառ-վա վերջին...»: Տեղեկացնում է նաև. «Այս մի քանի օրը կզնամ Աբասթունան. մի երկու օր այնտեղ մնալուց հետո՝ կվերադառնամ դեպի Ախալքալաք ճանապարհորդելու (տե՛ս հուլիսի 27):
ԵԼԺ 9, 265-267:

Հուլիսի 30, կեսգիշեր. – Նամակ Վիժիսի՝ իշխանուհի Ս. Թումանյանին:

«Իմ քունը չի տանում: Ինչ-որ մի անուշ թախիժ սիրտս ծնվում է: Երբեմն տխրությունը ուրախությունից ավելի է դյուր գալիս մարդու: Բայց ինչու եմ տխուր՝ չեմ հասկանում: Արդյոք անիրագործելի ցանկություննե՞ր են սզում սրտիս մեջ, խորտակված ցնորքնե՞ր են շարժվում, հեռվի կարո՞տն է այրում, թե՞ մոտիկ գալիքի նախազգացումն է քնքուշ ծփում, մեղմով հոգիս վրդովում...»

Ո՞վ իմանա, տխուր եմ էլի»:

Գրում է նաև ճանապարհորդելու իր մտադրության մասին (տե՛ս հուլիսի 27, հուլիսի 30, ժամը 11)՝ «լեզենդներ հավաքելու և առհասարակ ծանոթանալու ժողովրդի հետ»: Այդ առիթով տեղեկացնում է. «Ուզում եմ թմկաբերդ գնալ, երևի հիշում եք թմկաբերդի լեզենդան՝ այն կինը, որ ուզեց շահի թագուհին դառնալ և այլն»: Այնուհետև ավելացնում է. «Գիտե՞ք, բանաստեղծի համար տպավորությունները հարստություն են. վա՛յ այն բանաստեղծին, որ աղքատ է տպավորություններով: Ես էլ այդ կողմից բախտավոր չեմ: Իմ կարծիքով դա բախտ է»:

ԵԼԺ 9, 267-268:

Հուլիսի 30, Ուրապել. – Վիժիսի՝ Ս. Թումանյանին է ուղարկում «Ուրապելի երկաթի աղբյուրի տեսարանի» լուսանկարը:

«Ձեզ ծանոթ մարդիկ կան այդտեղ: <...> Առաջին պլանի վրա կանգնեցրել եմ հանքային ջրերի վերատեսուչներին կամ «Բանջչիկներին»՝ Ակոփ աղային, որ շատ է հռչակավոր և Ստեփան ախպարը»:

ԵԼԺ 9, 268:

<Հուլիսի վերջեր>. – «Վտակը» պատրաստ էր լույս տեսնելու:

Գրաքննչական թույլտվությունից (տե՛ս մարտի 22) բացի անհրաժեշտ էր նաև վաճառքի արտոնություն, չնայած առանց այդ արտոնության էլ «Վտակը» տարածվում էր (տե՛ս «սեպտեմբերի կեսեր»): Այդտեղ տպագրվել է «Պոետն ու Մուսան»:
«Մշակ», 1901, թիվ 146, 167:

<Հուլիսի վերջ կամ օգոստոսի սկիզբ>, Ուրապել. – ճաշում է Գ. Հարությունյանի՝ Ե. Լալայանի աներոջ ընտանիքում:

Նրանց մասին կնոջը գրում է. «Լավ ընտանիք են շատ կրթված, քաղաքավարի»:

ԵԼԺ 9, 269:

<Հուլիսի վերջ կամ օգոստոսի սկիզբ>, Ուրապել. – Նամակ Գովհ. քահ. Մարտիրոսյանին (չի պահպանվել):

Պատվիրում է, որ երեխաներին Բելի Կյուլչից Շուլավեր չտանեն (տե՛ս հուլիսի <21, 22>):

ԵԼԺ 9, 271:

<Հուլիս>, Ուրապել. – Ստանում է երկու նամակ Բելի Կյուլչից՝ Օ. Թումանյանից (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 265-267, 598:

Օգոստոսի 2, Ուրապել. – Լուսանկարվում է:

ԵԼԺ 9, 269:

Օգոստոսի 3, Ուրապել. – Բելի Կյուլչից՝ Օ. Թումանյանին է ուղարկում նախորդ օրվա լուսանկարը:

ԵԼԺ 9, 269:

Օգոստոսի 3, Ուրապել. – Նամակ Բելի Կյուլչից՝ Օ. Թումանյանին:

Դժգոհում է, որ կնոջից ուշ-ուշ է նամակ ստանում: Հարցնում է. «...Ի՞նչ որոշեցիք. տերտերն ու մայրիկը գնու՞մ են Շուլավեր, թե չէ, ե՞րբ եք մտադիր քաղաք գնալու, կամ ինչպե՞ս է երեխանց առողջությունը. Արեգն այժմ լա՞վ է, թե՞ չէ, և որքա՞ն են լավացել առհասարակ»:

ԵԼԺ 9, 269-270:

Օգոստոսի 3. – Օ. Թումանյանի նամակը (ԹԹ, ՄՄ, թիվ 1275) Հովհ. Թումանյանին՝ Բելի Կյուչից:

Դժգոհում է, որ ամուսինը պատրաստվում է ճանապարհորդել: Տեղեկացնում է, որ երեխաներից երեքը իր մոր և հայրացուի՝ Հովհաննես քահանայի հետ գնալու են Շուլավեր. «Տերտերն ու մայրիկը ամսի 8-ին գնում են Շուլավեր երեխանց երեքի հետ... Դու էլ գնում ես ճանապարհորդելու... չեմ իմանում՝ ինչ անեմ, ամեն մեկդ ձեր ցանկությունն եք ուզում կատարել, ես մնում եմ մեջտեղը կանգնած»:

ԵԼԺ 9, 270:

Օգոստոսի 3. – Մ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Վիժիսից:

Խրախուսում է բանաստեղծի՝ ճանապարհորդելու որոշումը: Հայտնում է, որ Փիլ. Վարդապարյանը բանաստեղծի առաջարկած անձնավորության՝ Մովսիսյանի անունով ուղարկել է նրա պահանջած գումարը:

ԳԱԹ ԹՖ, 1246 (ց.2, թիվ 661):

Օգոստոսի 4, Ուրավել. – ճաշի է հրավիրվում կնոջ՝ Օ. Թումանյանի ընկերուհու տուն (տե՛ս հուլիսի 18):

«Մի շատ լավ տղա է նրա ամուսինը. ինքը՝ խեղճ կինը, շարունակ հիվանդ է, թեև ի բնե առողջ կին է: Մարդ ու կնիկ իրար գուրգուրում են, ես էլ թանաշա եմ անում»:

ԵԼԺ 9, 269-270:

Օգոստոսի 6, Ուրավել. – Մտադրություն Աբասթունան գնալու:

Այդ նպատակով կառք է գալիս Ախալցխայից: Բայց ուրավելցիների խնդրանքով մնում է՝ մասնակցելու նրանց՝ իր պատվին կազմակերպած ճոխ խնջույքին, որ տեղի է ունենում Հարություն Հարությունյանի (տե՛ս <հուլիսի վերջ կամ օգոստոսի սկիզբ>) ամառանոցում. «էլ քե՛ք, ներկայացում, պարեր, մի խոսքով շատ պատվեցին»:

ԵԼԺ 9, 269-270:

Օգոստոսի 6, Ուրավել. – Խնջույքի ժամանակ Մ. Տեր-

Հովհաննիսյանի ալբոմում գրում է «Ազնիվ տիկնայք, ջահել հյուրեր» էքսպրոմտը:

ԵԼԺ 1, 388, 663:

Օգոստոսի 6, Ուրավել. – Հանդիպում է ախալքալաքցի Վ. Շահպարոնյանի և Դ. Ջավախեցու (Վահան Տերյանի ավագ եղբայրը) հետ:

Շահպարոնյանը հիշում է. «Թեև եկել էր հանգստանալու, բայց մենք նրան մեզ հետ տանում էինք սարեր ու ձորեր և խաղով, պարով ու զանազան բացօթյա զվարճություններով ժամանակ անցկացնում»: Մի անգամ էլ, երբ գնում են Ուրավելից հինգ կիլոմետրի վրա գտնվող ավերակները տեսնելու, բանաստեղծը այնքան է հոգնում, որ ասում է. «Տղերք, դուք գնացեք, ճանապարհներդ շարունակեցեք, ես չեմ կարող գալ»:

Նրանք կրկին հանդիպում են ճաշկերույթի ժամանակ. «ճաշկերույթն անցավ շատ աշխույժ և ուրախ, եղան ճառեր, կատակներ և այլն. ուրախ տրամադրության մեջ էր և մեր սիրելի Հովհաննեսը»:

Այդ օրն էլ Շահպարոնյանը բանաստեղծին հրավիրում է Ախալքալաք:

ԹԺՀ, 416-417:

Օգոստոսի 7, առավոտ. – Մեկնում է Ուրավելից:

«Դուրս գալուս առավոտը այնպիսի աղմկալի ճանապարհ դրեցին, որ Ուրավելի անտառները թնդացին երգերով, ուռաներով ու հրացանների որոտով. և երկար, ձեռների վրա բարձրացրած, թռցնում էին օդի մեջ»:

ԵԼԺ 9, 270:

Օգոստոսի 7. – Հասնում է Աբասթունան:

Հյուրընկալվում է Վարդապարյանների (Փիլ. Վարդապարյանի մայրը, քույրերը՝ Լիզան և Մարուսյան) մոտ: «Շատ ուրախ օրեր անկացրինք, շատ պատվեցին, ինչպես մի կարոտած մերձավորի»:

ԵԼԺ 9, 274:

Օգոստոսի 8. – Օ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Բելի Կյուչից:

Հայտնում է, որ մայրիկը, տերտերը, Մուշեղը, Աշխենը և Անուշը ամսի 10-ին մեկնելու են Շուլավեր, ինքն էլ շուտով թողնելու է Բելի Կյուչը: Տեղեկացնում է, որ ստացել է թու մամայանի ուղարկած լուսանկարը (տե՛ս օգոստոսի 3): Վատ տպավորություն է ստացել. «Տխուր, մռայլ, պառավածի տպավորություն է թողնում...»: Իբրև նորություն գրում է, որ կաթողիկոսը կոնդակով արծակել է Սուրենյանցին:

ԳԱԹ, ԹՖ, 2719:

Օգոստոսի 9, Արասթուման. - Մ. Վարդազարյանի հետ այցելում է հանգուցյալ (վախճանվել է Արասթումանում 1899 թ.) թագածառանգ Գեորգիի պալատը:

Տեսածների տպավորության տակ մտորում է. «Շատ տխուր տպավորություն արավ: Ամեն բան, ինչպես թողել է, այնպես էլ մնում են. կիսատ թողած Նանսենի ճանապարհորդությունը սեղանի վրա, շորերը իրանց տեղը կախած, հուշատախտակի վրա ինչ-որ խզմզած, շարունակ ծնողների, մոտիկների ու իր պատկերը. շարունակ մոր պատկերները` Миломы Георгию от мамы: Տխուր, տխուր մտքեր են ծագում մարդու հոգում: Տեսնում ես՝ ինչպես անցնում է մարդ և միայն իր հետքն է մնում, և այն էլ նայած՝ կարողացե՞լ է թողնել, թե չէ»:

ԵԼԺ 9, 272:

Օգոստոսի 9, Արասթուման. - Նամակ Բելի Կյուչ՝ Օ. Թումանյանին:

Արդողած է կնոջից, որ իր ճանապարհորդելու մտադրությունը (տե՛ս հուլիսի 30) նրան դուր չի եկել: Խիստ դժգոհում է «տերտերի ցանկությունից»՝ երեխաներից երեքին տանել Շուլավեր (<հուլիսի վերջ կամ օգոստոսի սկիզբ>). «Ես շատ կարճ կպատասխանեմ: Մյուս նամակումդ անպատճառ պետք է գրած լինի, որ երեխաները չեն գնացել Շուլավեր»:

ԵԼԺ 9, 270-271:

Օգոստոսի 10, Արասթուման. - Մտադրություն Արասթումանում՝ Վարդազարյանների մոտ (տե՛ս օգոստոսի 7) մնալ մինչև ամսի 12-13-ը, ապա գնալ Ախալքալաք:

ԵԼԺ 9, 271:

Օգոստոսի 10, Արասթուման. - Նամակ Մ. Թումանյանին: Հայտնում է իր գոհունակությունը Ուրավելում անցկացրած օրերից, մանավանդ տեղացիների՝ իր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից, առհասարակ առողջարանային բուժումից. «Մի խոսքով այս տարի Ձեր շնորհիվ և՛ առողջացա, և՛ մի բան կտեսնեմ՝ մեր գավառներից: Ուզում եմ Անի էլ գնալ, տեսնենք կիաջողվի՞, թե չէ»:

ԵԼԺ 9, 271-272:

Օգոստոսի 10, Արասթուման. - Ստանում է Փիլ. Վարդազարյանի ուղարկած դրամը՝ 50 ռուբլի (տե՛ս օգոստոսի 3):

ԳԱԹ, ԹՖ, 2046 (1017):

Օգոստոսի <13-ից հետո>. - Ժամանում է Ախալքալաք՝ տեղի հարուստներից Վարդան Շահպարոնյանի հրավերով:

Շահպարոնյանը հիշում է, թե ինչպես է առաջին անգամ թումանյանին հանդիպել Ուրավելում, ապա ավելացնում. «Մի քանի օր հետո, երբ արդեն վերադարձել էինք Ախալքալաք, լավ չեմ հիշում՝ հուլիսի վերջերին, թե օգոստոսի սկզբներին (1901 թ.), մի երեկո, երբ մեր տանը ոչ ոք չկար, գիշերվա ժամը 10-ին ինձ իմաց տվին, որ մեկը եկել, իջևանել է մեզ մոտ: Ես իսկույն եկա տուն, և որքա՞ն մեծ եղավ իմ ուրախությունը, երբ հյուրասենյակում նստած տեսա... Թումանյանին»:

ԹԺՅ, 417:

<Օգոստոսի երկրորդ տասնօրյակ>. - Վ. Շահպարոնյանի հետ գնում է Թմկաբերդի ավերակները դիտելու:

Ըստ Շահպարոնյանի հուշերի՝ տեղանքը մեծ տպավորություն է թողել բանաստեղծի վրա. «Տղերք.- ասել է նա,- ինչ-որ ուրախ տրամադրություն է ստեղծվում, կարծեք ժպտում է ձեր երկինքը...»: Նշումներ է արել: «Ճանապարհին շարունակ կրկնում էր.

- Ա՛խ, ի՛նչ լավ կլիներ, եթե մարդիկ թևեր ունենային կամ թևերին փոխարինող մի բան...»

Գյումուրդայի բարձունքից դիտել են Թմկաբերդի ավերակները ու մեկ-երկու ժամ հանգստանալուց հետո վերադարձել: «Հենց մեր դեմուղեն՝ հեռվում,- շարունակում է Շահ-

պարոնյանը, – երևում էին թմկաբերդի ավերակները, որոնք, թեկուզ թառած ծորից վեր բարձրացող բարձունքների վրա, այնուամենայնիվ, կարծես մեր ոտների տակ լինեին իրենց պարիսպներով, աշտարակներով, հատ ու կենտ շենքերի մնացորդներով և դեպի Քուռ գետն իջնող ջրի ճանապարհով...»:

ԹԺՅ, 418-419:

<Օգոստոսի երկրորդ տասնօրյակ>. – Շրջագայություններ Ախալքալաքի շրջակա տեսարժան վայրերում:

Վ. Շահպարոնյանը հիշում է. «Ախալքալաքում թումանյանը մի երկու օր էլ շրջագայության գնաց դեպ Տավշան թափա ծաղկավետ բլրակը, աղմկոտ թափարավան գետակի ժայռոտ մեծ ծորը և Քառասուն աղբերանց ծաղկավետ ծորակը: Մի քանի անգամ էլ կարթերով ձուկ որսալու գնացինք»:

ԹԺՅ, 420:

Օգոստոսի 13. – Մ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Վիժիսից:

Խրախուսում է բանաստեղծի՝ ճամփորդելու մտադրությունը (տե՛ս օգոստոսի 10) և հաջողություն մաղթում (տե՛ս նաև օգոստոսի 3):

ԳԱԹ ԹՖ, 1247 (662):

<Օգոստոսի 18-20>, *Ախալքալաք*. – Նամակ Թիֆլիս տանտիրոջը:

Խնդրում է իր բնակարանում վերանորոգումներ անել:

ԵԼԺ 9, 275:

Օգոստոսի 20, *Ախալքալաք*. – Բելի Կյուլէ՝ Օ. Թումանյանին է փոխադրում 60 ռուբլի:

ԵԼԺ 9, 274:

<Մինչև օգոստոսի 21-ը>. – Հրավեր է ստանում այցելելու Քանձա:

Նախ տրամադիր չի լինում գնալու, բայց երբ Ղ. Ջավախեցին, Ախալքալաք գալով, կրկնում է հրավերը, չի կարողանում «ոչ մի կերպ մերժել»:

ԵԼԺ 9, 274-75, 601:

Օգոստոսի 21, *Ախալքալաք*. – Նամակ Բելի Կյուլէ՝ Օ. Թումանյանին:

«Եկած օրից մինչև այսօր հանգիստ չունեն հրավերքներից. ամեն օր ճաշին մի տեղ ենք լինում, ընթրիքին՝ ուրիշ տան՝ շրջապատված շատ լավ մարդկանցով, միանգամայն ամենաքաղցր տպավորություններով են թողնելու այս քաղաքը, ուր այսքան սեր ու պատիվ ցույց տվին ինձ: Այնպես որ արդեն պոլիցիան հետաքրքրվել է, թե ինչ է պատճառը, ով եմ ես, որ այսպես տարվում եմ տնե տուն և այսքան ուշադրություն եմ գրավել: Անցյալ օրը մի ինտելիգետ արհեստավոր արծաթե գրչակոթ նվիրեց, որ նրանով գրեմ»:

ԵԼԺ 9, 274:

Օգոստոսի <21>, *գիշեր*. – Ախալքալաքից ծիով գնում է Քանձա:

«Ախալքալաքից ... գնացինք Քանձա գյուղը, երկար ճամփով՝ 40 վերստ, գիշերով. երեք օր էլ այնտեղ ժամանակ անց կացրինք, այնտեղից էլ գնացի տեսնելու Փարվանա լիճը, իսկ Ախալքալաքից գնացի տեսնելու Թմուկ բերդը»:

ԵԼԺ 9, 277:

Օգոստոսի 21, *Ախալքալաք*. – Նամակ Բելի Կյուլէ՝ կնոջը:

Դճոհում է զոքանչի և նրա ամուսնու՝ իր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից, երեխաներին առանց իր համաձայնության Շուկավեր տանելուց: Ապա ավելացնում է. «... Ահա իբրև հաշտության նշան՝ ուղարկում եմ քեզ այն վարդերից, որ քաղել եմ թագավորի աղջկա սքանչելի այգուց, Աբասթումանում, Մարուսայի հետ նրա պալատը ման գալու ժամանակ» (տե՛ս օգոստոսի 9):

ԵԼԺ 9, 274:

Օգոստոսի 21, *Ախալքալաք*. – Ստանում է Օ. Թումանյանի նամակը Բելի Կյուլէից:

ԹՏԹ ՓԲ, 747:

Օգոստոսի <22-24>, *Քանձա*. – Վայելում է ճոխ հյուրասիրություններ, տեսնում է Փարվանա լիճը:

Ջավախեցին հիշում է, որ տուն վերադառնալուց հետո

բնության հրաշալիքներով հմայված բանաստեղծը առանձնանում է իր սենյակում, հետո դուրս է գալիս և իրեն բավական երկար սպասողների համար կարդում «Փարվանայի» նախերգանքը. «Վերջապես դուրս եկավ: Աչքերը ծիծաղկոտ ու վառվռուն՝ մութ գիշերվա աստղերի նման, դեմքը պայծառ ու լուսավոր՝ նոր ծագած արևի պես, յուրահատուկ ժպիտը շրթունքներից. կանգնեց սեղանի գլխին ու աջ բազուկը արծվի թևի պես մեկնելով, կանչեց.

Բարձրագահ Աբուլն ու Մթին սարեր
Մեջք մեջքի տված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ...

Ու կարդաց Փարվանայի նախերգանքն ամբողջությամբ,
որ գրել էր հենց այդ օրը մեր տանը»:

ԹԺՅ, 434:

Օգոստոսի <24>. – Գանձայից վերադառնում է Ախալքալաք:

Յետագայում Շահպարոնյանը հիշողությամբ մեջ է բերում բանաստեղծի խոսքերը. «Թեև չարչարվեցի, բայց բավականությունը մեծ էր. նախ՝ Ղազարի սրտաբաց ընկերական վերաբերմունքը, երկրորդ՝ նրանց ընտանիքի անդամների, մանավանդ հոր խելացի, առողջ դատողությունները, պարզ գեղջկական միստ ու կացի հետ առանձին հմայք ունեին, իսկ Փարվանա լիճը, իր շրջապատի Աբուլսամսար և Մթին ահարկու լեռներով, ինչ խոսք, որ սքանչելի էր»:

Յուշագրողն իր կողմից ավելացնում է. «Թումանյանը զարմանալի դիտող ու տպավորվող մարդ էր, հետագայում, երբ ես կարդացի նրա «Փարվանա» լեզենդը, տեսա, որ նրա նկարագրած Աբուլն ու Փարվանան կարծես նկարչի վրձինով նկարած տեսարաններ լինեին»:

ԹԺՅ, 420-421:

Օգոստոսի 27. – Ախալքալաքում մնալու վերջին օրն է:

Այստեղ մնացել է երկու շաբաթ, բայց օրերը այնքան հազեցած են եղել, այնքան ուրախ, որ անցել են երկու օրվա

նման՝ «շարունակ հրավիրված և միշտ լավ խմբերով»:
ԵԼԺ 9, 276:

Օգոստոսի 27, Ախալքալաք. – Կազմակերպվել է ճոխ ճաշկերույթ Թափարավան գետակի ափին 150 մարդու մասնակցությամբ:

Շահպարոնյանը հիշում է. «Ճաշկերույթ – հանդեսը շատ ուրախ անցավ: Կանայք իրենց ազգային գեղեցիկ տարազով շուք էին տալիս հանդեսին: Իրար էին հաջորդում բաժակաճառերը, խմբական պարերն ու երգերը... Թումանյանն արտասանեց Ուրավելի մեր խմբի մասին գրած բանաստեղծությունը («Ազնիվ տիկնայք, ջահել հյուրեր...» էքսպրոմտը, ԵԼԺ 1, 388, 663)»:

Ըստ Թումանյանի օգոստոսի 29-ի նամակի՝ այդ միջոցառումը տեղի է ունեցել օգոստոսի 27-ին, մինչդեռ Շահպարոնյանի հուշերից այն տպավորությունն է ստացվում, որ 150 հոգուց բաղկացած ճաշկերույթը տեղի է ունեցել մինչև Գանձա գնալը:

ԹԺՅ, 420:

Օգոստոսի 27. – Դուրս է գալիս Ախալքալաքից և «փոշտով» ճանապարհվում դեպի Ալեքսանդրապոլ:

Շահպարոնյանը ճիշտ չի հիշում, թե իբր բանաստեղծը Ախալքալաքից վերադարձել է Թիֆլիս (ԹԺՅ, 421):
ԵԼԺ 9, 277:

Օգոստոսի 28, գիշեր. – Ալեքսանդրապոլի ճանապարհին:
«Ղարախաչի սարերում գիշերը վրա հասավ, փոթորիկն ու ծյունը բռնեցին, և մնացի կայարանում»:
ԵԼԺ 9, 277:

<Օգոստոսի 28, 29, Ալեքսանդրապոլ>.- Նամակ էջմիածին՝ Խորեն Խրիմյանին:

Խնդրում է Կաթողիկոսի միջոցով Գևորգյան ճեմարանում տեղավորել ախալցխացի հասարակական գործիչ Յովհաննես Նալբանդյանի որդուն՝ Պարույրին: Նույն նամակով ուղարկում է «Տրտմության սաղմոսներ» շարքից «Աստծու սպառնալիքը»

(«Մարգարեություն») բանաստեղծությունը՝ «Արարատում» տպագրելու համար (տե՛ս՝ ծմեռ.):

ԵԼԺ 9, 275, 601:

Օգոստոսի 29, առավոտ. - Հասնում է Ալեքսանդրապոլ:

«Մյուս օրն առավոտ իջա Ալեքսանդրապոլ: Իջա հյուրանոցում: Բայց մի ժամ տևեց հյուրանոցը: Ընկերս (Ավ. Իսահակյան) ինձ իսկույն փոխադրեց իրանց տունը, և իր քույրերի հետ կառքով եկանք իրանց կալվածքը (Ղազարապատ), որ 25 վերստ է Անի քաղաքից»:

ԵԼԺ 9, 277:

Օգոստոսի 29, <30>, Ղազարապատ. - Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Իր գոհունակությունն է հայտնում Ախալքալաքում և Գանձայում անցկացրած օրերից: Պատմում է Ալեքսանսրապոլում իր ընկերոջը՝ Ավ. Իսահակյանին հանդիպելու, Ղազարապատ գնալու և Անի այցելելու մտադրության մասին:

ԵԼԺ 9, 276-277:

<Օգոստոսի վերջ – սեպտեմբերի սկիզբ>. - Ղազարապատ գյուղում տեղեկություններ է հավաքում «Հազարան բլբուլ» հեքիաթի մասին:

Ավ. Իսահակյանը հիշում է. «Օհաննեսը մեր ջրաղացի վարպետին և գյուղացիներին, որոնք հեքիաթներ և ժողովրդական երգեր գիտեցողներ էին, հարցնում էր «Հազարան բլբուլի» մասին <....>: Ժամերով զրույց էր անում նրանց հետ և լսածները գրում տետրակի մեջ»:

ԹԺՅ, 13:

<Օգոստոսի վերջ – սեպտեմբերի սկիզբ>, Ալեքսանդրապոլ. - Ավ. Իսահակյանին պատմում է «Փարվանա» լեգենդի և «Թմկաբերդի առումը» պոեմի մտահղացման մասին:

Իսահակյանը հիշում է. «Չէր կարողացել գնալ բերդը տեսնելու, սակայն Աբուլ լեռան լանջերից դիտակով նայել էր բերդին, որի բուրգերը հեռվից ազատ ուրվագծվում էին: Խանդավառ խոսում էր Փարվանայի և Թմկաբերդի լեգենդների

մասին: Նրա երևակայության մեջ կամաց-կամաց կենսագործվում էին այդ չքնաղ պոեմները:

Հիշում են այսօրվա պես, որ նա «Թմկաբերդի» նախերգանքի* առաջին փորձը արտասանեց՝ մեծ հիացմունք պատճառելով ինձ»:

* Իսահակյանը շփոթում է. Թումանյանը նրա համար արտասանել է ոչ թե «Թմկաբերդի առումը» պոեմի, այլ «Փարվանա» լեգենդի նախերգանքը (տե՛ս օգոստոսի 22-24):

ԹԺՅ, 13:

Օգոստոսի 30: - Ավ. Իսահակյանի և նրա մորաքրոջ որդու՝ բանաստեղծ Հովհ. Կոստանյանի հետ Ալեքսանդրապոլից երկաթուղով ուղևորվում է Անի:

Դիտում են Հոռոմոսի նշանավոր վանքը, ապա Կոստանյանը երկու բանաստեղծներին լուսանկարում է «Աշոտ Ողորմած թագավորի դամբարանի աջ ու ձախ կողմերում կանգնած» (տե՛ս ԹԹ, լուսանկարների բաժին, թիվ 219):

Իսահակյանը հիշում է. «Մոտենում ենք Անիի հոյակապ պարիսպներին ու բուրգերին: Օհաննեսը հուզված է, ոչինչ չի ասում, միայն արագացնում է քայլերը՝ հայացքը շարունակ պարիսպներին:

<....> Վերջապես ավագ դռան առաջն էինք...

Օհաննեսը կանգնեց և ուղղակի բեռովեց իր տեղում: Երկար, լռելյայն նայեց և, իր գլուխը շարժելով, դարձավ դեպի մեզ:

Արդեն մութն էր, որ հասանք վանահայր վարդապետի բնակարանը, որն այցելողների հյուրանոցն էր միաժամանակ: Մի սարսափելի ճիչի հետ մթության մեջ պայթեց հրացանը, որի գնդակն ուղղակի անցավ մեր երեքիս առաջով, եթե մի քայլ առաջ լինեինք, ով գիտե ինչ պիտի լիներ մեր վիճակը:

Պարզվեց, որ վանահայրը բացակա է, և ծառան, վախեցնելով թե եկողները ավազակներ են, դիմել է անտեղի ինքնապաշտպանության:

- Տո՛ւ, - ասաց Օհաննեսը ծառային, բերդանկա հրացանը տեսնելով, - մի գյուլլով երեք բանաստեղծ պիտի սպանեի՞ր:

– Լավ պրծաք, ըսել է՝ ձեր վերջը չէր եկեր, – ամենայն անտարբերությամբ պատասխանեց ծառան»:

ԹԺՅ, 13-14:

Օգոստոսի 30, Ղազարապատ. – Մտադրություն «երկու օրից», այսինքն՝ սեպտեմբերի 2-ին լինել Ղարաքիլիսայում:

Չի իրականացել, հյուրասեր գյուղերցիները չեն թողել (ԵԼԺ 9, 280):

ԵԼԺ 9, 278

Սեպտեմբերի 1, գիշեր. – Հասնում են Անի:

Թունանյանը կնոջը գրում է. «...Երբ մտանք քաղաք, պահապանների շները դուրս թափվեցին, պահապանն էլ վախից, կարծելով, թե ավազակներ ենք, հրացանը կրակեց մեզ վրա: Մի խոսքով՝ անփորձանք պրծանք: Ասում ենք՝ ա՛յ տղա, այս ինչ արիր - ասում է՝ աղա, կարծեցի ավազակներ եք կամ ջանավարներ» (տե՛ս օգոստոսի 30):

ԵԼԺ 9, 280-281:

Սեպտեմբերի 2. – Անիից վերադառնում է Ալեքսանդրապոլ:

«Ուշ գիշերով» տեղացիները նրան տանում են քաղաքային ակումբ:

ԵԼԺ 9, 280:

Սեպտեմբերի 2, Ալեքսանդրապոլ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Գոհ է իր ճամփորդությունից: Մտորում է ճանապարհորդության օգտակարության մասին. «Աշխարքում եթե մի քանի լավ բաներ կան – մեկն անշուշտ ճանապարհորդությունն է: Ճանապարհորդելով մարդու և աչքն է բացվում և սիրտը: Իզուր չեն ասել, թե շատ կարդացողը չի իմանալ, շատ ման եկողը կիմանա: Մանավանդ գրողի համար»:

ԵԼԺ 9, 278 – 279:

Սեպտեմբերի 3, Ալեքսանդրապոլ. – Երեկոյան թատրոնում դիտում է ներկայացում: Մասնակցում է Մխիթարյան միա-

բանության 200-ամյակին նվիրված հոբելյանական երեկույթին: ԵԼԺ 9, 278-279:

Սեպտեմբերի 3, Ալեքսանդրապոլ. – Շնորհավորական հեռագիր Մխիթարյաններին:

«Վերապատվելի հայրեր,

Ճանապարհորդելով Շիրակի գավառում ու ման գալով նրա ավերակները, մենք անդադար հիշում էինք ձեր բազմավաստակ միաբանությունը, որ պանդխտության մեջ երկու հարյուր տարի շարունակ երգեց ու պատմեց մեր տխուր հայրենիքն ու նրա ավերակները և առաջինը մայրենի լեզվով մեզ ծանոթացրեց եվրոպական հանճարների հետ: Երախտագետ սրտով ողջունում ենք ձեր պանծալի հոբելյանը, համբուրում անմահ Մխիթարի և նրա մեծանուն հետնորդների շիրիմները»:

Հեռագիրն ստորագրել են Նաև Ավ. Իսահակյանը և Հովհ. Կոստանյանը:

ԵԼԺ 9, 279-280:

Սեպտեմբերի 3-ի լույս 4-ի գիշեր. – Ալեքսանդրապոլից գալիս է Ղարաքիլիսա:

«Գիշերվա ժամը 12-ին վոկզալում, հենց վագոնից իջա, տեսնեմ առաջս կանգնած Երվանդն ու Տիրուհին: <...> Շատ ուրախացան, ստիպում են, որ մի քանի օր մնամ, բայց ես էլ վռագում եմ...»:

ԵԼԺ 9, 280:

Սեպտեմբերի 4 լույս 5-ի գիշերը, Ղարաքիլիսա. – Նամակ Թիֆլիս՝ կնոջը:

«...Արդեն գիշերվա ժամը 11-ը լրանում է, ուզում եմ պրեզդին հասցնել, որ առավոտյան ստանաս»: Ներկայացնում է Ալեքսանդրապոլ - Անի - Ղարաքիլիսա ճամփորդության մանրամասներ: Պատմում է անցկացրած օրերի և ունեցած հանդիպումների մասին:

ԵԼԺ 9, 280 - 281:

Սեպտեմբերի 6-7, Թիֆլիս. – Նամակ Ալեքսանդրապոլ՝ Ավ. Իսահակյանին (չի պահպանվել):

Որ իսկապես այդ նամակը գրվել է, հաստատվում է Իսա-

հակյանի՝ սեպտեմբերի 12-ին Թումանյանին գրած նամակով. «Կոստանյանից խաբար չունեմ քեզ տալու, ես նրանից շուտ եմ բաժանվել, քան թե դու»: Ըստ երևույթին Թումանյանը իր նամակում հետաքրքրվել է Գովհ. Կոստանյանով, որի հետ երեքով գնացել էին Անի:

ԱԻԵԺ, 6, 37:

Սեպտեմբերի 7. – Տպագրվում է («Մշակ», թիվ 198) հաղորդագրություն Մխիթարյանների 200-ամյա հորելյանին նվիրված գրական երեկույթի մասին, որին մասնակցել է նաև Թումանյանը (տե՛ս սեպտեմբերի 3, գիշեր):

Մխիթարյանների մասին զեկուցել է Պ. Մոճոռյանը: Ներկայացվել է երկու վոդևիլ: Եղել է ասմունք, համերգ, մասնակցել են դերասան Խաժակը, Նիկ. Տիգրանյանը (դաշնամուր) և ուրիշներ:

ԵԼԺ 9, 603:

Սեպտեմբերի 7. – Լ. Շանթի «սպառնական» նամակը Թումանյանին՝ Գլավեռից:

Դժգոհում է, որ ընկերոջից նամակ չի ստանում:

ՌԻՅ 4, 341:

Սեպտեմբերի 12. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին՝ Ղազարապատից:

Հարցնում է Ն. Աղբալյանի, Դ. Դեմիրճյանի, Լ. Շանթի մասին: Հետաքրքրվում է «Վերնատան» ճակատագրով. «Ես որ գամ, տեսնենք «Վերնատան» հալը ինչ է լինելու. երևի առանց դրան մեր օրը սև կանցնի»: Հայտնում է իր անհանգստությունը «Վտակ» հանդեսի լույս տեսնելը ձգձգվելու մասին: Խնդրում է իր համար դասեր գտնել (հայերեն, պատմություն, գերմաներեն), որ Թիֆլիս գալով՝ քաղցած չմնա:

ԱԻԵԺ, 6, 37:

Սեպտեմբերի 17, Թիֆլիս. – Երվանդ Լալայանի գրությունը Թումանյանին:

Խնդրում է բանաստեղծին սեպտեմբերի 19-ին՝ երեկոյան ժամը 8-ին, ներկա լինել խմբագրական մասնաժողովի նիստին: ԹՏԹ, 3118:

Սեպտեմբերի 20, Թիֆլիս. – Նամակ Գլավեռ՝ Լ. Շանթին: Սեպտեմբերի 7-ի «սպառնական» նամակի պատասխանն է: Տեղեկություններ է հաղորդում Իսահակյանի մասին: Ուղարկում է Անիում արված իր լուսանկարը (տե՛ս օգոստոսի 30): ԵԼԺ 9, 281-282:

Մինչև սեպտեմբերի 21, Թիֆլիս. – Կանչվում է «Մուրճի» խմբագրություն:

«Ինձ «Մուրճի» խմբագրություն են կանչել, դեռ չեմ գնացել, չգիտեմ՝ ինչ են ասելու: Դու արդեն գիտես իմ վճիռը»*, – գրում է Ավ. Իսահակյանին:

* Թումանյանը 1893 թ. Ավ. Արասխանյանի հետ գժտվելուց հետո վճռել էր այլևս չաշխատակցել «Մուրճին»:

ԵԼԺ 9, 282:

Սեպտեմբերի 21, Թիֆլիս. – Նամակ Ղազարապատ՝ Ավ. Իսահակյանին:

Վերջինիս՝ սեպտեմբերի 12-ի նամակի պատասխանն է: Տեղեկություններ է հաղորդում Ն. Աղբալյանի, Դ. Դեմիրճյանի, Լ. Շանթի մասին:

«Վտակի» մասին տեղեկացնում է. « «Վտակը» արդեն ցրվում է, թեև դեռ Պետերբուրգից ծախսելու թույլտվություն չեն ստացել <...>: Այժմ այս երկու օրս են սպասում»:

Իբրև «գրական աշխարհի նորություն»՝ հայտնում է, որ Շիրվանզադեն մի դրամա է գրել, «այս քանի օրս» կարդալու են:

Դժգոհում է, որ չափից ավելի է զբաղված հասարակական գործերով, ստեղծագործելու ժամանակ չի մնում. «Միտք ունեի այս ծմեռ ժողովներս կրճատել, բայց, ինչպես երևում է, չի լինելու: 3-4 գիշեր արդեն ծախված է, մինչ էլ «Վերնատանը», և ահա չեմ կարողանալու պարապել, որովհետև բարեկամների գնալ գալուն էլ եմ ժամանակ նվիրում և, բացի դա, դեռ մի երկու ժողովներ էլ չեն սկսել: Ինչպես լավ կլիներ, եթե մարդ հարմարություն ունենար գավառական քաղաքում ապրելու:

«Վերնատան» մասին ես հարցնում: Առանց «Վերնատան»,

իհարկե, ապրել չի լինիլ: Երբոր դու կգաս, Նիկոլն էլ այստեղ է, Դերենիկն էլ կգա - կսկսենք»:

ԵԼԺ 9, 281-282, 603-604:

Սեպտեմբերի 23. – Նոր Նախիջևանի Ս. Խաչ եկեղեցու բակում Ռ. Պատկանյանի արձանը բացելու առթիվ շրջաբանում է նրա «Իմ երգը» բանաստեղծության «Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից...» քառատողը:

Տանում է փոստ՝ հեռագրով ուղարկելու: Հեռագիրը չի ընդունվում հայերեն լինելու պատճառով:

ԵԼԺ 9, 192, 602

Մինչև հոկտեմբերի 5, Թիֆլիս. – Ստանում է Գր. Չալխուշյանի նամակը:

Գրում է Նոր Նախիջևանում Ռ. Պատկանյանի արձանը բացելու մասին:

ԵԼԺ 9, 283:

~ *Հոկտեմբերի 5, Թիֆլիս.* – Նամակ Նոր Նախիջևան՝ Գր. Չալխուշյանին:

Բացատրում է, թե ինչու ինքը Ռ. Պատկանյանի արձանի բացմանը ժամանակին չի արձագանքել (տե՛ս սեպտեմբերի 23):

Մեջ է բերում Պատկանյանի «Իմ երգը» բանաստեղծության քառատողը.

Բայց, ա՛խ, երբոր կանցնի ամիս ու տարի,
Կըմանոտի գերեզմանը իմ քարի –
Հետքը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ հիշատակ կըկորչին:

Եվ հետո՝ իր շրջաբանած տարբերակը.

Կըզան, կանցնին շատ-շատ ամիս ու տարի,
Չի մամոռտիլ գերեզմանը այդ քարի,
Եվ տանջալի նորա խաչը սրբազան,
Նորա անուն միշտ կըմնան անսասան:

Նամակի վերջում շնորհակալություն է հայտնում Չալխուշյանին՝ արձանի գործը գլուխ բերելու նրա ջանքերի համար. «Մենք՝ ժամանակակիցներս, գիտակից ենք բանաստեղծի

մեծությանը - այն ժամանակակից հայերին, որ իրանց աչքերով կարողում էին պրոֆ. Թումասի և Չեր նամակները, թե բանաստեղծը անհուսալի հիվանդ է և կարգին սնունդի միջոց չունի, դեղի փող չունի...»:

ԵԼԺ 9, 283-284:

Հոկտեմբերի 17. – Տպագրվում է Թումանյանի՝ («Մշակի» թիվ 230) հոկտեմբերի 5-ին Գ. Չալխուշյանին գրած նամակի շարադրանքը:

Բերվում է Թումանյանի չափածո հեռագիրը՝ հասցեատիրոջ առաջաբանով. «Մենք շարունակում ենք ստանալ նամակներ ջերմ զգացումներով լի. բոլորը ուրախ են, բոլորը գոհ են, որ վերջապես արձանը կանգնեցված է: Պ. Հովհաննես Թումանյանը ցավում է, որ իր հեռագիրը գրված հայերեն տառերով* ընդունված չէ»:

* Թումանյանի հեռագիրը գրված էր լատինատառ հայերենով (տե՛ս սեպտեմբերի 23):

ԵԼԺ 9, 606:

Հոկտեմբերի 21. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Անվերսից:

«Վերջապես – վերջապես եկավ քու թանկագին նամակդ*. թանկագին իր վերացական ու նյութական կրկնակի իմաստներովը: Շուտով կգրեմ քեզի երկար-բարակ, առայժմ ընդունե վերի վարդը** Լևոնիդ կողմեն»:

* Խոսքը վերաբերում է Թումանյանի՝ սեպտեմբերի 20-ի նամակին (չի պահպանվել):

** Նկատի ունի բացիկի նկարը:

ԵԼԺ 9, 606:

Նոյեմբերի 1. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Անվերսից:

Մանրամասն նկարագրում է բելգիական միջավայրը, ժողովրդի բարքերը, կենցաղը, սովորույթները: Տեղեկություններ է հաղորդում իր պարապմունքների մասին հաշվապահական դասընթացներում: Ժամանակ է գտնում նաև ստեղծագործական աշխատանքի համար. գրում է «Ուրիշի համար» վերնագրով դրամա: Հետաքրքրվում է Թիֆլիսի գրական կյանքով,

մամուլի վիճակով, Վերնատան ճակատագրով. «Եվ մի՞թե վերնատուննիս այսպես բոլորովին դատարկ է հիմա, ո՞չ ոք: Այսպես ուրեմն՝ մնացեր ես դու, մեր Վերնատան հավատարիմ պահապան. կու գանք, Հանես քան, կու գանք, կը ժողվվինք նորեն, կը կարդանք մեր Սոֆոկլեսն ու Սերվանտեսը, կը խոսինք, կը խոսինք նորեն ամբողջ ծնեռվան երկար գիշերներով հինեն-նորեն, գյուղեն ու «խաչախներեն», տակնուվրա կընենք նորեն մեր ամբողջ գրականությունը ու կը տաքնանք ու կը ոգևորվենք մեր սկզբունքներով, մեր տաղանդով, մեր գրածովն ու գրելիքներով...»:

ՈՒՀ 4, 342-347:

Նոյեմբերի 6. – Ե. Լալայանի երկտողը Թումանյանին:

Բանաստեղծին հրավիրում է իր մոտ՝ կարդալու Բորչալուի գավառի մասին նրա ուսումնասիրությունը:

ԹՏԹ, 2198:

Նոյեմբերի 11. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Անվերսից:

Հայտնում է, որ ավարտել է «Ուրիշին համար» դրաման և հանգստանալուց հետո գրելու է նոր դրամա*:

* Հավանաբար նկատի ունի «Եսին մարդը»:

ՈՒՀ 4, 347, 386:

Նոյեմբերի 12. – «Աղբյուր» և «Տարագ» հանդեսների ծանուցագիրը Թումանյանին՝ նոյեմբերի 13-ին՝ երեկոյան ժամը 6-ին խմբագրության նիստին մասնակցելու մասին:

Տեղեկացվում է. «Հարուցված կլինեն մի քանի հարցեր, որոնց վճռելու մեջ Ձեր մասնակցությունը պատշաճ կարևորություն կունենա»: Նաև Ալիշանի մահվան կապակցությամբ հայ գրողների և մամուլի ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու, նրա հիշատակին նվիրված բանաստեղծություն գրելու խնդրանք:

Ծանուցագիրն ստորագրել է ժամանակավոր խմբագիր քժ. Արտաշես Շխյանը:

ԳԱԹ ԹՖ, ց.2, 413:

Նոյեմբերի 12. – Ա. Ազապյանի երկտողը Թումանյանին:

Հայր ճուղուրյանի խնդրանքով հրավիրում է բանաստեղծին, որ Ղ. Աղայանի, Մուրացանի, Պ. Պռոշյանի և Տեր-Հովհաննեսի հետ երեկոյան ժամը 8-ին շնորհ բերի հայր ճուղուրյանի տուն՝ մասնակցելու նրա որդու մկրտությանը նվիրված հացկերույթին:

ԹՏԹ, 3243:

Նոյեմբերի 12. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Անվերսից:

Հայտնում է, որ այլևս հաշվապահական դպրոց չի հաճախում: Պահանջում է շտապ պատասխանել իր նամակներին:

ՈՒՀ 4, 347, 386:

Նոյեմբերի 18. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», 1901, թիվ 44) «Հ. Ղ. Ալիշանի հիշատակին» բանաստեղծությունը՝ «Կազմված է Հ. Ալիշանի գրվածքներից» ենթավերնագրով:

ԵԼԺ 1, 193, 602:

Նոյեմբերի 19. – Գրում է «Հայր Գարեգին, մենք երեքով...» սկզբնատողով չափածո դիմումը:

Ուղղված է Թիֆլիսի Հայկական թեմի առաջնորդի տեղակալ Գարեգին վարդապետ Հովսեփյանին (հետագայում՝ կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո):*

* Գրել է Թիֆլիսում Ղ. Ալիշանի մահվան հոգեհանգիստը կազմակերպելու կապակցությամբ: Թումանյանը, Շիրվանզադեն և իրավաբան Մելիք-Ղարաբոյազյանը ընտրված էին պատգամավոր՝ առաջնորդի հետ բնակցություններ վարելու և հոգեհանգստի թույլտվություն ստանալու համար: Հոգեհանգստի կատարմանը խանգարում էին Թիֆլիսի հոգևորականները՝ պատճառաբանելով, թե Ալիշանը կաթոլիկ է:

ԵԼԺ 1, 389, 663:

<Նոյեմբերի երկրորդ կես>. – «Վտակ» ժողովածուն ուղարկում է Լ. Շանթին:

Ժամանակը որոշվում է ըստ Շանթի՝ դեկտեմբերի 12-ի (ն.տ.) բացիկի: Բացիկում հիշատակված «Առվակը» «Վտակն» է, որը լույս էր տեսել սեպտեմբերին: Այստեղ տպագրված է Թումանյանի «Պոետն ու Մուսան»:

ՈՒՀ 4, 347:

<Նոյեմբերի 26 կամ 27>, Թիֆլիս. – Ստանում է Երվանդ Լալայանի՝ նոյեմբերի 26-ի թվակիր գրությունը:

Խնդրում է բանաստեղծին գալ ժողովի (չորեքշաբթի) և հետը բերել Հախվերդյանի ժողովածուն:

ԳԱԹ ԹՖ, 1305 (լ.ց. 340). ԹՏԹ 3120:

Նոյեմբերի 29. – Ավ. Իսահակյանի բացիկը Թումանյանին՝ Բաքվից:

Խնդրում է ստանալ իրեն հասանելիք հոնորարը «Վտակից»: Հայտնում է Դ. Դեմիրճյանի՝ «վաղը, մյուս օրը» Մոսկվա մեկնելու մասին: Եվ ապա. «Գրական նորություններ չկան. փող կա գիրք տպելու, բայց գիրք չկա, ոտանավորներս կտպեմ երկի Աղեքաղում»:

ԱԻԵԺ, 6, 38:

<Դեկտեմբերի սկիզբ>, Թիֆլիս. – Նամակ Ախալքալաք՝ Զ. Տեր-Գրիգորյանին (չի պահպանվել):

Խնդրում է մասնակցել Դ. Աղայանի գրական գործունեության 40-ամյակի տոնակատարությանը, միջոցառումներ կազմակերպել՝ նրան օգնելու համար:

ԳԱԹ ԹՖ, 2196 (1148):

Դեկտեմբերի 3. – Ավ. Իսահակյանի երկտողը Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

«Սիրելի Օհանես, նստել ենք ես ու Հովհաննեսը (Կոստանյան. – խմբ.) գիշերը ժամը 11-ին, թեյ ենք խմում և քեզ հիշում ու Անիի օրերը մտաբերում»:

ԱԻԵԺ, 6, 38:

Դեկտեմբերի 4. – Ե. Լալայանի գրությունը Թումանյանին (տես նաև նոյեմբերի 6):

Խնդրում է չորեքշաբթի՝ ամսի 5-ին, անպատճառ գալ ժողովի և հետը բերել Աշուղական երգերը և Բորչալուի գավառի գյուղերի նկարագրությունը:

ԹՏԹ, 3121:

Դեկտեմբերի 10. – Գր. Բալասյանի նամակը Թումանյանին՝ Շուլավերից:

Հայտնում է, որ «Բազմավեպի» խմբագիր Ս. Երեմյանի հանձնարարությամբ ինքը պատրաստում է ռուսահայոց ներկա արժանավոր գրական դեմքերի պատկերազարդ կենսագրությունը: Ժամանակին բանաստեղծի մասին կենսագրական տվյալներ ստանալու խնդրանքով դիմել է տեր Հովհաննես քահանային, բայց պատասխան չի ստացել: Խնդրում է Թումանյանին ուղարկել ինքնակենսագրությունը՝ լուսանկարով: Հայտնում է նաև, որ «Գեղունի իլյուստրասիոնին» ուղարկել է «Ռուսահայոց նորագույն բանաստեղծական դեմքերի» առաջին և երկրորդ հոդվածները, որ տպագրվելու են հունվարի համարում: Իր ուրախությունն է հայտնում նաև, որ «Լուծան» դարձել է երկամսյա:

ԹՏԹ, 1844:

Դեկտեմբերի 12. – Լ. Շանթի բաց նամակը Թումանյանին՝ Անվերսից:

Գրում է, որ ստացել է «Վտակ» ժողովածուն և շնորհակալություն է հայտնում:

ՈՒՀ 4, 347-348, 386:

Դեկտեմբերի 15. – Գր. Բալասյանի նամակը Թումանյանին՝ Շուլավերից (տես նաև՝ դեկտեմբերի 10):

Խնդրում է Թումանյանին ոմն Վարդանի միջոցով ուղարկել իր ինքնակենսագրությունը, լուսանկարը և առանձին գրքով լույս տեսած աշխատությունները: Հայտնում է, որ Վիեննայից ստացել է «Գեղունիին» աշխատակցելու հրավեր, «Ձգացմունք» հրատարակչությունն էլ ընդունել է իր առաջարկը իրենց ծախքով և իրենց տպարանում տպագրել բանաստեղծների երկերը՝ նրանց լուսանկարով: Խնդրում է շտապ իրեն ուղարկել բանաստեղծություններ և նոր պոեմներ: Ստեղծագործությունները պետք է լինեն «զգացմունք արտահայտող և պարունակող», հեռու լինեն «քաղաքական և կրոնական խնդիրներից», որոնք հակառակ են Մխիթարյանների ուղղությանը:

ԹՏԹ, 3226:

<Դեկտեմբերի կեսեր>. – Նամակ Անվերս՝ Լ. Շանթին (չի պահպանվել):

Ուզում է «Ուրիշին համար» դրաման՝ «Վերնատանը» քննարկելու համար: Հայտնում է, որ «Վերնատունն» ունի նոր անդամ:

ՈՒՀ 4, 348:

Դեկտեմբերի 26. – Մ. Վարդազարյանի բացիկը Թումանյանին՝ Բաքվից:

Ա. Բաբախանյանի (Լեո) հանձնարարությամբ խնդրում է նյութեր ուղարկել Ղ. Աղայանի գրական-մանկավարժական գործունեության մասին՝ ուսանողական ռեֆերատի համար:

ԳԱԹ ԹՖ, 2037 (1007):

Դեկտեմբերի 27. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին Անվերսից:

Չափածո քառատող է.

... Ողջուն «Վերնատան» գլխեն սրբազան,
Ետ նայեն, տեսնեն մեր երեք մուզան,
Որ ծույլ կախ ընկած իրարու ուսեն՝
Վերջին բարևն են բերեր Անվերսեն:

ՈՒՀ 4, 348:

Դեկտեմբերի 27. – Հայտարարություն «գեղակազմ գրքույկների» վաճառքի մասին:

Հովհաննես Թումանյանց. – «Անբախտ վաճառականներ», «Կտակ», «Տխուր գրույց», «Արծիվն ու կաղնին», «Արջաորս»:^{*}

^{*} ԱՄ մատենաշարով «Աղբյուր»-«Տարագ»-ի՝ 1899 թ. հրատարակությունն է: Նույն մատենաշարով հրատարակվել են նաև Պռոշյանի, Շիրվանզադեի, Փափազյանի երկերը:

«Տարագ», 1901, թիվ 3եջ 44:

<Մինչև դեկտեմբերի 30-ը>. – Ընտրվել է մի մասնաժողովի անդամ:

Մասնաժողովը պետք է կազմակերպեր թատերական ընկերություն ստեղծելու գործը:

ԳԱԹ ԹՖ, 1852 (72):

Դեկտեմբերի 30. – Լ. Շանթի նամակը Թումանյանին Անվերսից:

Հայտնում է, որ գրում է երկրորդ դրաման («Սրտի մարդիկ»), իսկ «Ուրիշին համար» դրաման ուղարկել չի կարող, որովհետև մտադիր է վերանայել և լեզուն փոխել արևելահայերեն:

«Իսկ դուն ի՞նչ կ'ընես. կը գրե՞ս, շատ ես լուռ, կը կասկածի՞մ, որ անակնկալ մը կը պատրաստիս ինձի: Մեր մյուս «վերնականներն» ի՞նչ կ'ընեն, բան գրած ունի՞ն, հավաքումներ ունի՞ք, թե՞ բոլորովին «անունը կա, ամանումը չի կա»: Գրած ես, թե նոր անդամ մըն* եք գտեր մեր «Վերնատան»։ այդ ի՞նչ աներևակայելի գյուտ. մենք որ Դիոգենեսի լապտերով ամբողջ երկու տարի է կը փնտրենք: Ընտրելիդ ես ամենևին չեմ ճանչնար «իբրև մարդ», իսկ «իբրև գրագետ»՝ շատ քիչ. այնպես որ, իմ ձայնս կը դնեմ բացարձակորեն քու տրամադրության տակ: Եթե մյուս ընկերներու ձայնն ալ շահի, մկրտեցեք. միայն լավ աչքի առաջ ունեցեք «մարդը», միայն «գրագետը» հերիք չէ, համենայն դեպս, քու գանդիտատը լավ վկայականով կը ներկայանա, ով որ կոնտորա, բանկ ու առևտրական վարժարան մտնելեն վերջը նորեն Պառնասի փեշերեն ի վեր կը մագլցի՝ վստահելի է, գոնե գրական տեսակետեն»:

Գրում է նաև, որ ստացել է «Վտակ» ժողովածուն, ծանոթացել և ամենից շատ հավանել է Պռոշյանի ստեղծագործությունը. «Սկիզբն ու վերջը, իհարկե, ավելորդ, քիչ մըն ալ գուցե անճարակ գրված, բայց մեջը կյանք կա...»:^{**}

Իսահակյանի «Սիրո երգ» արձակ բանաստեղծության մասին գրում է. «... Տեղ-տեղ խորն է գաղափարը ու սիրուն. ամանն է անշնորհք ու հինցած»:

Վրթ. Փափազյանի «Ըմբոստ երգի» մասին գրում է. «Գաղափարն ալ հետաքրքիր է և նոր մեր գրականության համար. միակ թյուրիմացությունը վերնագրին մեջ է, հող երգ չի կա և ըմբոստ լինելու համար հարկ չի կա, իհարկե, կոպիտ ու խառնակ ըլլալու»:

^{*} Խոսքը հավանաբար Ն. Աղբալյանի մասին է:

^{**} «Վտակում» տպագրվել է Պռոշյանի «Հինգերորդ գինագիծը» պատկերը:

ՈՒՀ 4, 348-350:

<Ղեկտեմբերի վերջեր>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Մխ. Տեր-Անդրեասյանին (չի պահպանվել)*:

Կարծիք է հայտնում վերջինիս՝ անգլերենից զոկերի բարբառով կատարած ինչ-որ թարգմանության մասին: Գրում է, որ «զոկերը կենդանի լեզու չգիտեն»:

* Մխ. Տեր-Անդրեասյանին գրած թուամայանի բոլոր նամակները այրվել են 1905 – 1906 թթ. Բաքվի հրդեհների ժամանակ:

ԳԱԹ ԹՖ, 2158 (1122):

<Ղեկտեմբեր>. – Տպագրվում է («Մուրճ», 1901, թիվ 12, էջ 35-37) «Հոգեհան» բալլադը՝ «Լեգենդա» ենթավերնագրով: Խորագրի մասին հեղինակի ծանոթագրությունը. «Մի բարձրություն է Ախալցխայի և Ուրավելի մեջտեղը: Վրացիք ասում են «Սուլթմեդիա» - հոգին դուրս եկավ. իսկ թուրքերը «օղլան փաթրալան – տղա ճաքեցնող»: Ըստ ծանոթագրության՝ բալլադում հիշատակվող Փոցխովի ձորը «Ախալցխայի ձորն է»:

ԵԼԺ 2, 118, 558:

1901. – Աշխատում է «Անուշ» պոեմի վերջնական տարբերակի վրա:

ԵԼԺ 3, 515:

1901. – Առաջին անգամ տպագրվում է («Տարագ», 1901, «Իլյուստրասիոն», թիվ 12(4), էջ 30) «Քրիստոս հարյավ... Ա՛խ, և այս հոծ...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 134, 582:

1901. – Առաջին անգամ տպագրվում է («Վտակ» գրական-բանասիրական ժողովածու, էջ 64-30) «Պոետն ու Մուսան» երգիծապոեմը՝ «Պոետն ու Մուզան» վերնագրով և «Հատված» ենթավերնագրով:

ԵԼԺ 3, 127, 528-529:

1901 – 1902. – Գրում է «Ա՛խ, ի՞նչ լավ են սարի վըրա...» բանաստեղծությունը:

«Անուշ» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է. այդպես էր սկսվում VIII երգը:

ԵԼԺ 1, 208, 608:

1902

<Հունվարի 1>, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդապարյանին: Հայտնում է, որ ինքը հիվանդ է: Ստացել է «Վտակ» համ-դեսը և Մ. Թումանյանի «կուպլետները»:

* Մ. Թումանյանից ստացած «կուպլետները» արտասանվելու էին Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերության՝ վերջինիս նախածեռնությամբ կազմակերպվելիք երեկույթին («Տարագ», 1902, թիվ 3, հունվարի 27, էջ 17): Ըստ երևույթին, իշխանուհին «կուպլետները» ուղարկել էր Թումանյանին՝ նրա կարծիքն իմանալու համար:

ԵԼԺ 9, 285, 606-607:

Հունվարի 4. – Մխ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին:

Գրում է զոկերի բարբառով ինչ-որ թարգմանության մասին: Վերջում հարցնում է. «Ի՞նչ պատահեց, որ 30 կուպեկով էլ պոեմդ չտվիր «Մուրճին» »:

Հավանաբար խոսքը վերաբերում է «Պոետն ու Մուսան» պոեմին, որ տպագրվել է «Վտակում»: Չի բացառվում, որ բանաստեղծը նախապես մտադրություն է ունեցել պոեմը տպագրել «Մուրճում»:

(Այս նամակի պատասխանը՝ ակնհայտորեն Թումանյանի՝ ղեկտեմբերի վերջերին վերագրվող նամակն է: Ամսաթվերի շփոթը գալիս է հավանաբար հին և նոր տոմարների տարբերությունից):

ԳԱԹ ԹՖ, 2158 (1122):

Հունվարի 20, Թիֆլիս. – Ժողովարանում տեղի է ունենում Հայոց բարեգործական ընկերության երեկույթը, որի կառավարչուհին իշխանուհի Մ. Թումանյանն էր:

Բանաստեղծը չի մասնակցել հիվանդության պատճառով:

Երեկույթին մասնակցել է աշուղ Ջիվանին իր խմբով: Ամիրան Մանդինյանը և Ամիրադյանը «օրվա չարիքներից» կուպլետներ են արտասանել: Ըստ երևույթին, դրանք այն «կուպլետներն» են, որ ուղարկել էր Մ. Թումանյանը 1902 թ. տարեմուտին՝ իմանալու համար բանաստեղծի կարծիքը (տե՛ս 1902, <հունվար 1>:

«Տարագ», 1902, թիվ 3, հունվարի 27:

Հունվարի 18. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին էջմիածնից:

Հայտնում է Կարսի, Կաղզվանի, Կողբի շրջաններում կատարած իր ճամփորդության, հավաքած լավ նյութերի մասին: Հետաքրքրվում է ընկերոջ «պարապմունքներով», «հինգզաբթի» երեկոյաներով. «Ե՞րբ պիտի սկսես տպել պոեմաներդ, գավառները շարունակ հարցնում էին. ես էլ ասում եմ՝ գարնանը կտպե. աշխատիր»:

Հետաքրքրվում է՝ արդյոք Թումանյանը կարդացե՞լ է Հարություն Թումանյանի՝ «Լուսնայուն» տպագրված «Հազարան բլբուլը»:

ԱԻԵԺ 6, 38-39:

Հունվարի 22. – Ս. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին:

Հանդիմանում է բանաստեղծին՝ իր կազմակերպած պարահանդեսին ներկա չլինելու համար (տես հունվարի 20). «Ձեզ հասկանալի պետք է լինի իմ ցանկությունը, որ իմ բարեկամները, հոգավո՞ր բարեկամները, բաժանեն ինձ հետ իմ հաճույքը այդ մտքով և խրախուսեն ինձ»:

ԳԱԹ ԹՖ, 1248 (663):

Հունվարի 27. – Հայտարարություն «Գեղակազմ գրքույկների» վաճառքի մասին. Հովհաննես Թումանյանց. – «Անբախտ վաճառականներ», «Կտակ», «Տխուր գրույց», «Արծիվն ու կաղնին», «Արջաորս»:

«Տարագ», թիվ 3, էջ 44:

<Հունվար>. – Առաջին անգամ տպագրվում է («Արարատ», թիվ 1, էջ 12) «Աստծո սպառնալիքը» («Այժմ ես կգամ, ասում է աստված...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 195, 602-603:

<Փետրվարի սկզբներ>. – Պահնորդական բաժնի գաղտնի գործակալները սկսել են հետապնդել Թումանյանին:

Հսկել են տունը և համոզվել, որ նա փետրվարի 7-ից տանից դուրս չի եկել:

ԼԿ 17:

Փետրվարի 6. – Ս. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին:

Իր ուրախությունն է հայտնում բանաստեղծի ապաքինվելու կապակցությամբ: Արդարանում է, որ սանդուղքների բարձրության պատճառով չի կարողացել այցելության գալ: Խնդրում է աշխատել՝ նոր ժողովածուի տպագրությունն արագացնելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1249 (664):

Փետրվարի 6, Թիֆլիս. – Հյուրընկալում է Ղ. Աղայանին և ինչ-որ օրհորդների:

ԵԼԺ 9, 286:

<Փետրվարի 7-16>. – Տկարության պատճառով տանից դուրս չի գալիս:

ԹՏԹ ՓԲ, 43:

Փետրվարի 7. – Նամակ Ս. Թումանյանին:

Իշխանուհու՝ փետրվարի 6-ի նամակի պատասխանն է: Հավաստիացնում է, որ «պարապում է». «Այժմ կարգի եմ դնում ոտանավորներս. հին հաշիվներս մաքրում եմ. նո՛ր երգեր... նո՛ր զգացմունքներ, նոր հայացքներ:

Փոխվեցի՛նք»:*

* Ըստ պահպանված նյութերի՝ խոսքը 1903 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի պատրաստման աշխատանքներն սկսելու մասին է, որ շարունակվել է Բելի Կյուչում և Աբասթումանում:

ԵԼԺ 9, 285, 607:

<Փետրվարի 7 – մարտի 7>. – Թիֆլիսում է Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը:

Թումանյանի և կաթողիկոսի հանդիպումները անհավանական չեն:

«Տարագ», 1902, թիվ 4:

Փետրվարի 6. – Դ. Դեմիրճյանի բացիկը Թումանյանին՝ Մոսկվայից:*

Հայտնում է իր նյութական վատ վիճակի, երաժշտական դպրոց մտնելու մտադրության, ջութակի դասերի հաջողության մասին: Գրում է, որ ամռանը Թիֆլիս գալ չի կարողանա, քանի որ դաշնամուր և ճանապարհածախս չունի, նաև չի ուզում Մոսկվայում ունեցած դասերը կորցնել: Խնդրում է իմանալ «Մուրճը» վարձատրում է, թե ոչ, որպեսզի «բան ուղարկի»:

* Նամակն ուղարկվել է Ն. Աղբալյանին, որ կարողալուց հետո տա Թումանյանին:

Դեժ, XIV, 331, 596:

Փետրվարի 15 լույս 16-ի գիշերը. – Թումանյանի բնակարանում խուզարկություն է կատարվում:

Խուզարկողը եղել է պահնորդական վարչության պետի տեղակալ Կրավչենկոն: Իբրև հանցանշան գրադարանից վերցնում է Պ. Ջարուբինի «Современные социалисты революционеры» գիրքը (1897, Петербург): Թումանյանին չեն ձերբակալում հիվանդության պատճառով:*

* Ըստ Կրավչենկոյի կազմած արձանագրության՝ Թումանյանը գրադարան է ունեցել «... բաղկացած ավելի քան 2000 գրքից, մեծ մասամբ հայերեն...»: Խուզարկուի հարցին՝ կան արդյոք անթույլատրելի գրքեր, Թումանյանը պատասխանել է, թե անտեղյակ է իր գրքերի լեզակամ անլեզակ լինելու մասին և նրա ուշադրությունը հրավիրել Ջարուբինի հիշյալ գրքի վրա (փաստաթղթում գրքի վերնագիրը և հեղինակի անունը աղավաղված են այսպես՝ *Չուբանով*, Современный социализм), որը գրված է 19-րդ դարի ռուս հեղափոխականների դեմ՝ ժխտելով մատերիալիզմը իր բոլոր տեսակներով: Ակնհայտ է, որ Թումանյանը դիտավորությամբ է խուզարկուի ուշադրությունը հրավիրել հատկապես այդ գրքի վրա (գիրքը պահպանվում է ԹՏԹ բանաստեղծի անձնական գրադարանում. 6-րդ պահարան, թիվ 123):

ԹՏԹ. ՓԲ, 43, ԼԿ, 17-18:

Փետրվարի 16. – Գաղտնի գրություն Թիֆլիսի պահնորդական վարչության պետին:

«Պատիվ ունեմ հայտնելու Ձերդ գերազանցությանը, որ այս գիշեր, համաձայն Ձեր հրամանի, ես խուզարկել եմ Թիֆլիսի քաղաքացի Հակոբ Հակոբյանի, ազնվական Հովի. Թումանյանի, Թիֆլիսի քաղաքացի Միքայել Ղարաջյանի, Թիֆլիսի քաղաքացի Գևորգ Ղարաջյանի և պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի հաշվապահի տեղակալ Գևորգ Աստվածատուրովի բնակարաններում: Խուզարկություններից ոչ մեկը որևէ հանցավոր բան չի հայտնաբերել: Հակոբյանի և Աստվածատուրովի մոտ գտնվել են մեծ քանակությամբ նամակներ և ձեռագրեր հայերեն լեզվով, որոնք վերցված են ու պահված մինչև ծանոթանալը»:

Այնուհետև տրվում է Թումանյանի գրադարանի նկարագրությունը և ապա տեղեկություն Գ. Ղարաջյանի գրադարանում հայտնաբերված այլ գրքերի մասին: Հայտնվում է, որ Գ. Ղարաջյանը (Արկոմեդ) բանտարկված է և III ոստիկանական քաղաքամասից տեղափոխված Մետեխի բանտ:

ԹԹ ՓԲ, 43:

Փետրվարի 17. – «Արարատի» խմբագրական մասնաժողովի շրջաբերական հրավերը էջմիածնից՝ ամսագրին աշխատակցելու համար:

Շրջաբերականում Գալուստ Տեր-Մկրտչյանի ձեռքով գրված է. « «Արարատի» 1898 թվի հաստատած ծրագրով իրավունք չունենք բանաստեղծություններ հրատարակել և ընդհանրապես ունենալ գրական բաժին: Բայց այս անգամ հաջողվեց Ձեր գեղեցիկ ոտանավորը տպել *կրոնական* բաժնում: Հատուկ խնդրում են և այսուհետև շարունակել աշխատակցել, աշխատելով վերնագրերը կրոնական բաժնին հարմար մի բան դնել: Իբրև թղթակցի Ձեզ ուղարկվում է «Արարատ»:

Խորին հարգանքով Գ. Տ. Մկրտչյան»:

Հրավերը ստորագրել են նաև՝

Հ. Մանանդյան

Ս. Տիգրանյան:

«Արարատում» տպագրվել էր «Աստծո սպառնալիքը» բանաստեղծությունը (տե՛ս 1902, հունվար):

ԵԼԺ 1, 603:

<Փետրվար – մարտ>, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Մարուսյա Վարդազարյանին (չի պահպանվել):

Պատասխանն է Մ. Վարդազարյանի 1901թ. դեկտեմբերի 26-ի բացիկի, որով նյութեր էր խնդրել Աղայանի կենսագրության մասին (տես 1901, դեկտեմբերի 26): Հայտնում է, որ ջերմով հիվանդ է: Նամակի հետ ուղարկում է նաև Աղայանի կենսագրությունը՝ ուսանողական ռեֆերատի համար:

ԳԱԹ ԹՖ, 2038 (452):

Մարտի 3. – Տպագրվում է Գ. Մելիք-Վարազյոյանի «Իմ պատասխանը «Մշակի» խմբագրությանը» հոդվածը:

Մեղադրում է «Մշակին», «որ տիրելով մամուլին, ոչնչացրել է քննադատություն, նոր միտք և գրագետների մի ամբողջ սերունդ...»՝ բացառությամբ Ահարոնյանի:

«Տարագ», 1902, թիվ 8, էջ 72:

Մարտի 17. – Տպագրվում է («Տարագ», թիվ 10) Թումանյանի «Գրողի բողոքը (նամակ խմբագրության)» հոդվածը՝ Գ. Մելիք-Վարազյոյանի «Իմ պատասխանը «Մշակի» խմբագրությանը» հոդվածի (տես մարտի 3) կապակցությամբ:

Բանաստեղծը գրում է. «Ես բողոքում եմ պ. Մելիք-Վարազյոյանի այս խոսքերի դեմ: «Գագեթը» երբեք չի կարող գրողների սերունդ ոչնչացնել, ինչպես որ չի կարող առաջացնել <...> եթե նա խեղդելու ուժ ունենար, մեզանում գրողներ չէին լինիլ, իսկ եթե առաջ բերելու կարողություն ունենար – մեր գրողները բոլորովին ուրիշ մարդիկ կլինեին...»: Ինչ վերաբերում է Ահարոնյանին, Թումանյանը նրան էլ «Մշակի» ծնունդ չի համարում: ԵԼԺ 6, 131-132:

Մարտի 17. – Փիլ. Վարդազարյանի երկտողը Թումանյանին:

Հանձնարարում է երկտողի հետ ուղարկած «Վտակ» ժողովածուն և «Հորիզոն» հանդեսը հանձնել Ավետիսին:*

* Հավանաբար մեծահարուստ Ավետիս Պողոսյանն է: Գուցե Վարդազարյանը նրանից նյութական օգնություն էր ակնկալում Թումանյանին:

ԳԱԹ ԹՖ, 2047 (1018):

Մարտի 20. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Փարիզից: Ներողություն է խնդրում «համբավվոր քերթվածի պատասխանը» ուշացնելու համար: Նկատի ունի 1901 թ. «Վտակում» տպագրված «Պոետն ու Մուսան» պոեմը: ՈՒՀ 4, 350:

<Մարտի երրորդ տասնօրյակ>. – Նամակ Փարիզ՝ Լ. Շանթին (չի պահպանվել):

Գրում է ծնունդը երկար ժամանակ հիվանդ լինելու, «Վերնատան» նոր հանդիպումների և աշխուժության մասին:

Նամակի բովանդակության և գրության մոտավոր ժամանակի մասին տեղեկություն է տալիս Լ. Շանթի՝ ապրիլի 7-ի նամակը:

ՈՒՀ 4, 351-353:

Ապրիլի 1. – Փիլ. Վարդազարյանի երկտողը Թումանյանին:

Տեղեկացնում է, որ հաջորդ օրը Թումանյանը պարտատեր հոլանդացի քահ. Պետրոսյանի հետ պետք է գնա Ա. Ջարգարյան և Փ. Վարդազարյան KO գրասենյակ (A3-ՓԵԿՕ): Բանակցություններ էին վարելու 1897 թ. ապրիլի 23-ից մնացած պարտքի մարման համար: Գրում է. «Այսուհետև հերթով քո մյուս պարտատերերն էլ կստանան իրենց պահանջները, ու դու նրանց մասին մի հոգա, այլ պատրաստություններ տես ամառանոց գնալու»:

ԳԱԹ ԹՖ, 2102 (1054):

Ապրիլի 2. – Պարտատիրոջից հանձնարարություն է ստանում պարտք եղած գումարը հանձնել Ղ. Աղայանին:

Թումանյանը 1897 թ. ապրիլի 23-ից 175 ռուբլի էր պարտք հոլանդացի Տեր-Պետրոսյանին և դեռ չէր կարողացել վերադարձնել (տես ապրիլի 1): Հավանաբար այդ գումարը պիտի հանձնվեր Աղայանին՝ որպես հորեյանական նվեր:

ԳԱԹ ԹՖ, 2102 (413(24)):

Ապրիլի 3. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Փարիզից: Գրում է. «Վերնատան պսակավորներուն համբույրներս ու բարև»:

* Նկատի ունի Ն. Աղբալյանին, որ նոր էր ընդունվել «Վերնատուն» (տե՛ս 1901, դեկտեմբերի 30):

ԳԱԹ ԹՖ, 1857 (78):

Ապրիլի 3. – Լ. Շանթի բացիկը թումանյանին՝ Փարիզից: Շնորհավորում է Ջատկի տոնի առթիվ:

ԳԱԹ ԹՖ, 1856 (77):

✓ *Ապրիլի 3, Թիֆլիս.* – Ժամանակավորապես նահանգական ժամդարմական վարչություն գործուղված փոխգնդապետ Կրավչենկոյի զեկուցագիրը Թիֆլիսի գաղտնի նահանգական պահնորդական վարչության պետին:

Ըստ զեկուցագրի՝ քաղաքում գոյություն ուներ Ռուսաստանի սոցիալ - դեմոկրատական բանվորական կուսակցության կոմիտե, որին հարող կամ մոտ կանգնած կասկածելի մարդիկ բաժանվում են չորս խմբի (որպես օրինակ՝ բերվում են հայտնի անունները): Առաջին խմբի մեջ մտնում էր Գ. Ղարաջյանը, երկրորդի մեջ՝ Իոսիֆ Ջուղաշվիլին և այլն: Չորրորդ խմբում հիշվում են այն կասկածելի անձնավորությունները, որոնց՝ կոմիտեի անդամ լինելը որևէ կերպ ապացուցված չէր. այդ անձանց մեջ էին Եր. Լալայանը և Յովի. Թումանյանը:

ԹԹ ՓԲ, 44:

Մինչև ապրիլի 7, Թիֆլիս. – Նամակ Փարիզ՝ Լ. Շանթին (չի պահպանվել):

Գրված է հուսահատ, վատ տրամադրությամբ, դժգոհ առողջական վիճակից, միջավայրից, նյութական ծանր պայմաններից (տես ապրիլի 7):

ՌԻՅ 4, 351-353:

Ապրիլի 7. – Լ. Շանթի նամակը թումանյանին՝ Փարիզից:

Գրում է փարիզյան օրերի իր դեգերումների, ստեղծագործական աշխատանքի, շուտով Թիֆլիս վերադառնալու, «Վերնատուն» այցելելու և երկրորդ դրաման «վավերացման» ներկայացնելու ցանկության մասին: Ուրախ է, որ «Վերնատունը» նոր անդամ ունի: Յետաքրքրվում է ընկերների վիճակով, նոր ծրագրերով... «Իսկ դու՞ն, դուն ինքդ: Քու բանաստեղծական նամակդ իր երազային ու հուզյալ թոնին հակառակ շատ ծանր

տպավորություն ըրավ վրաս. ուրե՛մն դուն նորեն հիվանդ ես կամ էիր և այդպես երկա՛ր. ի՞նչ է տկարությունդ»: Յարցնում է գրական նորությունների, Աղայանի հոբեյանի, Դեմիրճյանի մասին...:

ՌԻՅ 4, 351-353:

Ապրիլի 10. – Թիֆլիսի նահանգական ժամդարմական վարչության գրությունը՝ փոխգնդապետ Կրավչենկոյի ստորագրությամբ:

Գրությունը ուղղված է 4-րդ քաղաքամասի պրիստավին: Խնդրում է հայտնել Յովի. Թումանյանին նույն ամսի 12-ին՝ առավոտյան ժամը 10-12-ը, ներկայանալ վարչություն՝ խուզարկության ժամանակ բռնագրավված գիրքը ետ ստանալու համար, և ստորագրություն վերցնել, որ տեղյակ է ծանուցմանը*:

* Գրության երկրորդ էջում թումանյանի ստորագրությունն է ծանուցումն ստանալու մասին:

ԹՏԹ ՓԲ, 45:

✓ *Ապրիլի 12.* – Յամածայն ստացած ծանուցագրի՝ ներկայանում է Թիֆլիսի 4-րդ քաղմասի պրիստավին և ետ ստանում փետրվարի 16-ի խուզարկության ժամանակ Կրավչենկոյի վերցրած գիրքը (տե՛ս փետրվարի 15 լույս 16-ի գիշերը):

Ըստ պահնորդական բաժնի փաստաթղթերի՝ թումանյանը կասկածի տակ է եղել՝ որպես ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամ: Պատժառը Երվանդ Լալայանի բնակարանի երեկույթներին սոցիալ - դեմոկրատ Գ. Ղարաջյանի (Արկոմեդ) մասնակցությունն էր, մի գործիչ, որ լավ ծանոթ էր պահնորդական բաժնին (մանրամասները՝ ԹԺՅ, 353):

ԹՏԹ ՓԲ, 44:

Ապրիլի 15. – Լ. Շանթի բացիկը թումանյանին՝ Փարիզից:

Գրում է. «Օրիորդ Յեղիմեից իմացա, որ առողջ ես արդեն ու շուտով գնալու ես գյուղ բոլորովին կազդուրվելու: Յաջողություն, այս նարինջ աղջկան* խնձոր այտերուն առողջությունը կը մաղթեմ քեզի, իսկ ինձի՝ մեկ երկու տող գիր քեզմե»:

* «Նարինջ աղջիկը» բացիկի նկարն է:

ՌԻՅ 4, 354:

Ապրիլի 18. – Մատենախոսական խորհրդածություններ «Արարատ» ամսագրի հունվարյան համարի մասին:

Մասնավորապես թումանյանի մասին. «Հովհաննես Թումանյանը «Աստծո սպառնալիքը» վերնագրով մի բանաստեղծություն է զետեղել կրոնական բաժնում. գաղափարը շատ հարմար է գալիս եզնիկի խրատներին. այսինքն՝ թե անարդար կյանքն ու վարմունքը վերջիվերջո Աստված պիտի պատժե ճնշվածի, աղքատի լեզվով, մտքով, բազկով»:

«Տարագ», 1902, թիվ 16, էջ 115:

Ապրիլի 24. – Տպագրվում է («Տարագ», 1902, թիվ 15, էջ 102) Շիլլերի «Sehnsucht» բանաստեղծության թարգմանությունը՝ «Անձուկ» վերնագրով և «Շիլլերի (ժուկովսկուց)» ենթավերնագրով:

Թարգմանությունը կատարված է ժուկովսկու ռուսերեն թարգմանությունից՝ նրա մահվան 50-ամյակի առթիվ:

ԵԼԺ 2, 252, 595:

<Ապրիլի 28>. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Փարիզից:

«Կը շնորհավորեն «Արարատի» մեջ տպած սիրուն ոտանավորը: Անձամբ ո՛չ «Արարատն» եմ տեսած, ո՛չ ալ քու ոտանավորը կարդացած, միայն կասկած չունիմ, որ սիրուն բան պիտի լինի, որովհետև ... որովհետև «Մշակը» անվաներ էր «տափակ»»:

ՌԻՀ 4, 354:

Ապրիլի 29. – Գրում է «Դու քո ճամփեն գընա, քույրիկ...» սկզբնատողով բանաստեղծությունը:

Պահպանված ձեռագրում վերնագիրը՝ «N-ին»:

ԵԼԺ 1, 196, 603-604:

Մայիսի 4. – Ջալալ Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Հայտնում է, որ ի պատասխան Աղայանի գրական գործունեության 40-ամյա հոբելյանը կազմակերպող մասնաժողովի առաջարկության՝ հանգանակությամբ օգնել Աղայանին, հավաքվել է 237 ռուբլի: Մի կոշկակար նվիրել է կոշիկ: Պատ-

րաստված է ուղերձ, որ հոբելյանի օրը կուղարկվի հեռագրով: Նախատեսված է տեղում կազմակերպել զբոսանք քաղաքից դուրս, որը կունենա նաև գրական մաս:

ԳԱԹ ԹՖ, 2196 (1148):

Մայիսի 18. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Փարիզից: Միայն մի նախադասություն է. «Մեր «Վերնատան» նահապետի* կենա՛ցը»:

* «Վերնատան» նահապետը Ղ. Աղայանն է, որի գրական – մանկավարժական գործունեության 40-ամյակը նշվել է 1902 թ. մայիսի 19-ին:

ՌԻՀ 4, 354:

Մայիսի 19, Թիֆլիս. – Գրում է ողջույնի խոսք՝ «Ղ. Աղայան (քառասնամյակի օրը)» վերնագրով:

Հանձնում «Տարագի» խմբագրությանը: Անդրադառնալով Աղայանի կյանքի ծանր տարիներին՝ Թումանյանը նրան նմանեցրել է Շեքսպիրի Լիր արքային: Տույց է տվել, որ չնայած ապրած ողբերգությանը՝ նա միշտ հարգանք է ունեցել դեպի իր գրիչը, ստեղծագործելիս կարողացել է վերանալ իրական կյանքից, երկերը դարձնել «վեհ իդեալական, մաքուր, մանկական: Նա երբեք ընկճված չի եղել հոգով և որտեղ հայտնվել է, իր հետ տարել է երիտասարդական թարմություն ու բանաստեղծական ոգևորություն»: Ափսոսում է նաև, որ նրա շատ գործեր ու ծրագրեր մնացել են անկատար:

ԵԼԺ 6, 135-136:

Մայիսի 22. – Գրաքննչական կոմիտեն արգելում է Թումանյանի «Ղազարոս Աղայան» հոբելյանական հոդվածի (տե՛ս մայիսի 19) տպագրությունը:

Բացատրությունը հետևյալն է.. «... в виду отступления редакции от программы, напечатание воспретить»:

Արգելված փորձանմուշը պահպանվում է՝ ԹՏԹ, ՓԲ, 40: Տպագրվել է 1911 թ. («Տարագ», թիվ 5-6, էջ 80): Արգելվել էին նաև Գր. Վանցյանի, Տ. Նազարյանի՝ Ղ. Աղայանին նվիրված հոդվածները, որոնք պետք է տպագրվեին «Տարագում»: Պատ-

ճառը Ղ. Աղայանի՝ Հնչակյան կուսակցության անդամ և դրա համար բանտարկված լինելն էր:

ԵԼԺ 6, 132-133:

Հունիսի 3. – Լ. Շանթի բացիկը թումանյանին՝ Փարիզից: Ուղղված է բոլոր վերնականներին. «Պատիվ ունեմ հայտնելու Վերնատան մեծապատիվ անդամներուդ, որ ձեր մոլորյալ Փարիզի վերնականը իր գործերն արդեն ավարտած, տուպրակները կը կապկպե հիմա Զվիցերիա անցնելու ու հոն լեռնային օդին մեջ առևտրական փոշիներեն մաքրվելու համար, որովհետև իր երազները դեպի Պառնաս ու դեպի Վերնատուն կը ձգտեն նորեն...»:

ՈՒՀ 4, 354.

Հունիսի 9. – Լ. Շանթի բացիկը թումանյանին՝ Փարիզից: Խնդրում է ուղարկել «Հնությունք Ակնա» գիրքը:*

* Գիրքը լույս էր տեսել Թիֆլիսում, 1895-ին: Հեղինակը Հովսեփ Գանիկյանն է: Նախքան Շանթի խնդրանքը՝ թումանյանը գիրքը խոստացել էր ուրիշի:

ՈՒՀ 4, 355:

Հունիսի 23. – Լ. Շանթի նամակը թումանյանին՝ Փարիզից:

Արծազանքում է բանաստեղծի դժգոհությանը՝ միջավայրից, առողջական վիճակից, ընտանեկան կացությունից, ստեղծագործելու անկարողությունից, վատ տրամադրությունից, նյութական դժվարություններից և այլն:

Գրում է. «... Քեզի նման կյանքը շատ բարձրեն նայող հպարտ, մաքուր ու նրբազգաց հոգին բացառիկ է: Ու ճիշտ իր բացառիկ ըլլալուն համար ալ պիտի տուժե: Սովորական մարդիկը ամեն բան կը ներեն, բայց իրենցմե տարբերվիլը, իրենցմե բարձր թռչիլը չեն ներեր: Ու ամեն կերպ կը ջանան ըլլալ գիտակից, թե բնազդաբար իրենից վրեժ լուծելու... տանջանքով: Իրավունք չունիս սպասելու, որ անոնք քեզի հասկնան: Դուն պետք է, որ անոնց հոգին հասկնաս, եթե հասկնաս՝ կը ներես և հող ալ կը գտնիս, գուցե, անոնց քեզի պատճառած «կյանքիդ թունավորման» հակաթույնը»:

Նամակի շարունակության մեջ ընկերոջը խորհուրդ է տալիս ստեղծագործել, որ երբ ինքը Թիֆլիս գա, նոր բան ունենա իրեն հանձնելու. «Եվ ինչպես դյուրավ կրնաս ենթադրեր, այս տողերս ու կոչս միայն քեզի չէ, որ կուղղեմ, այլև ինքս ինձի: Ես ալ կուզեմ նոր բան մը բերեմ բացի հիներեն...»:

Այնուհետև հետաքրքրվում է Աղայանի հոբելյանով և հանդիմանում ընկերոջը՝ այդ մասին իրեն ոչինչ չգրելու համար:

Շատ է հետաքրքրվում «Վերնատան» վիճակով. «Ի՞նչ վիճակի է «Վերնատունը», վերնականներն ու իրենց վերնահարկերը: Մի՞թե ձմեռը ոչ մի աշխատություն, հավաք և այլն չունեցաք: Իսկ ես հոս արդեն հող կը նախապատրաստեմ ուրիշներու առջև, հող պատկառանքի դեպի մեր «Վերնատունը»»:

ՈՒՀ 4, 355-357:

<Հունիսի երրորդ տասնօրյակ>, Բելի Կյուլջ. – Նամակ Կարլսբադ՝ Հ. Մելիք-Հայկազյանին (չի պահպանվել):

ԳԱԹ ԹՖ, 1697 (877):

<Հունիս – հուլիս>, Բելի Կյուլջ. – Նամակ Բաքու՝ Մ. Տեր-Անդրեասյանին (չի պահպանվել):

Փոխարինաբար փող է խնդրել: Ըստ Մ. Տեր-Անդրեասյանի բանավոր վկայության՝ ինքը դիմել է հին նախիջևանցի մեծահարուստ Ավետիս Պողոսյանին (հրատարակչական գործով կապված էր Մ. Թումանյանի և Փիլ. Վարդազարյանի հետ) հրատարակել թումանյանի երկերը և դրանով նյութապես օգնել բանաստեղծին (տե՛ս ԵԺ 5, էջ 207):

ԵԼԺ 9, 295, 611-612:

<Հունիս – հուլիս>, Բելի Կյուլջ. – Երկրորդ նամակը Բաքու՝ Մ. Տեր-Անդրեասյանին (չի պահպանվել):

Ինչպես տեղեկացնում է Փիլ. Վարդազարյանին (տե՛ս օգոստոսի 6), ինքը այդ նամակով Տեր-Անդրեասյանին ասել է. «Եթե ուզում ես Պողոսյանին օգնել, նա կարոտ չի քո օգնությանը, իսկ եթե ինձ ես լավություն անում – էլ ի՞նչ պայման...»:

ԵԼԺ 9, 295, 611-612:

<Հունիս – հուլիս>, Բելի Կյուլջ. – Երկու նամակ Բաքու՝ Ավ. Պողոսյանին (չեն պահպանվել):

Այդ մասին Փիլ. Վարդազարյանին տեղեկացնում է (տե՛ս 'հուլիսի 29). «Քեզ մի բան գրեմ, որ ինձ շատ է վշտացնում: Ինչ որ դու Ավետիսին նամակ ես գրել, որ իր նպաստն իմ հասցեին դրկի, նրանից հետո ես էլ երկու նամակ եմ գրել: Չի գրում, թե չի ստանում նամակներս, թե ինքը Բաքու չի – չգիտեմ այս ինչ հանելուկ է, բայց գոնե ոչ մի նամակիս չպատասխանեց, այդ ինձ շատ անհանգիստ է անում ու ցավեցնում»:

ԵԼԺ 9, 291, 610-61:

Հուլիսի 3. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է, որ Դ. Դեմիրճյանը անելանելի վիճակում է: Մեջ է բերում այդ մասին ուսանող Մանվելյանի նամակից մի հատված. «Նյութական պայմանները խղճալի, հոգեկան վիճակը ճնշված, իսկ առողջությունը ավելի քան խախտված»: Իր կողմից. «Ամոթ չէ՞ Վերնատան համար, որ նրա անդամը շան պես սոված թրև գա մեծ քաղաքի մայթերի վրա, և այն էլ հայ բանաստեղծ»:^{*}

^{*} Պահպանվել է նամակի միայն մեկ թերթը՝ երկու երեսը գրած: ԳԱԹ ԹՖ, 846 (236):

Մինչև հուլիսի 7, Բելի Կյուլջ. – Ստանում է Լ. Շանթի նամակը Փարիզից (տե՛ս հունիսի 23):

ԵԼԺ 9, 286, 608:

Հուլիսի 7, Բելի Կյուլջ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

«Աշխատում եմ պարապել. և գրեթե ամեն օր կարողանում եմ պարապել, թեև դեռևս по чайной ложке. ստամոքսս ավելին չի ընդունում. որ մի քիչ ավելի եմ պարապում, թուլանում եմ: Բայց զգում եմ, որ ոչ մի օրս կորած չէ այստեղ» ...

«Մի բրոշյուր էի կարդում. «Հոռետեսությունը գրականության մեջ», կարդում եմ, թե ... «և Լեոպոլդին 30 տարեկան հասակում արդեն ծեր էր ... Լենաուն 30 տարեկան հասակում արդեն ծեր էր... »:

Այս բրոշյուրը պրծա, վերցրի «Ֆրանսիական գրականության պատմությունը» «поезия»-ն և կարդում եմ ... և Ալֆրեդ Մյուսեն 30 տարեկան հասակում արդեն կատարյալ ծեր էր...^{*}

Այստեղ արդեն փակեցի, վերցրի մի ուրիշ գիրք և ինչ եմ կարդում «... 33 տարեկան հասակում արդեն սպիտակ էին նրա (Բայրոնի) մազերը...»:

Ինչ ես կարծում. դիմացս դրած հայելու մեջ նայեցի ինձ և... ամբողջ օրը պառկեցի: Իրիկնադեմին ուզեցի քեզ նամակ գրել, բայց շատ մռայլ էի տրամադրված, ով գիտի ինչե՛ր էի դուրս տալու, էլ չգրեցի»:

^{*} Նկատի ունի՝ Դ. Лансон, «История французской литературы» (թարգմանություն ֆրանսերենից): Երկու հատորանոց այդ հրատարակության (M., 1896 - 1898) մի օրինակ պահպանվում է Թումանյանի անձնական գրադարանում (ԹՏԹ 8(31):

ԵԼԺ 9, 286-287:

Հուլիսի 8. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Փարիզից:

Գրում է. «Վերջին համբույրներս քեզի Փարիզեն: Նամակս ստացար անշուշտ: Վերջին բարևներս քեզի Փարիզեն: Նամակիդ կ'սպասեմ՝ ԼԼոն »:

ՈՒՅ, 4, 357:

Հուլիսի 12. – Գ. Մելիք-Չայկազյանի բացիկը Թումանյանին՝ Մարիենբադից:

Թումանյանից ստացած անհայտ նամակի (տե՛ս հունիսի երրորդ տասնօրյակ) մասին գրում է. «Ուրախությամբ կարդացի ձեր նամակը և շատ եմ ծիծաղել»:

ԳԱԹ ԹՖ, 1697 (877):

<Հուլիս, առաջին և երկրորդ տասնօրյակ>, Բելի Կյուլջ. – Երկու բաց նամակ Դիլիջան՝ Մ. Թումանյանին (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 288:

<Հուլիսի կեսեր>. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ գրված Մ. Թումանյանի նամակի տպավորության տակ:

Այդ նամակում իշխանուհին գրել էր, թե մտադիր է սիրողների դերասանական խումբ կազմակերպել: Փիլ. Վարդազարյանը այս կապակցությամբ հայտնում է իր խոհերը. «Ահա մի կին, որը արտասովոր եռանդ ունի և սեր դեպի ներկայացումները

– իսկ ես ոչ կին ունեմ, ոչ եռանդ, ոչ սեր ներկայացումների հանդեպ»: Այս խոհերով էլ «պառնել է սեղանի վրա», տրվել փիլիսոփայական մտորումների, իր խոսքով՝ «օղային ցնորքների», և ափսոսում է, որ չունի գրելու շնորհք, գրողի՝ Հոմերոսի, Հյուգոյի, Լոնգֆելլոյի հռչակը. նախանձում է նրանց:

ԳԱԹ ԹՖ, 2048 (1019):

<Հուլիսի կեսեր>, Բելի Կյուլչ. – Նամակ Թիֆլիս՝ Ն. Աղբալյանին:

Խոստանում է Դ. Դեմիրճյանին ուղարկել 30-40 ռուբլի՝ նրա բնակավարձի պարտքը մարելու համար: Ինչպես տեղեկանում ենք Դեմիրճյանի նամակից (տե՛ս <հուլիս>), ո՛չ դրամն է տեղ հասել, ո՛չ էլ որևէ լուր թումանյանից:

ԴԵԺ XIV, 303-304:

Հուլիսի 22. – Մխ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Խոստանում է հաջորդ օրը ուղարկել 100 ռուբլի. «...բայց ոչ իբրև փոխառություն: Այդ գումարը դու ինձնից ստացած կանխավճար համարի «Մուրճում» տպագրվելիք* ոտանավորներիդ համար, տողը 20-ական կոպեկով»:

Ցավում է, որ չի իմացել Աղայանի հոբելյանի մասին: Տեղեկություն է հաղորդում հիննախիջևանցի մոսկվաբնակ վաճառական Ավ. Պողոսյանի մասին:

* «Մուրճի» 1902 թ. թիվ 12-ում տպագրվել է «Հոգեհան» լեզենդը (ԵԼԺ, 2, 558):

ԳԱԹ ԹՖ, 1123:

Հուլիսի 24, Բելի Կյուլչ. – Նամակ Դիլիջան՝ Ս. Թումանյանին:

Հայտնում է, որ պատվեր է ստացել՝ «Մուրճին» աշխատակցելու: Իր աշխատանքային առօրյայի մասին. «Ես օրերս անց եմ կացնում միանգամայն կանոնավոր և պարապում եմ, որքան ներում են մեր երեխաների և, առհասարակ, ընտանեկան ղալմաղալները»:

ԵԼԺ 9, 288:

Հուլիսի 25. – Դ. Դեմիրճյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է, որ վերադարձել է Կովկաս և արդեն Թիֆլիսում է: Ուրախ է, որ Շանթը ևս եկել է: Շնորհակալ է բանաստեղծից, որ իր կողմից էլ է ողջունել Աղայանի հոբելյանը: Նորից հիշեցնում է Թումանյանի ուղարկած փողի մասին. «Խնդրում եմ այն փողը, որ դու դրկել ես Մոսկվա և հիմա հետ ստացած կլինես, դրկիր Թիֆլիս, Նիկոլին, ես՝ այստեղ իր նամակներով պարտատերերիս...»:

ԴԵԺ, XIV, 303

Հուլիսի 27. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Լոզանից: Չափածո երկտող է.

Շատ – շատ բարևներ իմ Օհանեսին,

Ծարավ՝ լուրերուդ, կարոտ՝ քու տեսին: *Լևոն* »:

ՈՒՀ 4, 357:

<Մինչև հուլիսի 29-ը>. – Մտադրություն աշխատակցելու «Մուրճին»:

Այդ կապակցությամբ Փիլ. Վարդազարյանին գրում է (տե՛ս հուլիսի 29). «Եթե բան գիտես, գրիր նորագույն «Մուրճի» մասին: Արդյոք հնարավոր է լինելու դրանց աշխատակցելու կամ մի որևէ գործով կարելի՞ է աշխատել ամսագրի մեջ, օրինակ, տանել բանաստեղծության բաժինը: Իմ ամբողջ «Վերնատնով» կմտնեմ մեջը, եթե մի քիչ կարգին պայման եղավ»:

ԵԼԺ 9, 291:

Մինչև հուլիսի 29-ը. – Փիլ. Վարդազարյանի նամակը Բաքու՝ Ավ. Պողոսյանին (չի պահպանվել):

Գրում է, որ Թումանյանի նպաստը կարող է ուղարկել իր հասցեով (տե՛ս <հունիս - հուլիս>):

ԵԼԺ 9, 291:

Հուլիսի 29, Բելի Կյուլչ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Հասցեատիրոջ <հուլիսի կեսերի> նամակի պատասխանն է:

Խոստովանում է, որ շատ է սիրում ընկերոջ «փիլիսոփայական»:

փայլությունները», որոնք «ավելի բանաստեղծական են լինում և բովանդակալի», քան նրա բանաստեղծությունները, որ «ավելի պրոզա և ջրալի» են: Ավելացնում է, որ ինքն էլ հետզհետե սկսում է բանաստեղծության մեջ ավելի սիրել փիլիսոփայությունը, որ արտասուք և հուզմունք չունի, այլ ունի մի «վեհափառ խաղաղություն, մի ոլիմպիական, վսեմ, արհամարիտ թռիչք դեպի լավագույն աշխարհները և ավելի ջինջ ու մաքուր մթնոլորտները»:

Մեջ է բերում Հայնեի միտքը, թե «բանաստեղծի սիրտը աշխարհի կենտրոնն է»: Եվ ապա՝ «Վա՛յ մեր աշխարհի բանաստեղծին ու նրա սրտին, և հիրավի, իմ սրտի վրա չափազանց սաստիկ ծանրանում են մեր աշխարհի ամեն ցավերը, գուցե այդ արդեն ապացույց է, որ ես էլ եմ բանաստեղծ, բայց, ասում եմ, զարմանալու բան է, ես առանց երգելու հոգնած եմ այդ ցավերից ու սիրում եմ բոլորովին ուրիշ ցավեր, ավելի անուշ, ավելի աստվածային, երջանիկ ցավեր:

Զգիտեմ այսպես է, թե՞ ինձ այսպես է թվում. թե կարող ես ջոկիր.— այս ի՞նչ կենտրոնախույս տրամադրություն էր, որ իմ մուսային դարձնում է դավաճան՝ ազգի առջև»:

Բայց չնայած այդ «կենտրոնախույս տրամադրությանը»՝ «մի մեծ *ազգային* պոեմա* է ձևում», որ վաղուց փոթորկում է «ներսը»՝ «քառսային դրության մեջ, և հոգի աստծոյ շրջեր ի վերայ նորա — և անշուշտ մի օր ասելու է՝ եղիցի լույս: Ա՛խ, ինչ սքանչելի խոսք է. եղիցի լույս... ստեղծագործության աստվածային խորհուրդը կամ ստեղծագործական հանճարի ույծը հայտնում է այս երկու խոսքով՝ եղիցի լույս...»:

Դժգոհում է, որ ընտանեկան հոգսերը խանգարում են ստեղծագործական աշխատանքին. «Անշուշտ, եթե աստված էլ կին ու ընտանիք ունենար, նա էլ չէր կարող աշխարհքն ստեղծել կամ ով գիտի ինչի նման բան ստեղծեր»:

Մենակության կարոտ է զգում: Համոզված է, որ բոլոր մեծ ստեղծագործությունները ծնվել են երկարատև միայնությունից: Հիշում է այն ժամանակները, «երբ որ մարդիկ ճգնվում էին մի քարանձավում կամ մենաստանի խցում ու երկա՛ր - երկա՛ր տարիներ անձնատուր լինում մի զգացմունքի, մի մտքի,

թաղվում, սուզվում նրա մեջ, ծուլվում նրա հետ, խաղաղ, անվորով...»: «Այդ ժամանակների ժառանգությունն են Նարեկն ու Խորենացին, մեր հոգեբուխ շարականներն ու մեղեդիները»:

Նամակի շարունակության մեջ ակնարկում է, որ «Անուշը» «պաչինկա է անում»:

Հայտնում է նոր «Մուրճին» իր աշխատակցելու ցանկության մասին (տե՛ս մինչև հուլիսի 29-ը):

* Հիշատակված *ազգային* պոեման «Հին կռիվն» է (տե՛ս ԵԼԺ 9, 610):

ԵԼԺ 9, 289 – 291:

Հուլիսի 31. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին Թիֆլիսից:

Հետաքրքրվում է բանաստեղծի՝ այդ տարվա դրամական խնդիրներով: Խնդրում է ներկայացնել ստանալիք գումարների մոտավոր հաշիվը: Ուզում է իմանալ, թե Թումանյանն ինչպես է կազմակերպում օրվա ընթացքում իր աշխատանքի և հանգստի ժամանակը: Դրական կարծիքի չէ բանաստեղծի ծրագրած շրջաբերականի մասին: Իր բանաստեղծությունների մասին Թումանյանի կարծիքը (տե՛ս հուլիսի 29) հուժնորով է ընդունում:*

* Վարդազարյանի այս և նախորդ (տե՛ս <հուլիսի կեսեր>) նամակների տպավորության տակ են գրված Թումանյանի «Ընկերիս» («Ֆ-ին») և Տրտունջ» բանաստեղծությունները (ԵԼԺ 9, 297-298): Այդ նամակն է, որ բանաստեղծին մղել է փիլիսոփայական խորհրդածությունների՝ կյանքի, գրականության, ստեղծագործական աշխատանքի, բանաստեղծի կոչման և այլ խնդիրների շուրջ (տե՛ս օգոստոսի 6, 10):

ԳԱԹ ԹՖ, 2049 (1020):

<*Հուլիս*>, *Բելի Կյուլջ.* – Գրում է «Հայոց լեռներում» («Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր...») բանաստեղծությունը:

Ըստ հեղինակի վկայության՝ «Հին կռիվը» պոեմի երկրորդ երգի («Ճամփին») նախերգանքն է (տե՛ս «Հորիզոն», 1915, թիվ 243):

ԵԼԺ 1, 206, 608:

<*Հուլիս*>, *Բելի Կյուլջ.* – Հ. Մելիք-Հայկազյանի նամակը Թումանյանին՝ Կարլսբադից (չի պահպանվել):

Բանաստեղծի՝ <հունիսի երրորդ տասնօրյակի> անհայտ նամակի պատասխանն է:
ԵԼԺ 9, 289 - 609

<Չուլիս>, Բելի Կյուլչ. – Նամակ Բաքու՝ Մ. Տեր-Անդրեասյանին (չի պահպանվել):
Ըստ երևութին նորից դրամական օգնություն է խնդրել:
ԳԱԹ ԹՖ, 2159 (1123):

<Չուլիս>. – Դ. Դեմիրճյանի նամակը Թումանյանին՝ Արդանուչից:

Դժգոհելով հարցնում է, թե ինչ եղավ խոստացված 30-40 ռուբլին. «Բայց մի՞թե չես կարող երկու տող գրել և հայտնել թե ի՞նչ եղավ այդ փողը: Իսկապես ես չգիտեմ, թե որտեղի՞ց է այդ փողը. եթե քեզանից է կամ մի այլ անձնավորությունից, հարկավոր չէ. որովհետև դու ինքդ կարիքի մեջ ես: Իսկ եթե ուրիշներից է հավաքված, կամ դրկիր ինձ, կամ, վերջապես, հարկավոր չէ հավաքելը. և այն էլ այդ տեսակ հավաքելը, որովհետև Մոսկվայից մինչև Թիֆլիս ինձ վրա նայում են հիմա ինչպես մուրացկանի վրա...»:

Դեժ, XIV, 304:

<Չուլիսի վերջ – օգոստոսի սկիզբ>. – Հիվանդանում է:
Փիլ. Վարդազարյանին տեղեկացնում է (տե՛ս օգոստոսի 6). «Ես էլ մի քիչ ջերմ ունեցա, նրանից հետո ատամս շատ ցավեց <....> : Գիշերները չէի կարողանում քնել:
ԵԼԺ 9, 296:

Մինչև օգոստոսի 6-ը. – «Մի փոքրիկ հոգեբանա - փիլիսոփայա - բանաստեղծական նամակագրություն» Լե՛* - ի հետ:

Վերջինս բանաստեղծին «կարճ և խիստ» գրել է. «Դուք ծույլ եք, ոչինչ չեք շինում, նրա համար էլ կյանքը ձեզ ձանձրալի է թվում»: Թումանյանը Փիլ. Վարդազարյանին գրում է. «Իհարկե, ես կաշվից դուրս կգամ ու կապացուցեմ, որ այդպես չի: Ոչ թե ծույլ եմ, նրա համար է ձանձրալի, այլ ձանձրալի է, նրա համար եմ ծույլ» (տե՛ս օգոստոսի 6):

* Լե՛ - Գ Վ. Խանդամիրյանն է: Նրա հետ Թումանյանը հուլիս ամսին նամակագրություն է ունեցել (չի պահպանվել):
ԵԼԺ 9, 295, 612:

<Օգոստոսի սկզբներ>, Բելի Կյուլչ. – Նամակ Կարլսբադ՝ Դ. Մելիք-Չայկազյանին (չի պահպանվել):
ԳԱԹ ԹՖ, թիվ 1709 (885):

<Օգոստոսի առաջին օրեր>, Բելի Կյուլչ. – Գրում է «Տրտունջ» («Օրերս անպտուղ, տխուր, ձանձրալի...») բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 197, 604:

Օգոստոսի 1-5. – Դ. Աղայանի հետ գնում է «Աղայանցի գյուղը» (Բուլնիս Խաչեն):*

* Կնոջ՝ Օ. Թումանյանի վկայությամբ՝ նրանք ոչ թե Բուլնիս Խաչեն են գնացել, այլ Բելի Կյուլչից 20 կմ հեռավորության վրա գտնվող Շամ-շուլդա գյուղը, որտեղ ապրում էր Աղայանի քույրը:
ԵԼԺ 9, 295, 612:

Օգոստոսի 1-5. – Նամակներ իշխանուհի Մ. Թումանյանից և Շ. Վարդազարյանից (չեն պահպանվել):
ԵԼԺ 9, 295:

Օգոստոսի 5. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Լոզանից:

Շատ-շատ բարևներ
Ճերմակ Ալպերեն,
Բարձր մարգերեն,
Գիրուկ կովերեն,*
Համբույր ու բարև
Եվ քու Լևոնեն:

* Բացիկի վրա պատկերված են արածող կովեր:
ՈՒՀ 4, 358:

Մինչև օգոստոսի 6-ը. – Նամակ Բաքու՝ Մ. Տեր-Անդրեասյանին:

Հրաժարվում է իրեն առաջարկված պայմանից՝ իր գործերի հրատարակությունը հանձնել հիննախիջևանցի վաճառական Ավ. Պողոսյանին և դրա դիմաց նրանից փող ստանալ:

Հիշեցնում է, որ ինքը դրանը փոխարինաբար է խնդրել վերադարձնելու պայմանով (տե՛ս՝ <հունիս – հուլիս>):

ԵԼԺ 9, 295:

Օգոստոսի 6, Բելի Կյուլչ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդագարյանին:

Պատասխանն է վերջինիս՝ հուլիսի կեսերի և հուլիսի 31-ի նամակների: Արձագանքում է ընկերոջ «ագահ, համատարած տենչանքին», նրա ներքին բաղձանքին՝ «անսահման, անեզր տարածվել, լինել մի գիրկ, որի միջից չկարողանար դուրս գալ իր սիրուհին»: Այս անմիջական զեղումի վրա բարեհոգի ծիծաղից հետո ավելացնում է. «Ես հավանում եմ այդ տենչանքը, գուցե իր մեծության համար միայն, որովհետև իմ հոգին այժմ հակառակ տրամադրությունն ունի՝ անհագուրդ կարոտի, պապակող ծարավի, անսփոփ տառապանքի ցանկություն»:

Չի հավանում Փիլ. Վարդագարյանի՝ ֆրանսերենից թարգմանած բանաստեղծությունը, որովհետև «մեղկություն է շնչում, թուլամորթի մեղկություն: Տռփանք է ուզում, որ աշխարհի չարությունը մոռանա: Չարն ու չարչարանքը մոռանալու այս միջոցը, դժբախտաբար, ես լավ գիտեմ, շատ եմ փորձել: Հիվանդական երևույթ է և այժմյան գեղարվեստը բնորոշող: Ինձ էլ դյուր չեն գալիս դրանք: Ննջարանի հոտ է գալիս: Չգիտեմ ում խոսքերն են, այստեղ միտս եկան, ասում է – ջարդեցե՛ք պատուհանները, այդ ծանր օդից դուրս եկե՛ք մաքուր օդ, պարզ երկնքի տակ...»: Եվ ապա՝ «Իսկ իմ ուզած կարոտը ուրիշ բան է. նա իդեալականացնում, աստվածացնում է սիրո առարկան ու քնքշացնում, ազնվացնում մարդուն, թռիչք ու ձգտում է տալիս հոգուն»:

Ընկերոջ այն դիտողությանը, թե «չափից ավելի» է սիրահարված «Անուշին», բանաստեղծը պատասխանում է. «Այժմ, այս շրջանում, և բավական ժամանակ է առհասարակ, ես չեմ կարողանում գրվածքներիս կամ գրելիքներիս վրա սիրահարվել: Սա, իհարկե, դժբախտություն է, և ես ամենակողմանի կերպով հասկանում եմ ընչիցն է, բայց այսպես է: Մի ծանր, մռայլ անտարբերություն, մի դաժան սառնություն ծիծաղում է, շնչում է իմ բոլոր ձգտումների ու հուզմունքների վրա և պաղեցնում,

սառցընում: Ես զգում եմ, որ մեռած չեմ իբրև բանաստեղծ, բայց կաշկանդված եմ: Քեզ հետ արդյոք մղձավանջ չի՞ պատահել (кошмар). զգում ես, որ ապրում ես, բայց չես կարողանում շարժվել, շունչդ լսում ես, բայց չես կարողանում գոռալ»:

Փիլ. Վարդագարյանը հորդորում է ընկերոջը, որ չտխրի, որ դրանով դավաճանում է ինքն իրեն «իբրև ազգային բանաստեղծի»: Թունանյանի պատասխանը բաց է անում բանաստեղծի ստեղծագործական և հոգեբանական խոր դրաման. «Ես չեմ տխրում, որովհետև խոր ու լայն զգում եմ, որ վշտոտ ազգը, տառապած ազգը շարժում է իմ մեջ, ուզում է խոսել: Հենց այս էր, որ ասում էի մի ազգային, մեծ պոեմա եմ ձևել, բայց ծալում հետաձգում եմ: Գիտես, իմ մեջ մի զարհուրելի լույս է ծագել՝ մեծ գործ շինելու ցանկությունը: Բայց մեր աշխարքում մենք ունենք գրողի տառապանքը, առանց ունենալու գրողի կյանքը»:

Այնուհետև սրտի ցավով խոսում է ընտանեկան մաշող հոգսերի մասին, հատկապես այն, որ չի կարողանում իր ուզածի պես հոգալ երեխաների կրթության կարիքները, որ դրա համար «ստիպված ես լինում կապված մնալու այնպիսի մարդկանց հետ, որոնց ամեն մի խոսքը փուշ է քեզ համար, ամեն մի արարքը՝ սրբապղծություն»: Եվ ավարտում է խոսքն այսպես. «Մի՞թե սրան բանաստեղծ կդիմանա: Բանաստեղծությունը խաղաղություն է սիրում, այնտեղ է ծաղկում, իսկ եթե չես համաձայնիլ, կասեմ՝ թող հուզմունք լինի, ավեկոծություն, տանջանք, բայց ավելի լայն, ավելի մեծ, բարձր, ոչ թե սրտմաշուկ վրդովմունքներ, գռոշանոց հոգսեր, ուտելիքի և հագնելիքի անվերջ դարդ»:

ԵԼԺ 9, 292-296, 611:

Օգոստոսի 6. – Չանձրացել է գյուղի կյանքից:

«Թիֆլիսն եմ ուզում, բայց այնպես, որ շոգ չլինի, ես էլ սարքված, տեղավորված լինեի, «Վերնատունս» կարգն ընկած ու մի գրական եռանդուն կյանք, նոր տենչերով, նոր շնչերով:

Այս ծնեռ «Վերնատունը» պատվավոր կերևա: Պետք է մի նոր հոսանք առաջ բերել, նոր գրական հասկացողություններ, ճաշակ, լուրջ վերաբերմունք, պատկառանք դեպի գրիչը, գրչի

անպայման մաքրություն: Է՛յ, սար ու ծորեր կան հայոց «նշանավոր» գրողների և մեր «Վերնատան» որբերի մեջ:

Կեցցե՛ «Վերնատունը» »:

ԵԼԺ 9, 296:

Օգոստոսի 6. – Վերահաստատում է մտադրությունը՝ աշխատակցելու «Մուրճին»:

«... Եթե մարդավարի պայման լինի, էլ գիրք չենք տպիլ այս ծմեռ, ու հենց սեպտեմբերից նրան կաշխատակցեմ: «Սասունցի Դավթից» կսկսենք: Վերջից մի բան է մնում, բայց այդ ոչինչ բան է»:^{*}

^{*} «Մուրճին» աշխատակցելը ձգձգվել է մինչև դեկտեմբեր՝ թիվ 12-ը, որտեղ տպագրվել է «Հոգեհան» լեզենդը: «Սասունցի Դավթից» տպագրվել է «Մուրճի» 1903 թ. 2-5 համարներում:

ԵԼԺ 9, 295:

Օգոստոսի 10, Բելի Կյուլ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Երկրորդ պատասխանն է վերջինիս՝ հուլիսի 31-ի արդեն հիշատակված (տե՛ս օգոստոսի 6) նամակի: Այս նամակով է ընկերոջն ուղարկում «Ընկերիս» («Ֆ-ին») և «Տրտունջ» («Օրերս անպտուղ...») բանաստեղծությունները (տե՛ս հուլիսի 31): Մասնավորապես առաջինի մասին գրում է. «Գաղափարների ու երազների աշխարհն է, որ ես մի խոսքով անվանել եմ *Վեր*: Բայց բացատրությունն ավելորդ է, թե բան կա՛ կա, թե չէ բացատրությունով բան չի դուրս գալ:

Թաժա գրած բան է, ես էլ չեմ գլխի ընկնում լավ է, թե՛ վատ:

Է՛հ, ոչ մեկից խամ չենք: Լավն էլ, վատն էլ մի ճամփով են գնում: Գուցե այսպես չէ, բայց սազում է, որ ասենք: Կյանքից դժգոհ մարդիկ ինչ անհեթեթ բան էլ որ ասեն՝ միշտ իրավունք ունեն: Միայն մի պայմանով, որ բանը սրտից լինի ասած»:

ԵԼԺ 9, 297-298, 612-613:

Օգոստոսի 14, Բելի Կյուլ. – Նամակ Դիլիջան՝ Մ. Թումանյանին:

Պատասխանում է իշխանուհու նամակին, որ չի պահպանվել:

«Տրամադրությունս վատ է: Այս մի տեսակ լավ վատություն է, դյուրեկան տխրություն, և ինձ համար հաճույք է դարձել երբեմն առանձնանալ ու ցնորել (мечтать):

Իսկ դուք վախենում եք՝ ես շատ քեֆեր անեմ, ինձ վնասեմ: Ճիշտ է, մի երկու անգամ քեֆ եմ արել, բայց դեռ այդ ոչինչ բան է: Այստեղ այնքան էլ մեծ շրջան չկա, իսկ մշտական ընկերս Աղայանն է: Ամեն օր թափառում եմք ու խոսում զանազան խենթ ու խելառ բաներից:

Պարապում եմ, բայց ինչ որ կարծում էի, այդպես չեղավ: Մտածում էի, թե մենակ կլինեմ, իսկ, ընդհակառակը, ավելի շատվոր եղանք»:

Մ. Թումանյանի հասարակական գործունեության մասին գրում է. «Գիտեք, առհասարակ, որ ասում են՝ այս եմք անելու կամ այն, ես դրանից ոչինչ չեմ հասկանում, ինձ անբովանդակ բառեր են թվում, իսկ երբոր Դուք եք ասում, ես արդեն երևակայում եմ գործը, անպայման հավատում եմ, որ բան է լինելու:

Ճշմարիտ, որ անհատներն են գործ ստեղծում, կերպարանք տալիս, ընթացք տալիս հասարակական կյանքին: Մի քանի մարդ – և կյանքը դառնում է եռուն, կենդանի, գեղեցիկ»:

ԵԼԺ 9, 299-300, 613:

Օգոստոսի 20. – Հ. Մելիք-Յայկազյանի՝ օգոստոսի 20-ի (ն.տ.) նամակը Թումանյանին՝ Լինցերնից:

Ցավում է, որ Թիֆլիսում եղած ժամանակ ականա վիրավորել է Վ. Խանդամիրյանին:^{*} Գրում է նաև, որ դեռևս չի հանդիպել Շանթին, բայց հույս ունի Լոզանում նրան տեսնել:

^{*} Հայտնի չէ, թե ինչ վիրավորանքի մասին է խոսքը:

ԳԱԹ ԹՖ, 885:

Օգոստոսի 22. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Զննադատելով Թումանյանի «Ֆ-ին» («Իմ վեհ տենչերի, չքնաղ վշտերի...») բանաստեղծությունը (տե՛ս օգոստոսի 10), համարում է այն սուբյեկտիվ և «չափազանց հուսահատ»:

ԳԱԹ ԹՖ, 2050 (454/3):

Օգոստոսի 23. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Վարդազարյանի՝ օգոստոսի 22-ի նամակի պատասխանն է:

Ափսոսում է, որ ամառը վերջանում է, և դադարում է իրենց նամակագրությունը՝ «գեղարվեստի մասին, սիրո մասին, կյանքի ու իր վշտերի մասին, անվերջ, անվերջ...»: Մտորում է ամուսնության, սիրո, կնոջ հետ մտերմության շուրջ: Հիշում է ֆրանսիացի հոգեբան Ալֆրեդ Բինեի «սերը քաղց է» խոսքերը, ապա նկատում, որ դա ընդունելի է «միայն այն դեպքում, երբ խոսքը կրքի, տռփական սիրո մասին է»: Մինչդեռ «մարդ ունի մի քնքուշ էակի հետ գեղեցիկ, գեղարվեստական կապերով կապված լինելու կարողը, երազային կյանքով երբեմն ապրելու տենչը»:

Անդրադառնում է Վարդազարյանի այն դիտողությանը, թե «Ֆ-ին» բանաստեղծությունը «շատ է հուսահատական»: Ապա ավելացնում է. «Բայց – ինձ ի՞նչ: Տեսնո՞ւմ ես, հենց նույն օրերում դու իշխանուհուն գրում ես, թե՛ ես ապրում եմ առանց հավատի, չգիտեմ ինչի հավատամ և այլն»:

Այսպես, չգիտենք ինչի հավատանք, ինչ սիրենք, ինչ ցանկանանք. տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեզր ակեյոթության մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում, և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները»:

Անձամբ իր մասին. «Այժմ ես տառապում եմ մի մեծ տարակուսանքով՝ արդյոք ես բանաստեղծ եմ, թե՛ չէ: Մտածում եմ ու գնում, գնում, հասնում եմ մինչև կասկածի ամենամութ անդունդները, այնտեղ կորցնում հավատս, հանգցնում հույսս... Խղճահարվում եմ մինչև անգամ, որ օգնում եմ ինձ իբրև բանաստեղծի, ինձ թվում է, որ ես խաբված եմ, ուրիշներին էլ խաբում եմ, թե ես բանաստեղծ եմ... Ու նորից վերադառնում եմ, թե բան եմ գրում...»:

Հաստատում է իր հավատը իշխանուհի Մ. Թումանյանի հասարակական գործունեության հանդեպ. «Ես կարծում եմ այս ծմեռ նոր բաներ ենք տեսնելու. նա կանի, ես հավատում եմ»:

Չարմանալի կին է: Ափսոս, նրան լավ չեն ճանաչում առհասարակ: Է՛հ, վերջումը կճանաչեն, միշտ վերջումը...»:

ԵԼԺ 9, 300-302:

Օգոստոսի 23, Բելի Կյուլ. – Գնում է «մի հեքիաթ ասողի մոտ»:

ԵԼԺ 9, 302:

Օգոստոսի 25. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Լոզանից:

Չափածո կատակ - տողերով հայտնում է իր «գրական անգործության», «առևտրական բազմաշխատության» մասին: Հաղորդում է նաև, որ մեկ ամսից վերադառնալու է և հաստատվելու Կովկասում:

ՈՒՀ 4, 358:

Օգոստոսի <25-26> .- Բելի Կյուլչից վերադառնում է Թիֆլիս:

ԵԼԺ 9, 300-302:

✓ *Սեպտեմբերի 6.* – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Լոզանից:

Պատասխանն է Թումանյանից ստացած մի նամակի (չի պահպանվել), ուր բանաստեղծը նորից տրտմջում է առօրյա ընտանեկան հոգսերից, որոնք խանգարում են ստեղծագործական աշխատանքին: Շանթը հանդիմանում է ընկերոջը և պահանջում ամեն գնով շարունակել ստեղծագործել. «Ինձի նայե, ես այնպես ծուլություն-մուլություն բան չեմ հասկնար, ոչ ալ այնպես հիմար տողեր, թե «ես ծռված, խանգարված մարդ եմ», չգիտեմ ինչ: Կուզես ծռվի, կուզես շտկվի, ես վերադարձիս քեզմե նյութ կուզեմ, մեր Վերնատանը արժեք ունեցող բան մը պիտի ներկայացնես, անպատճառ: <....> Գիտես, որ ամեն բանեն առաջ և ամեն բանեն մեծը մեր Վերնատան ընթերցումներն են, ուրեմն, երեսդ խաչ հանե և շուտ ըրե, վերջացուր ինչ որ սկսեր ես: Ընտանիք, ծանրություն, զոքանչեք, պարտքեր, երեխա-

ների ճզլթոց, այդ բոլորը շատ լավ, հասկցա, բայց ի՞նչ, կը կարծես միայն դո՞ւն ես այդպես»:

Մտածում է «Վերնատան» ընդարձակման մասին. «<...> գուցե մեկ-երկու նորերն ալ բռնացրինք, արդեն նորընծայացու մեկ թե՞ երկու հատ ունիմ աչքիս տակ...»:

Հույս ունի, որ առաջիկա ծնունդը բոլորը միասին կլինեն և նոր շունչ կհաղորդեն Վերնատանը. «Շատ-շատ կցանկանայի, որ հավաքվեինք, սեղմվեինք իրար, իրար սիրող, իրար հասկցող մեր խումբը ու քիչիկ մը կենդանացնեինք, տաքընդեինք Վերնատունը»:

ՈՒՀ 4, 359-362:

Սեպտեմբերի 6. – Լ. Շանթի բացիկը թումանյանին (Շիլիոնի ամրոցի պատերով) Վեյթաուքսից.

Մեծ Բայրոնի «Մեծ թարգմանչին»

Ծերուկ Շիլիոնի* այս քարտը չնչին.

Ու այս քարտիս հետ բարև ու կարոտ

Սիրուն Լեմանի ավետն անծրևոտ:

Լևոն

* Բացիկի վրա Շիլիոնի ամրոցի պատկերն է:

ՈՒՀ 4, 358, 388:

Սեպտեմբերի 7, Բորժոմ. – Գնում է կայարան՝ գնացքից ուշացած: Մեկնել չի կարողանում:

ԵԼԺ 9, 304:

Սեպտեմբերի 8, Բորժոմ. – Բացիկ Թիֆլիս՝ կնոջը:

Գրում է. «Երեկ հենց ես հասա կայարան, գնացքը հեռացավ: Այսօր գնում եմ Բակուրիան 1/2 ժամ հետո: Գիշերը կգնամ Աբասթուման»:

ԵԼԺ 9, 304:

Սեպտեմբերի 8, Բորժոմ. – Չափածո նամակ – քառատող Թիֆլիս՝ Մ. Թումանյանին.

Թափառելով Բորժոմ – պարկուճ

Հիշում է Չեզ և ուղարկում

Շատ բարևներ ու սեր անկեղծ

Չեր բարեկամ մի բանաստեղծ:

ԵԼԺ 9, 304:

Սեպտեմբերի 10, լուսաբաց. – Բարձրանում է Ցխրա-Ծղարո՝ դիտելու արևածագը:

ԵԼԺ 9, 305:

Սեպտեմբերի 10, երեկոյան ժամը 8, Բորժոմ. – Բացիկ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է. «Հենց այս րոպեիս եմ վերադարձել: Գնացել էի Բակուրիանից 20 վերստ վերև՝ Ցխրա - Ծղարոյի գագաթը՝ այնտեղից դիտելու արևի ծագումը: Մշուշի պատճառով անհաջող անցավ»:

ԵԼԺ 9, 305:

Սեպտեմբերի 10, Բորժոմ. – Մտադրություն առավոտյան Աբասթուման գնալու:

ԵԼԺ 9, 305:

Սեպտեմբերի 10, Ցխրա-Ծղարո. – Բացիկ Թիֆլիս՝ Վ. Խանդամիրյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 320:

Սեպտեմբերի 11. – Բորժոմից դիլիժանսով գալիս է Աբասթուման:

Այստեղ նրան ջերմորեն հյուրընկալում են Փիլ. Վարդազարյանի հարազատները՝ Մարուսյան և Շուշանը:

ԵԼԺ 9, 306:

Մինչև սեպտեմբերի 15-ը, Աբասթուման. – Բացիկ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 308:

Սեպտեմբերի 15, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է Բորժոմից Աբասթուման ճամփորդության, արևածագը դիտելու նպատակով Ցխրա-Ծղարո սարի գագաթը բարձրանալու, Աբասթումանում Վարդազարյանների ընտանիքի կողմից հյուրընկալվելու, առողջարանում տեղավորվելու մանրամասնությունների մասին: Տեղեկացնում է, թե գրել է Ա. Ղլտնյանին, որ 50 ռ. փող տա. «Եթե բերի, ամենից առաջ ատամ-

նաբույժին վճարիր»:

ԵԼԺ 9, 307:

Սեպտեմբերի 15, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Գրում է Աբասթումանում նրա հարազատների մոտ անցկացրած առաջին օրերի, քրոջ Շուշանի հոգատարության, բժշկի մոտ լինելու, սենյակ վարձելու մասին:

ԵԼԺ 9, 307-308:

Սեպտեմբերի 15, Աբասթուման. – Այցելում է պարսկահայ վաճառական Համբարձում Թումանյանին:

ԵԼԺ 9, 308:

<1902>, Սեպտեմբերի <16>, Աբասթուման. – Վարդազարյանների ամառանոցից (նրանք վերադառնում էին Թիֆլիս) տեղավորվում է նոր սենյակ՝ իբրև «нахлебник»:

Թումանյանը երախտագիտությամբ է խոսում հատկապես Շ. Վարդազարյանի հոգատարության մասին:

«Շուշանը սաստիկ տաք կպավ գործին, այնպես սկսեց կերակրել ինձ ու իր ճուտերին, որ ճուտերը հիվանդացան, բայց ես կարողացա դիմանալ:

Ապա հանձնեց ինձ իր բժշկին, որ մի շատ լավ մարդ է: Բժիշկը քննեց երկար, գտավ, որ սաստիկ հոգնած եմ ու նյարդերս քայքայված, հարկավոր է սնունդ և հանգստություն:

Այնտեղից էլ, բժշկի հանձնարարությամբ, ձեռքս բռնեց, բերավ «нахлебник» տվավ «Ткачкин» անունով մի մարդու կնոջ, ամսական 35 ռ., պայման կապեց, որ ամեն օր՝ առավոտ, նախաճաշին, ճաշին, ընթրիքին, չգիտեմ ինչ ու ինչ տան, խնդրեց, որ լավ պահեն, ապա հոգաց, ինչ որ մտքովն անցավ կամ պակաս գտավ, պատվիրեց, որ պալտոյիս կոճակները միշտ զգած պահեն ու կալոշներս չհանեն, ու եկավ Թիֆլիս»:

ԵԼԺ 9, 308:

✓ *Սեպտեմբերի 17, Աբասթուման.* – Նամակ - բացիկ դստերը՝ Նվ. Թումանյանին:

«Նունիկ ջան,

Ինչո՞ւ դու էլ չես նամակ գրում: Գրիր ամեն բան, թե ինչ եք անում դուք:

Համբուրում եմ բոլորիդ:

Հայրիկդ »:

ԵԼԺ 9, 309:

Սեպտեմբերի 18, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Մ. Թումանյանին:

Գրում է Բորժոմից Աբասթուման ճամփորդության, Աբասթումանում իր նկատմամբ Վարդազարյանների ընտանիքի հոգատարության, իր առողջական վիճակի մասին:

ԵԼԺ 9, 309-310:

Սեպտեմբերի 19. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խիստ հանդիմանում է ընկերոջը օգոստոսի 23-ի նամակի հոռետեսական տրամադրությունների համար. «Դարտակ կասկած ենթադրությունների, թե դու գրող չես, հանիր մտքիցդ և այդ հարցին երբեք մի՛ վերադարձիր: Ընդհակառակը, քեզ վրա նայիր իբրև գրողի, գործիչի վրա, որը յուր արտադրությունով ծառայություն կմատուցանի թե ներկա, թե ապագա սերնդին»:

Խորհուրդ է տալիս մնալ Աբասթումանում, եթե անհրաժեշտ լինի, թեկուզ մեկ տարի, միայն լավ հանգստանալ, բուժվել, աշխատել և ստեղծագործել՝ խոստանալով հոգալ ընտանիքի կարիքները: Հայտնում է, որ սեպտեմբեր - դեկտեմբեր ամիսների բնակվածը արդեն վճարել է իշխանուհի Մ. Թումանյանը:

Խոսք է գնում նաև նոր ժողովածու հրատարակելու մասին: Դրա համար Վարդազարյանը առաջարկում է մի քանի պայման՝ ա) ծավալը, որքան կարելի է, մեծ պետք է լինի, բ) ոչ միայն ոտանավորներ, այլև ամբողջ արձակը՝ ընտրությունը թողնելով հրատարակիչներին և Շանթին, որ «այս քանի օրս պետք է գա», գ) տպագրությունը ձեռնարկելուց առաջ հրատարակիչները պետք է իմանան, թե ինչքան կկազմի անտիպ նյութը, դ) գրքի գինը 5 ռ. և առնվազն 1000 բաժանորդ:

ԳԱԹ ԹՖ, 1021:

Մինչև սեպտեմբերի 19-ը, Աբասթուման, – Նամակներ Ե. Լալայանին և Ա. Ղլտճյանին (չեն պահպանվել):
ԵԼԺ 9, 312:

Սեպտեմբերի 19, Աբասթուման. – Նամակ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Դժգոհում է, որ ուշ-ուշ է նամակ գրում: Տեղեկացնում է, որ վերջապես ստացել է նրա երկար սպասված նամակները, ինչպես նաև դատեր՝ Աշխենի բացիկը: Գրում է արասթումանյան իր առօրյայի, բուժման ընթացքի մասին:

ԵԼԺ 9, 311-312:

Սեպտեմբերի 20-22, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին (սկզբից պակասավոր է):

Պակասող մասում հավանաբար գրած է եղել Բորժոմից Աբասթուման ճամփորդության, Ցխրա-Ճղարոյից ստացած տպավորության, առողջարանում տեղավորվելու մասին:

Այնուհետև ներկայացնում է իր առողջական վիճակը, բուժման ընթացքը, լավ տրամադրությունը. «Արդեն տրամադրությունս այնքան լավ է, որ պարապելս գալիս է: Մի երկու ոտանավոր եմ գրել, բայց այն ոտանավորներից, որ հիշատակարանում են գրում»:^{*}

Բանաստեղծի լավ տրամադրության մասին են վկայում նաև կատակելու հակումը, որ նկատելի է ընկերոջն ուղղված մտերմական խոսքերում. «Արդյոք ե՞րբ բախտ կունենանք կարդալու քո նոր փիլիսոփայա - երգիծա - բանաստեղծական նորելուկ մտքերը: Այժմ ավելի, քան երբևիցե տրամադիր եմ կարդալու և ծիծաղելու քո փիլիսոփայության վրա:

Իհարկե, դու չես վախենալ իմ այս սպառնալիքից: Ապագան ճշմարտությանն է, իսկ ճշմարտությունը իմ խոսքերի մեջն է:

<...> Արդյոք համաձայն ես իմ Ցխրա-Ճղարոյի գազաթին եկած մտքերի հետ»:^{*}

^{*}Սեպտեմբերին գրած այդ ոտանավորներից պահպանվել են միայն երկուսը: Մեկը Մ. Թումանյանին ուղղված քառատողն է՝ «Թափառելով Բորժոմ պարկում» սկզբնատողով (տե՛ս սեպտեմբերի 8), մյուսը՝

«Նստած եմ տխուր, մենակ մի ժայռի...» բանաստեղծությունը (տե՛ս սեպտեմբերի 25):

^{*} Այդ մտքերը հավանաբար արտահայտված են եղել սեպտեմբերի 17-ի չպահպանված նամակում կամ սույն նամակի պակասող էջերում:
ԵԼԺ 9, 313-314, 617-618:

Սեպտեմբերի 22, Աբասթուման. – Գրում է «Նստած եմ տղխուր, մենակ մի ժայռի...» բանաստեղծությունը:
ԵԼԺ 9, 199, 605:

Սեպտեմբերի 22. – Արտավազ Թումանյանի բաց նամակը Գովհ. Թումանյանին: «Միրելի Դայրիկ, շատ շոգ է: Մուշտայիդ գնալու ժամանակ<ն> է:

Արտավազ»

ԹՏԹ, 3779:

Սեպտեմբերի 25, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Գրում է առողջարանային առօրյայի, ապրելակերպի, զբոսանքների, բուժման ընթացքի, տանտերերի լավ վերաբերմունքի մասին: Իբրև «գաղտնիք»՝ հայտնում է Լ. Շանթի և Դ. Մելիք-Չայկազյանի նշանադրության մասին:

ԵԼԺ 9, 314 - 315:

Սեպտեմբերի 25. – Մ. Թումանյանի նամակը Գովհ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է էջմիածնով Անի գնալու մտադրության, սիրողներից կազմված իր դերասանական խմբի հաջողությունների, ապագա ծրագրերի մասին. «Դերասանական խմբի ներկայացումներն արդեն սկսվել են, խաղի կողմից շատ հաջող է, իսկ նյութականը թույլ է: Եթե այդպես գնա, մեծ վնասներ կկրենք: Ես ավելի ու ավելի եմ համոզվում, որ թատրոնը պետք է պահել ժողովրդի համար և միջին դասակարգի, իսկ մեր բուրժուազիան միշտ հեռու կպահի իրեն: Եթե ինձ հաջողվի լավ խումբ կազմել սիրողներից, ես ինձ երջանիկ կհամարեմ, որովհետև կարող

կլինեն՝ թատրոնի միջոցով զարգացնել ժողովրդի թե՛ միտքը և թե՛ ճաշակը»:

Հայտնում է, որ Փիլ. Վարդազարյանը «բավական հաջող» մի վողկի է գրել, բայց չի ուզում վստահել սիրողական խմբին, վախենում է՝ փչացնեն:

Խորհուրդներ է տալիս, որ առողջարանում թունամյանն իրեն լավ պահի, չմրսի:

Բանաստեղծի տպագրվելիք ժողովածուի մասին տեղեկացնում է. «Մենք կուզենայինք շուտով բացել բաժանորդագրությունը, իսկ դրանից առաջ հարկավոր է իմանալ գրքի մեծությունը, որպեսզի գինը որոշենք: Մենք կանենք շքեղ հրատարակություն: Մի խոսքով՝ շուտ պատասխանեցեք, գիտեք, որ այդպիսի հարցերը շատ են ձգձգվում, իսկ ես համբերություն չունեմ և ուզում եմ շուտով իրագործել իմ միտքը»:

Ցանկություն է հայտնում, որ թունամյանն էլ մասնակցեր իր տանը կազմակերպվող գրական երեկույթներին. «Կուզենայի, որ Դուք ներկա լինեիք մեր հինգշաբթիներին»:

ԵԼԺ 9, 321. ՈՒՀ 5, 288-289:

Սեպտեմբերի 25, Աբասթունան. – Նամակ Թիֆլիս՝ Վ. Խանդամիրյանին:

Ձուդերմանի «Կեցցե՛ կյանքը» դրամայի տպավորության տակ խորհում է կյանքի, գեղեցկության շուրջ. «Հիշեցի Ձեր խոսքերը, թե կյանքում այնքան գեղեցիկ բաներ կան...»

Ծիշտ որ, կյանքում շատ գեղեցիկ բաներ կան, բայց նրանք բոլորն էլ տանջանքի համար են գեղեցիկ. և սակայն քաղցր է կյանքը»:

Բանաստեղծական ներշնչանքով ուրվագծում է Կովկասյան լեռնաշղթայի համայնապատկերը՝ դիտված Ցխրա-Շղարոյի գագաթից (տե՛ս սեպտեմբերի 10). «Մեր առջև բացվեց մշուշային մի անեզր ծով, Կովկասը թաղված այդ ծովի մեջ ու մենք վերևը: Ոլիմպական աստվածների անկարգությամբ նստեցինք ու սպասում էինք արևի ծագելուն: Հանկարծ մշուշն իջավ, այստեղ-այնտեղ այդ մշուշի ծովից դուրս տնկվեցին բարձր սարերի կոնտուրները, վիշապի նման ձգվեց Կովկասի շղթան, արևելքում պատռվեցին մութ ամպերը, փայլատակեց մի հրաշք

ու... իսկույն կրկին ամեն բան ծածկվեց մի հսկայական վարագույրով՝ մշուշով:

Բայց այն ի՞նչ հրաշք էր:

Այն արևելքի ոսկի դռներն էին...»:

Գրում է իր առողջարանային կենցաղի, Աբասթունանի բնության գեղեցկությունների մասին. «Աքանջելի, սքանչելի օրեր են: Չգիտեմ՝ Դուք երբևէ աշնանը եղե՞լ եք բնության մեջ, անտառներում, սար ու ձորերում: Աբասթունանի հովիտը լիքն է արևի շողերով, սոճի անտառների բուրմունքով, թռչունների աշնան՝ հրաժեշտի երգերով ու մի անուշ, թախծալի խաղաղությամբ: Ամբողջ օրը զբոսանքներ են կատարում. թաղվում են անտառների խորքում, բարձրանում են սարերի գլուխները, նստում են ժայռերի գագաթներին ու մտորում, ցնորում, չնայելով Ձեր խրատին: Հաճախ, հենց այդ անտառներում, այդ ժայռերի վրա ոտանավորներ են գրում, մեծ մասամբ այսպիսի հիշատակարանի ոտանավորներ (ամբողջությամբ մեջ է բերում «Նստած եմ տղխուր, մենակ մի ժայռի» ոտանավորը (տե՛ս սեպտեմբերի 22):

ԵԼԺ 9, 318-321:

Սեպտեմբերի 25, Աբասթունան. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Դեռ չիմանալով, որ թյուրիմացություն է, նորից իր ուրախությունն է հայտնում Շանթի և Հ. Մելիք-Հայկազյանի նշանվելու առթիվ:

Հանգամանալից խոսում է իր նոր ժողովածուի հրատարակության համար Վարդազարյանի առաջարկած պայմանների մասին (տե՛ս սեպտեմբերի <22-23>). «Տպագրելիք, պատրաստ նյութերի մասին ես կպատասխանեմ մի երկու շաբաթից հետո, թե որքան կլինի: Բո առաջարկությանը, թե ընտրությունը *միանգամայն* ձեզ թողնեմ՝ չեմ համաձայնելու: Եվ ինչ միտք ունի՝ որքան կարելի է շատ: Ես հասկանում եմ. դու հաստության համար ես ասում, որ կարելի լինի վրեն էլ 3-5 ռ. նշանակել (որը շատ ու շատ թանկ է), բայց չեմ կարող: Եթե ստիպված չլինեի, նույնիսկ չէի էլ տպիլ այժմ, իսկ եթե մի բան տպեի, անշուշտ կանեի բրոշյուրներով: Դու հեշտ ես հավիշտակվում: Այս ի՞նչ

հաշիվ է, որ դու անում ես. ասում ես, եթե 1000 բաժանորդ ունենանք 5 ռուբլով...

Ո՛վ սուրբ անմեղություն...»:

Գրում է, որ դեռ նոր է «ուժի գալիս», կպարապի՝ «ստիպված ոչ թե արտաքին հանդիմանություններից կամ խրախուսանքներից, այլ ներքին ուժեղ դրդումներից»:

Հայտնում է իր փայփայած մի երազանքի մասին. «... եթե ինձ տրվեն այս միջոցները, ես վաղուց փայփայած մի միտք ունեմ, այն կարող եմ իրագործել, որ ինձ համար շատ մեծ նշանակություն կունենա ըստ ամենայնի»:

* Ամենայն հավանականությամբ խոսքը Եվրոպա կամ Ռուսաստան ճամփորդելու մասին է:

ԵԼԺ 9, 316-317:

Սեպտեմբերի 27. – Լ. Շանթի բացիկը Թումանյանին՝ Թումնից:

Երկու չափածո վեցատող է.

I

Դուն բան չունիս, սպասե
Լճերն ի վար կապուտակ,
Գետերն ի վեր կերպասե,
Լեռներուն տակ ծյուն գդակ
Մենք մեր սերը ման կուտանք,
Դուն բան չունիս, սպասե:

II

Ահա քեզի մի սյուրպրիզ,
Որի քնքուշ բանալին
Գուցե տամ քեզ իմ դարձիս:
Չեն թողնում մարդն իր հալին
Սեր, սիրտ ու վարս մետաքսե,
Դուն բան չունիս, սպասե:

ՈՒՀ 4, 362:

Սեպտեմբերի 27. – Ա. Ջարգարյանի նամակը Թումանյանին Բորժոմից:

Բանաստեղծին մի քանի օրով հրավիրում է Բորժոմ՝ բժշկական քննության ենթարկվելու: Խորհուրդ է տալիս հիվանդ ծանոթներից հեռու մնալ:

ԳԱԹ ԹՖ, 1177 (624):

Մինչև սեպտեմբերի 28-ը. – «Տարազի» խմբագրության նամակը Թումանյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 322:

Մինչև սեպտեմբերի 28-ը, Աբասթուման. – Նամակ Դսեղ՝ Ռոստոմ կամ Վահան Թումանյաններին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 322, 621:

Սեպտեմբերի 28, Աբասթուման. – Ստանում է նամակներ Օ. Թումանյանից, Մ. Թումանյանից, Շ. Վարդազարյանից, Ա. վրդ. Ղլտճյանից (չեն պահպանվել):

ԵԼԺ 9, 321:

Սեպտեմբերի 28, Աբասթուման. – Նամակ Ա. վրդ. Ղլտճյանին (չի պահպանվել):

Հրաժարվում է ընկերոջից խնդրած 50 ռ. դրամից, քանի որ «կարիքն անցել է»:

ԵԼԺ 9, 322:

Սեպտեմբերի 28, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է առողջարանային իր առօրյայի, հատկապես տանտերերի լավ վերաբերմունքի մասին: Տալիս է զանազան կենցաղային հանձնարարություններ, մասնավորապես՝ թե ինչպես կահավորեն տան սենյակները: Իր և Վ. Խանդամիրյանի հարաբերությունների մասին կնոջը գրում է. «Ասում ես օրիորդից նեղացած ես: Նա, ինձ թվում է, որ ինձ լավ չի ճանաչում, կամ կարծում է դու էլ կնեղանաս, եթե ինձ ավելի բարեկամավարի վերաբերվի: Այդ պետք է վերագրել ավելի շուտ նրա ազնվությանը: Իսկ քո կարծիքը, թե գուցե նա վախենում է, թե հեռու կգնա - սխալ է. նա բավական հասկանում է աշխարհքն ու իրեն և մանավանդ այնքան մաքուր սիրտ ունի, որ անընդունակ է հասնելու պախարակելի սահմաններ: Եվ հենց այդ է լավը. թե չէ հակառակ դեպքում քանի՞ գրոշ կարժե՞նար: *Կինը* (օտար կինը) մարդու աչքում մինչև այն ժամանակ հարգ ունի, քանի որ բարձր է և *իրև մարդ*: Այս դեպքում ես հարգում եմ նրա ազնիվ ու շիտակ բնավորությունը և նույնիսկ հասկանում եմ

նրա ակամա արած անքաղաքավարությունը, որ դժվարանում է նամակ գրի, որովհետև մեր կյանքը լիքն է ստոր մարդկանցով ու ստոր արարքներով, և նա ի՞նչ գիտի, թե ես էլ ի՞նչ եմ»:

Հայտնում է, որ հետևում է ռուսական և հայ մամուլին. «Այստեղ կարդում եմ ռուսաց լրագիրները, թե՛ Թիֆլիսի, թե՛ մայրաքաղաքների և «Մշակ», որ ամեն օր բերում է իմ տանտերը»:

Կնոջը հանձնարարում է. «Շկաֆներում մի երկու ալբոմներ կան, իշխանուհունն ու Շուշանինը, վերցրու պահիր կամոդում, իրանց բան չասես»:

* Թամար Թումանյանի բանավոր վկայությամբ՝ իշխանուհի Ս. Թումանյանի ալբոմը բանաստեղծը հետագայում ոչնչացրել է: Այդ ալբոմի մասին հիշատակում է նաև ինքը՝ Ս. Թումանյանը (ԹԺՀ, 483): Շուշանիկ Վարդապարյանի ալբոմը նույնպես չի պահպանվել:

ԵԼԺ 9, 324, 621:

Սեպտեմբերի 28. – Մ. և Փիլ. Վարդապարյանների սեպտեմբերի 28-ի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Վերջինս առաջարկում է Թումանյանի նոր տպագրվելիք ժողովածուի համար նյութեր ընտրելու հետևյալ սկզբունքը. «1. Դու ինքդ կասես, թե ինչ ես ուզում, որ *անպատճառ* տպվի: 2. Այա այդ ինչի վրա կավելացվի այն ամենը, ինչ որ այս 4-5 հոգուն դուր կգա ջոկ ջոկ, և այսպիսով չի տպվի միայն այն, որը դուր չի գալ և ոչ մեկին այդ 4-5 հոգուց: Մի խոսքով նպատակս է գոհացնել շատ ճաշակներ»:

ԳԱԹ ԹՖ, թիվ 1024:

Սեպտեմբերի 30, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Մ. Թումանյանին:

Տեղեկություններ է հաղորդում ամառանոցային իր կյանքի, բուժման ընթացքի, իր լավ տրամադրության, չափավոր պարապմունքների մասին: Հիացմունքի ներշնչված տողեր՝ ծոնված Արասթումանի աշնանային բնությանը. «Մահն էլ կարող է սիրուն լինել, ինչպես աշունն այս հովիտում»:

Հաջողություն է մաղթում իշխանուհու թատերական նախածեռնություններին, բարի ճանապարհի դեպի Անի: Հիշում է Փիլ. Վարդապարյանի վողկիլի մասին, որ չի ուզում սիրողական խումբը ներկայացնի, թե կփչացնեն (<տե՛ս սեպտեմբերի 28>):

Ու կատակում է. «Իսկի այն չի մտածում, որ կարող է իրեն վողկիլը նրանց փչացնել: Այս, իհարկե, ձեր ականջումն են ասում, թե չէ այդ սկսնակ գրողները շատ դյուրագգաց ու պատվասեր են լինում»:

Իր տպագրվելիք ժողովածուի մասին գրում է. «Սպասեցեք մի առժամանակ, որ մի լավ հավաքեմ, հաշվեմ ու այնպես Ձեզ տեղեկություն տամ: <...> Ես կարծում եմ ինձ հետ կհամաձայնեք Դուք, որ, մանավանդ գեղարվեստական գործի մեջ, որքան կարելի է պետք է ընտիրը, լավը տալ, քանակը կախված կլինի արդեն դրանից: Նա առանձին նշանակություն չպետք է ունենա»:

ԵԼԺ 9, 324-326:

<Սեպտեմբեր>, Արասթուման. – Նամակ ուսուցիչ Արսեն քահանա Բագրատունուն (չի պահպանվել):*

* Հետագայում բանաստեղծը այդ նամակի մասին կնոջը գրում է. «Ասում ես՝ տեր Արսենին նամակ եմ գրում: Նոր եկած ժամանակս մի նամակ եմ գրել մի բանի համար, մի՞թե մինչև այսօր էլ ցույց է տալիս»:

ԵԼԺ 9, 349:

<Սեպտեմբերի վերջ>. – Շանթի հեռագիրը Թումանյանին: Տեղեկացնում է, որ վերադառնում է Թիֆլիս:

ՈՒՀ 4, 363:

Հոկտեմբերի 2, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Տեղեկացնում է, որ ստացել է նրա և Մարուսյայի նամակը, «Շանթի քարտը» (տե՛ս սեպտեմբերի 27): Խնդրում է Վարդապարյանից «մի հեռագրով» իր անունից շնորհավորել Շանթին: * Գրում է, որ առողջարանում «եղանակները խառնվում են», «հրաշալի ազատությանը պետք է հաջորդեն բանտարգելության ձանձրալի ու սրտմաշուկ օրերը»: Տրտմջում է դրամի պակասությունից. «Բժիշկն ասում է՝ երկու օրը մի անգամ պետք է վաննա ընդունես: Բայց ես դեռ չեմ ընդունում ֆինանսական շատ հարգելի պատճառով»:

Իր նոր ժողովածուի հրատարակության համար Փիլ. Վարդապարյանի առաջարկած պայմանների (տե՛ս <սեպտեմբերի 30>) մասին գրում է. «Ուտանավորների ընտրության համար

արած քո վերջին կոմբինացիային համաձայն եմ, բայց մի հավելվածով, որ այդ խմբի ջոկածներն էլ վերջին անգամ ես նայեմ: Ես տեսնում եմ, որ դու շատ ես ուզում զիջող լինել:

<...> Ես կուզեմայի, որ *դու* մենակ մի ընտրություն անեիր ուսանավորների ու ցուցակն ուղարկեիր ինձ: Եվ եթե կգրես, նաև քո կարծիքը, թե ինչու ես այդ ընտրությունն անում, ինչ խորհրդով, ինչ մտքով ես առաջնորդվում»:

* Շանթի այս և մի այլ բացիկ (ԳԱԹ ԹՖ, 1873, (ց.2, թիվ 96), որով բարևներ է ուղարկում Թումանյանին և որի վրա ստորագրել են նաև մայր և դուստր Մելիք-Յայկազյանները, առիթ է տվել Թումանյանին ենթադրելու, թե Շանթը նշանվել է Գ. Մելիք-Յայկազյանի հետ (տես սեպտեմբերի 25): Այդ մասին բանաստեղծը հիշում է այդ օրերի մի քանի նամակներում: Հետո պարզվում է, որ դա թյուրիմացություն է:

ԵԼԺ 9, 326-327:

<Հոկտեմբերի 2-3>. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Հայտնում է, որ ինքն արդեն Թիֆլիսում է: Ցավում է, որ Թումանյանը քաղաքում չէ: Հետո մանրամասն խորհուրդներ է տալիս, թե ինչպես պահի իրեն առողջարանում, օրվա մեջ քանի ժամ աշխատի, ինչ ընդմիջումներով:

Գրում է, որ օրիորդ Գ. Մելիք-Յայկազյանի հետ իր նշանվելու լուրը (տես սեպտեմբերի 25) թյուրիմացություն է: Խոստովանում է, որ ինքը ուրիշ կնոջ է սիրում, որի անունը առայժմ գաղտնի է պահում:

Տեղեկացնելով բանաստեղծին նրա նոր հրատարակվելիք ժողովածուի նախատեսվող տպաքանակի (1000-1500), հրատարակության ֆինանսական միջոցների և այլ խնդիրների մասին (տես սեպտեմբերի 25, 28, 30) հավելում է. «Գալով երկրորդ կետին՝ գրական-խմբագրական մասին, դուն խիստ ջնջելական ես և անոնք ալ սաստիկ շատ երեսական: Ես իսկապես այնքան երեսներու շատությանը չեմ նայեր (թեև անշուշտ անոնք ալ իրավունք ունին իրենց հաշվին մեջ), բայց բոլորովին այլ կողմով անոնց, այսինքն քու թշնամիներուդ կողմն եմ: Խնդիրն այն է, ինչ որ մեկ անգամ գրած ես, հիմա նոր հրատարակության մեջ առնելովդ կամ չառնելովդ ոչինչ չես փոխեր, կան և կմնան և պետք է մնան: Դու այնպես ես եղած մի ժամանակ

և քու այն վիճակիդ մեջ քեզի հասկացող ու սիրողներ էլ կան: Ինչ գիտես, որ ասկե տասը տարի վերջը քու արդի գրվածքներուդ շատ պիտի հավնիս, ուրեմն երբեք ոչինչ չը տպենք կամ գոնե ոչինչ չարտատպենք: Մտածումդ ճիշտ չէ, այդ մասին ժամանակին մեր մեջ վեճ ալ է եղած, եթե կը հիշես: Պետք է համել, ինչ որ հակազեղարկեստական է, ինչ որ արդեն շատ է երեխայական, դրանց թիվը շատ է քիչ: Մնացածները կմնան և սրբագրել, փոխել էլ պետք չէ: Հիմար, կարկատան բան է դա, ինչ որ 10 տարի առաջ գրեր ես, հիմա չես կրնար սրբագրեր, թող ինչպես որ կա, շատ-շատ հաջող նոր հանգ մը, արտահայտիչ նոր բառ մը, ուրիշ ոչինչ: Թող ինչպես որ կա, նայե, որ նորը գրես, նոր բան, նայե, որ անտիպները լավ մշակես, մանավանդ պոեմներդ: Գոնե «ժողովը» այսպես է «վճռեր» հոս. դուն կուղարկես քու ընտրությունը, ինչ որ բաց ես թողած, հոս չորս հոգի (որոնց մեջ իմ անունս ալ դնելու պատիվ են ըրած) պիտի կարդան և իրենց այոն ու ոչը պիտի ըսեն և պիտի միացնեն նորեն քու ընտրությանդ, այնպես որ լավն են է՝ ինքը այնպես ընտրես, որ հոս նոր փոփոխություններու գրեթե տեղիք չի մնա»:

ՈՒՀ 4, 363-366:

Հոկտեմբերի 2, 8. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Տեղեկություններ է տալիս իր առօրյայի և ուսանողական հետաքրքրությունների (մաթեմատիկա, գեղարվեստի պատմություն, ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն) մասին: Գրում է «Ալեքսանդր III-ի թանգարան»-ի մասին. «... Ի՞նչ բաներ կան ռուս արվեստից, կիիանաս»: Էրմիտաժում «կարելի է շատ լավ անցնել ամբողջ գեղարվեստի պատմությունը՝ եգիպտոսից մինչև Եվրոպա»: Տեղեկացնում է, որ զբաղվում է հատկապես «իկոններով». «... Եթե գրելու լինեմ այդ մասին մի բան, միտք ունեմ նամակների ձևով գրելու և, հավանորեն, քեզ ուղղած»:

Գրում է Ս. Թառայանցի և Դուրբախյանի «Գրախոս» ամսուով պարբերական հրատարակելու մտադրության մասին: Նպատակն էր՝ «զարկ տալ հայ գրականության զարգացմանն ու ծավալմանը»: Ծրագիրը կազմել է ինքը:*

Յետաքրքրվում է Թիֆլիսի ընկերների կյանքով. «Ի՞նչ եք մտածում դուք, բան-ման ձեռնարկելու՞ եք, թե անցյալ և նախանցյալ տարվա նման»: Անհամբեր սպասում է Շանթի «բանաստեղծական ժողովածուին»: Այդպիսի ժողովածու կուզենար սպասել նաև Թումանյանից. «... Բայց զուր է, անողը չես: Այս տարին էլ առանց Յ. Թումանյանցը մնանք»:

Կարծիք է հայտնում Լ. Մանվելյանի «Դեպի վեր» դրամատիկական պոեմի մասին. «Ինձ միշտ թվում է, որ նա ավելի լավ է երևակայում և խորն է զգում, բայց արտահայտել չի կարողանում: Չամենայն դեպս, տվածից ավելին կա իր մեջ»:

ՌԻՅ 5, 362-364:

Չոկտեմբերի 4. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին Բաքվից:

Տեղեկություններ է հաղորդում իր մասին. եկել է Թիֆլիս, հետո անցել, Շուշի, Բաքու: Նոր ժողովածու է պատրաստում: Չարցնում է Աղայանից, Դեմիրճյանից, Շանթից: Մասնավորապես գրում է. «Սիրելիս, դուն ի՞նչ ես անում. «Անուշդ» ո՞ւր մնաց. շարունակ նրա մասին եմ մտածում. ձմեռը որ կարդացիր՝ համը բերանս մնաց. շուտ արա, տպիր տեսնենք, լի ու լի վայելենք»:

Իսկ ժողովածո՞ւդ, սրբագրված... Ո՞ւր մնաց»: ԱԻԵԺ 6, 41-42:

Չոկտեմբերի 4. – Յու. Վեսելովսկու նամակը Թումանյանին Մոսկվայից:

Յետաքրքրվում է, թե ինչ ազդեցություն է կրել Թումանյանը ռուս գրողներից:

ԳԱԹ ԹՖ, 2117 (1065ա):

Չոկտեմբերի 5. – Փիլ. Վարդագարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Պատասխանում է Թումանյանի՝ հոկտեմբերի 2-ի նամակի: Գրում է պատրաստվող ժողովածուի մասին: Խորհուրդ է տալիս բանաստեղծին Աբասթուվանում մնալ նաև ձմեռը՝ լրիվ ապաքինվելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1022:

Չոկտեմբերի 5. – Տպագրվում է Ս. Թումանյանի նամակը «Մշակի» խմբագրությանը:

Առաջարկում է անհապաղ կառուցել թատրոնի սեփական շենք <...> հայ բնակչության կենտրոնում՝ դրա համար օգտագործելով մեծահարուստ Խուրատյանի կտակով Չայ բարեգործական ընկերությանը հատկացված հողամասը: Ընդգծվում է, որ թատրոնը իր գոյությունը ապահովում է միայն *միջին* դասակարգի միջոցներով, իսկ նրա նվազ հնարավորությունները չեն կարող հույսեր ներշնչել:

«Մշակ», 1902, թիվ 220:

Չոկտեմբերի 6. – Վ. Խանդամիրյանի բացիկը Թումանյանին:

Տեղեկացնում է, որ ստացել է բանաստեղծի նամակները (պահպանվել է միայն սեպտեմբերի 25-ինը):

ԳԱԹ ԹՖ, 1085:

Չոկտեմբերի <6-7>. – Նամակ Լ. Շանթին (չի պահպանվել):

Ուզում է նրա հասցեն:

ԵԼԺ 9, 330:

Չոկտեմբերի <9-10>, Աբասթուվան. – Այցելություններ Չամբարձում Թումանյանի, Արսեն (փաստաբան) և Արտաշես (բժիշկ) Շխյանների ընտանիքներին:

ԵԼԺ 9, 330, 333, 338:

Չոկտեմբերի 9-10, Աբասթուվան. – Չամբարձում Թումանյանի տանը կարդում է Ս. Թումանյանի նամակը «Մշակի» խմբագրությանը (տե՛ս հոկտեմբերի 5):

ԵԼԺ 9, 338:

Սինչև հոկտեմբերի 10. – Բացիկներ Շանթի սիրած աղջկան (չեն պահպանվել):*

* Այդ մասին Շանթը գրում է. «Քու գրած վերջին քարտը ստացել է զնչուհիս ու պահել է իրեն: Արդեն այդ քարտը նրան շատ էր դուր եկած: Դուն ինձի հատ մը ալ ես դրկած, կը հիշե՞ս: Նամակ չանցներ, որ քու մասին չի հիշե: Դուն հիմա անոր ալ այնքան սիրելի ես, որքան և ինձի»:

ՌԻՅ 4, 367:

Հոկտեմբերի 10. – Շանթի նամակը թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է, որ Թիֆլիսում բնակություն է հաստատել թումանյանների բնակարանում: Աշխատանք է փնտրում: Գոհ է եվրոպայում անցկացրած տարիներից: Սիրահարված է: Հայտնում է Շիրվանզադեի «Ունե՞ր իրավունք» դրամայի ներկայացման մասին, որին «Մշակը» քննադատաբար էր արձագանքել:*

* Իշխանուհի Մ. Թումանյանի վկայությամբ՝ Շիրվանզադեի այդ դրաման չի հավանել նաև Հովհ. Թումանյանը (ԹԺՀ, 471), թեև «Վերնատանը» քննարկելու ժամանակ իր կարծիքը չի հայտնել:

ՈՒՀ 4, 366 - 367:

Հոկտեմբերի 10, Թիֆլիս. – Մ. Թումանյանի տանը տեղի է ունենում հերթական «չորեքշաբթին»*

Մասնակցում են Փիլ. Վարդազարյանը, Ա. Ջարգարյանը և Լ. Շանթը: Որոշում են թումանյանի նոր ժողովածուի հրատարակության պայմանները և հանձնարարում Շանթին այդ մասին տեղեկացնել բանաստեղծին:

* ժողովները կոչվել են և՛ «չորեքշաբթի», և՛ «հինգշաբթի»:

ՈՒՀ 4, 367-368:

Հոկտեմբերի 10. – Օ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Թիֆլիսից:

Անհանգստություն է հայտնում ամուսնու՝ իր կարծիքով ոչ բավարար սննդի կապակցությամբ:

ԹԸԱ, 12:

Մինչև հոկտեմբերի 11-ը, Արասթուման. – Ստանում է «Մուրճի» թիվ 9-ը: Փիլ. Վարդազարյանին գրում է. «Ստացա «Մուրճը» և բոլորը կարդացի հենց ստանալու իրիկունը. հայերեն կարդալու իսկի բան չկա, իսկ կարդալու ախորժակս էլ բացվել է սաստիկ, բայց հայերեն»:

ԵԼԺ 9, 330, 624:

Մինչև հոկտեմբերի 11-ը, Արասթուման. – Ստանում է Աքելի (Առաքել Դերվիշ) նամակը Մոսկվայից:

Խնդրում է բանաստեղծի լուսանկարը, կենսագրությունը և ստեղծագործություններից՝ «Современные армянские поэты» ժողովածուի** համար: Թումանյանն ուղարկում է «կենսագրա-

կան մի երկու տեղեկություն և երեք ոտանավոր, թաժա, այստեղ գրած»:

* ժողովածուն լույս է տեսել 1903 թ. Մոսկվայում, Առաքել Դերվիշի և Լև Ունանեցի խմբագրությամբ: Երեք ոտանավորներից տպագրվում են երկուսը՝ «Հայոց վիշտը» և «Մեր ուխտը»՝ համապատասխանաբար «Армянское горе безбрежное море» և «Песня армян» խորագրերով:

ԵԼԺ 9, 330, 624:

Մինչև հոկտեմբերի 11-ը, Արասթուման. – Պատասխանում է Վ. Խանդամիրյանի հոկտեմբերի 6-ի բացիկին (չի պահպանվել):

Այդ մասին կնոջը տեղեկացնում է. «Օրիորդ Վարյայից ստացա մի քանի տող. բարեհաճել էր վերջապես երջանկացնել այդքանով: Լավ: Ես էլ պատասխանը իրենի կիսի չափ գրեցի»:

ԵԼԺ 9, 333, 626:

Հոկտեմբերի 11. – Նամակ Շուշան Վարդազարյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 330:

Հոկտեմբերի 11, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Ա. Ջարգարյանին:

Պատմում է առողջարանային իր առօրյայի մասին: Տեղեկացնում է, որ բժշկի թույլտվությամբ, երբեմն էլ հակառակ դրա, «քիչ-քիչ պարապում է»: Ավարտել է «Սասունցի Դավիթը»: «Բայց հիմա էլ սկսել են այդ չհավանել. իզուր տեղը սկզբից մտածեցի երեխաների ու ժողովրդի ընթերցանությանը հարմարեցնեմ: Ձևն էլ չի դյուր գալիս. վերջն ուրիշ տեսակ են անում»:

Հայտնում է Ախալցխա՝ «ատամնաբույժի մոտ», գնալու մտադրությունը: Գրում է իր վերանորոգված բնակարանի, հատկապես «կաբինետի» մասին, որտեղ հետագայում տեղի էին ունենում Վերնատան պարապմունքները: «Մտքումս կա, որ էստեղից վերադառնամ, մի ժամանակից հետո գնամ մեր գավառը: Այստեղ շատ է լավ, բայց հայրենիքի բնությունն ու կյանքը ուրիշ լազաթ ունի, վաղուց է չեմ եղել ձմեռն այն կողմերում: Գրեթե մանկուց»:

ԵԼԺ 9, 331-332:

Հոկտեմբերի 11, առավոտ, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Պատասխանն է վերջինիս՝ հոկտեմբերի 5-ի նամակի, որն էլ իր հերթին պատասխանն է Թումանյանի՝ հոկտեմբերի 2-ի նամակի:

Բանաստեղծը հիշեցում է ընկերոջը այդ նամակի բովանդակությունը. «Դու գրել էիր, թե այդտեղ մնա ամբողջ ծմեռն (ու գարունը), ես էլ, խոսելով իմիջիայլոց այն մասին, թե ինչպես վատ է, երբ եղանակները խառնվում են, կարծեմ, այդ մասին գրեցի այս նախադասությունը. աստված ինձ համբերություն տա, քեզ՝ խիղճ, որ չգրես, թե ամբողջ ծմեռը կաց»: Այս վերջին նախադասության մեջ Վարդապարյանը իր «խղճի դեմ հայիռյանք» է գտել, և նա նեղացած նամակ է գրել բանաստեղծին: Թումանյանն իր նամակում պարզում է թյուրիմացությունը: Պատասխանում է նաև ընկերոջ այն հանդիմանությանը, թե ինքը, իբր, կարոտում է քաղաքի «տիղմին ու ճահճին»: «Նախ դու պետք է հասկանայիր, որ այդ գրում է մի մարդ, որ ունի այդտեղ ընտանիք ու երեխաներ, և ամենից առաջ պատճառը կարող է լինել նրանց հոգսն ու կարոտը, եթե կարոտի խնդիր կա»: Եվ հետո՝ «... քաղաքում, եթե ես պտտվում եմ այդ տիղմի մեջ, նրա համար, որ ավելի առնչություն ունի իմ կյանքը այդ տիղմի հետ, և այդ տիղմն անպայման մաքուր ու գերազանց է մնացած մյուս տիղմերից: Ես կարծում եմ՝ դու արդեն համաձայնեցիր ինձ հետ, իսկ եթե այդպես չի, թող մեր «Հինգշաբթին» դատի ինձ ու քեզ. ես առաջուց համաձայն եմ»: Ու վերջում՝ «Մի խոսքով՝ այս բոլորը ցույց են տալիս, որ դու դրամատուրգի շնորհք ունես և չեղած տեղից կարող ես դրամա ստեղծել»:

ԵԼԺ 9, 327-330:

Հոկտեմբերի 11, ժամը 3, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Նույն օրը ստացած նամակի պատասխանն է: Գրում է, որ հոգնած է. «Այսօր գրեթե 10 նամակի պատասխան եմ տվել»:^{*} Մտահոգված է Շանթի վիճակով, որ իջևանել էր իրենց տանը. «Շանթի մասին ի՞նչ գրեմ. եթե ես այդտեղ էի եղել, իհարկե, չէի թողնիլ, որ հյուրանոցում իջներ. մոտս կբերեի և քանի ամիս

ուզում էր մնար: Բայց չգիտեմ՝ այժմ ինչպես են հարմար գտել, թե դու կարող ես այդքան երեխաների հետ հոգալ նրան ամեն բան իր ժամանակին ու կարգին՝ հասցնելու և, վերջապես, կարող ես հանկարծ փողի պակասություն ունենալ ու չկարենալ այնպես անել, ինչպես պետք է, կամ երեխաների աղմուկը տանելու՝ և արդյոք: Մի խոսքով, երկու ցավ կա ինձ համար, մեկ, որ դու պետք է այդքան տանջանքի հետ ունենաս մի հոգս, մեկ էլ որ նա կարող է դժգոհ լինել: Հարմարությունների սովոր մարդ է: Անշուշտ, Ֆիլիպը որ ասել է, կնշանակի դրա համար էլ վճարելու են: Ինքը դեռ տեղ չունի: Համենայն դեպս, եթե երկուսդ էլ գոհ լինեք, ես ձեզանից ավելի ուրախ կլինեմ: Եթե դու կարողանաս հարմարեցնել՝ ճաշ է, ընթրիք և այլն, և այլն, որ առանձին դժվարություն չունենաս՝ ինչ կա որ, գրեթե եղբայրս է և այդքան ազնիվ ու կրթված մի մարդ, ուրիշ ոչ մի ծանրություն չի կարող լինել»:

Հայտնում է, որ Արասթումանում մնալու է «մինչև նոյեմբերի 7-ը, կամ՝ ամենաշատը՝ վերջը»:

* Գրել է Փիլ. Վարդապարյանին, Շանթին, Մ. Թումանյանին, Վ. Խանդամիրյանին, Ա. Զարգարյանին, Առաքել Դերվիշին (ԵԼԺ 9, 327-337):

ԵԼԺ 9, 332-333:

Հոկտեմբերի <12>. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

«Բանաստեղծությունների» 3-րդ հատորի հրատարակչական խմբի հանձնարարությամբ՝ առաջարկություններ ու պայմաններ է ներկայացնում բանաստեղծին՝ կապված հատորի հրատարակության հետ (տե՛ս հոկտեմբերի 10):

Այդ պայմաններից երկուսը. «Առաջին. ամսիջապես կազմեմ մի ցուցակ զանազան քաղաքներում ապրող քու ծանոթներիդ ու բարեկամներիդ, որոնց վրա անպայման կարող ես վստահիլ, որպեսզի և այդ անձերուն ուղարկվի բաժանորդագրության բլանկները՝ ծախելու, իհարկե, հրատարակող խումբի կողմեն ու այդ խումբի անունով: Եվ այդ կազմած ցուցակդ ուղարկեմ ձեզի որքան կրնաս շուտ: Այսպես վճռեց ժողովը: Քեզ կը մնա հնազանդիլ:

Երկրորդ. ամենից առաջ ընտրե ու սրբագրե քու արդեն

տալված բանաստեղծությունների, որպեսզի երբ վերջը դու ջու անտիպ կտորներու վրա գբաղված կլինես, ժողովը այս միջոցին քրտինք թափե ջու դուրս նետածների նորեն ներս առնելու:

<...> Գրե նաև մոտավորապես քանի երես (ջու տալված բանաստեղծություններուդ երեսներովը) կը լինի ջո անտիպ գրածների, կամ «Անուշի» պես բոլորովին փոխածների: Գիտե՞ս, որ արծակների ալ ժողովելու ես, միայն գրական կտորները, իհարկե»:

ՈՒՅ 4, 367-368:

<Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ>. – «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի խմբագրության նամակը թումանյանին՝ Պետերբուրգից:

Խնդրում են բանաստեղծություն ուղարկել:
ԵԼԺ 9, 342, 630:

<Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ>, Արասթուման. – Նամակ Պետերբուրգ՝ «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի խմբագրությանը: Տպագրության է ուղարկում «Պանդուխտ եմ, քույրիկ, մանուկ օրերից...» բանաստեղծությունը:
ԵԼԺ 9, 342, 630:

<Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ>, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ «Մուրճի» խմբագրությանը:
Տպագրության է ուղարկում «Հոգեհան» լեզենդը՝ խմբագրության խնդրանքով:
ԵԼԺ 9, 342, 630:

Հոկտեմբերի <13, 14>, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Գրում է Արասթումանում մնալու և «Բանաստեղծությունների» 3-րդ հատորի հրատարակության վերաբերյալ իր ստացած առաջարկությունների մասին. «Նրանք* առաջարկում են, կարգադրել են, որ ես ամբողջ ծնեռն ու գարունը, և մինչև անգամ մի տարի մնամ այստեղ, իսկ ես ունեմ իմ որոշումը, և պրծավ գնաց: Նրանք** ուզում են այժմ իմ գիրքը շքեղ հրատարակեն, մտցնեն՝ որքան կարելի է շատ ոտանավոր, նշանակեն՝ որքան կարելի է թանկ գին, և այժմ ևեթ սկսեն հարուստ շրջաններում

բաժանորդագրություն, խոստանում են հինգ հազար ռուբլի, իսկ ես ուրիշ տեսակ եմ մտածում և կանեմ այնպես, ինչպես ես եմ ուզում: Կան բաներ, այո՛, որտեղ կարելի է խաթր անել, մանավանդ, այնպիսի մարդկանց, որոնք այդքան բարյացակամ են և այդքան լավություն են անում. բայց մարդ պետք է իրեն ճորտ չզգա և ասի ու անի այն, ինչ որ ինքն է համարում լավ»:

Շանթի՛ իրենց տանը մնալու առիթով մտահոգություն է հայտնում, թե գուցե կինը ճնշվել և ստիպված է համաձայնել: Դժգոհում է ընկերների այդպիսի վճռից. «Դու, ինչպես գրում ես, ճնշվել ես ու ճարահատված համաձայնել, մտածելով, թե իրավունք չունես ջո տանը ջո կամքով ապրելու. իսկ նրանք ոչինչ չեն մտածել, թե անհարմար կամ ծանր կարող է լինել: Այս ինձ մի քիչ զարմացնում է: Միակ հարմարությունը, որ նրանց իրավունք պետք է տար, այդ այն է, թե շատ սենյակներ ունեք, ինչպես և եղել է իսկապես: Բայց մնացածը, որ բոլորը անհարմարություն է, ինչպես ոչ մեկը նրանք չեն մտածել: Գուցե նրանք կարծում են, թե դրանով մեզ օգուտ են: Այդ արդեն ծիծաղելի կլինեն: Իսկ եթե Շանթին են օգնում. նրա համար պետք է որ մին լինի, և մինչև անգամ մի ուրիշ տեղ գուցե ավելի գերադասելի»:

Վերահաստատում է իր այն միտքը (տե՛ս հոկտեմբերի 11, ժամը 3), որ եթե ինքը Թիֆլիսում լիներ, ոչ մի վայրկյան չէր տատանվի Շանթին իրենց տանը հյուրընկալելու, որքան ժամանակով էլ որ լիներ և ինչ նեղություն էլ ստիպված լինեին հանձն առնել. «Եթե ես Թիֆլիս լինեի, Շանթին, պարզ բան է, չէի թողնիլ հյուրանոցն իջներ, կբերեի ինձ մոտ և կմնար մինչև գործ էլ գտներ, տեղ էլ: Ես կանեի ու կտանեի ամեն դժվարություն, թեկուզ և այդ լիներ, քեզ նեղություն, թե ինձ – ընկերասիրությունից կուզես ասա, թե քաղաքավարությունից, թե բարեսրտությունից, մի խոսքով ես այդ կանեի: Բայց նրանք չպետք է անեին: Ճիշտ այնպես, ինչպես, օրինակի համար, ես, պատահում է, գրպանիս եղած չեղածը մսխում եմ մեկի համար կամ տալիս եմ մեկին, կամ թե պարտք եմ անում ու այնպես տալիս – այդ իմ բանն է, բայց մի ուրիշը չի կարող և չպետք է ինձ ասի, թե գրպանումդ ինչ որ ունիս տուր մեկին կամ պարտք

արա ու հյուրասիրիկ այսընչին: Վերջ ի վերջո, այնպես պետք է չլինի, որ մարդ ասի, թե *մենք մեր կամքով չենք ապրում* :

Այս ինձ սաստիկ վիշտ պատճառեց: Կամքն ու ապրելն այնպիսի բաներ են, որ եթե դրանք ենթարկված են ուրիշին, էլ կյանքը ոչ մի խորհուրդ ու քաղցրություն չունի, այլ տանջանք է, լուծ է մի տեսակ ու մարդը՝ ճորտ»:

Նորից հիշեցնում է, որ Շանթը պատահական մարդ չէ, «իմ ազնիվ ընկերն է»: Միաժամանակ ազատություն է տալիս կնոջը. «Միանգամայն վարվիր այնպես, ինչպես դու ես ուզում, համարելով, որ անկախ ես ու ազատ...»:

* Նկատի ունի Փիլ. Վարդազարյանին և Մ. Թումանյանին:

** Նկատի ունի 3-րդ հատորի հրատարակչական խումբը: ԵԼԺ 9, 334-336:

Յոկտեմբերի 14, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Մ. Թումանյանին:

Գրում է հոկտեմբերի 5-ի (թիվ 220) «Մշակուն» իշխանուհու՝ ազգային թատրոն հիմնելու առաջարկության (տե՛ս սեպտեմբերի 30) մասին. «Մենք, այսինքն ամբողջ Աբասթումանը, համաձայն է: Շատ լավ առաջարկություն է: Ավելի նպատակահարմար ու օգտաբեր, քան մեծ թատրոնը, որի հասարակությունը, ինչ կուզեք ասեք, չունենք: Դուք մեղադրում եք բուրժուազիան: Այդպիսի գործերում չպետք է մեղադրել: Գեղարվեստը այնպիսի բան է, որ ազգասիրության խոսք չի կարող տանել, և վա՛յ նրան, եթե ընկավ ազգասիրության դուռը: Երբ որ գեղեցիկ կլինի, լավ կլինի, այն ժամանակ կգան»: Յորդորում է իշխանուհուն, որ իր հիմնադրած սիրողական թատրոնի առաջին անհաջողություններից չհուսահատվի:

Տեղեկացնում է, որ իր տպագրվելիք ժողովածուի վերաբերյալ հրատարակչական խմբի առաջարկներին (տե՛ս հոկտեմբերի 10) արդեն պատասխանել է Շանթին. «Պատասխանս ու կարծիքս կհայտնի ժողովին»:

Ապագա ժողովածուի ծավալի մասին գրում է. «Իմ ընտրությանը կլինի մոտ 200 երես»:

ԵԼԺ 9, 338 – 239:

Յոկտեմբերի 14. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Տեղեկացնում է, որ Շանթին «нахлебник» է նշանակել Թումանյանների տանը:

ԳԱԹ ԹՖ, 2054 (1023):

Յոկտեմբերի <16-18>. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Յորդորում է բանաստեղծին իր ժողովածուն կազմելիս չափազանց բծախնդիր չլինել:

Ուղարկում է «Բանաստեղծությունների» 3-րդ հատորի հրատարակչական խմբի դիմումը ապագա բաժանորդներին. «Յարգելի պարոն, մենք, Յ. Թ. գրական տաղանդը գնահատողներս, ձեռնարկում ենք նրա տպված և դեռ անտիպ երկերի հրատարակությունը, հուսալով, որ արդյունքովը կարողանանք մի քիչ ապահովել ահագին ընտանիքով ծանրաբեռնված, այժմ էլ հիվանդ մեր համակրելի գրագետի ապրուստը և միջոց տալու նրան, որ կարողանա արտադրել ու աշխատել իր կյանքի այս ամենահասուն տարիքի մեջ: Թե՛ մեր հայ գրականության, թե՛ բանաստեղծի և թե՛ նրա համակրողների տեսակետից մենք շատ ավելի խելացի ու բնական ենք համարում այժմ, նրա ուժերի հասուն ու թարմ ժամանակը, նրան ձեռք տալու ու միջոց, քան սպասելու, որ նրա ծերության ու այլևս արտադրելու ապարդյուն օրերի մեջ միայն հասարակությունը գա իր համակրանքն ու օգնությունը մատուցանելու:

Մենք մեր այս ձեռնարկին մեջ մեր հույսը, բնականաբար, դրած ենք Յ. Թ. հարգողների ու բարեկամների վրա, որոնց թիվը, ինչպես մենք վստահ ենք, փոքր չէ: Ձեզ էլ, հարգելի պարոն, համարելով մեր բանաստեղծով մասնավորապես հետաքրքրվողների թիվում, ահա դիմում ենք Ձեզ, խնդրելով՝ ամեն կերպ աշխատեք հնար եղածին չափ բաժանորդների թիվը ավելացնելու: Աչքի առաջ ունեցեք, որ «հրատարակության ի նպաստ» կարող եք նաև բացից նվերներ ընդունել: Այդ նվերները որքան խոշոր լինին և որքան շատ, այնքան մեծ կլինի, բնականաբար, և՛ հեղինակին հասանելիք զուտ արդյունքը: Այս երկրորդ կետը մենք մասնավորապես հանձնարարում ենք ձեր

ուշադրությանը: Գիտեք անշուշտ, որ այս տեսակ դեպքերում ինչ մեծ դեր ունի մոտիկ մարդոց մասնավոր ջանքն ու տակտը և ճիշտ դրա համար է, որ մենք դիմում ենք ձեզ, վստահ լինելով, որ չեք զլանա ձեր աջակցությունը ամեն կերպ նվիրելու այս գործին, որ մենք ձեր սրտին անչափ մոտ ենք կարծում, որչափ և մեր:

Ամեն տեսակ թյուրիմացության առաջն առնելու համար ավելացնենք, որ հրատարակիչները ոչ մի դրամական շահ չունեն գործին մեջ: Հրատարակության անմիջական ծախքերից դուրս, բոլոր մնացած գումարը հեղինակի սեփականությունն է»:

Ներկայացվում է նաև հատորի բովանդակությունը և տպագրության մոտավոր ժամանակը:

ՈւՖ 4, 368-371:

Հոկտեմբերի 18, Արասթուման. – Բացիկ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Խնդրում է իրեն ուղարկել «Очерки по истории русской литературы» գիրքը: Հայտնում է նաև. «Անքնությունս շարունակվում է. 10 օրում 6 ֆունտ պակասել եմ: Բժիշկն այսօր քնի դեղ տվավ: <...> Այսուամենայնիվ լավ եմ»:

ԵԼԺ 9, 340:

Հոկտեմբերի 18, Արասթուման. – «Շխեյանների ու օր. Ջորջաձենների հետ» գնում է Արասթումանից «10 վերստ հեռու Բենարա գյուղը»:

ԵԼԺ 9, 340:

Հոկտեմբերի 18, Արասթուման. – Ստանում է կնոջ «նամակն (չի պահպանվել) ու պասիկեն» Թիֆլիսից:

ԵԼԺ 9, 340:

Հոկտեմբերի 18, Արասթուման. – Ստադրություն՝ նամակ գրելու կնոջը և Շ. Վարդազարյանին:

ԵԼԺ 9, 340, 629:

Հոկտեմբերի 20, Արասթուման. – Ճաշին լինում է Համբարձում Թումանյանի տանը՝ նրա հրավերով:

ԵԼԺ 9, 341:

Հոկտեմբերի 20, Արասթուման. – Երեկոն անցկացնում է Շխեյանների մոտ:

ԵԼԺ 9, 341:

Հոկտեմբերի 21, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Հայտնում է, որ ժամանակավոր տկարությունն ու անքնությունն անցել են: «Բժիշկը նորից քննեց, գտավ, որ թոքերս բոլորովին առողջ են, ոչ մի անքնություն չի կարող վտանգ սպառնալ»:

Նորից գրում է Շանթի՝ իրենց տանը բնակվելու մասին. «Շանթի մասին ահա թե ինչ կասեմ: Ուրախ եմ, որ այդպես աշխատում ես գոհ անել, որպես իմ լավ ընկերոջը, և, անշուշտ, այդ քեզ համար բավական չարչարանք կլինի: Նրա վճարի մասին ոչ մի խոսք չլինի քո կողմից և նայիր նրա վրա, ինչպես հյուրի վրա»:

ԵԼԺ 9, 341:

Մինչև հոկտեմբերի 23-ը. – Նամակ Լ. Շանթին (չի պահպանվել):

Պատասխանն է վերջինիս հոկտեմբերի 16-18-ին նամակի: Իր զայրույթն է հայտնում «Բանաստեղծությունների» 3-րդ հատորի բաժանորդագրության համար հրատարակչական խմբի կազմած շրջաբերական դիմումի դեմ:

ՈւՖ 4, 371-373:

Հոկտեմբերի 23, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Նորից Շանթի մասին. «Շանթին բան չասես մեր տանը – իբրև нахлебник փող վճարելու համար: Ոչ գործ ունի, ոչ էլ ձեռին փող, ինչպես երևում է: Թող իբրև հյուր լինի մեր տանը, իմ կինն էլ քիչ նեղություն քաշի, բան չկա»:

Մեկ անգամ ևս դժգոհություն է հայտնում իր «Բանաստեղծությունների» 3-րդ հատորի հրատարակության առաջարկված պայմաններից. «Գրքի տպագրության հարցով խնդրում եմ առայժմ ինձ չգբաղեցնեք: ... Տակավին մի տեսակ գազազած դրության, ալեկոծության մեջ եմ»:

Հիշեցնում է, որ այդ մասին գրել է նաև Շանթին (նամակը չի պահպանվել)։ «Ես արդեն գրել եմ Շանթին երկրորդ անգամ ժողովին հայտնելու, թե ինչու այժմ ևեթ սկսելուն հակառակ եմ: Իսկ այն դիմումը, որի պատճենը Շանթը գրել էր իր նամակում, ինձ այնքան վշտացրեց, որ ես պատրաստ էի թքել և՛ գրականության, և՛ կյանքի վրա: Դիմե՛լ հազար ու մի մարդու, գրել, թե Յ. Թումանյանը անապահով է, հիվանդ է, ընտանիք ունի, մի բան ավել ստորագրեցեք նրա բանաստեղծություններին...»:

Ուզում է, որ «մի քիչ էլ հոգու հպարտություն» տեսնեն իր մեջ. «Ի՞նչ անենք, որ բանաստեղծ լինելով, նյութական նեղության մեջ լինելով, ապավինած եմ մի քանի մարդու օգնության, մի՞թե դեռ պետք է շրջաբերականով հռչակեմ իմ խեղճությունն ու նպաստներ ժողովեմ»:

ԵԼԺ 9, 342-343:

Հոկտեմբերի 23. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Պատասխանն է բանաստեղծի այն նամակի, ուր նա իր վիրավորանքն ու վրդովմունքն է հայտնում «Բանաստեղծությունների» 3-րդ հատորի հրատարակության շուրջ ձևավորված տհաճ մթնոլորտի համար: Շանթը համոզում է ընկերոջը, որ նա չվիրավորվի: Բարեկամների միակ ցանկությունն է եղել օգնել բանաստեղծին. «Խնդիրը իր բոլոր մերկությամբ սա է: Դու տաղանդ ունիս, արտադրել կարող ես, ուրիշ «գործի» անպետք ես, այժմ էլ հիվանդ: Քեզ ապրուստ է պետք, քեզ փող է պետք, որ ընտանիքդ քիչ ապահովես, որ ապրես ինքդ, կազդուրվես վերջնականապես և կարողանաս աշխատել: Թողնել, որ ապրես ու քարշ գաս այնպես, ինչպես մինչև հիմի, այդ կնշանակե ձեռք վերցնել թե՛ քու առողջությունեդ և թե՛ քու գրական շնորհքեդ: Ուրեմն մի ելք պիտի գտնել. և քու «բարեկամները» մտածեր են ահա այդ հրատարակությունը...»:

ՈՒՀ 4, 371-372

Հոկտեմբերի 23. – Օ. Թումանյանի նամակը ամուսնուն՝ Թիֆլիսից:

Հայտնում է, որ իր նամակն էլ Շանթի նամակի հետ կուղարկեն. «... իհարկե, նրա նամակը ավելի հետաքրքիր կլինի, բոլ նյութեր կլինեն ժողովներից*»:

* Նկատի ունի «Բանաստեղծությունների» 3-րդ հատորի հրատարակչական խմբի միստերը:

ԹԸԱ, 13:

✓ *Հոկտեմբերի 27, Արասթուման.* – Նամակ Թիֆլիս՝ Լեոյին:

Հիշեցնում է, որ վերջինիս այն հարցին* (Լեոյի այդ նամակը չի պահպանվել), թե ինչ բանաստեղծներ են ազդել իր վրա, ինքը պատասխանել է, թե քանի որ քիչ է կարդացել, ծանոթ չէ նույնիսկ «ռուս նշանավոր բանաստեղծների գործերին», ապա «հանգիստ խղճով» կարող է ասել, որ ազդված չէ ոչ մեկից: Բայց այդպիսի նամակ ստանալով նաև Յուրի Վեսելովսկուց (տես՝ հոկտեմբերի 4), սկսել է հասկանալ, որ ինքը «ենթագիտակցաբար» ենթարկված է եղել շատ ազդեցությունների: Հայ բանաստեղծների ազդեցությունը կարճատև է եղել: Ավելի շատ ազդվել է ռուս և համաշխարհային գրականության մեծերից. «Ռուս բանաստեղծներից ամենից շատ ինձ վրա ազդել է Լերմոնտովը, ապա՝ Պուշկինը, և ես կարծում եմ, նրանց ազդեցությունն է եղել երևի, որ գրել եմ ես այն պոեմաները, ուր երգված են մեր լեռնական ժողովրդի կյանքը, սովորություններն ու բնությունը: Դրանցից հետո ծանոթացել ու սիրել եմ Բայրոն, Գյոթե, Շեքսպիր: Սրանք, կարծում եմ, անպայման ազդել են իմ գրվածքների վրա, բայց այնպիսի գրվածքների, որ տակավին չեն տպված, և որոնց մասին հաշիվ չեմ կարող տալ: Սակայն զգում եմ նրանց անմերժելի ազդեցությունը: Շեքսպիրը միշտ մնում է իմ ամենասիրելի բանաստեղծը: Եվ թեև դրամա չեմ գրել դեռ, բայց դրաման բանաստեղծության մեջ իմ ամենասիրած ձևն է, ու ինձ թվում է, թե դրամատուրգի կոչումն ունիմ ես: Այս պատրանք է գուցե: Շեքսպիրն է ինձ այսպես կախարդել:

Մի երկու խոսք ազդեցությունների մասին: Ես որ ասում եմ ազդված եմ, ազդեցությունները ես ոչ թե իմ գործերի, տողերի մեջ եմ նկատում, այլ որովհետև զգում եմ իմ հոգու, իմ երևակայության, իմ բարոյական ամբողջության վրա, նրա համար է, որ ասում եմ *երևի, անշուշտ, կարծեմ*, և այլն»:

* Լեոյի՝ այդ հարցով թումանյանին դիմելու առիթը «Ռուսահայոց գրականությունը» աշխատության նախապատրաստումն է եղել:
ԵԼԺ 9, 344-345, 631:

Յոկտեմբերի 27. – Ար. Զարգարյանի (Ռուստեմ) նամակը (ԳԱԹ ԹՖ, թիվ 624) թումանյանին՝ Բորժոմից*:

* Այդ նամակի մասին բանաստեղծը Մ. Թումանյանին գրում է. «Ռուստեմը Բորժոմից գրել է, որ գնամ մոտը: Պատասխանեցի, որ կգնամ (պատասխան նամակը չի պահպանվել): Նա կարծում է, որ ես միշտ այստեղ հիվանդների հետ եմ լինում: Շատ սակավ եմ պատահում: Իսկ փողոցում, եթե հանդիպում եմ, ես ինչ կարող եմ անել, շատ-շատ չկանգնել, չխոսել երկար, չզբոսնել հետները: Եվ այդպես էլ անում եմ: Ես վերջն իմացա նրանցից մի երկուսի հիվանդ լինելը:
ԵԼԺ 9, 352, 634:

Յոկտեմբերի 28, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Շարունակում է խոսակցությունը «Բանաստեղծությունների» 3-րդ հատորի հրատարակության շուրջ: Խնդրում է, որ «գրքի հրատարակության կամ, ավելի ճիշտը, բաժանորդագրության խնդիրը» միառժամանակ թողնեն: Նորից գրում է գրքի բաժանորդագրության շրջաբերականի առիթով իր հուզումների և ծանր ապրումների մասին. «... Այդ դիմումի մեջ կա մի բան, որ ուժգին քացի է տալիս իմ սրտին, որ կատաղեցնում է ինձ, որ ես անիծում եմ իմ ճակատագիրը, թե ինչու ես բանաստեղծ եղա այս աշխարհքում ու վերջիվերջո այս կամ այն ձևով դիմեմ, թե արդեն ուժից ընկել եմ երիտասարդ հասակում, միջոց չունեմ և այլն, և այլն...»:

Անուղղակիորեն երախտագիտություն է հայտնում ընկերոջը՝ նրա միջոցներով Արասթումանում մնալու և բուժվելու համար և ավելացնում. «... Մի՞թե այդքանը ես չեմ հասկանում, մի՞թե հարկավոր էր, որ ինձ հիշեցնեիր»:

Տեղեկացնում է նաև. «... Դեռ տարին չվերջացած մի հազար – հազար հինգ հարյուր տող ուտանավոր եմ գրել»*:

Հայտնում է Արասթումանում ևս մեկ ամիս մնալու մտադրությունը:

* Նկատի ունի «Ամուշ», «Սասունցի Դավիթ» պոեմների վերջնական տարբերակները, «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Հոգեհան»

լեզենդները և մի շարք բանաստեղծություններ, որ գրվել են Արասթումանում:

ԵԼԺ 9, 345 – 346:

Յոկտեմբերի 28, Արասթուման. – Ստանում է Փիլ. Վարդազարյանի հեռագիրը. «Перевел телеграфно 25, поступай как писал»:

Պատասխան նամակում թումանյանը գրում է, թե չի հասկանում՝ «как писал»-ը ինչի մասին է: Ենթադրում է, թե Վարդազարյանը մի ուրիշ նամակ էլ է գրել, որ ինքը դեռ չի ստացել:
ԵԼԺ 9, 347:

Յոկտեմբերի 28, Արասթուման. – Բացիկ կնոջը՝ Օ. Թումանյանին.

«Մյուս փոստին նամակ կգրեմ: Ես լավ եմ»:
ԵԼԺ 9, 347:

Յոկտեմբերի 30, 12 1/2. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին: Կնոջ՝ հոկտեմբերի 23-ի նամակի պատասխանն է: Գրում է, որ ինքը «կատարելապես առողջ է: Մտահոգ է ընտանեկան – կենցաղային հարցերով (վառելափայտ, կոնսիստորից ստանալիք գումար, եղբոր՝ Վահանի բանակի, մյուս եղբոր՝ Արտաշեսի Թիֆլիս տեղափոխվելու խնդիրներ և այլն): Հարցնում է, թե որդին՝ Մուշեղը, գրքեր կարդո՞ւմ է: Նեղացած է «օր. Վարդուհու» (Վ. Խանդավազյան) պահվածքից. «Ես դրա հետ գուցե կտրեմ իմ բոլոր կապերը»: Հետաքրքրվում է իրենց մոր սենյակներով՝ ցո՞ւրտ են, թե՞ տաք: Իր առանձնասենյակի մասին գրում է. «Կաբինետը լավ կլինի. բայց ես այդ կաբինետին չեմ արժանանալու, ինչպես տեսնում եմ: Անհարմար է լինելու, եթե ես այնտեղ տեղավորվեմ, Շամթը իմ նախկին սենյակում. այնպես որ կաբինետը պետք է թողնեմ նրան ու գրադարանս այնտեղից հանեմ: Այս մասին իրեն բան չասես»: Նորից հիշեցնում է. «Բավական բան եմ շինել» (տես՝ հոկտեմբերի 28):
ԵԼԺ 9, 348-349:

Յոկտեմբերի 30, Արասթուման. – Նամակ Շ. Վարդազարյանին (չի պահպանվել):
ԵԼԺ 9, 348:

Հոկտեմբերի 31. – Մ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Թիֆլիսից:

Թումանյանի՝ Շանթին ուղղած նամակից տեղեկացել է, որ բանաստեղծը շատ է վիրավորվել այն դիմումից (տե՛ս հոկտեմբերի <16-18>), որով բարեկամները դիմել էին հանրությանը՝ «Բանաստեղծությունների» երրորդ հատորի բաժանորդագրությունը կազմակերպելու համար: Ջերմ խոսքերով ուզում է սփռվել ընկերոջը. «Ես կուզեմայի Ձեզ խնամել ինչպես մի քնքուշ ծաղիկ, պահպանել թե՛ արեգակի այրող ճառագայթներից, թե՛ ծնեռվա ցրտից: Ձեր ամեն մի վիշտը արծագանք է գտնում սրտիս մեջ: Շատ անգամ խուսափել եմ խոսելու մի քանի հարցերի մասին, որովհետև չեմ ուզեցել Ձեր վերքերը նորոգել, բայց Դուք կարծում եք, որ ես չեմ զգացել ձեզ պես, չեմ համակրել Ձեր զգացմունքներին իմ սրտի խորքումը: Ինչ արած, կյանքը անողոք է, և հարվածները իրար հետևից ընկնում են մեզ վրա, վա՛յ նրան, որ զգայուն է և սրտին մոտիկ է առնում ամեն բան: <....>

Մի փոքր էլ փիլիսոփա պետք է լինել, այստեղ Դուք պետք է զոհեք Ձեր զգացմունքները ավելի բարձր գաղափարի համար: Դուք պետք է մտածեք մեր խեղճ գրականության մասին, պետք է Ձեզ վրա նայեք իբրև գործչի, իսկ հասարակական գործը մեծ զոհեր է պահանջում, այնպես չէ՞»:

ՈՒՀ 5, 289-290:

Հոկտեմբեր. – Բանաստեղծի թիֆլիսյան չորսսենյականոց բնակարանին ավելանում է ևս երկուսը:

Մեկը աշխատասենյակ էր, մյուսը՝ ընդունարան: Այս վերջինում էին անցնում Վերնատան երեկույթները:

ՆԹՀԶ, 22:

Նոյեմբերի 1. – Դուրս է գալիս Աբասումանից:

ԵԼԺ 9, 353:

Նոյեմբերի 1, գիշեր. – Հասնում է Ախալցխա:

Կնոջը գրում է. «Ախալցխա էլ գիշերը հասա ու իջա հյուրանոցում:

Ամենալավ հյուրանոցը տարան ու լավ համարը տվին, և

իրավ շքեղ էր, բայց սաստիկ ցուրտ էր, և կողքին էլ մի կին ու ահագին պատմություններ, այնպես որ քաշվեցի մի ուրիշ համար: Մյուս օրը հանդիպեցին ծանոթներս. Նալբանդյանը, որ խնձոր էր դրկել մեզ համար, ճաշին տարավ տուն, Լալայանի աներն էլ էր ու երկու օր մնացի Ախալցխա»:

ԵԼԺ 9, 354:

Նոյեմբերի 3 կամ 4, Ախալցխա. – Նամակ կնոջը՝ Օ. Թումանյանին (չի պահպանվել):

Հայտնում է բժ. Ար. Ջարգարյանի հրավերով (տե՛ս սեպտեմբերի 27) Բորժոմ գնալու մտադրության մասին:

ԵԼԺ 9, 353:

Նոյեմբերի 4. – Հասնում է Բորժոմ:

Կնոջը գրում է. «Վերջապես ճաշից հետո հասա Բորժոմ, <....> բարձրացա դեպի մեծ պալատը*»:

* Ար. Ջարգարյանը Բորժոմի թագավորական (Միխայիլ Նիկոլակիչ Ռոմանովի) ամառանոցային պալատում հսկում էր թագածառանգի առողջությունը (ԵԼԺ 9, 634):

ԵԼԺ 9, 353-354:

Նոյեմբերի 5, Բորժոմ. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին: Գրում է Աբասումանից Բորժոմ ճամփորդության մասին և թե ինչպես է բժ. Ա. Ջարգարյանը ընդունել իրեն. «Քննեց, գտավ, որ լավ եմ»:

ԵԼԺ 9, 353-354:

Նոյեմբերի 5, Բորժոմ. – Մտադրություն «ամսի վերջին» վերադառնալու Թիֆլիս:

ԵԼԺ 9, 354:

Նոյեմբերի 5, Բորժոմ. – Գրում է «Մընաս բարով, ուղտ բարեկամ...» բանաստեղծությունը*:

* Հունորով ներկայացրել է իր այցելությունը Բորժոմի պալատ, որտեղ այդ ժամանակ եղել են նաև թագավորական ընտանիքի անդամներ, որ չեն նկատել բանաստեղծին: Ուտանավորում ակնարկվում է դա:

ԵԼԺ 1, 393, 664:

Նոյեմբերի 5, Բորժոմ. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Ձավեշտական մանրամասներով պատմում է, թե ինչպես է հասել Բորժոմ, ինչպես է մտել թագավորական «պալատը», ինչպես է հանդիպել բժ. Ջարգարյանին, ինչպես են ժամանակ անցկացրել: Հաղորդում է, որ ինքը իջևանել է «Греция» հյուրանոցում: Հայտնում է, որ Ջարգարյանը վողկի է գրում: Ինքն էլ ընկերոջն է ուղարկում «Մնաս բարով, ուղտ բարեկամ» ոտանավորը:

ԵԼԺ 9, 355-357:

Նոյեմբերի 5, Բորժոմ. – Թումանյանի նամակի ազատ էջի վրա կարճ նամակ Ա. Ջարգարյանից Փիլ. Վարդապարյանին.

«Ինչպես տեսնում եք, Օհանեսը բավական լավ տրամադրությամբ է ճանապարհ ընկնում: Ես կարծում եմ, որ պալատի աղ ու հացն են այդպես ազդել, ուստի «Հինգշաբթի» գրական երեկույթը նշանակում եմ ինձ մոտ՝ պալատում: Օհանեսը կգա, քեզ էլ սպասում եմ հանդերձ Յուզիայի և Շանթի: Լեզուների կարիք կա: Սուս արեք, սկսել եմ հետաքրքրեցնել մեծերին մեր լեզվով և գրականությամբ. հենց այդ պատճառով էլ «Հինգշաբթին» այստեղ եմ ուզում սարքել: Մանրամասն Օհանեսի մասին շուտով կգրեմ:

Բարևս իշխանուհուն և մերոնց բոլորին:

Քո Ռուստեմ»:

ԵԼԺ 9, 635:

Նոյեմբերի 5. – Ս. Շահագիզի նամակը Թումանյանին՝ Մոսկվայից:

Նամակի հետ ուղարկում է «Աբովյան – Նազարյան նպաստի չեկը»: Ներողություն է խնդրում, որ նպաստը «այս տարի քիչ եղավ», որովհետև օգնության ուրիշ կարիքներ էլ կան: Խոստանում է մյուս տարի ավելացնել և միշտ ուղարկել:

Գրում է, որ չի կարող Թումանյանի տպագրվելիք ժողովածուի բաժանորդագրությունը հանձն առնել: Խորհուրդ է տալիս այդ հարցով դիմել Լազարևին: Ինքը խոստանում է գիրքը տարածել (տե՛ս նաև նոյեմբերի 23):

ԳԱԹ ԹՖ, 1834 (938):

Նոյեմբերի 5. – Բորժոմից կառքով մեկնում է Ախալցխայով Աբասուման:

ԵԼԺ 9, 356:

Նոյեմբերի 6. – Գրաքննչական կոմիտեն թույլատրում է տպագրության «Современные армянские поэты» ժողովածուն:

Այստեղ առաջին անգամ ռուսերեն լեզվով տպագրվում է Թումանյանի «Հայոց վիշտը» բանաստեղծությունը Ս. Գուլովաչևսկու թարգմանությամբ՝ «Армянское горе безбрежное море» սկզբնատողով և «С авторской рукописи» ծանոթագրությամբ:

ԵԼԺ 1, 200, 606:

Նոյեմբերի 7, Աբասուման. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է, որ Թումանյանի «վերջին զվարթ նամակը» (չի պահպանվել) ուրախացրել է իրեն. «Նու, վերջապես, մի քանի պայծառ տող գրեցիր ինձի: Քեֆդ նայե, սիրելիս, բոլորը դատարկ բաներ է, կը կարգադրվի ամեն բան իր կարգովը»: Տեղեկացնում է, որ Վերնատան առօրյան աշխուժացել է. «Ամբողջ Վերնատունը իմ գայիսունիս տակն է, մուսաներն էլ ծակերից ու ծուկերից երբեմն ներս են նայում»: Աշխատում է իր նոր դրամայի վրա (տե՛ս՝ նոյեմբերի 9): Ֆիլիպը ևս վողկի է գրում. «Ամեն չորեքշաբթի մեզ ներկայացնում է մի նոր վարիանտ և դեռ ոչնչով չի կարելի ավարտված համարել, որ հասած ենք վերջին վարիանտին»:* Հատուկ հետաքրքրությամբ են կարդում Թումանյանի նամակները. «Մեր չորեքշաբթի «նիստերին», չգիտեմ զգում ես թե ոչ, բայց միշտ ներկա ես և դուն: Ամեն մեկը բերում է քեզնից ստացած նամակները և կարդում խորին լռության մեջ, խորին երկյուղածությամբ և քիչ է մնացեր «հոտնկայս»»: Կարդում են նաև «դրսից ուղարկած դրամաները»՝ «a la Շեքսպիր, a la Իբսեն և a la ոչինչ: Ամեն բան կա մեջը ու ամեն տեսակը, միայն մեկ բան չի կա, գեթ մի քանի կոպեկի գրական արժեք»:

* Վերնատանը բարեկամական հումորով են ընդունել իրենց ընկերոջ անմեղ փառասիրությունը՝ դրամատուրգ դառնալու:

ՈՒՀ 4, 373-374:

Նոյեմբերի 8, Արասթուման. – Նամակ Թիֆլիս կնոջ՝ Օ. Թումանյանին:

Հայտնում է, որ ինքը առողջ է, բժ. Ջարգարյանն էլ հաստատել է: Բողոքում է վատացած եղանակներից: Տեղեկացնում է, որ Շանթը իրենց տանը մնալու է մինչև իր գալը: Հետաքրքրվում է, թե ինչու «Մշակ» չեն ուղարկում, մի ամսով «Նոր Դար» է գրվել, և ուղարկում են: Գրում է տարբեր կենցաղային խնդիրների մասին, ինչպես՝ թե Տյաչկինների մոտ իր սնունդը վատացել է: Մտադիր է «ամսի վերջին» գալ (տես նոյեմբերի 5):
ԵԼԺ 9, 357-358:

Մինչև նոյեմբերի 9-ը. – Բժ. Ա. Ջարգարյանի նամակը Մ. Թումանյանին:

Տեղեկացնում է, որ Տյաչկինների տանը Թումանյանի սնունդը այնքան էլ բավարար չէ:
ԹԸԱ, 12

Նոյեմբերի 9, Արասթուման. – Պատասխան է գրում Յու. Վեսելովսկու նամակին (տես՝ հոկտեմբերի 4):

Ավ. Իսահակյանին գրում է. «Վեսելովսկուն մի պատասխան եմ գրում, որ հասնելուն պես Շահագիզը թոշակս կտրելու է գրական ֆոնդից»:

* Վեսելովսկուն ուղղած նամակում Թումանյանը անմպաստ էր արտահայտվելու Շահագիզի «Լևոնի վիշտը» պոեմի մասին:
ԵԼԺ 9, 360

Նոյեմբերի 9, Արասթուման. – Մտադրություն ուտանավոր ուղարկելու «Մուրճին»:

Ավ. Իսահակյանին գրում է. «Ահարոնյանը ուտանավոր է ուզել «Մուրճի» համար: Այս օրերս մի բան եմ ուղարկելու: Եվ այն էլ լեգենդ...»:

* Նկատի ունի «Հոգեհան» լեգենդը: Տպագրվել է «Մուրճ», 1902, թիվ 12:

Նոյեմբերի 9, Արասթուման. – Նամակ Բաքու՝ Ավ. Իսահակյանին:

Գրում է իր առողջության և հոգեկան վիճակի մասին. «Առողջությանս մասին ի՞նչ ես հարցնում. մեզ նման մարդիկ

ինչպես կարող են առողջ լինել ևս ժամանակներում. էն էլ փառք սատծու, որ կենդանի ենք, «Մշակի» ջգրու...»:

<...> Ասում է (բժիշկը) հանգստացիր, բայց մի՞թե հեշտ հանգստություն կա մեզ համար: Մի երկու ամսով եկա հանգստանալու, և եթե գրեմ, թե ինչքան վրդովմունքներ ունեցա, հենց միայն կարդալուց դու կհիվանդանաս»:

Տեղեկություններ է հաղորդում իր նոր ժողովածուի տպագրության շուրջ ստեղծված իրավիճակի մասին, վերստին ակնարկում է, թե ինչքան վրդովմունք է պատճառել իրեն բաժանորդագրության «ցրվելիք գրությունը» (<տես՝ հոկտեմբերի 16-18>), իսկ իր հրաժարումը «վշտացրել է» բարեկամներին. «Սակայն ես էլ այն օրվանից եմ հանգստացել, ինչ որ համոզվել եմ, թե էլ չի լինելու այդ գրությունը»:

Լ. Շանթի մասին. «... Առևտրական բոլոր կուրսերը վերջացնելուց հետո եկել է մտել «Վերնատուն» (տես՝ հոկտեմբերի 10): Դեկտեմբերին պատրաստ կլինի նրա դրաման»:

Նիկոլ Աղբալյանի մասին. «Նիկոլի հասցեն չգիտեմ, թե գրեմ: Ինձ էլ գրել էր, թե նամակ գրիր Պետերբուրգ՝ Николаю. ես էլ գրեցի՝ С. Петербург – Николаю, но не второму, а самому последнему Николаю. Հայոց ժամումը երգում է, ռուսաց իկոններն ուսումնասիրում, ուսումնասիրությունն էլ, ինչպես գրում է, ինձ է նվիրում (տես՝ հոկտեմբերի 2, 8): Ա՛յ մի նվեր, որ իսկի չէի կարող երազել երբևիցե»:

Իր ամենօրյա կենցաղի մասին. «Այստեղ մի ռսի տան нахлебник եմ»:

Իսահակյանի «Էս ի՞նչն է ամպում զիլ թևին կուտա» բանաստեղծության մասին դիտում է՝ սիրում էր:

* Ակնարկում է օրաթերթի քննադատական վերաբերմունքը իր և Իսահակյանի ստեղծագործության նկատմամբ: Առիթը «Վտակ» (1901) ժողովածուն էր, որտեղ տպագրվել էին Թումանյանի «Պոետն ու Մուսան» պոեմը և Իսահակյանի «Սիրո երգը» արձակ բանաստեղծությունը և «Ա՛խ, մեր սիրտը...» ոտանավորը:

** Խոսքը «Եսին մարդը» դրամայի մասին է:
ԵԼԺ 9, 359-361, 636-637:

Նոյեմբերի 9, Արասթուման. – Բացիկ դատերը՝ Ն. Թումանյանին:

Դժգոհում է, որ նամակ չի գրում: Խնդրում է բարևել տեր Արսենին. «Ասա այն գրքերը ինձ շատ են հարկավոր» (տե՛ս սեպտեմբեր):

ԵԼԺ 9, 361:

Նոյեմբերի 9. – Մ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Թիֆլիսից:

Հանդիմանում է բանաստեղծին՝ Տյաչկինների տանը լավ չսնվելու (տե՛ս մինչև նոյեմբերի 9-ը) մասին իրեն տեղյակ չպահելու համար: Գրում է, որ իրենց «հինգշաբթիները» հետաքրքիր են անցնում, մանավանդ Շանթի վերադառնալուց հետո: Ափսոսում է, որ Թումանյանը չի մասնակցում: Հայտնում է իր նոր հրատարակության մասին՝ մանկական լուտո թվաբանական խնդիրներով:*

* Այս նամակի հետ իշխանուհին Թումանյանին ուղարկել է նաև դրամ՝ լրացուցիչ սնունդ հայթայթելու համար: Ինչպես երևում է Մ. Թումանյանին և Ռ. Ջարգարյանին գրած նամակներից, Բորժում բանաստեղծը Ջարգարյանին ասել է, որ Աբասթումանում Տյաչկինի տան սննդից այնքան էլ գոհ չէ: Մ. Թումանյանի նոյեմբերի 9-ի նամակը և ուղարկած դրամը արձագանք են այդ դժգոհության, որ անհանգստացրել է ընկերներին ու կնոջը (տե՛ս նոյեմբերի 10, 11):

ԳԱԹ ԹՖ, 1252 (665):

Մինչև նոյեմբերի 10-ը.– Լ. Շանթի և Փիլ. Վարդազարյանի հեռագրերը Թումանյանին:

Հետաքրքրվում են բանաստեղծի առողջական վիճակով: ԹԸԱ, 12

Մինչև նոյեմբերի 10-ը, Աբասթուման.– Հեռագիր Փիլ. Վարդազարյանին:

Տեղեկություններ է հաղորդում իր առողջական վիճակի մասին:

ԹԸԱ, 12:

Նոյեմբերի 10, Աբասթուման.– Պատասխան Փիլ. Վարդազարյանի հեռագրին:

Ներկայացնում է իր առողջական վիճակը: Տեղեկացնում է, որ Բորժումից վերադարձել է Աբասթուման:

ԹՏԹ, 1278:

Նոյեմբերի 10. – Օ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Թիֆլիսից:

Անհանգստություն է հայտնում ամուսնու առողջության և ոչ բավարար սննդի կապակցությամբ: Գրում է նաև Շանթի՝ իրենց տանն ապրելու հետ կապված դժվարությունների մասին: ԵԼԺ 9, 363. ԹԸԱ, 12-13:

Նոյեմբերի 11, Աբասթուման. – Ա. Ջարգարյանի բացիկը Թումանյանին՝ Բորժումից:

Ստահոգված է բանաստեղծի բուժման և հանգստի խնդրով: Գրում է. «... Ես էլ «докладной»-ը քո մասին գրեցի իշխանուհուն և K0, այնպես որ հինգշաբթի պետք է ստանային անպատճառ»:*

* «Докладной»-ով նամակագիրը նկատի ունի Թումանյանի ոչ բավարար սննդի մասին իշխանուհի Մ. Թումանյանին և Փ. Վարդազարյանին տեղյակ պահելը:

ԳԱԹ ԹՖ, 1178 (625):

Նոյեմբերի 11. – Ա. Ջարգարյանի նամակը Թումանյանին՝ Բորժումից:

Տեղեկացնում է, որ «Սասունցի Դավիթի» բովանդակությունը պատմել է մի ֆրանսուհու: Վերջացրել է իր վոդկիլը: Սպասում է Թումանյանի նամակին:

ԳԱԹ ԹՖ, 1178 (625):

Նոյեմբերի 11, Աբասթուման.– Բացիկ կնոջը՝ Օ. Թումանյանին:

«Սիրելի Օլյա, նամակիդ հետևյալ փոստով կպատասխանեմ: Ես լավ եմ. ճանապարհին մի քիչ ջարդվել, մի քիչ էլ մրսել էի, բայց անցնում է: Այստեղ սաստիկ ցրտեր են: Դեռ նամակներդ չընդհատես: Ես կիմացնեմ»:

ԵԼԺ 9, 361:

Նոյեմբերի 11, Աբասթուման. – Բացիկ որդուն՝ Մուշեղ Թումանյանին:

«Սիրելի Մուշեղ,

Նեմեցերեն մի քանի խոսքիցդ չհասկացա, թե նեմեցերեն

ինչպես ես սովորում, բայց հայերենից տեսա, որ հայերեն լավ չես իմանում»:

ԵԼԺ 9, 362:

Նոյեմբերի 11, Արասթուման. – Բացիկ դստերը՝ Աշխեն Թումանյանին:

«Աշխեն ջան,

ես էլ կաշխատեմ ֆրանսերեն սովորեմ, որ նամակիդ պատասխանը գրեմ: Բայց ինչու՞ այդքան կարճ են լինում նամակներդ. երևի ֆրանսերենդ հերիք չի անում»:

ԵԼԺ 9, 362:

Նոյեմբերի 11, Արասթուման. – Բացիկ դստերը՝ Նվարդ Թումանյանին:

«Նունիկ ջան,

Կարդացած գրքերդ պատմիր երեխաներին:

Յ. Գ. Օրիորդին* ասա՝ շնորհակալ եմ, որ հարցնում է:

* Վ. Խանդամիրյանն է:

ԵԼԺ 9, 362-363:

Նոյեմբերի 13, Արասթուման. – Ստանում է նամակ էջմիածնից՝ Գևորգյան ճեմարանից (չի պահպանվել):

Հավանաբար Արտաշես եղբորը ճեմարանում տեղավորելու մասին (տես Օ. Թումանյանին ուղղած նոյեմբերի 13-ի նամակը):

ԵԼԺ 9, 364:

Նոյեմբերի 13, Արասթուման. – Մտադրություն Թիֆլիս վերադառնալուց հետո գնալ Դսեղ:

ԵԼԺ 9, 363:

Նոյեմբերի 13, Արասթուման. – Նամակ Թիֆլիս կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է Տյաչկինների տանը իր ստացած սննդի, տանտիրոջ ծանր բնավորության, Շանթի՝ իրենց տանն ապրելու նպատակահարմարության մասին: Հարցնում է մոր, եղբոր՝ Վահանի մասին: Տեղեկացնում է, որ իշխանուհուց նամակ ու փող է ստացել (տես նոյեմբերի 9): Ֆիլիպն էլ ուղարկել է «Մուրճն» ու «Լուսնան»: Հարություն Թումանյանի «Հազարան

բլբուլ» դրամատիկական պոեմի («Լուսնա», 1902, թիվ 5-6) մասին. « «Հազարան բլբուլը» ես վաղուց գիտեի: Դե նա լսել էր, որ ես գրում եմ, նրա համար էր գրել, մինչև անգամ Բալասյանին դրկել էր մոտս, որ նա գա, կարդալ տա ու գնա իրեն պատմի, թե ինչպես եմ գրում, որ օգտվի: Դրանք դատարկ բաներ են՝ մասխարություններ են, ինձ համար ոչ մի նշանակություն չունեցող»:

ԵԼԺ 9, 363-364, 639:

Նոյեմբերի 13, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Նորից Հար. Թումանյանի «Հազարան բլբուլի» մասին: Պարզվում է, որ այս վերջինը իմացել է, որ Հովհ. Թումանյանն էլ է գրում նույն թեմայով: Մարդ է ուղարկում (Գ. Բալասյան), որ խորամանկությամբ իմանա, թե նա ինչպես է գրում: Ինքն էլ արագ-արագ ավարտում է իր գործը և ներկայացնում «Լուսնային»։ «Իմացա, որ Հովհ. Թումանյանը գրում է՝ ես էլ գրեցի, առաջը կտրեցի, շուտ արեք տպեցեք»: Բանաստեղծին այս ամենի մասին պատմել են Մուրացանը և նույն Գ. Բալասյանը: Ամփոփելով իր խոսքը՝ բանաստեղծը գրում է. «Միմիայն կարելի է զգվել, ինչպես իրենցից, այնպես էլ իրենց գրվածքից: Նա կարծում է գաղտնիքը նյութի մեջն է և թշվառականը իսկի բան չի հասկացել ու դուրս է տվել տակից գլխից: Այդ դրանց խելքի բանը չի»:

Տեղեկացնում է Յու. Վեսելովսկու նամակի (տես հոկտեմբերի 4) և իր պատասխանի մասին. «Պատասխանս գնաց թե չէ՝ Շահագիզն անպատճառ կկտրի այն նպաստը, որ ստանում եմ գրական ֆոնդից (տես նաև նոյեմբերի 9, Ավ. Իսահակյանին ուղղած նամակը): Բայց թեկուզ գրական ֆոնդն էլ քանդվի, ճշմարիտն այն է, ինչ որ գրում եմ»:

Կատակով հիշում է Ռուստեմի և Փիլ. Վարդապարյանի վողկիլների մասին:

Հետաքրքրվում է, թե ինչու Շուշանն ու Մարուսյան նամակ չեն գրում:

ԵԼԺ 9, 354-365:

Նոյեմբերի 13, Աբասթուման. – Նամակ Մ. Թումանյանին:

Տեղեկացնում է, որ ստացել է իշխանուհու նոյեմբերի 9-ի նամակը և դրանը: Գրում է, որ Տյաչկինների տանը իր ստացած համեստ սննդի համար այդքան շատ անհանգստանալու կարիք չկա. «Աբասթումանում՝ այս օդի ու ջրի մեջ, կարելի է ոչինչ չուտել ու առողջանալ»:

Իր ուրախությունն է հայտնում դերասանների սիրողական խմբի (տե՛ս սեպտեմբերի 28, 30, հոկտեմբերի 5) հաջողությունների համար. «Այնքան դերասանական խմբի անհաջողություններով չեմ տխրում, որքան ուրախանում եմ սիրողների հաջողություններով: Սաստիկ հետաքրքրվում եմ և ուզում եմ տեսնել դրանց խաղերը: Թե դրանցից շնորհքներ են դուրս գալու և բեմի վրա մնալու, կասկած չունեմ: Ձեզանից հիշատակ կմնան թատրոնին»:

Շնորհավորում է իշխանուհու հրատարակած «թվաբանական լոտոն» և հաջողություն է ցանկանում նրա ջանքերով պատրաստվող «ղեկադանս պարահանդեսին» (տեղի է ունեցել դեկտեմբերի 28-ին):

ԵԼԺ 9, 366-367, 640:

Նոյեմբերի 13, իրիկնապահ, Աբասթուման. – Նամակ Բորժոմ՝ Ար. Ջարգարյանին:

Պատասխանն է Ա. Ջարգարյանի՝ նոյեմբերի 11-ի բացիկի: Գրում է Բորժոմից ժամանող ինչ-որ ֆրանսուհու՝ Ջարգարյանի խնդրանքով Աբասթումանում տեղավորելու մասին: Հետաքրքրվում է Ա. Ջարգարյանի և Փիլ. Վարդազարյանի վոդկիլներով: Տեղեկացնում է, որ ստացել է իշխանուհու նամակը «դրամով և հանդիմանություններով հանդերձ» (տե՛ս նոյեմբերի 9):

ԵԼԺ 9, 367-368, 640-641:

Նոյեմբերի 15, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս կնոջը՝ Օ. Թումանյանին:

Ցավում է, որ բժիշկ Ռուստեմի անզգույշ մի տեղեկությունը՝ իր վատ սնվելու մասին, այդքան աղմուկի պատճառ դարձավ. «Տնաշենը աշխարհը թնդացրեց»:

Հետաքրքրվում է Վ. Խանդամիրյանի անհասկանալի պահվածքով. «Ես կարծում եմ այդտեղ մի բան կա, կտեսնես, որ կլինի»:

Կատակով գրում է. «Մի՞թե դու կարծում ես՝ Ռուստեմը լավ մարդ է: Ա՛յ, գրել է, հրեն պալատից մի ֆրանսուհի աղջիկ է դրկում մոտս (տե՛ս նոյեմբերի 13, իրիկնապահ) – տեսնեմ հիմի ինչ կասես: Իհարկե, այն ժամանակ մի քանի ամիս էլ կուշանամ: Այնուհետև դու էլ մնաս բարով քո երեխաներով – իմ сямпа-тия-ն էլ իրեն նագերով»:

Տեղեկացնում է. «Վերջին աղմուկներից հետո, թե հիվանդների տունը չգնամ, շատ քչերի մոտ եմ լինում»: Փոստում ծանրոց է ստացվել Туманянцу. չգիտի ինքն է, թե իր ծանոթ Թումանյանները. «Էգուց պետք է գնանք ստուգելու»:

Տեղեկություն է ուզում նաևի և եղբոր՝ Վահանի գինվորագրության մասին:

ԵԼԺ 9, 368-370:

Նոյեմբերի 15, Աբասթուման. – Նամակ Ար. Ջարգարյանին:

Տեղեկացնում է նրա ուղարկած ֆրանսուհուն Աբասթումանում տեղավորելու պայմանների մասին: Դժգոհում է բժիշկ ընկերոջ հանած աղմուկից՝ իր վատ սնվելու մասին. «Տո՛, ինչ ես իրար գլխով տվել. շարունակ իրար ետևից նամակներ են գլխիս թափում, թքում-մրում, թե ընչի չեմ ասել, որ ինձ վատ են կերակրում»: Տհաճությամբ է խմում ձկան յուղը. «Ես լավ եմ, ամա էս անտեր ձկան յուղը, որ ասիր խմեմ, ամեն խմելով քեզ հայիոյում եմ»:

ԵԼԺ 9, 370-371:

Նոյեմբերի 18, Աբասթուման. – Բացիկ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին.

«Ստացել եմ փողը, յափնջին ու չուվյակները: Ես լավ եմ: Փակ նամակը հետո»:

ԵԼԺ 9, 371:

Մինչև նոյեմբերի 20-ը. – Ա. Ջարգարյանի նամակը Թումանյանին՝ Բորժոմից (չի պահպանվել):

Հայտնում է, որ վոդկիլը ավարտել է*:

* Թումանյանը սովորաբար հումորով է խոսում Ջարգարյանի՝ վոդկիլներ գրելու թուլության մասին:

ԵԼԺ 9, 372:

Նոյեմբերի 20, Աբասթուման. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Հայտնում է, որ Թումանյանից նամակ է ստացել ամսի 3-ին (չի պահպանվել) և երկու պատասխան արդեն գրել է՝ ամսի 4-ին և 8-ին (չեն պահպանվել): Տեղեկություններ է հաղորդում Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Թառայանցի մասին: Գրում է նաև իր գիտական - բանասիրական ծրագրերի մասին, որոնց իրականացման համար կպահանջվի «7-10 տարի»:

Հիշեցնում է, որ «Դերենիկի 40 ռ. մասին» (տե՛ս <հուլիս>) բացատրություն է գրել:

«Մի ոտանավոր էի գրել, Աբասթուման որ հասներ նամակս, միտք կունենար, հիմի չունի: Բայց արտագրում եմ՝ ձեզ գրկած չլինելու համար մի բավականությունից.

Ու երբ հավաքվեք Աբասթումանում,
Դուք չմոռանաք, որ այստեղ մենակ
Խեղճ վերնականը տխրում է, տրտմում,
Որպես բնիցը հեռու մի թռչուն»:

Վերջում ջերմ բարևներ Նահապետին և Շանթին:

ՈՒԳ 4, 365-366:

Նոյեմբերի 20, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Գրում է, որ նրա ուղարկած դրամի շնորհիվ իր սննդի վիճակը բարելավվել է: Դժգոհում է վատացած եղանակներից. «Այստեղ ցեխ, ցուրտ ու ծյուն է, Աբասթումանը հանկարծ կորցրեց իր բոլոր հրապուրանքները»: Պատմում է Տյաչկինների տանը իր շուրջ ստեղծված զավեշտական իրադրության մասին: Բայց ես քեզ ծիծաղն ասեմ: Հայտնվեց, որ իմ Тячкин-ը, իմանում ես, լավ կարդա, իմ սիրելի Тячкин-ը կասկածում է իմ և իր կնոջ վրա: <....> Ես ծիծաղում եմ, տիկինը զարմանում է, իսկ Իվան Օսիպովիչը լուրջ Օթելլո է խաղում»:

Հայտնում է. «Մի երկու շաբաթից կգամ, առաջիկա ամսի 1-ին, 2-ին դուրս կգամ»:

ԵԼԺ 9, 371-372:

Նոյեմբերի 20, Աբասթուման. – Բացիկ Թիֆլիս կնոջը՝ Օ. Թումանյանին.

«Քեզ մյուս փոստին նամակ կգրեմ: Ամսի մեկին կամ երկուսին դուրս կգամ: Ես լավ եմ»:

ԵԼԺ 9, 373:

Մինչև նոյեմբերի 22-ը. – Ա. Ջարգարյանի կնոջ՝ Ժոզեֆինայի (Յուզիա) նամակը Թումանյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 373:

Նոյեմբերի 22, Աբասթուման. – Պատասխան նամակ Բորժոմ՝ Ժ. Ջարգարյանին (չի պահպանվել):

Ժոզեֆինայից ստացած նախորդ նամակի պատասխանն է:

ԵԼԺ 9, 373:

Նոյեմբերի 22, Աբասթուման. – Նամակ Թիֆլիս կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է տուն վերադառնալու իր անհամբերության մասին. «Ջարմանալի է. երեք ամիս է գրեթե, այնպես չէի շտապում, ինչպես այս մի քանի օրը»: Շարունակում է նոյեմբերի 15-ի նամակի կատակը. «Ռուստեմն այսօր պետք է Թիֆլիս գար: Մի՛ վախենար, ոչ մի ֆրանսուհի չի ուղարկել, այնպես որ չփախչես...»: Վ. Խանդամիրյանի մասին. «Իսկ իմ սիմպատիան մազալու մարդ դուրս եկավ: Բայց և այնպես, ավելի լավ է այդպես տարօրինակ լինել, քան թե ուրիշ տեսակ: <....> Թեև աշխատում եմ արդարացնել, բայց ի՞նչ խոսք, որ անպիտան է»:

Գրում է վատ եղանակների մասին: Մանրամասնորեն նկարագրում է իր սենյակը:

ԵԼԺ 9, 373-374:

Նոյեմբերի 20. – Մ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Թիֆլիսից:

Հայտնում է իր կազմակերպած պարահանդեսի և սիրող դերասանների խմբի հաջողության մասին (տե՛ս նաև նոյեմբերի 13): Տեղեկացնում է, որ մտերմացել է Շանթի հետ և լավ կար-

ծիքի է նրա մասին: Առաջիկա շաբաթվա մեջ պիտի քննարկեն նրա պիեսը (տե՛ս նաև նոյեմբերի 9): Բայց և այնպես. «Մեր «Հինգշաբթիները» (առժամանակ «Չորեքշաբթիները») համ չունեն առանց Ձեզ»:

ԳԱԹ ԹՖ, 1253 (666):

Նոյեմբերի 23. – Ս. Շահագիզի նամակը իշխանուհի Ս. Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է, որ ինքը չի կարող մասնակցել Թումանյանի հրատարակվելիք ժողովածուի բաժանորդագրության գործին, քանի որ շատ մարդկանց հետ չի շփվում: Այդ գործի համար առաջարկում է Մինաս Բոգդանովիչ Լազարյանի թեկնածությունը: Իսկ ինքը հանձն է առնում 20 օրինակի բաժանորդագրություն:

ԳԱԹ ՄԹՖ, 633:

Նոյեմբերի 25. – Մտադրություն դեկտեմբերի 2-ին դուրս գալ Արասթումանից:

ԵԼԺ 9, 277:

Նոյեմբերի 25, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Ս. Թումանյանին:

Գոհունակությամբ նշում է թատերական տարվա, մանավանդ իշխանուհու «սիրողների խմբի» հաջողությունների (տե՛ս նաև նոյեմբերի 13) մասին: Ընդգծում է ազգային «ռեպերտուարի» անհրաժեշտությունը, համաձայն չէ Լեոյի՝ «Մշակում» հրապարակած այն կարծիքի հետ, թե առանց ազգային խաղացանկի, էլ կարող է լինել ազգային թատրոն. «Այդ տեսակ արտոլները գրոշի նշանակություն չունեն»: «Մի ժողովուրդ, որ սեփական ռեպերտուար չունի – սեփական թատրոն չունի: Մեր թատրոնը մեզ համար դեռ խորթ է, քանի որ մեր կյանքից չի խոսում»:

Շատ է ուրախացել, որ իշխանուհին Շանթին «այդքան հավանել է» (տե՛ս նոյեմբերի 20): «Երանի թե մեր Շանթից մի բան դուրս գա, և իր դրամայով չփչացնի դրամատուրգի այն հռչակը, որ մենք առանց դրամայի վաստակել ենք նրա համար»:

Պատմում է փոստատան աշխատող Սախվարելիձեի՝ սի-

րած կնոջից մերժում ստանալու պատճառով ինքնասպանության զավեշտաողբերգական փորձի մասին. «Ահա մարդն ու իր կյանքը.— տրագիկոմեդիա»:

Հետաքրքիր դիտարկումներ է անում իր տանտեր Տյաչկինի հոգեվիճակի, առհասարակ մարդկային հոգու մասին. «Սա էլ այն անհամար թշվառներից մինն է, որոնք միմիայն մի բան գիտեն, որ իրենք իզուր ապրեցին ու տանջվեցին, դատարկ բաների վրա մաշեցին կյանքները ու արդեն զգում են մահվան մոտիկությունը: Շատ հետաքրքրական բան է, երբ մարդը, թեկուզ ամենահետին, ամենաչնչին մարդը, բաց է անում իր սիրտը: Անդունդներ են սրտերը, լի՛քը – լի՛քը. ի՞նչ չէք գտնիլ այնտեղ»:

ԵԼԺ 9, 375-377:

Մինչև նոյեմբերի 27-ը.– Եղբոր՝ Վահան Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Մանգլիսից (չի պահպանվել):

Գրում է, որ «շատ լավ պոլկում են նշանակել. ամենքին այդ պոլկում չեն նշանակում. դրա շեֆը թագավորն է, և այն էլ այդ պոլկի առաջին ռոտում, որ արտոնյալ ռոտա է»:

* Բովանդակության շարադրանքը տե՛ս Օ. Թումանյանին ուղղած նոյեմբերի 27-ի նամակում:

ԵԼԺ 9, 378, 644:

Մինչև նոյեմբերի 27-ը, Արասթուման. – Նամակ Մանգլիս եղբորը՝ Վ. Թումանյանին (չի պահպանվել):

Կնոջը՝ Օ. Թումանյանին տեղեկացնում է. «Գրեցի, որ մնա. խնդիրը կքննեն, եթե ճիշտ՝ չի կարող կազատեն, թե չէ ինչ ստեր հորինել: Մանգլիսի պես տեղը... թող գնա սովորի, աշխարհք է, պետք կգա»:

ԵԼԺ 9, 378:

Նոյեմբերի 26, 27, Արասթուման. – Նամակ Մոսկվա՝ Յու. Վեսելովսկուն:

Պատասխանն է վերջինիս՝ հոկտեմբերի 4-ի նամակի (ԳԱԹ ԹՖ թիվ 2117 (1065ա)): Գրում է, որ հատկապես ստեղծագործական կյանքի սկզբում կրել է ռուս բանաստեղծների ազդեցությունը, «բայց ոչ թե իմ ոտանավորների տողերում, որովհետև

երբեք գիտությամբ հետևած ու նմանած չեն ոչ մի բանաստեղծի, այլ իմ հոգու, գրական ճաշակի ու հայացքների վրա»: Թվում է հատկապես Պուշկինի և Լերմոնտովի մի շարք հայտնի ստեղծագործություններ, որոնց մի մասը թարգմանել է հայերեն: Խոստովանում է, որ ռուս բանաստեղծները իրեն «ավելի հարազատ են թվացել», քան իր անմիջական նախորդ հայ բանաստեղծները: Պատճառն այն է, որ «ճակատագրի քմահաճույքով մեր բանաստեղծները ապրել ու երգել են խորթ ու հեռու մեր աշխարհից և նրանց երգերի մեջ չկան ո՛չ մեր բնությունը, ո՛չ մեր ժողովուրդը»: Իբրև օրինակ բերում է Շահագիզի «Լևոնի վշտից» (տե՛ս նաև նոյեմբերի 9), Պատկանյանի «Իմ երգը» բանաստեղծությունից հատվածներ:

«Մինչդեռ ռուս բանաստեղծը երգում է Կովկասի սարերը, ժողովրդի սովորություններն ու լեզուները:

Ես էլ, իբրև կովկասցի ու լեռնցի, սիրել եմ այդ երգերն ու պոեմները: Եվ թեպետ լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտը ես ունեցել եմ իմ հոգում, բայց նրանք դրդել են ինձ ու տվել պոեմայի այն ձևը, որով գրել եմ ես («Լուռեցի Սաքոն», «Մեհրի», «Մարո», «Անուշ», «Մերժված օրենք», «Ալեք» և այլն), որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմ չի եղել»:

Հիշում է նաև, որ պատանության տարիներին Կռիլովի նմանությամբ գրել է առակներ, որոնք չեն տպագրվել:

ԵԼԺ 9, 380-384, 646:

Նոյեմբերի 27, Արասթուման. – Նամակ Թիֆլիս կնոջը՝ Օ. Թումանյանին:

Տեղեկացնում է, թե չի կարող ասել, թե որ օրը կգա. «Մտնելու եմ Ախալցխա. Բորժոմ էլ գործ ունեմ: Այնպես որ, իզուր վակզալ չգաք ոչ մինդ»:

Պատմում է փոստատանն աշխատող երիտասարդի ինքնասպանության փորձի մասին՝ անհաջող սիրո հողի վրա (տե՛ս նաև նոյեմբերի 25): Օգտվելով առիթից՝ կատակում է. «Ասում եմ՝ տո հիմար, ես էլ մի սիմպատիա ունեմ»: Նամակիս չի պատասխանում. բայց ես գիժ հո չեմ, որ ինձ սպանեմ, կգնամ հազիր նրան կսպանեմ:

Այսպես էլ իրեն ասա, թող, հաշիվներ կունենա, տեսնի, գործերը կարգի դնի վերջացնի, պատրաստվի:

<....> Ափսոս իրեն չես պատմել, թե ինչպես եմ բացատրել իրեն նամակի նկարը, և ճիշտ այնպես էլ դուրս եկավ»:

Դժգոհում է ցուրտ եղանակներից. «Ջարմանալի շուտ եմ մրսում ու ջերմս բռնում է: Վերջը այս ջերմը պետք է ինձ սպանի»:

Նորից հիշեցնում է, որ իր առանձնասենյակը «պետք է Շանթին տալ, եթե մնա մեզ մոտ, իհարկե, ուրիշ կերպ անհարմար է»:

* Խոսքը դարձյալ Վարյա (Վարվառա) Խանդամիրյանի մասին է: Առհասարակ արասթումանյան ամիսների ողջ ընթացքում բանաստեղծը մի քանի անգամ գրել է նրա մասին՝ մերթ մեղացած, մերթ մերողամտորեն, մերթ ուղղակի բարկացած: Երևում է, որ այդ օրիորդը նրա թաքուն աշխարհում ինչ-որ տեղ այնուամենայնիվ ունեցել է:

ԵԼԺ 9, 378-379, 644:

Մինչև նոյեմբերի 29-ը, Արասթուման. – Հիվանդանում է ջերմով:

ԵԼԺ 9, 284:

Նոյեմբերի 29. – Նամակ Թիֆլիս կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է, որ հիվանդության պատճառով իր վերադարձը հետաձգվում է, բայց «ամսի սկզբի օրերում» Թիֆլիսում կլինի:

Հայտնում է Մոսկվայից՝ Յու. Վեսելովսկուց ստացած նամակի և իր պատասխանի մասին (տե՛ս 1902, նոյեմբերի 26, 27): Նաև որ նամակ է ստացել Շահագիզից՝ «այս տարի ֆոնդից»* իրեն «քիչ բաժին հասնելու» մասին: Համոզված է, որ եթե Վեսելովսկուն գրած նամակը շուտ հասած լիներ, «այս տարի էլ կկտրեր» (տե՛ս նաև նոյեմբերի 9):**

Մտահոգությունն նոր տանը երեխաներին հատկացված հարմարությունների մասին. «Մի՞թե կարելի է ունենալ այդքան սենյակներ և երեխաներին ամենավատ, ամենանեղ և ամենամութ սենյակում փակել»:

* Խոսքը Արվյան-Նազարյան ֆոնդի մասին է:

** Թումանյանն այդ ֆոնդից անընդմեջ օգտվել է մինչև 1907 թվականը:

ԵԼԺ 9, 385, 646-647:

Նոյեմբերի 29, Արասթուման. – Մտադրություն՝ Թիֆլիս վերադառնալիս մի գիշեր Ախալցխայում մնալու:
ԵԼԺ 9, 385:

Նոյեմբերի 29, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Լ. Շանթին (չի պահպանվել):

Անհանգստացած է, որ ընկերը իր տանը ապրելով կարող է ինչ-ինչ անհարմարություններ ունենալ: Խոստանում է վերադառնալուց հետո, սենյակների վերադասավորություն անելով, ավելի լավ հարմարություն ստեղծել նրա համար:*

* Նամակի բովանդակությունը՝ ըստ Շանթի՝ դեկտեմբերի 2-ի պատասխան նամակի:

ԵԼԺ 9, 385:

Նոյեմբեր. – Շ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից (չի պահպանվել):

Գրում է, որ ինքը «սևերես» է, որ չի այցելել բանաստեղծի կնոջը, «այս երկու օրս» կգնա:

ԵԼԺ 9, 388:

<Աշուն>, Արասթուման. – Ավարտում է «Անուշի» վերամշակումը:

ԵԼԺ 3, 29:

<Աշուն>. – Ստանում է Ֆեոդոր Մեյերի անթվակիր նամակը Պերմից:

Գրում է Ցլխրա-Օղարոյի իրենց հանդիպման, Կովկասից և Թումանյանից ստացած անմոռանալի տպավորության մասին (տե՛ս սեպտեմբերի 10, 15) և մեջբերում «Համերգ» բանաստեղծության երկրորդ քառատողը՝ Բալմոնտի թարգմանությամբ.

Как старец порой вторим глухим басом
Поющему резвому внуку
Так лес вторит шелестом плавным своим
Пучья серебристому звуку.
ԳԱԹ ԹՖ, 1729 (398լր.):

<Աշուն>, Արասթուման. – Գրում է «Փարվանա» լեգենդը և «Թմկաբերդի առումը» պոեմը:
ԵԼԺ 10, 82:

<Աշուն>, Արասթուման. – Ավարտում է «Սասունցի Դավիթ» պոեմը:
ԵԼԺ 4, 7, 521

Դեկտեմբերի 1, Արասթուման. – Համբարձում Թումանյանը հրավիրում է ճաշի:

Բանաստեղծը կնոջը գրում է. «Երեկ Համբարձում Թումանյանը եկավ ճաշի հրավիրեց: Կինն էլ լավացել է, այսինքն վեր է կացել. թույլ է: Երկուսս էլ, որ հիվանդ-հիվանդ հանդիպեցինք, շատ ծիծաղեցինք: Գրական երեկո սարքեցինք, մի քիչ զվարճացանք»:

ԵԼԺ 9, 388:

Դեկտեմբերի 2, իրիկուն, Արասթուման. – Բանաստեղծին են այցելում «մի քանի վաճառական ծանոթներ»:

ԵԼԺ 9, 388:

Դեկտեմբերի 2. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

Պատասխանն է բանաստեղծի անհայտ նամակի: Ցավում է ընկերոջ հիվանդանալու համար: Խորհուրդ է տալիս Ախալցխայում չմնալ, ուղիղ Թիֆլիս գալ: Հանգստացնում է, որ ապրելով նրա տանը՝ ինքը ոչ մի անհարմարություն չունի. «Ես քու մասին եմ միայն մտածում, վախենում եմ քեզ ու ձերոնց նեղվածք դառնա»: Բոլոր անհանգստությունները, նաև Շահագիզի հետ կապված, երկրորդական, դատարկ բաներ են. «Լիքը միայն էն է, որ քեզ կարոտել եմ, ուզում եմ գաս: <... > Շուտ արա, առողջացիր ու եկ»:

ՈՒՀ 4, 374-375:

Դեկտեմբերի 2, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Ս. Թումանյանին:

Հայտնում է, որ ջերմով հիվանդանալու պատճառով իր վերադարձը Թիֆլիս մի քանի օրով հետաձգվում է (տե՛ս նաև նոյեմբերի 29-ի նամակը Օ. Թումանյանին): Տեղեկություններ է հաղորդում Վեսելովսկու նամակի և իր պատասխանի մասին (տե՛ս <1902, նոյեմբերի 26, 27>): Գրում է, որ այդ պատասխանը կարող է առիթ դառնալ, որ Աբովյան-Նազարյան ֆոնդից իր նպաստը դադարեցնեն: Եվ ահա անակնկալ Շահազիզից ստանում է ջերմ նամակ՝ չեկի հետ (տե՛ս <նոյեմբերի 5>): Ցավում է, որ իշխանուհին ևս դիմել է Շահազիզին՝ իր գրքի բաժանորդագրությանը օժանդակելու խնդրանքով և մերժում է ստացել (տե՛ս նոյեմբերի 23). «Ճշմարիտ, ցավում եմ, երբ ամեն անգամ իմ մոտիկ բարեկամները մերժվում են ինձ համար, քան թե ես լինեի մերժված»: Հայտնում է, որ մտադիր է Շահազիզին նամակ գրել. «Երևի բացատրություններ կունենանք»:

ԵԼԺ 9, 385-387:

Դեկտեմբերի <2>, Արասթուման, ճաշից հետո ժամը 5.- Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Գրում է, որ ջերմով հիվանդացել է. մի քանի օրվա մեջ կորցրել է նախկին կազդուրված տեսքը: Վերադառնալու օրը նորից հետաձգվում է: Փոխել է վերադարձին մեկ օրով Ախալցխա մնալու մտադրությունը (տե՛ս նոյեմբերի 29):

ԵԼԺ 9, 387-388:

Դեկտեմբերի 2, Արասթուման. – Բաց նամակ Վ. Խանդավիրյանին (չի պահպանվել):*

* Այդ մասին բանաստեղծը գրում է կնոջը. «Ուրեմն, կրկին հաշտվեցիք իմ սիմպատիի հետ: Այստեղ մի վարյայի տոն կա չորսին,** այնպես որ, ես էլ մի բաց նամակով շնորհավորում եմ սրա հետ դրան – բայց մի՞թե արժե...»:

** Ռուսական ավանդական սուրբ Վարվառայի տոնը:

ԵԼԺ 9, 388, 648:

Դեկտեմբերի 4, Արասթուման. – Նամակ Մոսկվա՝ Ս. Շահազիզին:

Շնորհակալություն է հայտնում ստացած գումարի համար

(տե՛ս դեկտեմբերի <2>): Նրբանկատորեն անդրադառնում է Վեսելովսկուն գրած նամակում Շահազիզի ու Պատկանյանի մասին հայտնած իր կարծիքին: Բացատրում է, որ հանգամանքների բերումով հայ բանաստեղծները ստիպված են ապրել ու ստեղծագործել հայրենիքից հեռու՝ աստիճանաբար խորթանալով «մեր երկրին, մեր ժողովրդին, նրա սովորություններին, նրա լեզվին»: Ինքն էլ երկար ժամանակ չի եղել մանկության սիրած վայրերում. «Եվ առհասարակ ուզում եմ անցնել մեր գավառները, բայց հիվանդությունս կամ ընտանեկան հանգամանքները խանգարում են ու միշտ հետաձգում եմ»:

Ճակատագրի տարօրինակ խաղ է համարում, որ «հայոց բանաստեղծները ընկնում են հյուսիս ու Կովկասը կարոտելով՝ երգում են օտար աղջիկն ու օտար վայրերը, իսկ ռուս բանաստեղծներին բախտը հալածում է Կովկաս, և այս հալածականները երգում են Կովկասի սարերն ու ժողովուրդը»:

Իր նոր գրքի տպագրության մասին գրում է, որ ինքը, հակառակ բարեկամների հորդորներին, չի շտապում. «Մեկ՝ որ ձեռքիս գրվածքներ ունիմ, որ դեռ չեն վերջացած, երկրորդ՝ ինքնըստիմքյան այնքան մեծ բան չի լինելու, որ արժենար դիմումներ անել տպագրության համար. քանզի, նրանց հակառակ, ես չեմ ուզում վերատպել իմ երախայրիքները. պատանեկան անփորձ գործեր են, ավելի շատ պակասություններ ունին, քան արժանիքներ»:

ԵԼԺ 9, 388-390:

Դեկտեմբերի 4, Արասթուման. – Մտադրություն «մի քանի օրից հետո» վերադառնալու Թիֆլիս:

ԵԼԺ 9, 390:

Դեկտեմբերի 6, Պետերբուրգ. – Ն. Աղբալյանի նամակը Ավ. Խահակյանին:

Գրում է. «Օհանեսը գովքով էր խոսում իր նամակում (չի պահպանվել) քո վերջին ոտանավորների մասին (տե՛ս նաև նոյեմբերի 9), որ, սակայն, ես չեմ կարդացել. «Մուրճ» ձեռքս չեմ գցում»:

* Նկատի ունի «Է՛յ կանաչ ախպեր, դու բարով եկար...» («Մուրճ», 1902, փետրվար, էջ 9-10) և «Էս ի՞նչն է ամպում զիլ թևին կուտա...»

(«Մուրճ», 1902, սեպտեմբեր, էջ 27) բանաստեղծությունները:
ԳԱԹ, ԳԼՖ, թիվ 2637:

Դեկտեմբերի <10-11>. – Աբասթունյանից վերադառնում է Թիֆլիս:^{*}

^{*} Վերադարձի օրը որոշվում է մոտավորապես. միակ աղբյուրը Շահագիզին գրած դեկտեմբերի 4-ի նամակի «մի քանի օրից վերադառնալու եմ Թիֆլիս» խոսքերն են:

ԵԼԺ 9, 390:

Դեկտեմբերի 11. – Գրաքննչական կոմիտեն արգելում է «Տարազի» խմբագրության՝ թումանյանին ուղղված նամակի տպագրությունը:

Բացատրությունը հետևյալն է. «По журналу цензурного комитета 11 декабря 1902 определено: в виду отступления редакции от программы, напечатание воспретить»:

ԹՏԹ, ՓԲ, թիվ 41:

<Դեկտեմբեր՝ Աբասթունյանից վերադառնալուց հետո>, Թիֆլիս. – Ստանում է Փիլ. Վարդազարյանի նամակը:

Խնդրում է ետ ուղարկել «Վտակ» հանդեսը: Գրում է պատրաստվող ժողովածուի մասին. պետք է ուշադրություն դարձնել հանգերին: Առաջարկում է խնդրել Շանթին առաջաբան գրել թումանյանի նոր գրքի համար, «որի մեջ նա կխոսի թե առաջին հատորներիդ և թե ուրիշ տեղերում տպածներիդ մասին <....>, ապա եղած քննադատությունների մասին և այլն, և այլն, յուր կարծիքը քու մասին համառոտ կերպով <....>, թարգմանությունների մասին, թե՛ ռուսերեն, թե՛ գերմաներեն, թե՛ ֆրանսերեն (եթե կա), դրանց պակասությունների մասին և այլն»:

ԳԱԹ ԹՖ, 2099 (454):

Դեկտեմբերի 11. – Ավ. Իսահակյանի դեկտեմբերի 11-ի նամակը թումանյանին՝ Բաքվից:

Գրում է. «Մոսկվայում տպվում է մեր բանաստեղծությունների թարգմանաբար ժողովածուն. տեսնե՞ք ի՞նչ է լինելու. ես հույս չունեմ, որ հաջող բան դուրս գա. կոլորիտը, ինքնուրույնությունը չի կարող պահպանված լինել՝ մանավանդ երկուսիս գրվածքների: Գրի՛ր առողջությանդ մասին, և՛ մինչև ե՞րբ ես

մնալու այդտեղ. երևի ես կգամ Թիֆլիս. սկսե՞նք մեր ուտանավորների ժողովածուն տպել, և անցնել լուրջ բաների. մեր վրա հույսեր կան դրված. բայց մենք մի քանի ծոտի-պռտի բաներով խաբում ենք մարդկանց»:

ԱԻԵԺ, 6, 43:

<Դեկտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդազարյանին.

«Աղայան, Ահարոնյան, Լ. Սարգսյան և Կո ինձ մոտ են. քեզ ու Դավթին* էլ խնդրում են, որ շնորհ բերեք»:

^{*} Վարդազարյանի քրոջ ամուսինն է:

ԵԼԺ 9, 390:

<Դեկտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդազարյանին.

«Ֆիլիպ, Օլյան կարծում է, որ 30 ու 39 միևնույն են»:

ԵԼԺ 9, 390:

<Դեկտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Բացիկ Փիլ. Վարդազարյանին.

«Իրիկվան ծրագիրներից հետո այս գիշեր սիրուն երազներ եմ տեսել:

Ասում են՝ Մոլլա Նասր Էդդինն էլ գիշերը երազում մի մեշկ ոսկի տեսավ: Առավոտը վեր կացավ, ձեռքն ածավ, տեսավ տեղը դատարկ է... Շարունակությունը դու գիտես, թե ինչ ասավ հանգուցյալը»:^{*}

^{*} Նասր Էդդինի առակը հիշելով՝ թումանյանը հավանաբար նկատի ունի, թե կիրականացան արդյոք իր հրատարակվելիք հատորի հետ կապված հույսերը:

ԵԼԺ 9, 390-391, 649:

<Դեկտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդազարյանին.

«Կարո՞ղ ես մի 100 ռուբլի տալ մի քանի ստիպողական տալացուկների և ծախքերի համար»:

ԵԼԺ 9, 391:

<Դեկտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդազարյանին.

«Ինձ լավ չեմ զգում. էսօր տոն եմ անելու: Թե նամակներ կան գրելու*, էգուց կգրենք:

Ճաշին արի ինձ մոտ. քեզ դուրեկան բաներ ունենք: Ռուստեմին էլ ասա՝ թող գա – ճաշին»:

* Նկատի ունի բանաստեղծությունների 3-րդ հատորի հրատարակությանը վերաբերող նամակները:

ԵԼԺ 9, 391, 650:

<Դեկտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Երկտող Ա. Զարգարյանին.

«Սիրելի Ռուստեմ,
էսօր ճաշին,
խաշին, երեքին,
Ցերեկին ինձ մոտ ես.
Ֆիլիպն էլ է»:

ԵԼԺ 9, 392:

<Դեկտեմբերի երկրորդ կես>, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդազարյանին.

«Ֆիլիպ,
Կնոջս հրամանով,
Ձեր հրամանաց խոնարհ ծառան»:^{*}

* Այս կատակ երկտողով բանաստեղծը հավանաբար ինչ-որ բան է ուղարկել ընկերոջը կամ հրավիրել է ճաշի:

ԵԼԺ 9, 392, 650:

Դեկտեմբերի 26. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1902, թիվ 12, էջ 35-37) «Հոգեհան» բալլադը՝ «Լեզենդա» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 118, 557-558:

Դեկտեմբերի <26>. – Ն. Աղբալյանի՝ Նոր տարվա շնորհավորական բացիկը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Շնորհավորում է «Վերնատան» բոլոր անդամների, հատկապես Նահապետի (Ղ.Աղայան), Թումանյանի «տիկնոջ ու ճուտիկների» Ամանորը:

ՈՒՀ 5, 366-367:

✓ *Դեկտեմբերի 31, Թիֆլիս.* – Ստանուն է Լ. Շանթի Նոր տարվա շնորհավորական բացիկը՝ Անվերսից:

ԳԱԹ ԹՖ, 1853 (73):

<Դեկտեմբերի 31, վերջին իրիկուն>, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդազարյանին.

«Ֆիլիպ

Գուցե թե ինձ տալու փող ունես»:

ԵԼԺ 9, 392:

Դեկտեմբեր. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է, որ անհամբեր սպասում է բանաստեղծի վերադարձին: Կատակում է. «Ես անկեղծորեն խնդրում եմ, որ առանց քաշվելու ուղղակի մեզ մոտ շնորհ բերես: Ես մեր տանը քեզ համար հատկացնել կը տամ մի սենյակ: Կը լինես ինչպես քու սեփական տանը մեջ, բնավ դարդ մի արա»: Կես կատակ կես լուրջ զգուշացնում է, որ բանաստեղծի վերադառնալուց հետո խստորեն հսկելու են, որ հյուրերը նրան շատ չանհանգստացնեն. «Այստեղ քեզ երեք ամիս սենյակից դուրս թողնելու չեն, որ «նստես ու գրես»՝ բարեկամներիդ ասելովը, որ «սանդուղքները չելնիս ու չիջնիս»՝ բժշկի խոսքերով, որ «հոգուտ ազգի ամեն տեսակ դատարկ ժողովներով ու ծրի աշխատություններով ուժերդ չի վատնես»՝ ընդհանուրի կարծիքով»:

«Ներփակ ուղարկում է» Աղբալյանի նամակը (տե՛ս նոյնների 20):

ՈՒՀ 4, 375-376:

<Դեկտեմբերի վերջ կամ հունվար>. – Փիլ. Վարդազարյանի երկտողը Թումանյանին:

Հրավիրում է իր և Ահարոնյանի ներկայությամբ կարդալու «Սասունցի Դավիթը»:^{*}

* Պոեմը տպագրվել է «Մուրճի» 1903 թ. փետրվարից սկսած: Ահարոնյանը վարում էր ամսագրի գեղարվեստական բաժինը. թերևս այդ ընթերցանությամբ էլ որոշվելու էր տպագրության հարցը:

ԳԱԹ, ԹՖ, 2089 (454լր.):

1902. – Բժիշկը հայտնում է, որ թուճանյանը լուրջ հիվանդ է և պետք է բուժվի Աբասթունանում:

Մ. Թուճանյանը հիշում է. «Հարկավոր էին մեծ գումարներ՝ բանաստեղծի հանգիստը և բուժումը կազմակերպելու համար, հակառակ դեպքում թոքախտը սպառնում էր նրան: ... Հնարավորության սահմաններում բարեկամներից հավաքեցինք որոշ գումար, ես ձեռնարկեցի մի ներկայացում սիրողների մասնակցությամբ և ստացված արդյունքը 600 ռուբլի նույնպես հատկացրի թուճանյանի բուժմանը: Բանաստեղծը մեկնեց Աբասթունան»:

Այնուհետև Մ. Թուճանյանը դիմել է Պետերբուրգի եկեղեցական խորհրդին՝ բանաստեղծին ամսական թոշակ նշանակելու խնդրանքով, բայց մերժում է ստացել: Գործին տեղյակ և մասնակից է դառնում նաև Արամ Տեր-Գրիգորյանը (Վահան Տերյանի եղբայրը) և հայտնում Մ. Թուճանյանին խորհրդի տնարդի վերաբերմունքի մասին:

Մ. Թուճանյանը շարունակում է բաժանորդներ փնտրել: Դիմում է նաև Ս. Շահագիզին (տե՛ս նոյեմբերի 23՝ ստանալով նրանից հետևյալ պատասխանը. «Գրում եմ Ձեզ անկեղծաբար, որ այդ հանձնարարությունը ինձ դժվար է գլուխ բերել, որովհետև շատերի հետ չեմ պատահում. լավ է այդ գործը հանձնել մի վաճառականի, որը համարյա բոլորի հետ ծանոթ է և ամեն րոպե կարող է առաջարկել. մի այդպիսի ժողովուրդ կարող է լինել Մինաս Բոգդանիչ Լազարյան, որին ես էլ կխնդրեմ: Իսկ դուք հենց առաջինը ինձ գրեցե՛ք 20 օրինակի բաժանորդ»:

ԹԺՅ, 473-476:

1902. – Գրում է «խորհրդավոր մեռելը» («Ուր որ կանգնում, նըստում եմ ես...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 204, 607:

1902. – Գրում է «Պանդուխտ եմ, քույրի՛կ, մանուկ օրերից...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 202, 607:

1902. – Գրում է «Մեր նախորդներին» («Երանի՛ էր ձեզ, գովված երգիչներ...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 205, 607-608:

1902. – Գրում է «Լուսավորչի կանթեղը» («Կես գիշերին կանթեղը վառ...») բալլադը:

ԵԼԺ 2, 127, 559-560:

<1902>. – Թարգմանում է Ֆ. Շիլլերի «Sehnsucht» բանաստեղծությունը ժուկովսկու ռուսերեն թարգմանությունից («Желание») «Աճծուկ» վերնագրով և տպագրում՝ «Տարագ», 1902, թիվ 15, էջ 102:

ԵԼԺ 2, 252, 595:

1 9 0 3

Հունվարի 11. – Արիստակես քահանա Եգանյանի նամակը թուճանյանին՝ Դսեղից:

Շնորհակալություն է հայտնում իրեն ցուցաբերած պատշաճ ընդունելության համար:

ԹՏԹ, 2290:

Հունվար. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1903, թիվ 1, էջ 33-38) «Փարվանա» բալլադը՝ «Լեգենդ» ենթավերնագրով:

ԵԼԺ 9, 121, 558:

Փետրվարի 11. – Մ. Ասլիբեկյանի նամակը թուճանյանին՝ Բաքվից:

Դժգոհություն է հայտնում բանաստեղծի լուրջությունից, ապա պահանջում է ուղարկել առանձին գրքով տպագրված բանաստեղծությունները, «բացի այն բրոշյուրից, ուր կա «Ալեքս» ու «Լոռեցի Սաքոն»»: Տեղեկացնում է նաև, որ կարդացել է թուճանյանի և ուրիշ բանաստեղծների մասին պատմող «բրոշյուրը»: Բանաստեղծից խնդրում է ուղարկել իր լուսանկարը և գրվածքները. «... ամուսինս մազերս պոկում է, փափախչի քուչին շատ է զբաղեցրել նրան...»:

ԹՏԹ, 2614:

«Փետրվարի երրորդ տասնօրյակ», Թիֆլիս. – «Խմբական նամակ» Փարիզ՝ Հ. Մելիք-Հայկազյանին (չի պահպանվել):

Հավանաբար ստորագրել են թուճանյանը, Շանթը և «Վերնատան» մյուս անդամները:

ԳԱԹ ԹՖ, թիվ 878:

Փետրվար. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1903, թիվ 2, էջ 118-124) «Սասունցի Դավիթ» պոեմի սկզբի մասը
ԵԼԺ 4, 223, 521:

Մարտի 1. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Գրված է «Մուրճի» թիվ 1-ում տպագրված «Փարվանա» բալլադի ընթերցման անմիջական տպավորության տակ. «Չգիտեմ ինչպես են նայում քո գրածներիդ վրա այդտեղերի «գրական շրջաններ» ասած տեղերում, արդյոք հասկանում են դրանց մեծ նշանակությունը *ազգային* գրականության համար, թե չէ: Բայց ինչ վերաբերում է ինձ, ես ամեն անգամ, երբ այդպիսի բան են կարդում, ասում են երանի նոր սերնդին, որ մեծանում է այդպիսի բաներ կարդալով»: Գրականության մեջ կարևոր նշանակություն տալով բանահյուսական նյութերի մշակմանը՝ շարունակում է. «Այդպես են նայում, որ քո գրածները ստանում են մեծ նշանակություն, որքան էլ գեղարվեստական այս կամ այն պակասությունն ունենան: Ամենամեծ երգերը ամբողջ աշխարհի գրականության մեջ նրանք են, որոնք լեգենդների ու հեքիաթների անհատակ զանձարանից են առած...»: Ազգի գոյության համար կենսական անհրաժեշտություն է համարում ազգային գրականությունը. «... ինչպես մարմնական գոյության համար հայրենիք է հարկավոր, այնպես էլ մարդու հոգու համար հարկավոր է մի հատուկ, նրան հարմար հոգեկան մթնոլորտ, օդ, որ շնչասպառ չլինի...»: Վերադառնալով Թումանյանի գրականությանը՝ եզրակացնում է. «... Քո գրածների համար իբրև հայ և իբրև մարդ շնորհակալ են քեզանից, որովհետև մարդասիրությունից դրդված պիտի ամեն արարածի օդ տալ շնչելու և ծուկին օդ չտալ ու թռչունին ջրում ապրել ստիպել»:

ԹՏԹ, 1968: ԳԱԹ ԹՖ, 851 (լ.ց. 236 (5)):

Մարտ. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1903, թիվ 3, էջ 92-103) «Սասունցի Դավիթ» պոեմի երկրորդ մասը:
ԵԼԺ 4, 223, 521:

Ապրիլի 2. – Ա. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Հայտնում է իր «խորին համակրանքը և շնորհակալությունը»՝ «Փարվանայի» և «Սասունցի Դավթի» ընթերցանությունից ստացած «հոգեկան բավականության համար». «Շատ ու շատ անգամ կարդացի և որքան շատ կարդացի, այնքան շատ հավանեցի ու սիրեցի: Ինչպես «Руслан и Людмила»-ն կարդալիս զգում ես «ռուսի հոտը», այնպես էլ «Փարվանան» և, մանավանդ, «Դավիթը» տանում են մեզ մեր սիրելի հեքիաթական աշխարհը: Ոչ միայն ծերունազարդ Աղայանի, իսկական հայ գրողի տեղդ բռնված է, այլև ինձ թվում է, որ մենք էլ հասնում ենք, եթե ոչ պուշկիններ, ոչ էլ զոնե ոչ շատ ցածր աստիճանի վրա կանգնած (մեր չափով, իհարկե) ստեղծագործողներ տալու շրջանին: Ցանկանում են ավելի ևս առաջադիմություն և անհամբերությամբ սպասում են «Հազարան բլբուլին»: Շնորհավոր Ձատիկ»:

ՌԻՀ 5, 290-291:

Ապրիլ. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1903, թիվ էջ 123-131) «Սասունցի Դավիթ» պոեմի երրորդ մասը:
ԵԼԺ 4, 223, 521:

Մայիսի 1, Թիֆլիս. – Թարգմանում է Ա. Պուշկինի «Вольность» բանաստեղծության մեկ քառատողը:

Թարգմանությունը կատարվել է Ստ. Շահումյանի խնդրանքով և տարածվել է թռուցիկի ձևով: Ա.Երզնկյանը հիշում է. «Անհրաժեշտ է բանաստեղծությունը թարգմանել: <...> Ամեն մեկս վերցնում ենք և սկսում փորձել մեր բանաստեղծական տաղանդը, բան չի դուրս գալիս, ամենից համեմատաբար լավ թարգմանում է Ստեփանը, ուզում ենք տպել, թեև այն էլ մի բան չէր, բայց եղածներից լավն էր»:

Սակայն Ստեփանը չի համաձայնվում և առաջարկում է անմիջապես ուղարկել Հովի. Թումանյանին և խնդրել, որ ոտանավորը նա թարգմանի: Լավ չեն հիշում ինքը գնաց Թումանյանի մոտ, թե Դանուշ Շահվերդյանը. և ահա կարճ ժամանակից հետո ստանում ենք հետևյալ կոկիկ թարգմանությունը.

Ատում են քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց ու քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ:

Տպում ենք և հազարներով տարածում ցույցի օրը» (ԹԺՅ, 491-492):

ԵԼԺ 2, 254, 596:

Մինչև մայիսի 9-ը, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Ս. Տեր-Անդրեասյանին (չի պահպանվել):

Խնդրում է բնագրի հետ համեմատել Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմի իր թարգմանությունը և կարծիքը հայտնել գրավոր:

ՌԻՅ 5, 291, 400-401:

Մայիսի 9. – Ս. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է. «*«Շիլիոնը»* համեմատեցի բնագրի հետ: Ուղղակի զարմանալի է, թե ինչպե՞ս է հաջողվել քեզ, անգլերեն չիմանալով, մի այդպիսի հոյակապ թարգմանություն տալ մեզ: Համարյա բառացի... սակայն առանց խորթությունների, կանոնավոր հայերեն լեզվով, այնքան տողը բառացի, մոտիկ բնագրին, որ նույնիսկ տողերի կարճ ու երկարությունը, նույնիսկ հանգերը շատ տեղ նույն բառերիցն են...»:

Այնուհետև անում է մանրամասն դիտողություններ* և եզրակացնում. «Միայն մի բան պիտի ասեմ, որ դու իրավունք չունես զրկել հասարակությանը մի այդպիսի գլուխգործոցի չքնաղ թարգմանությունից: Եթե ռուսերեն անկատար, անճիշտ թարգմանությունը դասագրքերի սեփականությունն է դարձել, դու ոչ մի իրավունք չունես դեն գցել և մեր աղքատիկ գրականությունը *կողոպտել*»:

* Թարգմանությունը մշակելիս Թումանյանը հաշվի է առել այդ դիտողությունները:

ՌԻՅ 5, 291-295, 400-401:

Մայիսի 16, Թիֆլիս. – Տպագրվում է հայտարարություն «Բանաստեղծությունների» 1903 թ. հրատարակության մասին:

Հրատարակիչները տեղեկացնում են, որ գիրքը պետք է հրատարակվի «մեծ դիրքով, մոտ 350 էջ, շքեղ թղթի վրա, հեղինակի պատկերով»: Առաջարկում են բաժանորդագրվելու համար դիմել Թիֆլիսում Ս. Թումանյանին և Փ. Վարդազարյանին,

Բաքվում՝ Ս. Տեր-Անդրեասյանին և Ա. Նազարեթյանին:
«Տարագ», 1903, թիվ 18:

Մայիս. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1903, թիվ 5, էջ 5-13) «Սասունցի Դավիթ» պոեմի վերջին մասը:
ԵԼԺ 4, 223, 521:

Հունիսի <24>. – Դուրս է գալիս Թիֆլիսից և ուղևորվում Աբասթուման:

ԵԼԺ 9, 394:

✓ *Հունիսի <24>, գիշեր*. – Հասնում է Բորժոմ և իջևանում հյուրանոցում:

ԵԼԺ 9, 394:

Հունիսի <25-26>, Բորժոմ. – Հանդիպում է ծանոթների: Հանդիպածների թվում էր Մուրացանի կինը՝ Ոսկի Տեր-Հովհաննիսյանը: Կնոջը գրում է. «Բարևեցիմք: Մի՞թե ճանաչում ես դրան, զարմացած հարցրին ամեն կողմից: Բանից երևում է այստեղ էլ են վրեն խոսում»*:

* Նրան են վերաբերում Թումանյանի խոսքերը. «Ահա թե ինչի համար է ասված՝ ավելի լավ է մարդու աչքը վայր ընկնի, քան թե անունը»: Բանաստեղծը նկատի ունի տարածված խոսակցությունները նրա և «Նոր-Դարի» խմբագիր Սպանդար Սպանդարյանի մտերմական կապի մասին, որ իբր դարձել է Մուրացանի հոգեկան խանգարման պատճառը: Այդ մասին Թումանյանը գրել է նաև 1908 թ հուլիսի 2-ին Ավ. Իսահայանին հղած նամակում (տե՛ս ԵԼԺ 10, 42, 467):

ԵԼԺ 9, 394:

Հունիսի «27». – Գալիս է Ախալցխա: Գիշերը մնում է այնտեղ:

ԵԼԺ 9, 394:

Հունիսի 28. – Հասնում է Աբասթուման:
Իջևանում է Վարվառա Մելիք-Հայկազյանի տանը. «... տիկ. Մելիք-Հայկազյանը գալուս պես ինձ տարավ իրեն մոտ, չթողեց հյուրանոց գնամ: Մի քանի օր մնացի նրան հյուր մինչև սենյակ գտա»:

ԵԼԺ 9, 394:

<Հուլիսի սկզբներ>, Աբասթուման. – Նամակ-երկտող Մանգլիս՝ Ստ. Լիսիցյանին (չի պահպանվել):

Խնդրում է նույն տեղում զինվորական ծառայության մեջ գտնվող եղբորը՝ Վահանին, ազատելու միջոցներ գտնել:

ԳԱԹ ԹՖ, 721:

Հուլիսի 2, Թիֆլիս. – Ն. Աղբալյանի նամակը Ալեքսանդրապոլ՝ Ավ. Իսահակյանին:

Գրված է նրա «Նորից եկան գարնան անուշ օրերը...» («Սուրճ», 1903, թիվ 6) բանաստեղծության ընթերցումի անմիջական տպավորության տակ. «... սկսել են չհասկանալ և բոլոր վերջերս գրածներդ համարել են ո՛չ ներշնչանքի պտուղներ, այլ ձևացում և այլն, և այլն: ... Առիթ եղավ խոսելու մեր «Վերնատանը» և ես ստիպվեցի պաշտպանելու մի քիչ վիրավորական ձևով, այսինքն՝ որ մի բան գնահատելուց առաջ պետք է հասկանալ, այսինքն վերապրել, վերագալ, կրել հոգով: Ցավում եմ հոգով, եթե մեր «Վերնատանն» այսպես է էլ ի՞նչ խոսես զանազան խմբագրությունների և ընթերցողների մասին: Անկասկած ներկայումս ոչ մի հեղինակ մեզանում քեզանից հարուստ գաղափարներ չունի:

Ինչ-որ տարօրինակ մտքեր են ձեռք բերել մերոնք, հավանորեն Շանթի ազդեցությամբ, գեղարվեստի մասին, ամեն ինչ խաղ համարելով և կարծես ձեռք են քաշել իրենց հոգին ու բնությունը ուսումնասիրելուց. հասարակ, տարրական մի պայման ոչ միայն ամեն մի ինքնուրույնության ու բեղմնավոր գործունեության, այլև բանաստեղծության՝ ընդհանրապես: Մեր Օհանեսի համար այդ բանը այն աստիճան վնասակար չէ, մանավանդ ուշ էլ է. նրա ընտրած դաշտը այդ զենքերի կարիքը շատ չունի»:

ԳԱԹ, ԳԼՖ, 2637:

Հուլիսի 4, Աբասթուման. – Ստանում է երեխաների՝ հուլիսի 1-ի բաց նամակը Շուլավերից:

Հայտնում են, որ նույն օրը մեկնում են Թիֆլիս:

ԹՏԹ, 1221:

Հուլիսի 4, Աբասթուման. – Նամակ Լոնդոն՝ Հ. Մելիք-Հայկազյանին:

Հայտնում է, որ Աբասթուման գալու առաջին օրերը հյուրընկալվել է նրա մոր՝ Վարվառա Մելիք-Հայկազյանի տանը (տե՛ս հուլիսի 28): Ցավում է, որ Հեղինեն դեռ չի ժամանել Աբասթուման. միասին լավ ժամանակ կանցկացնեին, ընկերություն կանեին, կխոսեին հասարակական գործերից, նրա սիրած «կանանց հարցից»: Գրում է նաև, որ «մի փոքր տկար է»:

ԵԼԺ 9, 593-594:

Հուլիսի 5, Աբասթուման. – Նամակ Շուլավեր՝ Օ. Թումանյանին:

Գրում է դեպի Աբասթուման իր ուղևորության մասին (տե՛ս հունիսի 24, 24-ի գիշեր, 25-26, 27, 28): Նկարագրում է իր ամառանոցային առօրյան, օրվա սննդակարգը, կացարանը: Պատվիրում է. «Երեխաներին չգրկես ու կարգին սնունդ տաս: Զգույշ կացիր – մրգեղեն չուտես խակ ու մակ, կամ շատ, վրան ջուր խմեն հիվանդանան»: Երեխաներին. «Թող հիշատակարաններ պահեն և հերթով դրկեն, մանրամասն գրեն ամեն բան»:

ԵԼԺ 9, 394-396:

Հուլիսի 5, Աբասթուման. – Նամակ-խնդրագրեր (չեն պահպանվել) զինվորական հրամանատար Աբրահամյանին և բժիշկ Տերեչչենկոյին:

Խնդրում է նրանց օգնությունը եղբորը՝ Վահանին, զինվորական ծառայությունից ազատելու համար:

ԳԱԹ ԹՖ, 721:

Հուլիսի 9, Աբասթուման. – Բացիկ Կիսլովոդսկ՝ Ար. Զարգարյանին:

Հայտնում է, որ Աբասթումանում է:

ԵԼԺ 9, 397:

Հուլիսի 11. – Ստ. Լիսիցյանի նամակը Թումանյանին՝ Մանգլիսից:

Ի պատասխան Թումանյանի (տե՛ս <հուլիսի սկզբներ>՝) իրեն ուղղված նամակի՝ խորհուրդ է տալիս բանաստեղծի եղբորը՝ Վահանին, զինվորական ծառայությունից ազատելու

խնդրանքով դիմել հրամանատար Աբրահամյանին և բժիշկ Տերեչչենկոյին: Գրում է աշնանից սկսվող հանրամատչելի հրատարակության համար մանկական գրականությունից նյութեր հավաքելու, նկարիչ Հակոբյանի հետ ծանոթանալու և բանակցություններ վարելու, Վարդգես Սուրենյանցին նույնպես դիմելու մտադրության մասին*:

Դիմում է Բանաստեղծին. «Առողջությունդ ինչպե՞ս է: Տե՛ս, Հովհաննես, մոտենում են այնպիսի ժամանակներ, երբ ավելի անհրաժեշտ պիտի լինեն մեր ժողովրդի համար քեզպեսները, ուստի ավելի ևս բարոյական իրավունք չունես անփույթ, նույնիսկ թշնամական կերպով վերաբերվելու քո առողջությանդ: Մեր ժողովրդի համար մտածող և աշխատող ընտանիքի անդամների թիվը այնպես պակասել է, այնպես ծանրացել են գործելու պայմանները, որ ամեն մի ուղղահավատ հայ գործիչ կրկնակի արժեք պիտի տա իրեն և խույս տա ավելորդ աննպատակ ուժասպառությունից»:

* 1904 թ. «Լիսիցյան և ընկ.» հրատարակչական ընկերությունը տպագրել է «Սասունցի Դավիթ», «Անուշ», «Լեզենդներ» գրքույկները: Բայց Լիսիցյանը գրում է մանկական գրականությունից նյութեր հավաքելու մասին. պետք է ենթադրել, որ հետո նրանց մտադրությունը փոխվել է. մանկական գրականությունից նյութերը օգտագործել են «Հասկերի» և «Լուսաբերի» համար:

ԳԱԹ ԹՖ, 721:

Հուլիսի 13. – Օ. Թումանյանի նամակը ամուսնուն՝ Շուլավերից (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 337:

Հուլիսի 13, Աբասթուման. – Նամակ Շուլավեր՝ Օ. Թումանյանին:

Գրում է առողջարանային իր առօրյայի, հին ծանոթների հետ հանդիպումների մասին: Հայտնում է Բաքվում և Թիֆլիսում ծայր առած խռովությունների մասին, որ հետևանք էին տնտեսական ու քաղաքական ճգնաժամի պատճառով ցարիզմի վարած քաղաքականության: Պատվիրում է, որ երեխաները «շաբաթը մի անգամ ամեն մեկը գրի, ուղարկի իրեն հիշատակարանը. հերթով, ամեն մեկը մի օր» (տե՛ս նաև հուլիսի 5): Տեղե-

կացնում է. «Ես լավ եմ: Վահանի գործի մասին նամակներ եմ գրել: <...> Այս մի երկու օրը պատասխանը կստանամ – կգրեմ: Գրել եմ մեծ բժշկին և կոմանդիրին» (տե՛ս <հուլիսի սկզբներ>, հուլիսի 5):

ԵԼԺ 9, 397-399:

<Հուլիսի կեսեր>. – Օ. Թումանյանի նամակը ամուսնուն՝ Դսեղից (չի պահպանվել):

Գրում է, որ կարոտել է ամուսնուն. «Կարծես թե երկու ամիս լինի, որ չեմ տեսել...»:

ԵԼԺ 9, 403:

Հուլիսի 15. – Չավակների՝ Սուշեղի, Աշխենի, Նվարդի համատեղ բաց նամակը Թումանյանին՝ Շուլավերից:

ԹՏԹ, ՄՄ, 1222:

Հուլիսի <20, 21>, Աբասթուման. – Նամակ Շուլավեր՝ Սուշեղ, Աշխեն և Նվարդ Թումանյաններին:

Դժգոհում է նրանց՝ իրեն ուղարկած հիշատակարաններից. «Ավելի շուտ մոռացարաններ են, քան թե հիշատակարաններ»: Բացատրում է, թե ինչպես կարելի է գրել հիշատակարան. «Որ գնում եք մի տեղ – նայեցեք, թե ինչն է ամենից շուտ ձեր ուշադրությունը գրավում, մարդիկ, բնությունը, բնության ինչ տեսակ լինելը, մարդկանց ինչ տեսակ կյանքը, մի խոսքով ամեն բան, ինչ որ ձեզ վրա տպավորություն է անում, ուրախ թե տխուր, ամեն բան պետք է նշանակեք: Նրանից հետո ինչ է պատահում ձեզ հետ, ինչ է պատահում ձեր մոտիկ շրջանում, մեր տանը՝ ամեն բան: Իհարկե, մի որոշ կարգով: Բնությունը, ժողովուրդը, նրանց կերպարանքը, ապրուստը, ձեր կարծիքը այդ բոլորի մասին, ձեզ հետ պատահած ու ձեր մոտիկներին պատահած դեպքերը»:

ԵԼԺ 9, 400:

Հուլիսի 21. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին՝ Ղազարապատից:

Հայտնում է իր կարծիքը «Սասունցի Դավիթ» պոեմի ուժեղ ու թույլ կողմերի մասին. «... «Սասունցի Դավիթ» մասին.– նորից կարդացի.– միակ պակասությունը նրանում է, որ բնության

նկարագրեր չկան, որոնք քեզ շատ կհաջողվեին՝ իբրև էպիկի, բայց որ Սասունը չես տեսել, ի՞նչ նկարագրես. իսկ այն ևս ճշմարիտ է, որ ամբողջ պոեմը, կարծես, լրջորեն, խորը մտածված չես գրել, հավատարիմ ես մնացել նախկին որոշմունքիդ – մանուկների համար. բայց ավելի լուրջ ու ծանրախոհ կարելի էր գրել, ինչպես Ֆիրդուսու «Շահնամեն», Յորդանի «Նիբելունգը» և Յերդերի «Սիդը», որտեղ, բացի բուն նյութից կա և անհատական ստեղծագործություն: Քոնը ուղղակի՝ նյութի ոտանավոր, մի փոքր մշակած վերածումն է:

Ինձ ամենից շատ գրավում են ժողովրդական ոճերն ու դարձվածքները, որոնցով չափազանց հարուստ է, և մանավանդ էպիկական պատմելու ձևը – հանգիստ, վեհորեն հանգիստ, և հունորը: Հույս ունեմ, որ Խանդութի սերը հաջող դուրս կբերես, բայց նախօրոք զգում եմ Միերի անհաջողությունը... ժողովուրդը Դավթին է սիրել ու սիրում, ու նրան հարստացրել է, իսկ Միերին ատում է և այդ պատճառով նրանով շատ չէ գբաղվել, տալով ատելի մոռացության, արհամարհանքի...»:

Գրում է, որ «մեծ սպասելիք» ունի «Սինամ թագավորից», որովհետև նրա մեջ կա հեղինակի անձնական ստեղծագործությունը, «կա սիմբոլ և գեղեցիկ պատկերներ»: Խոստովանում է, որ անհամբեր սպասում է բանաստեղծությունների նոր ժողովածուին՝ կարդալու համար «Անուշը». «Բայց ինչ էլ որ լինեն քո պոեմներդ, մեր գրականության մեջ դարաշրջան են կազմելու. ապրիր և ստեղծագործիր – ահա քո ուղին. մեզ թող «կռվի դաշտը», ինչ կուզես թող լինի. «թող կործանվի աշխարհը, և ես կընկնիմ նրա ավերակների տակ». սա Հորացիոս բանաստեղծի խոսքերն են, որ իմ վերջին տրամադրության լուզունգն է, նշանաբանը»:^{*}

* Իսահակյանի երկերի 6-րդ հատորում նամակի թվականը՝ 1902, սխալ է:

ԱԻԵԺ, 6, 40-41

<Հուլիսի> 24, Արասթուման. – Նամակ Շուլավեր՝ Մուշեղ Աշխեն, Նվարդ Թումանյաններին:

Հանդիմանում է նամակ ուշ-ուշ գրելու և կարգին հիշատակարաններ չպահելու համար: Նշանակում է նամակ գրելու հա-

տուկ օրեր. «Ամեն երեքշաբթի օր Մուշեղը պետք է նամակ գրի, հինգշաբթի՝ Աշխենը, շաբաթ՝ Նվարդը: Գրելու երրորդ օրը ես այստեղ ստանում եմ, թե որ մեկինդ ուշացել է, հետո ես նրան կպատժեմ և երբեք էլ նամակ չեմ գրիլ»:

ԵԼԺ 9, 401-402:

Հուլիսի 25. – Աշխեն Թումանյանի ֆրանսերեն բաց նամակը Հովհ. Թումանյանին՝ Դսեղից:

Գրում է եղանակների մասին:

ԹՏԹ, 3764

Հուլիսի 26-27-ի գիշեր. – Կնոջ ներկայության զգացողություն է ունենում.

«... Համարյա թե ինչպես թե մոտս էիր և ես սաստիկ անհանգստացա, գրեթե ամբողջ գիշեր քնել չկարողացա, իսկ երբ լուսադեմին քնեցի մի քիչ, էն էլ երազում տեսա շատ տարօրինակ դրություն և ուրիշ բաներ»:

ԵԼԺ 9, 403:

Հուլիսի 28, Արասթուման. – Նամակ Դսեղ՝ Օ. Թումանյանին:

Դժգոհում է, որ կինն ու երեխաները շուտ-շուտ նամակ չեն գրում. «... Ես հարկադրված եմ շարունակ գրելու, թե նամակ գրեցեք և դարձյալ նամակ չստանալ ու շարունակ սպասել, սպասել կասկածների ենթարկված: <...> Երբ որ քեզ գրում եմ, թե հեռագիր եմ տալի սրան-նրան ձեզանից տեղեկություն իմանալու, երբ որ սրան-նրան նամակ եմ գրում, որ իմանամ դուք ինչպես կամ որտեղ եք, դու ի՞նչ ես մտածում այս բոլորը լսելով: Զե՞ որ վրդովմունքներն են ինձ հասցրել այստեղ և այժմ ամեն մի վրդովմունք ինձ համար մահի վտանգ ունի...»:

ԵԼԺ 9, 402-403:

Հուլիսի 29, Արասթուման. – Ստանում է դստեր՝ Անուշի նամակը Շուլավերից (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 404:

Հուլիսի 30, Արասթուման. – Նամակ Դսեղ՝ Օ. Թումանյանին:

Անհանգիստ է, որ կնոջից նամակ չի ստանում: Հայտնում է իր մտահոգությունը կնոջ առողջության համար, ինչպես նաև իր հավատն ու նվիրվածությունը նրան. «Եթե մի որևէ բան է պատահել և անհանգիստ ես, մի՛ վախենա, հաստատ իմացի, որ ես քու հոգու ու սրտի առողջության վրա էնքան եմ համոզված ու էնքան հույս ունեմ, որ ինչ ուզում է լինի դու կմնաս դարձյալ նույնը: <...> Քու մեջ ինչ որ շատ եմ գնահատում ու սիրում և որ իսկի քեզ էլ չեմ ասում, հենց նրա վրա է հաստատված իմ հավատը, որ դու միշտ կմնաս նույն առողջ ու հավատարիմ կինը, նույն մաքուր ու հանգիստ հոգին»:

ԵԼԺ 9, 403-404:

Հուլիսի 30, Արասթուման. – Կշռվում է.

«Էսօր քաշվեցի, 2 ֆ. ավելացել եմ, բայց ավելի շատ եմ կազդուրվել»:

ԵԼԺ 9, 404:

Հուլիսի 30, Արասթուման. – Ստանում է երեխաների նամակները.

«... իրիկունն էլ բոլոր երեխաներից նամակ ստացա...»:

ԵԼԺ 9, 403:

Հուլիսի 30, Արասթուման. – Նամակ-երկտող Շուլավեր Անուշ Թումանյանին.

«Էս մի քանի օրը մայրիկը կգա ձեզ մոտ: Բարևիր Մեծ բաբոյին* ու ծանոթներին»:

* Օ. Թումանյանի մայրը:

ԵԼԺ 9, 405:

Հուլիսի 30, Արասթուման. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Տեղեկություններ է տալիս առողջարանում իր առօրյա կենցաղի, ապրելու պայմանների, վարձած բնակարանի, հանդիպումների ու ծանոթների մասին: Շատ գոհ է իր գերմանացի տանտիրոջից, «որին ամեն անգամ տեսնելիս կարծես թե վաննա եմ ընդունում, այնպես ջղերս հանգստանում եմ»: Տեղեկացնում է. «Ինչպես քեզ գրել էի*, ես հետս փող ունեի և կար-

ծում էի հերիք կանի, բայց չէի երևակայել սենյակների այսպիսի բանկություն...»: Խնդրում է 25 ռ. ուղարկել:

* Թումանյանի այդ նամակը չի պահպանվել:

ԵԼԺ 9, 405-406

<Հուլիս>, Արասթուման. – Նամակներ Օ. Թումանյանի բարեկամներ Մոսոյին (Միրզոյան), Օսեփին, իր եղբայր Ռոստոմին, հեռագիր կնոջ հեռավոր ազգական Երվանդին (Մամիկոնյան) (չեն պահպանվել):

Տեղեկություններ է ուզում կնոջ և ընտանիքի մասին, որովհետև տնից նամակ չի ստանում:

ԵԼԺ 9, 401, 653:

Հուլիսի <27-28>, Արասթուման. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է Թիֆլիսում տիրող իրադրության, իր վատ տրամադրության, մեծակության մասին: Խորհուրդ է տալիս Թումանյանին խնայել իրեն, չվատնել ուժերն ու առողջությունը, ապրել կանոնավոր, խաղաղ ու հանգիստ կյանքով, խուսափել վեճերից, «տաք» խոսակցություններից, ժողովներից, «խմբումներից» ու երեկույթներից. «Պիտի ասես, թե էլ ինչի կընմանի կյանքը. շատ ես սխալ. պարզապես վարժության խնդիր է: ... Հենց որ քիչ ուժերդ գալիս են դու արդեն վատնում ես, վիճում, երզում, վազվզում, ինչպես սրանից տասը տարի առաջ: Դու այլևս երբեք ո՛չ վազելու ես, ո՛չ էլ երգելու, եթե ուզում ես, որ առողջ լինես ու առողջ մնաս, եթե ուզում ես մի բան արտադրես, եթե ուզում ես մի բանի պետք գաս: Դու չափազանց ես անփույթ դեպի քեզ, ինչպես ընդհանրապես դեպի ամեն բան: Դե մի՛ բարկանա, վերջացրի և էլ այս մասին երբեք բերանս չեմ բանա...»:

ՈւԻ 4, 376-377:

Մինչև օգոստոսի 1. – Ս. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին Թիֆլիսից (նամակը չի պահպանվել):

Հետաքրքրվում է բանաստեղծի առողջությամբ, ուզում է, որ բժիշկը նրան քննի և իրեն տեղեկություն տա: Բժիշկն էլ

հարցնում է, թե «քո ինչն է, որ այդպես հետաքրքրվում ես, անցյալներն էլ մի ուրիշ տիկին էր գրել»:

ԵԼԺ 9, 407:

Մինչև օգոստոսի 1-ը, Արասթուման. – Միանում է տեղացիների գրավոր բողոքին:

Ուղղված էր «Ռուսաստանի հայ լուսավորչական եկեղեցու կալվածքների կենտրոնացման մասին» հուլիսի 12-ին հրապարակված «բարձրագույն հրամանի» դեմ: Միաժամանակ նկատում է. «Բայց, ըստ իս, գործը մեկ որ շատ են մեծացնում, մեկ էլ՝ անխելք բան է. երբ որ հարկավոր էր, օրինակ ուսումնարանների ժամանակ, որ իսկի բարձր կարգադրություն չէր, ձայն չհանեցին, այժմ՝ ընդհանուր շարժում»:

ԵԼԺ 9, 407:

✓ *Մինչև օգոստոսի 1, Արասթուման.* – Հանդիպում է դերասանուհի Ազնիվ Հրաչյային:

Օգոստոսի 1-ին կնոջը գրում է. «Այստեղ է տիկին Հրաչյան: Լավ բարեկամություն ենք անում: Հետաքրքրական բաներ է պատմում»:

* Այդ գրույցների ժամանակ բանաստեղծը խորհուրդ է տալիս անվանի դերասանուհուն գրել իր հուշերը: Հետագայում հրատարակած իր հիշողությունների գիրքը Ազնիվ Հրաչյան սկսում է թումանյանին նվիրված ձոնով. «Դուք խնդրեցիք և ստիպեցիք, որ գրեմ իմ հիշողություններս»:

ԵԼԺ 9, 410, 657:

<Օգոստոսի 1>, Արասթուման. – Նամակ Կիսլովոդսկ՝ Ար. Զարգարյանին:

Հայտնում է իր առողջական լավ վիճակի մասին, որ բժիշկը խորհուրդ է տվել սեպտեմբերն անցկացնել Շուլավերում, նաև արգելել է պարապել: Գրում է նաև «ազգի վերջին խռովությունների» մասին (տե՛ս մինչև օգոստոսի 1):

ԵԼԺ 9, 406-407:

Օգոստոսի 1, Արասթուման. – Բացիկ Դսեղ՝ դստերը՝ Նվարդին.

«Նվարդ, քեզանից ես այսպիսի բան չէի սպասում, որ մի ամսում միայն մի նամակ գրես քո հայրիկին»:

ԵԼԺ 9, 410:

Օգոստոսի 1, առավոտ, Արասթուման. – Ոմն տիկ. Սոֆյայից հրավեր է ստանում՝ մասնակցելու անտառում կազմակերպված թեյասեղանի:

Կնոջը գրում է. «Գնացի, քեզ վրա շատ խոսեցինք, տիկիններն սկսեցին պաշտպանել քեզ, իսկ տիկին Սոֆյան շատ բարև է անում»:

ԵԼԺ 9, 408:

Օգոստոսի 1, առավոտ, Արասթուման. – Ստանում է Մոսու Միրզոյանի (տե՛ս հուլիսի 24) բաց նամակը՝ Շուլավերից:

ԵԼԺ 9, 408:

Օգոստոսի 1, ժամը 12, Արասթուման. – Նամակ Դսեղ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է ամառանոցային առօրյայից, իրենց ընդհանուր ծանոթներից: Տեղեկացնում է, որ Պետերբուրգ ուղարկած (տե՛ս 1902, հոկտ. 21) երկու բանաստեղծություններից «ցենզորը մեկը բռնել է»:

* Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի 1903 թ. Ա գրքում տպագրվել է «Պանդուխտ եմ, քույրիկ...» բանաստեղծությունը: Թե որն է արգելել գրաքննությունը, հայտնի չէ:

ԵԼԺ 9, 409, 657:

Օգոստոսի <1>, Արասթուման. – Նամակ Շուլավեր՝ Օ. Թումանյանի մորը (չի պահպանվել):

Նամակն ուղարկվել է նրանց ազգականուհի Օ. Գիրգիդյանի անունով: Կնոջը գրում է. «Մորդ նամակ եմ գրում, բայց ուզում եմ Օսանի անունով գրեմ, մի բան, որ նա է կարդալու»:

ԵԼԺ 9, 410:

<Օգոստոսի 1-2>. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Հետաքրքրվում է բանաստեղծի բուժման ընթացքով: Տեղեկացնում է կնոջ ժամանման մասին. «Փոթի հանդիպեցանք

իրար շոգեմավին մեջ, միասին անցանք Բաթում, երկու օր այնտեղ, երկու օր էլ այստեղ՝ մոտս: Հիմա Ղարաքիլիսա է «հանգստանալու»: Չայտնում է, որ Թումանյանը իր հասցեով ապահովագրված նամակ ունի Թիֆլիսի փոստատանը:

ՈՒՀ 4, 378:

Օգոստոսի 3. – Լոնդոնից Աբասթուման է գալիս Հ. Մելիք-Չայկազյանը.

Թումանյանը կնոջը գրում է. «Ամեն օր (թե ուրիշ տեղ չեմ ճաշին) միշտ նրանց մոտ եմ. սաստիկ շատ են ուշադիր»:

ԵԼԺ 9, 412:

Մինչև օգոստոսի 4. – Օ. Թումանյանի նամակը ամուսնուն՝ Դսեղից (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 411:

Մինչև օգոստոսի 4. – Վահան Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին՝ Մանգլիսից (չի պահպանվել):

Գրում է Թիֆլիս գնալու մտադրության մասին: Հիացած է Մանգլիսով:

ԵԼԺ 9, 411:

Օգոստոսի 4, Աբասթուման. – Նամակ Դսեղ՝ Օ. Թումանյանին:

Գրում է կենցաղային հարցերի մասին՝ կապված ընտանիքի դսեղյան առօրյայի, կնոջ և երեխաների՝ Ղարաքիլիսա, այնուհետև Շուլավեր գնալու հետ:

ԵԼԺ 9, 411-412

Օգոստոսի 4, Աբասթուման. — Շնորհավորական նամակ Թիֆլիս՝ Լ. Շանթին՝ կնոջ՝ Ջավահիրի ժամանման առթիվ (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 412

Օգոստոսի 17, Աբասթուման. – Բացիկ Շուլավեր՝ Աշխեն Թումանյանին.

«Աշխեն ջան, վերջին երկու հիշատակարանդ լավն էին: Համբուրում եմ քեզ»:

ԵԼԺ 9, 412:

Օգոստոսի 17, Աբասթուման. – Բացիկ Շուլավեր՝ Նվարդ Թումանյանին.

«Նունիկ ջան, ստացել եմ Իգատակից գրածներդ»:
ԵԼԺ 9, 4

<Օգոստոսի 20, Աբասթուման>. – Բացիկ Շուլավեր՝ Օ. Թումանյանին.

«Այստեղ սաստիկ ցրտեր են անում: Մի 5 օրից այդտեղ կլինեմ: Ուղղակի կգամ: Ախալցխա չեմ մտնելու, ոչ էլ Թիֆլիս»:
ԵԼԺ 9, 413:

<Օգոստոսի 24, Թիֆլիս>. – Բացիկ Շուլավեր՝ Նվարդ Թումանյանին.

«Նունիկ ջան, մենք լավ ենք, Աշխենն եկել է «Свободная гражданка»: Դու էլ շուտ արի: Ձեր ուսումն սկսվում է 1-ին»:
ԵԼԺ 9, 413:

Օգոստոսի 26. – Մուշեղ Թումանյանի՝ օգոստոսի 26-ի բաց նամակը Հովհ. Թումանյանին՝ Շուլավերից:

Հայտնում է, որ օգոստոսի 28-ին մեկնելու են Թիֆլիս:
ԹՏԹ, 1224:

Սեպտեմբերի 9, 10, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Գրում է, թե իր և երեխաների համար ինչպես են անցնում շուլավերյան հանգստի օրերը: Տեղեկացնում է. «Այստեղ աղմուկներ չեղան, ինձանից շատերը նեղացան, որովհետև ես արգելեցի»:^{*}

Խնդրում է կնոջը Շուլավեր գալիս հետը բերել «Немецкие поэты» (Немецкие поэты в биографиях и образцах, под редакцией Н. В. Гербелья», 1877, СПб):

^{*} Խոսքը վերաբերում է եկեղեցական կալվածքների պետականացման առիթով ժողովրդական հուզումներին:

ԵԼԺ 9, 414-415:

Սեպտեմբերի <10>. – Որսի է գնում Լավվար 25 որսորդների հետ:

Ջարմացնում է նրանց «հրացան արծակելու» իր հմտությամբ:

ԵԼԺ 9, 416:

Սեպտեմբերի 12, 13, Շուկավեր. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Տեղեկացնում է անձրևային եղանակների, սկսված այգեկութի մասին: Պատմում է որսի մանրամասները. «Երբ ես վերջրի արծակելու, սկսեցին քչփչալ, թե ես ինչ հրացան արծակող եմ. և վերջում թե ինչ դուրս եկավ, այդ էլ ուրիշը կպատմի, ես չեմ ուզում պարծենամ: Իբրև թե արդեն չպարծեցա»: Գրում է, որ երեխաների համար «խալաթացու» է առել, խնդրում է ուղարկել նրանց ծնեռվա գլխարկները:

ԵԼԺ 9, 416-417:

<Սեպտեմբերի առաջին տասնօրյակ>. – Օ. Թումանյանի ցամակը ամուսնուն՝ Թիֆլիսից (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 417:

Սեպտեմբերի 14, 15, Շուկավեր. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Փանգատվում է տաղտկալի առօրյայից, վատ եղանակից, այն բանից, որ հայ եկեղեցու կալվածքների պետականացման հարցով նորից անհանգստացնում են իրեն. «Կատարյալ զահլես գնաց. էլ հանգստություն չունեմ կալվածական խնդրից: Կարծես թե, որ բանաստեղծ եղանք – պարտավորվեցինք ամեն բանի. դե վերջապես մին-երկու իմ կարծիքը հայտնեցի. բայց չէ. օձիք չեմ կարողանում ազատել, միշտ խոսք ու զրույց, աղմուկ, և մեջը ոչ մի մսխալ խելք կա, ոչ մի քիչ մարդկային զգացմունք: Ուր որ գնում եմ խաթեն ինձ հետ է»:

Նեղացած է, որ Շանթը կնոջ հետ գնացել է Բաքու և իրեն չի հանդիպել:

Պատվիրում է մինչև իր գալը իրենց հողերի հարկը վճարել «նանի բերած տասն ռուբլով»:

Իր նոր գրքի տպագրության ընթացքի մասին կնոջ հարցումին պատասխանում է. «Գիրքս այժմ պատրաստ եմ համարում: Այն բոլոր բաները, որոնք ծանր էին թվում,* անց են կացած, վերջացած են»:

* Նկատի ունի ժողովածուի պատրաստման շուրջ մտերիմների հետ նախորդ տարվա բանակցությունները:

ԵԼԺ 9, 417-418:

Սեպտեմբերի 17, Շուկավեր. – Նամակ Թիֆլիս՝ Ս. Թումանյանին (անավարտ):

Գրում է հայ եկեղեցու կալվածքների պետականացման ցարական հրամանի մասին: Դժգոհում է այդ հարցի շուրջ ժողովրդի մեջ տիրող ամբոխային տրամադրություններից, իր նկատմամբ երբեմն դրսևորվող անարդարացի վերաբերմունքից. «Տաքացած ենք մենք. հազիվ է տաքացել ժողովուրդը, մեզ ինչո՞ւ ես սառեցնում... – ասում են ինձ»: Նորից հաստատում է իր կարծիքը այդ հրամանի մասին. «Այս խնդիրը իզուր և հիմարաբար այսքան մեծացրին ու վերջինը վատ պիտի լինի, քան առաջինը»: Ավելի մտահոգիչ է համարում այդ խնդրի հետ կապված մի այլ բան. «Բայց այդ կարգադրությունը դուրս հանեց մեր ժողովրդին և մի անգամ էլ ցույց տվավ մեզ, թե որքան խավար ու ողորմելի բան ենք մենք, անգիտակից ու կույր մի ամբոխ, որ ո՛չ իրեն է հասկանում, ո՛չ շուրջը, ո՛չ լավը, ո՛չ վատը, ո՛չ չարը, ո՛չ բարին: Ես ականատես եղա դեպքերի, որոնք դարձյալ հաստատեցին, թե շատ տարբեր բաներ են մտածող անհատն ու բազմությունը, ժողովուրդը, որ իր մեջ պարունակում է ամեն, ամեն բան, ավելի շատ խավար, քան պայծառ. բոլորովին տարբեր բաներ են, բայց իրար կապված ճակատագրական կապերով: Եվ մարդ երբեմն իրեն զգում է Գրիգոր Լուսավորչի դրության մեջ, Խոր Վիրապի անդունդի մեջ ընկած, շուրջը՝ օձեր ու կարիճներ»:

Վերջում հետաքրքրվում է թիֆլիսյան իրենց ընկերներով ու բարեկամներով:

ԵԼԺ 9, 419-421:

<Սեպտեմբերի վերջ>, Թիֆլիս. – Նամակ Բորժոմ՝ Ար. Ջարգարյանին:

Տեղեկացնում է, որ արդեն սկսվել է իր նոր գրքի տպագրությունը. «Հենց այս րոպեին մեքենայի տակից հանել եմ գրքիս առաջին տպագրած թերթը»: Դժգոհում է Ջարգարյանի ուղարկած՝ զոկերի բարբառով գրված վոդևիլներից. «Ստացա քո ղրկած, չգիտեմ ինչը, որովհետև բոլորը ձեռքիս են, բայց ոչ մեկը չեմ հավանում. աշխատիր այնպիսի բան ղրկել, որ հավանեմ»:

ԵԼԺ 9, 421-422:

Հոկտեմբերի 15. – Գրաքննությունը թույլատրում է Թումանյանի նոր ժողովածուի տպագրությունը:

ԵԼԺ 9, 661:

Նոյեմբերի 14. – Նիկողայոս Ադոնցի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Խնդրում է մինչև ամսվա վերջը բանաստեղծություններ ուղարկել «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի Բ գրքի համար: Նաև խնդրում է նույն առաջարկությունն անել Շանթին («Անմաքուր խիղճեր» դրաման, որ խոստացել էր վաղուց), Շիրվանզադեին, Ահարոնյանին և Փափազյանին:

Հայտնում է, որ հանդեսի Ա գրքի համար ուղարկած բանաստեղծություններից մեկը գրաքննությունն արգելել է՝ իբրև արդեն տպված, իսկ երկրորդի հոնորարը կարող է ստանալ Լևոն Քալանթարից:

ՈՒՀ 5, 296:

<Մինչև նոյեմբերի կեսերը>. – Ար. Ջարգարյանի բացիկները Թումանյանին՝ Բորժոմից (չեն պահպանվել):

Պատասխան նամակում բանաստեղծը գրում է. «Ստացա քու ղրկած բաց, որոնցով սպառնում ես ինձ ռմբակոծել, եթե նամակ չգրեմ: Կաշխատեմ նամակ չգրել, ռմբակոծիր, որքան քեֆդ կտա: Լավ ռումբեր ես գտել»:

ԵԼԺ 9, 422:

<Նոյեմբերի կեսեր>, *Թիֆլիս*.—Նամակ Բորժոմ՝ Ար. Ջարգարյանին:

Իբրև «նշանավոր նորություն» տեղեկացնում է, որ՝ «Թիֆլիսի մի քանի թերթերն («Մշակ», «Новое обозрение») են փակել

երկու ամսով»: Իր գրքի տպագրության ընթացքի մասին հուճորով գրում է. «Գիրքն առաջ է գնում. բաժանորդները՝ ետ»: ԵԼԺ 9, 422:

Նոյեմբերի 17. – Գրիգոր Աղաջանյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է, որ Բաքվի տեխնիկական դպրոցի հայ աշակերտները նույն ուսումնարանի չքավոր աշակերտներին օգնելու նպատակով ցանկանում են հրատարակել փոստ-քարտ գրական-հասարակական գործիչների լուսանկարներով: Խնդրում է Թումանյանի համաձայնությունը: Հայտնում է նաև, որ համաձայնության դեպքում բանաստեղծը կարող է լուսանկարները չուղարկել, քանի որ քարտերը տպագրվելու էին Թիֆլիսում: Նաև խնդրում է նույն առաջարկով դիմել Ավ. Իսահակյանին:

ԹՏԹ, 2670:

<Նոյեմբերի վերջ>, *Թիֆլիս*. – Երկտող Փիլ. Վարդապարյանին.

«Թե ինձ մոտոդ տալու փող ունես՝ ղրկիր. որ ձեռիս փող չկա»:

ԵԼԺ 9, 423:

Նոյեմբերի 30. – Ավ. Իսահակյանի՝ նամակը Թումանյանին՝ Էջմիածնից:

Գրում է, որ հանդիպել է Խրիմյան կաթողիկոսին. «... քո կողմից համբուրեցի նրա սուրբ աջը և ողջագուրվեցի. նա էլ քեֆդ հարցրեց»:

ԱԻԵԺ 6, 43:

Նոյեմբեր. – Տպագրվում է («Մուրճ», 1903, թիվ 11, էջ 27-40) «Դեպի Անհունը» պոեմը:

ԵԼԺ 3, 111, 523:

<Դեկտեմբերի վերջ>, *Թիֆլիս*. – Երկտող Փիլ. Վարդապարյանին.

«Ես շատ խառնված եմ. թե կարող ես մի փոքր ժամանակով հենց այժմ անցիր՝ խոսանք այդ մասին»:

ԵԼԺ 9, 423:

<Դեկտեմբերի վերջ>, Թիֆլիս. – «Բանաստեղծությունների» 1903 թ. ժողովածուն ուղարկում է Պետերբուրգ՝ Նիկ. Աղբալյանին:

ՈՒՅ 5, 370:

1903. – Առաջին անգամ տպագրվում է («Լույս» օրացույց - հանդես, էջ 313) «Դու քո ճամփեն գրնա, քույրիկ» բանաստեղծությունը՝ «Դու քո ճամփեն գրնա...» վերնագրով:

ԵԼԺ 1, 196, 603:

1903. – Առաջին անգամ տպագրվում է (ԲԹ էջ 37) «Ընկերիս» («Իմ վեհ տենչերի, չըքնաղ վըշտերի...») բանաստեղծությունը:

Նվիրված է մտերիմ ընկերոջը՝ Փիլ. Վարդազարյանին:
ԵԼԺ 1, 198, 605:

1903. – Առաջին անգամ տպագրվում է (ԲԹ էջ 223) Ամնարի «Կուզեի հալվել, ձուլվել իմ երգին...» սկզբնատողով բանաստեղծության թարգմանությունը՝ «Ֆիրդուսի» վերնագրով:

ԵԼԺ 2, 255, 596-597:

1903. – Առաջին անգամ տպագրվում է (ԲԹ, էջ 227-228) Լոնգֆելլոյի «Children» բանաստեղծության թարգմանությունը՝ «Սանուկներին» վերնագրով, «Լոնգֆելլոյից» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 256, 597:

<1903>. – Գրում է «Ամնահությանը» («Այստեղ, անցվոր այս աշխարհում...») բանաստեղծությունը՝ «Նախերգանք» ենթավերնագրով:

ԵԼԺ 1, 209, 609:

1904

Հունվարի <1,2>, Թիֆլիս. – Բացիկ Պետերբուրգ՝ Նիկ. Աղբալյանին:

Հավանաբար Նոր տարվա շնորհավորանք:

ԳԱԹ ԹՖ, 851 (236(6)):

Հունվարի 5. – Ա. Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Շնորհակալություն է հայտնում, որ ստացել է Թումանյանի նոր (1903) ժողովածուն և կարդացել մեծ բավականությամբ: Դիտողություններ է անում և հայտնում, որ զեկուցում է պատրաստում՝ ժողովածուին նվիրված երեկույթին կարդալու համար:

ԳԱԹ ԹՖ, 972 (928):

Հունվարի 7. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Չափածո տողերով ողջունում է վերնատնականներին, ապա տեղեկացնում, որ ստացել է Թումանյանի նոր (1903) ժողովածուն և կարդացել մի շնչով: Մեծ գովեստով է խոսում գրքի մասին և տեղեկացնում, որ մտադիր է դրան մանրամասն անդրադառնալ առանձին հոդվածով: Որպես մշակման շնորհիվ կատարելության հասած բանաստեղծություն՝ վերլուծում է «Համերգը». «Այդ բանաստեղծությունը <...> մի սքանչելի գոհար է մեր բանաստեղծության մեջ, արժանի մեծ բանաստեղծի գրչի՝ Պուշկինի, Լերմոնտովի...»: Հայտնում է նաև, թե Պետերբուրգում տեղի է ունենալու Թումանյանին նվիրված երեկույթ:

ՈՒՅ 5, 369-371:

Հունվարի 8. – Ավ. Իսահակյանի բացիկը Թումանյանին՝ Վլադիկավկազից:

Գրում է, որ կարդացել է 1903 թ «Բանաստեղծություններ» ժողովածուն. «Գիրքդ բոլորը ծայրեծայր կարդացի. կարծիքներս հետո կհայտնեմ»:

ԱԻԵԺ 6, 43:

Հունվարի 16. – Լ ստորագրությամբ տպագրվում է Լեոյի գրախոսականը Թումանյանի «Բանաստեղծությունների» 1903 թ. հրատարակության մասին:

Միտումնավոր գրախոսական է՝ գրված բանաստեղծի նկատմամբ «Մշակի» դիրքորոշման ազդեցության տակ: Այսպես. «Ժողովածուն մի հայելի է, որի մեջ ընթերցողը տեսնում է մի հուսատու բանաստեղծ, որ սակայն չի զարգանում, առաջ չի

գնում, այլ մնում է քարացած: Պ. Թումանյան իբրև գյուղի մարդ, հայրենի բնության, հայրենի ավանդությունների ազդեցության տակ սկզբում հյուսել է երգեր և պոեմներ: Այստեղ մենք տեսնում ենք զգացմունք, վառ գույներ, բնությունից ստացած ուժեղ տպավորություններ: Ուշադրություն է հրավիրում Լոռու կյանքից վերցված «շատ գեղեցիկ նկարագրական էջերի», պատկերների, տեսարանների վրա, որոնք, սակայն, համարում է արտաքին զարդարանքներ, իսկ բովանդակության, գործողության մեջ «լեռներ երգող բանաստեղծը մնում է միակողմանի, միամիտ»: Իբրև եզրակացություն՝ նկատում է, թե բանաստեղծը տարիների ընթացքում չի զարգացել, առաջ չի գնացել, թե ընդհանրապես երգեր գրել նրան չի հաջողվում: Չի հավանում մասնավորապես «Պոետն ու Մուսան», «Սասունցի Դավիթը»: Աչքի ընկնող գործ է համարում «Դեպի Անհունը», որի մեջ, ըստ գրախոսի, չկա գործողություն, բայց կան զգացմունքի թռիչքներ:

«Մշակ», 1904, թիվ 2:

Հունվարի 19, Ս. Պետերբուրգ. – Տեղի է ունենում երեկույթ՝ նվիրված Թումանյանին և նրա նոր ժողովածուին:

Օրվա բանախոսը էր Արամ Տեր-Գրիգորյանը (տե՛ս հունվարի 5): Աղբայանը կարդում է «Շունն ու Կատուն», արտասանում է «Այվազովսկու նկարի առաջ», «Ն-ին» բանաստեղծությունները: Հանդիսատեսների խնդրանքով կարդում է «Անբախտ վաճառականները»: Ելույթ է ունենում նաև «Արյուն էջերի» հեղինակ Համազասպ Համբարձումյանը: Դիտողություններ է անում զեկուցման վերաբերյալ: Թումանյանին և Իսահակյանին համարել է մեր գրականության մեջ նոր՝ «Ազգային» ուղղության ներկայացուցիչ: Մասնավոր խոսակցության ժամանակ արտահայտում է նաև իրեն հատուկ ծայրահեղ կարծիքներ, թե, իբր, Թումանյանը «ամենևին բանաստեղծ չէ և մի երկու հաջող վանկերով ոտանավոր է գրել և այժմ չորացել» (ՌԻՀ 5, 302): Կամ՝ «600 ոտ սանդուղք» ցածր է Հովհ. Հովհաննիսյանից (ՌԻՀ 5, 372):

ԳԱԹ ԹՖ, 852 (236(7)):

Հունվարի <19-20>. – Երեկույթի մասնակիցների շնորհավորական հեռագիրը Թումանյանին՝ Պետերբուրգից:*

* Այդ հեռագիրը բանաստեղծը չի ստացել հասցեն սխալ գրած լինելու պատճառով: Ուստի Արամ Տեր-Գրիգորյանը նամակով (տե՛ս հունվարի 30) հաղորդում է հեռագրի բովանդակությունը ռուսերեն. «Собравшись и выслушав пространный реферат о ваших прекрасных поэтических произведениях, с восхищением шлем Вам сердечный привет, как нашему истинно-национальному прогрессирующему поэту. Вместе с тем горячо желаем благоприятных условий для процветания и полного раскрытия Вашего блестящего таланта на славу нашей небогатой и молодой, но развивающейся литературы:» (ՌԻՀ 5, 301-302):

ԳԱԹ ԹՖ, Թիվ 852 (236(7)):

<Հունվարի երկրորդ կես>, Թիֆլիս.—Նամակ Ա. Տեր-Գրիգորյանին (չի պահպանվել):

Պատասխանն է վերջինիս՝ հունվարի 5-ի նամակի:

ՌԻՀ 5, 301

Հունվարի 23. – Գաղտնի գրություն Թիֆլիսի ժանդարմական վարչության պետից Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտին:

Հայտնվում է, որ քաղաքական հանցագործներ Արշակ Ավագյանին, Արմենակ Չիլինգարյանին, Արշալույս Ջառայանցին, Վարդան Արոյանին ձերբակալելիս խուզարկության ժամանակ հայտնաբերվել են իրեղեն ապացույցներ (արգելված գրականություն, քաղաքական կոչեր, զենք) և Գերասիմ Պապովյանին ուղղված երեք նամակ. հիշատակվում են նաև Թումանյանի անունով անհայտ մեկից ստացված 62 թերթից բաղկացած նամակները:

ԹՏԹ ՓԲ, 47:

Հունվարի 24. – Ն. Աղբայանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Մանրամասնություններ է հաղորդում «Բանաստեղծությունների» երրորդ հատորին նվիրված երեկույթի մասին (տե՛ս հունվարի 19): Հայտնում է իր տպավորությունները. «Այստեղ առաջին անգամ տեսա, թե որքան թշվառ հասարակություն ունենք, դեռ պետք է ձեր իրավունքները պաշտպանենք, որ 30-40 տարեկան մարդիկ եք իբրև «նոր ուղղություն», մինչդեռ

իսկապես նորերը արդեն դուռը թակում են; Կարդա «Գերբնական հիվանդությունը» Արաբիի, այդ մարդը մեծ ապագա ունի և անմահ ուժով է սկսել իր գործը, որքան էլ պակասավոր լեզվի և արվեստի կողմից: Դու միայն համեմատիր նրա և Ավետիքի վերաբերմունքը դեպի սերը: Մեկը փշրված, մյուսն՝ առույգ և, չեն քաշվում ասելու՝ հզոր...: Մինչդեռ քեզ համարում են հրապարակով «ուտանավոր գրող»: Գամառ-Քաթիպայից հետո մարդ չեն ուզում ճանաչել, ուրեմն դեռ կռվով պետք է ձեռք բերեք «բանաստեղծի» իրավունքը, արդեն ծագում են նոր աստղեր: Որքան գործ կա անելու, որքան կարծիքներ խորտակելու, ինքնասիրություն վիրավորելու և գլուխներ դափնեզուրկ անելու...»:*

* Ն. Աղբալյանը իր այս գրգռված մտորումներով նկատի ունի «Մշակի» կողմնակալ վերաբերմունքը թուամյանի և Իսահակյանի հանդեպ:

ՈՒՅ 5, 372-373:

Հունվարի 27. – Ն. Աղբալյանի նամակը Ավ. Իսահակյանին՝ Պետերբուրգից:

Գրում է. «Մեր գրականության մասին գրելու տեղ չունենմ, կեղծ կլինի իմ դիրքը «Մուրճում». ինչպե՞ս կարելի է գրել մեր նոր մարդկանց մասին, առանց հանդիմանելու Լեո և ընկ. կարդացի՞ր «Մշակում» Օհանեսի մասին (տե՛ս հունվարի 16). ասա խնդրեմ այդ ի՞նչ բան է. ես կարծում եմ թշնամություն և տխմարություն, մեկ էլ երեսառածություն: Կարո՞ղ եմ «Մուրճում» արդարություն պաշտպանել, որ քեզ ժոնգլոռ է անվանում»:

ԳԱԹ, ԳԼՖ, 2641:

Հունվարի 30. – Ա. Տեր-Գրիգորյանի նամակը թուամյանյանին՝ Պետերբուրգից:

Մանրամասներ է հաղորդում թուամյանյանին նվիրված հունվարի 19-ի ցերեկույթից: Ընդգծում է մասնավորապես ներկաների ոգևորությունը և նրանց տված բարձր գնահատականը ինչպես բանաստեղծին, այնպես էլ երեկույթի բանախոսին. «...Շատերը զարմացան, որ մենք այդպիսի բանաստեղծ ենք ունեցել Կան այնպես ոգևորված ուսանողներ, որոնք այն կարծիքն էին հայտնում, որ «համաշխարհային գրականության

մեջ առաջնակարգ տեղ կբռնեիր, եթե որևէ ուրիշ լեզվով լինեիր գրած...»: Գրում է նաև Համազասպ Համբարձումյանի ծայրահեղ անբարյացակամ պահվածքի մասին (տե՛ս հունվարի 19): Բերում է երեկույթի մասնակիցների՝ բանաստեղծին ուղարկած հեռագրի տեքստը (տե՛ս հունվարի <19-20>):

ՈՒՅ 5, 301-302:

<Հունվար>. – Ոմն Հովհաննես Լալայանի նամակը թուամյանյանին:

Հայտնում է, որ հիացած է թուամյանյանի բանաստեղծությունների նոր ժողովածուով: Իրեն հուզել են պոեմները, լեզենդները, բանաստեղծությունները և, մանավանդ, այն լեզուն, որով գրված են դրանք: Խոստովանում է, որ գիտեր, թե արևելահայ աշխարհաբար ժողովրդական-գրական լեզվին ինչ հարստություն են պարգևել Աբովյանը, Աղայանը, Գամառ-Քաթիպան, «... բայց թե մեր աշխարհիկ գրական, բուն հայ լեզուն էլ այսպիսի գանձեր է թաքուցած եղել իր մեջ, որպիսիք առատորեն բխում են Ձեր պոեմներից,– այդ ես զգում էի, բայց չէի տեսել. այժմ տեսա և ճանաչեցի»: Այն կարծիքին է, որ «Մշակի», «Նոր-Դարի», «Մուրճի», «Լումայի» լեզուն հայերեն չէ, այլ մի բարբարոս, նույնիսկ ոչ մարդկային լեզու է. «... Ձեր տաղանդը մի փայլուն գոհար է, իսկ լեզուն մի ոսկե մատանի, որ իբրև վայելուչ շրջանակ, զորեղացնում է գոհարի փայլուն շուքը»:

ԳԱԹ ԹՖ, 1312 (698):

Հունվար. – Տպագրվում է Ավ. Ահարոնյանի գրախոսականը թուամյանյանի նոր «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուի մասին՝ Ա. ստորագրությամբ:

Անում է քննադատական դիտողություններ, այսինքն՝ թե բանաստեղծի անձնական ապրումները չեն կապվում հասարակական հանգամանքների հետ, հերոսների հոգեկան ապրումները ճիշտ չեն վերլուծված, չկա ըմբոստացում հասարակական արատների դեմ և այլն: Ի վերջո, սակայն, նկատում է, որ բանաստեղծի որոշ ստեղծագործություններ կապվում են «հայրենի իրականության» հետ: Բարձր է գնահատում և բավական

հաջող վերլուծում «Գուրբանի երգը»՝ եզրակացնելով. «Յ. Թումանյանը հայ բանաստեղծ է, հայ ժողովրդական բանաստեղծ՝ այս բառի լայն իմաստով»: Առանձնապես արժեքավոր է համարում «Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառականներ», «Անհծած հարսը» լեզենդները. «Գյուղի հոգեբանության ի՞նչ ճիշտ ըմբռնումն»: Պոեմներից բարձր է գնահատում «Սասունցի Դավիթը» և «Անուշը». այդ պոեմով Թումանյանը մի «համով հոտով», «մի բուրալից փունջ է կազմել»: Առանձնապես ընդգծում է հայ գյուղի կյանքի, ժողովրդի կենցաղի, սովորույթների, բարքերի, բնաշխարհի խոր իմացությունը և բացառիկ արտահայտչականությամբ պատկերելու հմտությունը: Մարդն ու բնությունը ծուլված են իրար, «մի հոգի ունեն ու մի հեք»:

«Մուրճ», 1904, թիվ 1, էջ 169-187:

Փետրվարի 2, Թիֆլիս. – Վ. Խանդամիրյանին է նվիրում «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուն:

Ընծայականը չափածո քառատող է.

Ինչ կարող է տալ մի պոետ
Քնքուշ, մաքուր, սրտալի,
Ողջ տալիս եմ իմ գրքի հետ,
Էլ բան չունեմ ավելի:

ԵԼԺ 1, 394, 664:

Փետրվարի 3. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Ս. Պետերբուրգից:

Հայտնում է, որ հողված է ուղարկել «Մուրճին»: Ուզում է իմանալ «զնի մասին»: Վախենում է թույլ չտան. «Ի՞նչ պիտի լինի իմ օրը: Վա՛յ այն գլխին, որ գրաքննիչից շատ վեր է տեսնում: Եթե այս տպվի, հետևյալ անգամ գրելու եմ «Проблема идеализма» նշանավոր ժողովածուի մասին, որ նոր վերջացրի»:

ՌԻՀ 5, 373:

Փետրվարի 9. – Ա. Ջարգարյանի բացիկը Թումանյանին՝ հունական Կորֆու կղզուց.

«Սիրելի Հովհաննես, այսօր 9, II, 1904 թագավորի հունաց և մեծ իշխանի հետ միասին այցելեցինք այս հրաշալի կղզին, քեզ մի քանի անգամ մտաբերեցի, որքան գեղեցկություններ... կապտմեն:

Բարևներ հարցանողաց:

Քո Ռուստեմ»:

ԳԱԹ ԹՖ, 1179 (626):

Փետրվարի 15, Թիֆլիս. – Մասնակցում է Ս. Թումանյանի մոր՝ Եղիսաբեթ Դուլիսանյանի հուղարկավորությանը: «Մշակ», 1904, թիվ 27:

Փետրվարի 15-ից հետո, Թիֆլիս. – Ցավակցական նամակ Ս. Թումանյանին նրա մոր մահվան կապակցությամբ (տեղի է ունեցել փետրվարի 12-ին):

Մասնավորապես նկատում է. «Ձարմանալի է: Ես այնքան չեմ ցավում, երբ որ ջահել մարդը կորցնում է իր ամուսինը, որքան ցավում եմ, երբ որ տեսնում եմ ծերունուն, որ հանկարծ մնում է մենակ:

Ինձ թվում է, թե ջահել սիրտը դեռ կարող է մխիթարվել, դեռ կրում է իր մեջ նորից ապրելու հույսը, և այդ հույսով էլ, թեկուզ վշտի արցունքների տակից, նայում է կյանքին ու աշխարհքին. իսկ ծեր մարդը այսպես չի, երբ որ կորցնում է իր բազմամյա միակ մտերիմ հոգին: Նրա համար մնում են աշխարհքում միայն նրա գերեզմանը և անցյալ օրերի հիշողությունները»:

Նամակի վերջում ցավակցական տողեր է գրել նաև Ղազարոս Աղայանը:

ԵԼԺ 9, 424-425, 663:

<Փետրվարի 15-ից հետո>, Թիֆլիս. – Մտադրություն Շանթի և Աղայանի հետ այցելելու Ս. Թումանյանին՝ ցավակցելու նրան մոր մահվան կապակցությամբ:

ԵԼԺ 9, 424, 663:

Փետրվարի 18, Թիֆլիս. – Ս. Տեր-Անդրեասյանին և նրա ընտանիքին է նվիրում «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուն՝ չափածո ընծայականով.

Իր սիրելի Սըխիթարին
Եվ գեր-ագնիվ նրա յարին
Ու կըլտալըլտան լավ Թամարին,*
Մեր փրկչական քսան դարին,

Քսան դարի չորրորդ տարին,
Չորրորդ տարու փետրվարին,
Փետրվարի տասնութ օրին
Նըվիրում է խորի՛ն-խորի՛ն,
խորին սիրով ու հարգանքով,
Այսքան հանգով ու տանջանքով
Չեղինակը:

* Չիշատակված թամարը Մխիթար Տեր-Անդրեասյանի դուստրն է, հետագայում՝ Չամլիկ թումանյանի կինը:
ԵԼԺ 1, 395, 665:

Փետրվարի 17. – Ավ. Իսահակյանի փետրվարի 17-ի երկտողը թումանյանին՝ Նոր Նախիջևանից.

«Դերենիկի «Կյանքի տեսիլը» երկի լավ բան է դուրս գալու, տեսնենք»:

ԱԻ ԵԺ 6, 44:

Փետրվարի 20. – Ար. Ջարգարյանի նկարագրող բացիկը թումանյանին՝ Կաննից:

Գրում է. «Պատահմամբ գտա էս գեղեցիկ նկարը, որը լավ իլյուստրացիա է քո «Փարվանայի»: Տեսնո՞ւմ ես, մեր հին լեգենդան որքան ժամանակակից է և դա մի նյութ է, որ չնայած իր հնությանը միշտ նոր է և միշտ ժամանակակից կլինի»: Այնուհետև գրում է հունաց թագավորի մոտ հյուրընկալվելու մասին և ապա՝ «թագավորը խնդրեց, որ հայերեն մի քանի խոսք ասես, ես չորս տող քո «Անուշից» ասեցի «Չամբարծման գիշեր, են դյութիչ գիշեր...», և նա շատ հավանեց»:

Նկարի տակ մեջբերում է արված «Փարվանա» լեգենդից.
«Ասում են, թե են Փարվանա ջահելներն են սիրավառ...»:

ԳԱԹ ԹՖ, 1180 (627):

Մինչև փետրվարի 22-ը. – Իշխանուհի Մ. Թումանյանը Կոմիտաս վարդապետին է ուղարկում բանաստեղծի՝ 1903 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուն:

խնդրում է «Անուշ» պոեմը իր երաժշտությամբ օպերայի վերածել:

ԹԺՅ, 479:

Փետրվարի 22. – Կոմիտաս վարդապետի նամակը Մ. Թումանյանին՝ Էջմիածնից:

Գրում է. «Ուրախությամբ կարդացի պ. Չոպի. Թումանյանի «Անուշը» և շա՛տ անուշ գտա»: Իր պատրաստակամությունն է հայտնում իշխանուհու «փափագն իրագործելու»: Գործը սկսելու համար խնդրում է, որ հեղինակը որոշ փոփոխություններ անի. «կրճատել», լրացնել «պակաս» տեղերը, նորից գրել «սարերի ոգիների ու ջրերի ալիքների երգը. լրացնելուց հետո արտագրե *ինքը* և ինձ ուղարկե, եթե երաժշտության բարեձայնության համար փոխելու բառեր լինեն՝ նշանակեն»: Խորհուրդ է տալիս «որքան կարելի է խույս տալ թուրքերեն բառերից՝ երգի ոգին պահելու համար», շտապել, որպեսզի ինքը կարողանա ուսումնասիրել և երաժշտության ծրագիրը մշակել:

ԿՆ, 48-49. ԹԺՅ, 479-480:

Մինչև փետրվարի 23-ը. – Բաց նամակ Նոր Նախիջևան՝ Ավ. Իսահակյանին (չի պահպանվել):

Այդ նամակում թումանյանը գրել է. «Շատ կուզենայի տեսնել, մի բան այնպե՛ս է տանջում, ենթադրածդ սխալ կլինի, կուզենայի խոսել...»: Պատասխան նամակում (փետրվարի 23) Իսահակյանը գրում է. «Սիրելիս, չեմ հասկանում այդ բառերը. ի՞նչ ես ուզում ասել. ի՞նչ տանջանք, ի՞նչ ենթադրություն, ինչի՞ մասին է. զանազան բաներ եմ մտածում, բայց բոլորովին գլխի չեմ ընկնում...»:

Այնուհետև թումանյանը գրել է. «Շատ եմ անհանգիստ, չեմ կարողանում պարապել»: Դա ևս անհասկանալի է Իսահակյանին. «Ախր, ինչո՞ւ, է, ի սեր աստծո. մի շուտով գրի՛ր, տեսնենք բանի էությունը...»:

ԱԻԵԺ 6, 44:

Փետրվարի 23. – Ավ. Իսահակյանի նամակը թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Գրում է, որ Նոր Նախիջևանում սկսել են զբաղվել հայ կյանքով և գրականությամբ, բայց իրենց (իրեն և թումանյանին) «շատ չեն ճանաչում. Ծատուրյանը մեզնից խալֆա է՝ հռչակված»: Անդրադառնում է թումանյանի մասին Լեոյի միտումնավոր հնդվածին. «Ի՞նչ է ուզում ասել այդ մարդը, պետք է դրան

իրեն տեղը ցույց տալ. «Վերնատունը» պիտի սկսե այսուհետև շատ եռանդուն գործել, և հասարակության մեջ իրեն մասին վկայել. մի հանդես հրատարակենք կամ այլ բան, մեր գեղարվեստական սկզբունքները պարզենք. մեր գրուպան ցույց տանք, թե չէ բոլորովին դրանք մեզ հող ու մոխրի հետ կհավասարեցնեն»: Խոսելով Աղբայրանի մասին՝ ենթադրում է, որ նա Վլ. Սոլովյովի ռուս կրոնաբարոյական փիլիսոփայության «խիստ ազդեցության ներքո» է: Խորհուրդ է տալիս Թումանյանին գրել «Հազարան բլբուլը», ինքն էլ «պիտի այս տարի նստի էպոսի համար»: Դեմիրճյանի «Կյանքի տեսիլի» մասին գրում է. «Հույս ունեմ, որ լավն է լինելու՝ գոնե մտքի կողմից, բայց տեխնիկական կողմը թույլ է, ինչ որ դուր է եկել ինձ նրա պոեմից՝ այդ «Հիմալայ» անունն է՝ գնում ենք Հիմալայ...»:

ԱԻԵԺ 6, 44-45:

Մարտի 16. – Մ. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին:

Ներկայացնում է «Բանաստեղծություններ» (1903) գրքի սպառված օրինակների հաշիվը: Թումանյանի բնակարանավարձի և իր ֆինանսական գործերի մասին գրում է. «Ձեզ համար զաղտնիք չէր, որ անցյալ սեպտեմբերին ես մի փոքր խումբ էի կազմել, որ հոգում էր Ձեր բնակարանի վարձը, բայց դժբախտաբար, վերջը այնպես էր, ինչպես միշտ լինում է այդպիսի դեպքերում: Առաջին երկու ամիսը կանոնավոր ստացա ամսավճարները, հետո քիչ քիչ պակսեցավ և վերջ համարյա բոլորը ցրվեցին, իսկ ես պատասխանատու էի տանտիրոջ առաջ: Այս տարի հանգամանքները ավելի ևս վատացան, որովհետև գրքի հրատարակություն կար և պետք էր մտածել գրքերի մասին: Ձեզանից չեմ ծածկում, որ իմ անձնական հաշիվներն էլ շատ խառնվեցին լրագրի պատճառով, որը կլանում է մեր բոլոր ուժերը, այդ պատճառով ես չեմ կարող անել այն, ինչ որ կուզենայի անել թե Ձեզ համար և թե ուրիշների: Այս տարի մինչև սեպտեմբերի 15-ը Ձեր բնակարանը ապահով է, իսկ հետո ինչ կլինի, առայժմ դեռ ոչինչ չեմ կարող ասել: Եթե դուք չեք ցանկանալ մնալ այդ տանը, կարող եք հունիսի 15-ին

դատարկել, որովհետև երկրորդ տարին ես չեմ խոստացել պ. Քոչարյանին, որ մինչև սեպտեմբեր կմնաք, բայց եթե մնաք՝ նա կստանա վարձը: Մի խոսքով, սիրելի պ. Թումանյան, մինչև սեպտեմբեր շատ ժամանակ ունեք մտածելու ապագայի մասին»:

ԹՏԹ, 44:

<Մարտ - ապրիլ>. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին:

Դիտողություններ է անում «Անուշը» օպերա դարձնելու վերաբերյալ և խնդրում է իմանալ կոմպոզիտորի (Կոմիտաս) կարծիքը. «Քո գնալուց հետո ես աչքի անցրի «Անուշիդ» վրա իմ արած նկատողությունները, ուստի եթե ժամանակ կունենաս, կոմպոզիտորիդ կարծիքը իմացիր»:

ԳԱԹ ԹՖ, 2083 (1043):

Ապրիլի 16. – Գրություն Թիֆլիսի պահնորդական բաժնի պետից նահանգական ժանդարմական վարչությանը:

Հայտնում է, որ հայերը ապրիլի 18-ին Թիֆլիսում մտադիր են ցույց կազմակերպել: Խնդրում է թույլ տալ խուզարկել և բանտարկել կամ պարզապես խուզարկել որոշ մտավորականների բնակարանները՝ հնարավորության սահմաններում թուլացնելու համար «դրոշակականների» և «հնչակյանների» մեջ գործող մտավորականների ազդեցությունը ցուցարարների վրա, կանխել անկարգությունները: Թումանյանի անունը այն ցուցակում է, ում բնակարանը ենթակա է խուզարկության*:

* Հայտնի չէ խուզարկություններ եղել են, թե ոչ:

ԹՏԹ ՓԲ, 47:

Ապրիլի 18, Թիֆլիս. – Հրապարակվում է լուր, որ ապրիլի 15-ին վախճանվել է Աբ. Հովհաննիսյանը:

«Մշակ», թիվ 78:

Ապրիլի 20, Թիֆլիս. – Տեղի է ունենում Աբ. Հովհաննիսյանի թաղումը:

Թումանյանի մասնակցությունը անհավանական չէ:

«Մշակ», թիվ 78:

Ապրիլի 20. – Թիֆլիսի ժանդարմական բաժնի պետի գաղտնի գրությունը նահանգական ժանդարմական վարչությանը:

Տեղեկություններ են տրվում 1903 թ. դեկտեմբերից սկսած հայ ազատագրական շարժման թիֆլիսաբնակ մասնակիցների, հատկապես «դրոշակականների» մասին: Հիշատակվում են նրանց ղեկավարները, ակտիվ գործիչները, նրանց աջակիցներն ու շարքային անդամները: Որպես ղեկավար՝ հիշվում է 12 ամուն: Ցուցակում երկրորդը Թումանյանն է. «Հովհաննես Թումանյանց Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Դսեղ գյուղից»:* Ցուցակում կան նաև այլ հայտնի անուններ՝ Հովսեփ Արղության-Երկայնաբազուկ, Երվանդ Լալայան, Ղազարոս Աղայան, Ավետիս Ահարոնյան և ուրիշներ:

* Թումանյանի մասին գրված է նաև, թե «заведует тайной типографией»: Թյուրիմացություն է: Ժանդարմական գրություններում հանդիպում են երկու այլ Թումանովներ, որոնցից մեկը հավանաբար ունեցել է տպարան: Բանաստեղծին անկասկած շփոթել են նրա հետ:

ԹՏԹ, ՓԲ, 47:

Ապրիլի <30>, Թիֆլիս. – Գնացքով մեկնում է Երևան:

Բանաստեղծի հետ էին նրա երեխաները: Գիշերվա ժամը 9-ին հասնում է Սանահին: Երեխաներին հանձնում է «մի ընտանիքի և մի պահապանի», որ հասցնեն Շուլավեր, իսկ ինքը շարունակում է ճանապարհը դեպի Երևան:

ԵԼԺ 9, 425:

Ապրիլի <30>. – Թիֆլիսից Երևան ճանապարհին Թումանյանի ուղեկիցն է Օլգա Մայսուրյանը:

Կնոջը գրում է. «ճանապարհին ուրախ եկանք, թեև իսկի ուրախանալու տրամադրություն չկար մեզս: Տիկին Մայսուրյանը հիացած էր մեր ծորերով և շարունակ ամեն գեղեցիկ ժայռ, գետի մի գեղեցիկ կտոր տեսնելիս ճչում էր՝ «վա՛յ ես մերա...»:

ԵԼԺ 9, 426:

Ապրիլ, Վենետիկ. – Մ. Պոտուրյանը Հովհաննես և Հարություն Թումանյաններին թյուրիմացաբար համարում է եղբայրներ:

Իր «Գրական հանդես» հոդվածում գրում է. «Ծանոթ են

այս գրագետը ու իր Հարություն եղբայրը իրենց խել մը բանաստեղծությունների հատորներով»:

«Բազմավեպ», 1904, թիվ 4, էջ 185:

Մայիսի 1. – Հասնում է Երևան:

Իջնում է Գարեգին վարդապետ Հովսեփյանի մոտ:
ԵԼԺ 9, 426:

Մայիսի 1, Երևան. – Բաց նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին.

«Երևան: Շատ լավ եմ, երկար վաղը կգրեմ»:
ԵԼԺ 9, 425:

Մայիսի 1, Երևան. – Վարդապետների մի խմբի ուղեկցությամբ կառքով շրջում է քաղաքում:

Լինում է Սարդարի պալատում, հարեմի սենյակներում, այցելում քաղաքի շուկան: Սարդարի ապարանքի մասին Վ. Խանդամիրյանին գրում է. «Տեսա Սարդարի պալատը, մի սքանչելի հնություն, որ արդեն կորչելու, քանդվելու վրա է: Ռուսները չեն պահում: Տեսա հարեմը, այսինքն հարեմի փլատակ, փոքրիկ, հոյակապ սենյակները, ուր այնքան գեղեցիկուհիներ հառաչել են ու անիծել, տանջվել են ու թաղվել այդ լայնարձակ դժոխքում, որ իր մութ ու տարտարոսական շինություններով ահագին տարածություն է եղել բռնած...»:

ԵԼԺ 9, 426-427:

Մայիսի <1,2>, Երևան. – Նամակ Դսեղ՝ Աշխեն Թումանյանին (չի պահպանվել):

Հարցնում է, թե երեխաները հաջող տեղ հասել են (տե՛ս ապրիլի <30>):

ԵԼԺ 9, 425, 664:

Մայիսի 2, Երևան. – Այցելում է Ջալալօղլու դպրոցի իր դասընկերուհի տիկ. Վարսենիկ Գևորգյանին:

Կնոջը գրում է. «...շատ ուրախացանք երկուսս էլ: Տղան դաշնամուրի վրա նվագեց իմ երգերից ու երգեց, որ ինձ շատ դյուր եկավ»:

ԵԼԺ 9, 427:

Մայիսի 2, Երևան. – Ճաշի հրավեր է ստանում գնացքում

ծանոթացած մի երիտասարդ վաճառականից, բայց չի կարողանում գնալ:

ԵԼԺ 9, 426:

Մայիսի 2, Երևան. – Մասնակցում է ինչ-որ եկեղեցու հիմնադրմանը նվիրված հասարակական ճաշկերույթին:

ԵԼԺ 9, 427:

Մայիսի 2, Երևան. – Նամակ Թիֆլիս՝ Օ. Թումանյանին:

Պատմում է Թիֆլիսից Երևան ճանապարհի, Երևանից ստացած իր տպավորությունների, կատարած այցելությունների մասին:

ԵԼԺ 9, 425-427:

Մայիսի 2, Երեկոյան. – Դուրս է գալիս Երևանից և ուղևորվում Էջմիածին:

Կնոջը գրում է. «Այսօր իրիկնապահին գնում եմ Էջմիածին»:

ԵԼԺ 9, 427:

Մայիսի 3, Էջմիածին. – Նամակ-երկտող Թիֆլիս՝ դստերը՝ Ն. Թումանյանին:

«Երեկ Երեկոյան եկա Էջմիածին: Շատ ուրախ եմ և առողջ»:

ԵԼԺ 9, 427:

Մայիսի 3, Էջմիածին. – Նոր բացիկ Թիֆլիս՝ Ն. Թումանյանին:

«Իսկույն նամակ գրեք Էջմիածին *доставления*, կստանամ»:

ԵԼԺ 9, 428

Մայիսի 4, Էջմիածին. – Նամակ Թիֆլիս՝ Վարյա Խանդավիրյանին:

Նամակի սկզբում ծանուցում. «Ա. Էջմիածինը» կարդա ոչ թե Սուրբ Էջմիածին, այլ՝ սոսկալի Էջմիածին»:

Նկարագրում է գնացքով Թիֆլիսից Երևան ճանապարհի մանրամասները: Հիշում է, թե ինչպես տարիներ առաջ հոր հետ անցել է նույն ճանապարհով, թե ինչպես հայրը ցույց է տվել ժայռի կատարին աճած մենավոր մի ծառ: Թախծում է, որ հիմա

ո՛չ հայրը կա, ո՛չ այդ ծառը. «Երբ որ հայրս մեռավ, ամեն անգամ այդ ծորով անցնելիս՝ ես տեսնում էի այն մենակ ծառը, միշտ ժայռի գլխին կանգնած, և կարծես թե հորս ձայնն էլ ապրում էր այն ծորում ու ամեն անգամ կանչում. նայի՛ր, Օհանես, է՛ն ծառին նայի՛ր, կարծես թե մենակ օքմին լինի ժայռի գլխին կանգնած: Այժմ անցնելիս նայեցի և... այլևս չկար է՛ն ծառը ու հետն էլ չկար այն հրաշալի պատրանքը՝ հորս ձայնը»:

Պատմում է դերասանուհի Օ. Մայսուրյանի՝ Լոռու բնաշխարհի գեղեցկություններով սքանչացած լինելու մասին. «... անդադար կրկնում էր – «վա՛յ, մե՛րա... ես մե՛րա...» և չգիտեմ ինչպես, տիկինը այդ գեղեցկությունների բուռն տպավորության տակ ուխտեց սիրել, հավիտյանս սիրել (իհարկե ոչ թե ինձ) և գտավ, որ չարժե մի րոպե անգամ ապրել առանց սիրելու: Ես լուռ էի:

– Դուք բանաստեղծ մարդ եք, ինչո՞ւ Դուք էլ չեք ուխտում, դիմեց ինձ:

– Բանաստեղծներն ավելի լավ են համարում սիրել, քան թե ուխտել, – պատասխանեցի ես ու ծիծաղեցի՛նք»:

Ապա նկարագրում է Անիի ավերակները, Արարատյան դաշտը, Մասիսը՝ «վեհափառ համարձակությամբ մտած երկնքի ծոցը», Արագածը՝ «իր լայն փեշերը փռած ու բազմած լեն ու բոլ»:

Հիացած է հատկապես այն տեսարանով, որ բացվում է Երևանի առաջնորդարանի պատշգամբից. «Ես չեմ մոռանալ այդ րոպեն: Ոտներիս տակ, ներքև պղտոր, մռնչալով, ոլորապտույտ անցնում է պատմական Հրազդանը (Արովյանի սիրած Ջանգին), հիշում եմ Արովյանի՝ Ջանգվին նվիրած կրակոտ տողերը, հիշում եմ Ալիշանի

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,

Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ...

Նայում եմ Արարատյան դաշտին, մտքովս անց են կենում մեր պատմության փառավոր շրջանները, կենդանանում եմ հոյակապ հերոսները, որ ապրել ու թաղվել են այդ դաշտում, սրտիս խոսում են սքանչելի լեգենդները, որ դեռ ապրում են այնտեղ: Վերջապես դեմ ու դեմս, ամպերից բարձր փայլատակում է Մասիսը, ծերունու քմահաճույքներով. մին մթնում, մռայ-

լում, մին բացվում ու ժպտում, բայց միշտ սիրում, միշտ խորհրդրդավոր. այնինչ աշուղը, հայոց կույր աշուղը, երգում է.

Գողգոթայից բարձր է Սասունի սարը,
Գողգոթայից դժար է Սասունի սարը,
Իմ խաչն առած ես բարձրանում եմ
Սասունի սարը...»:

ԵԼԺ 9, 428-431:

Մայիսի 4, Էջմիածին. – Այցելությունը հորինյան Հայրիկին.
«Նոր Հայրիկի մոտ էի: Հիվանդ է»:

ԵԼԺ 9, 431:

Մայիսի 4, Էջմիածին. – Մտադրություն հաջորդ օրը գնալու Արաքս.

«Վաղը գնում ենք խմբով Արաքսը տեսնելու»:

ԵԼԺ 9, 431:

Մայիսի 5, Էջմիածին. – Սակագրությունը իր լուսանկարի շրջերեսին.

«Կոմիտաս հայր սուրբին իր բարեկամը՝ Հ. Թումանյան»:

ՈՒՀ 4, 251:

Մայիսի <7, 8>. – Վերադառնում է Թիֆլիս:*

* Մայիսի 9-ին Մ. Բերբերյանին ուղղած նամակում գրում է. «Ես նոր եմ վերադարձել Երևանի ու Էջմիածնի կողմերից»:

ԵԼԺ 9, 431:

Մայիսի 9, Թիֆլիս. – Նամակ Նոր Նախիջևան՝ Մինաս Բերբերյանին:

Ցավակցություն է հայտնում նրա կնոջ՝ Սրբուհի Բերբերյանի վաղաժամ մահվան կապակցությամբ: Տեղեկացնում է նաև, որ Էջմիածնից հեռացել է «շատ ու շատ տխուր տպավորության տակ»:

ԵԼԺ 9, 431, 665:

Մայիսի 9, Թիֆլիս. – Իր նոր՝ «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուն ուղարկում է Մ. Բերբերյանին:

ԵԼԺ 9, 431:

Մայիսի 10. – Ավ. Իսահակյանի բացիկը Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում է իր սպանված լինելու տարածված կեղծ լուրերի, մայիսի 16-17-ին Մոսկվայից դուրս գալու, մի քանի օր Բաքվում մնալու, հունիսի սկզբին Թիֆլիսում լինելու մտադրության մասին: Թումանյանին հրավիրում է «իրենց կողմերը»՝ Ալեքսանդրապոլ:

ԱԻԵԺ 6, 45-46:

Հունիսի 17. – «Մի խումբ օրիորդների»՝ Հովնանյան դպրոցի ուսուցչուհիների հետ լինում է Օշականում:

Մասնակցում է Թարգմանչաց տոնի առիթով կազմակերպված ուրախություններին:

ԵԼԺ 9, 433, 666:

Հունիսի 18, Էջմիածին. – Նամակ Շուլավեր՝ Օ. Թումանյանին:

Գրում է, որ «օրիորդներին» ուղարկել է Ջվարթնոցի ավերակները տեսնելու, իսկ ինքը այցելել է հորաքրոջը. «Հրաշալի կին է: Թեև իմ հորաքույրներս բոլորը լավն էին, բայց սա առանձնապես լավ կին է»: Տեղեկացնում է, որ եղել է Օշականում: Հայտնում է հաջորդ օրը Երևան մեկնելու մտադրության մասին:

ԵԼԺ 9, 432:

Հունիսի 18, Էջմիածին. – Մտադրություն հաջորդ օրը Երևան գնալու:

ԵԼԺ 9, 432:

Հունիսի <18-19>, Էջմիածին. – Բացիկ Շուլավեր՝ Նվարդ Թումանյանին.

«Իր Նունիկին Հայրիկը համբույր է դրկում Էջմիածնից»:

ԵԼԺ 9, 433:

Հունիսի <19-20>, Օշական. – Գրում է «Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում» սկզբնատողով բանաստեղծությունը՝ Թարգմանչաց տոնի տպավորության տակ:

ԵԼԺ 1, 210, 609-610:

Հունիսի 21, Էջմիածին. – Մակագրություն Խրիմյան Հայրիկի լուսանկարով մի բացիկի վրա.

«Անցած օրին օր չի հասնիլ. 21 հունիսի, Էջմիածին. Հ. Թումանյան»: Ապա մյուս երեսին. Հարգելի օրիորդ Հ. Մարկոսյանին, նախագահը»:

* Մակագրությունից երևում է, որ բանաստեղծը հունիսի 21-ին եղել է Էջմիածնում և մասնակցել ինչ-որ ուրախության կամ ժողովի, որի նախագահը (թամադան) եղել է ինքը:

ԵԼԺ 9, 667:

<Մինչև հունիսի 21, 22-ը>, Էջմիածին. – Մասնակցում է «մի հրավերքի» և «մի խումբ օրիորդներից» (տես հունիսի 17) ծաղկեփունջ ստանում բացիկով:

Բացիկի վրա մակագրություն. «Ազնիվ բանաստեղծ պ. Թումանյանին մեր հարգանքները»:

ԵԼԺ 9, 433, 667:

Հունիսի <21-22>, Էջմիածին. – Նույն բացիկն ուղարկում է Շուլավեր կնոջը:

Գրում է «օրիորդներից» ստացած ծաղկեփունջի և Մանանդյանի՝ Վարյա Խանդամիրյանին արած ամուսնության առաջարկության մասին. «Վարյային Մանանդյանն առաջարկություն արավ: Վարյան ընդունեց: Դեռ ոչ ոքի չասես»:

ԵԼԺ 9, 433:

Հունիսի 22, Էջմիածին. – Բացիկ Շուլավեր՝ դստերը՝ Ն. Թումանյանին.

«Իմ Նունիկին համբույրներ եմ ղրկում Արարատյան դաշտից»:

ԵԼԺ 9, 433:

Հունիսի 22, Էջմիածին. – Ստանում է Գ. Տեր-Սկրտչյանի լուսանկարը մակագրությամբ. «Սիրելի Հովի. Թումանյանին. Գ. Տ. Սկրտչյան»:

ՈՒՀ 3, 58:

Մինչև հունիսի 24, Էջմիածին. – Նամակ Աբասթուման՝ Հ. Մելիք-Հայկազյանին (չի պահպանվել):

Նամակն ստորագրել են նաև Հովնանյան դպրոցի ուսուցչուհիները, որոնք նույնպես այդ օրերին Էջմիածնում էին (տես հունիսի 17):

ԳԱԹ ԹՖ, 1699 (879):

Հունիսի 24. – Այցելում է Անի:

Տպավորությունների մատյանում, Արամ Դալլաքյան և Պետրոս Դամբարյան ստորագրությամբ հունիսի 16-ի՝ «Եկի, տեսի ու ողբացի. հիշելով անցյալը, տեսնելով ներկան, սիրտս մորմոռված դառնում եմ արտասվալի աչքերով» մակագրությանն ի պատասխան, գրում է. «Ես էլ եկի, տեսի ու ողբացի այս դավթարի վրա»: Մատյանի հաջորդ՝ 84 էջի վրա Վարյա Խանդամիրյանի, Նունե Թայիրյանի, Մեծբայանի, Աթանասյանի ստորագրություններն են:

ԵԼԺ 9, 667-668:

Հունիսի 24, Անի. – Այցելուների մատյանում գրում է «Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ» սկսվածքով քառատողը:

ԵԼԺ 1, 211, 610:

Հունիսի 24, Անի. – Բացիկ Շուլավեր՝ Աշխեն Թումանյանին.

«Համբուրում եմ Աշխենին»:

ԵԼԺ 9, 433:

Հունիսի 24. – Հ. Մելիք-Հայկազյանի նամակը Թումանյանին՝ Աբասթումանից:

Իր ուրախությունն է հայտնում Էջմիածնից հավաքական բացիկ ստանալու համար: Հույս ունի, որ Էջմիածնում կտեսնըվեն: Ստացած բացիկը ուղարկելու է Շուլավեր:

ԳԱԹ ԹՖ, 1699 (879):

Հունիսի <26, 27>. – Վերադառնում՝ Թիֆլիս:

ԵԼԺ 9, 434, 669:

Հունիսի 26, 27, Թիֆլիս. – Բացիկ Շուլավեր՝ Օ. Թումանյանին:

Հայտնում է, որ Հ. Մանանդյանի և Մեսրոպ Տեր-Մովսիս-

յանի հետ հասել է Թիֆլիս: Տեղեկացնում է. «Արդեն Վարյան
նշանված է»:

ԵԼԺ 9, 434:

Հունիսի 30, Շուկավեր. – Ստանում է Հ. Մելիք-Հայկազ-
յանի՝ հունիսի 24-ի բացիկը Աբասթումանից:

ԳԱԹ ԹՖ, 1699 (879):

<Հունիս – հուլիս>. – Հ. Մելիք-Հայկազյանի երկու բաց
նամակները Թումանյանին (չեն պահպանվել):

ՈՒՀ 5, 303:

<Հուլիսի առաջին տասնօրյակ>. – Կարդում է Լեոյի դրվա-
տական հոդվածը («Մշակ», 1904, թիվ 145) Ալեքսանդրապոլում
հրատարակված «Ոստիկ»* ժողովածուի, ինչպես նաև Մ.
Թումանյանի (Իմենթո)՝ այնտեղ տպագրված «Բողոք»**
ակնարկի մասին:

* ժողովածուն ամփոփում էր միայն կանանց (արևելահայ և
արևմտահայ) տարբեր ժանրի ստեղծագործություններ՝ ինչպես
գեղարվեստական, այնպես էլ հասարակագիտական-հրապարակա-
խոսական:

** Մ. Թումանյանի ակնարկը նվիրված էր կանանց իրավունքների
պաշտպանությանը:

ԵԼԺ 9, 434, 669-670:

<Հուլիսի կեսեր>, Շուկավեր. – Նամակ Կոջոր՝ Մ. Թու-
մանյանին:

Հետաքրքրվում է իշխանուհու հասարակական ծրագրե-
րով: Տեղեկացնում է. «Կարդացի Լեոյի հոդվածը «Ոստիկի»
մասին և Ձեր, չգիտեմ ընչի ասեմ, վեպիկի, պատկերի, մի խոս-
քով Ձեր գրածի: Առհասարակ բոլոր քնքույշներդ շատ բախտա-
վոր պրծաք Լեոյի ճանկից.* մարդը գովում է կարգին և, մինչև
անգամ, հրավիրում է միասին աշխատելու:

Իհարկե, դուք կսխալվեք, եթե կարծեք Ձեզ «Մշակն» են
հրավիրում միասին աշխատելու կամ ճիշտ որ այդ կարծիքին
են. դրանով Լեոն իր կավալերության պարտքն է կատարում»:

* Ակնարկում է իր «Բանաստեղծություններ» (1903) գրքի մասին
Լեոյի միտումնավոր հոդվածը («Մշակ», 1904, թիվ 1):

ԵԼԺ 9, 434, 669:

Մինչև հուլիսի 11-ը, Թիֆլիս. – Նամակ Աբասթուման՝ Հ.
Մելիք-Հայկազյանին (չի պահպանվել):

ՈՒՀ 5, 303:

Հուլիսի 11. – Հ. Մելիք-Հայկազյանի նամակը Թու-
մանյանին՝ Աբասթումանից:

Խնդրում է իր անունից շնորհավորել Վ. Խանդամիրյանի
և Հ. Մանանդյանի նշանդրեքը: Աբասթումանի բոլոր ծանոթների,
իր ու իր հարազատների անունից հրավիրում է բանաստեղծին
իրենց մոտ՝ «Աբասթումանի առողջարար օդը ծծելու»:

ՈՒՀ 5, 303:

Հուլիսի 25-ից հետո մինչև հուլիսի 27-ը, Շուկավեր. –
«Մշակում» (հուլիսի 25, թիվ 157) կարդում է «Պորտ-Արտուրի
շտուրմը» հոդվածը:

Ռուսական զորքի պարտության մասին ռուս-ճապոնական
պատերազմում: Փիլ. Վարդազարյանին գրում է. «Ձարմանալի
է՝ ինչպես ջարդվում են մերոնք, և այնքան մոտ են թողել
թշնամուն, որ ուզեն-չուզեն պետք է վերջնական հաշիվ տեսնեն:
Այստեղ ուշ-ուշ ենք տեղեկություններ ստանում:

ԵԼԺ 9, 435:

Մինչև հուլիսի 27-ը, Թիֆլիս. – Ստանում է Մ. Տեր-Անդ-
րեսայանի նամակը Բաքվից (չի պահպանվել):

Գրում է, թե սկզբունքով դեմ չեն բանաստեղծին օգնելու,
բայց ամառային արձակուրդներ են, և կողմնակիցները՝ ցրված:
ԵԼԺ 9, 435:

Մինչև հուլիսի 27-ը, Թիֆլիս. – Նամակ Բաքու՝ Մ. Տեր-
Անդրեսայանին (չի պահպանվել):

Հասցեատիրոջ անհայտ նամակի պատասխանն է: Գրել
է. «Սկզբունք մեր տանն էլ կա, թե կարող են, մի քիչ փող դրկեն»:
ԵԼԺ 9, 435:

Հուլիսի <27>, Շուկավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վար-
դազարյանին:

Հարցնում է, թե ինչպես է ընթանում իր մասին նրա հոդ-
վածի գործը:* Հունորով նկատում է. «Աշխատիր դուրս բերել,

որ ես մեծ բանաստեղծ եմ, թե չէ պակասի համար չարժե այդքան քրտնել»:

* Խոսքը վերաբերում է Փիլ. Վարդազարյանի «Վշտի և թախծի երգիչ Յովհ. Թումանյան» հոդվածին, որ տպագրվում է 1905 թ. առանձին գրքուկով:

ԵԼԺ 9, 435:

Յովհիսի <27>, Շուկավեր. – Մ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից (չի պահպանվել):

Խնդրում է ուղարկել «Սասունցի Դավթի» շարունակությունը: * Այդ մասին օգոստոսի 7-ին Փիլ. Վարդազարյանին ուղղած նամակում բանաստեղծը գրում է. «Պատրաստություն եմ տեսնում «Դավթին» հարսանիք անելու: Հարսանիքի ծախքը նրանցն է»:**

* Խոսքը վերաբերում է «Սասունցի Դավթի» պոեմի Բ մասին և դրա տպագրության համար Բաքվի հրատարակչական ընկերության հետ ունեցած պայմանավորվածությանը: Հետագայում ևս Բաքվի բարեկամները մի քանի անգամ հիշեցրել են բանաստեղծին այդ մասին: Բայց միշտ նա ձգձգել է: Վերջում բոլորովին հրաժարվել է պոեմի շարունակությունը գրելուց՝ պատճառաբանելով, թե տրամադրություն չունի:

** Ակնարկն այն մասին է, որ նամակի հետ Մ. Տեր-Անդրեասյանը բանաստեղծին փող է ուղարկել:

ԵԼԺ 9, 440, 672:

Յովհիսի <29>, Շուկավեր. – Նամակ Ղարաքիլիսա՝ Վ. Մանանդյանին (Խանդամիրյան):

Պատմում է, թե ինչպես է անցկացնում շուկավերյան իր առօրյան: «Երբեմն էլ սարալանջից դիտում եմ երկինքը: Ա՛խ, ինչ հրաշալի բան է երկինքը: <...> Սքանչելի բան է երկինքը, բայց ո՞վ է գլուխը վեր բարձրացնում»: Հետաքրքրվում է նորապսակ ընտանիքի կյանքով, Հակոբի (Մանանդյան) գիտական գործերով:

ԵԼԺ 9, 436-437:

Յովհիսի <29>. – Մասնակցում է Ն. Աղբալյանի մոր հուղարկավորությանը:

ԵԼԺ 9, 437:

<Յովհիսի վերջեր>, Շուկավեր. – Մտադրություն Ն. Աղբալյանին հրավիրելու Շուկավեր «ընթերցումների»:

* Ինչպես երևում է Շանթի օգոստոսի 2-ի բացիկից, թերևս Ն. Աղբալյանի ինչ-որ գործը պետք է կարդային:

ԳԱԹ ԹՖ, 1880 (109):

<Յովհիսի վերջեր>, Շուկավեր. – Նամակ Թիֆլիս՝ Լ. Շանթին (չի պահպանվել):

ԳԱԹ ԹՖ, 1880 (109):

<Յովհիսի երկրորդ տասնօրյակ>, Շուկավեր. – Նամակ Դիլիջան՝ Վ. Խանդամիրյանին (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 436:

<Օգոստոսի 4>, Շուկավեր. – Ստանում է Լ. Շանթի բացիկը Թիֆլիսից (չի պահպանվել):

ԳԱԹ, ԹՖ, 1880 (109):

Մինչև օգոստոսի 7-ը, Թիֆլիս. – Ստանում է Փիլ. Վարդազարյանի նամակը (չի պահպանվել):

ԵԼԺ 9, 428:

Օգոստոսի 7, Շուկավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Պատասխանում է վերջինիցս մինչև օգոստոսի 7-ը ստացած նամակի: Պատասխանում է իրեն ուղղված երեք հարցերին՝ «Դու քո ճամփեն գնա, քույրի՛կ...», «Պանդուխտ եմ, քույրի՛կ...», «Ընկերիս» բանաստեղծությունների վերաբերյալ:

Առաջինի մասին գրում է. «Վտանգավոր տեղ ես ընկել: Այս այն ոտանավորներից է, որոնց մեկնությունը իրենցից շատ ու շատ է երկար, որոնք կենսագրություն ունեն, պատմություն ունեն իրենց ետևը: Այդպիսի ոտանավորների տողերում է, որ թաքնված է լինում բանաստեղծի հոգին»:

Երկրորդի մասին. «Եվ ահա այսպես: Դուրս եկավ մի հոգի, որ կորցրած կյանքի հաճույքն ու կնոջ սերը և ամեն լավ բան, ելած կյանքի ամեն ճամփից, ազահ, անվերջ ու անհանգիստ թափառում է, փախչում է *անհայտ* օրերի *խավարի* ընդդեմ: Գուցե և դրանից էլ է, որ ես չեմ կարողանում լուրջ ոգևորվել ու պարապել կամ ապրել. ամեն բան աչքիս դատարկ է թվում և ուզում եմ միայն մի կերպ ժամանակն անց կացնել՝ քեֆի մեջ լինի, թե գրույցի, որովհետև անցավորը ընկել է իմ սրտից, իսկ

անանցի հետ կապված չեմ դեռ, *անհայտը*, որ պետք է ունենա ոգևորված գրողը, դեռ խավար է, մութն է ինձ համար, ու... թափառում է իմ հոգին»: Նկատում է, որ այդ *անհայտ* – ը «Ընկերիս» բանաստեղծության մեջ հիշատակված «Վեր»-ն է, «բայց, ա՛խ, նա այնքան, այնքան է հեռու...»: «Այդ *հեռու* – ին հասնելը կամ այդ խավարը պարզելը հնարավոր է, իհարկե, միայն զարգացումով, որ ես երբեք ունենալու չեմ և միշտ *թափառելու է իմ հոգին*»:

Երրորդի մասին. «Այդ ոտանավորի համար քեզ նամակ եմ գրել և նամակ առել (տե՛ս 1902, օգոստոսի 10). թե կորցրել ես – պատիժը քաշիր, թե մոռացել ես՝ նույնպես: Այդ կմնա առանց պատասխանի»:

ԵԼԺ 9, 438-440:

Օգոստոսի 13. – Փիլ. Վարդազարյանի օգոստոսի 13-ի նամակը (ԳԱԹ, ԹՖ, 2063(ց.2, թիվ 454(5) Թումանյանին՝ Թիֆլիսից: Խնդրում է, որ իր «Վշտի ու թախծի երգիչ Հովհաննես Թումանյան – քննադատական փորձ» ուսումնասիրության մեջ բարձրացված հարցերի վերաբերյալ իր կարծիքը բանաստեղծը հայտնի կարճ՝ այո՛ կամ ո՛չ:

ԵԼԺ 9, 442:

<Մինչև օգոստոսի 17-ը>. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից (չի պահպանվել):

Ուզում է գտնել, թե Թումանյանն ինչպես է հասկանում բանաստեղծի իր կոչումը, և դրա պատասխանը որոնում է «Պոետն ու Մուսան» պոեմի տողերում:

ԵԼԺ 9, 441:

Օգոստոսի 17, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդազարյանին:

Պատասխանն է մինչև օգոստոսի 7-ը Փիլ. Վարդազարյանից ստացած նամակի: Շարունակվում է հարց ու պատասխանը բանաստեղծի և նրա մասին ուսումնասիրություն գրող Վարդազարյանի միջև՝ առհասարակ Թումանյանի ստեղծագործության, մասնավորապես «Անծուկ», «Եթե իրավ է...», «Վարոտ», «Է՛յ

աստղեր, աստղեր», «Брожу», «Ընկերիս» բանաստեղծությունների շուրջ: Թե ինչպես է պատկերացնում բանաստեղծի իր կոչումը հարցին Թումանյանը պատասխանում է. «Այդ հարցի պատասխանն է լինելու շատ ընդարձակ չափով «Հազարան բյուլբյուլը»»: «Идеал»-ի մասին նկատում է. «Այդ այն «անհայտն է», որի մասին գրել եմ նախորդ նամակում» (տե՛ս օգոստոսի 7): Բանաստեղծություններում գործածված «քույրիկ»-ի մասին. ««Քույրիկը» դուրս է եկել հոգեկան կարոտի ուժից, և այդ սիրո մեջ առհասարակ հոգին շատ է իշխում»:

Վերջում անդրադառնում է իր «Բանաստեղծություններ» (1903) գրքի մասին Ահարոնյանի քննադատական հոդվածին (տե՛ս հունվար):

ԵԼԺ 9, 440-442:

Օգոստոսի 18, Շուլավեր. – Նամակ Փիլ. Վարդազարյանին:

Վերջինիս՝ օգոստոսի 13-ի նամակի պատասխանն է: Հիմնավոր բացատրություններ է տալիս իր մի քանի բանաստեղծությունների մասին Վարդազարյանի դիտողությունների վերաբերյալ: Դրանցից մի քանիսի հետ համաձայն չէ և մանրամասնորեն շարադրում է իր հիմնավորումները, մի քանիսի համար էլ գովում է քննադատ ընկերոջ խորաթափանցությունը. «Զարմանալին այն է, որ դու հասկացել ես այդ ոտանավորները և չես հասկանում, որ հասկացել ես»:

Անդրադառնալով քննադատի այն դիտողությանը, թե «Դու քո ճամփեն գնա, քույրիկ...» բանաստեղծության որոշ հատվածներ «չինձու» են, «բայրոնա-լերմոնտովյան», ուրեմն ճիշտ չեն՝ նկատում է. «Ես նոր, քո դրդումով եմ ուշադրություն դարձնում դրանց վրա, բայց համոզված եմ ասում, որովհետև անկեղծ են ասված, այնպես, ինչպես զգացել եմ. իսկ ես գիտեմ, որ եթե այդպես եմ զգացել՝ արդեն ճիշտ է, բնական է, իմաստ ունի, թեկուզ ինքս էլ չկարողանամ բացատրել»:

Առհասարակ քննադատի և նրա կոչման մասին գրում է. «Քննադատը թարգմանիչ է: Նա պետք է թարգմանի բանաստեղծին և թարգմանի ոչ թե նրա բառերը, այլ նրա սիրտը:

Աստուծու նման նրտագետ լինի ու խորաթափանց, գտնի ամեն բանի աղբյուրն ու արմատը, որ կարողանա ճշմարիտ գնալ ու արդար դատել: Այնժամ կպարզվեն մթությունները, հասկանալի ու բնական կերևան ըստ երևույթին հակասությունները և քառսի մեջ կհայտնվի ներդաշնակությունը՝ եթե կա: Ամենց առաջ հարկավոր է, որ մեկը բանաստեղծ լինի բառի լուրջ իմաստով: Նրանից հետո պետք է նրան հասկանալ: Եվ այս դժվար բան է: Նա ինքն էլ հաճախ իրեն չի հասկանում, կարող է սխալ մեկնություն տալ իր այս կամ այն երգին ու երկին, ճիշտ այնպես, ինչպես մայրը կարող է գլխի չընկնել, թե ինչ շնորհք ունի իր որդին, որ ինքն է ծնել»:

Վերջում ցավ է հայտնում, որ զարգացման մասին իր երազանքը երազանք էլ կմնա. «Իմ լավագույն ուժերն ու տարիներն անցել են արդեն»:

ԵԼԺ 9, 442-446:

<Օգոստոսի երրորդ տասնօրյակ>, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Նամակից երևում է, որ բանաստեղծի ու իր քննադատի երկխոսությունն արդեն ավարտվել է, և նրանք ընդհանուր եզրակացության են եկել. «Պրծանք»: Խորհուրդ է տալիս քննադատին. «...բրոշյուրդ կարդաս հայերեն լավ գիտեցող մեկի մոտ, որ լեզվական սխալներ չանես»:

ԵԼԺ 9, 446, 674:

<Օգոստոսի երրորդ տասնօրյակ>, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Հայտնելով իր գոհունակությունը, որ քննադատ ընկերը «այդքան սիրով է գրում» իր հոդվածը՝ խնդրում է ձեռագիրը Օ. Թումանյանի հետ ուղարկել իրեն, որ «եթե թույլ կտաս, կարծիքս հայտնեմ»:

ԵԼԺ 9, 446-447

<Օգոստոսի երրորդ տասնօրյակ>, Շուլավեր. – Վարդում է Բելինսկու հոդվածները:

Փիլ. Վարդապարյանին գրում է. «Տե՛ր աստված, ինչ գար-

մանալի նման են ազգերն իրար, ինչքան նման են ազգերի կյանքի որոշ շրջաններն իրար: Այժմ շատ հետաքրքրական է քո հոդվածն ինձ համար»:

ԵԼԺ 9, 447:

<Օգոստոսի վերջ>, Շուլավեր. – Նամակ Թիֆլիս՝ Փիլ. Վարդապարյանին:

Կարդացել է վերջինիս «Վշտի և թախծի երգիչ Յովհաննես Թումանյան...» գրքույկը: Այն կարծիքին է, որ քննադատը հիմնականում ճիշտ է հասկացել իր ստեղծագործության ոգին, այն, որ ինքը «իր ժողովրդի թշվառության երգիչն է, թախծի, վշտի բանաստեղծ, որ այդ թախծը, այդ տխրությունը ունի զանազան աղբյուրներ, բայց բոլորը մի տեղից են գալիս ու մի տեղ են գնում և այդ է մեր հայկական կյանքը, հայկական աշխարհը»: Վկայակոչելով Բելինսկու կարծիքը գրականության ժողովրդայնության մասին՝ եզրակացնում է. «Ամենից առաջ ամեն բանաստեղծ իր ժողովրդի սիրտը պետք է լինի: Սակայն նրանից հետո կա մի ուրիշ մեծ խնդիր, թե որքան հաջող է նա կարողացել հառաչել այդ մեծ հառաչանքը: Չէ՞ որ բանաստեղծը վարպետ է»: Ափսոսանք է հայտնում, որ այս վերջին տեսանկյունից քննադատը քիչ է անդրադարձել իր ստեղծագործությանը. «... այնպես ես փռել ու ներկայացրել, որ բացի լավից, ուրիշ բան չի երևում»:

ԵԼԺ 9, 447-449:

Օգոստոս. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից: Հայտնում է իր ուրախությունը, որ Թումանյանից վերջապես նամակ է ստացել: Գրում է նաև իր և կնոջ՝ Ջավոյի գալը հետաձգվելու, Դերենիկի, Նիկոլի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1880 (109):

Օգոստոս. – Նամակ Հ. Մանանդյանին՝ «բարկացած տրամադրությամբ» (չի պահպանվել):

ԳԱԹ ԹՖ, 1645 (863):

Օգոստոս. – Նամակ Հ. Մանանդյանի՝ «ղեսից - դենից» բովանդակությամբ:

ԳԱԹ ԹՖ, 1645 (863):

Սեպտեմբերի 11. – Գ. Մանանդյանի նամակը թումանյանին՝ Էջմիածնից:

Տեղեկացնում է, որ ստացել է թումանյանի «դեսից-դենից» նամակը: Շրջապատված է լավ մարդկանցով: Հույս ունի, որ կտեսնվեն Էջմիածնում:

ԳԱԹ ԹՖ, 1645:

Սեպտեմբերի 24. – Համլիկ թումանյանի՝ սեպտեմբերի 24-ի բաց նամակը հորը՝ Թիֆլիսից:

Տեղեկություններ է հաղորդում իր մասին:

ԹՏԹ, 3793:

Սեպտեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է («Մուրճ», 1904, թիվ 9, էջ 76) «Տրտունջ» («Օրերս անպըտուղ, տխուր, ձանձրալի...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 9, 197, 604:

Հոկտեմբերի 21. – Հայտարարություն Եղիշե թուփյանի՝ պատի, գրպանի, սեղանի օրացույցների՝ շուտով լույս տեսնելու մասին:

Աշխատակիցների ցուցակում հիշատակվում են թումանյանը, Աղայանը, Ահարոնյանը, Իսահակյանը, Փափազյանը, Ծատուրյանը, Կարա-Մուրզան, Կոմիտասը և ուրիշներ:

«Մշակ», 1904, թիվ 230:

Նոյեմբերի 2. – Հայտարարություն, որ շուտով լույս կտեսնեն Ե. թուփյանի խմբագրած՝ պատի, գրպանի և սեղանի «Լույս» օրացույցները:

«Մշակ», 1904, թիվ 239:

Մինչև նոյեմբերի 12-ը. – Հիմնադրվում է նոր հրատարակչական ընկերություն՝ «Ստ. Լիսիցյան և ընկ.» անունով:

Տպագրվել է «Հայ բանաստեղծներ» խորագրով հինգ գրքույկ՝ Հովի. թումանյան՝ «Սասունցի Դավիթ», «Անուշ», «Լեզենդներ», Լ. Շանթ՝ «Երգեր», «Լեռան աղջիկը»: Այնուհետև «Հեքիաթների աշխարհ» մատենաշար՝ Ղ. Աղայան՝ «Գյուլնազ տատի հեքիաթը», «Այծատուր», «Զանգի-Զրանգի», «Մանուկ խան», «Ասլան բալա», «Եղեգնուհի», «Անտառի մանուկը», Դե-

միրճյան՝ «Ուխտավորները», «Աշուղի հեքիաթը»:

«Մշակ», 1904, թիվ 248:

Նոյեմբերի 17. – Հայտարարություն, որ «Ստ. Լիսիցյան և ընկ.» հրատարակչական ընկերությունը լույս է ընծայել թումանյանի «Սասունցի Դավիթը», «Անուշը», լեզենդները, Շանթի «Երգերը», «Լեռան աղջիկը»:

«Մշակ», 1904, թիվ 252:

Նոյեմբերի 27, Թիֆլիս. – Նամակ «Մշակի» խմբագրությանը:

Խնդրում է, որ իրեն չչփոթեն Հարություն և Արշակ թումանյանների հետ և ոչ էլ եղբայրներ են, ինչպես վարվել է «Բազմավեպը» (տե՛ս ապրիլ, Վենետիկ): Բողոքում է նաև, որ դասագիրք կազմողները իր ոտանավորները փոփոխում են իրենց ուզածի պես և ներկայացնում որպես իրենցը.* «Այս պարոններից էլ, դասագիրք կազմողներին, արգելում են այսուհետև օգտվելու իմ ոտանավորներից առանց իմ համաձայնությունն առնելու»:

* Նկատի ունի Գ. ճուղուրյան, «Հայոց լեզու», Բ տարի, Թիֆլիս, 1895 և Նիկ. Տեր-Ղևոնդյան, «Մայրենի լեզու», Թիֆլիս, 1904 դասագրքերը:

ԵԼԺ 6, 137, 593:

Նոյեմբերի 28. – Տպագրվում է նոյեմբերի 27-ին՝ «Մշակի» խմբագրությանն ուղղված նամակը («Մշակ», 1904, թիվ 262):

ԵԼԺ 6, 593:

Նոյեմբերի <29>. – Ն. Աղբալյանի նամակը թումանյանին՝ Պետերբուրգից:

Չափածո տողերով ներկայացնում է իր փայփայած հույսերի փլուզումը, տխուր հոգեվիճակը և ավարտում.

Չէի ուզի, որ գրեմ
Չեզ այս տեսակ տխուր էջ,
Բայց ի՞նչ անեմ, որ հույզեր
Էլ չեն ծնում սրտիս մեջ:
Մնաս բարև, Օհանես,
Եվ դու՛, սիրուն իմ Դերեն,
Եվ դու, Շանթիկ, թող մի ժամ

Դարդ ու վիշտս ձեզ գերեն...
ՈՒՅ 5, 373-374:

Նոյեմբեր, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդագարյանին.
«Էս իրիկուն Դերենիկը կարդուն է իր նոր պոեմը: «Վեր-
նատունը» խնդրում է շնորհ բերես ժամը 9-ին»:
ԵԼԺ 9, 449:

Նոյեմբեր, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդագարյանին.
« «Վերնատունը» բաղնիք էր գնացել. նոր ենք վերադար-
ձել: Եթե հարկավոր է, կգամ մի քանի բուպեով»:
ԵԼԺ 9, 449:

Նոյեմբեր, Թիֆլիս. – Երկտող Փիլ. Վարդագարյանին.
« «Վերնատունը» այսօր պաշտոնապես հրավիրում է քեզ
մի նշանավոր հանդեսի, որ առանց քեզ չի կարող տեղի ունե-
նալ»:
ԵԼԺ 9, 449:

Դեկտեմբերի 2. – Տպագրվում է Հար. Թումանյանի՝ նոյեմ-
բերի 30-ի «Նամակ խմբագրության» հոդվածը:

Պատասխանն է Հովհ. Թումանյանի՝ «Մշակի» խմբագրու-
թյանն ուղղված նամակի (տե՛ս նոյեմբերի 28): Ջարմանում է,
թե ինչու է անհանգստացած Թումանյանը իրեն Ա. և Հ. Թուման-
յանների հետ շփոթելուց, և ավելացնում. «Թող պ. Հովհ. Թու-
մանյանը այդքան չվախենա և չշփոթվի մեր անունների շփոթու-
թյունից. եթե նրան հասանելիք դափնիները սխալմամբ բերեն
ինձ մոտ, ես չեմ ընդունի, այլ իսկույն կուղարկեմ իրեն»:

«Մշակ», 1904, թիվ 265:

Դեկտեմբերի 4. Հ. Մանանդյանի նամակը Թումանյանին՝
Վաղարշապատից:

Շնորհակալությամբ է ընդունել Վերնատան անդամների,
Թումանյանի և նրա կնոջ նամակները: Թումանյանի քեֆերին
դեմ չէ, միայն դրանք չպետք է խանգարեն լուրջ աշխատելուն:
ԳԱԹ ԹՖ, 1647 (864):

Դեկտեմբերի 5, Թիֆլիս. – Ընտրվում է Ազգագրական

հրատարակչական ընկերության խմբագրական մասնաճյուղի
կազմում:

«Մշակ», 1904, թիվ 270:

Դեկտեմբերի 8. – Տպագրվում է լուր Ազգագրական հրա-
տարակչական ընկերության ընդհանուր ժողովի մասին:

Տեղեկացվում է, որ Ալ. Մելիք-Ազատյանը ընտրվել է ընկե-
րության վարչության նախագահ, Եր. Լալայանը՝ խմբագրու-
թյան մասնաժողովի նախագահ: Մասնաժողովի անդամներ են
ընտրվել՝ Մ. Աստվածատրյան, Մ. Գևորգյան, Հովհ. Թումանյան,
Ս. Շխյան, Պ. Պռոշյան և ուրիշներ:

«Մշակ», 1904, թիվ 270:

Դեկտեմբերի 8. – Սկրտիչ հրիմյան կաթողիկոսը ժամա-
նում է Թիֆլիս:*

Այդ օրերին բանաստեղծի այցելությունը կաթողիկոսին
անհավանական չէ:

* «Արարատ» պաշտոնական ամսագրում չի նշվում, թե
կաթողիկոսը որքան է մնացել Թիֆլիսում: Միայն նշվում է, որ Վեհա-
փառը, նեղվելով ոտքի հիվանդությունից, օդափոխության նպատակով
դեկտեմբերի 2-ին ուղևորվում է Ալեքսանդրապոլ՝ այնտեղից Թիֆլիս
գնալու մտադրությամբ:

«Արարատ», 1904, թիվ ԺԲ:

Դեկտեմբերի 9. – «Մշակի» «Ներքին լուրեր» բաժնում հա-
ղորդվում է, որ հրիմյան կաթողիկոսը Կարսի երկաթուղով երե-
կոյան գնացքով ժամանել է Թիֆլիս:

Կաթողիկոսին դիմավորել են հոգևորականությունը, քա-
ղաքագլուխը, Թիֆլիսի ոստիկանապետը և ժողովրդի մարդիկ:
«Մշակ», 1904, թիվ 271:

Դեկտեմբերի 12. – Տպագրվում է Նիկ. Տեր-Ղևոնդյանի
«Նամակ խմբագրության» հոդվածը:

Պատասխանում է Թումանյանի՝ «Մշակում» տպագրված
նամակին (տե՛ս նոյեմբերի 2): Փորձում է արդարանալ դասա-
գրքում Թումանյանի բանաստեղծությունների մեջ իր կատա-
րած անհարկի փոփոխությունների համար:

«Մշակ», 1904, թիվ 262:

Դեկտեմբերի 15. – Գրում է «Պ. Նիկ. Տեր-Ղևոնդյանը և իմ «Շունն ու Կատուն»» հոդվածը («Մշակ», 1904, 278):

Պատասխանն է Նիկ. Տեր-Ղևոնդյանի «Նամակ խմբագրության» հոդվածի (տե՛ս դեկտեմբերի 12): Բանավիճային կտրուկ ոճով հերքում է ընդդիմախոսի արդարացումները և եզրակացնում. «... Ոչ ոք, իսկ այս դեպքում պ. Տեր-Ղևոնդյանը, իրավունք չպետք է ունենա փոխելու կամ, իր խոսքով ասենք, սիրունացնելու մի հեղինակի գործ, որի արժանավորության տերը և պակասավորության պատասխանատուն միայն ինքը՝ հեղինակն է»:

ԵԼԺ 6, 138-141, 593-594:

<Մինչև դեկտեմբերի 16-ը>. – Տպագրվում է «Լույս» օրացույց-հանդեսը (տե՛ս նոյեմբերի 2):*

Հավելվածում՝ Թումանյանի ինքնակենսագրությունը և «Հոգուս հատոր» ոտանավորը:

* ԵԼԺ 6-ում և 1-ում թվագրված է 1905. սխալ է (տե՛ս «Մշակ», 1904, թիվ 277):

ԵԼԺ 6, 142-145, 594. ԵԼԺ 1, 24, 545-546:

Դեկտեմբերի 22. – Թադևոս Ջիլավյանի նամակը Թումանյանին էջմիածնից:

Դրվատում է Թումանյանի տաղանդը, մարդկային հատկանիշները: Տեղեկացնում է, որ գրքերը վաճառել է և գումարն ուղարկում է:

ԳԱԹ ԹՖ, 1947:

Դեկտեմբերի 23. – Թ. Ջիլավյանի նամակը Թումանյանին էջմիածնից:

Գրում է գրքերի ու բրոշյուրների վաճառքի և գումարների հետ կապված հարցերի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1948:

1904. – Առաջին անգամ տպագրվում է («Լույս» օրացույց-հանդես, 1904, էջ 469-471) «Խրճիթում» («Մանուկները գողում-գոչում...» բանաստեղծությունը):

ԵԼԺ 1, 143, 585:

1 9 0 5

Հունվարի 1, Թիֆլիս. – Տոնածառ է պատրաստում իր ութ զավակների համար և նրանց անուն առ անուն Նոր տարվա ուրախ հանդեսի հրավիրում չափածո քառատողով.

Մուշիկ, Նուշիկ, Անուշիկ,
Արտիկ, Համլիկ, Արտուշիկ,
Աշխեն, Արեգ, շուտ արեք,
Տոնածառը զարդարեք:

ՆԹ ՀԶ, 34:

Հունվարի 1, Թիֆլիս. – «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուն նվիրում է Ղ. Աղայանին:

Ընծայականը. «Իր անգին Ասլան ապորը – Ղ. Աղայանին»:

Գրքի անվանաթերթի երկրորդ էջին գրում է.

Անցավ հին տարին, կանցնի և նորը,
Կանցնի՞ և արդյոք մեր անբախտ օրը:

ԵԼԺ 1, 397, 666. ՈՒՀ 4, 252:

Հունվարի 1, Թիֆլիս. – «Տարագում» տպագրվում է «Նոր տարվա սյուրպրիզներ» (Կռիլովի առակներից):

Հովհաննես Թումանյանին

Բայց մեր գորտը նորեն ա՛յնքան փչվեցավ ու փչվեցավ,
Որ վերջապես ճաքեցավ:

(«Գորտ և եգ»):

«Տարագ», 1905, թիվ 1:

<Հունվարի սկզբներ>, Թիֆլիս. – Նամակ էջմիածնի Թ. Ջիլավյանին (չի պահպանվել):

Նամակի հետ ուղարկում է «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուից տասը օրինակ՝ ճեմարանի սաներին վաճառելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1947 (431):

Հունվարի 5. – Ծնվում է բանաստեղծի իններորդ զավակը՝ Սեդան:

ՈՒՀ 5, 402:

Հունվարի 7. – Ստանում է Ն. Աղբալյանի Նոր տարվա շնորհավորական բացիկը Պետերբուրգից՝ ուղղված Թումանյանին, Դեմիրճյանին, Շանթին:

ԳԱԹ ԹՖ, 236 (16):

Հունվարի 12. – Գրաքննչական կոմիտեն թույլատրում է «Մուրճ» թիվ 1-ի լույսընծայումը:

Համարում տպագրված է (էջ 5-10) Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի առաջին կեսը՝ «Աշուղի գրույցը» ենթավերնագրով:

ԵԼԺ 4, 542:

Հունվարի 14. – Ն. Աղբալյանի հունվարի 14-ի բացիկը Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Չափածո բարեմաղթանքներ «Վերնատանը».

Արիավիրքի ահեղ ժամին,
Ամենուրեք հողմ ու շառաչ,
Վերնատնով ի մի մարմին,
Վստահորեն դիմենք առաջ:
Ոգու լուսով լուսավորենք
Գոռ ամբոխի ուղին նսեմ
Ու նրա հետ առաջ դիմենք
Դեպի իդեալ՝ վեհ ու վսեմ:

ՈՒՅ 5, 374-375:

Հունվարի 15. – Թ. Ջիլավյանի երկտողը Թումանյանին՝ էջմիածնից:

Ուղարկում է 17 ռուբլու անդորրագիր՝ գրքերը վաճառելու մասին (տե՛ս <հունվարի սկզբներ>):

ԳԱԹ ԹՖ, 1949 (431):

Հունվարի 25, Թիֆլիս. – Ջ. Տեր-Գրիգորյանի՝ նամակը Թումանյանին՝ Ստավրոպոլից:

Տեղեկացնում է, որ «վաղուց» ստացել է Թումանյանի նամակը (չի պահպանվել), ուր բանաստեղծն հավանաբար գրել է, թե իրենք սպասում են իններորդ գավակին: Շնորհավորում է «նոր գավակի» ծնունդը կամ՝ «բարով գա լույս աշխարհ»:
Ստացել է «Ստ. Լիսիցյան և ընկ.» «հրատարակած յոթ գրքույկ-

ները», որոնցից երեքը Թումանյանինն են (տե՛ս 1904, նոյեմբերի 17) և «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուն: Կարդացել է Ահարոնյանի հոդվածը «Մուրճում» (տե՛ս 1904, հունվար), որ «բավական բարեխիղճ էր»: Լավ տպավորություն չի ստացել Ն. Տեր-Ղևոնդյանի հոդվածից (տե՛ս 1904, դեկտեմբերի 12). «... ճշմարիտն ասած, սաստիկ դիպել էր սրտիս, բայց քո շնորհալի և գեղեցիկ նամակը (տե՛ս 1904, դեկտեմբերի 15) սրտիս փուշը հանեց»: «Շատ է հետաքրքրվում» «Գառնիկ ախպեր» հեքիաթով և «Թմկաբերդի առումը» պոեմով, քանի որ «Մուրճի» առաջին համարը, որտեղ տպագրվել էր պոեմի առաջին մասը (տե՛ս հունվարի 12), «դեռ չի ստացել»:

Վերջում բերում է Թումանյանի «Ազնիվ տիկնայք, ջահել հյուրեր» էքսպրոմտը (տե՛ս 1901, օգոստոսի 6, Ուրալվել) հետևյալ ծանուցումով. «Գուցե հետաքրքրվես քո էքսպրոմտով, որ գրել ես Ուրալվելում, օր. Հարությունյանի* ալբոմում, որ հիմա գտնվում է այստեղ, մի տիկնոջ մոտ»:

* Պետք է լինի Ս. Տեր-Հովհաննիսյան, հետագայում Տեր-Գրիգորյան (ԵԼԺ 1, 663):

ՈՒՅ 5, 304-305:

Փետրվարի 1 – մարտի 1. – Թումանյանի ազգանունը հայտնվում է Թիֆլիսի ժանդարմական վարչության գործակալների հսկողության տակ գտնվող 61 հեղափոխականների ցուցակում:

Թումանյանը ցուցակում 39-ն էր. «Туманян Оганес, Татевосов, Крестьянин, Дашнакцутюн»:

* Ցուցակում գրանցված են տարբեր կուսակցությունների պատկանող թիֆլիսաբնակ հայ, վրացի, իրեա, ռուս հեղափոխականներ (սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ հեղափոխականներ և այլն, այդ թվում՝ Հ. Արղության, Հ. Տեր-Դավթյան, Ավ. Ահարոնյան, Ս. Խանոյան, Կ. Ջափարիձե, Ս. Ցխակալյա և ուրիշներ): Յուրաքանչյուրի անվան դիմաց գրված է սոցիալական ծագումը, կուսակցական պատկանելությունը և հեղափոխական կեղծանունը: Թումանյանի ծածկանունը՝ Жокель:

ԼԿ, 21:

Փետրվարի 3. – Գրաքննչական կոմիտեն թույլատրում է «Մուրճի» թիվ 2-3-ի լույսընծայումը:

Այստեղ տպագրված է «Թմկաբերդի առունը» պոեմի շարունակությունը (տե՛ս հունվարի 12):

ԵԼԺ 4, 542:

Փետրվարի 6-9, Բաքու. – Տեղի են ունենում հայկական կոտորածներ:

Իշխանությունների դրդմամբ՝ կազմակերպել էր նահանգապետ իշխան Նակաշիծեն:*

* Կոտորածներից հետո հայ հեղափոխական դաշնակցությունը կազմակերպում է Նակաշիծեի սպանությունը՝ Դրաստամատ Կանայանի գլխավորությամբ:

ԵԼԺ 10, 438-439:

Փետրվարի 9, Թիֆլիս. – Ժողովարանում կազմակերպվում է բազմամարդ ժողով մտավորականության և հոգևոր գործիչների նախաձեռնությամբ:

Որոշվում է հեռագրել Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին, խնդրել նրան մեկնել Բաքու, ի մոտո ծանոթանալ կոտորածների հանգամանքներին և կանխել թալանն ու սպանությունները: Հայտնվում է նաև, որ նույն նպատակով Բաքու է մեկնելու նաև Թիֆլիսի շեյխ ուլ Իսլամը: Ժողովն ընտրում է երեք հոգուց բաղկացած հանձնախումբ՝ էջմիածին մեկնելու և կաթողիկոսին ուղեկցելու համար: Հանձնախմբի մեջ էին Թումանյանը, բժ. Մուրադյանը և կոտորածներին ականատես մի անձնավորություն:*

* Այդ մասին տպագրած իր հաղորդումներում «Մշակը» միտումնավոր կերպով հանձնախմբի ցուցակից դուրս է թողել Թումանյանի անունը:

«Մշակ», 1905, թիվ 20,22. ԼԿ, 54:

Փետրվարի 9, Երեկոյան. – Հանձնախումբը Թումանյանի մասնակցությամբ մեկնում է էջմիածին:

ԼԿ, 54:

Փետրվարի 10. – Հանձնախումբը հասնում է էջմիածին:

Կաթողիկոսին գտնում են հիվանդ պառկած: Բաքվի դեպքերը նրան ներկայացնում է Թումանյանը: Լսելով ցնցող լուրերը՝ հիվանդ հայրապետը աղաղակում է. «Բավակա՛ն էր..., բավա-

կա՛ն էր..., բավակա՛ն էր...»: «Այդ աղաղակը ես չեմ մոռանում, – գրում է բանաստեղծը ընկերոջը՝ Ա. Չարգարյանին:– Այդ կարծես մեր ամբողջ ազգի, տանջված, ջարդված, հոգնած, ուժասպառ եղած ազգի աղաղակը լինի...»: ԹՖայած հիվանդությանը՝ կաթողիկոսը համաձայնում է հանձնախմբի հետ մեկնել Բաքու:

ԵԼԺ 10, 7- 8. ԼԿ, 54:

Փետրվարի 11, Թիֆլիս. – Առաջնորդարանում առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սաթունյանցի նախագահությամբ տեղի է ունենում մի այլ ժողով:

Որոշվում է հեռագրով խնդրել կաթողիկոսին Թիֆլիս հասնելուց հետո չշարունակել ճանապարհը դեպի Բաքու, այլ մնալ՝ մասնակցելու փետրվարի 13-ին նախատեսված հաշտության ու խաղաղության ժողովրդական ցույցին: Կաթողիկոսը տալիս է իր համաձայնությունը:

ԵԼԺ 10, 438:

Փետրվարի 13. – Թումանյանը կաթողիկոսին ուղեկցող խմբի հետ ժամանում է Թիֆլիս:

ԵԼԺ 10, 438:

Փետրվարի 13, Թիֆլիս. – Կաթողիկոսի հետ մասնակցում է հայերի ու թուրքերի խաղաղության ցույցին:

Հայրապետն իր ելույթն սկսում ու ավարտում է աղոթք-մրմունջով՝ այդ լռությամբ անմոռանալի տպավորություն թողնելով ներկաների վրա:

ԵԼԺ 10, 439:

Փետրվարի 14. – Կաթողիկոսի հետ մասնակցում է հայերի և վրացիների խաղաղության ցույցին:

ԵԼԺ 10, 439:

Փետրվարի 14. – Ծերունական հիվանդությունը սրվելու պատճառով կաթողիկոսը չի կարողանում մեկնել Բաքու:

Այդպիսով չի իրականանում նաև Թումանյանի՝ Բաքու մեկնելու մտադրությունը:

ԼԿ, 55:

Փետրվարի 15, երեկոյան ժամը 8 անց 40 րոպե, Թիֆլիս.
– Ոստիկանական գործակալները հետևում են թումանյանին:

Ըստ նրանց հաղորդման՝ թումանյանը մտել է Գոլովինսկի պողոտայի թիվ 15 տունը, որտեղ, իրենց ասելով, ելումուտ են անում սոցիալ-դեմոկրատներ*:

* Պետք է նկատի ունենալ, որ գործակալները հաստատ տեղեկություններ չունեին հետապնդվողների կուսակցական պատկանելության մասին. նրանց համար բոլորը հեղափոխական էին:

ԹՏԹ ՓԲ, 56:

Փետրվարի 24.—Տպագրվում է հայտարարություն Գր. Վանցյանի «Հայ հեղինակներ» դասագրքի վաճառքի մասին:

Հեղինակների շարքում է նաև թումանյանը:

«Մշակ», 1905, թիվ 31:

<Փետրվարի վերջ – մարտի 1-2>, Թիֆլիս. – Նամակ Բաբու Մխիթար Տեր-Անդրեասյանին (չի պահպանվել):

Ըստ երևույթին ցավակցական խոսքեր է գրել փետրվարի 6-9 Բաքվում տեղի ունեցած հայերի կոտորածների մասին, գուցե փորձել է բացատրել ողբերգության պատճառները:

ԳԱԹ ԹՖ, 2161 (462):

Փետրվարի 6. – Դ. Դեմիրճյանի չափածո նամակը Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Լ. Շանթին՝ Բաքվից.

Ձգում եմ, ներում, որ բաղնիսներում
Նստած՝ հենց տաք-տաք բրթբրթում եք դուք.
Համակրությունս այն հնուց բանին,
Որ՝ «Շատերն անցան, ասոնք ալ կանցնին»:
Մի պատվեր ունիմ տալու Ավոյին,
Որ իմ պոեմը դրկի «Լուսնային»:
Պայմանի մասին թող այսպես խոսի,
Որ նախ՝ այն տպեն տետրում այս ամսի,
Վարձատրությամբ և ձեր որոշմամբ:
Պետք է այդ գործը շուտ վերջացնել,
Հասել են օրեր դեպ Սուիզ անցնել,
Ամենաուշը, եթե սուտ չասեն,
Անպատճառ՝ ամսեն:
Եթե չընդունվի, թո՛ղ մոտը պահվի,
Քանզի այստեղ չէ թե պոեմ,

Չեմ կարում թե գլուխ պահեմ:
Նահապետին բարև ճամփի
Եվ հարգալից մի մեծ, դոմփի:
Ջավոյին էլ բարև ինձմեն,
Միամիտ մնա Աբրահամեն:
Հազար ողջոյն Օլիային
Եվ, մանավանդ, նոր Հուկոյին:

Դեժ, XIV, էջ 306-307, 598:

Մարտի 5. – Մ. Տեր-Անդրեասյանի մարտի 5-ի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է փետրվարի հայկական ջարդերի, հայության անելանելի վիճակի մասին. «Սակայն այդ բարդուղիմյան 4 օրը մի բարդ երևույթ էր, որ չի կարելի միայն քո ասած պատճառով բացատրել. այստեղ բազմաթիվ ուրիշ գործոններ կան, որոնց սև գործակցությունն էր, որ առաջացրեց այս բոլորը: Երևի այդ սենատոր Կուլզմինը նախապաշարված մարդ չլինի և չխեղդի արդարության ձայնը: Դու այն ժամանակ միայն կտեսնես, թե ի՞նչ չարագործների աջակցությամբ է բորբոքվել դարավոր խուլ ատելության կայծը:

Միակ մխիթարությունն այն է, որ հասարակաց կարծիքը արդեն կայացրել է յուր խիստ ու արդար վճիռը: Չարագործները ամենքն էլ հայտնի են և արդեն ստացան իրենց բարոյական պատիժը»:

Հետաքրքրվում է փետրվարի 28-ի ժողովով. եթե հետաձգվել է, կարող է ուղարկել հավատարմաթուղթ և իր ձայնը տալ*:

* Հավանաբար խոսքը վերաբերում է ապրիլի 3-15-ը կայանալիք համազգային համագումարին:

ԳԱԹ ԹՖ, 2161 (462):

Մարտի 9, Թիֆլիս. – Նամակ Եվրոպա՝ Ար. Ջարգարյանին:
Ցավով գրում է հայ-թուրքական ընդհարումների, խաղաղություն հաստատելու համար կազմակերպված հաշտեցման ցույցերի, Բաքվի, Երևանի, Բաթումի դեպքերի, Թիֆլիսի երրորդ գիմնազիայի խռովության մասին:

Մասնավորապես. «Մի՞թե երկու ամիս է, ինչ գնացել ես և

երկի դու այդպես էլ ժամանակը հաշվում ես – մի կամ երկու ամիս...

Բայց մենք այդ մի երկու ամսում դարեր ապրեցինք, Չինգիզ խանի և Լենկ Թեմուրի դարերը: Նրանց անօրինությունները տեսանք XX դարում և օգնություն խնդրեցինք... տելեֆոնով ու հեռագրով...

Թանձր, բարբարոսական խավար և լիրբ մեքենայություններ. և մենք, որպես աստվածային մի ծանր պատիժ, ստիպված ենք տանելու, համբուրելու, եղբայր անվանելու:

Օ՜Ֆ, Ռուստեմ, ես միանգամայն խորտակված եմ: Այս մասին մտածելիս հոգնում եմ իսկույն: Մեր արյունոտ անցյալը, մեր տանջալի ներկան, մեր մուկ, անլույս ու անհույս ապագան ծանր քարերի նման պառկում են սրտիս: Ափսոսում եմ մեզ:

ԵԼԺ 10, 7-9:

Ապրիլի 1, Թիֆլիս. – Ներկա է լինում Կոմիտասի՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սաներից կազմված երգչախմբի համերգին:

Մեներգերը կատարում էր Վահան Տեր-Առաքելյանը: Կոմիտասի «Անտունիի» կատարումը ցնցող տպավորություն է թողնում բոլորի վրա: Բեմ բարձրանալով՝ Թումանյանը գրկում է Կոմիտասին և հուզված ասում. «Անզուգական էր, հիանալի. հիմա եմ զգում, որ մեր հայ ժողովուրդը և նրա երգը կապրի դարեր ու չի կորչի: Դուք չտեսնված, չլսված մեծ գործ կատարեցիք»:

«Մշակ», 1905, թիվ 59:ՎՓ ՅԿՄ, էջ 3-4:

Ապրիլի 3, Թիֆլիս. – Տեղի է ունենում մամուլի և գրական գործիչների խորհրդակցություն:

Հրավիրել էր Ալ. Քալանթարը: Քննվում են մամուլի և գրականության հարցեր, մասնավորապես մամուլի ազատության հարցը, և այդ բովանդակությամբ հեռագիր է ուղարկվում փոխարքա Վորոնցով-Դաշկովին: Խորհրդակցությունը լուրջ քննության առարկա է դարձնում «ընդհանուր հրատարակչական ընկերություն հիմնադրելու հարցը»:

* Հավանական է Թումանյանի մասնակցությունը: Հնարավոր է, որ «Մշակը» միտումնավորությամբ չի հիշատակել բանաստեղծի

անունը, ինչպես և կաթողիկոսին ուղեկցելու համար հատուկ հանձնախմբի հետ Էջմիածին մեկնելիս (տե՛ս փետրվարի 9):

«Մշակ», 1905, թիվ 61:

Ապրիլի 3-15, Թիֆլիս. – Մասնակցում է «աշխարհական գործերի» քննարկմանը՝ նվիրված հայկական առաջին (համազգային) համագումարին:

Մասնակցել են նաև քաղաքական, հասարակական, մամուլի գործիչներ հայաբնակ տարբեր տարածաշրջաններից (Ս. Տիգրանյան, Լ. Սարգսյան, Ալ. Մելիք-Ադամյան, Տ. Հովհաննիսյան, Ալ. Քալանթար, Ալ. Խատիսյան, Կ. Խատիսյան, Ս. Հարությունյան, Հ. Ստեփանյան, Հ. Քաջազունի և ուրիշներ):

* Համագումարի նպատակն էր կազմել ընդհանուր խնդրագիր հայ ժողովրդի կարիքների մասին և ներկայացնել Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին և Մինիստրների խորհրդին («Մշակ», 1905, թիվ 72, 73): Ինչպես երևում է Հ. Քաջազունու «Անդարձ ճամփորդը» հուշագրությունից, այդ համագումարին մասնակցել է նաև ինքը: Ականատեսի հավաստությամբ ցույց է տալիս վիճաբանության առիթ տվողների ու «ճորերի» հայացքների տարբերությունները և Թումանյանի հաշտեցնող սրամիտ դիրքորոշումը («Գարուն», 1994, թիվ 5, էջ 57):

ԹԺՀ, 293-294, 935:

Ապրիլի 3-15, Թիֆլիս. – Մասնակցում է համազգային համագումարի կապակցությամբ Օրթաճալայի այգիներում կազմակերպված ճաշկերույթին:

ԹԺՀ, 293:

Ապրիլի 3-15, Թիֆլիս. – Գրում է «Հետներն առած պատգամ ու թուղթ...» սկսվածքով երգիծական բանաստեղծությունը:

Ծաղրում է «Համազգային ժողովի» ընթացքը, մասնավորապես Թիֆլիսից և հայ գավառներից ընտրված պատգամավորների թվաքանակի անհամամասնությունը: Ժողովի մասնակիցներից Հ. Ստեփանյանը այդ մասին հիշում է. «Հովհ. Թումանյանն իբրև «ձեռաց» (էքսպրոմտ) գրող մեծ ընդունակություն ուներ: Չհիշելով նրա մի շարք ալբոմային ոտանավորների մասին, հիշեմ 1905 թ. ապրիլին, այսպես կոչված, Համազգային ժողովի առթիվ Օրթաճալայի այգիներից մեկում սարքած ճաշկերույթին «ձեռաց» գրած «Հետներն առած պատգամ ու

թուղթ...» բանաստեղծությունը: ժողովին (տեղի էր ունենում Արտիստական թատրոնի դահլիճներից մեկում) մեծ վեճի առարկա էր դարձել, թե քանի՞ ծայն պետք է տալ *գավառացիներին* (դրսից եկողներին) և քանի ծայն վերապահել իրենց թիֆլիսի «շարան-շարան» ներկայացուցիչներին: Տեղից վերկացող եկել էր «մի կտոր թղթով» իրեն «ներկայացուցիչ» հայտարարելով, ինչպես պատկերավոր կերպով թվում է թումանյանը.

... Թիֆլիսն եկավ շարան-շարան,—
Ընկերություն, ուսումնարան,
Ինժեներներ, բժիշկ, տերտեր,
Տիկին, գրող, բյուրո մի բեռ:

... Ծո՛, էս ի՞նչ է, աստծու խաթեր,
Եսպես ժողով չենք տեսել դեռ,
Այսուհետև ո՞ւր կըմընա
Գավառի ծայն... գավառի շահ...» (ԹԺՀ, 393-394):

ԵԼԺ 1, 399, 667:

Ապրիլի 6, Թիֆլիս. — Կոմիտասը դասախոսություն է կարդում ժողովրդական և եկեղեցական երգերի մասին: Թումանյանի ներկայությունը անհավանական չէ: «Մշակ», 1905, թիվ 65:

Ապրիլի 17, մայիսի 8. — Տպագրվում է հայտարարություն Թումանյանի՝ ԱՄ մատենաշարով 1899 թ. հրատարակված գրքույկի վաճառքի մասին:

Բովանդակություն՝ «Անբախտ վաճառականներ», «Կտակ», «Տխուր զրույց», «Արծիվն ու կաղնին», «Արջաորս»: «Տարագ», 1905, թիվ 13, 15:

Ապրիլ, Թիֆլիս. — Կոմիտասը Մ. Թումանյանին ցույց է տալիս «Անուշի» նոտագրություններից հատվածներ: ԳԱԹ ԿՖ. 481:

Մայիսի 1, Թիֆլիս. — Երկտող Փիլ. Վարդագարյանին. «Վերնատունը» այսօր պաշտոնապես հրավիրում է քեզ մի նշանավոր հանդեսի, որ առանց քեզ չի կարող տեղի ունենալ:

Քվեարկություն է լինելու և վերջը՝ հանդեսը»: ԵԼԺ 10, 9:

Մայիսի 5, Թիֆլիս. — Ընծայական իր լուսանկարի շրջերեսին.

«Իր թանկագին Աշխենին 1905 5/5»): ՈՒՀ 4, 252:

Գարուն, Թիֆլիս. — Գրում է «Պարոնների դարն անցավ...» ոտանավորը (սևագիր, անավարտ):

Գրության առիթը 1905 թ. գարնանը Մենգրելիայի գյուղերում տեղի ունեցած գյուղացիական հուզումներն են: ԵԼԺ 1, 401, 667:

Յուլիս, Թիֆլիս. — Նամակ Ալեքսանդրապոլ՝ Ն. Աղբալյանին:

Տեղեկացնում է, որ Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը պատրաստվում է հրատարակել «Բանբեր Կովկասի» անունով օրաթերթ: * Ընկերոջը հայտնում է հրատարակչի խնդրանքը՝ ստանձնել խմբագրի տեղակալի կամ պատասխանատու քարտուղարի պաշտոնը:

* Ըստ մամուլի տվյալների և Թումանյանի մասին Մելիք-Ղարագյոզյանի անտիպ հուշերի՝ սկզբում թույլատրվել է թերթի հրատարակությունը «Բանբեր Կովկասի» անունով, այնուհետև պաշտոնապես արգելվել է և թույլատրվել հրատարակել «Արշալույս» անունով (տե՛ս 1905, օգոստոսի 28):

ԵԼԺ 10, 9-10:

Օգոստոսի 1, Պետերբուրգ. — Նիկոլայ II-ը ստորագրում է հրովարտակ՝ հայ եկեղեցուն պատկանող հողերը, գույքը, կապիտալը, պետականացման ժամանակամիջոցում ստացված եկամուտները, կրթական գործով զբաղվելու իրավունքը վերադարձնելու մասին:

Բացվում են փակված հայ ուսումնական հաստատությունները:

«Մշակ», 1905, թիվ 162. ՀԺՊ, հ. VI, էջ 377:

Օգոստոսի 4. — Լ. Շանթի նամակը Մ. Թումանյանին՝ Օծունից:

Գրում է. «Գուցե լսած եք, որ Լոռի ենք այս ամառ, Օհանեսի դրացի. մեզ իրարից բաժանողը Օհանեսի շատ սիրած ու շատ գոված Դեբեդն է իր ծորովը: ԹՖայելով իրար մոտ լինելուն դեռ մինչև այժմ չենք տեսնված. լսում եմ, որ շատ է զբաղված քեֆով ու գործով»:

ԳԱԹ ՄԹՖ, 649ա:

Օգոստոս, Գանձա. – Ավ. Իսահակյանը հյուրընկալվում է Վ. Տերյանի հայրենի տանը:

Նրա հետ լինում են Ս. Յովհաննու մատուռում, որ ուխտատեղի էր, ու այդ օրն էլ շատ ուխտավորներ կային. երգ, պար, ուրախություն: Պատանի Տերյանը բարձրաձայն մտորում է՝ դիմելով Իսահակյանին. «... իբրև թե ուրախ երգեր են երգում, բայց ինչքան վիշտ ու մորմոք կա սրանց ուրախ երգերի մեջ: Դարերի տառապանքն է խոսում սրանց բերանով: Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ո՞ր մնաց օտարը: Մեր նոր գրողներից թումանյանը և դու միայն, երկուսդ զգում եք մեր ժողովրդին: Ձեզանից հետո կամ նոր, բուրրովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լռել»:

ԱԻԵԺ, 5, 114:

Օգոստոս, Փարվանա լճի մոտ. – Տերյանը և Իսահակյանը այցելում են Փարվանա լիճ:

Իսահակյանը հիշում է. «Վահանը հափշտակված նայում էր՝ հայացքը թափառելով ամեն կողմ, և արտասանեց յուրովի Յովի. Թումանյանի «Փարվանայից». «Բարձրագահ Աբուլն ու Մթին սարեր...»:

ԱԻԵԺ, 5, 115:

Սեպտեմբերի 20. Գաղտնի գրություն ժանդարներիայի Թիֆլիսի նահանգական վարչությանը՝ ուղարկված գաղտնի գործակալ «Շմակով»-ի կողմից:

Թումանյանը հիշվում է իբրև միջնորդ դաշնակցության Թիֆլիսի և գյուղական կոմիտեների միջև՝ «Жокей» ծածկանունով:

ԹՏԹ ՓԲ, 48:

Սեպտեմբեր. – ժանդարմական վարչության հանձնա-

րարությամբ՝ գաղտնի գործակալ «Շմակով»-ի հսկողության տակ է:*

* «Շմակով»-ը բանաստեղծին հետևել է հատկապես Լոռու, Բորչալուի շրջաններում և վայրիվերո, իրարամերժ տեղեկություններ ուղարկել ժանդարմական վարչություն: Գաղտնի գրություններում Թումանյանը մի տեղ միջնորդ է դաշնակցության Թիֆլիսի և գյուղական կոմիտեների միջև, մի այլ տեղ դատի է տրված՝ իբր դաշնակցության միջոցներից ինչ-որ գումարներ յուրացնելու համար կամ Իսահակյանի հետ մասնակից է ահաբեկչական գործողությունների, Քոլագերան կայարանում նրա հրամանով սպանվել են երեք թուրք և այլն:

ԼԿ, 22:

Սեպտեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է «Գառնիկ ախպեր» չափածո հեքիաթի առաջին կեսը («Յասկեր», 1905, թիվ 1, էջ 2-7):

ԵԼԺ 2, 129, 388:

Յոկտեմբերի 8, Պետերբուրգ. – Կառավարական որոշում՝ 1896-1897 թթ. պետականացված եկեղեցական ժխական դպրոցների շինություններն ու գույքը էջմիածնին վերադարձնելու մասին:

«Մշակ», 1905, թիվ 162:

Յոկտեմբերի 18, Թիֆլիս. – Նիկոլայ II-ի՝ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի առիթով տեղի են ունենում ժողովրդական ցույցեր:

Մասնակցում էին նաև հայ քաղաքական կուսակցությունները՝ իրենց դրոշներով: Հնչական ցուցարարների մեջ էր Ղ. Աղայանը, դաշնակցական ցուցարարների հետ էր Յովի. Թումանյանը: Լեոն հիշում է մի նախադասություն նրա արտասանած ճառից. «Ես էն դրոշակն ա, որ ծածանվում էր Սասունի գլխին»:

ԼԱ, 164:

Յոկտեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է («Յասկեր», 1905, թիվ 2, էջ 49-54) «Մժղուկը» (փոքրիկ մժեղի պատմությունը) պատմվածքը:

Փոխադրություն է Մամին-Սիբիրյակից:

ԵԼԺ 5, 147-149, 757:

Նոյեմբերի 4, Պետերբուրգ. – Ցարական կառավարությունը հաստատում է հայ եկեղեցուն վերաբերող կանոններ:

Դրանց համաձայն հայ լուսավորչական եկեղեցուն պատկանող, բայց արքունի վարչության և ներքին գործերի մինիստրության տրամադրության տակ գտնվող կալվածքները, եկեղեցական ու վանական եկամուտները, դրամական միջոցներն ու տոկոսաբեր թղթերը պետք է վերադարձվեն իրենց օրինական տիրոջը:

«Մշակ», 1905, թիվ 167:

Նոյեմբերի 15. – Ամենայն հայոց Սկրտիչ խրիմյան կաթողիկոսը ժամանում է Թիֆլիս:

Նրա հետ թումանյանի հանդիպումը անհավանական չէ:
«Մշակ», 1905, թիվ 228:

Նոյեմբերի 22, Թիֆլիս. – Նորից սրվում են հայ-թուրքական հարաբերությունները:

Սկսվում է խուճապ: Փակվում են դպրոցները: Լույս չեն տեսնում թերթերը: Գնդակոծվում է Ներսիսյան դպրոցի շենքը: Շրջակայքում՝ ամեն տեսակ բարբարոսություններ, թալան, սպանություն...

«Արշալույս», 1906, թիվ 1:

Նոյեմբերի <24-25>. – Ընտանիքով մեկնում է հայրենի Դսեղ:

Ամիսներ անց Փիլ. Վարդագարյանին գրում է. «Երեխեքս հավաքեցի, գնացի Լոռի: Շատ լավ գիտեի, որ խառնակություններ են պատահելու, գիտեի, որ մեր գավառում անիշխանություն և ամեն անկարգություն կարող է լինել, և ես շատ պետք կգամ, բայց պատահածն իմ սպասածից էլ ավելի եղավ»:

ԵԼԺ 10, 14, 446:

Նոյեմբերի <25-26>, Շուլավեր. – Թումանյանի տանը տեղի է ունենում հրաժեշտի ճաշկերույթ՝ ի պատիվ Բորչալուի արդեն պաշտոնաթող գավառապետ Շանշիկի:

ԵԼԺ 10, 10, 443:

Նոյեմբերի 27, Ալավերդի. – Ըստ մամուլի հաղորդման հայերը հարձակվում են պղնձահանքերում աշխատող թուրք

բանվորների վրա, թալանում, սպանում՝ անմեղ մարդկանցից հանելով տեղական թուրքերի վայրագությունների վրեժը*:

* Հաղորդման աղբյուրը Թիֆլիսում ֆրանսիական հյուպատոսի քարտուղար Էբերի ոչ այնքան հավաստի տեղեկություններն էին՝ հրապարակված «Возрождение» թերթում:

«Արշալույս», 1906, թիվ 8, 73:

Նոյեմբերի 28. – Շահալի գյուղի բնակիչներ Եգոր Ներսիսյանի և Սահակ Մայիլյանի նախաձեռնությամբ կազմվում է ինքնապաշտպանական խումբ:

Նպատակն էր հարձակումներից պաշտպանել Շահալի կայարանի շուրջն ապրող թուրքերի կյանքն ու գույքը:

«Արշալույս», 1905, թիվ 73:

Նոյեմբերի 28-29, Լոռի. – Գրում է «Ղարիբ եղբայրներ» վերնագրով խաղաղության և բարեկամության կոչը՝ ուղղված Ալավերդու պղնձահանքերում աշխատող պարսիկ պանդուխտ բանվորներին:

Կոչը գրված է լոռեցիների անունից, այդ օրերի հեղափոխական տրամադրությամբ և հավաստիացումով. «... եթե ձեզ մի որևէ նեղություն կհասնի մեր աշխարհքի մարդկանց կողմից, հայտնեցեք համարձակ և համոզված եղեք, որ մենք – մեր ժողովուրդը – միշտ կանգնած կլինի ձեզ համար, ձեր արդար դատի համար, ձեր հալալ աշխատանքի ու դառը մշակության համար և մեր ամենքիս պաշտած եղբայրության համար:

Կեցցե՛ ազգերի եղբայրությունը:

Կեցցե՛ հալալ աշխատանքը:

Կեցցե՛ հերոս բանվոր մարդը»:

ԵԼԺ 6, 418-420:

Նոյեմբերի 29, առավոտյան ժամը 10, Քոլագերան. – Հեռագիր Թիֆլիսի կայարանապետին՝ խրիմյան Հայրիկին հասցնելու խնդրանքով.

«Խնդրում եմ հաղորդել Վեհափառ կաթողիկոսին, թե Լոռվա շրջանում հայտնվել է թուրքերի մի ահագին խումբ, որ կողոպտում է, սպանում: Ժողովուրդը աղաչում է անմիջական օգնություն խնդրել»:

ԵԼԺ 10, 10:

<Նոյեմբերի վերջեր>, Լոռի. – Վերսկսվում են ազգամիջյան ընդհարումները:

Թումանյանը հայրենի գյուղում է կամ Շուլավերում:
ԵԼԺ 10, 442. ՆԹ 32, 87-88:

<Նոյեմբերի վերջեր>. – Ընդհարումներ են տեղի ունենում Շուլավերում:

ԵԼԺ 10, 442. ՆԹ 32, 87-88:

<Նոյեմբերի վերջեր, մի գիշեր>. – Դսեղից ծիով իջնում է Քոլագերան կայարան՝ Շուլավերից եկող կնոջը, դուստրերին և եղբորը (գնացել էր Թիֆլիս՝ նրանց ուղեկցելու) դիմավորելու:

Կեսգիշերին վերադառնում է Դսեղ:
ՆԹ 32, 87-88:

<Նոյեմբերի վերջ>. – 3եռագիր (չի պահպանվել) Թիֆլիսի պարսից գլխավոր հյուպատոսին:

Պարզաբանումներ է տալիս Ալավերդու Շահալի-Էլիստ գործարանում տեղի ունեցած ընդհարումների մասին (տե՛ս նոյեմբերի 27):

«Արշալույս», 1906, թիվ 8:

<Նոյեմբերի վերջ>. – 3եռագիր (չի պահպանվել) Դաշնակցության ղեկավարությանը:

Հավանաբար հորդորել է դադարեցնել Ալավերդում տեղի ունեցող ընդհարումները, պատժել մեղավորներին:

«Արշալույս», 1906, թիվ 8:

Նոյեմբեր-դեկտեմբեր. – Տպագրվում է («Տարագ», 1905, թիվ 3-4, էջ 97-102) «Գառնիկ ախպեր» չափածո հեքիաթի շարունակությունը և ավարտը (տե՛ս սեպտեմբեր):

ԵԼԺ 2, 129, 560:

Դեկտեմբերի 1, Թիֆլիս. – Տպագրվում է («Արշալույս», 1905, թիվ 64) Թումանյանի՝ խրիմյան կաթողիկոսին ուղղած հեռագիրը (տե՛ս նոյեմբերի 29):

ԵԼԺ 10, 10:

Դեկտեմբերի 5-6. – Ի պատասխան Թումանյանի՝ կաթ-

ղիկոսին ուղղած հեռագրի (տե՛ս նոյեմբերի 29, առավոտյան ժամը 10)՝ Ալեքսանդրապոլի Սևերսկի գնդից զորք է գալիս Քոլագերան:

Բանաստեղծի եղբայրը՝ Վահանը, հիշում է. «1905 թ. դեկտեմբերի 5-6-ին Ալեքսանդրապոլի Սևերսկի կոչվող գնդից Քոլագերան կայարանը եկավ մի էսկադրոն, որ արգելի հայերի և թուրքերի կռիվները: Այդ կազմակերպել էր 3ովհաննեսը խրիմյան կաթողիկոսի միջոցով. կարգադրությունն արել էր Թիֆլիսի զինվորական շտաբը և այդ մասին հայտնել 3ովհաննեսին: 3ովհաննեսը գնաց Քոլագերան, շատ լավ դիմավորեց էսկադրոնին»:

ԹԺՅ, 244:

<Դեկտեմբերի սկզբներ, Դսեղ>. – Նամակ (չի պահպանվել) Շուլավեր՝ Բորչալուի գավառապետ Նիկոլայ Ռեզանովին:

Լոռեցիների անունից շնորհակալություն է հայտնում նրան և նրա օգնական Դ. Բաքրաձեին՝ թուրքերի դեմ լոռեցիներին սատար կանգնելու համար:

ԵԼԺ 10, 11, 443:

<Դեկտեմբերի կեսեր, Դսեղ>. – Պաշտոնական նամակ Շուլավեր՝ գավառապետի օգնական Դ. Բաքրաձեին:

Խնդրում է Լոռի գալու դեպքում իրեն բացիկով տեղեկացնել՝ «շատ կարևոր գործով» նրան կամ նոր գավառապետ Ռեզանովին հանդիպելու համար:

ԵԼԺ 10, 11:

<Դեկտեմբերի վերջեր>. – Երկու նամակ (չեն պահպանվել) Լոռի՝ Բորչալուի գավառապետ Նիկոլայ Ռեզանովին:

Խնդրում է միջոցներ ձեռք առնել՝ Ղազախի սահմանին տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումները դադարեցնելու և խաղաղությունը վերականգնելու համար:

ԵԼԺ 10, 12, 444-445:

1905. – Տպագրվում է բանաստեղծի համառոտ ինքնակենսագրությունը «Լույս» օրացույց-հանդեսի հավելվածում:

ԵԼԺ 6, 142-145:

1905. – Տպագրվում է («Թատրոն», 1905, թիվ 2, էջ 64) «Խորհրդավոր մեռելը» բանաստեղծությունը:
ԵԼԺ 1, 204, 607:

1905 – Տպագրվում է «Ախթամար» բալլադը նկարագարող ալբոմի ձևով, հայերեն և ռուսերեն (Կ. Բալմոնտի թարգմանությամբ):
ԵԼԺ 2, 553:

1905. – Ըստ Թիֆլիսի պահնորդական բաժնի գործակալության տվյալների՝ Թումանյանը վարել է Դաշնակցության՝ Շուլավերի կոմիտեի նախագահի պաշտոնը, գլխավորել է կուսակցության՝ Լոռու շրջանի կազմակերպությունը, եղել է Դաշնակցության՝ Թիֆլիսի բյուրոյի անդամ:
ԹՏԹ ՓԲ, 51:

1 9 0 6

Հունվարի 2, Բարանա. – Պաշտոնական նամակ (ռուսերեն) Ղազախի շրջանի թուրք քոչվոր գյուղացիների ներկայացուցիչներին:

Հայտնում է, թե ըստ իրեն հասած տեղեկությունների՝ նրանց «առաջավոր մարդկանցից ոմանք» ուզում են իր հետ «ավելի մանրամասնորեն» խոսել «հաշտության և քոչի մասին Բարանայում»*: Տալիս է իր համաձայնությունը. «Եթե այդպիսի մտադրություն կա, խնդրում եմ գալ վաղն առավոտյան»:

* Բարանան Երևանի շրջկենտրոնի նախկին անունն է:
ԵԼԺ 10, 12, 444:

Հունվարի 6, Շահալի. – Պաշտոնական նամակ (ռուսերեն) Շուլավեր՝ Լոռու-Բորչալուի շրջանի գավառապետ Ն. Ռեզանովին:

Հայտնում է Ղազախի սահմանում տեղի ունեցած «թյուրիմացությունների» պատճառով քոչվոր թուրքերի՝ իրենց բնակավայրերից հեռանալու մասին: Տեղեկացնում է, որ ինքը գնում է նրանց հետ խոսելու և ետ դարձնելու. «Երկու կողմից էլ ժողովուրդը պատրաստվում է, և գարնանը կարող է մեծ դժբախ-

տություն պատահել: Մենք բոլորս պետք է միասին աշխատենք, գուցե կարողանանք գալիք աղետի առաջն առնել: Այսպիսի ժամանակ ամեն մի լավ մարդ մեծ արժեք ունի, ով ուզում է լինի: Ձեր ուրյադնիկն այստեղ շատ լավ տպավորություն թողեց, առողջ դատողության տեր մարդ է: Իսկ մեր պրիստավը անտարբեր մարդ է և «թողնում» է Կովկասը (ասում է՝ «մենք ռուսներս թողնում ենք Կովկասը»), այնինչ հիմա շատ կարևոր է Ձեր եռանդուն և ինտելիգենտ ներկայացուցիչների ներկայությունը»:

ԵԼԺ 10, 12-13, 444-445:

Հունվարի 9, Դսեղ. – Նամակ «Արշալույս» օրաթերթին (հունվարի 14, թիվ 8):

Օրաթերթն իր 1905 թ. դեկտեմբերի 9-ի թիվ 73-ում արտատպել էր Թիֆլիսում հրատարակվող «Վոզրոժդենիե» թերթի լուրերը՝ ֆրանսիական Շահալի-Էլիար գործարանում տեղի ունեցած սպանությունների ու թալանի մասին (տե՛ս 1905, նոյեմբերի 27), որի մեղքը բարդվում էր հայերի վրա: Թումանյանը չափազանցված է համարում այդ լուրերը, միաժամանակ տեղեկացնում է, թե ինչ է արված Ալավերդում և շրջակայքում խաղաղությունը վերականգնելու, գործարանում աշխատող պարսկահպատակ թուրքերին բավարարություն տալու, հանցավորներին պատժելու համար: Հայտնում է նաև, որ այդ ամենի մասին հեռագրեր են ուղարկված կաթողիկոսին (տե՛ս 1905, նոյեմբերի 29), Թիֆլիսի պարսիկ գլխավոր հյուպատոսին (տե՛ս 1905, <նոյեմբերի վերջ>), դաշնակցությանը (տե՛ս 1905, <դեկտեմբերի վերջ>): Տեղեկացնում է. «Ղազախի և մեր սահմանի վրա թյուրիմացություն է պատահել (տե՛ս հունվարի 6), գնում ենք այնտեղ մի 50-60 ձիավոր, որ կարողանանք խաղաղություն պահել գոնե այս կողմը: Չեք կարող երևակայել, թե քանի՜ մարդկանց կյանք կարողացանք ազատել և խաղաղությունը պահել մեր ձորերում: Մեր սահմանակից Ղազախի թուրքերը շատ լավ են վարվում: Մի քանի անգամ բանակցություններ ենք ունեցել, թե մեր, թե նրանց ժողովրդի մեջ սաստիկ մեծ է խաղաղության ցանկությունը: Երկու կողմից էլ խուլիզան մարդիկ են խառնում: Եվ այնպես հեշտ են խառնում, որ զարմանում է մարդ: Եթե դժար

մի բան կա՝ դրա առաջն առնելն է»:

ԵԼԺ 6, 147-148, 595:

Հունվարի 14. – Տպագրվում է («Արշալույս, թիվ 8) Թումանյանի թղթակցությունը (տե՛ս հունվարի 9):

ԵԼԺ 6, 147-148:

<Հունվարի վերջեր>, Լոռի. – Թումանյանի ջանքերի շնորհիվ ապահովվում է Լոռու շրջանի անվտանգությունը:

Գործին մեծապես նպաստում է Բորչալուի գավառապետ Ն. Ռեզանովը: Նա կարողանում է ձերբակալել մի քանի կողոպտիչ - ջարդարարների և պահել Մետեխի բանտում:

ԼԿ, 62:

<Փետրվարի առաջին օրեր>, Լոռի. – Գրում է «Լոռեցիների կոչը», ուղղված Ղազախի մուսուլմաններին:

Հայ-թուրքական արյունալի ընդհարումները որակելով «ամոթալի ու անմիտ կռիվ»՝ բանաստեղծը անկողմնակալ հայացքով դատապարտում է երկու կողմերի էլ չարդարացված «ոխս ու թշնամությունը» միմյանց հանդեպ, որի հետևանքով «որդոցորդի պղտորվելու է երկուսի էլ կյանքը այս մեր գեղեցիկ սարերում ու ձորերում»: «Սրա համար մենք՝ լոռեցիներս, – ասվում է այնուհետև կոչում, – հավաքվեցինք, հաշտության նշան սպիտակ դրոշմ պարզեցինք, անցանք մեր սարերը, եկանք կանգնելու մեր կռվող եղբայրների մեջտեղը (տե՛ս հունվարի 9): Այս ի՞նչ եք անում, անմիտներ, ի՞նչ եք արել մեկ-մեկու, ի՞նչ եք ուզում մեկդ մյուսից: Մի՞թե մեղք չեն ձեր կանայք ու երեխաները, մի՞թե ավստս չի ձեր արդար աշխատանքը, որ փչացնում եք: Մի՞թե ամոթ չի ձեր տղամարդությանը, մի՞թե հարամ չի այն աղ ու հացը, որ կերել եք միասին»:

Այնուհետև կոչ է անում, որ Լոռուց փախած թուրքերը վերադառնան, տեր կանգնեն իրենց տանն ու ունեցվածքին ու խաղաղ ապրեն. «Մուսուլման եղբայրներ, դուք պիտի հավատաք մեր խոսքին նախ այն պատճառով, որ ձեզ հետ լոռեցիք են խոսում, իսկ լոռեցիք քաջ կռվից չեն վախենում, երկրորդինքներդ լավ գիտեք, որ մենք ձեզ համար այնպիսի հարևան ու

բարեկամ ենք եղել, որ ձեզ մեր հայերից չենք ջոկել»:

ԵԼԺ 6, 148-149, 594:

Փետրվարի 4, Թիֆլիս. – Թումանյանին տեսել են լոռեցիների հետ սպիտակ դրոշակներով Ղազախ գնալիս՝ հաշտություն քարոզելու համար:

Աղբյուրը «Արշալույսի» Շուկավերի թղթակից Գր. Բալասանյանի հաղորդումն է:

«Արշալույս», 1906, թիվ 30:

Փետրվարի 18, Թիֆլիս. – Տպագրվում է «Լոռեցիների կոչը» (տե՛ս փետրվարի առաջին օրեր):

«Արշալույս», 1906, թիվ 36:

<Փետրվար>, Ղսեղ. – Գրում է «Լոռեցիների անունից» կոչը:

Ուղղված է Ղազախի թուրք բնակչությանը:

Կոչում ասված է. «Մենք՝ լոռեցիներս, չենք հարձակվում և չենք կռվում մեր հարևան թուրքերի հետ և ոչ մի կողմի վրա, որովհետև, եթե ուժեղ ենք – անհրաժեշտություն է, եթե թույլ ենք – հիմարություն»:

Մենք պահպանում ենք խաղաղություն և հաշտություն, դրա համար բարձրացնում ենք սպիտակ դրոշակ <....> և երգվում ենք միշտ մաքուր ու բարձր պահել մեր սպիտակ դրոշակը»:

Շարունակության մեջ հավաստիացվում է, որ եթե թուրքերը հարձակվեն «մեր գյուղերի վրա», հայերը բոլոր միջոցներով կաշխատեն կանխել արյունահեղությունը, իսկ եթե չհաջողվի՝ «ինքններս դուրս կգանք նրանց դեմ և անխնա»:^{*}

^{*} Կոչը ժամանակին չի տպագրվել (առաջին անգամ՝ ՍԳ, 1941, թիվ 12): Հավանաբար գրվել է ձեռագիր տարածելու համար:

ԵԼԺ 9, 145-146, 594:

Մինչև մայիսի 15-ը, Ղսեղ. – Հավաքվում են շրջակա գյուղերի ներկայացուցիչները՝ Թումանյանի առաջնորդությամբ խաղաղության առաքելությամբ խամբուլաղ գնալու համար:

Նվարդ Թումանյանը հիշում է. «Հավաքվել էին մոտ հարյուր ձիավոր, գուցե ավելի: Մեր տան պարտեզը, կտուրն ու պատշգամբը լիքն էին տեղացի ու եկվոր գյուղացիներով: Այդ

օրվա ճաշի համար հարևաններից սինիներ հավաքեցին, մեծ-մեծ սինիներով ձվածեղ արին ու ճաշ տվին հենց պարտեզում: Շատերը պարտեզի պարսպի քարերի վրա էին նստել, մի քանիսն էլ ծառերին էին բարձրացել, որ հայրիկի ճառը լսեն ճանապարհ ընկնելուց առաջ:

Աստղիկը՝ հորաքույրս, շտապ-շտապ կտրում էր սպիտակ և կարմիր (հաշտության և կռվի) դրոշակներ, որոնք փաթաթեցին ու դրին խուրջինի մեջ»:

ՆԹ 32, 89:

Մայիսի 15. – Լոռու սարերում հաշտարար առաքելությանը շրջելիս լինում է Չաթին - Դաղի և Խան - Բուլաղի հայկական ամառանոցներում և ուղևորվում թուրքական բինաները:

Արմենակ Թումանյանը հիշում է. «Չաթին - Դաղից գնաց Ահնիձոր և Աթան գյուղերի սարը՝ Ղան - Բուլաղ Խանի աղբյուր, ստիպելով սարերից գյուղերը վերադառնալ երեք անուղղելի գող հովիվների: <....>

Մայիսի 15-ին, երբ արեգակը նոր էր դուրս եկել, մենք Թումանյանի կարգադրությամբ ծի նստեցինք և սպիտակ դրոշակը պարզած՝ ուղևորվեցինք դեպի թուրքական Խան - Բուլաղի բինաները»:

Թուրքական բինաներում Թումանյանի խմբին ջերմ ընդունելություն են ցույց տալիս. «Տեսարանը ազդեցիկ էր. ժողովրդի մեծ մասը ուրախությունից արտասվում էր: Մի քանի րոպե ոչ մեկը խոսել չէր կարողանում. կարծես բոլորը քարացել էին, իսկ ինքը՝ Թումանյանը, և՛ արտասվում էր, և՛ ուրախությունից հրճվում»:

ԹԺ, 576:

Մայիսի 16. – Նույն առաքելությամբ այցելում է ԹՖՎ - Դաղի (Քարքարոտ սար) թուրքական կենտրոնական բինա:

Ար. Թումանյանը հիշում է. «Թումանյանին ուղեկցելու համար թուրքերից ծի էին նստել մոտ 150 մարդ ու կին, որոնք նրա հետ էին մինչև ԹՖՎ - Դաղից ընդառաջ եկած մոտ 80 ծիավորներին հանդիպելը: Ապա Խան - Բուլաղի ծիավորները վերադարձան, բացի 12 հոգուց, որոնք միացան Թումանյանի

խմբին: ԹՖՎ - Դաղում նույնն էր, ինչ որ վերև հիշված սարում: Այստեղ պատահեց մի բացառիկ տեսարան. դեռ կենտրոնի բինան չհասած, ճանապարհի լայնությամբ ծնկաչոք շարվել էին 40 ծեր թուրքեր և ձեռքները դեպի երկինք բարձրացնելով, ինչ-որ բան էին մրմնջում: Դեռ 100 քայլի վրա կլինեին, երբ Թումանյանը նկատեց այդ, իսկույն ցած թռավ ծիուց, վազեց նրանց կողմը և սկսեց մեկ սրան, մեկ նրան համբուրելով, բարձրացնել գետնից, համարելով նրանց արածը խոնարհության նշան: Ինչպես հետո պարզվեց, ծերերը, ծնկաչոք աղոթելով, աստծուց արևշատություն էին խնդրում Թումանյանի համար»:

ԹԺ, 578-579:

Մայիսի 17. – Ուղևորվում է դեպի Սարի - Բուլաղ (դեղին աղբյուր) սարի կենտրոնական բինան:

Արմենակ Թումանյանը հիշում է. «Մեզ ուղեկցում էր ծի նստած թուրքերի մի ահագին բազմություն: Սրանք ևս մինչև սարի-բուլաղցիներին հանդիպելը ուղեկցեցին Թումանյանին, հետո վերադարձան, թողնելով իրենցից մեզ հետ 22 ծիավոր:

Սարի - Բուլաղ հասնելուն պես սկսվեցին համարյա սովորական դարձած քեֆը, պարը, և մանավանդ գրույցները: Թուրքերի կողմից շատերը խոսեցին, մի ծերունի, մոտ 80 տարեկան, Ջալիսան օղլի Մուստաֆան, կես ժամից ավելի այնպես զգացված էր խոսում, որ ներկա եղողների աչքերում արցունքներ երևացին: Ճաշի ժամանակ նա կարգադրեց, որ ծեր կանանցից մի քանիսը հարազատաբար նստեն Թումանյանի աջ ու ձախ կողմերում. այժմ անշուշտ մի առանձին նշանակություն չունի, իսկ 1906 թվականին թրքուհու՝ հայ տղամարդու կողքին նստելը և ճաշելը բոլորովին այլ ձևով էր դիտվում»:

ԹԺ, 179-180:

Մայիսի 18. – Թուրք ուղեկիցների հետ վերադառնում է հայկական բինաներ:

Ար. Թումանյանը հիշում է. «Այստեղ թուրքերն ուզում էին վերադառնալ, բայց Թումանյանը կտրուկ արգելեց, ստիպելով նրանց գնալ հայերի բինան:

Մինչև մայիսի 19-ի ժամը 12-ը Շալու - դուզ սարի հայկական բինաներում ուրախ ժամանակ անցկացրինք թուրք հյուրերի հետ»:

ԹԺՅ, 580:

Մայիսի 18. – ժանդարմական վարչության գաղտնի գրությունը Թումանյանի մասին:

Բանաստեղծին ներկայացվում է նոր «մեղադրանք». «Լոռու շրջանում նա, կարծես, գեներալ գուբերնատոր է, նրան է ենթարկվում ամբողջ տեղական ղեկավարությունը և ոստիկանությունը: Նա շրջում է գյուղերում, դատ ու դատաստան տեսնում, տուգանում է գյուղերը <...> մինչև 500 ռ.»:

ԹՏԹ ՓԲ, 51:

Մայիսի 19. – Իր ուղեկից խմբով այցելում է Ալավերդու պղնձահանքեր՝ նույն հաշտարար առաքելությամբ (տե՛ս 1905, նոյեմբերի 27, <նոյեմբերի վերջ >, <ղեկտեմբերի կեսեր>):

Ար. Թումանյանը հիշում է. «Հանքերին մոտ տեղամասում գտնվում էին Ղամշուտ գյուղի բինաները. Թումանյանը մի փոքր խմբի հետ գնաց նրանց մոտ, դարձյալ հայ հովիվներին զուշացնելու, որ հարևան թուրքերի հետ ապրեն խաղաղ ու բարեկամաբար և ապա նորից վերադարձավ պղնձի հանքերը: Այստեղ ևս Թումանյանը հայ, պարսիկ, հույն հանքափորների հետ խոսեց բարի դրացիական հարաբերությունների, խաղաղ ու հաշտ կյանքի մասին...»:

ԹԺՅ, 580:

Մայիսի 20. – Ղամշուտ և Խաչի գյուղերով վերադառնում է Ղսեղ:

ԹԺՅ, 580:

Մինչև մայիսի 30-ը. – Շվեյցարիայից՝ Փիլ. Վարդազարյանի նամակները Թումանյանին (չեն պահպանվել):

Նամակների մասին հիշատակությունը՝ Թումանյանի՝ մայիսի 30-ի նամակում:

ԵԼԺ 10, 14:

Մինչև մայիսի 30-ը. Նամակներ Շվեյցարիա՝ Փիլ. Վարդազարյանին (չեն պահպանվել):

Նամակների մասին հիշատակությունը՝ Թումանյանի՝ մայիսի 30-ի նամակում:

ԵԼԺ 10, 14:

<Մինչև մայիսի 30-ը>. – Լոռուց «Մի քանի օրով» գալիս է Թիֆլիս:

ԵԼԺ 10, 15:

Մայիսի 30, Թիֆլիս. – Տպագրվում է հայտարարություն, որ նշանակված է Ներսիսյան ազգային հոգևոր դպրոցի տասներկու հոգաբարձուների և հոգաբարձական խորհրդի պաշտոնավարության ժամանակամիջոցի համար «մի ստուգող հանձնաժողովի ընտրություն»:

Ընտրությունը նշանակված էր հունիսի 4-ին՝ առավոտյան ժամը 10-ին: Թեմական ընտրողների ցուցակում թիվ 43-ը Հովհ. Թումանյանն է՝ Լոռու գործակալության կողմից:

«Մշակ», 1906, թիվ 115:

Մայիսի 30, Թիֆլիս. – Նամակ Շվեյցարիա՝ Փիլ. Վարդազարյանին:

Գրում է հայ-թուրքական ընդհարումների ժամանակ իր ծավալած խաղաղարար գործունեության մասին. «... ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղությունը պահելու և կոտորածների առաջն առնելու: Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից: <...>

Մենք այս ցած ու տմարդի կռվով դուրս մնացինք Ռուսաստանի ազատագրական մեծ կռվից: Այժմ մեզ մնում է մի առաքինության հնարավորություն – աշխատել վերականգնելու և պահելու խաղաղությունը, շատ չտարվել այդ դժբախտ կռվով, շատ չբարբարոսանալ»:

ԵԼԺ 10, 14-15:

Մայիսի 30. – Վերադառնում է Լոռի: Փիլ. Վարդազարյանին գրում է. «Շիրիմկինը գրել է, որ ինձ ձերբակալեն: Տեսնենք ինչպես է վերջանում»:

ԵԼԺ 10, 15, 446-447:

Մայիսի 31. – Հայտարարություն «Հասկերի» թիվ 5-ը լույս տեսնելու մասին:

«Մշակ», 1906, թիվ 116:

<Մայիս>. – Դ. Դեմիրճյանի և Փիլ. Վարդազարյանի համատեղ նամակը Թումանյանին՝ ժնկից:

Դժգոհում են, որ Թումանյանից ուշ-ուշ են նամակ ստանում: Հաղորդում են, որ Վարդազարյանի աչքերի բուժումը հաջող է ընթանում: Խնդրում են, որ, եթե կարող է, պաշտպանի Ար. Ջարգարյանին «Կայծ» թերթի անիրավացի քննադատությունից:* Վերջում գրում են. «Հուսով ենք, որ գուցե մի օր կհավաքվենք ի վերնատուն, նրանք, մենք, դու և առհասարակ, այն հարկի տակ, ուր Աղայան, Շանթ, Աղբալյան, Վարդազարյան և Դերենիկ քեֆ կանենք»:

* Խոսքը Արամայիս Երզնկյանի «Դժոխային աշխատանք» հոդվածի մասին է («Կայծ», 1906, ապրիլի 23, թիվ 7), ուր ասվում է, թե Փիլ. Վարդազարյանը և Ար. Ջարգարյանը իրենց կաշվի գործարանում «10 տարի առաջ» շահագործել են Արևմտյան Հայաստանից գաղթած հայերին:

Դեժ XIV, 308-309, 598-599:

Հունիսի 6, առավոտ. – Լիազոր պատգամավորների երրորդ նիստում տեղի է ունենում Ներսիսյան դպրոցի տասներկու հոգաբարձուների խորհրդի՝ ստուգող հանձնաժողովի ընտրություն (տես մայիսի 30):

Թումանյանն ընտրվում է վերստուգիչ հանձնաժողովի «գավառացի» անդամ:

«Մշակ», 1906, թիվ 122:

<Հունիս>, *Դսեղ.* – Պաշտոնական նամակ գավառապետ Ն. Ռեզանովին:

Իր վրդովմունքն է հայտնում հայ կալվածատեր Պ. Ջ. Բաժբուկ-Մելիքովի շահատակությունների՝ մասնավորապես Ղազախի գավառի թուրք քոչվորներից պարբերաբար ոչխաներ խլելու անբարո արարքի հանդեպ: Պահանջում է պատժել հանցագործին, քանի որ նրա արարքը վտանգում է գավառում

այնքան դժվարությամբ հաստատված փխրուն խաղաղությունը.

«Մեր «ազնվականի» այդ տխուր սխրագործությունից մենք բոլորս էլ վրդովված ենք մինչև մեր հոգու խորքը:

Նա խախտում է երկու ժողովուրդների միջև հազիվ պահպանված խաղաղությունը, առաջ է բերում արյունահեղ ընդհարումներ: Նա վարկաբեկում է մեզ մեր հարևանների առաջ, որոնց մենք խոստացել ենք մեր սահմաններում լիակատար ապահովություն:

Չէ՞որ թուրքերը չեն տարբերում Պավել Ջախարևիչին մյուս հայերից, և պարտավոր էլ չեն. նրանք ասում են՝ հայերը մեզ թալանեցին, և կսկսվի...»:

ԵԼԺ 10, 17-19, 448:

<Հունիս>, *Դսեղ.* – Պաշտոնական նամակ Ջալալօղլի՝ նահանգապետ Վ. Ջուլուտարյովին:

Տեղեկացնում է, որ գավառապետ Ռեզանովը պիտի գա Ջալալօղլի. ինքն է խնդրել այդ մասին տեղյակ պահել նահանգապետին: Հուսով է, որ երկուսով կայցելեն նաև Դսեղ: Գոհություն է հայտնում գավառապետ Ռեզանովի գործունեությունից՝ նրան անվանելով «տանջված ժողովրդի սրտակից բարեկամ»:

Անդրադառնալով այն չարամիտ լուրերին, թե ինքը, իբր, «սպանել է խեղճ անտառապահին՝ կողոպտելու նպատակով», գրում է. «Իհարկե, ծիծաղելի է, բայց տեսնում եք դրա հետ միասին որքան ստորություն կա <....> Այդ մարդիկ իրենց ստորությունների մեջ սահման չեն ճանաչում»:

ԵԼԺ 10, 16-17, 447-448:

Հուլիսի 4, 5, Օծուն. – Տեղի է ունենում Լոռու շրջանի 40 հայկական գյուղերի լիազորների համագումար:

Նվիրված էր «կալվածատերերի և գյուղացիների մեջ հողային փոխադարձ հարաբերությունները կանոնավորելու գործին»: Համագումարը որոշում է հեռագրով դիմել փոխարքային՝ Բորչալուի գավառի ազնվականների պարագլուխ Հասան բեկ Եղիզարովին պաշտոնից հեռացնելու և դատի տալու պահանջով:

Թումանյանի մասնակցությունը անհավանական չէ, քանի որ նա տարբեր առիթներով հանդես է եկել նույն եղիգարովի գործելակերպի, հատկապես հակահայկական գործողությունների դեմ (տե՛ս հուլիսի 7, 30, օգոստոսի 10):

Հեռագիրն ստորագրել են 15 լիազորներ, հավանաբար նաև Թումանյանը:

«Մշակ», 1906, թիվ 149:

Հուլիսի 7, ՕծուՆ. – Թումանյանի նախաձեռնությամբ կայանում է Լոռու 40 գյուղերի ներկայացուցիչների խորհուրդ:

Որոշվում է փոխարքային հեռագիր ուղարկել՝ բողոքելով Հասան բեկ եղիգարովին Բորչալուի գավառի ազնվականների պարագլուխ ընտրելու դեմ: Խորհուրդը նրան համարում է հայ-թուրքական կոտորածների, ամեն տեսակ վայրագությունների հեղինակ և պահանջում դատի տալ՝ որպես հանցագործի:

«Ալիք», 1906, թիվ 60. ԼԿ, 67:

Հուլիսի <8, 9>, ՕծուՆ. – Թումանյանի ստորագրությամբ հեռագիր փոխարքա Վորոնցով-Դաշկովին:

Բողոք է Հասան բեկ եղիգարովի անօրինությունների դեմ: ԼԿ, 67:

Մինչև հուլիսի 9-ը, Ջալալօղլի. – Պաշտոնական նամակ Թիֆլիս՝ Ալեքսանդր Խատիսյանին (չի պահպանվել):

Հայտնում է, որ գավառապետ Ռեզանովին անարդարացիորեն պաշտոնից հեռացնելու պատճառով Լոռու և Բորչալուի նահանգներում վերստին սրվել են հայ-թուրքական հարաբերությունները:

ԵԼԺ 10, 20, 452:

Հուլիսի 9, Ջալալօղլի. – Պաշտոնական նամակ Թիֆլիս՝ Բարեգործական ընկերության նախագահ Սամսոն Հարությունյանին և «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Ջալանթարին:

Նրանք նաև փոխարքայությանը կից հայ-թուրքական խաղաղության խորհրդի անդամներ էին: Խնդրում է օգնել գավառներից Թիֆլիս եկող պատգամավորությանը՝ ներկայանալու փոխարքային: Պատվիրակության նպատակն էր կանխել Ռեզանովին գավառապետի պաշտոնից անհիմն կերպով հեռաց-

նելը, որ կարող էր պատճառ դառնալ հայ-թուրքական նոր բախումների:

ԵԼԺ 10, 19-20, 450-452:

Օգոստոսի 2. – Տպագրվում է թղթակցություն՝ «Նամակ Բորչալուի գավառից»՝ Հարբո ստորագրությամբ:

Պաշտպանում է գավառապետ Ռեզանովին, որ շատ բան էր արել գավառում խաղաղություն հաստատելու համար: Շեշտվում է հանցագործներին, հատկապես եղիգարովներին պատժելու նրա վճռականությունը: Բողոքում է Հասան բեկ եղիգարովին ազնվականների պարագլուխ ընտրելու դեմ. «Մեր ժողովրդի կարծիքն է, որ եթե չլինեին եղիգարովները, Թիֆլիսի ու Բորչալուի գավառներում ու Թիֆլիսում անցյալ տարի ոչ մի թալան, ավերմունք, թուրք-հայկական ընդհարումներ չէին պատահի»:

Անդրադառնալով Հասան բեկ եղիգարովին ազնվականների պարագլուխ ընտրելու վերաբերյալ արձանագրություն կազմելու և գավառապետի միջոցով «բարձր իշխանության» ուղարկելուն՝ թղթակիցը տեղեկացնում է. «Մեր գավառի հայ-թուրքական խաղաղարար կոմիսիայի անդամներ պ. պ. Թումանյան և Վ. Մեհրաբյան* հրաժարվեցին մասնակցելու այդ կոմեդիաներին»:**

* Վախթանգ Մեհրաբյանը Շուլավերի տանուտերն է:

** Նկատի ունի մասնավորապես այն, որ հուլիսի 24-ին փոխարքայի դիվանատան առանձին հանձնարարությունների պաշտոնյա Մասալովը եկել է գավառ, հյուրընկալվել է «թուրք երևելիների տներում ու վերադարձել» առանց որևէ օգտակար գործ կատարելու:

«Մշակ», 1906, թիվ 165:

Օգոստոսի 6. – Տպագրվում է Թումանյանի «Նոր պրովոկացիա» անստորագիր հոդվածը:

Գրում է, որ Բորչալուի գավառում կատարվող մտահոգիչ խմորումները, «ինչ-որ խորհրդավոր պատրաստությունները» վկայում են հայ-թուրքական նոր ընդհարումների մասին. «Բորչալուի գավառից ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ այնտեղ վերջին ժամանակներս մի առանձին հուզում, խլրտում է սկսվել թուրք ազգաբնակչության մեջ: Նրանք իջնում

են սարերից, սովորական ժամանակից չափազանց շուտ թողնում են իրենց յայլաղները և գյուղերը վերադառնում՝ ինչ-որ պատրաստություններ տեսնելով և ապագայի դեպքերին սպասելով: Եվ այդ բոլորի դիտորդն ու կազմակերպողը դարձյալ տխրահռչակ Հյուսեին բեկ Եդիգարովն է»:

Հոդվածում մտահոգություն է հայտնվում նաև թուրք «խեղճ ու կրակ գյուղացիության» ճակատագրի վերաբերյալ: Ստոր դավերը մոլորեցնում են նրան, թշնամություն սերմանում հայ գյուղացիության հանդեպ: Անհրաժեշտ է համարվում բարձրացնել վախեցած ու տառապած հայ մարդու ինքնագիտակցությունը, ցույց տալ «ոճրագործ բեկի» և իշխանությունների համագործակցությունը: Կոչ է արվում երկու ժողովուրդների աշխատավորությանը՝ միանալ և «տապալել բռնության ու հարստահարության լուծը»:

«Ալիք», 1906, թիվ 82. ԼԿ, 68-70:

Օգոստոսի 10, Շուլավեր. – «Ձանգ» շաբաթաթերթին ուղարկվում է «Վերջին տեղեկություններ» վերնագրով թղթակցություն:

Հավանաբար գրել է Թումանյանը. «Ամբողջ Բորչալուի գավառում սաստիկ հուզմունք կա ազգաբնակչության մեջ գավառապետ Ռեզանովի՝ Գորի տեղափոխվելու պատճառով: Այդ մարդը համեմատաբար շիտակ ուղղության տեր էր. նա հալածում էր առհասարակ բեգերին, բարյացակամ աչքով նայելով հայ և թուրք աշխատավոր ժողովրդի վրա: Նա հակառակ էր մասնավորապես տխրահռչակ Եդիգարովներին: Գավառապետի տեղափոխման մեջ այդ վերջինների մատը անպայման խառն է: Գավառի կողմից գալիս է արդեն պատգամավորություն՝ բաղկացած մոտ 50 մարդուց – հայ, ռուս և վրացի, որ վաղը՝ օգոստոսի 12-ին կներկայանա խնդրագրով փոխարքային (տե՛ս հուլիսի 9): <...> Եթե բարձր իշխանությունը արձագանք չտա պատգամավորության դիմումներին, այն ժամանակ ամբողջ Բորչալուի խաղաղ ժողովուրդը պիտի իսպառ կորցնե իր հավատը դեպի իշխանությունները և պիտի համոզվի, որ կառավարության ջերմ ցանկությունն է՝ ջարդ ու ավերակ տեսնել գավառում...»:

«Ձանգ», 1906, թիվ 2:

Օգոստոսի 11, Թիֆլիս. – «Ձանգ» շաբաթաթերթը տպագրում է «Րոպեի լրջությունը» առաջնորդողը:

Զգուշացնում է սպասվող նոր աղետներից, անդրադառնում է գավառապետ Ռեզանովի հանիրավի պաշտոնանկությանը՝ հայտարարելով, թե «կառավարությունը և բեկերը այսպիսով մի անգամ ևս հայտնվում են սրտաշարժ համերաշխության մեջ»: Հոդվածն անդրադառնում է մի այլ կարևոր հանգամանքի, այն, թե՛ «կան խաղաղության և համերաշխության հանդիսավոր թափորներ Ղազախի կողմերում, ուր մեր ինտելիգենտ ընկերները* մի ազնիվ, սքանչելի եռանդ են թափում, ամրապնդում են երկու աշխատավոր հարևան ժողովուրդների խզված կապերը»:

* Անկասկած է, որ Ղազախի կողմերում խաղաղարար գործունեություն ծավալած ինտելիգենտներից մեկը Թումանյանն է: Խմբագրությունը բանաստեղծի անունը չի հիշատակել՝ հավանաբար տեղեկություն ունենալով, որ նա ոստիկանական հսկողության տակ է (տե՛ս օգոստոսի 10):

«Ձանգ», 1906, թիվ 2. ԼԿ, 72:

Օգոստոսի 12. – Տպագրվում է Ալ. Քալանթարի «Ինքնապաշտպանության խնդիրը» հոդվածը:

Հիշեցնում է 1905 թ. հունիսի 1-ին և օգոստոսին հայերից պաշտպանական պահակախմբեր կազմելու խնդրանքով փոխարքային ուղղված դիմումի և հայերի՝ ինքնապաշտպանության դիմելու պատճառների մասին*:

* Չի բացառվում, որ այս հիշեցումը կապված է Ս. Հարությունյանին և Ալ. Քալանթարին Թումանյանի գրած պաշտոնական մամակի հետ (տե՛ս հուլիսի 9):

«Մշակ», 1906, թիվ 174:

Օգոստոսի 12. – Տպագրվում է «Վերջին տեղեկություններ» թղթակցությունը (տե՛ս օգոստոսի 10):

«Ձանգ», 1906, թիվ 2:

Օգոստոսի 15, Էջմիածին. – Բացվում է «Կենտրոնական ժողովը»:

Քննարկվում են հայ ժողովրդի կացությանը և մշակութային կյանքին վերաբերող հրատապ հարցեր:

«Զանգ», 1906, թիվ 4:

<Օգոստոսի երկրորդ կես>, Դսեղ. – Պաշտոնական նամակ Շուլավեր՝ Լոռի - Բորջալուի գավառապետ Պ. Լեոնտևին:

Ներկայացնում է գավառի բնակչության ծանր կացությունը. «Գողության և ավազակության հետևանքով քայքայվել է մեր գավառը»: Մասնավորապես թուրքական Ակորի գյուղի բնակիչները «գողությամբ ուղղակի քայքայում են իրենց հարևաններին»: Այդ ամենի առաջն առնելու համար «հարկավոր է իշխանություն, ուժեղ և արդարադատ իշխանություն»: Եվ վերջում. «Օգնեցեք, ի սեր Աստծո, խեղճ գյուղացիներին, նրանք կործանվում են: Բառիս բուն իմաստով կործանվում են»:

ԵԼԺ 10, 20-21:

<Օգոստոսի երկրորդ կես>. – Դսեղից մեկնում է Թիֆլիս: ԵԼԺ 10, 21:

<Օգոստոսի երկրորդ կես>, Դսեղ. – Մտադրություն «մի քանի օրից հետո» Լեոնտևի մոտ գնալու:

ԵԼԺ 10, 21:

<Ամառ>, Դսեղ. – Բանաստեղծին այցելության են գալիս նկարիչներ Փ. Թերլեմեզյանը, Ալ. Միրզոյանը և կոմպոզիտոր Գր. Սյունին:

ՆԹ 32, 90:

<Ամառ>, Դսեղ. – Նամակ Ա. Լևենին:

Գնահատում է նրա ջանքերը Դսեղ-Շահալի խճուղին կառուցելու համար: Ուշադրություն է հրավիրում «Քոլագերան կայարանից Դեբեդ գետի աջափնյա գյուղերով» նոր ճանապարհի կառուցելու անհրաժեշտության վրա:

ԵԼԺ 10, 21:

Սեպտեմբերի 27, Թիֆլիս. – «Մշակը» տեղեկացնում է, որ Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը հոգաբարձու Թումանյանին նշանակել է վերակացու և գրադարանապետ:

«Մշակ», 1906, թիվ 209:

Սեպտեմբերի 28. – Թիֆլիսի հասարակական գրադարանում կայանում է Հայոց ազգագրական ընկերության ընդհանուր ժողովը:

Նախագահում էր Ալ. Քալանթարը: Թումանյանի մասնակցությունը անհավանական չէ:

«Մշակ», 1906, թիվ 210:

Սեպտեմբեր, Թիֆլիս. – Վանեցի ուսուցիչ Ա. Հացագործյանը հանդիպում և ծանոթանում է Թումանյանի հետ:

Տարբեր գավառներից հավաքված մի խումբ ուսուցիչների հետ եկել էր Ներսիսյան դպրոցում վերապատրաստվելու: Վանի Սանդիսոյան դպրոցի գրադարանի վարչության հանձնարարությամբ ուսուցիչները գրողներից և հրատարակիչներից նվերներ պետք է հավաքեին դպրոցի գրադարանի համար: Առաջինը դիմում են Թումանյանին:

Հացագործյանը հիշում է. «Ամենից առաջ մենք մեր միսիան փորձեցինք բանաստեղծ Հովհ. Թումանյանի մոտ: <....>

Երկու ընկերներով մոտեցանք բանաստեղծի դռանը. դուռը բացվեց, և մենք սիրալիր կերպով հրավիրվեցինք ընդունարան-դահլիճը, որի գեղեցիկ կահավորումը մեծ տպավորություն թողեց մեզ վրա:

Բանաստեղծ Թումանյանը մյուս սենյակից ներս մտավ: Ճիշտ մեր տեսած նկարների Թումանյանը, ժպտուն և կենսուրախ:

Երբ ծանոթացավ մեզ ու մեր նպատակի հետ, բացեց իր գրադարանը և իր բոլոր երկերից մի-մի, նույնիսկ մի քանիսից երկուական օրինակ նվիրեց»:

ԹԺԳ, 581-582:

Յուլիտեմբերի 15. – Տպագրվում է («Երկիր», 1906, թիվ 13) «Գաղթականի երգը» («Կռունկն երկնքում ճամփա կրհանի..») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 156, 590-591:

Յուլիտեմբերի 26. – Տպագրվում է լուր, որ ստացվել է Ю. Веселовский, «Очерки по армянской литературе и жизни» գիրքը:

«Մշակ», 1906, թիվ 234:

Հոկտեմբերի 29. – Տպագրվում է («Երկիր», 1906, թիվ 25, էջ 2) Մ. Գորկու «Легенда о Марко» (Валахская легенда) ստեղծագործության թուրքական թարգմանությունը՝ «Վալախական լեգենդ» վերնագրով:

ԵԼԺ 2, 258-259, 598:

Հոկտեմբերի 31. – Քերովբե Նազարյանի նամակը թուրքականին՝ Լոռուտից:

Խնդրում է օգնել գյուղի նորաբաց դպրոցը նյութապես ապահովելու գործին:

ԳԱԹ ԹՖ, 1809 (414լր.):

Նոյեմբերի 6. – Ք. Նազարյանի նամակը թուրքականին՝ Լոռուտից:

Շնորհակալություն է հայտնում գյուղում դպրոց բացելու նախաձեռնությանը բանաստեղծի աջակցության համար:

ԳԱԹ ԹՖ, 1809 (գ.2, թիվ 414ա):

Նոյեմբերի 26, դեկտեմբերի 19-22. – Ն. Աղբալյանի նամակը թուրքականին՝ Լոռանից:

Նյութական օգնություն է խնդրում բանաստեղծից. «... արդեն 3 օր է, որ չեմ ճաշում, որովհետև ճաշարանիս պարտքն արդեն շատացել է <....>, միանվագ մի 30 ռ. գտեք ու ղրկեք, կուզեք պարտք, կուզեք նվեր, օգնություն, օժանդակություն կամ կանխավճար՝ միևնույն է»: Իր աշխատակցությունն է առաջարկում «Երկիր» օրաթերթին և ուզում է, որ թուրքականը աջակցի: Տեղեկացնում է, որ ավելի ծանր վիճակի մեջ է Դեմիրճյանը:

* Նամակը գրված է նոյեմբերի 26-ին, բայց ուղարկվել է ավելի ուշ՝ իր կացության մասին մի չափածո կիսագրաբար հիշեցումով՝ թվագրված դեկտեմբերի 19-22:

ՈՒՀ 5, 375-376:

Դեկտեմբերի 14. – Հովհ. Տեր-Մարտիրոսյանի՝ դեկտեմբերի 14-ի նամակը թուրքականին՝ Երևանից:

Միմոն Զավարյանի հանձնարարությամբ վիճակագրական և ժամանակագրական մանրամասն տեղեկություններ է

խնդրում 1905-1906 թվականներին Բորչալուի գավառում հայթուրքական ընդհարումների ժամանակ հայերի վրա կատարված հարձակումների, կրած վնասների չափի, մարդկային զոհերի մասին և թե որքանով «հայերը նպաստել են ընդհարմանը, տնտեսական դրությունը ո՞ր չափով դեր է խաղացել այդ ընդհարման մեջ, հայերի բարվոք վիճակը ինչպե՞ս է ազդել թուրքերի վրա և թե բեկերն ու կառավարչական պաշտոնյաները որչափով նպաստել են այդ ընդհարմանը»:

ԳԱԹ ԹՖ, 2235 (1156):

Դեկտեմբերի 24. – Առաջին անգամ տպագրվում է («Երկիր» օրաթերթ, 1906, 24 դեկտեմբերի, թիվ 70) «Հայոց լեռներում» («Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 206-207, 608:

Դեկտեմբեր. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», 1906, թիվ 12, էջ 405-406) «Աղվեսը» («Աղվեսն եկավ բարձր սարից...») բանաստեղծությունը՝ «Միջնադարյան ժողովրդականից» ենթավերնագրով:

ԵԼԺ 1, 212-213, 611:

<Դեկտեմբեր>. – Նամակ Ալեքսանդրապոլ՝ Ավ. Իսահակյանին (չի պահպանվել):

Խնդրում է օգնել եղբորը, հավանաբար Ռոստոմին, Դսեղի բնակչության համար այլուր հայթայթելու*:

* Իսահակյանը, դիմելով տեղացի Վարդիկովներին, երկու վագոն այլուր է ձեռք բերում՝ Դսեղ ուղարկելու համար. ունևորներին պետք է վաճառվեր, չքավորներին տրվելու էր անվճար:

ՆԹ ՀԶ, 91:

1 9 0 7

Զմեռ. – Ա. Հացագործյանի երկրորդ հանդիպումը թուրքականին հետ (առաջինը՝ 1905, սեպտեմբեր):

Դասախոսի հիվանդության պատճառով դասը վարում է թուրքականը: Հացագործյանը հիշում է. «Նրա մուտքն ընդունվեց բուռն ծափերով: Մենք բոլորս ուրախացանք, քանի որ այդպի-

սով առիթ էր ստեղծվել լսելու բանաստեղծին: Չիմացանք, թե ժամը ինչպես սահեց. հափշտակված էինք նրա խոսելու, պատմելու եղանակով, արտահայտության նրա մտերմական ձևերով, ունկնդիրներին գրավելու մեծ ծիրքով»:

Դասից հետո թումանյանը վանեցի երեք ուսուցիչների նվիրում է սպիտակեղենի կտոր, տանում դերձակի խանութ և նրանց համար պատվիրում ուսանողական կոստյումներ: Հուշագրողը շարունակում է. «Առարկել չկարողացանք, և երբ դերձակը մեր չափերն էր վերցնում, բոլորիս աչքերի մեջ արցունքը լճացել էր: Թումանյանի այս անսահման բարությունն ու հոգածությունը ավելոծել էր մեր սրտերը»:

ԹԺՅ, 582-583:

Հունվարի 1. – Տպագրվում է («Ժամանակ», 1907, թիվ 1, էջ 2) «Հին կռիվը» պոեմի երրորդ («Երկրում») երգը՝ «Լևոնի կռիվը (մի հատված պոեմից)» վերնագրով:

ԵԼԺ 4, 73-79, 551:

Հունվարի 24-25. – Թիֆլիսի չորրորդ քաղաքամասի բնակչության կողմից առաջադրվում է երկրորդ պետական դումայի պատգամավոր ընտրող պատվիրակի թեկնածու՝ Դաշնակցության կողմից*:

* Չորրորդ քաղաքամասում Դաշնակցությունն ուներ պատվիրակների 9 թեկնածու՝ Հովհ. Թումանյան, Ավ. Ահարոնյան, Ստ. Լիսիցյան, Գ. Խատիսյան և ուրիշներ: Ալեքսանդրապոլի գավառից փետրվարի 3-ին Դաշնակցության կողմից պատվիրակ է առաջադրվել Ավ. Իսահայանը:

«Ժամանակ», 1907, թիվ 19:

Հունվարի 26. – Տպագրվում է Ռուսաստանի երկրորդ պետական դումայի համար պատգամավոր ընտրող պատվիրակների ցուցակը:

Չորրորդ քաղաքամասից Դաշնակցության կողմից առաջադրված ցուցակում ութերորդը Հովհ. Թումանյանն է (ընտրողական ցուցակում թիվ 1605):

«Ժամանակ», 1907, թիվ 19:

Հունվարի 28. – Տեղի է ունենում Թիֆլիս քաղաքից երկ-

րորդ պետական դումայի պատգամավոր առաջադրող 81 լիազորների (պատվիրակների) ընտրությունը:

Պետք է առաջադրվեր մեկ պատգամավոր: Դաշնակցության չորրորդ քաղաքամասի թեկնածուները չեն անցնում, հաղթում են սոցիալ-դեմոկրատների պատվիրակները:

«Ժամանակ», 1907, թիվ 21:

Հունվար, Թիֆլիս. – Գրում է «Ժամանակն անվերջ, տիեզերքն անհուն...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 215, 612:

Հունվար. – Տպագրվում է («Հասկեր», 1907, թիվ 1, էջ 5) «Կաքավի գովքը» («Արև բացվեց թուխ ամպերեն...») բանաստեղծությունը՝ «Կաքավի երգը» վերնագրով և «Ժողովրդական» ենթավերնագրով:

ԵԼԺ 1, 214-215, 611-612:

Փետրվարի <1-3>, Թիֆլիս. – Նամակ Լոզան՝ Նիկ. Աղբալյանին (չի պահպանվել):

Խոստանում է վերջինիս խնդրած (տե՛ս 1906, նոյեմբերի 26, դեկտեմբերի 19-22) 30 ռ. ուղարկել:

ՈՒՅ 5, 376:

Փետրվարի 12. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Լոզանից:

Շուտափույթ նյութական օգնություն է խնդրում բանաստեղծից. «Դեկտեմբերի 19-ից կանոնավոր ապրուստից զուրկ, քաշ եմ գալիս ողորմածությամբ: Ո՛չ դառնալ կարող եմ, ո՛չ մնալ: Շտապիր, Աստված կսիրես, այլևս սիրտ չմնաց»:

ՈՒՅ 5, 376-377:

Փետրվարի 16. – Առաջին անգամ տպագրվում է («Հուշարար», 1907, թիվ 1, էջ 5) «Ժամանակն անվերջ, տիեզերքն անհուն...» բանաստեղծությունը՝ «Անվերջ...» վերնագրով:

ԵԼԺ 1, 215, 612:

Փետրվարի 15. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Լոզանից:

Տեղեկացնում է, որ Կարսից այլևս դրամական նպաստ չի

ստանալու: Ներկայացնում է իր անելանելի կացությունը: Միակ հույսը մնացել է թունանյանի խոստացած 30 ռուբլին. «Հիմա, խնդրեմ, շուտով (ինչ շուտով, անմիջապես ուղարկես այդ 30ռ., որով ոչ թե միայն ես, այլ չորս-հինգ սոված պիտի գլուխ պահենք)»: Վերջում ավելացնում է. «Այ քեզ նամակ, փոխանակ գրականությունից և այլն գրելու, գրում եմ չորս երես դրամի մասին. *գրականություն սիրելու համար էլ պետք է կուշտ լինել*»:

ՈՒՐ 5, 377-378:

Փետրվար. – Տպագրվում է («Հասկեր», 1907, թիվ 2, էջ 50) «Հանլիկի աղոթքը» պատմվածքը:

Փոխադրություն է Կլավդիա Լուկաշևիչից:

ԵԼԺ 5, 150, 758:

Փետրվար. – Տպագրվում է («Հասկեր», 1907, թիվ 2, էջ 81-88) «Գիքորը» պատմվածքի առաջին կեսը:

ԵԼԺ 5, 37, 745:

Մարտի 15. – Դստեր մետաքսե թաշկինակի վրա գրում է «Աշխենիկն՝ իր հայրիկը...» քառատողը՝ նրա ծննդյան օրվա առթիվ.

Աշխենիկին՝ իր հայրիկը –

Ամեն տեսակ մրգով լիքը.

Պակաս էր միայն բաղիբուղին,

Այն էլ եկող իր «Ծընունդին»:

ԵԼԺ 1, 403:

Մինչև մարտի 20. – Նամակ Լոզան՝ Ն. Աղբալյանին (չի պահպանվել):

Հայտնում է, որ նրա համար Թիֆլիսում հնարավոր է գրականության դասեր գտնել:

ՈՒՐ 5, 381:

Մարտի 20. – Ն. Աղբալյանի՝ մարտի 20-ի նամակը Թունանյանին՝ Լոզանից:

Շնորհակալություն է հայտնում ստացած 80 ֆրանկի համար: Վերստին գրում է իր և Դեմիրճյանի նյութական դժվարությունների, հոնորարով «Մուրճին» աշխատակցելու ցանկության մասին:

Ոգևորված է Թիֆլիսում գրականության դասեր ունենալու հավանականությամբ. «Քո նամակը (տե՛ս մինչև մարտի 20), որ մեծ հաճույքով կարդացի, ինձ ուրախացրեց: Եթե իսկապես հայոց նոր գրականության դասեր տան ինձ, ամենալավ վիճակում դրված կլինեմ. այն է՝ հաց գտնել սիրած պարապմունքով: Դրան կարելի է կցել տեսություն գրականության, որ, իմ կարծիքով, կարելի է ամենահետաքրքրական առարկան դարձնել՝ չոր ու ցամաք սահմանումների տեղ սովորեցնելով աշակերտներին բանաստեղծական ու վիպական երկեր կարդալ ու *վայելել*, ուրիշ խոսքով՝ կիրթ ճաշակի տեր նոր հասարակություն պատրաստել, նոր միջավայր և դրանով հնարավոր դարձնել նոր ու կատարյալ գրականության աշխարհի գալը»:

ՈՒՐ 5, 378-381:

Մարտ. – Տպագրվում է («Հասկեր», 1907, թիվ 3, 122-129) «Գիքորը» պատմվածքի երկրորդ կեսը:

ԵԼԺ 5, 37-53, 745-748:

Ապրիլի 1. – Տպագրվում է («Ժամանակ», 1907, թիվ 71) «Ընտրյալը» («Հոգու սրբբազան կրրակով վառված...») բանաստեղծությունը՝ «Ազատության պատմությունը» ենթավերնագրով:

ԵԼԺ 1, 216-217, 612:

Մարտի 29. – Դ. Դեմիրճյանի բացիկը Թունանյանին՝ ժնկից.

«Սիրելի Օհանես, մի փոքրիկ համբույր եմ դրկում քեզ այս քարտով և եթե վստահանամ, որ սահմանի վրա չեմ թոցնում, այսպիսի քարտեր շատ ունիմ պահած քեզ և Լևոնի համար: Հիմա էլ այս սիստեմին եմ հետևում, որ կարողանամ ձեզանից մի երկտող ստանալ»:

Դեժ XIV, 309:

Ապրիլի 14. – Տպագրվում է («Փայլակ», 1907, թիվ 6) «Անկեղծ չենք» հոդվածը՝ «Մեր կյանքից» խմբագրական խորագրի տակ:

Ուղղված է ժամանակի արատավոր հասարակական բարքերի, կեղծ ազգասերների, կեղծ գործիչների, ընդհանրապես

միջավայրում տիրող ստի ու կեղծիքի դեմ: Այս ամենը համարում է «դարավոր կարգերի ու հասկացությունների հեղաշրջումի», «մեծ ակելոծությունների ու ակնկալությունների» հետևանք: Այսպիսի իրադրության մեջ առանձին նշանակություն է տալիս անկեղծ, սրտալի խոսքին: Դրա փոխարեն իրենց հասարակության առաջնորդ համարող մարդիկ պարզապես դերասաններ են կյանքի մեծ բեմի վրա: Բայց «բեմի վրա խաղացողները շնորհքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները՝ ցածր են ու կեղծավորները»: «Ահա սա՛ ներկայանում է ամեն տեղ որպես չհասկացված ու հալածված գաղափարական գործիչ, մյուսը՝ նշանավոր հերոս է խաղում, երրորդը՝ հրապարակախոսություն է սարքել, չորրորդը՝ բարեգործ է ձևանում, հինգերորդը՝ գրող է կեղծում, վեցերորդը՝ հանդիսանում է արդեն որպես նահատակ, յոթերորդը՝ գալիս է որպես դատավոր ամենքին մեղադրելու և ամենքից հաշիվ ուզելու...»: «Ինչպես դերասանն ունի իր դերը, որ տանում է», ինչպես «իսկական գործիչն ունի իր խաչը, որ կրում է», այս կարգի մարդիկ էլ «այս կամ այն գործին կաչելով, փոխանակ գործի ծանրության տակ մտնելու և տանելու, իրենք են բարձրանում, հեծնում նրա վրա ու շինում են իրենց էջը»: Եվ վատթարն այն է, որ այդ ամենը կատարվում է ժողովրդի անունից: «Ժողովուրդն էլ է կեղծում: Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետներին իրենց շինած հողվածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ:

– Տեսեք, ժողովուրդը մեզ հետ է:

Դե եկեք ու ջոկեցեք իսկականը կեղծիքից»:

ԵԼԺ 6, 150-152, 696:

<Ապրիլի կեսեր>. – Մեկնում է Բաթում:

Առիթը հավանաբար ապրիլի 12-ի այն հաղորդումն էր («Փայլակ», թիվ 5), թե նավահանգստում ընդհարումներ են տեղի ունեցել հայ, թուրք, վրացի բանվորների միջև: Փիլ. Վարդազարյանին ուղղված նամակում (տե՛ս ապրիլի 22) գրում է. «Բաթումից նոր են վերադառնում: Էնտեղ էլ ընդհարում էր պատահել մի կողմից՝ թուրքերի ու վրացիների, մյուս կողմից՝ հայերի մեջ: Երկու կողմից էլ կային սպանվածներ և վիրավորվածներ:

Մի կերպ կանգնեցրինք. բայց ո՞վ կերաշխավորի, թե էդ մութ ու բութ բազմությունը չի սկսիլ նորից: Քանի գիշեր է անքուն եմ, գլուխս շշմած է»:

ԵԼԺ 10, 23, 455:

Ապրիլի 16. – Ավետիս Պողոսյանի պաշտոնական գրությունը թումանյանին:

Յրավիրվում է մասնակցելու ապրիլի 17-ին՝ ցերեկվա ժամը 1-ին, գյուղատնտեսական ընկերության շենքում կայանալիք խորհրդակցությանը: Տեղեկացվում է նաև, որ խորհրդակցությանը հրավիրված են Ալ. Քալանթարը, Ռուբեն Խանազատյանը, Լ. Սարգսյանը, Ղ. Աղայանը: Քննարկվելու էր հրատարակչական ընկերություն ստեղծելու հարցը:

ԳԱԹ ԹՖ, 1944 (506):

Ապրիլի 17. – Ստեղծվում է Թիֆլիսի ժողովրդական համալսարանի հայկական սեկցիա:

Գաղտնի քվեարկությամբ անդամներ են ընտրվում Ալ. Խատիսյանը, Գ. Խաժակը, Լ. Բաբայանը, Արտ. Աբեղյանը, որոնք միանում են նախօրոք ընտրված բանվորական ներկայացուցիչների հետ ու կազմում համալսարանի հայկական սեկցիան:^{*} Համալսարանն ուներ նաև ռուսական, վրացական, թուրքական սեկցիաներ:

^{*} Այդ սեկցիայի պատվերով է թումանյանը կարդացել «Կյանք և գրականություն» դասախոսությունը (տե՛ս հունիսի 10):

«Փայլակ», 1907, թիվ 10:

Ապրիլի <22>. – Բաթումից վերադառնում է Թիֆլիս:

ԵԼԺ 10, 23:

Ապրիլի 22, Թիֆլիս. – Նամակ Շվեյցարիա՝ Փիլ. Վարդազարյանին:

Գրում է, որ 1905-1907 թթ. արյունալի իրադարձությունները խոր և անցանկալի հետք են թողել մարդկանց հոգեբանության, հասարակական գիտակցության մեջ. ասպարեզ է բացվել «վայրենի բնազդների» արթնացման համար, մարդիկ դարձել են «փչացած, գազան ու սրիկա, անազնիվ ու խարդախ», «մարդիկ քիչ են – գազանները շատ»: Մասնավորապես

«գազանության» մասին գրում է. «ես բառը մենք էլ են մտքով չենք գործածում, ինչ որ գործ ենք անել քեզ հետ, երբ դու էստեղ էիր: Քեզանից հետո շատ բաներ տեսանք, և շատ բաներ փոխեցին իրենց իմաստը: Գազանությունը դու չգիտես, թե ինչ բան է. մենք արդեն գիտենք: Եվ ես դրանից և սարսափում եմ, և զգվում, և ամաչում: Դրա համար էլ էս ավելոծությունների հենց սկզբից ես սիրել եմ իմ ճերմակ դրոշակը և խաղաղարարի պաշտոնը»:

Գնահատելով հանդերձ Դաշնակցության դերը ազգամիջյան ընդհարումների շրջանում հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում՝ միաժամանակ նկատում է. «Ինքնապաշտպանության ժամանակ գրեթե ամբողջ կովկասի հայ ժողովուրդը անխտիր մտավ դաշնակցության մեջ և ահագին քանակությամբ ցեխ ներս բերավ, որից հիմի իրենք էլ են զգվում իբր թե: Եղ մի կողմից: Մյուս կողմից էլ, որովհետև սա դարձավ մի ռազմական բանակ, դժվար է կարգին պահել և երբ որ կռիվ չկա – ինքնըստինքյան էլ քանդվելու է և քանդվում է»: Տեղեկացնում է, որ Շանթի և Լիսիցյանի հետ «դասագիրք են կազմում»:

ԵԼԺ 10, 22-23:

Մինչև մայիսի 5. – Լույս է տեսնում «Գիքորը» պատմվածքը առանձին պատկերազարդ հրատարակությամբ:

Արտատպված է «Հասկերից»:

ԵԼԺ 10, 745:

Մայիսի 5. – Տպագրվում է լուր «Գիքորի» նոր լույս տեսած առանձին հրատարակության մասին:

«Փայլակ», 1907, թիվ 18:

Մայիսի 6, Թիֆլիս. – Շանթի նամակը Շվեյցարիա՝ Մարիամ Թումանյանին:

Կա Հովհ. Թումանյանին վերաբերող ուշագրավ տեղեկություն. «Հարցնում եք Օհանեսի մասին. անցած տարի գյուղն էր ու գեներալ նահանգապետություն էր անում, կատակ չկարծեք, լուրջ եմ խոսում: Իսկ այս ձմեռ Թիֆլիս է և անում է այն, ինչ արել է միշտ: Նրա էլ ամբողջ ուժը կորչում է ծրտի-պրտի

բաների վրա, ինքն էլ շատ լավ գիտե ու տանջվում է շարունակ. բայց կախարդական շրջանակի պես ընկել է մի անգամ մեջը ու էլ դուրս գալ չի կարողանում: Նա էլ սաստիկ ծարավ է գրական աշխատանքի ու ստեղծագործության: Ինչ որ տրտունջի առիթ չի տալիս, դա նրա որդիների հարստությունն է, վաղը մյուս օրը սպասում է իր տասներորդ զավակին»:

ԳԱԹ ՄԹՖ, 649բ:

Մայիսի 7. – Ծնվում է բանաստեղծի վերջին՝ տասներորդ երեխան՝ Թամարը:

ԵԼԺ 10, 30, 460:

Հունիսի 9. – Հայտարարություն հունիսի 10-ին՝ առավոտյան ժամը 10-ին, Հովհ. Թումանյանի «Կյանք և գրականություն» թեմայով դասախոսության մասին:

Դասախոսությունը պետք է կարդացվեր ժողովրդական համալսարանում:

«Ժայռ», 1907, թիվ 11:

Հունիսի 10, Թիֆլիս. – Դասախոսություն է կարդում Ջուբալովի տան ժողովրդական համալսարանում՝ «Կյանք և գրականություն» թեմայով:

Ջարգացնում է այն միտքը, թե ինչպես ժողովրդի կյանքն է, այնպես էլ՝ նրա գրականությունը. «Ժողովուրդներն ունենում են հազար ու մի դարդ-ցավ, այրող-մաշող խնդիրներ, սակայն կան խնդիրներ, որոնք համաժողովրդական են և որոնք իրենց հաստատուն կնիքը դնում են գրականության վրա»: Հայ կյանքի ամենացավոտ խնդիրը համարում է պանդխտությունը: Պատմական հանգամանքների բերումով ստացվել է «պանդուխտ ժողովուրդ, պանդուխտ գրականություն»: Այդ հոգեբանությամբ են ստեղծագործել Ալիշանը, Պեշիկթաշլյանը, Շահագիզը, Պատկանյանը: Բայց «օտար երկրում բուսած մի ծաղիկ չի կարող իր երկրի շունչն ու փարթամությունն ունենալ, մի մարդ, որ իր երկիրը չի տեսել, նա չի կարող այդ երկրի իսկական պատկերը տալ»: Այդ մեծ առաքելությունը իրագործում են «բնաշխարհիկ գրողները»՝ Աբովյանը, Աղայանը, Սունդուկյանը, Պռոշյանը և ուրիշներ:

Նախորդ շրջանի թե՛ տարաշխարհիկ, թե՛ բնաշխարհիկ գրողների պատմական մեծ ծառայությունն է համարում ժողովրդի մեջ ազատության ոգու արթնացումը. «Նախորդ շրջանի մեր այդ գրողները հայ երիտասարդությանը դեպի Արաքսի այն կողմն էին հրավիրում, այնտեղ էր նրանց կռիվը: Ապարդյուն չի անցնում ազատագրման շեփոթի ծայնը, ահա շարժվում է Արաքսի այն ափը, Ձեյթունն աղմկում է, և հայ ժողովուրդը էն գլխից ըմբոստացման ուղին բռնում: Այս հանգամանքը մեր վերջին պատմության ամենալավ էջերից մեկն է կազմում: Դեռ 50-ական թվականներից Գամառ-Քաթիպան, Րաֆֆին, Նալբանդյանը ազատության կռիվն էին բորբոքում և սրանք ստեղծեցին ժողովրդի մեջ մի տրամադրություն, որը խոր արմատներ գցեց նրա մեջ և վերջում՝ արդեն 90-ական թվականներին, խոսքի շրջանից անցավ գործի շրջանը. ըմբոստացումն իրականացավ»:

Գրականության զարգացման նոր շրջանի բնորոշ գիծն է համարում «գրաբարի և աշխարհաբարի կռիվը», պայքարը հանուն աշխարհաբարի: Այս պայքարում կարևորում է Նազարյանի և նրա «Հյուսիսափայլի», Աբովյանի և նրա «Վերք Հայաստանի», Շահազիզի և նրա «Լևոնի վշտի» դերը:

«Մեր գրականության երկրորդ շրջանի» սկիզբը համարում է Արծրունու և նրա «Մշակի» գործունեությունը (70-ական թվականներ), որ նշանավորվում է «հին և նոր սերնդի կռվով»: Կարևորելով «Մշակի» այս պատմական դերը՝ միաժամանակ նշում է, որ «Արծրունին, օժտված լուսավոր գաղափարներով, բայց և այնպես հայ գրականության վերաբերմամբ շատ տարօրինակ դիրք բռնեց: Այն բոլոր գրողները, որոնք չեն մասնակցում «Մշակին», չուզեց ճանաչել <...>, հայտնի գրողները մոռացության տրվեցին «Մշակի» կողմից, թեև նրանք ներկայումս մեր գրականության մեջ պատվավոր տեղ ունեն գրաված»:

Հայ նոր գրականության զարգացման երրորդ շրջանի սկիզբը ընդունում է 90-ական թվականները, երբ «կազմակերպվում էր հայ հեղափոխությունը, որ իր վրա վերցրեց տաճկահայ եղբայրների ծանր լուծի թեթևացման դժվարին միսիան»: Իսկ «Արաքսի այս ափի» «բնաշխարհիկ գրողները իրենց գրվածքներով գյուղի ցավն ու դարդն էին բերում», արծարծում էին նոր

ժամանակների «մեծ, այրող խնդիրները»: Սակայն այդ բոլորը «ուսումնասիրության առնելու» նպաստավոր պայմաններ չկան. «Մեզանում արհամարհված է հայ գրականությունը, ունենք շատ քիչ տոկոս ընթերցասեր երիտասարդության, <...> հայ գրողի և գրականության համար <...> ստեղծված է անտանելի կացություն»:

ԵԼԺ 6, 531-537:

Հունիսի 11. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Փարիզից:

Գրում է, որ հանդիպել է Շիրվանզադեին: Տեղեկացնում է, որ հրավիրվել է Ամերիկա՝ «Հայրենիքի» խմբագրի պաշտոնով, բայց մերժել է: Ձբադված է ֆրանսիական գրականության ու պատմության ուսումնասիրությամբ: Ափսոսում է, որ իրենք Վերնատանը այնքան էլ չեն հետաքրքրվել ֆրանսիական գրականությամբ. «Մենք՝ արուսակ ռուս և գերման գրականության ազդեցության տակ ենք եղել: Իսկապես ռուս գրականություն. գերմաներենից Շիլլեր, Գյոթե, Հայնե, անգլիականից էլ Շեքսպիր, Բայրոն, իսկ ֆրանսիականից ոչ ոք, այսպիսի մի գրականություն անծանոթ թողնել և անգետ մնալ նրա գաղափարներին ու գրածներին՝ հանցանք է: Հուսով եմ, որ այդ պակասը լրացնել կարողանամ»: Վերջում հայտնում է Վարդազարյանի հասցեն և հորդորում, որ բանաստեղծը նրան նամակ գրի: ՈՒՀ 5, 381-383:

Հունիսի 12. – Ստ. Լիսիցյանի նամակը Թումանյանին՝ Մանգլիսից:

Իր և Շանթի անունից հանդիմանում է ընկերոջը, որ «բանաստեղծի կոչումը» թողած՝ «դասախոսությունների հետևից է ընկնում» (տե՛ս հունիսի 10):

Հայտնում է, որ իրենց դասագրքի առաջին մասը պատրաստ է: Մնացած մասերի համար բանաստեղծի «շուտափույթ ներկայությունը անհրաժեշտ է» համարում և հանձնարարում է Մանգլիս գալիս հետը բերել մի շարք գրքեր՝ «Էմինյանի հավաքածուները» և «Արվանձտյանի բոլոր երկերը», «Ազգագրական հանդեսի» այն համարները, ուր նյութ կա», «ֆրանսերեն մի գիրք, ուր թռչունների նկարներ կան», «դպրոցական կենդա-

նաբանական և բուսաբանական ալբոմներ», Լինչի երկու հատոր «Արմենիան»», «Առձեռն բառգիրքը» և այլն:

ՈՒՅ 5, 305-306:

Հունիսի 13. – Տպագրվում է («Ժայռ», 1907, թիվ 14) Թումանյանի «Կյանք և գրականություն» դասախոսության մասին հաղորդագրություն և ընդարձակ շարադրանքը:

ԵԼԺ 6, 642:

Հունիսի 21. – Տպագրվում է լուր, որ Ստ. Լիսիցյանը, Հովհ. Թումանյանը և Լ. Շանթը կազմել և հրատարակում են հայոց լեզվի նոր դասագիրք՝ «Լուսաբեր» անունով:

«Ժայռ», 1907, թիվ 14:

Հունիսի 22. – Տպագրվում է («Ժայռ», 1907, թիվ 22) «Թյուրիմացության պատճառով» հոդվածը:

Արշ. Մեիրաբյանը «Ժայռում» Թումանյանի «Կյանք և գրականություն» դասախոսության շարադրանքը ներկայացնելիս (տես հունիսի 13) բանաստեղծի այն միտքը, թե գրողի և գրականության համար անտանելի պայմաններ են ստեղծված, և դա մեզ դեպի անկում է տանում, այնպես է հասկացել, թե դասախոսը նկատի ունի գրողների նյութական անապահով վիճակը, և դեպի անկում տանելը վերաբերում է ժողովրդին: Բանաստեղծը գրում է, որ իր միտքը «նեղ է հասկացված ու տգեղ»: Ինքը նկատի է ունեցել այն, որ գրականության զարգացման համար չկան նպաստավոր հասարակական պայմաններ, չկա «լուրջ գրական քննադատություն», բանիմաց ընթերցող. «Այս փոքրիկ ժողովրդի ի՞նչ մասը կարդալ գիտե, կարդացողների ի՞նչ մասն է հետաքրքրվում գրականությամբ, հետաքրքրվողներից քանի՞ հոգի են գիրք առնում, առնողներից էլ քանի՞սն են լավն ու վատը ջոկում...»: Ասելիքն ամփոփում է այսպես. «Նյութականի մասին, եթե խոսք է եղել՝ ասել են. մեր մեջ հենց որ խոսք է լինում գրականության ծախսող պայմանների մասին, միշտ նյութական վիճակն են հասկանում: Բայց դա որքան էլ ծանր հանգամանք լինի, ավելի շատ հետևանք է, քան թե պատճառ, և դա չի, որ գրականություն է ստեղծում: Գրականության համար պետք է ունենալ ճաշակով, հասկացող, գեղարվեստի

պահանջը դնող ու գրական գործը գնահատող հասարակություն»: Դա է պատճառը, որ մեր գրողներից շատերը հաջող գրական մուտքից հետո «հետզհետե թուլացել են և արբուն հասակում դարձել անպտուղ»: Դրան հակառակ՝ «լուսավոր երկրներում ու լավ միջավայրում ապրող» գրողները «հետզհետե զարգանում են ու բեղմնավորվում»:

ԵԼԺ 6, 152-153:

Մինչև հունիսի 28-ը, Մանգլիս. – Նամակ Դսեղ (չի պահպանվել): Հետաքրքրվում է, թե ինչպես են գյուղ հասել դուստրերը՝ Աշխենն ու Նվարդը:

ԵԼԺ 10, 24:

Մինչև հունիսի 28-ը, Մանգլիս. – Ստանում է դուստրերի՝ Աշխենի և Նվարդի, եղբոր՝ Վահանի նամակները՝ Դսեղից (չեն պահպանվել):

ԵԼԺ 10, 24, 456:

Հունիսի 28, Մանգլիս. – Նամակ Դսեղ՝ Աշխեն և Նվարդ Թումանյաններին:

Մանրամասնություններ է հաղորդում ամառանոցային առօրյայի մասին: Տեղեկացնում է, որ Շանթի հետ «ամբողջ օրը» աշխատում են «Լուսաբեր» դասագրքի վրա: Հետաքրքրվում է, թե ինչպես են երեխաները, կինը, մյուս հարազատներն ու ազգականները:

ԵԼԺ 10, 24-26:

<Հունիս>, Մանգլիս. – Գրում է «Սևուկ» («Ուլիկ») հեքիաթը:

Գրվել է «Լուսաբեր» դասագրքի համար:

ԵԼԺ 5, 178-179, 766-757:

Մինչև հունիսի 3-ը, Մանգլիս. – Ուտանավորներ է գրում «Լուսաբեր» դասագրքի Ա տարվա համար:^{*}

^{*} Գրել է մոտ 20 ինքնուրույն և թարգմանական արձակ և չափածո ստեղծագործություններ՝ «Աշնան վերջը», «Կույր աշուղը», «Ամպն ու սարը», «Կատու», «Գրիչ», «Շունը», «Ուլունք», «Վարդը» և այլն (տես ԵԼԺ 10, 458):

ԵԼԺ 10, 27:

Յուլիսի 3, Մանգլիս. – Նամակ Դսեղ՝ Օլգա Թումանյանին: Դետաքրքրվում է, թե գյուղում ինչպես է հանգստանում ընտանիքը: Դարցուկորձ է անում կամ տեղեկություններ է հաղորդում հարազատների ու ծանոթների մասին: Գրում է «Լուսաբեր» դասագրքի վրա իրենց աշխատանքի մասին. «Էս դասագիրքը հոգիներս հանեց: Միանգամայն հոգնել ենք: Վերջապես ամենածանր մասը վերջացրինք, մնացածը հեշտ է: Բայց անկասկած եղած դասագրքերից ամենալավն է: Արդեն տպագրության պատրաստություններն ենք տեսնում:

Էս տարի չգիտեմ ինչ, բայց եկող տարի, երբ մյուս տարիներն էլ հետը կտանք, կարող է կարգին եկամուտ բերել երեխեքս:»:

ԵԼԺ 10, 26-27:

Յուլիսի 3, Մանգլիս. – Բացիկ Դսեղ՝ ընտանիքին: Սկզբում՝ չափածո տողեր՝ նվիրված երկամյա դստերը՝ Սեդային.

Էս ում սիրուն աչիկն ա.
Էս ում ջանիկ մանիկն ա.

—

Հայրիկի Ծիտիկը,
Կաքավը, աղունիկը,
Սոխակը, կապիկը.

– Չգնաս...

Վերջում. «Այսօր դասագրքի Ա մասը վերջացրինք: Նկարներն ուղարկում ենք Պետերբուրգ: Երկրորդ մասն էլ գրեթե վերջացած է: Նոր ուսանավորներ են գրել դասագրքի համար (տե՛ս մինչև հուլիսի 3-ը)»:

ԵԼԺ 10, 27, 457-458:

Յուլիսի 7. – Ա. Չարգարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Տեղեկացնում է, որ ամռանը Լոռիում շրջագայելիս հյուրընկալվել է Թումանյանների ընտանիքում: Գրում է ստացած տպավորությունների մասին. «Քո եղբայր Ռոստոմի գին չունի, անգին էր ինձ համար և անչափ քաջ ու բարի. չգիտեմ ինչով կարող եմ նրա ծառայությունները վարձատրել: Մուշեղդ էլ պակաս չէր, մի շատ համակրելի երիտասարդ: Շատ ուրախ եմ,

որ այդպիսի որդիք ունես, մի խոսքով, չգիտեմ որին գովեմ՝ մորդ, քրոջդ, երեխայոցդ, թե եղբորդ...»:

ԳԱԹ ԹՖ, 1182 (629):

Յուլիսի 11. – Տպագրվում է «Նամակ խմբագրության» («Խարիսխ», 1907, թիվ 8):

Ստորագրել են Ստ. Լիսիցյանը, Գովհ. Թումանյանը, Լ. Շանթը. «Մեր դասագրքի մասին «Ժայռի» մեջ տպված լուրը առիթ է տվել ուսուցիչներից ոմանց մեզ դիմելու զանազան հարցերով ու առաջարկներով: Նրանք ենթադրել են, թե «Լուսաբերը» լինելու է բարձր դասարանների հայերենի ձեռնարկ: Դարկ ենք համարում հայտարարելու, որ մենք սկսել ենք սկզբից և առայժմ հրատարակում ենք առաջին տարվա դասագիրք - Այբբենարան և Առաջին ընթերցարան»:

ԵԼԺ 6, 154, 696:

Յուլիսի 12, Մանգլիս. – Մտադրություն «Լուսաբերի» տպագրության ժամանակ Թիֆլիս գալու, այնտեղից Դսեղ կամ Շուլավեր մեկնելու (չի մեկնել.- խմբ.):

ԵԼԺ 10, 29:

Յուլիսի 12, Մանգլիս. – Նամակ Դսեղ՝ Աշխեն Թումանյանին:

Տեղեկացնում է, որ ստացել է դուստրերի նամակները:* Գրում է մանգլիսյան իր առօրյայի մասին: Դետաքրքրվում է, թե ընտանիքն ինչպես է անցկացնում հանգիստը գյուղում, հարցնում է, թե ինչպես են եղբայրները, մայրը: Դայտնում է, որ իրենց դասագիրքը «արդեն պահանջում են գավառներից»: Ռուստեմից հիացական նամակ է ստացել Դսեղում իրեն ցույց տված ընդունելության մասին (տե՛ս հուլիսի 7). «Բժշկից՝ Ռուստեմից, մի նամակ եմ ստացել, որ էլ չեմ կարող ասել, թե ինչքան է շնորհակալ ամենքիցը կենտ-կենտ. քիչ էր մնում ուղարկելի ձեզ: Դիացած է նաևից, Ռոստոմից, մայրիկից, Մուշեղից, քեզանից, Նվարդից, ինձանից – մի խոսքով ես էլ եմ զարմացել, թե դրան էդ ինչ եք արել»:

* Դրանցից պահպանվել է միայն Նվարդի՝ հուլիսի 5-ի նամակը (ԹՏԹ, թիվ 2922):

ԵԼԺ 10, 28-29, 458:

Հուլիսի 12, Մանգլիս. – Ստադրություն «Լուսաբերը» տպելու ժամանակ թիֆլիս գալու, այնտեղից էլ Դսեղ կամ Շուլավեր: ԵԼԺ 10, 29:

Հուլիսի 12-19, Մանգլիս. – Նամակներ Դսեղից՝ Մուշեղ և Նվարդ Թումանյաններից (չեն պահպանվել): ԵԼԺ 10, 29, 458:

Հուլիսի 19, Մանգլիս. – Այցելություն Ջորյանների ընտանիքին: ԵԼԺ 10, 29:

Մինչև հուլիսի 20-ը. – Ն. Թումանյանի նամակը Հովհ. Թումանյանին Դսեղից (չի պահպանվել): ԵԼԺ 10, 29:

Հուլիսի 20, Մանգլիս. – Նամակ Դսեղ՝ Նվարդ Թումանյանին:

Հաղորդում է կենցաղային լուրեր Մանգլիսում գտնվող ծանոթների, ազգականների մասին: Հետաքրքրվում է ընտանիքի առօրյայով, հարցնում է զավակներից, հարազատներից: ԵԼԺ 10, 29-30:

Հուլիսի 23. – Հեռագիր Թումանյանին թիֆլիսից՝ Արտյուշա ստորագրությամբ:

Հավանաբար «Խարիսխ» օրաթերթի խմբագրությունից. «Где Заргарйанц? Срок Баграму кончается. Отвечай “Харисху”. Артюша.”*:

* Հեռագրի պատճենը բանտարկության ամփոփագրում է, որտեղ պահպանվում է փոստ-հեռագրատնից վերցրած՝ 1907 թ. կասկածելի հեռագրերի ցանկը: Ցանկում Թումանյանին ուղղված հեռագիրը 132-ն է: Այս հեռագիրը դատի ժամանակ օգտագործվել է որպես իրեղեն ապացույց (տե՛ս ԵԺ 5, 378):

Дп, фонд 102, 1909, оп. 147, Ед. 1660, л. 116, 11 стр.

Մինչև հուլիսի 27-ը. – Հովհ. Քաջագունու նամակը Թումանյանին՝ Բաքվից (չի պահպանվել):

Ուռաջարկում է «վերջացնել» «Սասունցի Դավիթը», որ հիմք կտա Բաքվի հրատարակչական ընկերությանը՝ վերահրատարակելու բանաստեղծի վերջին ժողովածուն:

ՈՒՀ 5, 308:

Հուլիսի 27, Մանգլիս. – Նամակ Բաքու՝ Հովհ. Քաջագունուն (չի պահպանվել):

Բանակցություններ է վարում «Լուսաբեր» դասագիրքը Բաքվում տպագրելու համար՝ հատկապես ընդգծելով. «Ինչ անելու եք, շուտ արեք»: Պատասխանելով հասցեատիրոջ առաջարկությանը՝ շարունակել «Սասունցի Դավիթը» (տե՛ս մինչև հուլիսի 27-ը), գրում է, թե «տրամադրություն չունի» պոեմը շարունակելու: Խնդրում է Բաքվի հրատարակչական ընկերությանը՝ ինչ-որ ձևով նյութական աջակցություն ցույց տալ իրեն: ՈՒՀ 5, 306-308:

Հուլիսի 28. – «Խաթաբալա» շաբաթաթերթում (1907 թ. թիվ 31) տպագրվում են Թումանյանի, Շանթի, Լիսիցյանի գունավոր լուսանկարները:

Նպատակն էր զովագրել «Լուսաբեր» դասագիրքը: ԵԼԺ 10, 32, 460:

Հուլիսի <31>, Մանգլիս. – Այցելում է թիֆլիսեցի վաճառական Եփրեմ Ծատուրյանին:

Առիթը նրա կնոջ՝ Վարդուհու անվանակոչությունն էր: Ամբողջ օրը անցկացնում է նրանց ընտանիքի հետ: ԵԼԺ 10, 31-32:

Հուլիսի <31>. – Գիշերում է ուսուցիչ Սեդրակ Ավետյանի տանը: ԵԼԺ 10, 31-32, 459-460:

Հուլիսի <31>, Մանգլիս. – 30 ռ. է փոխադրում Շուլավեր Օլգա Թումանյանին:

Փոխանցումը կատարված է Մոստ Միրզոյանի անունով: Անդորրագրի վրա հանձնարարական նամակ. «Միրելի Մոստ, էս մի երկու օրը Օլյան կգա: Էս 30 ռ. ստացիր տուր իրեն. թե չի եկել, զոքանչիս տուր»:

Հուլիսի <31>, Մանգլիս. – Ստադրություն «էս մի քանի օրը» թիֆլիս գնալու: ԵԼԺ 10, 30

Յուլիս, Մանգլիս. – «Լուսաբեր» դասագրքի ձեռագիրը ուղարկում է Բաքու՝ Եր. Թաղիանոսյանին, տպագրելու համար: ՈՒՅ 5, 306:

Օգոստոսի 1. – Յովհ. Քաջազնունու նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Յայտնում է, որ «Լուսաբերի»՝ Երվ. Թաղիանոսյանի հասցեով ուղարկված (տե՛ս հուլիս) ձեռագիրը չի ստացվել, ուստի տպագրության գործը ձգձգվում է մինչև օգոստոսի վերջերը՝ հրատարակիչների բացակայության պատճառով: Դասագրքի հոնորարը կանխավ ստանալու և բանաստեղծի խնդրանքը բավարարելու համար առաջարկում է, որ հրատարակչական ընկերությունը գնի «*արդեն տպագրված*» հրատարակությունը (նկատի ունի «Լուսաբերի» Ա տարին)՝ վճարելով 1500 ռ. կանխավճար. առաջարկությունն անում է իր կողմից, իսկ հրատարակչական խորհրդի հետ համաձայնեցնելը թողնում է հեղինակին: Ստեղծված իրավիճակի մասին գրում է. «Ես ամբողջ հոգով հասկանում եմ քո դրությունը, հասկանում եմ, որ այդ դրությունը ընդունակ է սպանելու, եթե մինչև հիմա չի սպանել արդեն, ամեն մի բանաստեղծական եռանդ, հասկանում եմ նույնպես, որ մեր գրականության շահերը պահանջում են, որ մեր բանաստեղծները ապահովված լինեն նյութապես, հնարավորություն ունենան նվիրելու իրանց մեծ գործին, զարգացնելու և բեղմնավոր անելու իրանց տաղանդը... Այդ բոլորը ես հասկանում եմ, և ինչ վերաբերում է մասնավորապես քեզ, ավելորդ եմ համարում հավաստիացնելու, որ համարում եմ քեզ իսկական բանաստեղծ և համոզված եմ, որ ինչ էլ անելու լինի քեզ համար հայ հասարակությունը, դարձյալ պարտավոր և երախտագետը կճնա նա և ոչ դու: Բայց ինչպե՞ս անել: Ես, իմ դատողությամբ, միակ կարելի ելքն էի գտել. առաջարկել քեզ վերջացնել «Սասունցի Դավիթը» և այդ հանգամանքը պատճառ բռնելով՝ երկրորդ հրատարակությամբ դուրս թողնել քո ժողովածուն: Բայց դու դա անհրաժեշտ էի գտար մի այնպիսի պատճառով, որի դեմ չի կարելի վիճաբանել. ասում ես՝ տրամադրություն չկա «Դավիթը» շարունակելու, անձնապես ես շատ ավստոսում եմ, որ այդ այդպես է, բայց զոռով հո չի կարելի

բանաստեղծություն գրել: Իսկ մյուս կողմից ես չգիտեմ, թե ի՞նչ ձևով մեր ԸՆկերությունը կարող է օգնել քեզ: Քո ցանկացածը մի տեսակ *субсидия* է կամ *аванс*: Բայց մեր ԸՆկերությունը, որքան էլ ցանկանա, չի կարող, իրավունք չունի *субсидия* կամ *аванс* տալու: Չէ՞ որ մեզ հանձնված է փողը պատրաստի գրքեր տպագրելու համար և ուրիշ ոչինչ: Եթե դու ինքդ մի ելք կարող ես գտնել, մի կոնկրետ առաջարկություն անել, գրիր ինձ»:

ՈՒՅ 5, 306-308:

Օգոստոսի 2, Մանգլիս. – Նամակ Դսեղ՝ Օլգա Թումանյանին:

Գրում է ընտանիքի առօրյա խնդիրների մասին: Պատվիրում է, որ Շուլավեր գնալիս հետևեն երեխաների առողջությանը: Տեղեկություններ է հաղորդում «Լուսաբեր» դասագրքի մասին. «Արդեն ամեն բան պատրաստ է տպագրության համար: Պետք է մինչև ամսի վերջը հասցնենք». ապա՝ «Վճռեցինք, որ դասագրքի համար ումից բան վերցնենք՝ վճարենք, ով էլ մեզնից վերցնի՝ նույնպես վճարի»:

Այնպես եղավ, որ առաջին տարում միայն Աղայանից մի երկու-երեք կտոր ուզեցինք դնել: Նամակ պետք է գրեինք, թե ի՞նչ ես ուզում դրա համար, ես չհամաձայնեցի: Եղ կնշանակեր, թե դու էլ ինձ վճարի, մանավանդ ինքը շատ ու շատ ավելի է վերցրել: Այժմ Լիսիցյանն ու Շանթը նամակ են գրել, որ նա մեր գրքից օգտվի, մենք՝ նրա, եթե կուզի:

Իհարկե, այս նրա համար շատ է ձեռնտու:

Տեսնենք ինչ կպատասխանի»:

ԵԼԺ 10, 30-32:

Օգոստոսի 2, Մանգլիս. – Մտադրություն նամակ գրելու Շուլավեր զավակներին՝ Յամլիկին ու Արտիկին (չեն պահպանվել):

ԵԼԺ 10, 31:

Օգոստոսի 2, Մանգլիս. – Մտադրություն «մի 3 օրից» Թիֆլիս վերադառնալու:

ԵԼԺ 10, 30-32, 459:

Օգոստոսի 3, Մանգլիս. – Բացիկներ Շուլավեր՝ երեխաներին՝ Անուշին, Արտավազդին, Արեգին.

«Հայրիկը իր Անուշին, որ նամակ գրի: Քո պատկերը գրքումն ենք դրել»*, Արտավազդին. «Նվեր «Ֆաուստի» հեղինակը** «Քաջ նապաստակի» հեղինակին»***, Արեգին. «Իմ մոխրոտ Արեգին»:

* Տե՛ս «Լուսաբեր», Ա տարի, 1907, էջ 49:

** Բացիկի վրա Գյոթեի նկարն է:

*** Նկատի ունի Արտավազդի թարգմանությունը Մամին-Սիբիրյակից:

ԵԼԺ 10, 32-33, 461:

Սեպտեմբերի 5. – Լուր, որ ստացել է «Լուսաբեր» դասագրքի Ա տարին) այբբենարան և առաջին ընթերցարան):

Կազմողներ՝ Հովհ. Թումանյան, Լ. Շանթ, Ստ. Լիսիցյան, նկարազարդումները Վ. Աղիկյանի:

«Արոր», 1907, թիվ 3:

Սեպտեմբերի 5. – Տպագրվում է ազդ, որ «սեպտեմբերին առանձին գրքով լույս կտեսնի «Լուսաբերի» Ա տարվա ուղեցույցը ուսուցիչների համար»:

«Արոր», 1907, թիվ 3:

Սեպտեմբերի 6. – «Նոր կյանք» շաբաթաթերթի խմբագրության պաշտոնական գրությունը Թումանյանին:

Ստորագրել է խմբագիր Հովհ. Խարազյոզյանը: Առաջարկում են թղթակցել շաբաթաթերթին:

ԳԱԹ ԹՖ, ց.2, 117ա:

Սեպտեմբերի 11. – Տպագրվում են («Արոր», 1907, թիվ 7) Իլյա ճավճավաձեի «Էլեգիա» և «Գարուն» բանաստեղծությունների թարգմանությունները:

Թարգմանությունները կատարված են ճավճավաձեի մահվան (օգոստոսի 29) առիթով:

ԵԼԺ 2, 260-261, 598-599:

Սեպտեմբերի 12, 14. – Վերստին հայտարարություն, որ լույս է տեսել «Լուսաբեր» դասագրքի Ա. տարին (տե՛ս նաև սեպտեմբերի 5):

Հայտարարության վերջում. «Սեպտեմբերին առանձին գրքով լույս կտեսնի «Լուսաբերի Ա. տարվա ուղեցույցը ուսուցիչների համար»:

«Արոր», 1907, թիվ 8, 10:

Սեպտեմբերի 19. – Տպագրվում է («Արոր», 1907, թիվ 13, էջ 2) Հենրի Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը» պոեմի երկու գլուխը՝ Թումանյանի թարգմանությամբ:

Թարգմանությանը հետևում է թարգմանչի ծանոթագրությունը. «Հ. Լոնգֆելլոն ամերիկյան նշանավոր բանաստեղծ էր: Վախճանվել է 1882 թվին:

Նա մի ճշմարիտ իդեալիստ էր, գեղեցիկին ու վսեմին նվիրված մի քնքուշ հոգի: Նշանավոր են նրա՝ նեգրերի ազատության համար գրած երգերը: Բայց «Հայավաթի երգը» պոեմը, որից տալիս ենք երկու գլուխ, նրա գլուխգործոցն է համարվում:

Պոեմի նյութը վերցրած է Հյուսիսային Ամերիկայի հնդիկների մի ավանդությունից: Այդ ավանդությունն ասում է, թե երկինքը հրաշալի ծագումով մի մարդ է դրկել նրանց, որ սովորեցրել է վայրենի ցեղերին երկրի մշակումը և խաղաղ արվեստներ:

Նրա անունը եղել է Հայավաթա: Հայավաթա – կնշանակի մարգարե, ուսուցիչ»:

ԵԼԺ 4, 155-164, 601-602:

Մինչև սեպտեմբերի 29-ը. – Նամակ Հովհ. Քաջագունուն (չի պահպանվել):

Համաձայնություն է տալիս Բաքվի հրատարակչական ընկերությանը՝ նոր ժողովածու հրատարակելու համար, և առաջարկում իր պայմանները:

ՈՒՀ 5, 310:

Սեպտեմբերի 29. – Հովհ. Քաջագունուն նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է, որ Բաքվի հայոց հրատարակչական ընկերությունը որոշել է հրատարակել Թումանյանի բանաստեղծությունների նոր ժողովածու: Տեղեկացնում է հրատարակության պայ-

մաններին: Խնդրում է նյութերը շտապ ուղարկել: Գրում է նաև, որ հոնորարից՝ իբրև կանխավճար, ուղարկում են 300 ռ., մնացածը մաս-մաս կվճարեն՝ ամսական 50 ռուբլի:

ՈՒՅ 5, 310-311:

Սեպտեմբեր, Թիֆլիս. – Նամակ Բաքվի հայոց կուլտուրական միության հրատարակչական մասնաճյուղի բյուրոյին:

Պատասխանն է բյուրոյի թիվ 76 գրության, որով բյուրոն առաջարկում է տպագրել «Սասունցի Դավիթը» և ուզում է իմանալ հեղինակի պայմանները: Բանաստեղծը հիշեցնում է, որ 3 տարի առաջ «Ստ. Լիսիցյան և ընկ.» հրատարակչական ֆիրման պոեմը տպել է 2400-2600 օրինակով և թերթին վճարել 100 ռ.: Եվ վերջում. «Եթե այս պայմանը ձեռնտու է բյուրոյին, կարող է վերջացած համարել համաձայնությունը, իսկ եթե ոչ՝ կխնդրեի բարեհաճեր իր առաջարկն աներ մանրամասն ու որոշ»:

ԵԼԺ 10, 33:

Մինչև հոկտեմբերի 1. – Տելեմաք Տեր-Մովսիսյանի նամակը Թումանյանին՝ Գյառգյառից (չի պահպանվել):

Խնդրում է օգնել, որ Թիֆլիսում իր համար ուսուցչի աշխատանք գտնի:

ԵԼԺ 10, 34:

Յոկտեմբերի 1, Թիֆլիս. – Նամակ Գյառգյառ՝ Տելեմաք Տեր-Մովսիսյանին:

«Ցավում եմ, որ Ձեր նամակն ուշ էր, ոչինչ չէր կարելի անել այստեղ, արդեն բռնված էին բոլոր տեղերը: Նույնպես գավառական քաղաքների խմբերն արդեն կազմված էին: Ցավում եմ, որ չկարողացա օգտակար լինել Ձեզ այս անգամ»:

ԵԼԺ 10, 34:

Յոկտեմբերի 11. – Մ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Խնդրում է նոր ժողովածուի համար ուղարկել մինչ այդ տպագրված գործերը՝ «Իհարկե, ուղղված, եթե տպագրելիս սխալներ են մտել մեջները», և «Սասունցի Դավիթ» պոեմի շարունակությունը: Խնդրում է նաև, որ բանաստեղծը «ստացած

գումարի համար մի անդորրագիր» ուղարկի հրատարակչությանը՝ եր. Թաղիանոսյանի անունով, հետևյալ բովանդակությամբ. «... այսքան փող ստացա և ծախսեցի նրան իմ հրատարակված երկերիս 3000 օր. հրատարակության իրավունքը, տպագրական թերթը 50 ռ., մնացորդը պիտի ստանամ ամեն ամսի 1-ին, 50-ական ռ. մինչև ամբողջ վարձիս ստանալը: Նույնպես խոստանում եմ ուղարկել «Սասունցու» 2-րդ մասը» (տե՛ս սեպտեմբերի 29):

ՈՒՅ 5, 311-312:

Յոկտեմբերի 14. – Հայտարարություն նույն օրը տեղի ունենալիք նոր հիմնադրված «Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժարանների միության» առաջին ժողովի մասին:

Թումանյանի մասնակցությունը հավանական է:

«Կովկասի առավոտ», 1907, թիվ 21:

Յոկտեմբերի 29, Էջմիածին. – Վախճանվում է ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը:

«Կովկասի առավոտ», 1907, թիվ 34:

Յոկտեմբերի 31, Թիֆլիս. – Տեղի է ունենում հոգեհանգստի արարողություն՝ ի հիշատակ հանգուցյալ Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի:

Ելույթ է ունենում նաև Թումանյանը:

«Նոր ալիք», 1907, թիվ 11:

Նոյեմբերի 1. – Տպագրվում է «Հոգեհանգիստ Թիֆլիսում» թղթակցությունը՝ Խրիմյան Հայրիկի մահվան կապակցությամբ:

Ելույթ է ունենում նաև Թումանյանը, որ, ըստ թղթակցության, ներկայացրել է «... ժողովրդի մարդու, հասարակ ժողովրդի «Հայրիկի» գործունեությունը: Այն անսահման սերը, որ նա վայելում էր աշխատավոր տարրերի կողմից, չէր պայմանավորվում նրա կղերական, պատրիարքական, կաթողիկոսական կոչումով: Ժողովուրդը նրան սիրում էր իբրև իր ազատագրության անձնվեր պաշտպանին: Հարգանք հեղափոխական ռահվիրայի հիշատակին, հարգանք աշխատավոր գյուղա-

ցիության, արհեստավորների ու մշակների առաջին պաշտպանի անվանը»:

* Թղթակցությունն անստորագիր է: Ելույթ ունեցողների ազգանունները նշված են ինիցյալով. Թ-ն անկասկած թումանյանն է: «Նոր ալիք», 1907, թիվ 1:

Նոյեմբերի 2. – Տպագրվում է («Նոր ալիք», 1907, թիվ 2) «Հայ ուխտավորին» (Գնա՛ս բարով, այ ուխտավոր...») բանաստեղծությունը (տե՛ս 1893, սեպտեմբեր):

Շանոթագրության մեջ ասված է. «Գրված է 1893 թ. Հայրիկի ընտրության առիթով Թիֆլիսի երիտասարդության խնջույքին: Ժամանակի ցենզուրական պայմանների պատճառով առաջին անգամ է տպվում ամբողջ»:

ԵԼԺ 1, 140, 583-585

Նոյեմբերի 2. – Հայտարարություն, որ նոյեմբերի 3-ին կայանալու է Կովկասի հայոց հրատարակչական ընկերության ժողովը:

Շարունակվելու էր կանոնադրության նախագծի քննարկումը: Հրավիրվում էին խմբագրությունների ներկայացուցիչներ, հեղինակներ, հրատարակիչներ և «համակրող անծինք»: Հավանական է նաև թումանյանի մասնակցությունը:

«Նոր ալիք», 1907, թիվ 2:

Նոյեմբերի 3. – Տեղի է ունենում Կովկասի հայոց հրատարակչական ընկերության կազմակերպիչների ժողովը (տե՛ս նոյեմբերի 2):

Շարունակում են քննարկել ընկերության կանոնադրության նախագիծը: Ընկերության նպատակն էր՝ «ա. հրատարակել հայերեն ինքնուրույն և թարգմանական գրքեր, և ուրիշ լեզուներով հայոց կյանքին վերաբերող գրքեր և առհասարակ հրատարակել ամեն տեսակ տպագրական արտադրություններ: ք. Բաց անել թե Թիֆլիսում և թե կայսրության ուրիշ վայրերում գրախանութներ և պահել շրջիկ գրավաճառներ»:

«Նոր ալիք», 1907, թիվ 5:

Նոյեմբերի 6. – Տպագրվում է («Նոր ալիք», 1907, թիվ 5) «Երկու հայր» պատմվածքը՝ Խրիմյան Հայրիկի մահվան առիթով:

ԵԼԺ 5, 69-70, 750-751:

Նոյեմբերի 6, Էջմիածին. – Տեղի է ունենում ամենայն հայոց կաթողիկոսի հուղարկավորությունը:

Թումանյանի մասնակցությունը հավանական է: «Նոր ալիք», 1907, թիվ 5:

Նոյեմբերի 24. – Ս. Տեր-Անդրեասյանի նամակը թումանյանին՝ Բաքվից (չի պահպանվել):

Դիտողություններ է արել «Մծիրիի» թարգմանության վերաբերյալ: «Մանավանդ անընդունելի» է համարել XXVI գլուխը, որ, ըստ նամակագրի, «ուղղակի սխալ է թարգմանված»:
ՈՒՀ 5, 319,

Նոյեմբերի 25. – Գ. Լևոնյանի պաշտոնական նամակը թումանյանին:

Խնդրում է աշխատակցել նոր հրատարակվելիք «Գեղարվեստ» հանդեսին. «Հիմք են դրել մի շատ ծանր, բարդ և մեծածախ գործի՝ պատրաստություններ տեսնելով առաջիկա տարվանից հրատարակելու մի գրական-գեղարվեստական լուրջ ամսագիր: Անշուշտ, այդպիսի մի դժվարին գործի համար կարևոր է և անհրաժեշտ է նույնիսկ մեր սակավաթիվ կարող ուժերի աջակցությունն ու մասնակցությունը: Դիմելով Ձեզ, հարգելի պարոն, խնդրում են աշխատակցել «Գեղարվեստին»՝ ուղարկելով նրա գրական բաժնի համար մի որևէ նյութ»:

ՈՒՀ 5, 313:

Նոյեմբերի 25. – Հայերեն առաջին անգամ տպագրվում է («Վտակ», 1907, թիվ 5) «Մենք ուխտ ունենք» («Մեր ուխտը») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 201, 606-607:

Սինչև նոյեմբերի 26-ը. – Բաքվի հրատարակչական

ընկերության մասնաժողովը որոշում է թումանյանին ուղարկել կանխավճար՝ տպագրվելիք ժողովածուի համար:

ՈՒՅ 5, 312:

Նոյեմբերի 26. – Հովհ. Քաջազնունու նամակը թումանյանին՝ Բաքվից:

Հանդիմանում է բանաստեղծին, որ տեղեկություն չի տալիս, թե ստացել է արդյոք իրենց ուղարկած 300 ռուբլին, համաձայն է ժողովածուի հրատարակության իրենց առաջարկած պայմաններին և ամենակարևորը՝ նյութերը ուշացնում է. «Քո գրքի տպագրությունը մեր հերթական գործն է և ուշանում է միմիայն քո անփութության պատճառով: Ի սեր Աստծո, գրչիդ փականքները բաց արա և մի պատասխան տուր»:

ՈՒՅ 5, 312-313:

Դեկտեմբերի 2, Թիֆլիս. – Մասնակցում է Պերճ Պոռոշյանի հուղարկավորությանը:

Դեկտեմբերի 2. – Տպագրվում է հայտարարություն 1908 թ. հունվարին, որպես «Վտակ» օրաթերթի հավելված՝ գրական-գիտական ժողովածու հրատարակելու մասին*:

Աշխատակցելու էին թումանյանը, Ահարոնյանը, Իսահակյանը, Եղ. Թովիշյանը և ուրիշներ: Ժողովածուն բաղկացած էր լինելու 200-300 էջից, բաժանվելու էր ձրի:

* Հրատարակությունը ձգձգվել է:

«Վտակ», 1907, թիվ 11:

Դեկտեմբերի 7. – Ալ. Բահաթրյանի նամակը թումանյանին՝ Բաքվից:

Բանաստեղծին պաշտոն է առաջարկում Բաքվի հայոց կուլտուրական միության հրատարակչական մասնաճյուղում և խնդրում շուտափույթ պատասխանել*:

* Առաջարկը չի ընդունվել:

ԳԱԹ ԹՖ, 1018 (274):

Դեկտեմբերի 20. – Ն. Աղբալյանի նամակը թումանյանին՝ Ալեքսանդրիայից:

Խնդրում է ստանալ իրեն հասանելիք հոնորարը «Վտա-

կից» և հանձնել հարազատներին: Հետաքրքրվում է հրատարակվելիք «Գեղարվեստ» հանդեսով: Աննպաստ է արտահայտվում Գարեգին Լևոնյանի մասին՝ համարելով «խաչագող»: Չի հավանում «Նրա մամուլի պատմությունը»:

ՈՒՅ 5, 383-384:

Դեկտեմբերի 30. – Տպագրվում է լուր, որ «Հասկեր» մանկական ամսագրի աշխատակից է հրավիրված Հովհ. Թումանյանը:

«Վտակ», 1907, թիվ 35:

<Դեկտեմբերի վերջեր>. – Կրկին անդրադառնում է Բայրոնի «Չայլո Հարոլդ» պոեմի «Ինեսին» հատվածի թարգմանությանը՝ «ստեղծելով բոլորովին նոր տարբերակ»:

ԵԼԺ 4, 129-130, 596:

Դեկտեմբեր. – Տպագրվում է («Հասկեր», 1907, թիվ 12, էջ 405) «Առավոտ» («Արտամաշ տաղտուկ ծանր գիշերի...») մանկական բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 112, 574:

1907, Թիֆլիս. – Գրում է «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» պատմվածքը:

ԵԼԺ 5, 71-75, 751:

1907, Ալեքսանդրապոլ. – Լույս է տեսնում Էմ. քահ. Նազարյանցի «Ընտիր հատվածներ» ժողովածուն:

Թումանյանից տպագրված են ինքնակենսագրությունը և մի քանի գործեր:

1 9 0 8

Հունվարի 1, Թիֆլիս. – Տպագրվում է («Վտակ», 1908, թիվ 1) «Չայլո Հարոլդ» պոեմի երկրորդ հատվածի թարգմանությունը՝ «Ինեսին» վերնագրով:

ԵԼԺ 4, 129-130, 596-597:

Հունվարի 10, Թիֆլիս. – Նամակ Ս. Թումանյանին:

Խնդրում է օգնել Կովկասի հայոց ուսուցիչների ու վարժուկիների միությանը (տե՛ս 1907, հոկտեմբերի 14), կազմակերպել մի երեկույթ՝ հօգուտ միության կողմից հիմնադրվելիք «Նոր դպրոց» ամսագրի, որին աշխատակցելու է նաև ինքը:

ԵԼԺ 10, 35, 464:

Հունվարի 16. – Տպագրվում է Ավ. Իսահակյանի «Հայոց գրականությունը 1907 թ.» հոդվածը:

Դժգոհում է հայ գրականության նախորդ տարվա վիճակից: Թումանյանի մասին գրում է. «Հովհ. Թումանյանը բացի մի-երկու գեղեցիկ ոտանավորներից* ոչինչ չտվեց»:

* Նկատի ունի «Հասկերում», «Հուշարարում», «Լուսաբեր» դասագրքում (Ա տարի), «Ժամանակ» օրաթերթում տպագրված բանաստեղծությունները (տե՛ս ԵԼԺ 1, 611-616):

«Վտակ», 1908, թիվ 11:

Հունվարի 16. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ ժնկից:

Խորհում է Թումանյանից ստացած և իր գրած նամակներում արձարժված մեծ հույսերի, մեծ գործերի, մեծ հիասթափությունների մասին: Բանաստեղծից խնդրում է Թիֆլիսի կյանքից, ծանոթներից պատմող նամակներ: Ուղարկում է ֆրանսիացի մի բանաստեղծի երկու հատորը, որ Շանթը թարգմանի Թումանյանի համար:

ԳԱԹ ԹՖ, 2059 (1026):

Մինչև հունվարի 22-ը. – Վերստին ակտիվացնում է իր աշխատակցությունը «Հասկերին»:

Խոստանում է «ամեն ամիս բան տալ ու մոտիկից խառնվել գործին»:

* Թումանյանը «Հասկերին» աշխատակցել է հիմնադրման օրից 1905 թվականից:

ԵԼԺ 10, 37-38, 465:

Մինչև հունվարի 22-ը. – Փորձում է Փիլ. Վարդազարյանին ուղարկել «Լուսաբեր» դասագիրքը, «Գիքորը» և «մի քանի մանր-մունր բաներ», չի հաջողվում:

«... մի անգամ ուզեցի դրկեն, բայց փոստն էնքան լիքն էին, որ ետ եկա, էն է ինչ մնաց ու մնաց: Նոր մտածեցի տամ կանտորից հեշտ կղրկեն – միշտ մարդ են դրկում փոստը»:

ԵԼԺ 10, 37:

Մինչև հունվարի 22-ը. – Ստանում է Փիլ. Վարդազարյանի ուղարկած գրքերը Շվեյցարիայից:

«Ստացա ուղարկած գրքերդ, մի քանի երգեր կարդացինք. թեև մարգարիտներ չկան, այնուամենայնիվ, մեզ համար շատ են հետաքրքրական»:

ԵԼԺ 10, 38:

Հունվարի 22, Թիֆլիս. – Նամակ Շվեյցարիա՝ Փիլ. Վարդազարյանին:

Խոստովանում է, որ շատ է զգում իր ամենամտերիմ ընկերոջ բացակայությունը: Ինքը հիմա «շատ ավելի մեծ բան» է դարձել, իրեն անկեղծ ու ցուցադրաբար գնահատողներ ու սիրողներ շատ կան. «Բայց ուրիշ էր Ֆիլիպը: Երբ մի բան էի գրում կամ տպում, ավելի շատ Ֆիլիպն էր հուզվում, քան թե ես, երբ հիվանդանում էի, ավելի շատ նա էր տանջվում, քան թե ես, երբ հաջողում էի, ավելի շատ նա էր ուրախանում, քան թե ես: Էս տեսակ ընկերը երկնքի տված բախտն է մի բանաստեղծ մարդու համար, մանավանդ մեր աշխարհքում, մեր մթնոլորտում: Ես հաստատ գիտեմ, որ մեր գրականության մեջ ոչ մի գրող էդպես ընկեր չի ունեցել, և իրենք էլ են խոստովանում: Ամեն փողոցում Ֆիլիպ չի ապրում: Իհարկե, կներես, որ էսպես, մի քիչ օբյեկտիվ խոսեցի, որպես թե քեզ հետ չէր: Բայց որ կարծում ես, թե քու բացակայությանը մեր մռայլ երկնքում պայծառ ծիածան է բացվել իմ գլխին – ուզում էի ասել, որ էդպես չի»:

Դժգոհում է շրջապատի գորշությունից. «Քիչ մարդիկ կան, որ համ ճաշակ ու սիրտ ունեն, համ էլ սրտալի են մոտենում և մարդ զգում է ջերմությունը անկեղծության ու սիրո, մնացածները տափակ, հիմար, կեղծավոր, անբովանդակ կամ, հաճախ, զվվելի բովանդակության մարդիկ են»: Ազնիվ ու լավը «հագվազուտ բան է կյանքում». «Բնությունն էլ էդ կողմից բանաստեղծների նման է: Բանաստեղծները գրում են, գրում են, վերջը

հարյուրավոր երգերի միջից միմիայն մի քանիսն են դուրս գալի լավը: Եսպես էլ մարդիկ – ծնվում են, ծնվում են, մեծ մասը կամ ապուշ, կամ գող կամ մարդասպան...»: Իր համար երջանկությունը «հոգու խաղաղությունն ու սրտի մաքրությունն է», որ «գրեթե ամեն բան է և ամենամեծ ուժը, ինչ որ կարող է ունենալ մարդ արարածը: Եղ դրության մեջ է, որ մոտենում և հաղորդակից է լինում աստվածներին»:

Տեղեկացնում է, որ «պոիստավը», «պոլիցիան», «գարադավոյներն ու զինվորները» հսկում են իրեն, իր վրա «ուրիշ տեսակ են նայում»:

ԵԼԺ 10, 35-38, 464-465:

Յունվարի 25. – Բաքվի խմբագրական մասնաժողովը ավարտում է Թումանյանի ժողովածուի քննարկումը:

ՌԻՅ 5, 313:

Յունվարի 26. – Մխ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է, որ «խմբագրական ժողովը» ավարտել է «ձեռքի տակ եղած» նյութերի քննությունը, կազմել է «տպագրվելիք երկերի ցանկը»: Տպագրական թերթին վճարելու է 75 ռ., ընդամենը՝ 1200 ռ., որից 300 ռ. բանաստեղծն արդեն ստացել է (տե՛ս 1907, հոկտեմբերի 11, մինչև նոյեմբերի 26-ը):

Կրկին առաջարկում է վերջացնել «Սասունցի Դավիթը», ուղարկել նոր անտիպ նյութեր՝ հոնորարը ավելացնելու համար: Խնդրում է ուղղել «թարգմանությունների մեջ սպրդած սխալները»: Հայտնում է, որ մտադիր են իբրև ժողովածուի առաջաբան դնել նախորդ ժողովածուի մասին Ավ. Ահարոնյանի գրախոսականը («Մուրճ», 1904, թիվ 1):

ՌԻՅ 5, 313-314:

Յունվարի 27. – Փիլ. Վարդապարյանի նամակը Թումանյանին՝ ժնկից:

Շարադրում է կյանքի իմաստի, ծերության, նույնիսկ պակաս լույսով կյանքի հետ հաշտվելու մասին իր մտորումները: Լսել է Սենկևիչի հնդկական մի ավանդության («Յովիտ» – «Рав-

нана») ընթերցումը և հավանել: Խորհուրդ է տալիս, որ Թումանյանն էլ կարդա: Խնդրում է իրեն ուղարկել վերջին երեք տարվա լրագրերում տպված կարևոր հոդվածները և «Լուսաբերը»:

ԳԱԹ ԹՖ, 2060 (1029):

Յունվարի 28. – Մխ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է, որ ուղարկում են հոնորարից մնացած 900 ռուբլին: Հրատարակչական ընկերության անունից տեղեկացնում է, որ ժողովածուն տպագրվելու է 3600 օրինակ, ծավալը՝ «մոտավորապես 16 տպագրական թերթ»: Խնդրում է նոր նյութեր՝ ինքնուրույն և թարգմանական: Նորից հիշեցնում է «Սասունցի Դավիթ» մասին:

ՌԻՅ 5, 314:

Յունվարի 31. – Ն. Աղբալյանի նամակը Թումանյանին՝ Կահիրեից:

Խնդրում է Թումանյանի միջամտությունը, որ Թիֆլիսի հայոց հոգևոր թեմի առաջնորդը իր կնիքով վավերացված մի միջնորդագիր ուղարկի Նուբար փաշային, որպեսզի վերջինս օգնի իրեն մեկ տարով գնալ Եվրոպա՝ կիսատ մնացած ուսումը ավարտելու: Խնդրում է նաև, որ «Վտակի» խմբագրությունից ստանա իրեն հասանելիք գումարը և ուղարկի Դեմիրճյանին, որ «տառապում է ցրտից ու քաղցից ժնկում»:

ՌԻՅ 5, 384-386:

Յունվար. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», թիվ 1, էջ 3-9) «Չարի վերջը» բալլադը՝ «Պապի առակներից» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 137-142, 561

Յունվար. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», թիվ 1, էջ 18-21) «Խոսող ձուկը» հեքիաթը՝ «Նանի հեքիաթներից» վերնագրով:

ԵԼԺ 5, 186-190, 769:

Փետրվարի 18. – Հայտարարություն, որ «մի շարք հանգամանքներ արգելք եղան» «Վտակի» խմբագրության խոս-

տացած «Գրական-գիտական ժողովածուի» ժամանակին լույս ընծայելուն (տե՛ս 1907, դեկտեմբերի 2, 1908, ապրիլի 13):

«Վտակ», 1908, թիվ 31:

Փետրվարի 19. – Հայտարարություն փետրվարի 22-ին «Աղբյուր» – «Տարագի» խմբագրությունում տեղի ունենալիք «տեղական գրականագետների» ժողովի մասին:

Պետք է քննարկվեր գրականագետների ընկերություն հիմնադրելու հարցը՝ բոլոր ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հավանական է, որ մասնակցել է նաև Թումանյանը:

«Վտակ», 1908, թիվ 39

Փետրվարի 21. – Տպագրվում է («Վտակ», 1908, թիվ 41) «Հայոց ազգային կենտրոնական գրադարան թիֆլիսում» հոդվածը:

Ընդգծում է հարուստ գրադարան ունենալու անհրաժեշտությունը «ռուսահայերի մտավոր կենտրոնում»: Այդ նպատակով առաջարկում է, որ մի հասարակական կազմակերպություն գնի «հանգուցյալ Ս. Թամամյանի» և «մեր գրողներից երկուսի» գրադարանները, որ վաճառքի են հանված. «Այս երեք գրադարանները միացած կկազմեն մի պատկառելի գրադարան, հարուստ հայկական և կովկասագիտական բաժիններով, որ առանձնապես թանկ են մեզ համար»:

ԵԼԺ 6, 157-158:

Փետրվարի 23, թիֆլիս. – Ս. Մանդինյանի պաշտոնական նամակը Թումանյանին:

Խնդրում է թույլ տալ իր կազմած քրեստոմատիայի երրորդ հատորի մեջ զետեղել Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը» և Բայրոնի «Շիլլոնի կալանավորը» պոեմների թարգմանությունները: Խնդրելով «գործակցել» իր «Ընտանեկան աշխարհի» նոր տպագրությանը՝ առաջարկում է հանդիպել ու խորհրդակցել այդ մասին:

ՈՒՀ 5, 316:

Փետրվարի 26. – «Վտակը» տպագրում է «Կենտրոնական գրադարան» առաջնորդող հոդվածը:

Լիակատար համաձայնություն է հայտնում Թումանյանի առաջարկությանը (տե՛ս փետրվարի 21):

«Վտակ», 1908, թիվ 43:

Փետրվարի 26. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին ժնկից:

Պատասխանում է Թումանյանի նամակներին: Հիշատակում է Աղայանի, Շանթի, Դերենիկի անունները, անդրադառնում է նրանց նամակներին:

ԳԱԹ ԹՖ, 2063:

Փետրվարի 29. – Կովկասի հայոց բարեգործական ընկերության դիմումը՝ «Հայ հասարակությանը» վերնագրով:

Ստորագրել են ընկերության խորհրդի նախագահ Ս. Հարությունյանը, փոխնախագահ Հովհ. Սպենդարյանը, վարչության անդամները: Հայտնվում է, որ Կովկասյան հայոց բարեգործական ընկերությունը յոթ տարվա ընդմիջումից հետո վերսկսում է իր գործունեությունը նոր կանոնադրությամբ և լայն հնարավորություններով. նպաստելու է կրթական-ուսումնական գործին, ժողովրդի մեջ արհեստներ տարածելուն, լույս է ընծայելու գրքեր և պարբերականներ, հիմնելու է տպարաններ, թանգարաններ, գրադարան-ընթերցարաններ, հիվանդանոցներ, հանրային ճաշարաններ և այլն:

«Վտակ», 1908, թիվ 46:

Փետրվար. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 2, էջ 52-55) «Խելոքն ու հիմարը»՝ «Հեքիաթ» ենթավերնագրով:

ԵԼԺ 5, 191-193:

Փետրվար. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 2, էջ 61-65) «Անտառի տնակը» հեքիաթը:

Թարգմանություն է Գրիմ եղբայրներից:

ԵԼԺ 5, 357-362:

Մարտի 2. – Փիլ. Վարդազարյանի նամակը Թումանյանին՝ ժնկից:

Լրագրական տեղեկությունների հիման վրա եզրակացություններ է անում եվրոպական կացութաձևի մասին, վիճա-

կագրական հաշվարկներ Լոնդոնի, Ֆրանսիայի ժողովրդագրության, բնական աճի վերաբերյալ:

ԳԱԹ ԹՖ, 2064:

Մարտի 3. – Փիլ. Վարդագարյանի նամակը Թումանյանին՝ ժնկից:

Շարունակում է նախորդ նամակի դատողությունները: Հիշում է աշխարհում մարդկանց թիվը պակասեցնելու համար գործադրված դաժան արարքներ՝ ծերունիներին, հիվանդ երեխաներին սպանելը, այրիացած կնոջը այրելը և այլն: Ժողովրդագրական թվեր և ընդհանուր տեղեկություններ է բերում հայոց պատմությունից:

ԳԱԹ ԹՖ, 2065:

Մարտի 6. – «Աղբյուր» – «Տարագ» - ի խմբագրությունում տեղի է ունենում ժողով (տե՛ս փետրվարի 19):

Քննարկվում է Թիֆլիսի բոլոր գրականագետների և լրագրողների ընկերություն կամ լրագրողների պրոֆմիություն հիմնելու հարցը: Հրավիրված էին մամուլի գործիչներ, գրականագետներ, լրագրողներ, գրականության հետ կապված մարդիկ. Թումանյանի մասնակցությունը անհավանական է:^{*}

* Նախածեռնությունը չի իրականացել անհամաձայնության պատճառով:

«Վտակ», 1908, թիվ 72:

Մարտի 8. – Հ. Մանանդյանի նամակը Թումանյանին՝ Պետերբուրգից:

Գրում է պետերբուրգյան իրենց ընդհանուր ժամոթների մասին: Խրախուսում է Թումանյանի «կովկասագիտական» հետաքրքրությունները, ինքն էլ պատրաստվում է հրատարակել իր «Դավիթ Անհաղթ» ուսումնասիրությունը: Հարցուփորձ է անում թիֆլիսյան անցուդարձերից: Առաջարկում է բանաստեղծին մտածել իր քառասունամյակը նշելու մասին: Բնութագրում է Պետերբուրգի հետհեղափոխական մթնոլորտը. «... Պետերբուրգի ինտելիգենտ տարրը, մանավանդ ուսանողությունը, աշխատում է, սովորում ու մտածում: Հեղափոխությունն այժմ կատարվում է նրանց ուղեղների և հոգեկան կյանքի խորքում: Հակառակ սովորական ընդհանուր կարծիքին, ինձ թվում է, որ

հեղափոխությունն այժմ Ռուսաստանում ոչ միայն չի դադարել, այլև խորանում է, տարածվում ու դառնում սպառնական: Ինձ մեծ վիշտ է պատճառում միայն մեր հայկական իրականությունը... առանց դավանանքի: Ըստ երևույթին մենք կարկատելու ու նորոգելու ոչինչ չունենք»:

ՈՒՀ 5, 316-318:

Մարտի 9, Թիֆլիս. – Նամակ Բաբու՝ Հովհ. Քաջագունուն (չի պահպանվել):

Փող է խնդրում իր տպագրվելիք ժողովածուի հոնորարի հաշվին: Նամակի հետ պետք է ուղարկեր «Իլյա Մուրոմեցի» թարգմանությունը, բայց չի ուղարկել:

ՈՒՀ 5, 318:

Մարտի 10. – Փիլ. Վարդագարյանի նամակը Թումանյանին՝ ժնկից:

Հետաքրքրվում է Թիֆլիսի նորություններով, հարցուփորձ է անում մտերիմների ու ընկերների մասին:

ԳԱԹ ԹՖ, 2063(ց.2, թիվ 454(7)):

Մարտի <10>, Թիֆլիս. – Նամակ Բաբու՝ Մխ. Տեր-Անդրեասյանին (չի պահպանվել):

Հավանաբար հետաքրքրվել է ժողովածուի տպագրության գործով և դրամ խնդրել:

ՈՒՀ 5, 319:

Մարտի 13. – Տպագրվում է Ս. Տեր-Ավետիսյանի «Մատենադարանի կարիքը Կովկասում» հոդվածը:

Արձագանքելով Թումանյանի առաջարկությանը (տե՛ս փետրվարի 21)՝ հեղինակը գրում է. «... Հ. Թումանյանի արած առաջարկությունը գալիս է լրացնելու մեր մտավոր կյանքի պակասավոր կողմերից մեկը, որ մեր երկրին՝ Կովկասին, բարձրագույն դպրոցից ոչ պակաս հարկավոր է մի հիմնական մատենադարան»: Կարծում է, որ այդպիսի մատենադարան կարելի է դարձնել Թիֆլիսի հասարակական մատենադարանը՝ հիմնադրված Կովկասի նախկին փոխարքա Մ. Վորոնցովի կողմից 1846 թ.:

«Վտակ», 1908, թիվ 57:

Մարտի 13. – Հովհ. Քաջազնունու նամակը թումանյանին՝ Բաքվից:

Բանաստեղծի անհայտ նամակի (տե՛ս մարտի 9) պատասխանն է: Պահանջում է շտապ ուղարկել «Իլյա Մուրոմեցի» թարգմանությունը: Ապա շարունակում է. «Խնդիրդ փողի վերաբերմամբ՝ իսկույն ևեթ կատարելու հնարավորություն չունենք: Տպագրական ինչ-ինչ արգելքների պատճառով դեռ չենք կարողացել սկսել գրքի շարելը: Եթե գոնե մի թերթ արդեն շարած լինեինք, կկարողանայի գրքի ծավալը հաշվել, ուրեմն և ուղարկել հոնորարի այն մնացորդը, որ հավանականորեն դու դեռ ունես մեզանից ստանալու»:

ՌԻՀ 5, 318:

Մարտի 17. – Փիլ. Վարդազարյանի նամակը թումանյանին՝ ժնկից:

Մտորում է իրեն հետաքրքրող հավատի, կյանքի, բարոյականության հարցերի շուրջ: Դերենիկն այցելել է իրեն. գրուցել են աղոթքի ու եկեղեցու մասին:

ԳԱԹ ԹՖ, 2066:

Մինչև մարտի 18-ը – Հիվանդ է:

Մարտի 18-ին Փիլ. Վարդազարյանին գրում է. «Հենց ես առավոտ եմ անկողնից վեր կացել»:

ԵԼԺ 10, 40:

Մարտի 18. – Տպագրվում է («Հուշարար», 1908, թիվ 1, էջ 6) «Ծագումն» («Ելնում է ահա նազելի փառքով...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 233, 618:

Մարտի 18. – Մխ. Տեր-Անդրեասյանի նամակը թումանյանին՝ Բաքվից:

Տեղեկություններ է հաղորդում թումանյանի նոր ժողովածուն տպագրության պատրաստելու ընթացքի մասին. «Մի բավական ստվար հատոր է դառնում, մոտ 25 տպագրական թերթ, որից երկուսի դուրս մնալու մեղքը (առայծմ) քեզ վրա է ծանրանում: «Սծիրիի մեջ մի քանի հեշտ ուղղելի բան չիմել ես, բայց այն բաները, որ մի քիչ ժամանակ և ուշադրություն են պահանջում,

ջում, չնեղանաս խիստ խոսքերիս վրա, ծուլության և անհոգության ես մատնել» (տե՛ս 1907, նոյեմբերի 24):

Գրում է, որ խմբագրությունը «վերջնական հաշիվ» անելուց հետո կուղարկի հոնորարը (տե՛ս 1908, մարտի <10>): ՌԻՀ 5, 319:

Մարտի 18-19, Թիֆլիս. – Նամակ ժնկ՝ Փիլ. Վարդազարյանին:

Բարեհոգի հումորով կեսլուրջ-կեսկատակ տեղեկություններ է հաղորդում իրենց մտերմական շրջանի մասին. «... Թեև փոփոխություններ եղած են, բայց էլ էն աշխարհքն ու էլ էն մարդիկն են»: Աղայանը զարմացած է, որ դասագրքերը իրեն եկամուտ են բերում, «հայ ազգի կենացն է խմում ու լացը գալիս է էդ ժամանակ»: Շանթը գիշեր-ցերեկ երագում է Եվրոպա գնալ. «Դաս է տալի տանջանքով – նրա համար, որ Եվրոպա գնա, դասագիրք է շինում, որ Եվրոպա գնա, պիես է գրում, որ Եվրոպա գնա, գարնանն է սպասում, որ Եվրոպա գնա...»: Մարիա Մարկովնան հասարակական գործչի իր տարերքի մեջ է. «...Ես որբևայրի կանանցն է նստել կրուժավա գործել սովորեցնում, էս որբանոցի երեխաներին՝ երաժշտություն, աղքատներին՝ նոր տեսակի հովանավորություն, անգործներին՝ մեր աշխարհքում չլսված գործեր, հինգզաբթի երեկոների գրույցներ և միշտ նոր ու նոր ծրագրեր...»: Ռուստեմը՝ «միշտ նույն նկարիչը կամ բանաստեղծը ֆայտոնի մեջ», միշտ նույն հիացածը իր նկարներով, մանավանդ կնոջ զմայլանքը. «Чудно! Чудно!»: Հակոբն էլ (Մանանդյան) «ինչպես մի հին ձեռագիր ավետարան, ընկած զանազան սոցիալիստական բրոշյուրների մեջ, նստած է իր տեղը ծանր ու բարի»:

ԵԼԺ 10, 38-39:

Մարտի 24, 26. – Երվ. Թաղիանոսյանի նամակը թումանյանին՝ Բաքվից:

Հայտնում է, որ թումանյանի բանաստեղծությունների ժողովածուն «հանձնված է տպարանին և արդեն շարվում է»: Խմբագրության անունից խնդրում է, որ «Սծիրիի» թարգմանության վերաբերյալ արված դիտողությունները հաշվի առնի և ուղղի. «Մենք մեծ ցանկություն ունենք անպատճառ գետեղել

«Մծիրիմ» ժողովածուի մեջ, բայց դրան կարող են արգելք լինել այն մի քանի անճշտությունները, որոնց մասին Ձեզ գրված է (տե՛ս 1907, նոյեմբերի 24): Մենք բոլորս մեծ հույս ունենք, որ դուք չեք զլանա կատարելու մեր խնդիրը և դրանով հնարավորություն կտաք մեզ զետեղել Ձեր բանաստեղծությունների մեջ նաև «Մծիրիի» թարգմանությունը, որ ընդհանրապես տա-ղանդավոր կերպով է արված»:

«Иля Муромец»-ի թարգմանության մասին գրում է. «Ընդունելով, որ դուք մեծ հաջողությամբ կատարել եք մի վերին աստիճանի դժվարին գործ, մենք, այնուամենայնիվ, անհարմար համարեցինք զետեղել այդ թարգմանությունը ժողովածուի մեջ»: Մենք համարում ենք այդ երկը, ըստ իր ոգու, մի օտար ու խորթ բան հայ ընթերցողների համար, որոնց համար, մեր խորին համոզմունքով, Ձեր «Բանաստեղծությունների» ժողովածուն կդառնա մի առձեռն գիրք»:

* Թարգմանությունը, այնուամենայնիվ, զետեղվել է ժողովածուի մեջ:

ՈՒՅ 5, 319-320, 403:

Մարտի 30. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Գանգատվում է մենակությունից, ընկերական շրջան չու-նենալուց, հայրենիքի, ժողովրդի թշվառությունից, աղքատու-թյունից. «Եկա տուն և մի երկու օրից փոշմանեցի, որ եկած տեղս ցուրտ, ցեխ, տնից դուրս չեն կարող գալ և եթե լավ լինի օրը ո՞ւր պիտի գնամ. շրջան չկա, ընկերներ չկան, կարդում ես, կարդում, ծանծրանում, հետո մոլորվում, թե ի՞նչ անես»:

Գնում ես այս ու այնտեղ և լսում ես սրտաճմլիկ բաներ – աղքատություն, սարսափելի աղքատությունը համատարած է, և չպիտի իմանաս, թե ի՞նչ կնշանակի մեր քաղաքի կամ գավառի աղքատությունը. սև չոր ցամաք հացի են կապված, և դա էլ չկա, գյուղերում սովից ինքնասպանության դեպքեր են եղած <....>, տավարը քաղցից մեռնում է. խոտ ու դարմանը վերջացել է, բայց դեռ գարունը չի եկել, դաշտը ծյունի տակ դեռ թաղված. եկած օրից տրամադրությունս սաստիկ վատացավ <....>, սիրտս կոտրած՝ ոչինչ չեն կարող անել <....>, բայց Թիֆլիս վերա-

դառնալ էլ չեն ուզում. մի խոսքով մրից ելա, մրջուրն ընկա. համբերեմ, տեսնեմ կարելի է հաշտվեմ կամաց-կամաց ու մի քիչ բան շինեմ:

Դուրս է գալիս, որ մեզ համար ոչ մի լավ տեղ գոյություն չունի. հիմա եմ գգում, որ ինձ արտասահման միայն կարող եմ լավ զգալ. մի խոսքով տրամադրությունս լավ չէ...»:

ԳԱԹ ԹՖ, 696:

<Մարտի վերջեր>. – Առաջին անգամ հայերեն տպա-գրվում է («Գեղարվեստ», 1908, թիվ 1, էջ 48) «Հայոց վիշտը» («Հայոց վիշտը անհուն մի ծով...») բանաստեղծությունը:*

* Առաջին անգամ տպագրվել է ռուսերեն լեզվով «Современные армянские поэты» ժողովածուի մեջ 1903 թ.:

ԵԼԺ 1, 200, 606:

<Մարտի վերջեր>, Թիֆլիս. – Ստանում է Բաքվում տպա-գրվող ժողովածուի առաջին երկու մամուլների փորձատիպը: ՈՒՅ 5, 321:

Մարտ. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 3, էջ 98), «Փոսիկի գանգատը» («Փոսիկը նստել») ոտա-նավորը:*

* Ձեռագրի վրա կա Թումանյանի նշումը. «Փոխադրություն»: ԵԼԺ 2, 292-193, 610:

Մարտ. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 3, էջ 99-103), «Մուկիկի մահը» («Ծիտիկն ու Մուկիկն ախպերացան») առակը:

ԵԼԺ 2, 155-158, 563-564:

Մարտ. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 3, էջ 107-108) «Ոսկու կարասը» «Հեքիաթ Հովի. Թուման-յանի» ենթավերնագրով:

ԵԼԺ 5, 194-196, 772:

<Մարտ- ապրիլի առաջին կես>, Թիֆլիս. – Սրբագրում է տպագրության ընթացքի մեջ գտնվող ժողովածուի երկու մամուլները, «Մծիրի» պոեմի թարգմանությունը և ուղարկում Բաքու երվ. Թադիանոսյանին:

ՈՒՅ 5, 322-323:

Ապրիլի 13. – Խմբագրության տեղեկությունը «Վտակի» «Գրական-գիտական ժողովածուի» տպագրությունը ձգձգվելու մասին (տե՛ս փետրվարի 18):

Հայտնում է, որ ժողովածուն տպագրության ընթացքի մեջ էր, բայց գործը կիսատ մնաց՝ տպարանի փակվելու պատճառով: Խոստանում է շուտով տպագրությունն ավարտել: Ժողովածուին իրենց մասնակցությունն են բերում Ավ. Ահարոնյանը («Աշնան գիշերին»), Ավ. Իսահակյանը («Երագ», «Լաց, սիրելիս»), Վրթ. Փափազյանը («Մեղեդին», «Ըմբոստ երգերից»), Լեոն («Հայ հրապարակախոսության հիսնամյակը») և ուրիշներ (20 ստեղծագործություն): Հովհ. Թումանյանից տպագրվում է «Մուրոմցի Իլյան կռվում է Վլադիմիր իշխանի հետ (ռուսաց բիլինաներից)» թարգմանությունը:

«Վտակ», 1908, թիվ 78:

Ապրիլի <առաջին կես>. – Մտադրություն «Ներսիսյան դպրոցից մի պատգամավորության հետ դպրոցական գործով» Եվրոպա մեկնելու (չի հաջողվում):

ԵԼԺ 10, 40:

Ապրիլի <առաջին կես>, Թիֆլիս. – Նամակ ժնև՝ Փիլ. Վարդապարյանին:

Ափսոսում է, որ Եվրոպա գնալը և հին ընկերոջը հանդիպելը չստացվեց:

Նեղսրտած և գրգռված տրամադրությամբ գրում է. «Պետք է ասեմ, որ ես նեղ ու խառնված ժամանակը ես էլ կատաղել եմ, ինչպես ամենքը նկատել են: Շարունակ քեֆ եմ անում: Եվ իսկապես, հապա ուրիշ ինչ անենք: Տեսնում ես աշխարհքը մի դատարկ ու հիմար բան է, դու էլ, ղոճաղի պես, մի քանի օրով եկել ես ու վաղը կամ մյուս օրը գնալու ես – շատ կարճ ու պարզ մի բան: Եվ ահա, ով ինչ կուզի անի: Բանը մնում է ճաշակին»: Ինքն էլ նախընտրում է քեֆ անել:

Տեղեկացնում է, որ իրենց շրջապատում հայտնվել են «նոր մոտիկ ընկեր-բարեկամներ»: Հիշում է Ահարոնյանին և Լեոյին. «Այո՛, միշտ իրար հետ ու իրար մոտ: Արի ու աշխարհքի բանը հասկացի: Եվ շատերը չեն կարողանում հասկանալ, բայց ես –

շատ հեշտ: Երևակայիր, որ Լեոն մի շատ միամիտ ու բնավորությամբ էլ մի խեղճ մարդ է: Շատ շատերից ավելի լավ ընկեր, իսկ ինչ վերաբերում է զանազան հայացքների – էդ առանձին: Շատ բաների մասին էլ, և մանավանդ, մեր «Վերնատան» մասին, նա ուրիշ կարծիք ունի այժմ: Բայց դա երկրորդական բան է»:

Հայտնում է, որ Բաքվի հրատարակիչները իր նոր ժողովածուից «դուրս են ձգել» «Դեպի Անհունը» և «Պոետն ու Մուսան» պոեմները:

ԵԼԺ 10, 40-41, 466-467:

Մինչև ապրիլի 17-ը. – Նամակ Բաքու՝ իր նոր ժողովածուի խմբագիր Հովհ. Քաջագունուն (չի պահպանվել):

Դժգոհում է, որ ժողովածուի մեջ ստեղծագործությունների տակ գրության տարեթվեր չեն նշված: Նկատում է, որ իր նայած երկու մամուլ-փորձատիպերում (<մարտ-ապրիլի առաջին կես>) շատ վրիպակներ կան: Խնդրում է ժողովածուից հանել «Հատվածը» և տեղը դնել «Քրիստոսն անապատում», ավելացնել նաև «Հայոց վիշտը» և «Իմ պահապան հրեշտակին» բանաստեղծությունները:

ՈՒՀ 5, 320-322:

Մինչև ապրիլի 17-ը. – Լույս է տեսնում Անտոն Մայիլյանի «Ինձ մի խնդրիր» երգը Թումանյանի խոսքերով:

«Վտակ», 1908, թիվ 79:

Ապրիլի 17. – «Վտակը» տեղեկացնում է.

խմբագրությունն ստացել է «Ինձ մի խնդրիր» մեներգի (դաշնամուրի նվագակցությամբ) նոր լույս տեսած նոտագրությունը: Երաժշտությունը Անտոն Մայիլյանի, խոսք Հովհ. Թումանյանի:

«Վտակ» 1908, թիվ 79:

Ապրիլի 17. – Հովհ. Քաջագունուն նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Պատասխանն է բանաստեղծի այն նամակի (տե՛ս մինչև ապրիլի 17-ը), ուր նա դժգոհություն է հայտնում, թե հրատարակվելիք ժողովածուի մեջ ստեղծագործությունները առանց

գրության տարեթվերի են: Քաջագունին գրում է. «Եթե ուսանավորներիդ տակը չեն դրված տարեթվերը, դրա միակ պատճառը քո անփութությունն է: Մի փոքր զոռիր հիշողությունդ և կմտաբերես, անշուշտ, որ թիֆլիսում հավաքելիս քո ցիրուցան ուսանավորները, ես հարց ու փորձ էի անում, թե որը ե՞րբ է գրված, և հաճախ ստանում էի քեզանից պատասխան՝ ո՞վ է հիշում: Հասկանալի է, որ ես չեմ կարող միևնույն հրատարակության մեջ մի շարք ուսանավորներ նշանակել տարեթվերով, իսկ մյուսները թողնել բաց»: Պահանջում է միայն «խոշոր» երկերի («Անուշ», «Լոռեցի Սաքուն») գրության թվականները, որ չկան նաև 1903-ի հրատարակության մեջ:

Բանաստեղծի ժողովածուի ցանկում որոշ փոփոխություններ կատարելու ցանկությանը (տե՛ս նույն նամակը) պատասխանում է. «Սրտի մեծ կսկիծով հանում ենք ժողովածուից «Հատվածը» և դնում ենք նրա տեղ «Քրիստոսն անապատում»: Մեծ կսկիծով, ասում եմ, որովհետև «Հատվածը» անպայման ավելի հաջող գրվածք է, քան «Քրիստոսը»: Բայց քանի որ դա քո կատեգորիկ պահանջն է, մենք մեզ իրավունք չհամարեցինք հակառակ վարվելը: Ինչ վերաբերում է «Հայոց վշտին», նա առանց այն էլ մտած է մեր ժողովածուի մեջ, իսկ «Իմ պահապան հրեշտակին» գերադասում ենք բոլորովին չտալ ընթերցողի ձեռքը»:

Բերում է նաև ժողովածուի նյութերի ցանկը և պահանջում հեղինակի շտապ կարծիքը ընտրության մասին:
ՌԻՀ 5, 320-322:

Ապրիլի 17, 18. – Տպագրվում է Հովհ. Տեր-Միրաքյանի «Մեր դեռահասների գրականությունը» հոդվածը:

Ընդգծելով մանկական գրականության աղքատությունը՝ հեղինակը բարձր է գնահատում «Աղբյուր» և «Հասկեր» մանկական ամսագրերի դերը, մասնավորապես Թումանյանի մանկական ստեղծագործությունները:

Ի պատասխան Թումանյանի տաղանդի որոշ երկրպագուների այն կարծիքին, թե իզուր է բանաստեղծը նվիրվել մանկական գրականությանը և իր «չքնաղ տաղանդը» զբաղեցնում է «մանր բաներով»՝ հոդվածագիրը պնդում է հակառակը:

Թումանյանի երկերի ակունքը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է: «Անգին գանձերը» ժողովրդից վերցնելով՝ բանաստեղծը վերադարձնում է ժողովրդին: Ուստի և ժողովուրդը, հատկապես դեռահաս սերունդը, սիրով կարդում և ընկալում է նրա երկերի խորհուրդը և ճանաչողական արժեքը: Օրինակ են բերվում «Չարի վերջը» և «Ոսկու կարասը»:

Վկայակոչելով սեփական փորձը՝ հոդվածագիրը նկատում է, թե դպրոցում ընթերցանության դասերին Թումանյանի «Հասկերում» տպագրված «վերաստեղծությունները» աշակերտները լսում են մեծ հետաքրքրությամբ, «էլեկտրականացած»:

Թումանյանի տաղանդը մեծ ծառայություն է մատուցում գրականությանն ու ժողովրդին, եզրակացնում է հոդվածագիրը:
«Վտակ», 1908, թիվ 79, 80:

Մինչև ապրիլի 18-ը, Թիֆլիս. – Նամակ և հեռագիր Բաքու՝ Եր. Թաղիանոսյանին (չեն պահպանվել):

Հետաքրքրվում է ժողովածուի տպագրության ընթացքով: Ցանկություն է հայտնում իր ձեռքով կատարելու մամուլների սրբագրությունը:

ՌԻՀ 5, 322, 403:

Մինչև ապրիլի 18-ը, Թիֆլիս. – Բաքու է ուղարկում հրատարակվող ժողովածուի երկու մամուլների առաջին սրբագրությունը:

ՌԻՀ 5, 322, 403:

Մինչև ապրիլի 18-ը. – Հրատարակիչ Եր. Թաղիանոսյանը ստանում է «ուղղված «Մծիրին» »:

ՌԻՀ 5, 323:

Ապրիլի 18. – Եր. Թաղիանոսյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է ժողովածուի տպագրության ընթացքի մասին: Չի կարող բավարարել բանաստեղծի պահանջը, որ գրքի վերջնական խմբագրությունը կատարի ինքը. «Սրբագրությունը Ձեզ ուղարկելը կառաջացնի շատ անհարմարություններ ու դժվարություններ և չափից դուրս կդանդաղեցնի գործը: Մենք

բոլորս հատուկ խնդրում ենք Ձեզ հավատալ, որ մենք առանձին սիրով ու խնամքով ենք վերաբերվել ու վերաբերվում Ձեր երկերին»:

ՈՒՂ 5, 322-323:

Ապրիլի 20. – Հայտարարություն, որ Թիֆլիսում վաճառվում է «Ինձ մի խնդրիր» մեներգի նոտագրությունը՝ Բաքվի հայոց կուլտուրական միության հրատարակությամբ (տե՛ս նաև ապրիլի 17)։ Խոսք Թումանյանի, երաժշտությունը Անտոն Մայիլյանի:

«Վտակ», 1908, թիվ 82:

Ապրիլի 21. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Գրում է Լեոյի հորեյանին մասնակցելու, էջմիածին մեկնելու, Դվինի պեղումները և «Այրարատի սրբազան դաշտի սոսիների փթթումը» տեսնելու մտադրության մասին. «Լեոյի տոնին կհասնեն այդտեղ, հետո որոշենք՝ մարշրուտ կազմենք թափառելու՝ գնանք Լոռի, Սևան, Ալազյազ, Անի, Մրեն»:

ԱԻ ԵԺ 6, 88-89:

Ապրիլի 25, Թիֆլիս. – Լսում է Լեոյի դասախոսությունը և հանդիպում Վահան Տերյանին:

ՎՏ ԵԺ, III, 193:

Ապրիլի 25. – Տեղի է ունենում բարեգործական ընկերության վարչության մասնաժողովի նիստ:

Փորձելով իրականացնել Թումանյանի հողվածում առաջադրված գաղափարը (տե՛ս փետրվարի 21)՝ որոշվում է ձեռք բերել հայերեն լույս տեսած բոլոր գրքերը, ինչպես նաև կովկասագիտության և հայագիտության վերաբերյալ գրքեր: Մասնաժողովի նախագահ ընտրվում է Լեոն, քարտուղար՝ Լ. Բաբայանը: Բանաստեղծի ներկայությունը նիստին հավանական է:

«Վտակ», 1908, թիվ 86:

Ապրիլի 26. – Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը որոշում է սեպտեմբերից Թիֆլիսում բացել կենտրոնական գրադարան-ընթերցարան:

«Վտակ», 1908, թիվ 87:

Ապրիլի 29. – Լուր այն մասին, որ տեղական բարձր իշխանությունը Կովկասյան ժողովրդական համալսարանի վարչությանը արգելել է Ջուբալովի անվան ժողովրդական տանը հայերեն դասախոսություններ կարդալ:

«Միևնույն ժամանակ արգելված են ժողովրդական համալսարանի հայկական սեկցիայի նախաձեռնությամբ կազմակերպված հանրամատչելի դասախոսությունները, որ գոյություն ունեին ամբողջ երկու սեմեստր»:

* Թիֆլիսի ժողովրդական համալսարանը ստեղծվել է 1907 թ., ունեցել է ռուսական, հայկական, վրացական, թուրքական և օսական սեկցիաներ: Հայկական սեկցիան ունեցել է 13 դասախոսություն. մեկը կարդացել է Թումանյանը (տե՛ս 1907, հունիսի 10): Փակվել է գեներալ նահանգապետի կարգադրությամբ:

«Վտակ», 1908, թիվ 122:

Ապրիլի 30. – Վ. Տերյանը Ց. Խանզադյանին գրում է.

«Ամսի 25-ին գնացինք Լեոյի դասախոսության, որ չափազանց թույլ էր: Ի միջի այլոց այդ դասախոսության ժամանակ ծանոթացա (կրկին անգամ) Հովի. Թումանյանին, որը թարգմանել է «Իլիա Մուրոմեցը»: Շատ հետաքրքիր է, շուտով կվերցնեն և կուղարկեն քեզ և Ծատուրին (Ալ. Ծատուրյան)»:

ՎՏ ԵԺ, III, 193:

Ապրիլ. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 4, էջ 130-137) «Հսկան» բալլադը՝ «Ույժը» վերնագրով և «Կովկասի առասպելներից» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 143-148, 561-562:

Մայիսի 2. – Վ. Տերյանի նամակը Ց. Խանզադյանին:

Գրում է. «Լեոյի դասախոսության ժամանակ ծանոթացա Թումանյանին (տե՛ս ապրիլի 25), որ թարգմանել է (Ինչպես ասում են հիանալի կերպով) «Իլիա Մուրոմեցը»: Այդ թարգմանությունը կտպագրվի դաշնակցական ժողովածուի* մեջ, սակայն նա խոստացավ ինձ տալ տպագրված թերթերը,

որովհետև այդ ժողովածուն հայտնի չէ, երբ լույս կտեսնի: ... Մի բան, որ ինձ քիչ հաճույք չպատճառեց, դա Հովհ. Թումանյանի թեև զսպված (сдержанный), սակայն համակրական վերաբերմունքն էր իմ գրվածքներից տպագրվածների վերաբերյալ»:

* Հիշատակված ժողովածուն «Վտակի» «Գրական-գիտական ժողովածուն» է (տե՛ս ապրիլի 13): Լույս է տեսել 1908 թ.:

ՎՏ ԵԺ, III, 194-195:

Մայիսի 8. – Մխ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Խնդրում է բանաստեղծի համաձայնությունը ժողովածուում գետեղել «Հասկերում» տպագրված «Ույժը» (տե՛ս ապրիլ): Խմբագրական մասնաժողովի անունից առաջարկում է «մեկ էլ աչքի անցնել, փոխել վերջին չորս տողը կամ բոլորովին դուրս գցել, սրբագրել լեզուն, ուր որ արևմտյան ձևեր են խառնել մեր արևելյան բարբառին»:

Հետգրության մեջ անում է որոշակի դիտողություններ.

«1. Ո՞վ էր գլխից վեր *կալած* (զավառաբանություն):

2. *մարդ բանակ* – խորթ ձև է:

3. ամպեր *են*, թաքուստներ *են* (արևմտյան):

4. *ժայռեղեն սար* – «եղեն» վերջավորությունը ցույց է տալիս համանման առարկաների համախմբումը. այստեղ անտեղի է:

5. Բարոյախոսությունը թույլ է, ավելի լավ է դուրս գցել»: ՈՒՀ 5, 324:

Մայիսի 10. – Փ. Թերլեմեզյանի նամակը Թումանյանին՝ Փարիզից:

Ներողություն է խնդրում, որ Թիֆլիսից մեկնել է՝ առանց բանաստեղծին հանդիպելու: «Մոտ մի ամիս» անցկացրել է Եգիպտոսում: Գրում է տեսած հնությունների մասին, որոնց մեջ նմանություններ է տեսնում հայկականին: Միաժամանակ նկատում է. «... գիտե՞ք, հայ մարդը կճնշվի և կուչ կգա, ուրիշների հետ համեմատած ատեն «կուլտուրական» հայի անցյալ քաղաքակրթությունը...»:

ՈՒՀ 5, 324-325:

«Մայիսի առաջին տասնօրյակ», Թիֆլիս. – Մտադրություն Լ. Շանթի, Ա. Աթանասյանի, Ռ. Խանազատյանի և ուրիշների հետ մայիսի 11-ին գնալ Ավճալա գրոսանքի:

Ընկերները գնացել են առանց Թումանյանի: Այնտեղ է եղել նաև Վահան Տերյանը:

ՎՏ ԵԺ, III, 194-195:

«Մայիսի առաջին տասնօրյակ», Թիֆլիս. – Վ. Տերյանին խոստանում է աշխատակցել «Գարուն» ալմանախին:

ՎՏ ԵԺ, III, 202:

Մայիսի 12. – Վ. Տերյանի նամակը Ց. Խանզադյանին:

Գրում է. «Ի միջի այլոց նա* (Լ. Շանթ.) ասաց այն ալմանախի մասին, որ մտադիր են եղել հրատարակել ինքը, Հովհ. Թումանյանը, Դեմիրճյանը, Ավոն և Կօ, սակայն նա ասում է, որ իրանց ձեռնարկությունը քնած է և հազիվ թե գլուխ գա: Սա այն ալմանախն է, որի մասին խոսում էր նաև Թումանյանը:** Երբ են հայտնեցի, որ մենք վախենում ենք, թե մեր գրական գեներալները ետ մնացած բաներից ուղարկեն և եթե չտպագրենք նեղանալով հեռանան, նա ասաց, որ նախ նոքա վատ բաներ չեն ուղարկի, որովհետև կամաչեն, երկրորդ՝ գրողի համար մեծ նշանակություն ունի, թե որտեղ են լույս տեսնում իր գրվածքը և այլն»:

* Խոսքը Լ. Շանթի մասին է:

** Հավանաբար դա «Վերնատան» մտադրությունն է եղել, որ չի իրականացել:

ՎՏ ԵԺ, III, 200-201:

Մայիսի 16, Թիֆլիս. – Իր տանը հյուրընկալում է Վահան Տերյանին:

Նրան էր հանձնելու «Իլիա Մուրոմեցի» թարգմանությունը՝ «Գարուն» ալմանախում տպագրելու համար: Այդ հանդիպման մասին Տերյանը Ց. Խանզադյանին հասցեագրված նույն օրվա նամակում գրում է. «Որովհետև պատահամբ ընկա նրա մոտ, ուստի ոտանավորներս էլ հետս էին. նա հետաքրքրվեց ... Նախ և առաջ ընդհանուր տպավորությունը. մտնում են մի շքեղ կաբինետ, ուր երեք շկաֆ կա և մի գրքակալ լիքը գրքերով և ընտիր գրքերով: Կաբինետը ճաշակավոր է և տպավորիչ <...>

Ապա տեսնելով ոտանավորներիս տետրը ասաց, որ իրան ավելի է հետաքրքրում «նոր բանաստեղծի տետրը»:

Պետք է նկատեն, որ ես քաշվում էի, մանավանդ որ, չնայած իր պարզության, նա իմ վրա տպավորություն գործեց: Ինչ-որ գյոթեական բան կա նրա մեջ: Գուցե հասա՞կը կամ հենց այն հանգիստ պարզությո՞ւնը – չգիտեմ»:

<....> «Մի բան, որ իմ առաջին պահանջն է սկսնակ գրողից, – ասաց նա, – դա այն է, թե արդյոք մի ինքնուրույն-նոր բան բերո՞ւմ է այդ մարդը կամ ցույց տալի՞ս է նշաններ այդ անելու: Ձեր վերաբերմամբ պետք է պատասխանել դրականապես: *Դուք բանաստեղծ եք*: Դա ամենագլխավորն է: Դուք խոսքերի հետ չեք խաղում: (Օրինակ է բերում Ահարոնյանին, որը խոսքերի հետ խաղում է և դրանով կորցնում է երեք քառորդը իր ունեցածի)»:

Արվեստի այլ հարցերի անդրադառնալուց հետո Թումանյանն ասել է. «Ես ուրախությամբ ողջունում եմ ձեր մուտքը գրական ասպարեզ – բարով եկաք»:

Ապա խորհուրդ է տալիս նշանակություն չտալ զանազան թերթերի խոսքերին՝ գովասանական, թե վատաբանական լինեն. <....> «Մի քանի տեղին ու նուրբ դիտողություններ արեց, որ ես աչքի առաջ կուներամ: Իհարկե, համենայն դեպս երևում է, որ խելացի և տաղանդավոր մարդ է»:

ՎՏ ԵԺ, III, 206-208:

Մինչև մայիսի 24-ը. — Մտադրություն, ըստ Կոմիտասի հետ պայմանավորվածության, մեկնել էջմիածին՝ զբաղվելու «Անուշը» օպերայի վերածելու գործով (չի մեկնել):

ԿՆ, 53:

Մայիսի 24. – Կոմիտաս վարդապետի նամակը Թումանյանին՝ էջմիածնից:

Գրում է. «Այ աղբեր, քեզ սպասելով աչքս ջուր դառավ, չէ՞ որ դու ասել էիր, թե Ջատկի տոներից հետո կգաս մի քանի օրով: Ես ա Չամբարծումն էլ անցավ, դեռ դու չերևացիր և ես ստիպված, հույսս էլ կտրած, առա գրիչս, որ քեզ լավ հայիոյեմ, բայց ջահել ջիվան ջանիդ ափսոսացի, էս անգամ ձեռիցս պրծար:

Աղբեր, վաղուց սկսել եմ և բավական բան գրել քո «Անուշից», բայց դեռ պակասավոր բաներ շատ կան, որպեսզի մի ամբողջություն դառնա Այս ամառվան արձակուրդներին պետք է զբաղվեմ առավելապես «Անուշով»: Գրիր, թե ե՞րբ կարող ես մի քանի օրով ինձ մոտ հյուր գալ և այստեղ միասին վերջացնենք, և ես հանգիստ շարունակեմ. ամեն անգամ, երբ տրամադրությունս տեղն է, ձեռքերս թուլանում եմ, որովհետև երգի հարմարեցված չեմ, դեռ բաներ և պակասներ էլ կան»:

ԿՆ, 52-53:

Մայիս. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», թիվ 5, էջ 177) «Թռչունի մտածմունքը» («Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ...») թարգմանական բանաստեղծությունը:
ԵԼԺ 2, 297, 611:

Մայիս. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», թիվ 5, էջ 178-179) «Մայրը» պատմվածքը:
ԵԼԺ 5, 74-75, 751:

Մայիս. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», թիվ 5, էջ 183-187) «Տերն ու ծառան»՝ «Հեքիաթ Յովի. Թումանյանի» ենթավերնագրով:
ԵԼԺ 5, 197-201, 774-775:

Յունիսի 5. – Տպագրվում է («Վտակ», 1908, թիվ 119) «Հայոց նոր գրականության հիսնամյակը» հոդվածը:

Առաջարկում է «Վերք Հայաստանի» վեպի՝ այդ «երջանիկ գրքի» առաջ տպագրության և «հայոց նոր գրականության սկզբնավորության հիսնամյակը» նշել իբրև համաժողովրդական տոն. «Մի հոյակապ առիթ՝ մի մեծ համազգային տոն կազմելու, վերարժարծելու, կենդանացնելու շատ նվիրական զգացմունքներ ու գաղափարներ, որոնցով ոգևորվել է, այո՛, ժողովուրդը, և մի ընդհանուր հաշիվ տեսնելու այն գեղեցիկ երկերի ու գործերի, ինչ որ կարողացել է տալ հայ հանճարը էս հիսուն տարում»: Առաջարկում է նաև, առիթն օգտագործելով, «նորանոր ուսումնարաններ ու գրադարան-ընթերցարաններ բանալ, կենտրոնական համազգային գրադարան կամ թանգարան հաստատել, կամ հիմնել հայոց գրական ֆոնդ, նրանով

միանգամ ընդմիջտ վերացնել ամեն մի գրողի հոբեյանին փող հանգանակելու սովորությունը և հոբեյանները վերածել զուտ գրական տոների»:

ԵԼԺ 6, 158-159:

Մինչև հունիսի 8-ը, Թիֆլիս. – Նամակ էջմիածին՝ Կոմիտասին (չի պահպանվել):

Մտադրություն էջմիածնի փոխարեն հանդիպել Դիլիջանում «Անուշի» գործով զբաղվելու, միաժամանակ մտահոգություն, որ այնտեղ կարող է դաշնամուր չլինել:

Մտադրությունը չի իրականացել: Էջմիածնից հրաժարվելու պատճառն այն էր, որ բանաստեղծն զգուշանում էր մոծակներից, ջերմախտով հիվանդանալուց (տես հունիսի 8):

ԿՆ, 53:

Մինչև հունիսի 8-ը, Թիֆլիս. – Մտադրություն Դսեղ մեկնելու (չի իրականացել):

ԿՆ, 53:

Հունիսի 8. – Կոմիտասի նամակը Թումանյանին՝ էջմիածնից:

Գրում է. «Էջմիածին չեկար, վախեցար, ես քեզ այնպիսի տեղ տայի, որ մոծակ չէ, մոծակի աղբերն էլ իր ճտերով չէր կարող մուտք գործել <...> Ուզում ես Դիլիջան, բարի՛. դաշնամուրի հոգ մի աներ, իմ գալու կամ քո գալուդ նպատակն է լինելու միայն ևեթ բառերը՝ բանաստեղծությունը լրացնել դերակատարներով, մի խոսքով՝ կազմել լիբրեթթոն, իսկ մյուս բաները՝ երաժշտությունը, կկազմեն ես միայն էջմիածնում <...>

Մանրամասն ծրագրերս կպատմեմ, երբ տեսնվենք, շատ դժվար է երաժշտության մասին գրով խոսել-բացատրելը»:

ԿՆ, 54:

Հունիսի 20. – Ավ. Իսահակյանի նամակը Թումանյանին Ղազարապատից:

Հետաքրքրվում է ընկերների դրությամբ, Թումանյանի առաջարկած գրական ֆոնդի հարցերով, Բաքվում տպագրվող բանաստեղծությունների ժողովածուի վիճակով: Իր հոգեվիճակի մասին գրում է. «Սուս ու փուս պոչս քաշած պարապում

եմ – կարդում եմ, քան թե գրում. տրամադրությունս ինչպես միջտ, հիմա էլ վատ է, անիրավ հեղեղն էլ շատ վնասեց մեր քաղաքին և թե տրամադրությանս վրա վատ ազդեց <...>

Տեսնում եմ, որ եթե այս գյուղական անկյունն էլ չունենայի՝ մի զազազած զազան պիտի դառնայի, գոնե այստեղ ամեն բանից հեռու – լրագրություն, հայկական հիմար իրականություն, դաշնակցական ընկերներ և այլն և այլն՝ նրանցից հեռու՝ ապրում ես քո բոժոժի մեջ և տեսնում ես՝ թե շուրջդ որքա՞ն դատարկ է, կեղծիք է և մարդ իսկապես մե՞նակ է...

Ուզեցա ես էլ ծայնակցել քո առաջարկած գրական ֆոնդին, բայց այս օրերս այնպես եմ ատում հայություն, հայ ժողովուրդ, հայկական ապագա, որ սիրտս խառնում է դրանց մասին մտածելը. ես ապրում եմ հիմա բացառապես անցյալով, (– ոչ թե իմ անմիտ անցյալով), այլ հին ազգերի՝ История Ассирии, Индии, Халдей, Мидии – շատ եմ խորասուզվել Ձորաստրի և Բուդդայի վարդապետության և կյանքի մեջ»:

Հիշեցնում է. «Մուշեղն ու Աշխենը խոստացան ինձ գրել Դսեղից, որ գան ինձ հյուր՝ տանեմ Անի»:

Մի ԵԺ 6, 89-90:

<Հունիս>. – Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 6, էջ 210-211) «Ամենից լավ տունը» («Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ...») բանաստեղծությունը:

Փոխադրություն է անգլերենից:

ԵԼԺ 2, 299-300, 612:

<Հունիս>. – Սկսում է գրել «Երևանի կռիվը և Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանին» իբրև պատմություն» ուսումնասիրությունը:

ԵԼԺ 8, 97, 562-608:

Մինչև հունիսի 2-ը. – Այցելություններ հիվանդ Մուրացանին:

ԵԼԺ 10, 42:

Հունիսի 2, Թիֆլիս. – Նամակ Ղազարապատ՝ Ավ. Իսահակյանին:

Վերջինիս հունիսի 20-ի նամակի պատասխանն է: Գրում

է, որ ընտանիքը Դսեղում է, ինքը մնացել է մենակ. «Վատ բան է եղել մենակությունը»: Ջբաղված է «Լուսաբերով». «Մինչև հուլիսի վերջը հազիվ թե ազատվեմ տպագրությունից: Դառել եմ ոտանավոր շինող, պատմություն շինող – փեշաքյար: Ի՞նչ անենք, գուցե սրանից էլա մի բան դուրս գա: Չմնանք ազգի ու հոբելյանի մունճաթին»:

Ափսոսանք է հայտնում, որ Լեոյի ու Ահարոնյանի հետ չի կարողացել մեկնել Եվրոպա. «Մի քանի հարյուր ռ. փող պետք է գտնեի <...> Մի՞թե կարելի բան էր: Չեղավ: Բայց շատ կուզենայի մի անգամ ընկնեմ էդ աշխարհքը, ինչ որ ականջով լսել եմ մի աչքով տեսնեմ – ժողովուրդներ կան, աշխարհքներ ու տեղեր կան, պատմական հիշատակարաններ կան, կուլտուրա ու գեղարվեստ կա:

Հարկավոր էր, շատ էր հարկավոր: Ես էն գլխից հենց ընտանեկան հոգսերի ու նեղությունների տակ եմ մնացել, շատ եմ հոգնած ու ջարդված. լավ կլիներ, բայց չի լինում:

Երանի քեզ, որ մի անկյուն ունես (տե՛ս հունիսի 20) ու գլուխդ ազատ, ականջդ դիճք կարողանում ես նստես պարապես. ինձ համար էդ էլ է կտրված»:

ԵԼԺ 10, 41-42:

Հուլիսի 2. – Կոմիտասի նամակը Թումանյանին՝ էջ-միածնից:

Գրում է. «Երեկ Լիպարիտն այստեղ էր, ասաց, որ Դիլիջան չես գնում (տե՛ս մինչև հունիսի 8): Ճի՞շտ է, եթե այո, ինչո՞ւ ինձ չես գրում մի երկտողով. ես արդեն պատրաստվում էի ճանապարհ ընկնելու, ասաց, որ ձեր գյուղն ես գնալու (տե՛ս մինչև հունիսի 8). շատ լավ. եթե այդպես է, էլի գրիր, կարող եմ ձեր գյուղն էլ գնալ և տեղական խոսակցության ծայնաստիճանը և ուրիշ կարևոր նյութեր կգրեմ և կուսումնասիրեմ: Շուտով գրիր, որովհետև գործերիս դասավորությունը քեզնից է կախված:

Մինչև ամսի 10-ը կսպասեմ, հետո կելնեմ երևի Տփլիս, մի քանի բաներ ունեմ տպագրելու»:

ԿՆ, 54:

Մինչև հուլիսի 12-ը, Թիֆլիս. – Ստանում է Ավ. Ահարոնյանի հուլիսի 6-ի նամակը Վիեննայից:

Հայտնում է, որ արդեն չորս օր է Վիեննայում եմ: Լեոն ենթարկվում է բժշկական քննության, իսկ ինքը մտադիր է Փարիզ մեկնել: Ափսոսում եմ, որ բանաստեղծը իրենց հետ չկարողացավ մեկնել եվրոպական ճամփորդության:

ԳԱԹ ԹՖ, ց.2, թիվ 225:

Մինչև հուլիսի 12-ը, Թիֆլիս. – Ստանում է Լ. Շանթի նամակը ամառանոցից (չի պահպանվել):

ԵԼԺ 10, 44:

Մինչև հուլիսի 12-ը. – Նամակ Շուլավերի ոստիկանությանը (չի պահպանվել):

Պահանջում է հայտնաբերել և պատժել զոքանչի՝ Շուլանիկ Մաճկալյանի առանձնատան կողոպտիչներին:

ԵԼԺ 10, 43:

Մինչև հուլիսի 12-ը. – Եղբոր՝ Ռոստոմի հետ Դսեղ՝ ընտանիքին է ուղարկում 30 ռուբլի «ու մի խուրջին էլ միրգ»:

ԵԼԺ 10, 43:

Մինչև հուլիսի 12. – Լույս է տեսնում «Լուսաբերի» Ա տարվա երկրորդ հրատարակությունը:

ԵԼԺ 10, 44:

Հուլիսի 12. – «Ձանգակում» տպագրվում է լուր, որ թերթի խմբագրությունը ստացել է «Լուսաբերի» Ա տարվա երկրորդ հրատարակությունը:

«Ձանգակ», 1908, թիվ 6:

Հուլիսի 12. – Տպագրության է հանձնում «Լուսաբերի» Բ տարին:

ԵԼԺ 10, 44:

Հուլիսի 12 Թիֆլիս. – Նամակ Դսեղ՝ Օ. Թումանյանին:

Տեղեկացնում է Շուլավերի առանձնատան կողոպուտի մասին: Գրում է, թե Թիֆլիսում ինչպես է անցնում իր օրը մենակության մեջ: Տեղեկություններ է հաղորդում բարեկամներից ու ծանոթներից և այն մասին, թե ինչ է անում, որ ընտանիքի ամառային հանգիստը Դսեղում լավ անցնի: Հայտնում է, որ «Համլիկի ու Արտիկի նամակները խմբագրությունն* ստացել է»:

* Խոսքը «Վտակ» թերթի մասին է, որ հուլիսի 6-ից սկսել էր հրատարակվել «Չանգակ» անունով:
ԵԼԺ 10, 43-44, 467-468:

Հուլիսի 16. – Տպագրվում է Ն. Աղբալյանի գրախոսականը Ա տարվա «Լուսաբերի» մասին:

Գրում է. «Նրա լեզուն մաքուր հայերեն է. նյութերն առնված են մեր ժողովրդական կյանքից ու բանահյուսությունից կամ կազմված են նույն ուղղությամբ <....> Ամբողջ դասագրքի մեջ զգացվում է հայության շունչը, այնտեղ մատնանշվում է հայ կյանքը, հատկապես՝ շինական կյանքը:

<....> Ջուր չէ, որ նրա կողմնակիցներից երկուսը բանաստեղծ են: Նյութերի մշակությունը բանաստեղծական դրոշմ է կրում և շնորհիվ կնիք՝ չկան ձգձգումներ, ծանծաղի նկարագրություններ: <....> Շանթը և Հովի. Թումանյանը կարողացել են մի կենդանի շունչ տալ գրքին և թևեր ստեղծել մանուկների համար:

<....> Այս դասագիրքը մեծ ապագա ունի, նա մի ուրախալի երևույթ է մեր կյանքում: Նրանով կարելի է ավանդել մաքուր և հարազատ հայ լեզու, դասը սովորեցնել խաղ ու պարով, վառել երեխայի հետաքրքրությունը և կրթել նրա զգացումներն և ճաշակը»:

«Չանգակ», 1908, թիվ 9:

Հուլիսի 17-18. – Դատեր՝ Աշխենի նամակը Թումանյանին՝ Դսեղից:

Հետաքրքրվում է գիմնագիայի ընդունելության հարցով: Թույլտվություն է խնդրում Անի մեկնելու (տե՛ս հունիսի 20):

ԵԼԺ 10, 46. ԹՏԹ, ՓԲ, 1227:

Հուլիսի 19. – Տպագրվում է լուր, որ Պետերբուրգից Թիֆլիս է եկել «հայտնի ռուս գրող» Բոգորազ Տանը:

«Չանգակ», 1908, թիվ 12:

Հուլիսի 24. – Մուշեղ Թումանյանի նամակը Հովի. Թումանյանին՝ Դսեղից:

Տեղյակ է հոր՝ տասն օրից հետո Դսեղ գալու մտադրությանը: «Լուսաբեր» դասագրքից երեք օրինակ է ստացել: Գրում

է նաև հորեղբայրների՝ Ռոստոմի և Վահանի ընտանեկան վեճերի մասին: «Արտիկը շատ է նեղացել, որ իր տեղեկությունը Դսեղից՝ «Վիրավոր» ստորագրությամբ, «Չանգակում» չեն տպել»:
ԹՏԹ, 1223:

<Հուլիսի երրորդ տասնօրյակ>, Թիֆլիս. – Նամակ Դսեղ՝ դատերը՝ Աշխենին:

Պատասխանելով վերջինիս հուլիսի 17-18-ի նամակին՝ հայտնում է, որ զբաղվում է գիմնագիայի հարցով: Հետաքրքրվում է Դսեղում ընտանիքի հանգստով, տեղեկություններ է հաղորդում թիֆլիսյան կենցաղային առօրյայից: Գրում է. «Լուսաբերի» առաջինը պոծել ենք. երևի ստացաք (հուլիսի <25-26>). քննադատությունն էլ կարդացիք (տե՛ս հուլիսի 16): Շատ են տանելու էս տարի: Երկրորդն ենք տպում»:

ԵԼԺ 10, 45-46:

<Հուլիսի երրորդ տասնօրյակ>, Թիֆլիս. – Նամակ դատերը՝ Նվարդին (չի պահպանվել) :

Գրում է Անի գնալու մասին (տե՛ս հունիսի 20):

ԵԼԺ 10, 46:

<Հուլիսի երրորդ տասնօրյակ>. – Հովի. Քաջագնունու հետ ռուս գրող, լրագրող Վլ. Բոգորազ Տանին գնացքով ուղեկցում է դեպի Ալավերդի – Հաղպատ – Սանահին, այնուհետև՝ Երևան, Էջմիածին:

ԵԼԺ 10, 469-470:

<Հուլիսի երրորդ տասնօրյակ>. – Այցելում է Դսեղ՝ եղբայրների բաժանության առիթով:

ՆԹ ՀԶ, 87:

Հուլիսի 28. – Եր. Թաղիանոսյանի՝ հուլիսի 28-ի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է. «Ձեր գրքի տպագրությունը արդեն վերջացել է, մնում է միայն իբրև վերջաբան շարել Ա. Ահարոնյանի հողվածոր Ձեր երկերի մասին».*

* Ահարոնյանի հողվածոր ժողովածուում չի գետեղվել:

ՌԻՀ 5, 327:

Մինչև հուլիսի 29-ը. – Ջբաղված է «Լուսաբեր» դասագրքի Բ տարվա տպագրության նախապատրաստական աշխատանքներով:

ԵԼԺ 10, 42:

Մինչև հուլիսի 29-ը. – Լույս է տեսնում «Լուսաբեր» դասագրքի Բ տարին:

«Ձանգակ», 1908, թիվ 19:

Յուլիսի 29. – «Ձանգակում» տպագրվում է լուր, որ խմբագրությունն ստացել է «Լուսաբերի» Բ տարին:

«Ձանգակ», 1908, թիվ 19:

Յուլիսի 30, Թիֆլիս. – Նամակ Դսեղ՝ Ռոստոմ Թումանյանին:

Չորդորում է եղբայրներին, որ համերաշխ ու արդար բաժանվեն. «Իմացած կաց, որ մի բան ավել կամ մի բան պակաս – դատարկ բան է, բայց մարդու նամուսն ու ախպոր կամ տան սերը – մեծ բան է: Ես լավ գիտեմ, որ ինչքան էլ դու անհամբեր լինես, այսուամենայնիվ, լավ ես հասկանում ամեն բան, նրա համար էլ հույս ունեմ, որ այնպես կանես, ինչպես վայել է մեր օջախին ու մեր անունին»:

ԵԼԺ 10, 46-47:

Յուլիսի 30, Թիֆլիս. – Նամակ կնոջը՝ Օլգա Թումանյանին (չի պահպանվել):

Գրում է եղբայրների՝ Ռոստոմի և Վահանի բաժանության մասին:

ԵԼԺ 10, 52:

<Յուլիս>. – Տպագրվում է («Չասկեր», 1908, թիվ 7, էջ 249-250) «Ահմադը» պատմվածքը՝ «Չին բաներից» ենթավերնագրով:

ԵԼԺ 5, 76-78:

Օգոստոսի 1. – Մխ. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից:

Չայտնում է, որ ժողովածուի 17-րդ՝ վերջին մամուլը արդեն շարված է: Ավարտվում է Բայրոնի «Շիլիոնի կալանավորը»

պոեմի թարգմանությամբ. «Այսօր իմացա, որ առանց ինձ վճիռ են կայացրել «Մծիրին» դուրս գցել... և այս երկու օրս կտպվի վերջին 1/2 թերթը, ապա Ահարոնյանի հոդվածը (տե՛ս հունվարի 26, հուլիսի 28), և գիրքը պատրաստ կլինի: ... «Մծիրին» դուրս գցելու մասին քեզ բացատրություն կարող է տալ Քաջազնունին, որ ներկա է եղել այդ նիստին»:

ՌԻՉ 5, 328:

Օգոստոսի <1,2>. – Սկսում է կառքով ճանապարհորդություն Ռազմավիրական ճանապարհով:

Չովի. Քաջազնունու հետ ուղեկցում է ռուս գրող, լրագրող Վլ. Բոգորազ Տանին:

ԵԼԺ 10, 48-49, 470:

Օգոստոսի 3. – Չասնում է Դուշեթ:

Այստեղ մոռանալով ճանապարհորդական վերմակը՝ «առյալը»՝ շարունակում է ուղևորությունը:

ԵԼԺ 10, 47

Օգոստոսի 3. – Չասնում է Մլեթ:

ԵԼԺ 10, 47:

Օգոստոսի 3, Մլեթ. – Բացիկ Դսեղ՝ Ն. Թումանյանին.

«Ճաշեցինք Մլեթ և բարձրանում ենք ես վերելքով»:^{*}

^{*} Նկատի ունի Ռազմավիրական ճանապարհի Մլեթի բարձունքի տեսարանը, որ պատկերված է բացիկի վրա:

ԵԼԺ 10, 47:

Օգոստոսի 3, երեկոյան. – Չասնում է Գուղաուր:

Տեղավորվում է իրենց հատկացված «Գեներալսկի» սենյակում. «Լավ ժամանակ անցկացրինք ու տաք քնեցինք ցրտի մեջ»:

ԵԼԺ 10, 48:

Օգոստոսի 3, Գուղաուր. – Նամակ Դուշեթ (չի պահպանվել):

Խնդրում է մոռացված «առյալը» ուղարկել Թիֆլիս:

ԵԼԺ 10, 49:

✓ *Օգոստոսի 4, առավոտյան ժամը 7, Գուդաուր.* – Նամակ դասերը՝ Աշխեն Թումանյանին:

Հիացած նկարագրում է վրացական բնաշխարհի գեղեցկությունները, համեմատում հայկականի հետ. «Բայց սաստիկ վատ ազդեց, երբ լեռնականների երեխաները ճամփին շրջապատեցին մեր կառքը – ու սկսեցին փող ուզել, ոմանք պարելով լեզգիճկա կամ մի ուրիշ բան ու գլուխկոնձի տալով վազում էին կառքի հետ – մինչև մի բան տաս: Ամենալավ դեպքում առաջարկում են մոշ, մոռ կամ այլ պտուղ: Իսկ որտեղ պտուղ չկա, ծաղկի փունջ են գցում կառքի մեջ: Իրիկունը Գուդաուր մտնելիս մեր կառքը ծաղկեփնջերով լցրին:

<...> Այժմ որ գրում եմ – կողքիս բարձրանում են սարերի ձյունոտ գագաթները, իսկ առաջիս ընկած է Կայաավուրի հովիտը. են Կայաավուրի հովիտը, որ Լեռնոնտովը հիշում է իր «Դևի» վերջում»:

ԵԼԺ 10, 48-49:

Օգոստոսի 4. – ճանապարհ է ընկնում դեպի Կոբի:

ԵԼԺ 10, 49:

Օգոստոսի 4. – Հասնում է Բալթա:

ԵԼԺ 10, 49:

Օգոստոսի 4, Բալթա. – Երկտող Դսեղ՝ եղբորը՝ Ռոստոմին.

«Առավոտը կանգնած էի էս արձանի* մոտ. մեզանից ներքև ձյուն էր: 7694 ոտը բարձր է: Բավականին նման է մեր Շահալի դուղին»:

* Նկատի ունի Ռազմավիրական ճանապարհի լեռնանցքի «Крест на крестов» հուշարձանը, որ պատկերված էր բացիկի վրա:

ԵԼԺ 10, 49, 471:

Օգոստոսի 4, Բալթա. – Բացիկ Դսեղ՝ դասերը՝ Սեդային.

«Հայրիկը իր ծիտիկին համբույր է դրկում էս ձորից»:*

* Նկատի ունի բացիկի վրա պատկերված Դարյալի կիրճը:

ԵԼԺ 10, 49, 471:

Օգոստոսի 8. – Հայտարարություն «Լուսաբեր» դասագրքի Ա և Բ տարիների վաճառքի մասին:

«Ձանգակ», 1908, թիվ 8:

Մինչև օգոստոսի 13-ը. – Վլ. Բոգորազ Տանի և Հովի. Զաջազունու հետ բազմօրյա ճամփորդության վերջում լինում է Բաքվում:

Փոփոխություններ է կատարում տպագրվող ժողովածուի մեջ: Արգելում է Ահարոնյանի հողվածը իբրև առաջաբան կամ վերջաբան գետեղել ժողովածուում (տե՛ս <հուլիսի 28>):

ԵԼԺ 10, 50, 472:

Օգոստոսի 13. – Բաքվից վերադառնում է Թիֆլիս:

ԵԼԺ 10, 50:

Օգոստոսի 13. – Ջբաղվում է դասեր՝ Աշխենի՝ գիմնազիայի 8-րդ դասարան ընդունվելու խնդրով.

Օգոստոսի 15-ին կնոջը գրում է. «Երեկ խնդիրը 50 ռուբլու հետ, արդեն ընդունվեց»:

ԵԼԺ 10, 50:

Օգոստոսի 14, Թիֆլիս. – Ստանում է նամակ Հովի. ք. Մարտիրոսյանից (չի պահպանվել):

Գրում է, որ ամսի 17-ին Թիֆլիսում կլինի:

ԵԼԺ 10, 50:

✓ *Օգոստոսի 14.* – Շանթի նամակը Մ. Թումանյանին՝ Լոզանից:

Գրում է. «Անշուշտ շատ պիտի ծիծաղեք, եթե հայտնեն, որ սրանից երկու շաբաթի չափ առաջ մենք լրջորեն այստեղ սպասում էինք Փարիզից... Օհաննեսին: Ժնև լուր էր ընկել, որ նա, Լեոն ու Ահարոնյանը Վիեննա են, շուտով գնալու են Փարիզ և այնտեղից էլ Սյուիս: Օհաննես՝ ու Փարիզ: Ասում են 20-րդ դարում հրաշք չի կատարվում. բոլորովին ապշել էինք ես էլ, Ջավոն էլ, Դերենիկն էլ, ու անհամբեր սպասում, երբ հանկարծ Օհաննեսի փոխարեն եկավ մի ավելի աներևակայելի հրաշք... Օսմանյան սահմանադրությունը: Ժնևից եկած վերջին լուրերը հայտնեցին, որ մի փոքրիկ սխալ է եղել, որ «Օհաննեսը ցանկություն է ունեցել գալու, բայց...» և այլն, մնացածը արդեն շատ է հասկանալի (տե՛ս հուլիսի 2): Եվ հիմա, այս հուսախաբության վայրկյանին, նորից մխիթարություն են գտնում այն մտածման մեջ, որ բոլոր լավ բաները միասին չեն գալիս,

Օհաննեսը եթե չեկավ Օսմանյան սահմանադրությունը եկավ գոնե, մեկ էլ մտածում եմ, որ Օհաննեսի Եվրոպա գալը ուրեմն ավելի մեծ հրաշքների շարքը պիտի դասել, քան Թուրքիայի ազատությունը: Այո՛, շատ զարմանալի բաներ են պատահում աշխարհքիս երեսին: Օհաննեսը Թիֆլիսից Եվրոպա չի կարողանում գա, ես չեմ կարողանում Եվրոպայից Թիֆլիս գամ. բայց ոչինչ, շատ որ նեղը ընկնենք, իրար կհանդիպենք... Պոլսում»:
ԳԱԹ ՄԹՖ, 649ե:

Մինչև օգոստոսի 15-ը, Թիֆլիս. – Ստանում է Ստ. Լիսիցյանի նամակը (չի պահպանվել):

Գրում է, որ ինքը հիվանդ է, Շանթն էլ նամակով դրամական օգնություն է խնդրել: Ինքն էլ իր հերթին Թումանյանին է խնդրում, որ «մի կերպ ճարի»:

ԵԼԺ 10, 51:

Մինչև օգոստոսի 15-ը, Թիֆլիս. – Բացիկներ է ստանում Ահարոնյանից ու Լեոյից՝ «Եյֆեյան աշտարակի գլխից» (պահպանվել են մեկ նամակ և մեկ բացիկ. տես ԳԱԹ ԹՖ):

ԵԼԺ 10, 51:

<Օգոստոսի առաջին կես>. – Բանակցություններ է վարում բնակարանը Բեիբուլյան փողոցի թիվ 50 տնից տեղափոխելու համար:*

* Տեղափոխությունը չի կատարվել դեկտեմբերին Թումանյանի բանտարկության պատճառով:

Նույն տեղում, 50-52:

Օգոստոսի 15, Թիֆլիս. – Նամակ Դսեղ՝ կնոջը՝ Օ. Թումանյանին:

Գրում է. «Իմ ճանապարհորդությունը հաջող կատարեցի ու շատ լավ եղավ»: Հաղորդում է «տնային նորություններ»: Հետաքրքրվում է Դսեղի ընտանեկան առօրյայով, պատմում է թիֆլիսյան իրենց շրջապատի անցուդարձերից, տան վիճակից. «Լավ կլինի, որ երեխանց գալուց մի երկու- երեք օր առաջ դու կամ մայրդ գաք տները կարգի դնելու, թե չէ շարժվել չի լինի, խառնած է բոլորը»: Հանձնարարում է կնոջը. «Օսանին (քրոջը-

խմբ.) մի քանի ռուբլի տուր քու կողմից: Լավ կանես գուցե նանին էլ մի բան տաս. գուցե ձեռին բան չունի»:

ԵԼԺ 10, 50-52:

Օգոստոսի 15, Թիֆլիս. – Նամակ Դսեղ՝ դստերը՝ Աշխեն Թումանյանին:

Տեղեկացնում է, որ գիմնազիա ընդունվելու գործը հաջողվել է, Բաքվից նրա համար նվերներ է բերել: Տպագրվող ժողովածուի մասին գրում է. «Իմ գրքում բաներ էին փոխել: Տպագրությունը կանգնեցրի – նորից տպել եմ տալիս փոխված տեղերը» (տես մինչև օգոստոսի 13-ը):

ԵԼԺ 10, 52-53:

Օգոստոսի 23. – Տպագրվում է Ն. Աղբալյանի գրախոսականը «Լուսաբերի» Բ տարվա մասին:

Հեղինակն այն կարծիքին է, որ երկրորդ գիրքը այնքան էլ «հաջողված չէ, քան առաջինը»: Թերություն է համարում որոշ նյութերի բարդությունը, անհաջող ընտրությունը («Կալի երգը», «Այրի կնոջ երգը», «Արորը» և այլն). դրանք կարող էին հարմար լինել «Լուսաբերի» Գ տարվա համար: Մի քանի նյութերի գաղափարն անորոշ է («Փոքրիկ երկրագործը», «Ուլունք», «Մուկիկի մահը»): Գնահատվում է հատկապես «Մի լինիր ուրագի պես» ոտանավորը՝ «սքանչելի թե իր ձևով և թե իր գաղափարով»: «... Ընդհանուր առմամբ «Լուսաբերի» II գիրքը նույն ոգով է կազմված, ինչ որ առաջինը, այսինքն՝ ազգային ժողովրդական նյութերն այստեղ առաջնակարգ տեղ են բռնում <...> Այստեղ գտնում ենք մի քանի գրվածքներ, որոնք մեր գրականության զարդն են կազմում, ինչպես «Շունն ու Կատուն»: Կան մի քանի նոր հատվածներ, որոնք ոչ միայն մանկավարժական, այլև գեղարվեստական մեծ արժեք ունեն, ինչպես «Աշնան վերջը», «Գութան»: Իր պակասությունների հետ «Լուսաբերի» II գիրքը ունի մեծ արժանիքներ»:

«Ձանգակ», 1908, թիվ 40:

Օգոստոսի 30. – Վախճանվում է Մուրացանը:

«Ձանգակ», 1908, թիվ 48:

Օգոստոս. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 7, էջ 246) «Դժար տարի» («Վարի՛, գութան ջան, վարի՛») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 239, 620:

Օգոստոս. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 8, էջ 273-275) «Արտուտի երգը» «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 155-156, 563:

✓ *Ամառ*. – Ավ. Իսահակյանը իր հուշերում գրում է.

«... Պատահեցի Վահանին: Պիտի հրատարակեր իր բանաստեղծությունների առաջին գրքույկը՝ «Մթնշաղի անուրջները»: Տպելուց առաջ Հ. Թումանյանի մոտ կարդացել էր ձեռագիրը (տե՛ս մայիսի 16), ուզեց ինձ մոտ էլ կարդալ՝ «անկեղծ կարծիքս» իմանալու համար: Հյուրանոցիս սենյակում ենք: Հուզված կարդում է ոտանավորները, մեկը մյուսի հետևից. քանի առաջանում է ընթերցումը, ավելի է հուզվում. ես սրտով և ուշով հետևում եմ ընթերցումին: Տետրակը չավարտած ես անհամբերությունից մղված՝ գոչեցի. «Կեցցե՛ս, Վանիկ ջան, հրաշալի բաներ են, բյուրեղացած զգացումներ՝ անթերի ձևերի մեջ: Իսկական քնարերգությունը սա է...»

Վահանի ներհուն աչքերը փայլատակեցին ուրախությամբ:– Հ. Թումանյանը շատ հավանեց: Երկուսիդ կարծիքը բացարձակ արժեք ունի ինձ համար: Այլևս քննադատությունից վախ չունեն»:

ԱԻ ԵԺ 5, 117-118:

✓ *Ամառ*. – Տերյանի հետ հանդիպման օրվա երեկոյան Իսահակյանը հանդիպում է Թումանյանին:

Հայտնում է իր հիացմունքը «Վահանի բանաստեղծությունների նկատմամբ»: Թումանյանը պատասխանում է. «– Հա է՛, շատ դրուստ ես ասում: Շատ գեղեցիկ են և գրեթե մեր լիրիկայի մեջ բոլորովին նոր բաներ: Պատկերները թեև թույլ են և քիչ են, բայց լեզուն՝ մաքուր զտված և արժաթե զանգի պես՝ հնչում: Իմ ազդեցությունը բնավ չտեսա այնտեղ, բայց քո

և Դերենիկի տրամադրությունների արձագանքը կարծես կա, մանավանդ՝ քո: Դու ի՞նչ ես կարծում, համենայն դեպս՝ մեր «Վերնատան» մեջ պատվավոր տեղ ունի...»:

ԱԻ ԵԺ 5, 117-118::

Սեպտեմբերի 5. – Լեոյի նամակը Թումանյանին՝ ժնկից:

Գրում է Եվրոպայից ստացած իր տպավորությունների մասին, որ այնքան էլ հիացական չեն. «Որքան և սրտանց ցավում եմ, որ դու չեկար մեզ հետ (տե՛ս հուլիսի 2), բայց մյուս կողմից էլ գտնում եմ, որ լավ եղավ չեկար»: «Չափազանց կարոտել եմ մեր շրջանին: Կարոտալից ողջույններս քեզ և մեր բոլոր ընկերներից: Բարևիդ Ավոյին և ասա՝ Վենետիկ որ հաստ կին էի տեսնում, մտաբերում էի նրան ու ծիծաղում»:

ՈՒՀ 5, 328-329:

✓ *Սեպտեմբերի 7*. – Մասնակցում է Մուրացանի հուղարկավորությանը՝ իբրև Ներսիսյան դպրոցի հոգաբարձության ներկայացուցիչ:

«Մշակ», 1908, թիվ 198:

Մինչև սեպտեմբերի 24-ը, Բաքու. – Լույս է տեսնում Թումանյանի «Բանաստեղծություններ» նոր ժողովածուն:

Տպագրվել էր Բաքվի Հայոց հրատարակչական ընկերության նախաձեռնությամբ:

ՈՒՀ 5, 330:

Սեպտեմբերի 24. – Միս. Տեր-Անդրեասյանի նամակը Թումանյանին՝ Բաքվից.

«Սիրելի Հովհաննես, այսօր բազաժով ուղարկում եմ քեզ 17 օրինակ քո «Բանաստեղծությունները»: <...> Քո «Բանաստեղծությունները» նոր են սկսել կազմել, ավելին չկար պատրաստ: <...> Մի քանի օրից հետո քո «Բանաստեղծություններից» կուղարկենք էլի 100 օր.: Առայժմ այդ 17 օրինակից տուր խմբագրություններին 1—1 օրինակ, որ գրախոսեն. «Մշակ», «Գործ», «Հովիվ», «Тифлисский листок» և էլի ում որ կուզես»:

ՈՒՀ 5, 330:

Սեպտեմբերի 28. – Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ Երևանից:

Գրում է, որ ուսուցչություն է անում, բնակարան չունի, ապրում է հյուրանոցում:

ԳԱԹ ԹՖ, 1882 (112):

Սեպտեմբեր. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 9, էջ 312-314) «Եսպես չի մնա» բալլադը՝ «Հին գրույց» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 149-151, 562:

Հոկտեմբերի 20. – Թումանյանը հետապնդվում է Թիֆլիսի նահանգական ոստիկանական վարչության «Մանասյանց ստալնոյ» ծածկանունով գործակալի կողմից՝ նյութեր հավաքելով նրա հասարակական գործունեության մասին:

Цгоар Дп оо ф No 102 оп No 239, 1909, Ед. xp 14, л. 177

Հոկտեմբերի 29. – Դ. Դեմիրճյանի նամակը Թումանյանին՝ Ժնևից:

Տեղեկացնում է, որ Բաքվի հայոց հրատարակչական ընկերությանն է ուղարկել իր նոր «Դեպի տիեզերք», պոեմը: Խնդրում է Հովհ. Քաջազնունու միջոցով արագացնել տպագրությունը և ուղարկել հոնորարը. «... Մի քիչ անհնար է, իհարկե: Շատ կուզենայի նախ՝ վերնատուն ուղարկել, կուզենայի նաև՝ դեռ էլի սրբագրել..., բայց եթե այդպես անեն, ինձ այլևս դուրս կանեն Շվեյցարիայից, հնար չունիմ սպասելու»:

ԴԵԺ XIV, 310, 600:

Հոկտեմբեր. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 10, էջ 346-349) «Գրազը» պատմվածքը՝ «Սարերի կյանքից» ենթավերնագրով:

ԵԼԺ 5, 79-83, 752:

Նոյեմբերի 29. – Դ. Տեր-Գրիգորյանի (Ջավախեցի) նամակը Թումանյանին՝ Ախալքալաքից:

Գրում է, որ «Հասկերի» բաժանորդագրությունից մնացած իր պարտքի ձգձգվելու պատճառը նյութական ծանր վիճակն է:

ԳԱԹ ԹՖ, 2185 (431):

Նոյեմբերի 6. – Հայտարարություն, որ լույս է տեսել գունավոր պատկերագրող ՄԳ, թիվ 1 գրքույկը՝ «Շունն ու Կատուն» (հրատ. իշխ. Մ. Թումանյանի):

«Գործ», 1908, թիվ 45:

Նոյեմբերի 8. – Կովկասյան ուսումնական հոգաբարձուների խորհրդի միստը որոշում է Ստ. Լիսիցյանի, Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի կազմած «Լուսաբեր» դասագրքի Ա և Բ տարիները թույլատրել՝ «իբրև պետական դպրոցներում գործածելի ձեռնարկներ»:

«Գործ», 1908, թիվ 67:

Նոյեմբերի 20, Թիֆլիս. – Նամակ Ժնև՝ Փիլ. Վարդագարյանին:

Հայտնում է, որ ամեն օր նրան նամակ է գրում, միայն մտքի մեջ, ու համոզված է, որ նամակներն այդպես տեղ կհասնեն. «Ես հիմի բանաստեղծություններն էլ եմ էդպես գրում. ոնց որ դու պապիրոս ես քաշում ու ծուխը բաց թողնում օդի մեջ, ես էլ երազում եմ կամ ոգևորվում ու բաց թողնում օդի մեջ...»:

Ծիծաղը գալիս է «այս աշխարհի ու նրա անթիվ հերոսների վրա». «Փուչ մարդիկ են, ախպեր, ու մեծ-մեծ բաներից են խոսում: Լավ կարգեր են ուզում. շատ լավ, իհարկե, լավ կարգեր պետք է լինեն վերջապես, բայց իրենք շատ են անկարգ. և միշտ կմնան այդպես: Գոնե ես սերունդը կմնա այսպես: Եկող սերունդը կգարմանա սրանց վրա, բայց նա ինքն էլ, անշուշտ, վատ կլինի: Հեշտ չի ուղղվիլ ու ազնվանալ մի փչացած ժողովուրդ: Իսկ թե շատ է փչացած ու անազնիվ – այդ աշխարհի անհերքելի ճշմարտություններից միմն է:

Ես չեմ սիրում, նույնիսկ ազատությունն էլ չեմ սիրում, երբ համոզվեցա, որ մարդիկ ընդհանրապես վատ են:

.... Ամբողջ Կովկասը (Ռուսաստանն էլ արդեն գիտես) մի հրաքիսային կրատերի է նման, որ մեղմ ծխում է, և չգիտես որ օրը որ ժամին կարող է որոտալ ու վիժել իր ծոցում պահած լավան ու կրակը»:

Թիֆլիսում ամեն օր թալան ու սպանություններ են լինում. «Ես երեք-չորս անգամ ազատվել եմ սպանվելուց – ինչ անենք:

եթե կսպանենք քեզ վրա կերգեն, եթե ազատվում ես - դու երգիր: Եվ այսպիսով կհեշտանա կյանքն էլ, աշխարհքն էլ ու կտեսնես - զի բարի է...»:

ԵԼԺ 10, 53-55:

✓ *Նոյեմբերի 23.* - Լ. Շանթի նամակը Թումանյանին՝ երևանից:

Խնդրում է Իսահակյանի հետ միասին մի կերպ օգնեն ժնկում ծայրահեղ կարիքի մեջ գտնվող Դեմիրճյանին, դիմեն նաև Քաջազնունուն, որ արագացնի պոեմի տպագրությունը (տե՛ս հոկտեմբերի 29): Իր ուրախությունն է հայտնում «Լուսաբերի» Ա տարվա հաջողության համար, շտապեցնում է՝ «ինչ գնով էլ որ լինի» տպագրության հանձնել Բ տարին, կազմել պատրաստել նաև Գ և Դ տարիները:

«Շունն ու Կատուն» բալլադի առանձին գունավոր պատկերազարդ հրատարակության մասին (տե՛ս նոյեմբերի 6) գրում է. ««Շունն ու Կատվիդ» այս վերջին հաղթանակը տոնում ենք քեզ հետ: Ինչ կուզես ասա, աշխարհքս շուն ու կատուներինն է, ավելի ազնիվ տեսակի անասունները բանի պետք չեն գալի, ինչ երջանիկ օր է եղել այն օրը, երբ գլուխդ հղացել է շուն ու կատվի այդ նշանավոր մենամարտը. դա քեզ շատ ավելի փող է բերելու, քան մյուս ապերջանիկ հղացումներդ: Քու կատվի կռվին մարդիկ միշտ պիտի վճարեն, ապահով եղիր, ախր, շատ է մեր խալխի հոգուցն ու եռթյունիցը: Կեցցեն մեր շուներն ու կատուները և նրանց գրպանները թող միշտ բաց լինի դեպի քո «Շունն ու Կատուդ» »:

ՈՒՅ 4, 379-380:

Նոյեմբերի 27. - Տպագրվում է Թ. Խզմայանի «Ա տարվա հայ լեզվի ձեռնարկները և «Լուսաբերը» » հոդվածը.

«Կազմողները ոչ մի ջանք չեն խնայել այս մանկական գրքույկը դարձնել հետաքրքիր ու զվարճալի և նրանք հասել են նպատակին: «Լուսաբերի» նկարները արտահայտում են ոչ միայն առարկաներ, այլ ամբողջ պատմվածքներ...»: Անում է նաև դիտողություններ (հոդվածները երկար են, չունեն բնական գեղեցկություն, այն «համն ու հոտը», որը ունի օրինակ Աղայանի

դասագիրքը), այնուամենայնիվ այն կարծիքին է, որ «Լուսաբերը» համեմատաբար բարձր է մյուս դասագրքերից. «Նա հիրավի հուսո մի նոր ճառագայթ է մեր մանկավարժական աշխարհում և մենք լիահույս ենք, որ այս նոր ձեռնարկը կգտնի ջերմ ընդունելություն մեր դպրոցական վարչությունների կողմից»:

«Վտակ», 1908, թիվ 4:

Նոյեմբերի 29. - Հաղորդվում է, որ լույս է տեսել գրական-գիտական ժողովածու՝ Եղ. Թովչյանի խմբագրությամբ (տե՛ս ապրիլի 13):

Նյութեր են ընտրված Իսահակյանից, Փափազյանից, Կուրդինյանից, Թումանյանից:

«Գործ», 1908, թիվ 67:

Նոյեմբերի վերջ. - Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 11, էջ 386-388) «Երկաթուղու շինությունը» պատմվածքը:

ԵԼԺ 5, 54-57:

Նոյեմբեր. - Հայտարարություն, որ Թումանյանի բանաստեղծությունների՝ Բաքվի հայոց հրատարակչական ընկերության տպագրած ժողովածուն վաճառվում է:

«Գործ», 1908, թիվ 82:

<*Նոյեմբեր*>. - Ղ. Աղայանի, Ավ. Իսահակյանի, Վրթ. Փափազյանի, Կոմիտասի, Ա. Չոպանյանի* հետ հյուրընկալվում է նկարիչ Գ. Բաշինջաղյանի տանը:

Փափազյանը լուսանկարել է Բաշինջաղյանի արվեստանոցը՝ հյուրերի հետ:

* Իսահակյանը իր հուշերում Չոպանյանի անունը չի հիշում. վերականգնվում է ըստ լուսանկարի:

ԱԻ ԵԺ 5, 97:

<*Նոյեմբեր*>. - Առաջին անգամ տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 11, էջ 371-375) է. Ռասպեի «Բարոն Մյունհաուզենի զարմանալի արկածները» վեպի մի հատվածի թարգմանությունը ռուսերենից:

ԵԼԺ 5, 151-155, 758:

Դեկտեմբերի 3. – «Գործ» օրաթերթը հաղորդում է, որ խմբագրությունն ստացել է «Հասկերի» թիվ 11-ը:

Այդ համարում տպագրված է Թումանյանի «Երկաթուղու շինությունը» պատմվածքը:
«Գործ», 1908, թիվ 69:

Դեկտեմբերի 4. – Գարեգին արքեպիսկոպոս Սուլթանյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խնդրում է միջնորդել, որպեսզի գեներալ նահանգապետը կարգադրի բանտից ազատել Միկոյանին՝ «սանահինցիների մեջ եղած անբավականություններին վերջ տալու համար»:
ԳԱԹ ԹՖ, 1081 (291):

Դեկտեմբերի 4. – Հայտարարություն, որ դեկտեմբերի 5-ին կկայանա Ա. Չոպանյանի դասախոսությունը:

Թեման՝ «Հայկական բանաստեղծությունը անցյալում» (1. Բանաստեղծությունը հին հայերեն լեզվով, 2. Բանաստեղծությունը միջին դարերի ժողովրդական լեզվով):
«Գործ», 1908, թիվ 70:

Դեկտեմբերի 5. – Ներկա է լինում Ա. Չոպանյանի դասախոսությանը:
«Գործ», 1908, թիվ 70, 73:

Դեկտեմբերի 6. – Կայանում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության երեկույթը:

Համերգն սկսվել է Կոմիտասի երկսեռ երգչախմբի ելույթով: Ներկա են եղել փոխարքա Վորոնցով-Դաշկովը, կինը և այլ բարձրաստիճան անձինք:* Խմբերգերից բացի Կոմիտասն ինքը երգել է երկու երգ: Երեկույթին Թումանյանի ներկայությունը անհավանական չէ:

* Փոխարքան և կինը առանձին հետաքրքրություն են ցուցաբերել Կոմիտասի երգերի նկատմամբ և ցանկություն են հայտնել տեսնվելու նրա հետ: Տեսակցության ժամանակ հետաքրքրվել են հայ ժողովրդական երգերով:

«Գործ», 1908, թիվ 74:

Դեկտեմբերի 7, Թիֆլիս. – Որպես «Գեղարվեստ» հան-

դեսի աշխատակից՝ մասնակցում է խմբագրատանը կայացած խորհրդակցությանը:

Ներկա են եղել նաև Կոմիտասը, Զ. Ակունյանը, Հար. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ռ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, Իս. Հարությունյանը, Հ. Սուլովյանը, Վրթ. Փափազյանը:*

Խորհրդակցության օրակարգն էր. «Ա. Ի՞նչ միջոցներ մտածել հանդեսի հրատարակության գործը ապահով հիմքերի վրա դնելու: Բ. Ի՞նչ փոփոխություններ են ցանկալի «Գեղարվեստի» թե ներքինի և թե արտաքինի վերաբերյալ»:

Լսելով հանդեսի խմբագիր Գ. Լևոնյանի հաղորդումը՝ հրատարակության դժվարությունների մասին՝ «ժողովը անհրաժեշտ գտավ հանդեսը տարածելու մասին միջոցներ ձեռք առնելու հետ նաև կողմնակի նյութական աջակցություններով և սուբսիդիաներով մի ապահովության ֆոնդ կազմել կամ սկիզբը դնել, որի համար ընտրվեց հանձնաժողով՝ հետագայում մի բազմամարդ ժողով գումարելու համար»:

* Խորհրդակցությանը հյուրի կարգավիճակով մասնակցել են օր. Ե. Դանիելյանը, Ա. Չոպանյանը, Ա. Սուլթանյանը:
«Գեղարվեստ», 1909, թիվ 3, էջ 187:

Դեկտեմբերի 11, Թիֆլիս. – Թումանյանին այցելում է Ա. Չոպանյանը:
ԵԼԺ 10, 56:

Դեկտեմբերի 11, Թիֆլիս. – Երկտող Մարիամ Թումանյանին.

«Ես իրիկուն Ֆիլիպն էլ, ես էլ Չոպանյանի դասախոսությանն ենք գնալու, որ սիրո բանաստեղծության մասին է լինելու:

Եվ առայժմ էլ ինքը՝ Չոպանյանը, հոս – մոտս է ու խնում ենք Ձեր կենացը»:
ԵԼԺ 10, 55-56:

Դեկտեմբերի 11, Երեկոյան, Թիֆլիս. – Ժողովարանում ներկա է լինում Ա. Չոպանյանի դասախոսությանը:

Թեման՝ «Սիրային բանաստեղծությունը հայոց մեջ»:
«Գործ», 1908, թիվ 78:

Դեկտեմբերի 12. – Հայտարարություն, որ վաճառվում է «Վտակ» օրաթերթի «Գրական-գիտական ժողովածուն» եղ. թուփյանի խմբագրությամբ (տե՛ս նոյեմբերի 29):

«Գործ», 1908, թիվ 76:

Դեկտեմբերի 14. – Տպագրվում է հաղորդագրություն Ա. Չոպանյանի «Սիրային բանաստեղծությունը հայոց մեջ» դասախոսության մասին:

Մասնավորապես ասվում է, որ խոսելով Գամառ Քաթիպայի մասին, որին գնահատել է որպես ազգային երգիչ, դասախոսը անդրադարձել է Հովհ. Հովհաննիսյանին, Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին. «Սրանցից առաջինը գալիս է Գամառ Քաթիպայից անմիջապես հետո, աշուղներից շատ բան ունի վերցրած: Իր մյուս բանաստեղծությունների կողքին ունի նաև գեղեցիկ սիրային կտորներ գրական մաքուր լեզվով և ժողովրդական բարբառով:

Երկրորդը՝ Հովհ. Թումանյանը, նույնպես շատ բան է առել աշուղական բանաստեղծությունից: Սա հատկապես սիրո երգիչ չէ. դիտում է կյանքը, նայում է նրան ամեն կողմից և որովհետև կյանքն իր շարժման, իր գործողության մեջ ցուցադրում է նաև սիրային տարրեր, ուստի նրանք ևս դառնում են այս տաղանդավոր քերթողի հղացումի և ստեղծագործության նյութը: «Հիացմունքով» կանգ առավ այս հեղինակի «Ախթամարի», «Փարվանայի», «Անուշի» և մանավանդ «Թմկաբերդի առման» վրա...»:

«Գործ», 1908, թիվ 78:

✓ <*Դեկտեմբերի առաջին կես*>, *Թիֆլիս*. – Թումանյանին այցելում է Չոպանյանը՝ Կոմիտասի հետ:

«Թիֆլիս գտնված միջոցին Կոմիտասի հետ Թումանյանի տունն էինք օր մը: Կոմիտաս նորեն խնդրեց, որ փութացնե լիպրեթոյին խմբագրումը: Թումանյանը զգացուց, որ ատիկա իր ընելիք բանը չէր. «Ես պոեմը գրեր եմ, ըսավ խնդալով, լիպրեթոն էլ թող ուրիշը հանե» »:

«Անահիտ», 1931, թիվ 1-2:

<*Դեկտեմբերի կեսեր*>, *Թիֆլիս*. – Երկտող Մարիամ Թումանյանին:

Տեղեկացնում է, որ «Անբախտ վաճառականների»* պատկերազարդ հրատարակության գործը մոտենում է ավարտին: Խնդրում է վճարել նկարիչ Երիցյանին:

* «Մանկական գրադարան» մատենաշարի երկրորդ գիրքն է: ԵԼԺ 10, 56, 474-7-475:

Դեկտեմբերի 17. – Տպագրվում է «Փարոս» գրախանուրի հայտարարությունը:

Վաճառվում է եղ. Թուփյանի խմբագրած և հրատարակած գրական գիտական ժողովածուն (տե՛ս նոյեմբերի 29) և Թումանյանի «Շունն ու Կատուն» բալլադի առանձին պատկերազարդ հրատարակությունը:

«Գործ», 1908, թիվ 80:

✓ *Դեկտեմբերի 17.* – Թիֆլիսի կայարանում արտասահման մեկնելիս ձերբակալվում է Ավ. Իսահակյանը:

«Գործ», 1908, թիվ 82:

Դեկտեմբերի 19. – Տպագրվում է լուր Ավ. Իսահակյանի բանտարկության մասին:

«Գործ», 1908, թիվ 82:

Դեկտեմբերի 19. – Հայտարարություն, որ վաճառվում է Թումանյանի Բաքվի հայոց հրատարակչական ընկերության հրատարակած «Բանաստեղծություններ» ժողովածուն:

«Գործ», 1908, թիվ 82:

✓ *Դեկտեմբերի 23.* – Ուղարկվում է գաղտնի գրություն Օդեսայից՝ պահնորդական բաժնի ժամանակավոր պետից, Թիֆլիսի պահնորդական բաժնի պետին (№ 5544 գրության պատճենն է, ռուսերեն):

Հայտնվում է, թե, ըստ տեղեկությունների, վերջին ժամանակներս հայերի մեջ մեծ եռանդով դրամ է հավաքվում հեղափոխական նպատակներով: Նրանք կարողանում են գեներ ձեռք բերել Թուրքիայում և Բաթումի ու Փոթիի վրայով տեղափոխել Կովկաս, որտեղ ապստամբություն է սպասվում: Ապստամբության օրը պետք է հայտնի Դաշնակցության կենտրոնական կոմիտեն՝ կազմված հետևյալ անձերից.

1. Չավեն (որը այժմ Կ. Պոլսում է), 2. Օհանջանյան եղբայր-ներ, 3. Գարեգին Խաժակ, 4. բժ. Տեր-Դավթյան, 5. Ալ. Մելիք-Ազարյան, 6. Հովհ. Թումանյան, 7. բժ. Թադեոսյան, 8. Ահարոն-յան (երկու ամիս առաջ եղել է ժնկում, Փարիզում, Կ. Պոլսում), 9. «Լեո» Մարկոսյան (վերջինս եղել է Փարիզում, նոր է վե-րադարձել Թիֆլիս):*

* Հավանաբար շփոթում են Լեոյի (Առ. Բաբախանյան) հետ (խմբ.):
ԹՏԹ ՓԲ, 57, ԼԿ, 23:

Դեկտեմբերի 23. – Տպագրվում է հաղորդագրություն, որ «Գործի» խմբագրությունն ստացել է Յու. Վեսելովսկու «Русское влияние в современной армянской литературе» գիրքը (1908):
«Գործ», 1908, թիվ 85:

Դեկտեմբերի 23 լույս 24-ի գիշեր. – Ավագ որդու՝ Մուշեղի հետ բանտարկվում է «դաշնակցության գործով» հետևյալ պատճառաբանությամբ.

«Ունենալով կասկած հարուցող տեղեկություններ հակա-օրինական ընկերության պատկանելու մասին և ըստ զինվորա-կան դրություն հայտարարված վայրերին վերաբերող կանոն-ների 23-րդ հոդվածի՝ ես՝ Թիֆլիսի նահանգական ժանդար-մական վարչության պետի օգնականս, վճռեցի նախնական կալանքի վերցնել Հովհ. և Մուշեղ Թումանյաններին... մինչև գործի պարզաբանումը»: Ստորագրել է ռոտմիստր Պրիգարան:*

Բնակարանի խուզարկության ժամանակ, իբրև իրեղեն ապացույց, վերցրել են.

1. Тун, История революционного движения в России, Ростов Н/Д.

2. Գ. Խաժակ, Դեպի ֆեդերացիա, Թիֆլիս, 1907:

3. Խան-Ազատ, Ի՞նչ է սահմանադրությունը, Թիֆլիս, 1907:

4. Գ. Ղազարյան, Հողը և նրա մշակությունը, Թիֆլիս, 1907:

5. Կարլ Կաուտսկի. – Ներկայացուցչական կառավարու-թյուն, Թիֆլիս, 1906:

Նշվում է նաև «Переписка на армянском языке», որի մեջ

եղել են նյութեր՝ «Վերք Հայաստանի» վեպի ուսումնասիրության համար:

* Պետերբուրգ ուղարկած փաստաթղթերում իբրև Թումանյանի բանտարկության պատճառ նշվում է նաև Դաշնակցության Արևելյան բյուրոյի անդամներին հետապնդող գաղտնի գործակալների սպանությունը դեկտեմբերի 11-ին, մասնակցությունը Օդեսա, Փոթի, Բաթում գեներալ տեղափոխմանը Թուրքիայից, կառավարության դեմ ապստամբություն նախապատրաստելը, ոստիկանների սպանությունը և այլ անհեթեթ մեղադրանքներ, որոնք որևէ կապ չունեին Թումանյանի հետ:

ԹՏԹ, ՓԲ, 60: ԼԿ, 23-24:

Դեկտեմբերի 26. – Տեղեկատվություն դեկտեմբերի 24-ի գիշերը կատարված ձերբակալությունների մասին:

Ձերբակալվածների թվում են Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Գարեգին Խաժակյանը, բանաստեղծ Հովհ. Թումանյանը՝ իր գիմնազիստ որդու հետ, «Փարոս» գրախանութի տեր Նիկո-ղայոս Մատինյանը և ուրիշներ: Հայտնվում է, որ բոլոր ձերբակալվածները տարվել են Մետեխի բանտ:

«Գործ», 1908, թիվ 88:

Դեկտեմբերի 27. – Հայտարարություն Ա. Չոպանյանի՝ երաժշտական դպրոցի դահլիճում դեկտեմբերի 30-ին կայա-նալիք ֆրանսերեն դասախոսության մասին:

Թեման՝ «Սերը և վիշտը հայ բանաստեղծության մեջ» (տեղափոխվել է հաջորդ տարվա հունվարի 3.):

«Գործ», 1908, թիվ 89:

Դեկտեմբերի 30. – Հայտարարություն, որ Գար. Երիցյանի գունավոր նկարազարդումներով և Մարիամ Թումանյանի հրատարակությամբ լույս են տեսել ՄԳ մատենաշարի առաջին գրքույկները.

Թումանյանի «Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառա-կանները», «Անհաղթ աքլորը», «Ծիտը», «Ուլիկը», «Աղվեսը»: «Գործ», 1908, թիվ 11:

Դեկտեմբերի 31. – Նույն տեղեկատվությունը հրա-պարակում է նաև «Մշակը»:

Միաժամանակ ավելացնում. «Այլ և այլ անմիտ խաղա-

լիքների և ընծաների տեղ պարզևատրել մանուկներին այդպիսի շքեղ ու ընտիր մանկական գրքույկներով՝ մոտեցող նոր տարվա առթիվ»:

«Մշակ», 1908, թիվ 290:

Դեկտեմբերի 31. – «Գործը» վերստին տեղեկացնում է, որ լույս են տեսել ՄԳ-ի թումանյանական գրքույկները:

Խորհուրդ է տալիս. «... Նոր տարվա առթիվ, կարծում ենք, այս գեղեցիկ գրքույկները ամենանպատակահարմար նվերները կարող են լինել հայ մանուկների համար»:

«Գործ», 1908, թիվ 92:

Դեկտեմբերի 31. – Տպագրվում է գրախոսություն Յու. Վեսելովսկու «Русское влияние в современной армянской литературе» գրքի մասին Շ ստորագրությամբ:

Գրախոսը դիտում է, որ, ըստ ուսումնասիրողի, ռուս հեղինակներից թումանյանի վրա ամենից նկատելի ազդեցություն բողել են Պուշկինը և Լերմոնտովը:

«Գործ», 1908, թիվ 92:

Դեկտեմբեր. – Տպագրվում է («Հասկեր», 1908, թիվ 12, էջ 412-419) «Կոնատ աղջիկը» հեքիաթը:

ԵԼԺ 5, 202-210:

Դեկտեմբեր, Թիֆլիս. – Ստանում է բժ. Իփեճյանի նամակը: Տեղեկացնում է, որ թումանյանին է ուղարկում իր «Օղի խմողն ի՞նչ կըլլա. Տնտեսություն» աշխատությունը: Խնդրում է աջակցել, որ տպագրվի: Գիրքը ծոնելու է բանաստեղծի գերդաստանին:

ԳԱԹ ԹՖ, ց.2, թիվ 492:

ՀԱՄԱՌՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ - Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, Եր., 1969:

ԱԻԵԺ - Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6, Եր., 1979:

ԱՄ - «Աղբյուր»-ի մատենադարան:
ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի:

ԲՄ I - Հովհ. Թումանյան, Բանաստեղծություններ, հ. I, Մոսկվա, 1890:

ԲՄ II - Հովհ. Թումանյան, Բանաստեղծություններ, հ. II, Մոսկվա, 1892:

ԳԱԹ - Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:

ԳԼՖ - ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ:

ԴԵԺ - Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հ. XIV, Եր., 1987:

ԴՓ - Դաշնակներ փոփոխված, Թիֆլիս, 1896:

ԵԼԺ - Հովհ. Թումանյան, երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, Եր., 1988

-1999:

ԹԸԱ - Թումանյանների ընտանեկան արխիվ:

ԹԺՀ - Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1969:

ԹՄՊ - Նվ. Թումանյան, Մանկություն և պատանեկություն, Եր., 1955:

ԹՏԹ (ԹԹ) - Հովհ. Թումանյանի տուն - թանգարան:

ԹՖ - ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ:

ԼԱ - Լեո, Անցյալից, հուշեր, փաստեր, թղթեր, Եր., 1925:

ԼԿ - Լ. Կարապետյան, Հովհ. Թումանյանի հասարակական գործունեությունը, Եր., 1972:

ԿՆ - Կոմիտաս, Նամականի, Եր., 2000:

ԿՖ - ԳԱԹ, Կոմիտասի ֆոնդ:

ՂԱԵԺ - Ղ. Աղայան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, Եր., 1963:

ՂԱՖ - ԳԱԹ, Ղ. Աղայանի ֆոնդ:

ՄԹՖ - ԳԱԹ, Մարիամ Թումանյանի ֆոնդ:

ՄՄ - ԹՏԹ, մայր մատյան:

ՆԹՀԶ - Նվ. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Եր., 1969:

ՊԿՊԱ - Պատմության պետական կենտրոնական արխիվ:

ՎԿՊԱ - Վրաստանի կենտրոնական պետական արխիվ:

ՎՏԵԺ - Վ. Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. III, Եր., 1961:

ՈԻՀ - Հովհ. Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 1 - 5, Եր., 1964 - 1998:

ՓՎՖ - ԳԱԹ, ՓԻԼ. Վարդազարյանի ֆոնդ:

ՓՖ - ԹՏԹ, փաստաթղթերի ֆոնդ:
ЦГАОР ДП ОО - Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտի հատուկ բաժնի ֆոնդ / պահպանվում է Մոսկվայի պետ. արխիվում/:

ЦГИАГРУЗ - տես ՎԿՊԱ:

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա

Աբեյան Ներսես – 289
 Աբեյան Արտաշես – 585
 Աբեյան Մանուկ (Վարսամ) - 104, 240, 260
 Աբովյան Անուշավան – 13, 17, 22, 30, 31, 47, 50, 54 – 57, 59, 61–72, 74 – 81, 85, 86, 90, 91, 93, 94, 9, 97, 99, 100 – 103, 104, 107, 113, 114, 116, 118 – 120, 122–128, 130, 131, 133, 136, 138 – 141, 144, 147, 153, 155, 156 – 158, 160, 161, 164, 165, 170, 171, 173 – 175, 179, 193, 212, 214, 282
 Աբովյան Արիստակես – 275
 Աբովյան Խաչատուր – 9, 16, 22, 26, 54, 166, 190, 196, 230, 248, 517, 527, 587, 588, 629
 Աբովյան Ներսես – 40, 41, 49
 Աբովյան Սարգիս – 11, 13, 15, 17, 18, 28, 40
 Աբրահամ - 174
 Աբրահամյան – 497 – 499
 Աբուլյան Կարապետ - 135
 Ագապյան Ա. – 400
 Ադամյանց Արամ – 345
 Ադամյան Պետրոս – 33, 35, 37, 38, 69, 130, 131, 231
 Ադոնց Նիկողայոս – 510
 Ազատյան Սահակ – 348
 Ազարյանց Սահակ – 353
 Ազնիվ Հրաչյա - 504
 Աթանասյան Ա. – 531, 625
 Ալեքսանդր III – 27, 28
 Ալիշան Ղևոնդ - 107, 362, 400, 401, 527, 587

Ալմաստ – 227
 Ալֆոնս Դոդե - 16
 Ախնազարով – 188
 Ակոր աղա - 382
 Ակունյան Հ. – 647
 Ահարոնյան Ավետիս – 412, 468, 487, 489, 510, 517, 524, 537, 540, 547, 580, 604, 608, 618, 626, 630, 633, 635, 637, 638, 650
 Աղայան Ղազարոս – 15, 44, 54, 55, 76, 77, 87, 103, 149, 157, 163, 185, 186, 198, 200 – 202, 207, 208, 211, 212, 214, 215, 232, 233, 238 – 240, 243 – 245, 260, 264 – 267, 269, 287 – 289, 291, 292, 296, 297, 301 – 303, 306, 310, 311, 313, 315, 321 – 325, 328 – 332, 334, 335, 338 – 341, 343, 347, 356, 358, 360, 366, 367, 369, 370, 372, 401, 402, 404, 409, 412, 413, 415 – 419, 422, 423, 427, 431, 448, 476, 487, 488, 493, 517, 519, 524, 540, 545, 551, 557, 570, 585, 587, 597, 611, 615, 644, 645
 Աղայանց Մուշեղ – 374
 Աղայանցներ – 374, 376, 380
 Աղաջանյան Գրիգոր – 135, 511
 Աղբալյան Նիկոլ – 306, 396, 397, 398, 405, 410, 414, 420, 422, 423, 447, 469, 476, 485, 488, 489, 492, 496, 512 – 516, 518, 522, 534, 535, 539, 541, 546, 55, 570, 578, 581, 582, 589, 604, 609, 632, 639

Աղբալյան Սեդրակ – 178, 181, 185, 193
 Աղիկյան Վ. – 598
 Ամմար - 512
 Ամիրադյան – 407
 Այվազովսկի 121, 165, 204
 Այվազյան եպիսկոպոս – 165
 Անագյան Հակոբ - 198
 Անդրեասյան Եգոր – 14, 22
 Աննա (Րաֆֆու կինը) - 55
 Անուշավան - տե՛ս Աբովյան Անուշավան
 Աշխեն - տե՛ս Թումանյան Աշխեն
 Ապրեսյան Ավ. – 135
 Ապրեսյանց Ա. 132
 Առաքելյան Արամ – 38, 39, 42, 45, 46, 69, 87, 88, 97, 105, 135, 147, 171, 187, 190, 193, 203, 204, 209, 275, 289, 291, 311 – 313
 Առաքելյան Համբարծում – 215
 Ասատուր – 148
 Ասատուր Գևորգ - 136
 Ասլիբեկյան Մելքոն – 27, 67, 93, 98, 104, 105, 122, 125, 127, 130, 138, 141, 150, 160, 161, 491
 Ասպետ - տե՛ս Տեր – Իոաննիսյան Ավ.
 Աստվածատրյան – 88, 102
 Աստվածատրյան Մ. – 543
 Աստվածատուրով Գևորգ - 411
 Ավագյան Արշակ – 515
 Ավալյան – 116
 Ավետիսյան Է. – 73, 74, 77 – 79, 87, 91
 Ավետիսյան Մարգար – 326
 Ավետյան Սեդրակ - 595
 Ատրպետ – 313
 Արագի Մովսես – 304, 305
 Արամ – 117, 120
 Արասխանյան Ավետիք – 59, 62,

73, 75, 100, 117, 157, 158, 163, 164, 166, 168, 169, 196, 198, 199, 204, 206, 211, 213, 233, 234, 236, 237, 239, 241, 242, 256, 259, 293, 328, 334, 348, 369, 397
 Արգահատյան – 241
 Արեգ - տե՛ս Թումանյան Արեգ
 Արզումանյան Կարապետ եպ. – 161
 Արիստակես – 202
 Արծրունի Գրիգոր /Ասիազի/ - 45, 62 – 65, 127, 129, 136, 140, 143, 156, 171, 176, 190, 214, 280, 300, 588
 Արծրունի Վահան - 219, 311
 Արղության Բորիս – 340
 Արղության - Երկայնաբազուկ Հովսեփ - 524, 547
 Արոյան Վարդան – 515
 Արսեն - տե՛ս Ղլտճյան Արսեն
 Արտաշես Բ - 205
 Արտավազդ Բ - 205
 Արտյուշա - 594
 Արփենիկ (Արփիկ/) - տե՛ս Թումանյան Արփենիկ
 Աքել (Առաքել Դերվիշ) - 380, 450, 451, 453
Բ
 Բաբազյան Գարեգին – 347
 Բաբայան Լ. – 585, 622
 Բաբաջանյան (փաստաբան) - 311
 Բագրատ - տե՛ս Թումանյան Բագրատ
 Բագրատունի Արսեն քահ. – 54, 445
 Բաժբեուկ – Մելիքով Պ. Ձ. – 570
 Բալադյան Սամվել – 198
 Բալայան Սեդրակ (Արսեն) - 212,

213, 215, 217, 244, 256, 287, 288, 290, 292, 299
 Բալասանյան (Բալասյան) Գրիգոր – 189, 217, 306, 330, 339, 402, 403, 473, 565
 Բալմոնտ Կ. – 189, 203, 220, 482, 562
 Բալուդյան – 321
 Բախշինյան Ն. – 194, 303
 Բահաթրյան Ալ. – 604
 Բաղդասար քահ. - 247
 Բաղդասարյան Սիիրան – 310
 Բաղդասարյան Տիգրան սարկավագ - 183
 Բաղդասար քեռի /Բաղդի քեռի, քեռի Բաղդո/ - 19, 23
 Բաղրյան Գր. – 275
 Բայրոն – 204, 205, 226, 230, 238, 255, 258, 259, 266, 268, 271, 274, 283, 364, 421, 434, 461, 494, 589, 605, 610, 634
 Բաշինջաղյան Գևորգ - 111, 198, 347, 645
 Բարաթաշվիլի Ն. – 188, 192
 Բարխուդարյան Անդրեաս – 218 – 220
 Բարխուդարյան Արշակ – 101, 114, 193, 198, 199, 206, 219, 224, 227, 245, 259
 Բարխուդարյան Հովհաննես – 198
 Բարխուդարյան Սկրտիչ – 69, 73, 75, 80 – 83, 87, 88, 93, 96, 99, 102, 105, 114, 117, 118, 152, 158, 160, 169, 172, 173, 175, 176, 195, 337
 Բարխուդարյան Ստ. – 193
 Բաքրաձե Դ. - 561
 Բեգլարյան Կոստանդյանց Ալեքսանդր – 153
 Բեգլարյան Մկրտիչ – 244
 Բելինսկի – 260, 298, 299, 538, 539
 Բելլամի – 322
 Բեկնազարյանց Ս. 76, 77, 90, 106, 107, 201, 207, 211
 Բեհրության – 165
 Բերբերյան Մինաս – 196, 204, 280, 281, 288, 301, 322, 330, 334, 338, 528
 Բերբերյան Սրբուհի - 528
 Բերբերյաններ – 343
 Բերնարդեն դը Սեն-Պիեր – 16
 Բինե Ալֆրեդ - 432
 Բիչեր Ստոու – 16
 Բիսմարկ - 63
 Բոգորազ Տան Վլ. – 632, 633, 635, 637
 Բրանդես – 380
 Գ
 Գաբո – 121, 133
 Գալստյան – 335
 Գալստյան Աստվածատուր – 313, 322
 Գալֆայան Կարապետ – 239, 262, 271, 272, 275, 279, 286, 291, 299, 301, 303, 305, 323, 325, 333, 335, 340, 352, 359, 360, 368, 372, 373, 380
 Գալֆայան Սահակ – 306, 323
 Գեղամ վարդապետ – 147
 Գեղամյան քահանա - 381
 Գեորգի (թագաժառանգ) - 386
 Գիրգիդյանց Դավիթ – 276
 Գիրգիդյան Օսան – 178, 183, 188, 221, 331, 362, 363, 376, 505
 Գլադստոն – 229
 Գյոթե - 380, 461, 589, 598
 Գյուզալյան Տիգրան - 251
 Գյուլամիրյան Հայկ – 201
 Գյուլամիրյան Ս – 295

Գյուլնազարյան Կ. 192, 298
 Գուլիցին Գ. Ս. – 257
 Գուլոյան Ալեքսանդր (Վարդան) – 23, 25, 35, 52, 55, 56, 57, 60
 Գուլոյան Գրիգոր (փաստաբան) - 25
 Գուլոյան Դարյա - 23, 103, 180, 181
 Գորովաչևսկի Ս. - 467
 Գրեյցեմ (լեռ լուսանկարիչ) - 165, 166
 Գրիգոր – 185, 187, 248
 Գրիգորյան Խուրշուդ - 12
 Գրիգորյան Ն. – 218
 Գրիգորյան Սեդրակ - 62
 Գրիգորյան Օսան – 285
 Գրիմ եղբայրներ – 611
 Գրիշա բիձա - տե՛ս Թումանյան Գրիգոր
 Գրիցին – 175
 Գրոմնիցկի – 171
 Գուցկով Կ. – 116, 231, 232, 233
 Գևորգյան Հայկ – 181
 Գևորգյան Ս. 543
 Գևորգյան Վահան – 227
 Գևորգյան Վարսենիկ – 11, 12, 14 - 17, 133, 219, 227, 246, 525
 Գևորգյան Վերգինե - 14, 219
 Դ
 Դալլաբյան Արամ – 531
 Դանիել Դեֆո – 16
 Դանիելյան Ե. - 647
 Դանիելյան Ներսես վարդապետ – 369
 Դավիթ – 120
 Դավթյան Տիգրան – 195
 Դարդելի Հովհանու 117
 Դարչինյան-Չուրաբյան Սեխակ (օձնեցի) - 139
 Դարչինյանց Հ. – 348
 Դեմիրճյան Դերենիկ – 234, 270, 311, 340, 347, 351, 352, 376, 356, 396 – 398, 402, 410, 415, 420, 422, 423, 426, 448, 476, 520, 522, 539, 541, 542, 546, 550, 570, 578, 582, 583, 609, 611, 614, 625, 637, 641, 642, 644
 Դեմուրյան Արշակ - 29
 Դեմուրյան Ստ. – 135
 Դիմաքսյան Եսայի – 15
 Դիոգենես – 405
 Դյունա Ալ. – 16
 Դուլուխանյան Եղիսաբեթ – 519
 Դուլուխանյան Ս. – 347
 Դուրբախյան – 447
 Դուրյան Պետրոս – 224
 Ե
 Եգանյան Արիստակես քահ. – 491
 Եղիգարյան Ալեքսանդր – 353
 Եղիգարով Հասան Բեկ – 571 – 574
 Եզեկյան Ա. – 107, 108
 Եղիա - 161
 Եղիշե - 66
 Եղիսաբեթ – 133, 143
 Երեմիա եպիսկոպոս – 253
 Երեմյան Ս. – 403
 Երզնկյան Արամայիս – 221, 261, 493, 570
 Երզնկյան Եղիշե - 64, 66, 135, 144, 193
 Երզնկյան Ը. – 135
 Երիցյան (նկարիչ) - 649
 Երիցյան Գար. – 651
 Երիցյան Գրիգոր – 66
 Երվանդ - 395
 Զ
 Զաբել – 116
 Զալխան օղլի Մուսթաֆա - 567

Ձախարհիչ Պավել – 571
 Ձավարյան Սիմոն – 213, 578
 Ձավեն – 650
 Ձարգարյան Արիստակես (Ռուստեմ) – 167, 169, 227, 277, 282, 310, 311, 318, 320, 323, 337, 338, 340, 342, 346, 366, 413, 442, 450, 451, 453, 462, 465, 466, 468, 470, 471, 473 – 477, 488, 497, 504, 509, 510, 518, 520, 549, 551, 552, 570, 592, 593, 615
 Ձարգարյաններ – 227
 Ձարուբին Պ. – 410
 Չոլոտարյով Վ. – 571
 Չոիրաբյան Եղիա (վարդաբուրցի) – 126, 130, 242
 Չորյան Նավասարդ – 19
 Չորյաններ – 594
 Չորյան Ստեփան (Ռուստոմ) – 20, 60, 112
 Չուդերման – 440
 Չուրաբյան Դարչին – 141

Է
 Էժեն Սյու – 16, 139
 Էմինյան – 589
 Էռնեստո Ռոսսի – 68

Թ
 Թադևոսյան (բժիշկ) – 650
 Թադևոսյան Արամ – 226
 Թադևոսյան Արշակ – 127
 Թադևոսյան Բուդդան – 223
 Թադևոսյան Յ. – 101
 Թադևոսյան Բ. – 135
 Թադևոսյան Եր. – 596, 601, 615, 617, 621, 633
 Թամամյան Մ. – 610
 Թամամյաններ – 309

Թայիրյան Նունե – 531
 Թառայան Սեդրակ – 198, 227, 447
 Թառանյան Մ. Ա. – 122, 125
 Թարխանյան Ա. – 219
 Թերլեմեզյան Փանոս – 347, 576, 624
 Թովմա վարդապետ – 349, 362
 Թոփչյան Եղիշե – 320, 323, 540, 604, 645, 648, 649
 Թումանյան Ալեքսի – 52
 Թումանյան Անուշ – 311, 386, 501, 502, 545, 598
 Թումանյան Աշխեն – 125, 275, 277, 279, 308, 374, 381, 386, 438, 472, 499, 500, 501, 506, 507, 525, 531, 545, 555, 582, 591, 593, 629, 632, 633, 636, 637, 639
 Թումանյան Աստղիկ – 566
 Թումանյան Արեգ – 360, 374, 383, 545, 598
 Թումանյան Արշակ – 541, 542
 Թումանյան Արմենակ – 566 – 568
 Թումանյան Արտաշես – 220, 222, 463, 472
 Թումանյան Արտավազդ (Արտիկ) – 229, 280, 439, 545, 597, 598, 631, 633
 Թումանյան Արփենիկ – 374
 Թումանյան Բագրատ – 13, 40, 67, 81, 82, 88, 90 – 92, 96, 100, 102, 155, 158, 172, 173, 195
 Թումանյան Գրիգոր – 10, 24
 Թումանյան Թադևոս (Ասլան) – 9 – 12, 16, 21, 28, 29, 32, 48, 104, 107, 137, 145, 178, 219, 222, 223, 246, 309, 310, 326
 Թումանյան Թամար – 376, 444, 587
 Թումանյան Իսկուհի – 220, 221

Թումանյան Համբարձում – 436, 449, 458, 483
 Թումանյան Հանլիկ – 275, 360, 540, 545, 597, 631
 Թումանյան Հարություն – 274, 408, 472, 473, 524, 525, 541, 542, 647
 Թումանյան Հովհաննես աղա – 9
 Թումանյան Մարիամ (իշխանուհի) – 162, 167, 286, 311, 312, 322, 337, 338, 340 – 342, 347, 350, 366, 372, 373, 376, 378, 381, 382, 384, 387, 388, 407 – 409, 412, 419, 421, 422, 427, 430 – 432, 434, 437 – 439, 443, 444, 448, 449, 450, 453, 456, 462, 464, 468, 470, 471, 474, 477, 478, 484, 490, 494, 503, 509, 519 – 522, 532, 554, 555, 586, 606, 615, 637, 643, 647, 648, 651
 Թումանյան Մուշեղ – 57, 84, 128, 147, 178, 277, 279, 291, 294, 308, 374, 386, 463, 471, 499 – 501, 507, 545, 592 – 594, 629, 632, 650
 Թումանյան Նվարդ – 9, 17, 19, 27, 31, 197, 215, 275, 277, 284, 309, 324, 328, 381, 436, 469, 472, 499 – 501, 504, 505, 507, 526, 529, 530, 545, 565, 591, 593, 594, 633, 635
 Թումանյան Ռուստոմ – 11, 14, 32, 194, 220, 443, 503, 579, 592, 593, 631, 633, 634, 636
 Թումանյան Սեդա – 545, 592, 636
 Թումանյան Սոնա – 194, 211, 220, 221
 Թումանյան Վահան – 13, 124, 139, 140, 443, 463, 472, 475, 479, 496, 497, 499, 506, 561, 591, 633, 634
 Թումանյան Օլգա – 9, 40, 41, 43, 44, 45, 47 – 49, 50 – 55, 57, 58, 60, 81, 82 – 84, 86, 89, 116, 118 – 120, 131, 132, 134, 136, 143, 145, 146, 162, 194, 220, 238, 252, 254, 255, 307, 308, 349, 372, 374, 375, 377, 383 – 386, 388, 389, 392, 427, 435, 438, 439, 443, 450, 452, 454, 458 – 460, 463, 465, 468, 471, 472, 474, 477, 479 – 481, 484, 497 – 499, 501 – 508, 525, 526, 529 – 531, 38, 592, 595, 597, 631, 634, 638
 Թումանյան Օսան – 638
 Թումանյաններ – 255, 352, 450, 475
 Թումանովներ – 162, 524

Ժ
 Ժոզեֆինա (Յուզիա) – 466, 477
 Ժուկովսկի Վ. Ա. – 149, 204, 416, 491

Ի
 Իզմիրյան – 229
 Ինճիկյան Ա. – 17, 18, 38, 261, 263
 Իսահակյան Ավետիք – 148, 154, 177, 182, 251, 270, 271, 314, 347, 356, 361, 392, 393, 395 – 397, 402, 405, 408, 448, 468, 469, 473, 476, 485, 486, 495, 496, 499, 500, 511, 513, 514, 516, 520, 521, 529, 540, 550, 556, 557, 579, 580, 604, 606, 616, 618, 622, 625, 628, 629, 640, 641, 644, 645, 647 – 649
 <Իսահակյան> Պողոս քահ. – 79
 Իսայի քեռի – 31, 35

Իփեճյան (բժիշկ) - 652

L

- Լազարյան Մինաս Բոգդանովիչ – 478, 490
- Լազարև - 466
- Լալայան Երվանդ - 362, 383, 396, 400, 402, 414, 415, 438, 465, 524, 543,
- Լալայան Հովհաննես – 517
- Լանսոն – 421
- Լենաու - 420
- Լեո (Բաբախանյան Առաքել) - 45, 271, 272, 276, 369, 404, 461, 462, 478, 513, 516, 521, 532, 557, 618, 619, 622, 623, 630, 631, 637, 638, 641, 650
- Լեոնտև (գավառապետ) - 576
- Լեոպարդի – 420
- Լեոնոստով Մ. Յու. – 60, 110, 226, 239, 246, 249, 255, 256, 259, 269, 271, 273, 274, 282, 298, 461, 480, 513, 636, 652
- Լիզա - 263, 380
- Լինչ – 590
- Լիպարիտ – 630
- Լիսիցյան Ստեփան – 72, 73, 75, 76, 219, 367, 368, 496 – 498, 540, 541, 546, 580, 586, 589, 590, 593, 595, 597, 598, 600, 638, 643
- Լյուլա - 279
- Լոնգֆելլո – 422, 512, 599, 610
- Լոռիս Մելիքով - 13
- Լևեն Ա. – 576
- Լևոնյան Գարեգին – 250, 603, 605, 647

Խ

- Խաժակ – 396
- Խաժակյան Գարեգին 585, 650, 651
- Խալաթյան – 164
- Խան - Ազատ – 650
- Խանազատյան Ռուբեն – 585, 625
- Խանադյան Ասատուր – 12
- Խանդամիրյան Վարյա (Վարդուհի) - 427, 431, 435, 440, 443, 449, 451, 453, 463, 472, 475, 477, 481, 484, 518, 525, 526, 530 – 535
- Խանզադյան Ցուլակ – 39, 623, 625
- Խանոյան Սարգիս – 203, 208, 228, 547
- Խատիսյան Ալեքսանդր – 553, 572, 585
- Խատիսյան Գ. – 356, 580
- Խատիսյան Կ. – 553
- Խարազյոզյան Հովհ. – 598
- Խարազյան Եգոր – 30, 31, 125, 138, 153
- Խարազյան Ղևոնդ ավագ քահ. – 28, 276
- Խերողիյան Հ. 121
- Խզմալյան Թ. 644
- Խիզանյան Հովհաննես – 59, 122, 193, 218, 219
- Խոջոյան Լևոն – 190
- Խոջոյան Մ. - 313
- Խորենացի – 205, 425
- Խրիմյան Խորեն – 323, 366, 391
- Խրիմյան Սկրտիչ (Հայրիկ) - 62, 163, 186, 190, 192, 193, 195 - 197, 200, 202, 209, 210, 211, 325, 330, 366, 409, 511, 528, 530, 543, 548, 549, 558 – 561, 601 – 603, 605

- Խուդատյան (մեծահարուստ) - 449
- Ծ
- Ծատուրյան Ալ. – 101, 190, 195, 196, 329, 332, 343, 521, 540, 623
- Ծատուրյան Եփրեմ – 595
- Ծատուրյանց Արշ. – 198
- Ծերենց (Շիշմանյան Հովսեփ) - 15, 46, 47
- Ծոցիկյան Ս. Մ. – 314
- Կ
- Կաղանկատվացի Մովսես – 186
- Կանայան Դրաստամատ – 548
- Կատյա - 380
- Կարա - Մուրզա - 210, 540
- Կարապետ վարդապետ – 254
- Կարենյան Հ. – 37, 45
- Կարինյան Հակոբ - 327
- Կառուտսկի Կարլ – 650
- Կետչեր Ն. – 232
- Կիրկեսալով Պ. 371
- Կլավդիա Լուկաշևիչ – 582
- Կոզլով Ի. Վ. – 364
- Կոլցով - 354
- Կողբացի եզնիկ – 416
- Կոմիտաս – 347, 520, 521, 523, 528, 540, 552, 554, 626, 628, 630, 645 – 648
- Կոնո – տե՛ս Միրաքյան Վահան
- Կոնոպնիցկայա Մարիա - 363, 364
- Կոստանյան Հովհ. – 148, 260, 284, 393, 395, 396, 402
- Կորյուն Վարդապետ – 350
- Կորոլենկո Վ. - 294
- Կռիլով Ի. Ա. – 13, 480, 545
- Կրամսկոյ Ի. Ն. (ռուս գեղանկարիչ) - 152
- Կրասիլնիկյան Ա. – 183, 201, 322

- Կրասիլնիկյան Կոստանդին – 348
- Կրավչենկո – 410, 414, 415
- Կուկունյանց Սարգիս – 135, 207
- Կույզմին 551
- Կուրդինյան – 645
- Հ
- Հախվերդյան – 402
- Հախումյան Ս. 368
- Հակոբյան (Նկարիչ) - 498
- Հակոբյան Հակոբ - 411, 647
- Հակոբյան Սարգիս – 133, 147, 195
- Համբարձումյան Լևոն – 227
- Համբարձումյան Համազասպ – 514, 517
- Համբարձումյան Վաղարշակ – 181
- Համիկ - տե՛ս Թումանյան Համիկ
- Հայնե Հ. - 226, 424, 589
- Հասան – Ջալալյան Սարգիս – 9, 16, 358
- Հարությունյան – 233
- Հարությունյան Արշակ – 286, 287
- Հարությունյան Իս, 135, 647
- Հարությունյան Հարություն – 383, 384
- Հարությունյան Սամսոն – 273, 553, 572, 575, 611
- Հացագործյան Ա. – 577, 579
- Հեղդեր – 500
- Հիմենս Ֆելեցիա - 361
- Հմայակ - 17
- Հյուզո – 422, 551
- Հոմերոս – 54, 230, 422
- Հորացիոս - 500
- Հովհաննիսյան Աբգար – 156, 523
- Հովհաննիսյան Հովհ. 101, 113, 118, 241, 242, 272, 514, 648
- Հովհաննիսյան Տ. – 311, 553
- Հովվյան Աղասի – 114, 133 - 135, 161 – 163, 182, 187

Հովվյան Պողոս – 222
Հովվյան Սիմեոն – 21, 23, 29, 34,
35, 38, 39, 51, 57, 73, 136, 151,
152, 158, 164, 170, 183, 184,
217, 218, 222, 238, 243, 244,
255, 265, 268 – 270, 273, 276
Հովսեփ (հոգևորական) – 321
Հովսեփյան Գարեգին վրդ. – 401,
525

Ղ

Ղազարյան Գ. – 650
Ղազարյան Հակոբ (քրդագետ
Լազո) – 55
Ղամբարյան Պետրոս – 531
Ղարագոյոյան զևորդ – 323
Ղարաջյան Գևորգ (Արկոմեդ) – 411,
414, 415
Ղարաջյան Միքայել – 411
Ղարիբյանց Արտաշես – 362
Ղըրխքեսալով – 373, 374, 378
Ղլտճյան Արսեն /Սիմեոն/ – 42, 45,
67, 87 – 89, 99, 106, 112, 117,
120, 128, 129, 138, 147, 149 –
151, 154, 163, 164, 170, 171,
173, 182, 183, 187, 189, 190,
192, 197, 207 – 210, 211, 215,
216, 218, 223, 224, 228, 229,
232, 235, 239, 240, 263, 278,
280, 306, 307, 315, 316, 319,
330, 333, 334, 346, 366, 370,
371, 435, 443, 470
Ղոխնանց պապի – 24
Ղուլինյան Ե. 223, 264
Ղևոնդյան (վաճառական) – 203

Ճ
Ճանիկյան Հովսեփ – 418
Ճավճավաձե Իլյա – 598

Ճուղուրյան Հայր – 28, 361, 401,
541
Ճուղուրյան Հարություն (Սեդրակ
Մովսիսյան) – 72, 89

Ս

Սադաթյան Եղիշե – 188
Սադաթյան Վասակ – 374
Սալխասյան Հովհ. – 63
Սալունյան Խաչատուր – 101, 105,
106, 113, 121, 144, 163, 192,
266,
Սաճո – 120
Սակար կաթողիկոս – 127, 151,
188
Սաճկալյան Բաղալ – 9, 142
Սաճկալյան Շուշանիկ – 9, 43 – 45,
53, 307, 380, 595, 631
Սաճկալյան Օլգա (Մարիամ) –
տե՛ս Թումանյան Օլգա
Սաճկալյաններ – 48, 51, 53, 54
Սամաջանյան Ալ. – 193
Սամիկոնյան Երվանդ – 15, 54, 124,
130, 146, 147, 503
Սամիկոնյան Ստեփան – 28, 140
Սամին – Սիբիրյակ – 557, 598
Սայիլյան Անտոն – 619, 622
Սայիլյան Սահակ – 559
Սայտուրյան Օլգա (օր. Փուղին-
յան) – 220, 524, 527
Սանանդյան Հակոբ – 411, 531,
533, 534, 539, 540, 542, 612,
615
Սանդիկյան Ամիրան – 407
Սանդիկյան Սեդրակ – 610
Սանթաշյան Ալ. – 366
Սանվեյան Լևոն – 61, 101, 113,
114, 118, 179, 256, 287, 333 –
335, 420, 448

Սանուկյան Ազատ – 263
Սառ – 195
Սասալով – 573
Սասեհյան Հովհ. – 278, 279, 352
Սատինյան Նիկողայոս – 651
Սատինյան Սահակ – 244, 276,
300, 301
Սարկոսյան Արսեն – 303 – 306, 341
Սարկոսյան «Լեռ» – 650
Սարկոսյան Հ. – 530
Սարտիրոսյան Հովհաննես
(տպարանատեր) – 219, 220
Սարտիրոսյան Հովհաննեսս
(քահանա) – 39, 40, 42 – 44, 49
– 51, 133, 166, 194,
215, 236, 360, 380, 366, 383, 384,
578, 637
Սաքսիմ Գորկի – 578
Մելիք – Աղամյան Ալ. – 553
Մելիք – Աղամյան Լևոն – 164
Մելիք – Ազատյան Ալ. – 543, 650
Մելիք – Բախտամյան – 233
Մելիք – Կարագոյոյան Գ. – 412
Մելիք – Հայկազյան Հեղինե – 415,
419, 421, 425, 427, 431, 439,
441, 446, 491, 497, 506, 530 –
533
Մելիք – Հայկազյան Վարվառա –
495, 497
Մելիք – Ղարագոյոյան – 367, 401,
555
Մելիքյան Հ. – 291
Մելիքյան Ռ. – 647
Մելիքյանց Ալ. – 173
Մելյան Մեսրոպ քահանա – 156,
201, 331, 369
Մելքունյան Պետրոս – 222, 241
Մելխակ – 252
Մեծատուրյան – 233, 234
Մեծբայան – 531

Մեհրաբյան Արշ. – 590
Մեհրաբյան Վախթանգ – 222, 573
Մեյեր Ֆեռոդոր – 482
Մեսրոպ վարդապետ – 253
Միգլկիչ Աղամ – 173 – 175, 343
Միքայել – 17
Միքայելյան Գևորգ – 82
Միխայել Ֆադեյիչ – 115
Միկոյան – 646
Միհրանյանց – 302
Մինաս – տե՛ս Բերբերյան Մինաս
Միրաքյան Վահան – 36, 326, 360,
365
Միրզոյան Ալ. – 576
Մխիթարյաններ – 395, 396, 403
Մկրտումյան Բագրատ – 24
Մյուսե Ալֆրեդ – 420
Մուլլա Նասր Եղդին – 487
Մոճոռյանց Պ. 172, 396
Մոոր Կարլ – 119
Մոսո (Միրզոյան) – 503, 505, 595
Մովսիսյան – 384
Մուշեղ – տե՛ս Թումանյան Մուշեղ
Մուրացան – 44, 287, 401, 473, 495,
629, 639, 641
Մուրտազ – 149

Յ
Յորդան – 500
Յուզյա – 377

Ն
Նազարեթյան Արամ – 201, 244,
287 – 291, 299 – 301, 311, 325,
346, 359, 367, 495
Նազարեթյաններ – 203
Նազարյան Լ. – 356
Նազարյան Քերովբե – 578
Նազարյանց Տիգրան – 77, 126,
206, 357, 417, 588

Նազարյանց քահանա - 605
Նադսոն Մ. Յու. - 65, 225
Նալբանդյան - 465
Նալբանդյան Հովհաննես - 391
Նալբանդյան Մ. - 87, 166, 343, 588
Նակաշիձե - 548
Նահապետ - տե՛ս Աղայան Ղա-
գարոս
Նահապետյան - 115
Նահապետյան Արշակ - 29
Նանսեն - 386
Նատալիա - 223
Նար - Դոս - 217
Նար - Պեյ Խորեն եպիսկոպոս -
82, 85, 240
Նեկրասով - 223
Ներսիսյան Դավիթ - 45
Ներսիսյան Եգոր - 559
Նիազի - 227
Նիկոլ (տե՛ս Աղբալյան Նիկոլ)
Նիկոլայ - 252
Նիկոլայ II - 555, 557
Նիցչե - 353, 378, 380
Նվարդ (Նունիկ) - տե՛ս Թումանյան
Նվարդ
Նուբար Փաշա - 609

Շ

Շագիդանովներ - 359
Շադինովներ - 255
Շաթիրյան - 241
Շալամով (Շահլամյանց) - 87, 105
Շահազիզ Երվանդ - 322
Շահազիզ Սմբատ - 15, 79, 322,
332, 335 - 337, 344, 357, 358,
373, 466, 468, 473, 478, 480,
481, 483 - 486, 490, 587, 588
Շահազիզյան Սմբատ (շուլա-
վերցի) - 31, 82
Շահգեղյան - 367

Շահգիդանյան - 246
Շահլամյան Դավիթ (Դաթիկո) - 42,
45, 46, 51, 62, 86, 89, 117, 123,
159, 227
Շահնաբաթյան Սկրտիչ - 227
Շահպարոնյան Վարդան - 29, 385,
387, 388, 390, 391
Շահվերդյան Դանուշ - 57, 493
Շահվերդյան Քալի - 17
Շահումյան Ստեփան - 493
Շանթ Լևոն - 231, 311, 328, 351,
352, 356, 371, 375, 376, 381,
396, 397, 399 - 401, 403, 404,
413 - 418, 420, 421, 423, 427,
431, 433, 434, 437, 439, 441,
442, 445, 446, 448 - 450, 452,
453, 455 - 457, 459 - 461, 463,
464, 466, 467 - 472, 476 - 478,
481 - 483, 486, 489, 491, 496,
503, 505, 506, 508, 510, 519,
535, 539 - 541, 546, 550, 555,
570, 583, 586, 589, 590, 591,
593, 595, 597, 598, 606, 611,
615, 625, 631, 632, 637, 638,
642, 643, 644
Շանչիև - 558
Շավրի Կարապետ - 239
Շելլի - 189
Շեկ - Վարդանյանց Ավագ (մղոսի
Ավագ, ժամկոչ Ավագ) 24, 25,
34
Շեքսպիր - 33, 35, 68, 217, 232,
278, 347, 348, 354, 380, 417,
461, 589
Շիլլեր - 16, 118, 119, 416, 491,
589
Շիրվան - տե՛ս Շիրվանզադե
Շիրվանզադե (Ալեքսանդր
Մովսիսյան) - 118, 179, 232,
233, 244, 245, 260, 287, 288,

291, 292, 294, 296, 297, 301,
306, 311, 397, 401, 404, 450,
510, 589
Շիյան Արսեն (փաստաբան) - 449
Շիյան Արտաշես /բժիշկ/ - 400, 449
Շիյան Ս. - 543
Շիյաններ - 458, 459
Շուբերտ - 213

Չ

Չալխուշյան Գր. - 398, 399
Չամչյան Միքայել - 327
Չեչնաճյան Օ. - 376
Չիլինգարյան Արմենակ - 515
Չիլինգարյանց Մուկո (Մկրտում) -
36
Չմշկյան Գևորգ - 45
Չոպանյան Արշակ - 224, 306, 645
- 648, 651
Չոփուռանց (Չոփուռի) տղերք -
24, 28, 35, 107, 184, 219

Պ

Պալասանյան - 138
Պալյան Եր. 230, 260
Պապաջանյան (Տեր - Դավթյան)
Վերգինե - 11, 14, 16, 17
Պապյան - 224
Պապովյան Գերասիմ - 515
Պառավյանց Սիմոն - 133, 166,
201, 246, 265
Պատկանյան Ռափայել (Գամառ -
Քաթիպա) - 15, 18, 26, 47, 54,
153, 171, 398, 480, 485, 516, 517,
587, 588, 648
Պեշիկթաշյան Սկրտիչ - 224, 587
Պետրոսյան - 233
Պետրոսյան Գևորգ - 116, 119
Պետրոսյան Հռոմսիմ - 141
Պետրոսյան Հովսեփ քահ. - 413

Պետրոսյաններ - 377
Պերճ (Պոռչ) - տե՛ս Պոռչյան Պերճ
Պողոսյան Ավետիս (մեծահա-
րուստ) - 412, 419, 420, 422, 423,
427, 585
Պոտուրյան Ս. - 524
Պոռչյան Պերճ - 44, 102, 106, 157,
260, 287, 297, 329, 333, 334,
335, 338, 347, 401,
404, 405, 543, 587, 604
Պրիզար - 139
Պրոֆ. Թումաս - 399
Պուշկին Ա. Ա. - 61, 108, 334, 344,
461, 480, 493, 513, 652

Ջ

Ջալալ - 193
Ջալալյանց Ջաքարիա - 62
Ջաղյան Գ. - 161
Ջանբաբյան - 193
Ջանշյան - 97
Ջառայանց Արշալույս - 515
Ջավահիր (Ջավո) - 506, 508, 539,
551, 637
Ջափարիձե Կ. - 547
Ջիլավյան Թադևոս - 544, 545, 546
Ջիովանուլի Ռ. - 268, 269
Ջիվանի աշուղ - 162, 286, 407
Ջորջածեններ - 458
Ջրբաշյան Էդ. - 261, 343
Ջուղաշվիլի Իոսիֆ - 414

Ռ

Ռասայե - 645
Ռեզանով Ն. - 561, 562, 564, 570 -
575
Ռիլ Վիլիելմ - 16
Ռոլան Ռոմեն - 327
Ռոմանով Միխայիլ Նիկոլակիչ -
465

Ռուսիոյան Ն. - 22

Ս

Սաթենիկ - 101, 205
Սաթունյանց Գարեգին եպիսկոպոս - 549
Սախվարելիձե - 478
Սահակյան Աննա - 172
Սահակյան Սարգիս - 218, 219
Սահակյան Սիմակ - 352
Սահակ վարժապետ - տե՛ս Տեր-Յովհաննիսյան Սահակ
Սաղաթելյան Թալալ - 12
Սայաթ - Նովա - 15, 47, 379, 380
Սանասարյան Մամբրե եպիսկոպոս - 139, 152, 156, 163
Սանդրո - 302, 366
Սառիկյան Հակոբ - 233, 234, 269
Սարգիս (Ղ. Աղայանի եղբայրը) - 266, 267
Սարգսյան Լ. - 485, 553, 585
Սեդրակ - 193
Սեդրակյան Արիստակես եպիսկոպոս - 210, 369
Սենեքերիմ - 130
Սենկևիչ Հ. 608
Սեն - Սիմոն - 357
Սերվանտես - 400
Սիմոն - 162, 336
Սիմոնյան Ս. - 64
Սիմոնյան Քալի - 17
Սյունի Գր. 576
Սուլաքյան Ա. - 647
Սուլոմոն - 28
Սուլովյան Հ. 647
Սուլովյան Վ. - 522
Սողայան Նունե - 208
Սոֆոկլես - 400
Սպանդարյան Հովհ. - 611

Սպանդարյան Սպանդար - 127, 208, 211, 495
Սպարապետյան Արշակ - 135
Սպենդիարյան - 187
Սվաճյան Մարտիրոս - 209
Սվեշնիկով - 307
Ստեփան - տե՛ս Լիսիցյան Ստեփան
Ստեփանյան Խորեն - 205
Ստեփանյան Հակոբ - 21, 28, 81, 82, 120, 121, 174, 180, 327
Ստեփանյան Հովհ. - 327, 553
Սրվանձտյան Գ. 589
Սուլթանյան Գարեգին եպիսկոպոս - 646
Սուլխանյան Ստեփան - 219, 312
Սունդուկյան - 200, 587
Սուրենյան - 202
Սուրենյանց Գևորգ եպիսկոպոս - 210, 215, 247, 249, 280, 386
Սուրենյանց Վարդգես - 498
Սուքիաս և Ներսես եպիսկոպոսներ - 140, 163

Վ

Վանցյան Գրիգոր - 42, 45, 104, 105, 117, 120, 147, 152, 153, 168, 169, 171, 179, 180, 182, 185, 186, 188, 192, 196, 201, 208, 209, 241, 257, 417, 550
Վաչնաձե (պրիստավ) - 143
Վառիճակ - 133, 134, 146, 195
Վարդազարյան Մարիամ (Մարուսյա) - 266, 269, 281, 305, 306, 308, 309, 314, 324, 344, 345, 348, 361, 365, 377, 386, 389, 404, 412, 445
Վարդազարյաններ Մարուսյա և Շուշան - 351, 435, 439, 473

Վարդազարյան Շուշան - 375, 376, 427, 436, 443, 444, 451, 458, 463, 482
Վարդազարյան Փիլիպոս - 127, 138, 238, 157, 167, 169, 175, 198, 199, 203, 206, 207, 211, 218, 224, 227, 231, 234, 235, 237, 240 - 242, 244 - 249, 254, 256, 257, 261 - 273, 277, 281, 282, 284 - 287, 289, 300, 303, 305, 306, 311, 312, 314, 317, 319, 321, 329, 337 - 340, 346, 347, 349 - 357, 359, 360, 363, 366, 370, 379 - 381, 384 - 387, 394, 407, 412, 413, 419 - 421, 423, 425, 426, 428 - 432, 435 - 441, 444, 445, 448, 450, 452, 453, 456, 457, 459, 462, 463, 465 - 467, 470 - 476, 486 - 489, 494, 502, 511, 512, 523, 533 - 539, 542, 554, 558, 568 - 570, 584, 585, 590, 606 - 608, 611, 612 - 615, 618, 643, 647
Վարդանյան Գրիգոր - 198, 278, 280, 323
Վարդանյան Փ. - 16
Վարդանյանց (Գյուզալյան) Երանյակ - 251
Վարդանյանց Վ. - 259
Վարդան վարդապետ - 193
Վարդիկովներ - 579
Վարդունյան Ամիրխան - 104
Վարձելյան Գրիգոր - 28
Վարսենիկ - տե՛ս Գևորգյան Վարսենիկ
Վեսելովսկի Յու. - 196, 204, 343, 448, 461, 468, 473, 479, 481, 484, 485, 577, 650, 652
Վերանյան Տիգրան - տե՛ս Տաշրացի Վրեն

Վերգինե - տե՛ս Պապաջանյան (Տեր-Դավթյան) Վերգինե
Վրույր - 162
Վրույր Ա. - 116
Վորոնցով - Դաշկով - 552, 553, 572, 646
Վորոնցով Մ. - 613

Տ

Տաշրացի Վրեն - 61, 78, 93, 98, 107, 115, 192, 217, 223, 226, 242, 310
Տելեմակ - տե՛ս Տեր - Դավթյան Տելեմակ
Տեր - Անդրեասյան Թամար - 519, 520
Տեր - Անդրեասյան Մխիթար - 101, 238, 245, 281, 406, 407, 419, 422, 426, 427, 494, 495, 519, 520, 533, 534, 550, 551, 600, 603, 608, 609, 613, 614, 624, 634, 641
Տեր - Առաքելյան Վահան - 552
Տեր - Աստվածատրյան Օլգա - 136
Տեր - Ավետիսյան Ս. - 613
Տեր - Գրիգորյան (բժիշկ) - 106
Տեր - Գրիգորյան Արամ - 490, 492, 513, 514 - 516
Տեր - Գրիգորյան Արշակ - 127
Տեր - Գրիգորյան Ղազար (Զավախեցի) - 345, 385, 388, 389, 642
Տեր - Գրիգորյան Զալալ - 171, 176, 185, 191, 193, 199, 250, 293, 297, 301, 314, 315, 318, 402, 416, 546
Տեր - Գրիգորյան Վ. - 148
Տեր - Գևորգյան Հակոբ - 255, 256, 274
Տեր - Դավթյան (բժիշկ) - 650

Տեր - Դավթյան Գ. (ղերասան) - 307
 Տեր - Դավթյան Յ. - 547
 Տեր - Դավթյան Տելեմակ - 11
 Տեր - Դավթյան Տիգրան - 10 - 12,
 14 - 18, 33, 54, 219, 246
 Տերեչչենկո (բժիշկ) - 497 - 498
 Տեր Թադևոս - տե՛ս Թումանյան
 Թադևոս
 Տեր - Իրաննիսյան Ավ. (Ասպետ) -
 181, 187, 287
 Տեր - Խաչատրյան Ա. - 103
 Տեր - Հակոբ - 29
 Տեր - Հակոբյան Արշամ - 174, 211
 Տեր Հովհաննես (տե՛ս նաև
 Մարտիրոսյան Հովհաննես
 քահ.) - 49, 112, 116, 139,
 195, 234, 235, 307, 401, 403
 Տեր - Հովհաննիսյան Մ. - 384, 547
 Տեր - Հովհաննիսյան Ոսկի - 495
 Տեր - Հովհաննիսյան Սահակ - 10,
 150
 Տեր - Հովսեփյան - 277, 294, 308
 Տեր - Ղևոնդյան - 201, 215
 Տեր - Ղևոնդյան Նիկ. - 207, 541,
 543, 544, 547
 Տեր - Մարտիրոսյան Հովհ. - 548
 Տեր - Միրաքյան Հովհ. - 620
 Տեր - Միքայելյան (Մկրտչյան)
 Ստ. - 137, 139, 201
 Տեր - Մկրտչյան Գալուստ - 411,
 530
 Տեր - Մովսիսյան Մեսրոպ - 531
 Տեր - Մովսիսյան Տելեմակ - 600
 Տերյան Վահան - 556, 622, 623,
 625, 640
 Տեր - Նիկողոսյան Գր. 219
 Տեր - Սարգսյան - 200
 Տեր - Սարգսյան Սարգիս - 130,
 140, 148, 176, 242, 340
 Տեր - Ստեփանյան Սոֆյա - 250

Տիգրանյան Նիկ. - 396
 Տիգրանյան Ս. - 411, 553
 Տիրուհի - 395
 Տյաչկիններ - 468, 470, 472, 474,
 476, 479
 Տուրգենև Ի. Ս. - 20, 21, 259
 Բ
 Բաֆֆի - 15, 33, 44, 45, 50, 245,
 588
 Ց
 Ցիլլաուրի Գեորգի - 341
 Ցխակայա Մ. - 547
 ՈՒ
 Ումանեց ԼԼ - 451
 Փ
 Փասանդի (աշուղ) - 380
 Փափազյան Վրթանես - 37, 172,
 241, 287, 297, 347, 357, 358,
 404, 405, 510, 540, 618, 645,
 647
 Փիրումյան Տիգրան - 25, 38, 39,
 58, 61, 63, 66, 67, 70, 114, 139,
 148, 153, 178, 185, 264, 287
 Զ
 Զալանթար Ալ. - 127, 157, 198,
 214, 266, 294, 296, 300, 370,
 552, 553, 572, 575, 577, 585
 Զալանթար Անուշավան - 201
 Զալանթար Լևոն - 510
 Զամալյանց Բարսեղ - 121
 Զանանյան Բարբարե - 315
 Զաջազունի Հովհաննես - 311,
 348, 553, 594 - 596, 599, 604,
 613, 614, 619, 620, 633, 635,
 637, 642, 644

Քոչարյան - 523
 Քոչարյան Սոնա - 9, 220
 Քյուրքչյան Մատթեոս - 209

Օսան - տե՛ս Թումանյան Օսան
 Օսեփ - 503
 Օվսաննա - 263
 Օքոնյան Տիգրան - 182

Օ
 Օլինկա (Օլյա) - տե՛ս Թումանյան
 Օլգա
 Օհանյան Միսակ - 244, 288
 Օհանյան Ս. - 276
 Օհանջանյան եղբայրներ - 650
 Օսան - տե՛ս Գիրգիդյան Օսան

Ֆ
 Ֆերյալ - 16
 Ֆիլիպ - Տե՛ս Վարդազարյան
 Փիլիպոս
 Ֆիրդուսի - 500, 512
 Ֆրանց Հոֆման - 16

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
(1869 – 1908)**

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր N 270
Ստորագրված է տպագրության՝ 20.05.2010թ.
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, թուղթ N 1, օֆսեթ տպագրություն,
42 տպագրական մամուլ:
Գինը պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ: